Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել տվյալ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

175
105
19
77
159
44
67

[illegible]

Абрамян Николай

Абрамофи Николай Исраелович

купленно в Степанакерте

1930. году.

(III и IV том.)

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

№ 65

ՑԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՅԵՐՐՈՐԴ

A II/37739

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ, 1930

Հր. № 1115։ Գրաւեպլիտ № 2833 (բ)։ Տիրաժ 3000։

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 184։

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՎԷՊ

1891

ԱՐՍԵՆ ԴԻՄԱՔՍՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Բուռ գետի ձախակողմյան մասի մի ծուռ փողոցով անցնում էր մի յերիտասարդ։ Օգոստոսի շոգ օրերից մեկն էր։ Արեգակը ցերկաթի պես տաքացրել էր փողոցի սալահատակը և տների պատերը։ Օդը այնքան ճնշող էր, վոր անցորդը հազիվ կարողանում էր շունչ առնել։ Յերբեմն թեքվելով ձեռափայտի վրա, նա կանգ էր առնում ծառերի շվաքում և յուր հոգնած հայացքը ձգում տների լուսամուտներին կամ դռներին։ Չնայելով ամառային կիզիչ յեղանակին, հագած էր ձմեռային սև սյուրտուկ, այն էլ կոճկած մինչև կոկորդը։ Իսկ աջ թևին ձգած էր մի մոխրագույն վերարկու, վորի փեշերը հասնում էին գետնին։ Նա փոքրահասակ էր, նիհար, բայց կուրծքը կազմվածքի համեմատ լայն էր և առողջ։ Դեմքի գծերը խոշոր էին, ազդու և անմիջապես ուշադրություն գրավող։ Սև ու խիտ հոնքերի տակից փայլող խոշոր աչքերը վերին աստիճան արտահայտիչ էին, խելացի և թափանցող։ Մի առանձին խրոխտություն էր տալիս նրա թխագույն դեմքին կարճլիկ նոսր մորուքը, մանավանդ արծիվային քիթը, վորի պնչերը հիշեցնում էին արաբական նժույգի ռունգեր։

Հասնելով ծուռ փողոցի ծայրին, նա դարձյալ կանգ առավ և նայեց աջ ու ձախ։ Այստեղ նրա հայացքն ընկավ մի տան պատին կպցրած թղթի վրա։ Նա մոտեցավ և կարդաց. «Այս տան վերին հարկում վարձով տրվում է մի մեծ, լուսավոր և մաքուր սենյակ»։

Նա բաց դռներով ներս մտավ։ Մի նեղ, կարմրագույն փայտյա սանդուխք տանում էր դեպի տան վերին հարկը։ Արագ քայլերով նա բարձրացավ վերև և հանդիպեց մի շիկահեր, պառավ կնոջ։

— Ի՞նչ եք կամենում.— հարցրեց կինը։

— Ցույց տվեք սենյակը։

Կինը յերիտասարդին առաջնորդեց յերկայն և աղեղնաձև պատըշ-

գամբի ծայրը։ Սենյակը, արդարև, մեծ էր, լուսավոր, բայց վոչ մաքուր և վոչ էլ կահավորված։ Տանտիրուհին շտապեց հայտնել, թե այն խկուզն կմաքրվի, կկահավորվի և արժանավայել տեսք կստանա, յեթե վարձվի։

— Ի հարկե, յեթե վոչ, ծվ կապրի այս տեսակ խոզարնում։

Յերիտասարդի ձայնն ամուր էր, խրոխտ և թանձրահնչուն։ — Մի բան, վոր կատարելապես հակասում էր նրա փոքրիկ հասակին և լիովին համապատասխանում նրա ոգեղ և տպավորիչ դեմքին։ Այդ ձայնը, այդ խոշոր գլուխը, այդ խելացի աչքերի սուր արտահայտությունն ազդեցին տանտիրուհու վրա։

— Դուք կովկասցի՞ չեք, — հարցրեց կինը։

— Այո։

— Ի՞նչ ազգի յեք պատկանում։

— Հայ եմ։

— Ի՞նչ գործի յեք։

— Առ այժմ վոչինչ։

— Վոչի՞նչ։

— Այո։

— Այդ ի՞նչպես կլինի։

— Պատահում է։

— Իսկ սենյակի վարձը՞։

Յերիտասարդին բարկացրին այդ հարցերը։ Նա խնդրեց տանտիրուհուն յուր պայմաններն ասել և առանց սակարգության վարձեց սենյակը, մի ամսվա վարձն անմիջապես տալով։

— Ամուրի՞ յեք, — հարցրեց պառավը մեղմացած։

— Ամուրի յեմ։

Տանտիրուհին գնաց դուրս և քիչ տնցած վերադարձավ մի թերթ թուղթ և մի մատիտ ձեռքին։

— Խնդրեմ ձեր անունը նշանակեք։

Յերիտասարդը գրեց. «Արսեն Դիմաքսյան»։

Յերեկոյան նա իրեղեններըը տեղափոխեց։ Սենյակը բավական խնամքով մաքրված էր և համեստ, բայց ճաշակով կահավորված։ Նա բաց արավ յուր ծրարները, կանթեղը վառեց, ամեն ինչ կարգի բերեց և, նստելով սեղանի քով, սկսեց խորհել անելիքի մասին։

Նա շատ բաներ ուներ անելու, շատ ծրագիրներ ուներ ապագայի մասին, շատ գործերի մեջ պիտի խառնվեր։ Իսկ առ այժմ մի բան առաջինն էր — հարկավոր էր մի պաշտոն ունենալ։

Միայն յերկու շաբաթ էր, վոր նա վերադարձել էր արտասահ-

մանից։ Գալուց մի քանի օր անցած՝ նա գրավոր խնդիր էր տվել Ներսիսյան դպրոց, որ իրան հանձնեն ընդհանուր պատմության և աշխարհագրության դասերը։ Մի քանի հոգաբարձուներից խոստում էր ստացել, սպասում էր հոգաբարձական նիստին։

Առ այժմ նա գրպանում ուներ հորից ստացած վերջին գումարը, որով պետք է ապրեր մինչև պաշտոն ստանալը։ Նրա հայրը գավառում հայտնի կալվածատեր էր։ Նա առանց որևէ պաշտոնի էլ կարող էր կառավարվել, բայց հոր և որդու մեջ մտել էր մի սառնություն, որ հետզհետե ավելի ու ավելի անջատում էր նրանց։

Բանն այն է, որ Մարգար աղա Դիմաքսյանը որդուց պահանջել էր — գիմնազիոնը ավարտելուց հետո այլև ուսումը չշարունակել։ Նա միայնակ էր, ուրիշ որդի չուներ և ուզում էր, որ Արսենն յուր ողնականը լինի՝ բազմաթիվ այգիները, վարելահողերը, խանութները և այլ կալվածները կառավարելում։ Որդին չէր համաձայնվել։ Հոշտ, ինքնակամ, համառ հորը չափազանց զայրացրել էր այդ ընդդիմությունը, և նա վերին աստիճանի սպառնողական մի նամակ էր ուղղել որդուն։ Արսենը դրական յեղանակով պատասխանել էր, թե ինքը պետք է լինի այն, ինչ որ կամենում է և էլ բնավ մտադիր չէ «հնացած սերնդի կամքինստրկանալ»։ Գալով ձեր ողնությանը, որից ինձ չեք ուզում առ այժմ զրկել, չես կընդունեմ նրան մինչև ուսմանս վերջը, ինչպես պարտք։ Դուք կարող եք զրկել ինձ ժառանգությունից, իսկ ազատ կամքից — յերբեք»։ .

Այս վճռական պատասխանը կատաղեցրել էր հորը։ Հաշտությունը նրանց մեջ դարձել էր անկարելի։

Շատ հոգսերի շարքում Արսենն ուներ և՛ հոր պարտքը հատուցանելու հոգսը։ Թվում էր նրան, որ յեթե յուր ասածը չկարողանա կատարել — թույլ, ստախոս է, որ գլխավորն էր նրա համար, ինքն իրան հակասող մարդ կլինի։ Ընկերները հանդիմանում էին նրան այդ մասին, համարելով նրա վարմունքը անտակտ, անհաշիվ։ Բայց նա ամենքին տալիս էր միևնույն դրական պատասխանը։

— Յեթե մենք ուզում ենք անկախ լինել, առաջին պատերազմը մեր ծնողների դեմ պետք է սկսենք։

Ահա ինչու նա ավելի լավ էր համարում հասարակ ուսուցչի պաշտոն ընդունել, քան հպատակվել հոր կամայականությանը։ Այժմ ակամա զգում էր անհանգստություն. ինչ կլինի, յեթե իսկույն պաշտոն չստանա։ Նրան վախեցնում էր ոչ թե նյութական պակասությունը, ոչ թե այն, որ կարող էր մի օր անոթի մնալ, այլ այն, որ մի գուցե ստիպվեր մեկից պարտք վերցնել, թեկուզ այդ մեկը լիներ նրա մտերիմ ընկերը։

Ներս մտավ տանտիրուհու ծառան և ընդհատեց նրա մտորումները։ Տարօրինակ էր այդ ծառայի կերպարանքը։ Անորոշ տարիքի մի մարդ էր, անկանոն կազմվածքով։ Նրա կուչկուչված հոնքերի տակ բուն դրած աչքերից մեկը կլորիկ էր, մյուսը նշաձև։ Յերես ասած բանը նա գրեթե չուներ։ Շեկ միրուքը սկսվում էր ուղիղ աչքերի տակից և, հասնելով ծնոտի ծայրը, այստեղ կազմում էր գզգզված բրդի կտորի պես մի բան։ Դիտողը կնկատեր, որ նրա բերանի մի անկյունը մյուսից բարձր է։

— Այ տղա, դու ի՞նչ ազգից ես։

— Հայ եմ, — պատասխանեց մի բարակ, համարյա կանացի ձայն։

— Վո՞րտեղացի ես։

— Բյավառցի։

— Բյավառը վո՞րտեղ է։

— Նոր-Բայազետում։

— Անո՞ւնդ։

— Սիրական։

Յեթե յերբ և է Դիմաքսյանը տեսել էր մի սարսափելի կոնտրաստ, այդ կարող էր լինել ծառայի կերպարանքը նրա անվան հետ։

Յաջորդ հարցերը պարզեցին, վոր Սիրականն «անտուն, անտեր, մի խեղճ մարդ է», վոչ ծնողներ ունե, վոչ քույր, վոչ ազգական։

— Լսի՛ր, — ընդհատեց նրա խոսքը Դիմաքսյանը, — դու ինձ հավատարիմ ծառայիր, ես քեզ կվարձատրեմ։ Գիտե՞ս, դու ինձ դուր ես գալիս․ կարդալ գիտե՞ս։

— Մի քիչ։

— Յես քեզ ելի կսովորցնեմ։ Յեթե կամենաս, ռուսերեն էլ դաս կտամ։

Ուրախությունից Սիրականի շիլ աչքը փայլեց։ Նա միջքից խոնարհ թեքվեց և գլուխ տվեց։

Թեյ խմելուց հետո, Դիմաքսյանը նստեց պարապելու։ Դեռ գիմնազիոնի նստարանից նա աշխատակցում էր մի լրագրի։ Ընկերներից շատերը գուշակում էին, թե ժամանակով լավ քննադատ կամ քարոզիչ կարող է լինել։ Գնալով արտասահման շարունակեց աշխատել նույն լրագրում, հետզհետե ընդարձակելով գրության շրջանը և գաղափարները։ Վերջին ժամանակ քաղաքական հոդվածներ էր գրում — առաջ Լեյպցիգից, հետո Ցյուրիխից։

Հետևյալ օրը նրա մոտ յեկավ բժիշկ Սալամբեկյանը, վորի հետ նա ավարտել էր գիմնազիոնի դասընթացքը։ Դա սև միրուքով, նիհար դեմքով, տկար մարմնով մի յերիտասարդ էր։ Դեմքի վրա դրոշմված

էր հոգեկան մի անբացատրելի զգացողություն։ Դիմաքսյանի հետ մոտիկ ընկեր էր, միմյանց համակրում էին։ Վեց և կես տարի իրարուց հեռու ապրելով, նրանք անընդհատ թղթակցել էին միմյանց, ուստի հեռավորությունը չէր թուլացրել նրանց ընկերական կապը։

— Շնորհավորում եմ, — ասաց բժիշկը, թույլ և հոգնած կերպով ձեռը մեկնելով ընկերոջը, — սենյակդ վատ չէ։ Բայց դա վայրենիների վո՞ր ցեղին է պատկանում։

Խոսքը Սիրականի մասին էր, վոր այդ միջոցին սամովարը ձեռին դուրս էր գալիս սենյակից։

— Մի ծաղրիր, — պատասխանեց Դիմաքսյանը մի տեսակ դժկամակությամբ, — ֆիզիոնոմիստների դարը անցավ։

Բժիշկը լռեց, փոքր ինչ շփոթվելով։ Վայելչության օրենքը թույլ չտվեց նրան հակառակել — Դիմաքսյանը տգեղ էր։

— Այսօր պե՞տք է ժողովվենք, — հարցրեց նա խոսքը փոխելով։

— Վո՛չ, վաղը յերեկոյան։ Անպատճառ յեկ։

— Իմ գալուց ի՞նչ օգուտ, թող նրանք գան, վոր խոսելու և գործելու ախորժակ ունեն։

— Անկարելի յե, անպատճառ պետք է գաս։ Յես կազմել եմ մի ծրագիր մեր գործունեյության մասին։ Յես այն կարծիքի չեմ, վոր մեր կռիվը պետք է սաստիկ լինի։ Հարկավոր է մեծ վստահություն ու քաջություն ջնջելու և հիմնահատակ անելու հինը, անօգուտը, վնասակարը։

Յեվ նա շարունակեց նույն վոգևորությամբ։ Յերիտասարդության բարոյական պարտքերը շատ են, իսկ նա բոլորովին այդ չի զգում։ Կռվելով հների դեմ, պետք է հետամուտ լինել և՛ նորերին, հարվածել և՛ նոր սերնդին, յեթե սա չի կատարել յուր դերը։

— Բայց ամենից առաջ հարկավոր է կազմակերպել մի փոքրիկ խումբ։ Մենք յերդվել ենք նվիրել մեզ հասարակական գործունեյությանը, պետք է կատարենք մեր յերդումը։

— Վաղը ո՞վքեր կլինեն քեզ մոտ։

— Յես հրավիրել եմ Բարաթյանին։

— Մեկել որը ստացավ կրակից ապահովող ընկերության գործակալի պաշտոն։ Հետո։

— Վեքիլյանին։

— Առանց իրավունքների իրավաբանին։ Գեղեցիկ զույգ ես ընտրել, արժե նրանց մի լծի տակ տեսնել։ Հետո։

— Մսերյանին։

— Ահա մարդ, վոր միշտ խոստումներով է կերակրվում։ Կարծեմ, նա վերջը տերտեր կձեռնադրվի։

— Լսի՛ր, բժիշկ, կատակը սազ չի գալիս քեզ, յերբ մեր ընկերներին ես ծաղրում, մանավանդ Մսերյանին։

— Ինքդ ասա, ուրիշ ի՞նչ կարելի յե սպասել մի մարդուց, վոր համալսարանների բոլոր ֆակուլտետները անցել ե և վոչ մի տեղ չի ավարտել։

— Մի ասա — «չի ավարտել», այլ ասա — «չեն թողել, վոր ավարտի»։

— Այո, չեն թողել յուր անհանգիստ լեզվի շնորհիվ։

— Անհանգիստ, բայց ճշմարտախոս լեզվի, — գոչեց Դիմաքսյանը, և նրա աչքերի թափանցող բիբերը պտտեցին իրանց պարզ շրջանակների մեջ։ — Այդ լեզուն շատ ե վնասել յուր տիրոջը։ Բայց ինչպես անարատ սիրտ, Մսերյանը անգնահատելի յե։ Թողնենք խոսակցությունը, յես մի քանի կարևոր նամակներ ունիմ գրելու։

— Ուրեմն, ցտեսություն։

— Ցտեսություն. վաղը յերեկոյան յես քեզ անպատճառ կսպասեմ։

II

Կեսորվա դեմ Դիմաքսյանը հագավ տաք սյուրտուկը, կոճակեց մինչև կոկորդը և, վերարկուն թևին ձգելով, դուրս յեկավ։ Նա այցելեց Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներից մեկին և իմացավ, վոր դասերը գրեթե ստացած պետք ե համարել։

— Մեզ համար, — ասաց հոգաբարձուն, — շատ ուրախալի յե ձեզ պես կրթված ուսուցիչ ունենալ մեր դպրոցում, ձեր անունը ձեզանից առաջ ե մեզ հասել։

Դիմաքսյանը զգաց մի թեթևություն։ Այժմ նա ապահովված ե ուրեմն և կարող ե հուսալ, վոր յուր պարտքը մաս-մաս կվճարի հորը։ Բայց ավելի հաճելի յեր նրա ինքնասիրության համար հոգաբարձվի ասածը. «ձեր անունը ձեզանից առաջ ե մեզ հասել»։ Այս դարձվածը նրան մի առանձին աշխույժ տվեց։ Նա վոգևորվեց։

Մյուս որը յերեկոյան ժողովվեցին նրա ընկերները։ Առաջինն յեկավ կրակից ապահովող ընկերության գործակալ Բարաթյանը — մոտ քառասուն ու հինգ տարեկան, գեղեցիկ դեմքով, առողջ կազմվածքով և զվարթ ու սիրուն աչքերով մի յերիտասարդ։ Նա հագնված եր ամենավերջին մոդայով և իսկույն աչքի յեր ընկնում յուր ձևերով ու շարժումներով։ Յերեք տարի Պետերբուրգում և հինգ տարի արտասահմանում ապրելով, գիտության մի փոքրիկ պաշարի հետ, նա յուրացրել եր և՛ արտաքին վայելչության խոշոր պաշար։ Նրա դեմքի վրա խաղացող ուրախ ժպիտը արտահայտում եր բուռն կենսականություն։

Մի ժպիտ, վոր հանդիպողին անմիջապես տրամադրում եր դեպի այդ յերիտասարդը։

— Հիանալի չե,— գոչեց նա, դիտելով Դիմաքսյանի սենյակը,— յեթե շրջապատող կլիման եվ համապատասխան ե, այն ժամանակ շնորհավորում եմ հաջող ընտրությունդ։

— Դարձյալ կլիմա։

— Այո, սիրելիս, մոռացե՞լ ես, թե ուսանող ժամանակ քո խոնարհ ծառան ինչպես եր սենյակ ընտրում։ Առաջ դիտում եյի շրջակայքը, հետո կացարանը, առաջ շնչավորներին, հետո անշունչը։

— Յեվ միշտ ինձ եվ խորհուրդ եյիր տալիս քեզ հետեվել։

— Իսկ դու չեյիր հետեվում։ Իզո՞ւր, յերիտասարդը պետք ե կյանք վայելի, իսկ ամուրին—նամանավանդ։

— Կյանք մարդավարի կերպով և վոչ թե ամեն մի անկյունում կանանց կոշիկների հետք վորոնի։

— Բայց յես այնքան չեմ վորոնել, վորքան իրանք են ինձ գտել։ Լավ, յես քեզ հետ չեմ վիճիլ, հայտնի չե, վոր կանանց մասին մեր գաղափարները տարբերվում են։ Ահա գալիս ե Ֆեմիդայի արժանավոր մանկլավիկը։

Դռները բացվեցին, ներս մտավ միջին հասակից քիչ ցածր, կլորիկ դեմքով, յերկայնաձև քթով, մաքուր սափրած այտերով մի յերիտասարդ։ Կանգնելով դռների առջև, նորեկը գլխարկը փորի վրա յերկու ձեռներով բռնած, մեջքից թեքված և կես հեգնական ու կես սիրալիր մի ժպիտ յերեսին գլուխ տվեց։ Վեքիլյանի բարևելու մշտական յեղանակն եր այդ, վոր գործադրվում եր ամեն տեղ, ամեն ժամանակ և ամենքի առջև։

Նրա յետևից յերևացին բժիշկ Սալամբեկյանը և մի քանի ֆակուլտետներ անցած Մսերյանը։ Տարիքով ամենից մեծ, կազմվածքով խոշոր Մսերյանի դեմքը խորշոմած եր, քունքերի մազերի մեջ արդեն փայլում եյին սպիտակներ։ Ներս մտավ թե չե՝ սա հաստ ձեռափայտը ու լայնեզր գլխարկը դրեց սեղանի վրա և գոչեց.

— Արսեն, յեթե մարդ ես,—ինձ մի բաժակ թեյ։

Սիրականը ներս բերեց սամովարը, հյուրերը տեղավորվեցին նրա շուրջը։

Սկսվեց ընկերական մտերիմ խոսակցություն։ Սենյակը աղմկեց հետզհետե բարձրացող ձայներով։ Նրանք միմյանց հաղորդում եյին շրջապատող հասարակության տհասության, անկրթության, նախապաշարմունքների, բռնության, հարստահարության և այլ ու այլ վատ յերևույթների նորանոր փաստեր։ Ամեն ինչ նրանց աչքում մթին եր

յերևում։ Հասարակական կյանք չկա։ Մարդիկ մտածում են միմիայն իրանց նյութականի մասին։ Ժողովուրդը խարխափում է տգիտության մեջ։ Հին սերունդը բռնակալ է, նորը թույլ, հալածված, ճնշված։ Վաճառական դասը ապականված է, հարստահարող, փողամոլ։ Յերիտասարդությունը բարոյապես փչացած է։ Հայրենիքի խնդիր չկա, իդեալ չկա։ Ուսումնարանները պատրաստում են տիրացուներ։ Գրականություն չկա։ Լրագրության մեջ տիրում է շառլատանի հոգին։ Ամեն ինչ կարոտ է արմատական վերանորոգության։

— Պարոններ,— բացականչեց Մսերյանը, որ փոքրիկ ժողովում մի տեսակ նախագահի դեր էր կատարում,— սկսենք գործել ձեռք-ձեռքի տված։ Մեր փոքրաթիվ կրծքերը դեմ տանք չինական պատին։ Խորտակենք նրան, որ անջատում է մեզ յեվրոպական քաղաքակըրթությունից։

Նա խոսում էր ոգևորված, ինչպես կրակոտ պատանի։ Այնինչ՝ տարիքը յերեսնից անց եյին։ Յերբեմն նա յուր խոսքը զարդարում էր հայտնի հեղինակների դարձվածներով։ Տեղ-տեղ հիշում էր Նալբանդյան, Աբովյան, Նազարյան անունները, համարելով նրանց «առաջին զինվորներ ժողովրդի առաջադիմության համար»։ Նա պնդում էր, թե պետք է գնալ այդ մարդկանց հարթած շավղով։ Նրա ձայնը յերերվում էր, ականջները և այտերը կարմրել եյին, ձեռները դողում եյին և լեզուն շփոթվում։ Ընկերների շրջանում նա վայելում էր «անուղղելի իդեալիստ» մականունը։ Նրա խոսքերից բուրում էր բուռն ոգևորություն և խորին հավատ դեպի մարդկության յերջանիկ ապագան։ Սովորական ախտերը — բռնատիրություն, հարստահարություն, ընկերական ոգու բացակայություն և այլն և այլն — նա համարում էր ներկայի ծնունդ։ Կանցնի ժամանակ, կմաքրվի մարդկությունն այդ ախտերից, և կտիրե այն իդեալական կյանքը, որին ձգտել են աշխարհի ամենաբարձր սրտերը, ամենազորեղ հանճարները։

— Այո, պարոններ,— ավարտեց նա յուր ատենաբանությունը,— մենք էլ լինենք այդ զորապետների գոնե հետին զինվորների շարքում։ Կռվենք և գործենք։ Մեր ազգը փոքրիկ է, թույլ, անպաշտպան, չթողնենք, որ նա խավարի մեջ մնա։

Նրան հաջորդեց Դիմաքսյանն յուր ծրագրով, որի ընդհանուր կետերը նա պարզեց։

Նա խոսում էր համառոտ և կտրուկ ոճով։ Ցույց էր տալիս այն գլխավոր հասարակական վատ յերևույթները, որոնց դեմ պետք է մաքառեր նոր յերիտասարդությունը։

— Բայց յես կրկնում եմ, ամենագլխավորը ընկերական միու-

թյունն է։ Յեթե մենք չդավաճանենք մեր ընտրած սկզբունքներին, շատ բան կարող ենք անել։

Ամենից քիչ խոսում էր Վեքիլյանը։ Նա, շարունակ ժպտալով, ամենքի հետ համաձայնվում էր։

Բարաթյանը մասնակցում էր խոսակցությանը զվարթ յեղանակով։ Նա նույնպես վոգևորվում էր, բայց չէր գրգռվում։ Նա չէր հարվածում հասարակական կյանքի վատ յերևույթները, ինչպես Դիմաքսյանը, Մսերյանը կամ նույնիսկ ծուլախոս Սալամբեկյանը, այլ հեգնում էր և ծաղրում։ Յերբեմն ամենալուրջ խնդրի մեջ խառնում էր մի սուր կատակ։ Նա ասաց, թե վոչ մի գործ չի կարող կենդանի կերպով առաջադիմել, յեթե նրա մեջ խառն չէ կինը։ Չպիտի միակողմանի լինել, կարծելով, վոր հասարակական քաղաքակրթությունը միայն մարդկության մի կեսի ձեռքով է կատարվում։ Նա առաջարկեց մի քանի տիկիններ և որիորդներ գրավել ընկերական ժողովները։ Մսերյանը ընդդիմացավ այս մտքին։ Նա կանանց ատում էր իբրև անհատների, իսկ իբրև դասակարգի պաշտպանում էր նրանց իրավունքները։ Բժիշկ Սալամբեկյանը հավանեց Բարաթյանի միտքը։ Վեքիլյանն անորոշ կերպով ուսերը շարժեց։

— Կանայք,— կրկնեց Դիմաքսյանը,— այո, յես էլ եմ պաշտպանում նրանց իրավունքները, բայց վո՞րտեղից գտնենք այնպիսիներին, վոր համաձայնվեյին կամ կարողանային մեզ ոգնել։

— Յես ճանաչում եմ մի քանիսին,— պատասխանեց Բարաթյանը,— վորոնք կարող են մեզ համար ոգտավետ լինել։ Ափսոս միայն գեղեցիկ չեն, իսկ յես, ինչ թաքցնեմ մեղքս, միայն գեղեցիկներին եմ սիրում։

Դիմաքսյանը գրգռվեց ընկերոջ վերջին դարձվածի դեմ։

— Բավական է,— գոչեց նա,— ժամանակ է թողնել այդ նոր ձևի կռապաշտությունը։ Մենք պետք է խոնարհվենք խելքի զորության և վոչ թե գեղեցիկ աչքերի ու սիրուն այտերի հրապույրի առջև։

Բարաթյանը ժպտաց։

— Գեղեցկությունն յերբեմն մարդկանց անբարոյականացնում է,— ավելացրեց Դիմաքսյանը մի տեսակ անզսպելի կրքով, ուղղակի նայելով Բարաթյանի աչքերին։

Կարծես, խոսքը նրան էր վերաբերվում։ Բարաթյանն անտարբերությամբ յերեսը դարձրեց Վեքիլյանի կողմը, վոր նույնպես խորհրդավոր կերպով ժպտում էր։ Նրանք հայացքներով հաղորդեցին միմյանց իրանց մտքերը, վոր միևնույն բանին էր վերաբերվում — Դիմաքսյանի դեմքի տգեղությանը։

Այդ օրից չերկու շաբաթ անցած՝ Դիմաքսյանը սկսեց այցելել Ներսիսյան դպրոցը ինչպես ուսուցիչ։ Նրա դասերը տևում էին մինչև կեսօրվա մեկ ժամը։ Այնուհետև նա գալիս էր տուն և զբաղվում այլ գործերով։

Ուսուցչական շրջանը նրան ընդունեց արտաքին հարգանքով, ներքին նախանձով, վորովհետև ամենաառաջին ուսուցիչն էլ նրա մեջ տեսնում էր զորեղ մրցակից։

Նա հետաքրքրվեց յուր պաշտոնակիցների աշխարհահայացքով։ Նա գտավ նրանց շրջանում մի քանի համակրելի մարդիկ, մյուսներին չհավանեց և սկսեց բացարձակ վիճել, հակառակել նրանց մտքերին և քարոզել յուր գաղափարները։ Մի ամիս չանցած, ունեցավ մի քանի բարեկամներ և շատ հակառակորդներ։ Վոմանք շրջապատեցին նրան, իսկ վոմանք հեռանալով կազմեցին հակառակ բանակ։ Խաղաղ և ճահճացած շրջանի մեջ ընկավ մի տեսակ շարժում։ Ուսուցչական սենյակի պատերը վկա յեղան ջերմ վիճաբանությունների և կատաղի հակառակությունների։ Տեսուչը, թեև բարձր կրթություն ստացած, բայց հին հայացքների տեր մի մարդ էր։ Փորձված, հմուտ և խորամանկ մեկը, վոր կարողացել էր գրավել ուսուցիչների մեծամասնության հարգանքը։ Դիմաքսյանը մոտեցավ նրան, այցելեց մի քանի անգամ նրա տունը և մի օր յուր ընկերների մոտ հետևյալ կարծիքը հայտնեց նրա մասին.

— Մեր Համքարյանը այն խլուրդներից է, վորոնք հեռվից են միայն մարդու նմանվում։

Այս խոսքերը շուտով հասան տեսչի ականջին, և սա վճռեց զգույշ լինել յուր նոր ստորադրյալի հետ։

Մի օր Դիմաքսյանը ուսումնարան մտնելիս հանդիպեց յերկու աշակերտների, վոր միմյանց հայհոյում եյին փողոցային անվայել և կեղտոտ խոսքերով։

— Պարոններ,—ասաց նա ուսուցչական սենյակում խմբված պաշտոնակիցներին,—մեր դպրոցում բարոյական դիսցիպլինա չկա, պետք է այս մասին հոգալ։

Բոլորը զարմացած նայեցին նրա յերեսին։ Առաջին անգամն եյին լսում այդպիսի պարզ, բայց և անպայման խիստ կարծիք դպրոցի մասին։

Նա պատմեց հայհոյող աշակերտների մասին։ Նա առաջարկեց ընտրել հանձնաժողով, պարտք դնել նրա վրա, վոր ուսումնարանական կարգերի մասին կազմի մի նոր ծրագիր։

— Այս դպրոցում տիրում է հին հոգի, պետք է ամեն ինչ փոխել, վերանորոգել. պետք է այստեղի օդը մաքրել։

— Արդյոք, ինչպես,— հարցրեց տեսուչը նուրբ հեգնական լեզվանակով։

— Այնպես, ինչպես անում են լուսավորված յերկրներում — քանդելով հինը, շինելով նորը, դուրս վանելով նեխվածը, ընդունելով թարմը և կենդանին։

Մի քանի հակառակորդներ գլուխները կես ծաղրով և կես առեղծվածով չարժեցին։ Տեսուչը պատասխանեց.

— Սիրում եմ ձեր ֆրազները։

— Ցես պնդում եմ ընտրել մի հանձնաժողով։

Հետևյալ օրը, յերրորդ օրը, մի ամբողջ շաբաթ նա նույնը կրկնեց։ Վերջապես, մեծամասնությունը համաձայնվեց։ Ընտրվեց հինգ հոգուց բաղկացած մի խումբ, վորոնց թվում, հարկավ, և՛ Դիմաքսյանը։ Նրան հանձնեցին կազմել մի ծրագիր և ներկայացնել։ Այս առաջարկությունն յեղավ Գերմանիայում նոր ավարտած մի մանկավարժի կողմից։ Սա մտքում ծաղրում եր Դիմաքսյանին և ուզում եր «տեսնել, թե ինչ ծրագիր կարող է կազմել մի մարդ, վոր ինքը մանկավարժ չէ»։

III

Ցերկու շաբաթ պարապելուց հետո Դիմաքսյանը ծրագիրը պատրաստեց և մի յերեկո կարդաց բոլոր ուսուցիչների ու վերակացուների ժողովում։

Նա հիմն ի վեր պախարակում եր դաստիարակության յեղանակը, ուսուցիչների հարաբերության ձևը աշակերտների հետ։ Նա ավելորդ եր համարում շատ ավանդվող առարկաներ և փոխարենը առաջարկում եր նորերը։ Գլխավոր կետը աշակերտների բարոյական սնունդն եր։ Այս մասին նա խոսում եր վոգևորված, վոչ իբրև ծրագիր կազմող, այլ ինչպես անմեղների մի տաղանդավոր պաշտպան։

Վոչ վոք նկատողություն չարեց նրան կարդալու միջոցին։ Մի քանիսը միայն յերկդիմի հայացքներ ձգեցին միմյանց յերեսին։ Նա վերջացրեց, թաշկինակով սրբեց ճակատը և, փոքրիկ վոսկորոտ ձեռները դնելով ձեռագրի վրա, նայեց աջ ու ձախ, պատրաստ նկատողություններին պատասխանելու։ Ընդհանուր լռությունը ընդհատեց տեսուչը շատ մեղմ ձայնով և զգույշ ձևով։

— Պարոն Դիմաքսյան, դուք վատաբանում եք մեր դպրոցը և, խոսք չունեմ, վատաբանում եք շատ տաղանդավոր կերպով։ Բայց մի բան. ձեր բուն ծրագիրը, յեթե թույլ կտաք այսպես ասել, շատ, ըըը, շատ տարօրինակ է ինձ համար։

— Ոչ թե տարօրինակ է, այլ ծրագիր բոլորովին չկա,— ավելացրեց գերմանական մանկավարժը:

Մեկի սառն նկատողությունը, մյուսի խորամանկ և կծու ծիծաղը կատաղեցրին Դիմաքսյանին: Նա, որ համոզված էր յուր մտքերի անպայման ճշմարտությանը, ինչպես մի մոլեռանդ կղերական, ծաղրվում է բացարձակ: Ո՛չ, այդ անկարելի է:

Նրա դեմքը գունատվեց, աչքերի մեջ փայլեց կատաղության հուրը: Փոքրիկ մարմինը վեր թռավ աթոռից, ինչպես հանկարծակի հրազարկ յեղած և կաշկանդեց ամենքի ուշքը:

Բռունցքը զարկելով սեղանին, նա գոչեց.

— Ո՛չ, պարոններ, անկեղծությունը, միայն անկեղծությունը կարող է գործ առաջացնել: Խոստովանվեցեք, որ իմ գրածը ձեզանից շատերի քմքին միայն դուր չի գալիս, բայց ծրագիր է և նոր գաղափարներով տոգորված ծրագիր:

— Այո,— պատասխանեց գերմանական մանկավարժը,— նոր գաղափարներով, որոնք հակասում են նույնիսկ ձեր նպատակին: Դուք գանգատվում եք, թե մեր դպրոցում բարոյական դիսցիպլինա չկա, իսկ ինքներդ կատարյալ անիշխանություն եք քարոզում:

Անիշխանությո՛ւն. ո՛չ, ներեցե՛ք: Նա քարոզում է աշակերտական մաքուր զգացումների ազատություն: Ուսուցիչը կամ վերակացուն չպիտի լինի աշակերտի կամքի լիազոր տերը, այլ նրա առաջնորդը և խորհրդատուն: Ոչ ոք իրավունք չունի կաշկանդել անհատի միտքը, բռնի ուժով հանել նրա գլխից մեկը— դնել մյուսը, որքան էլ փոքր լինի անհատը: Պետք է ազատություն տալ աշակերտի մտավոր և բարոյական հատկանիշների զարգացմանը: Յեթե նա ընկերոջը ծեծում է և հայհոյում, մեղավորը ուսուցիչներն են.

— Դուք եք, պարոններ,— շարունակեց նա, ավելի վրդովվելով,— դո՛ւք, որ մանուկ հասակից նրան սովորեցնում եք անպայման հնազանդություն. ձեր կամքի, ձեր խելքի, ձեր հասկացողության, ձեր դատողության օրենքներին: Դուք կատարում եք մտքի բռնակալների դեր և այն էլ մատաղ մտքերի: Ի սեր ազատ բնության, հեռո՛ւ պահեցեք նոր սերունդը ձեր չար ազդեցությունից, յեղե՛ք ժամանակակից կրթության միջնորդներ և ոչ ճնշող մեքենաներ: Թույլ տվեք աշակերտի անհատական ուժերն անկախ զարգանան, միայն հետևեցեք, որ նրանք չփչանան վատ ուղղությամբ: Անպայման բացակայություն խստության— ահա իմ առաջարկած դիսցիպլինան:

Նրա ճառն ազդեց մի քանի յերիտասարդ ուսուցիչների վրա: Ոմանք բացարձակ հայտնեցին իրանց հավանությունը: Սակայն մե-

ծամասնությունը հակաճառեց։ Բարձրացավ անասելի աղմուկ քառն ու հինգ հոգուց բաղկացած ժողովում։ Մի կողմից Դիմաքսյանի կողմնակիցները, մյուս կողմից գերմանական մանկավարժը, տեսուչը և մի սովոր խումբ սկսեցին բարձրաձայն վիճել մինչև կես գիշեր։ Հետևյալ առավոտ վերակացուներից մեկը թեթևամտաբար պատմեց բարձր դասարան աշակերտների առաջ նախընթաց յերեկոյին տեղի ունեցած յեղելությունը։ Անմիջապես կազմվեց համակրողներից մի խումբ, և Դիմաքսյանը աշակերտների շրջանում ել կողմնակիցներ ունեցավ։ Դասերից հետո, յերբ նա դուրս եր գալիս դպրոցից, փողոցի դռան մոտ մութ անկյունում հավաքված մի քանի հասակավոր աշակերտներ գաղտնի ծափահարեցին նրան։ Նա վոգևորվեց, մոռացավ յուր կրած անախորժությունը, սրտում զգաց մի տեսակ ուրախություն։ Մի վայրկյան նրան թվաց, թե ինքը հալածվածների ու թույլերի պաշտպան է։ Յեվ նրա սրտում զարկեց հերոսական փառասիրության յերակը։ Նույն որը յերեկոյան նա պաշտոնակիցների հետ ունեցած ընդհարումը պատմեց յուր մոտ ժողովված ընկերներին։ Բոլորը միաձայն արտահայտեցին իրանց համակրությունը։ Միայն իրավաբան Վեքիլյանը նկատեց, թե չպետք շատ ել վոգևորվել, «հարկավոր է ամեն մի միտք զգույշ քարոզել»։

— Զգույշ, զգույշ,— գոչեց Մսերյանը սրամտությամբ,— դու յել միշտ քո յերգն ես յերգում։

Վոչ վոք Դիմաքսյանին այնքան չեր համակրում, վորքան այդ «անուղղելի իդեալիստը»։ Դուցե այդ եր պատճառը, վոր Դիմաքսյանն ամենից ավելի նրա հետ եր մտերիմ և նրան եր սիրում ու հարգում։ Նա խրախուսեց Դիմաքսյանին, առաջ բերելով նոր գաղափարների համար հերոսացած մարդկանց կյանքից որինակներ։

Բարաթյանը ծիծաղեց նրա վրա։ Մի՞թե կարելի յե հսկաների որինակները ամեն մի չնչին բանի համար հիշել։ Կարծես, մի յերևելի բան է մի խումբ կիսակիրթ ուսուցիչների դեմ մաքառելը։ Յեվ, խոսակցության նյութը փոխելով, առաջարկեց ընկերներին մի քիչ զվարճանալ։

— Պարոններ, յեղեք գործիչներ կամ կործանիչներ, ինչ կամենաք, բայց մի՛ մոռանաք, վոր մեր կյանքը անցողիկ է։ Պետք է դառնությունների հետ զվարճություն ել վայելել։

Այդ որը Դիմաքսյանը ռոճիկ եր ստացել։ Նա պատվիրեց Սերականին ընթրիք պատրաստել։ Շուտով ընկերական շրջանը նստեց սեղանի շուրջը բաց ախորժակով, ազատ, համարձակ, ինչպես պարզ ուսանողներ։ Նրանք սկսեցին այնպես զվարճանալ, խոսել ու վիճել, վոր

A 32739 II

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

դրսից լողը կկարծեր, թե սենյակը լիքն է հանդիսականներով։ Դինին կրկնապատկել էր միքանիսի վոգևորությունը։ Մսերյանը սկսեց մի հին ուսանողական յերգ։ Բժիշկ Սալամբեկյանը ընդհատեց նրան ժողովրդական մի մելամաղձիկ յերգով։ Իրավաբան Վեքիլյանը շարունակ ժպտում էր և աշխատում ցույց տալ, թե անկեղծ զվարճանում է։ Բարաթյանը առանձին ուրախ տրամադրության մեջ էր։ Նա սրախոսում էր սովորականից շատ և ավելի հաջող։ Առհասարակ ընկերական խնճույքներում նա հայտնի չէր ինչպես ամենազվարթ սեղանակից։ Ուտում էր նա անփույթ կերպով և անընդհատ խոսելով, և ուտում էր ամենից շատ և յուր հաստ շրթունքները այնպես շարժելով, վոր ուրիշների ախորժակին էլ նպաստում էր։

— Վեքիլյան, յես քո դիրքը չեմ հավանում,—նկատեց Մսերյանը,—միշտ լուռ, միշտ զգույշ, հեր որհնած, մի անգամ չտեսա, վոր դու վոգևորվես ընկերներիդ շրջանում։

— Ե՜հ, անցան ուսանողական որերը, կյանքը մարդու վրա ազդում է, միշտ չի կարելի ուրախանալ։

Այս խոսքերը նա արտասանեց մի այնպիսի փիլիսոփայական յեղանակով, վոր, կարծես, վաղուց անցել է կյանքի մշակող քուրան։ Այդ էր, վոր վրդովեցրեց Մսերյանին, վոր առանց այն էլ մտքում շատ էլ չէր համակրում իրավաբանին։

— Ասված սիրես,—գոչեց նա,—ինձ մոտ կյանքի մասին մի՛ խոսիր։ Տեսնո՞ւմ ես գլխիս մազերը, նրանք շատ օրեր են տեսել, ի՜նչ ես լրջամիտ ծերունի ձևանում։

Արդարև, Մսերյանը շատ օրեր էր տեսել, դառն օրեր։ Տասը տարեկան հասակում նա զրկվել էր ծնողներից, մնացել էր թշվառ, անօգնական։ Մի բարեսիրտ մարդ նրան վերցրել էր յուր հովանավորության տակ։ Մեռել էր այդ բարեսիրտ մարդն էլ, և նա դարձյալ մնացել էր անպաշտպան։ Ուսանող լինելով, շաբաթներով տաք կերակրի յերես չէր տեսել, ապրել էր խոնավ նկուղներում, ընկերացել էր ամեն տեսակ մուրացկանների հետ։ Յերեք ձմեռ հյուսիսի կլիմայում անց էր կացրել առանց վերարկուի։ Յերկու տարի միայն նա կանոնավոր կացարան և կերակուր էր ունեցել։ Թափառել էր քաղաքից քաղաք ապերախտ ընկերների չար լեզուների պատճառով։

Այդ բոլորը հայտնի չէր Վեքիլյանին, վոր այժմ նրա առջև կենսական փիլիսոփայի քղամիդ էր հագնում։ Այն Վեքիլյանին, վոր ապրել և սնվել էր ապահով ծնողների գգվանքով և գուցե չէր կարող հասկանալ, թե ինչ ասել է «չար աստղի տակ» ծնված լինել։

— Լսեցե՛ք, ընկերներ, լսի՛ր, Վեքիլյան,—արտասանեց Մսերյանը

հուզված ձայնով,—կյանքը միայն նրան է ճնշում, ով յուր ուսերը տխմարի պես դեմ է տալիս նրա հարվածներին։ Մաքառեցեք անդադար, և դուք միշտ կծիծաղեք նրա վրա։ Կեցցե՛ վիշտ, վոր մաքրում է մարդուն, ինչպես կրակը վոսկուն...

Յեվ նա, բաժակը բարձրացնելով, զարկեց Դիմաքսյանի բաժակին։ Նրանց հայացքների մեջ նշմարելի յեր փոխադարձ անկեղծ ընկերական խորին համակրություն։ Յուր կրած հալածանքների և թշվառությունների շնորհիվ Սեդրյանը գրավել եր անխտիր բոլոր ընկերների համակրությունը։ Միայն Վեքիլյանն եր, վոր մտքում հեգնությամբ եր վերաբերվում դեպի իդեալիստը։ Սրա կարծիքով Սեդրյանի կրած դառնությունները առաջացել եյին յուր թուլությունից։ Նա վոչինչ նշանակություն չեր տալիս նրա անցյալին, քանի վոր այդ անցյալը ներկայի համար մի գործնական հետևանք չի ունեցել։ Չե՞ վոր Սեդրյանը նույնն է, ինչ-վոր եր տասը տարի առաջ — միշտ վոգևորվող, միշտ պատանի։ Նրա մտքերի մեջ չկա մի վորոշ կապ, նա չունի ամուր աշխարհահայացք, զուտ պարզված գաղափար, վորի առջև նսեմանային մյուս բոլոր գաղափարները և նա կարողանար անձնատուր լինել մի վորևե նպատակի իրագործման։ Նա գիտե միայն խոսել, հափշտակվել և ուրիշներին վոգևորել։ Նրա դերը բնորոշ է կյանքի մեջ։ Վոչ, Վեքիլյանը—Սեդրյան չե և չի յել ուզում նրան նմանվել, յերբե՛ք։

Ընկերները ցրվելուց հետո Դիմաքսյանը յերկար ժամանակ չկարողացավ այդ գիշեր քնել։ Նրա նյարդերը գրգռված եյին աղմկալի խոսակցությունից։ Մեջքի վրա անկողնում պառկած, անորոշ հայացքը ուղղել եր առաստաղին։ Նրա միտքը զբաղված եր ապագայով։ Ահա այն կյանքը, վորին նա վաղուց փափագում եր, այն յերկիրը, այն շրջանը, դեպի ուր ձգտում եր ուսանողական շրջանից։ Վերջապես, նա գտնվում է այն հողի վրա, ուր պետք է ցանե տարիների ընթացքում ժողոված սերմերը։ Ո՜ո, վորքան հետ է մնացել նրա մայրենի ժողովուրդը այն ազգերից, վորոնց հետ նա շփվել է վեց տարի շարունակ և վորոնց քաղաքակրթության արգասիքները տեսել է աչքով։ Վո՜րքան տարբերություն այնտեղի և այստեղի, այն կյանքի և այս կյանքի մեջ...

Այն բազմաթիվ գաղափարները, վոր բարդվել եյին նրա գլխում, գործադրության յելք եյին վորոնում։ Մի ներքին հոգեկան ուժ վառում եր նրա սիրտը անզուսպ յեռանդով։ Թվում եր նրան, թե կյանքը շատ կարճ է այդ բոլոր գաղափարների մի չնչին մասն անգամ իրագործելու համար։ Տակավին քսան ու վեց տարեկան նա զգում եր,

թե արդեն շատ ժամանակ է կորցրել ապարդյուն։ Մյուս կողմից նախանձը գրգռվում էր նրա սրտում, յերբ հիշում էր անմահ մարդկանց, վոր պատանեկական հասակում արդեն անուն եյին վաստակել։ Սրա հենց այդ անմահների ստվերներն եյին, վոր մղում եյին նրան դեպի առաջ, վոր գիշեր-ցերեկ հալածում եյին նրա միտքը և խոստանում նախանձելի ապագա։ Այո, նախանձելի, վորովհետև նա չի մնալ անհայտության մեջ, նա յուր կյանքը չի թաղիլ խավարում։ Նա բաց կանի ուժերով մի նոր ասպարեզ, ուր նրա անունը կփայլի ինչպես մի մենավոր, պայծառ աստղ։ Մարդիկ կճանաչեն նրան, կլսեն նրա պատգամախոս ձայնը։ Նա կառաջնորդի յուր հայրենակիցներին դեպի լույս, արդարություն, ճշմարտություն։ Ամբոխը, վողորմելի, յեղկելի ասիական ամբոխը կզգա նրա ուժը, կսկսի հետևել նրան, փառաբանել, յերկրպագություն տալ՝ նրա հանճարին, ծափահարել նրա ամեն մի քայլը։ Յեվ կվաստակի նա մարդկային մտքի և խելքի ղեկավարի զորավոր անունը, և՝ կանմահացնի նա այդ անունը, և՝ ապագա սերունդները կդրոշմեն նրան պատմության էջերում։ Ի՞նչ փույթ, վոր նա մի փոքրիկ, ցիր ու ցան յեղած ազգի զավակ է։ Սուտ է, թե միայն մեծ ազգերն են մեծ մարդիկ ծնում։ Իսկ չորս հազար ամյա գոյությունը, իսկ փառավոր պատմական անցյալը, միթե մի ազգի համար այդ վոչինչ նշանակություն չունի՞։ Ինչո՞ւ ուրեմն չհուսա, վոր հասել է այն որը, յերբ այդ փոքրիկ, աննշան ազգը փարթամ մարդկությանը պետք է տա մի հանճար, վոր տառապյալ, խավարամիտ և դարավոր մթության մեջ դեգերվող ժողովրդի մեջ ռեֆորմատորի անունը վաստակած լինի։ Յեվ այդ հանճարը պետք է լինի ինքը—Արսեն Դիմաքսյանը։

Գրավված այս մտքերով, Դիմաքսյանը անգիտակցաբար բարձրացել էր անկողնից և գիշերային շապկով քայլում էր սենյակում։ Նրա փոքրիկ մարմնի ստվերը սահում էր պատերի վրա, մերթ հասնելով առաստաղին, մերթ ընկնելով հատակի վրա։ Հանկարծ նրա հայացքը հանդիպեց յուր ստվերին, և նա կանգ առավ ու նայեց։ Նա զգաց մի ցնցում և վոտքը ամուր խփեց հատակին։ Նա ինքն իրան թվաց այնքան փոքր, այնքան աննշան, այնքան վողորմելի, վոր վրդովվեց։ Առաջին անգամը չեր, վոր այդ միտքը գրգռում էր նրան գիշերային լռիկ մենության մեջ։

— Մի՞թե, միթե այս փոքրիկ մարմնի մեջ այնքան զորեղ հոգի կա, վոր մի ամբողջ ժողովրդի գլուխ լինի,—գոչեց նա լսելի ձայնով։

Սակայն նույն վայրկյանին նա շփեց ճակատը, հեռացրեց իրանից հանկարծակի պաշարած կասկածը և նորից անձնատուր յեղավ յուր յերևակայություններին։

IV

Դիմաքսյանի ընկերներից Բարաթյանը և Վեքիլյանը բուն թիֆլիզցիներ էին, իսկ Սալամբեկյանը և Մսերյանը—գավառացիներ։

Ամենից շատ ծանոթներ և կապեր ունեին Թիֆլիզում Վեքիլյանը, հետո Բարաթյանը։ Մյուսների համար տեղական հասարակությունը դեռ անծանոթ աշխարհ էր, մանավանդ Մսերյանի, վոր առհասարակ խույս էր տալիս բազմաթիվ ծանոթներից։

Այլ էր Բարաթյանը։ Այդ զվարճասեր երիտասարդի համար հասարակությունը ուներ շատ հրապուրիչ պայմաններ, ինչպես և՛ ինքը շատերի համար ուներ նույն պայմանները։ Նրա ճարպիկ լեզուն, շնորհալի ձեռը, սիրալիր ժպիտները, գեղեցիկ պարելը, վերջապես, արտասահմանյան կրթության հռչակը, յեվրոպական լեզուներ իմանալը—բաց արեցին նրա համար շատ դռներ։ Իսկ Վեքիլյանը ծանոթացրեց նրան բոլոր յուր ազգական ընտանիքների հետ, վորոնց թիվը շատ էր։ Օր չէր լինում, վոր նրանք միասին հյուր չլինեյին այս կամ այն ընտանիքում։ Ամեն տեղ Բարաթյանին ընդունում էին հաճությամբ, մանավանդ, վոր նրա գերդաստանը քաղաքում բավական հայտնի յեր։ Պատահում էր, վոր այս կամ այն տիկինը մի անգամ մի հանդիպում Բարաթյանին տեսնելով, դառնում էր Վեքիլյանին։

— Ծանոթացրեք ինձ ձեր ընկերոջ հետ, նա ինձ դուր է գալիս։

Իսկ յերբ Բարաթյանը ծանոթանում էր, իսկույն հյուր էր հրավիրվում։ Ցեվ վոչ մի հրավեր չէր ձանձրացնում նրան։ Ահա ինչու չորս ամիս չկար, վոր նա վերադարձել էր արտասահմանից, և արդեն նրա ազգանունը պտտում էր զանազան շրջաններում։

Այդ շրջաններից տակավին հեռու չէր Դիմաքսյանը։ Նա թեև Մսերյանի պես չէր արհամարհում հասարակությունը, սակայն, զբաղված լինելով յուր ներքին աշխարհով, յուր գաղափարներով, վեճերով ու ծրագիրներով, առանձնապես չէր էլ մտածում ծանոթությունների մասին։ Բայց կային մարդիկ, վոր իրանք էին ձգտում նրան մոտենալ։ Նույնիսկ միքանի ընտանիքներ փափագ էին հայտնում՝ նրան իրանց հարկի տակ տեսնել։

— Բերեք ձեր որիժինալին մեզ մոտ,—ասաց մի որ մեկը Բարաթյանին։

Դա տիկին Բախտամյանն էր, Վեքիլյանի ազգականուհիներից մեկը։ Տիկինը սիրում էր ծանոթություններ, առանձին հակումն ուներ դեպի այն յերիտասարդները, վորոնք իրանց ուսումով, հասարակական գործերով և անունով քիչ թե շատ աչքի էին ընկնում։ Նա

նրանց հետ վիճաբանում էր, դատում էր և առհասարակ աշխատում էր ժամանակակից ինտելլիգենտ կնոջ դեր կատարել։

Մի օր Բարաթյանը Դիմաքսյանին ներկայացրեց տիկնոջը, որը յուր սովորության համեմատ նրան հրավիրեց յուր տունը։ Ինչպես Դիմաքսյանն առաջին անգամից լավ տպավորություն չէր գործել տիկնոջ վրա յուր աննշան տեսքով։ Բայց վորովհետև նրա անունը յերիտասարդության մեջ բավական հռչակ էր ստացել, ուստի ինտելլիգենտ կինը կամեցավ այդ մեկին էլ անպատճառ յուր տանը տեսնել։

Առաջին պաշտոնական այցելությունից հետո, Դիմաքսյանը նորից հրավիրվեց Բախտամյանների մոտ։ Յեվ մի յերեկո նա, զիջանելով Բարաթյանի թախանձանքին, գնաց այնտեղ իբրև արդեն ընտանեկան ծանոթ։

Տիկնոջ ամուսինը — Պյոտր Սոլոմոնիչ Բախտամյանը նոր էր տնից դուրս յելել գործով և հետո պետք է գնար քաղաքային խորհրդի նիստը։ Ինքնավարության առաջին կարգի իրավասու էր և յերբեք մի նիստ բաց չէր թողել։

Սենյակի խորքում խաղում էյին յերկու մանկահասակ աղջիկներ՝ չորս և վեց տարեկան — Տիկնոջ զավակներն էյին։ Թեյի սեղանի շուրջը նրա հետ նստած էյին մի դեռահաս աղջիկ գիմնազիոնի համազգեստով և մի չափահաս օրիորդ — Պյոտր Սոլոմոնիչի հանգուցյալ քրոջ զավակներն էյին, որ ապրում էյին նրա տանը։

Տնային բաց գույնի հագուստով, մազերը խնամքով սանրած, սպիտակ թևերը կիսով չափ բաց տիկինը յուր տարիքից ավելի յերիտասարդ էր յերևում, թեև առանց այդ էլ նրա տարիքը քսան ու յոթից չէյին անցնում։ Նա քաղաքում շատերի համար գեղեցկուհի էր յուր սև աչքունքով, դեմքի թարմ գույնով, կարմրախայտ լիք-լիք այտերով և բավական ուռած կրծքով։ Նա հյուրերին ընդունեց նազելի շարժվածքով տեղից բարձրանալով և քաղցր ժպտալով առանձնապես Բարաթյանի յերեսին։

Դիմաքսյանը, որ սովորաբար ամոթխած էր, շիկնեց ու շփոթվեց տիկնոջ ձեռքը սեղմելիս։ Գիմնազիոնի աշակերտուհին, հայտնի չէր ինչու, ծիծաղեց և վազեց մյուս սենյակ։

Գայանեն — այսպես էր մեծ օրիորդի անունը — համեստ, հանդարտ կերպով մեկնեց Դիմաքսյանին յուր ձեռը։ Դա մոտ քսաներկու տարեկան, բաց գույնի մազերով, փոքր ինչ թուխ դեմքով, սև յոնքերով և կապույտ աչքերով մի էյակ էր, որի դեմքի համեստությունը տիկնոջ աչք ծակող գեղեցկության հակապատկերն էր ներկայացնում։ Հասակով նա տիկնոջ չափ էր, բայց ավելի բարակ և նուրբ կազմը-

վածքով։ Նրա սրածայր և յերկայնաձև քիթը բնավ չէր խանգարում դեմքի գծերի կանոնավորությանը, թեև նրա յերեսը ցույց էր տալիս մի փոքր յերկայնաձև։ Նա հագած էր պարզ տնային հասարակ մեխակագույն հագուստ։

— Յերևակայեցեք,—սկսեց խոսել տիկին Բախտամյանը, սովորական վողջույններից հետո թեյի բաժակը դնելով Դիմաքսյանի առջև,—խելույն յես ու Գայանեն մի շատ ժամանակակից հարցի մասին եյինք վիճում, վոր դուք յեկաք։ Ասացեք, խնդրեմ, միթե կինը մեզանում կարող է այն դերը կատարել, ինչ-վոր լուսավորված ազգերի մեջ։ Յես այս մասին պարոն Բարաթյանի հետ էլ խոսել եմ։ Նա ասում է, թե դուք, պարոն Դիմաքսյան, մեր իրավունքները տաք-տաք պաշտպանում եք. շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։ Բայց ինչ օգուտ. կինը միթե մեզանում կարող է բերան բաց անել յուր իրավունքների համար, Лизочка, не шали, վոչ, վոչ, չի կարող, մենք Ասիայումն ենք ապրում, հասկանում եք, Ասիայում։ Այնպես չէ՞, պարոն Բարաթյան։

Իհարկե այդպես է։ Միթե ջենտլմեն Բարաթյանը կարող է հակառակել ժամանակակից տիկնոջ ասածներին։

— Միայն պետք է քաջ լինել, ուշադրություն չդարձնել ուրիշների վրա և ապրել ինչպես յեվրոպացի, տիկին, ինչպես յեվրոպացի։

— Իհարկե, իհարկե, պարոն Բարաթյան, յես էլ այդ եմ ասում։ Ասում են, տիկին Բախտամյանը ազատամիտ կնիկ է, մի՞թե յես չգիտեմ, վոր շատերը նախանձից են խոսում։ Յեթե յես ուրիշների պես միշտ զուգվելով, զարդարվելով, հանդեսներ գնալով անցկացնեյի ամբողջ կյանքս, չեյին խոսի։ Հավատացեք, չեյին խոսի։ Ափսոս, վոր մեր տղամարդկանց մեջ էլ քիչ բարեկամներ ունենք։ Ինչ ուզում եք ասեք, տասից ինը վատ աչքով են մտիկ անում լուսավորված կնոջ վրա։ Պարոն Դիմաքսյան, մի բաժակ էլ, եե լա՛վ, խմեցեք, յես ցերեմոնյա չեմ սիրում, Лизочка, тише, Елечка, что ты орешь? Տեսնում եք, վոր լուրջ բաների մասին ենք խոսում, խելոք նստեցեք ու ականջ դրեք։

Մանկահասակ աղջիկները, վոր մի որինավոր կոնցերտ եյին սկսել, ավելի բարձր գոռացին և միմյանց մի յերկու բռունցք տալով բաժանվեցին։

— Բավական չար են, պարոն Դիմաքսյան, բայց մեղավորը յես եմ, շատ եմ ազատություն տալիս։ Յես նրանց կրթում եմ նոր յեղանակով։

Խոսակցությունը տեղի ուներ ռուսերեն։ Տիկինը, վոր ազատ

տիրում եր այդ լեզվին, վոչ վոքի ժամանակ չեր տալիս բերան բաց անելու։ Նա շարունակեց նույն յեղանակով, անցնելով մի առարկայից մյուսը, կանանց իրավունքներից—թատրոն, թատրոնից—ճանապարհորդություն։ Միքանի անգամ ակնարկեց, թե յեղել ե արտասահմանում ամուսնու հետ, աչքով տեսել ե, թե վորքան այնտեղ կանայք ազատ են։

— Յես հանդիպեցի մի վենգրուհու, վորի ամուսինը Իտալիայում եր ճանապարհորդում, իսկ ինքը գնում եր Շվեյցարիա։ Ախ, պարոն Բարաթյան,—գոչեց տիկինը, հանկարծ խոսքը փոխելով,—դուք պարոն Դիմաքսյանին հայտնե՞լ եք մեր ժողովի մասին։ Չե՞ք հայտնել, այ այ այ, ի՞նչպես կարելի չե։

Նա պատմեց, թե մի խումբ կանայք վճռել են կանանց բարեգործական ընկերություն կազմել և թե վաղուց ե ինքն այս միտքը քարոզում եր և, վերջապես, հաջողեցրեց։

— Գայանեն ել եր աշխատում,—ավելացրեց նա վեհանձնաբար,—կարելի յե ասել, վոր ինիցիատորները հենց մենք ենք, այնպես չե՞, Գայանե։

Որիորդը համեստությամբ պատասխանեց, թե ինքը իրան ինիցիատոր չի համարում։ Տիկինը հակառակեց, և վերջը պարզվեց, վոր ընկերություն հիմնելու միտքը առաջին անգամ հայտնել ե Բարաթյանը։ Այս նորությունը Դիմաքսյանի սրտում զարթեցրեց մի տեսակ անախորժ զգացում։ Ի՞նչպես, նա, վոր այնքան պաշտպանել ե և պաշտպանում ե կանանց խնդիրը, հանկարծ հեռու յե մի գործից, վոր կանանց ինքնուրույնության առաջին քայլն ե վորոշում։ Ահա ինչ ասել ե հասարակությունից հեռու ապրել։

Նրա հուզմունքը ավելի սաստկացավ, յերբ տիկինը ասաց, թե ապագա ընկերության կանոնադրությունը կազմող մասնաժողովի անդամ ե ընտրված և՛ Բարաթյանը։ Նա հայտնեց յուր ուրախությունը, վոր հայ կնոջ մեջ, վերջապես, ինքնաճանաչության հոգի յե զարթնում։ Բայց, չկարողանալով զսպել իրան, ավելացրեց, թե չի հավանում, վոր կանայք իրանց հենց առաջին հասարակական գործի մեջ տղամարդկանց ել խառնում են։ Ավելի լավ ե բոլորովին անկախ գործել։ Պետք ե հենց սկզբից սովորել ինքնուրույն գործունեյության։ Տղամարդի մասնակցությունը կարող ե նրանց վրա ճնշում գործել։

Այս բոլորը նա ասաց հանդարտ յեղանակով։ Բայց նրա ձայնի մեջ այնու ամենայնիվ զգացվում եր ներքին խռովություն։ Տիկինը հակառակեց նրան։ Վոչ, վոչ, կանայք մենակ գործել չեն կարող, տղամարդը միշտ պետք ե ոգնի նրանց։

Դիմաքսյանը ակամա շփոթվեց և մտքում բարկացավ ինքն յուր վրա։ Պարզ էր, որ Բարաթյանը այսպես թե այնպես վայելում է կանանց համակրությունը։ Ուրեմն անվայել է խախտել այդ համակրությունը և անկարելի։

Խոսակցության նյութը փոխվեց։ Օրիորդ Գայանեն սեղանի վրա դրեց միքանի տեսակ քաղցրավենիներ, չոր պտուղներ, գինի և մի շիշ քաղցր ըմպելիք։

Այժմ Դիմաքսյանը աշխատում էր լինել զվարթ, անփույթ, համարձակ, ինչպես Բարաթյանը, որ, կարծես, յուր տանը լիներ նստած—ազատ, անշփոթ։ Բայց չէր հաջողվում։ Նա զգում էր, ինքն էլ չգիտեր ինչու, որ կաշկանդված դրության մեջ է։ Ստեպ-ստեպ նայում էր օրիորդին, խոսքը միայն նրան էր ուղղում, աշխատում էր լուրջ խոսակցությունից չհեռանալ։

Գայանեն լսում էր նրան հարգանքով, լսում էր նրա վոգևորված խոսքերը նոր սերնդի կրթության, հասարակական կյանքի այս կամ այն փոփոխության, հայրենիքի վիճակի մասին և այլն։ Այդ միջոցին Դիմաքսյանը մոռանում էր հասարակ հյուրի դերը և յերևան էր գալիս ինչպես մի յերդվյալ քարոզիչ։ Բայց բավական էր Բարաթյանի մի աշխարհիկ դարձվածը, մի սուր նկատողությունը, մի թեթև, անփույթ հեգնությունը, և սենյակի մեջ տարածվում էր օրիորդի և տիկնոջ անկեղծ ու զվարթ ծիծաղը։ Ծիծաղում էր և՛ Ովսաննան, որ մյուս սենյակից վերադարձել էր։

Դիմաքսյանը ուզում էր մասնակցել այդ ընդհանուր զվարճությանը։ Սակայն նրա ծիծաղը հնչում էր կեղծ, կատակը արտահայտվում էր բռնազբոսիկ։ Թվում էր նրան, որ օրիորդը մտքում ծաղրում է նրան, համարում է տաղտկալի փիլիսոփա, տգեղ, այլանդակ, զզվելի։ Այնինչ Գայանեն վոչ մի կերպ, վոչ մի ձևով, բացի հարգանքից և ջերմ համակրությունից, վոչինչ ցույց չէր տալիս նրան։

— Ո՞ւր եք շտապում,—ասաց տիկինը, տեսնելով, որ Դիմաքսյանը վոտքի կանգնեց,—սպասեցեք, խնդրեմ, ամուսինս կգա, միասին կընթրենք։

Դիմաքսյանը չհամաձայնվեց։ Նա հրաժեշտ տվեց։ Նրա յետևից դուրս յեկավ Բարաթյանը։ Նրանք լուռ եյին և ամեն մեկը զբաղված յուր մտքերով։

— Ինչո՞ւ կանգնեցիր,—գոչեց Բարաթյանը, տեսնելով, որ ընկերը փողոցի մայթի վրա յետ մնաց։

— Ցտեսություն, յես կառքով եմ գնում։

Նա թույլ կերպով սեղմեց ընկերոջ ձեռը և բարձրացավ առաջին

պատահած կառքի վրա։ Բարաթյանը նայեց նրա յետևից զարմացած և ինքն իրան ասաց.

— Ի՞նչ պատահեց այդ մարդուն։

V

Դիմաքսյանը սաստիկ չարացած էր։ Նրա փոքրիկ մարմինը անընդհատ շարժվում էր կառքի մեջ։ Մերթ նա շփում էր կարճլիկ ու նոսր մորուքը, մերթ ձեռը ցնցողաբար զարկում ծնկին։

Տուն հասնելով, նա զղջաց յուր այցելության մասին։ Տիկին Բախտամյանը նրան դյուր չէր յեկել յուր շատախոսությունով և արվեստական ձևերով։ Այդ կողմից նա արդար էր համարում յուր այն տեսությունը, թե «վորքան կինը գեղեցիկ է, այնքան թեթևամիտ է»։

Բայց մյուս կողմից—չէ՞ վոր որիորդ Գայանեն էլ այդտեղ չէր։ Ինչու՞ ուրեմն նա դուրեկան է, այնչափ դուրեկան, վոր ազդու տպավորություն է գործել Դիմաքսյանի վրա։ Ահա նրա ազատ ծիծաղը, գրավիչ ժպիտները, կապտագույն աչքերի մեղմ և սիրտ թափանցող փայլը։ Ինչու՞ յուր սիրունությունով հանդերձ նա «անտանելի» չէ։ Վո՛չ, անկարելի յե չհարգել մի այդպիսի արարածի։ Յեվ մի՞թե սիրուն աչքերը, նուրբ բերանը, գեղեցիկ ատամները կարող են արդելք լինել խելքի բարձրությանը, կամքի հաստատությանը, սրտի վսեմությանը։

Այստեղ Դիմաքսյանի հայացքը դարձյալ ընկավ յուր ստվերի վրա։ Նույն վայրկյանին նա հիշեց Բարաթյանին։ Նա մտքով ինքն իրան համեմատեց յուր ընկերոջ հետ։ Քառորդ ժամ առաջ լուսավոր խանութների առջևով նրանք անցնում էյին կից առ կից։ Ամբողջ ուսերով Բարաթյանը բարձր էր նրանից։ Այդ սարսափելի տարբերությունն էր, վոր մի վայրկյանում տակն ու վրա արեց նրա սիրտը, և նա շտապեց հեռանալ ընկերից, կառք նստել։

Նա մտաբերեց Գայանեյի հարաբերությունը Բարաթյանի հետ, նրանց բոլոր ձևերը, խոսելու յեղանակը, ամեն ինչ մանրամասնորեն։ Յեվ զգաց, վոր նրանց մեջ կա մի ինչ-վոր լուռ փոխադարձ համակրություն։ Նրա մեջ զարթնեց անբացատրելի ատելություն դեպի յերկուսն էլ, մանավանդ դեպի Բարաթյանը։ Ինչու՞ նա զվարճանում էր, սրախոսում էր, ազատ ու համարձակ շարժվում ինչպես սեփական տանը։ Իսկ ինքը… կարծես, մի աներևույթ չար ձեռք կաշկանդել էր նրան վոտից մինչև գլուխ։ Ինչու՞, միթե այն պատճառով, վոր նա փոքրիկ է, աննշան, տգե՞ղ։

Նա սկսեց անց ու դարձ անել։ Ներս մտավ Սիրականը, որ նրա կոշիկները տանի սրբելու։

Դիմաքսյանը մի զննող հայացք ձգեց նրա վրա։ Նրա կատաղությունը մեղմացավ, և նա ավելի խոր նայեց ծառայի ծուռ ու մուռ հասակին։ Կարծես, հաճելի չեր նրա համար դիտել այդ տգեղ մարդուն, որ լուռ կանգնած եր նրա առաջ յուր աղավաղված բերանը կիսով չափ բաց, շիլ աչքերով և տափակ քթով։

— Ճշմարի՞տ ե։

— Ի՞նչը, աղա։

Դիմաքսյանը յերեսը յետ դարձրեց։ Նա խոսում եր մտքում։ Ծառան զարմացած կանգնած եր։ Նա հրամանի չեր սպասում։ Իսկ հրաման չկար։

Դիմաքսյանը նստեց և դարձյալ նայեց ծառային։ Միքանի վայրկյան անցած, նա կամացուկ վերկացավ տեղից և սկսեց անց ու դարձ անել, աշխատելով, որքան հնար ե, խոշոր քայլեր անել։ Կարծես, նա մի խորին դրամատիքական դեր ե փորձում, որ պետք ե կատարեր։ Տեղ-տեղ աչքի տակով սուր դիտում եր ծառային։ Իսկ ծառան կանգնած եր, կոշտ ու սևացած ձեռները փորի վրա դրած։ Դիմաքսյանը անցնում եր նրա մոտով։ Յեվ նկատելի չեր, որ ամեն անգամ անցնելիս ավելի ու ավելի մոտենում ե ծառային, ինչպես մի խորամանկ կատու յուր որսին։.

Գիշերվա լռության մեջ, կանթեղի աղոտ լուսով, այդ յերկու տարորինակ կերպարանքների հարևանությունը մի խորհրդավոր տեսարան եր ներկայացնում։ Մեկը անշարժ կանգնած եր սենյակի մեջ տեղում, մյուսը պտտում եր նրա շուրջը։

Յերբեմն Դիմաքսյանը այնքան մոտենում եր Սիրականին, որ քիչ եր մնում նրանց ուսերը միմյանց զարկվեյին։ Այժմ ծառան մարմնացած ապշություն եր ներկայացնում։ Նրա հայացքը հետևում եր Դիմաքսյանին։ Կարծես, մի մագնիսական ույժ բևեռել եր նրա ոտները հատակին։ Նա ոչ խոսում եր, ոչ շարժվում և ոչ ել, կարծես, ուզում եր շունչ քաշել։ Միայն նրա թավամազ յերեսը պտտում եր աջ ու ձախ, ինչպես ծխնելույզի թիթեղյա հողմավար։

Հանկարծ Դիմաքսյանը մի վայրկենաչափ կանգ առավ ծառայի կողքին։ Նա ուսը մոտեցրեց Սիրականի ուսին. նայեց նրա աչքերին, ճակատին, կրծքին։ Հետո մի ճարպիկ շարժվածքով հեռացավ նրանից միքանի քայլ և թույլ ձայնով արտասանեց.

— Ի՞նչ կարճ ես, Սիրական։

Յեվ բարձրաձայն ծիծաղեց։ Դա մի անսովոր ծիծաղ եր, մի ծիծաղ, վորի մեջ չեր զգացվում վոչ ծաղր, վոչ դառնություն և վոչ գվարճություն, այլ ավելի բարկություն։ Դարձյալ խորին տրտմության քողը ծածկեց նրա յերեսը։ Նա թուլացած նստեց անկողնակալի վրա, գլուխը թեքեց կրծքին և նշան արեց ծառային, վոր դուրս գնա։ Հետո նա նստեց պարապվելու։ Սեղանի վրա ցրված եյին զանազան գրքեր, լրագիրներ, ամսագիրներ, ձեռագիրներ, թղթի բազմաթիվ մանր կտորներ, վորոնց վրա գրված եյին թվանշաններ։

Այս բոլորը նա պատրաստել եր մի ընդարձակ հասարակական դասախոսության համար, վոր պետք է կարդար մի ամսից հետո։ Ընկերներին հայտնի չեր նրա այս մտադրությունը, ինքն ել առայժմ գաղտնի յեր պահում։ Բառորդ ժամ անցած պարապմունքը նորից նրան մոռացնել տվեց ամեն ինչ, և նա յեռանդով և վոգևորված գրում եր։

Նույն պահին Բարաթյանը յուր սենյակում զբաղված եր այլ մտքերով։ Բաժանվելով Դիմաքսյանից, նա վոչ մի տեղ չուզեց գնալ, վերադարձավ տուն։ Նա մտքում անիծում եր ընկերոջը, վոր այնպես շուտ դուրս յեկավ Բախտամյանների տնից։ Նա վաղուց համակրում եր օրիորդ Գայանեյին։ Թատրոնում և հասարակական այլ և այլ տեղերում ամենից ավելի այդ օրիորդն եր, վոր գրավում եր նրան և վորին միշտ հետամուտ եր լինում։ Ուստի շատերը կարծում եյին, թե նրանք արդեն հարսնացու և փեսացու յեն։ Այնինչ Բարաթյանը դեռ շատ զգույշ եր վարվում, վորպեսզի այս կարծիքը հաստատ հիմք ունենար։ Սկզբունքով նա վճռել եր ամուսնանալ, բայց վոչ շատ ել շուտ։ Ճիշտ, վոչ այն պատճառով, վոր քսան ու վեց տարեկան հասակը ամուսնական կյանքի համար բավարար չեր համարում, այլ վորովհետև նրա հասարակական դիրքը դեռ վորոշ չեր։ Կրակից ապահովող ընկերության գործակալի պաշտոնը նրա աչքում մի չնչին բան եր։ Նա փափագում եր ավելի առաջ գնալ։ Բայց թե ինչպես—այս եր գլխավոր հարցը։ Արքունական ծառայության մեջ մտնել նա չեր ուզում։ Նա բժիշկ չեր, ինժեներ չեր, իրավաբան չեր, վոր յուր վորոշ շավիղը ունենար։ Յեվրոպական համալսարանի դիպլոմը շատ-շատ կարող եր նրա համար մի վորևե հայ դպրոցում տեսչի կամ ուսուցչի տեղ պատրաստել։ Բայց նրա քիմքը շատ և շատ բարձր եր այս տեսակ համեստ պաշտոններից։ Այլ բան եր, յեթե նա կարողանար մի հասարակական պաշտոն ստանալ մի վորևե հիմնարկության մեջ, թեկուզ քաղաքային վարչությունում, թեկուզ մի բանկում կամ մի ուրիշ տեղ։

Բայց հասարակական ընտրյալին լինելու համար պետք եյին մեծ կապեր։ Յեվ ահա այդ կապերից մեկը և ամենագլխավորը, ամենա-

գործավորը կարող եր լինել Պյոտր Սոլոմոնիչ Բախտամյանը։ Ո՞վ չեր ճանաչում քաղաքի այդ առաջնակարգ կալվածատիրոջը։ Վո՞ր փաստաբանը, վո՞ր բանկիրը, վո՞ր պաշտոնյան չեր կատարել այդ պատկառելի քաղաքացու խնդիրը։ Ուրեմն պետք եր գրավել այդ զորավոր մարդու համակրությունը։ Իսկ Բարաթյանը վոչ միայն դեռ չեր գրավել, այլ և զգում եր, վոր յուր հաճախ այցելությունները նրան դուր չեն գալիս։ Պատճառը նա շատ լավ գիտեր։ Պյոտր Սոլոմոնիչը վերին աստիճանի նախանձոտ ամուսին եր։ Յեվ Բարաթյանը այդ կողմից նրան մեղադրելու իրավունք չուներ։ Քսան ու յոթ տարեկան մարդը չեր կարող յուր տանը սառնասիրտ ընդունել յերիտասարդ հյուրեր։ Մանավանդ, վոր տիկին Բախտամյանը, Պյոտր Սոլոմոնիչի կարծիքով, չափից ավելի յեր ազատ վարվում յերիտասարդների հետ։ Իսկ Բարաթյանը ամենից կրթվածն եր, ամենից խելոքը, ամենից սրախոսը և, վոր գլխավորն ե, ամենից գեղեցիկը, վորի հրապույրին դյուրին չեր դիմանալ։

Մի բան կարող եր նրա համար տեղ բաց անել Պյոտր Սոլոմոնիչի սրտում — Գայանեյի հետ ամուսնանալը։ Նա գիտեր, վոր պատկառելի քաղաքացին այդ ամուսնության դեմ չեր լինի. միթե Գայանեյի համար նրանից ավելի հաջող կենակից կարո՞ղ եր գտնել։

Ահա ինչու Բարաթյանը գիշերվա կեսին առանձնացած յուր սենյակում՝ մտածում եր. ինչ անել, առաջ գիրք հաստատել, հետո ամուսնանալ, թե՞ ամուսնանալ գիրք հաստատելու համար։

Կար և մի ուրիշ կետ, վոր զբաղեցնում եր նրա միտքը կես գիշերին։ Յեվ վորքան նա աշխատում եր չխորհել, դարձյալ այդ միտքը համառությամբ հալածում եր յերիտասարդին։ Ժամանակ առ ժամանակ նրա աչքերի մեջ պսպղում եր մի կրքոտ փայլ։ Նա յուր հաստլիկ շրթունքները սեղմում եր սպիտակ խոշոր ատամներով, նրա առույգ այտերը դողում եյին, իսկ դեմքի վրա տարածվում եր մի ժպիտ, վոր հագուրդ չստացած հեշտասիրություն եր արտահայտում։

— Վո՛չ, այդ չպիտի անել, չպիտի անել, գոնե... Վեքիլյանի համար, — արտասանեցին նրա շրթունքները։

Նա նայեց աջ ու ձախ, կարծես, վախենում եր, վոր մի գուցե մեկը լսե այդ գաղտնիմաստ խոսքերը։

Հետևյալ որը նա բաց թողեց, յերրորդ որը ցերեկով դարձյալ գնաց Բախտամյանների մոտ։ Բարեբախտաբար, այս անգամ Պյոտր Սոլոմոնիչը տանը չեր։ Տիկինը նրան ընդունեց սովորական ուրախությամբ և անմիջապես խոսք բաց արեց Դիմաքսյանի մասին։ Նա բոլորովին չեր հավանել Բարաթյանի ընկերոջը։

— Դեմքի համար չեմ ասում, տերը նրա հետ, վարմունքը շատ վատ է։

Այո, Դիմաքսյանը տաղտկալի չէ. նա ընկերական շրջանի մարդ չէ։ Շարունակ վիճում է և հակառակում։ Տղամարդը պետք է հարգանքով վերաբերվի կանանց բոլոր ասածներին։

— Ինչո՞ւ բոլոր ասածներին,— ընդհատեց որիորդ Գայանեն,— միթե այդ պարտավորակա՞ն է։

— Պարտավորական չէ, սիրելիս, բայց քաղաքավարությունը պահանջում է։

— Քաղաքավարությունը պահանջում է միշտ կանանց շողոքորթե՞լ։ Ընդհակառակը, իմ կարծիքով, տղամարդը միշտ պարտավոր է ուղղել մեր սխալը. այսինքն մեզ հետ անկեղծ լինել։

Յերկու կանանց մտքերը հաշտեցնելու համար Բարաթյանը մեղմ և համոզիչ ձայնով նկատեց.

— Այո, որիորդ, ձեր ասածը բոլորովին ճշմարիտ է։ Բայց տիկինը դրա դեմ չէ։ Տիկինը բարեհաճում է ասել, թե տղամարդը կարող է կնոջ սխալը ուղղել, մինչև անգամ սովորեցնել նրան, բայց հասարակ կերպով և վոչ թե վարժապետական ձևով խրատել։ Խրատելը առհասարակ, ըըը, առհասարակ վայելուչ բան չէ։

— Ախ, պարոն Բարաթյան,— գոչեց տիկինը հիացած,— ինչ լավ գուշակում եք իմ միտքը, յերանի ամեն մարդ ձեզպես շուտ հասկանար ինձ։ Բայց գիտեք, ձեր Դիմաքսյանը շատ պակասություններ ունի, յես կարծում եմ, վոր այդ փոքրիկ մարդու մեջ մի շատ գոռոզ սիրտ է նստած։ Նա պետք է շատ նախանձոտ լինի։ Գայանե, խնդրեմ, չհակառակես, յես մարդկանց քեզանից շատ և շատ լավ եմ ճանաչում, իզուր չեմ յերկու-յերեք տարով քեզանից մեծ։ Այո, պարոն Բարաթյան, կարող եմ ասել ձեր ընկերը դժբախտ մարդ է։

— Ի՞նչով է դժբախտ։

— Իբրև թե չգիտեք, չե՞ք տեսնում նրա կերպարանքը, ֆի...

Բարաթյանը վեհանձնաբար նկատեց, թե տղամարդի համար արտաքինը վոչինչ նշանակություն չունի։ Նրա գեղեցկությունը խելքն է ու սիրտը։ Որիորդ Գայանեյին շատ դուր չեկավ այս նկատողությունը։ Նա գաղտուկ դիտեց Բարաթյանին և մտքումը ասաց.

«Դու համ գեղեցիկ ես, համ էլ խելոք»։

Նույն օրը յերեկոյան Դիմաքսյանի մոտ դարձյալ ընկերական ժողով էր։ Բարաթյանը, վոր ամենից առաջ էր յեկել, խոսք բաց արեց նրա հետ Բախտամյանների մասին և հաղորդեց, թե Դիմաքսյանը որիորդի և տիկնոջ վրա շատ լավ տպավորություն է գործել։ Դիտա-

վորությամբ ասած այս սուտը գրավեց Դիմաքսյանին, և նույն վայրկյանին նրա սրտում չքացավ այն թեթև ատելությունը, վոր դեռ մնում էր այնտեղ Բարաթյանի վերաբերմամբ։

IV

Դիմաքսյանը զբաղված էր յուր դասախոսությունով։ Նա մոռացել էր ուսումնարանական հոգսերը, ուսուցչական նիստերը։ Նույն իսկ ընկերական ժողովները։ Յերբ փաստերը կազմակերպեց, բանախոսության գաղափարը ծրագրեց, մի որ հայտնեց ընկերներին յուր մտադրությունը։

— Ի՞նչ է դասախոսության բովանդակությունը,— հարցրեց Բարաթյանը։

— Մեր յերկրի տնտեսական դրությունը։

— Հիանալի միտք,— գոչեց ամենից շուտ վոգևորվող Մոչերյանը։

Նույն հավանությունը տվեց և բժիշկ Սալամբեկյանը։ Իսկ Վեքիլյանը զգուշացրեց Դիմաքսյանին, վոր ծայրահեղ մտքերից խույս տա, առհասարակ խոհեմությունով խոսի։

— Այդ բանումն էլ խոհեմության քիթը ներս խրեցիր,— ձայն տվեց բարկացած Մսերյանը,— Վեքիլյան, պառավ հավի մսի պես որեց որ անմարսելի յես դառնում։

Բարաթյանը հարցրեց, թե ինչ նպատակի յե հատկացնելու դասախոսությունից գոյացած գումարը։

— Ազգային հիվանդանոց պետք է բանա, ինձ էլ կառավարիչ պետք է նշանակի,— հեգնեց Սալամբեկյանը։

Յերբ Դիմաքսյանը ասաց, թե արդյունքը վճռել է նվիրել կանանց նոր կազմվող ընկերությանը, Բարաթյանը հոնքերը վեր քաշելով արտասանեց.

— Մ՜ե՜թե՜։ Ուրեմն, յես կուրախացնեմ տիկին Բախտամյանին և որիորդ Գայանեյին։

Բայց Դիմաքսյանը ասաց, թե ինքն էլ է մտադիր այցելել Բախտամյաններին և անձամբ հայտնել յուր վճիռը։ Նրա հարաբերության մեջ զգացվում էր մի տեսակ բարկություն դեպի Բարաթյանը։ Նրա ձայնը նշմարելի կերպով դողում էր։

Յերեկոյան նա սովորականից ավելի խնամքով հագնվեց և գնաց Բախտամյանների տունը։ Այս անգամ Պյոտր Սոլոմոնիչը տանն էր։ Չնայելով յուր պատկառելի տարիքին, նա տակավին առույգ և առողջ մարդ էր, ավելի գեր, քան նիհար, ավելի ցածր, քան բարձր հասա-

կով։ Նրա կլորիկ և ուռած յերեսը, վոր յերկու որը մի անգամ սափըրվում եր, արտահայտում եր ապահով ու անհոգ բուրժուայի տրամադրությունը։ Իսկ ալեխառն հոնքերի տակ տեղավորված աչքերի մեջ ապրելու և յերկար ապրելու ցանկություն եր փայլում։

Դիմաքսյանը նրա հետ ծանոթացել եր արդեն առաջին պաշտոնական այցելության միջոցին։ Պյոտր Սոլոմոնիչը հավանել եր նրան և խնդրել եր շուտ-շուտ այցելել։ Դա մի շնորհ եր, վորին նա քիչ յերիտասարդների յեր արժանացնում։

Տիկին Բախտամյանը անզգուշություն ունեցավ հարցնել Բարաթյանի մասին։ Դիմաքսյանը պատասխանեց, թե նա յերևի զբաղված ե, վոր չեկավ, վորովհետև մտադիր եր գալու։

— Զբաղված,—գոչեց Պյոտր Սոլոմոնիչը կիսահեգնաբար,—Բարաթյանը զբաղված, այդ առաջին անգամն եմ լսում։

Նրա հեգնության մեջ յերևում եր մի տեսակ ատելություն դեպի յերիտասարդը։ Ատելություն, վոր նա չեր ել աշխատում թագցնել։ Օրիորդ Գայանեն մյուս սենյակից ներս յեկավ։ Նրա աչքունքը կիտվեցին, յերբ տեսավ, վոր Դիմաքսյանը մենակ ե յեկել. յերևում եր, վոր նա յել սպասում եր Բարաթյանին, ինչպես տիկինը։

Պյոտր Սոլոմոնիչը շարունակեց խոսել Բարաթյանի մասին։

— Հայր ու վորդի մի խնձոր են յերկու կտոր արած։ Յես նրա հոր հետ միասին եմ ուսում առել գիմնազիայում Վարանցովի ժամանակ։ Առհասարակ Բարաթովները հայտնի պտուղներ են...

Դիմաքսյանը խոսակցության նյութը փոխեց։ Նա հետաքրքրվեց քաղաքային գործերով։ Յեռանդուն իրավասուն, կարծես, հենց մի այդպիսի բան եր սպասում, վոր ցույց տա, թե ինքը վորքան ազատամիտ քաղաքացի յե։ Նա պաշտպանեց Ջրանցքի խնդիրը։ Նա խոսեց ձիաքարշ յերկաթուղու ոգուտների մասին, ծաղրեց միքանի իրավասու հռետորների, գովաբանեց քաղաքագլխին։ Առհասարակ հայտնեց, վոր նրա ուղեղը անչափ զբաղված ե քաղաքային գործերով։ Մի հանգամանք, վոր սաստիկ բարկացնում եր նրա կնոջը, վորովհետև Պյոտր Սոլոմոնիչը միշտ ձանձրացնում եր նրան այն բանով, վոր Աննային բնավ չեր հետաքրքրում—դումայի պեսպես վճիռներով։

Վերջապես, Դիմաքսյանը հաջողեց խոսք բաց անել կանանց ընկերության մասին։ Բայց այստեղ ել Պյոտր Սոլոմոնիչը չթողեց վոչ վոքի խոսել։ Նա վոտով գլխով ընդդեմ եր այդ ընկերությանը։

— Սուտ բան ե, ինչ ընկերություն, ինչ մընկերություն։ Միքանի անգործ աղջիկ պարոններ հավաքվել են, ուզում են իրանց համար գործ սարքել։ Կնիկը ինչ ե, վոր հասարակական գործիչ դառնա։

Տիկինը այլևս չկարողացավ իրան զսպել։

— Կնիկը խելքի՝ յել պակաս չե տղամարդից։ Այդպես են, այ, պարոն Դիմաքսյան, յես ձեզ չեյի՞ ասում, հենց վոր միքիչ աչք ենք բաց անում, ուզում ենք ուրիշների յել աչքը բաց անել, սկսում են ծաղրել, հալածել։ Արի ու այստեղ գործ տես։

— Գործ տես, խը, խը, խը, գործ տես։ Ի՞նչ պիտի անի ձեր ընկերությունը, հարցնում եմ, շատ-շատ մի ուսումնարան պետք ե բաց անի, ոհո՜, չերևելի բան։ Տո՛, թողեք ե՛։

Դիմաքսյանը փորձեց պաշտպանել կանանց իրավունքները։ Բայց իզուր, Պյոտր Սոլոմոնիչը կատաղի թշնամի յեր կանանց գործունեության, առանձնապես յուր ամուսնու մասնակցության։ Հարկավ՝ նա թագցնում եր իսկական պատճառը։ Նա կասկածում եր, վոր ընկերությունը յերիտասարդ կանանց համար մի նոր առիթ ե տղամարդկանց հետ ավելի ազատ շփվելու համար։ Չե՞ վոր առանց այդ ել Բարաթյանը արդեն թթվացրել եր նրա սիրտը։

— Գայանեյի համար խոսք չունեմ, յեթե նա ուզում ե, կարող ե ընկերության մեջ մտնել, բայց դու, Աննա, հեռու պահիր քեզ, ինչ գործ ունես ջահել-ջհուլների հետ։

— «Ջահել-ջհուլներ», ինչ, միթե Աննան պառավ ե։ Տիկինը կատաղեց և ներքին ալեկոծությունից՝ յեփած խեցգետնի պես կարմրեց։ Գայանեն պաշտպանեց նրան։ Նա ասաց, թե անկարելի յե, վոր Աննան չմասնակցի ընկերությանը, քանի վոր գործը արդեն սկսվել ե։ Բացի դրանից, յեթե Աննան հեռանա, ինքն ել պետք ե հեռանա։

— Առանց նրան ինձ համար անհարմար ե. գործելը, յես չեմ ուզում շատ ել ինքնագլուխ լինել։

Այս դարձվածը դուր չեկավ Դիմաքսյանին։ Նա բացատրեց, թե ով կամենում ե ուրիշներին ոգտավետ լինել, առաջ ինքը պետք ե սովորի անկախության։ Իսկապես նա մի բան եր ցանկանում — տեսնել որիորդին ազատ վորևե հովանավորությունից, մանավանդ տիկին Բախտամյանի, վորի համակրությունը դեպի Բարաթյանը անչափ անհաճություն եր պատճառում նրան։

Նրա միջամտությունը մի նոր գրգիռ տվեց տիկնոջ բարկությանը։ Արդեն նա առանց այն ել սիրելի չեր տիկնոջը, իսկ այժմ հանդգնում ե Գայանեյին ազատե՞լ նրա ազդեցությունից։

— Լավ, — հազիվ զսպելով յուր կատաղությունը, ասաց տիկինը, — թողնենք այս խոսակցությունը։

Յեվ մի վատ հայացք ձգեց Դիմաքսյանի վրա։ Դա մի լուռ նշան եր, վորով նա միանգամ ընդմիշտ հայտնեց յուր հակակրությունը յերիտասարդին։ Պյոտր Սոլոմոնիչը նկատեց այդ և, կարծես, կնոջը գըրգռելու համար, սկսեց ավելի սիրալիր վարվել յուր հյուրի հետ։

— Յես կկամենայի,— ասաց նա,— որ այդ ընկերության մեջ դուք էլ խառն լինեք: Դուք շատ օգուտ կտայիք:

— Անմիջապես չեմ խառնվի, բայց կողմնակի կերպով կաշխատեմ օգտավետ լինել,— պատասխանեց Դիմաքսյանը, ոգևորվելով հանգամանքից,— յես մտադիր եմ շուտով ընկերության օգտին մի դասախոսություն կարդալ:

Լուրը շատ լավ տպավորություն գործեց որբորդ Գայանեյի վրա: Նա մինչև անգամ ուրախացավ: Այնինչ՝ տիկին Բախտամյանը նկատեց, թե դասախոսությունից հազիվ փոքր ի շատե մի խոշոր գումար գոյանա: Որբորդը ասաց, թե բանը գումարը չէ, այլ համակրությունը: Տիկինը, Դիմաքսյանին գրգռելու նպատակով, հայտնեց, թե Բարաթյանն էլ մտադիր է թատրոնասերների մի ներկայացում կազմել:

— Այ, ներկայացումը ուրիշ բան է, յես կարծում եմ հազար ռուբլի կմտնի մեր գանձարանը:

Տիկինը հասավ յուր նպատակին: Դիմաքսյանը լուռ, աչքերը լայն բաց անելով, նայեց նրա յերեսին, այնքան վատ հնչեց նրա ականջին այդ անսպասելի նորությունը: Դարձյալ Բարաթյանը. այդ ինչ բան է, մի՞թե յերկու ընկերները սկսում են մրցել կանանց դուր գալու համար:

Արդեն բավական ուշ էր, ժամանակ էր հրաժեշտ տալու, բայց նա չէր ուզում կամ, ճիշտն ասած, չէր կարողանում տեղից վերկենալ: Կարծես մի բան նրան կապկպել էր և կպցրել բազկաթոռին, վորի վրա նա շարունակ նստած էր ներս մտնելու րոպեյից:

Նրա դեմ ու դեմ պատին քաշ արած էր մի մեծ հայելի: Մինչև այժմ նա այդ չէր նկատել: Հանկարծ նրա հայացքը ընկավ յուր փոքրիկ կերպարանքի վրա, և նա մի վորոշ ցնցողական շարժում գործեց: Ախ, վո՜րքան նա պստիկ և աննշան էր այդ րոպեյին յուր աչքում: Փափուկ բազկաթոռը ագահությամբ ամբողջովին կլանել էր նրան, և միայն յերևում էր նրա խոշոր գլուխը:

Դարձյալ նա շփոթվեց, դարձյալ ինքնասիրության զգացումը գրգռվեց նրա մեջ: Նա կամեցավ հակառակել մեկին, ում և լինե, վիճել, կռվել: Նա պատրաստ էր նույնիսկ Գայանեյին հենց իսկույն, առանց այլ և այլի, սաստիկ հանդիմանել: Անսիրտ որբորդ, ինչու չես ճանաչում քո դեմ նստածին: Մի՞թե կարծում ես այդ փոքրիկ մարմնի մեջ նստած հոգին նույնպես փոքրիկ է: Վո՛չ, դու պետք է ճանաչես Դիմաքսյանին, պետք է զգաս նրա մտքի և հոգու զորությունը: Նա վոտքի կանգնեց հանկարծ, անսպասելի կերպով: Նա գունատ էր, և վոչ-վոք չգիտեր նրա գունատության պատճառը: Վոչ-վոք չխնդրեց

նրան չշտապել, բացի Պյոտր Սոլոմոնիչից, այն էլ կիսաբերան։ Նա դուրս եկավ շտապ քայլերով։ Փողոցի սառն օդը խփեց նրա տաքացած ճակատին։ Նա ուշքի եկավ, զգաց, որ չափազանց շփոթված էր, զգաց նույնպես, որ անշուշտ վատ տպավորություն է թողել օրիորդի վրա։ Նա մի վայրկյան կանգ առավ փողոցի մեջտեղում, ամուր սեղմեց ճակատը և հառաչելով արտասանեց.

— Այո՛, տեսնում եմ, որ այդ օրիորդը ինձ խելքից պետք է հանի։

Եվ քաշքշվելով խոնավ սալահատակի վրա, անհետացավ գիշերային մթության մեջ։

Տիկին Բախտամյանը, հյուրը գնալուց հետո, ազատություն տվեց յուր կատաղությանը։ Արդեն նա բավական տանջվել էր, զսպելով յուր սրտի ալեկոծությունը։

— Վերջը դու քեզ էլ, ինձ էլ ծաղրի առարկա կդարձնես ուրիշների մոտ։ Տեր աստված, ի՞նչ խայտառակություն, այն էլ ո՞ւմ մոտ, մի մի մի...

— Ցերեկի և պաշտոնական յերիտասարդի մոտ։ Բա՛ս, Դիմաքսյանը հիանալի մարդ է, նա իմ շատ լավ բարեկամն է։

— Լավ բարեկամ ես գտել, տես ուրիշները ձեռքից չխլեն, հա հա հա։

— Ասում եմ, հիանալի յերիտասարդ է, դու չել տաս «հա»։ Այնպես չէ՞, Գայանե, բարի, խելոք, իմաստուն յերիտասարդ է։

Գայանեն վոչինչ չպատասխանեց և վոչ մի նշանով չարտահայտեց յուր համակրությունը կամ հակակրությունը։ Պյոտր Սոլոմոնիչը շարունակեց.

— Իմ աչքում նա ամենաքիչը մի դյուժին Բարաթովներ արժե, ուղիղ մի դյուժին։ Նրա մի ծուռ քիթը չեմ փոխել տասը սիրուն ֆրանտների հետ, բա՛ս, չեմ փոխել քո այդ... լպստած Բարաթովների հետ։

Եվ բարկացած անցավ յուր սենյակը։

— Խելագարվել է այսօր, ինչ է,—գոչեց տիկին Բախտամյանը,— ինչո՞ւ ես այդպես կատաղել Իսակ Գասպարիչի դեմ։ Կարծեմ, ամենքն էլ գիտեն, թե ինչու համար եմ այդ յերիտասարդին ընդունում։ Գայանե, խոմ, դու գիտես, ինչո՞ւ չես պաշտպանում, յես քո պատճառով եմ այս նախատինքը ստանում ամեն օր։

Օրիորդը մի վայրկյան գլուխը թեքեց կրծքին և վոչինչ չպատասխանեց։ Մի ինչ-որ մութ, անորոշ կասկած շփոթեցրեց նրան։ Նա չէր ուզում տիկնոջ յերեսին նայել։ Այնինչ՝ տիկինը միայն կա-

նանց հատուկ նուրբ բնազդով զգաց նրա շփոթության հիմնական պատճառը։ Դա միայն որբորդի համակրությունը չէր Բարաթյանին, այլ կար մի ուրիշ, ավելի լուրջ հիմունք։ Ինչո՞ւ Պյոտր Սոլոմոնիչը այնքան պարզ նախանձում է Բարաթյանին, մտածում էր որբորդը։ Միթե իզո՞ւր, հենց այնպե՞ս։ Վոչ, վոչ, այդ անկարելի է։ Պյոտր Սոլոմոնիչը թեթևամիտ, անտակտ մարդ չէ։ Անկասկած նրա ամուսնական սուր աչքերը հեռվում, գուցե շատ հեռվում մի կասկածելի մութ գիծ են նշմարում։ Վերջապես, ինչո՞ւ Գայանեի սիրտը յերբեմն ակամա, հակառակ խելքին, հակառակ Բարաթյանի մասին կազմած նպաստավոր կարծիքին, յենթարկվում է մի վատ, մի գարշելի, մի դիվային կասկածի։

Նա գլուխը բարձրացրեց։ Տիկինը, բութ մատը ատամներով կծած, նայում էր հատակին։

— Ախ, գոչեց նա հանկարծ, խույս տալով Գայանեի հայացքից,— յերեխաները քնեցին առանց ինձ համբուրելու։

Նա արագ քայլերով անցավ կից սենյակը, ուր ննջում էին նրա մի զույգ զավակները։

Գայանեն նայեց նրա յետևից, և մի դառն ժպիտ յերևաց նրա սիրուն շրթունքների վրա։

Այդ գիշեր մի ծանր, մի դաժան միտք յերկար ժամանակ նրան հանգստություն չէր տալիս։

VII

Վերջին ժամանակ Դիմաքսյանը տանը շատ քիչ էր զբաղվում։ Հակառակ սովորականին, ամեն յերեկո նա դուրս էր գալիս Մսերյանի հետ զբոսնելու և այնքան յերկար ժամանակ, մինչև վոր հոգնում էր։ Նա անհանգիստ էր, տխուր, քիչ էր խոսում և առհասարակ շատ զարմացնում էր Մսերյանին։

Մի օր յերկու ընկերները գնացին Վեքիլյանի մոտ, ուր նրանք դեռ չէյին յեղել։ Թեև իրավաբանը յուր ծնողների հետ էր ապրում, բայց նրա բնակարանը բոլորովին առանձին էր, բաղկացած յերկու մաքուր և սիրուն կահավորված սենյակներից։

Այստեղ ամեն բան յուր տեղն էր, և՛ փափուկ շքեղ անկողինը, և՛ թավշյա բազկաթոռները, և՛ օրորվելու աթոռը, և կարմիր մահուդով ծածկված գրասեղանը յուր բոլոր պարագաներով, և՛ տուալետի սեղանը հոտավետ յուղերով, բազմաթիվ խոզանակներով և այլն և այլն։ Ամեն տեղ յերևում էր մաքրասեր, ճշտասեր, զգույշ և ֆրանտ Վեքիլյանի սովերը։ Նույնիսկ սենյակների ձևը հիշեցնում էր կենողին։

Իրավաբանը յուր ընկերներին ընդունեց անսահման քաղաքավարությունով, հյուրասիրեց քաղցրահամ խմիչքներով և անուշահոտ սիգարով: Նրան առաջարկել եյին գավառում քննիչի պաշտոն, չեր ընդունել: Նա կամենում եր անպատճառ Թիֆլիզում մնալ: Յերեք ամիս եր նա սկսել եր պարապվել փաստաբանությունով «չերդվյալ հավատարմատարի ոգնականի» կոչումը ընդունած:

Նա պատմեց մի քանի դատաստանական արկածներ, միշտ աշխատելով յուր արհեստի վսեմությունը պաշտպանել: Փաստաբանությունը, իրավ ե, շատերի համար հարստահարության աղբյուր ե, ասում եր նա, բայց վոչ «բարոյական սկզբունքի տեր և բարեխիղճ» մարդու համար: Ասպարեզը ընդարձակ ե, մարդկությանը ծառայել կարելի յե: Վորքան անմեղներ կան պաշտպանության կարոտ, քանի-քանի կյանք կարելի յե կորստից փրկել: Միևնույն ժամանակ, այստեղ ավելի հնարավոր ե «ազգի համար ոգտակար» լինել, քան մի ուրիշ տեղ:

Արդեն ամեն որ գավառներից հայեր են գալիս նրա մոտ: Նա վճռել ե առաջ նրանց պաշտպանել, հետո ուրիշներին: Բացի դրանից, սկզբունք ե դրել հայերից յերեսուն տոկոս պակաս վերցնել գոնորարը և մինչև կյանքի վերջը պետք ե այդպես անի: Մի հարուստ վաճառական հինգ-տասը հազար տալիս ե ազգին և յուր անունը անմահացնում: Իսկ նա քիչ-քիչ քսան տարի փաստաբանություն կանի, և նրա յերեսուն տոկոս զիջողությունը մի քանի տասնյակ հազարներ կկազմի:

— Կարծեմ, հայ ազգը դժգոհ չպիտի լինի մեզանից:

Նա խոսում եր լուրջ յեղանակով, հանդարտ, ամեն բառը առանձին շեշտելով, ինչպես տարիքը լրացրած մի փորձված դիպլոմատ: Ժպիտը չեր հեռանում նրա յերեսից, աչքերի բիբերը անընդհատ խաղում եյին, ինչպես մի զույգ լուսավոր ջահեր, վոր առաջնորդում եյին նրան դեպի անդորր, ապահով և անվրդով կյանք:

Դուրս գալով նրա մոտից, Մսերյանը հայտնեց Դիմաքսյանին յուր վրդովմունքը: Նա ասաց, թե, կարծես, մի բան որից որ անջատում ե նրան իրավաբանից և թե դիմանալ չի կարող այդ մարդու հղկած մարմարիոնի պաղությանը:

— Յես կարծում եմ, յեթե աշխարհում ջրհեղեղ լինի, Վեքիլյանը ապահով նստած մի յերկար ձողի գլխին, այնտեղից ել կժպտա:

Իրիկնադեմ եր, յեղանակը ցուրտ: Փողոցների սառած ցեխը սեվացել եր և կպել գետնին ամուր քարի պես: Դանդաղ ձյունի աստղաձև հատիկները քիչ-քիչ ծածկում եյին յերկիրը բարակ սպիտակ

շղարշով։ Օդը անշարժ էր, քամու նշույլ անգամ չկար։ Քաղաքացիների զբոսանքի սովորական ժամանակն էր։ Գոլովինսկի պրոսպեկտի վրա անց ու դարձ էր անում բավական մեծ բազմություն, զվարճանալով ձմեռային այն սառն և դյուրեկան եղանակով, վոր հաճախ է պատահում Թիֆլիզում փետրվարի սկզբին։

Երեք ընկերները մտան ամբոխի շարքը։

Մեսրյանը տաքացած պարսավում էր մի ինչ-վոր հիմնարկություն, ուր նա կամեցել էր պաշտոն ստանալ, կառավարիչը նրանից վկայական էր պահանջել։ Դիմաքսյանը հանգստացրեց նրան, ասելով, թե չարժե վրդովվել, եթե փողի կարոտություն ունի, կարող է նրանից ստանալ։

— Վոր սպանես՝ չեմ վերցնի,— հրաժարվեց Մեսրյանը,— փողի պարտքը բարոյական ծանրություն է ինձ համար։ Փառք աստծո, դեռ շատ էլ քաղցած չեմ, երկու դաս ունեմ։

Նրանք քայլում էին արագ-արագ։ Դիմաքսյանը հազիվ կարողանում էր հետևել Մեսրյանի լայն քայլերին։ Հանկարծ նա սայթաքեց և անշուշտ կընկներ, եթե ուղեկիցը յուր ուժեղ ձեռով չբռներ նրա թևից։ Նա բարձրաձայն ծիծաղեց ինքն յուր վրա, վոչ այնպես, ինչպես ակամա ծիծաղում են սառույցի վրա սայթաքողները։ Դա մի արվեստական ծիծաղ էր, վորով նա քողարկում էր յուր՝ փոքրիկ մարմնի թերությունից առաջացած՝ բնական վրդովմունքը։

Հազիվ նա գլուխը բարձրացրեց, և մի ուրիշ դեպք ավելի վրդովեցրեց նրան։ Դեմ ու դեմ գալիս էր Բարաթյանը, ուրախ, զվարթ, գեղեցիկ, առողջ Բարաթյանը—Գայանեյի հետ։ Ցուրտը որիորդի դեմքին տվել էր մի անբնական կարմրություն։ Նրա կապույտ աչքերի մեջ վառվում էր կենսականության հուրը յուր բոլոր ուժերով։ Գեղեցիկ փետուրով զարդարված գլխարկի տակից երևում էին գանգուր մազերի ծայրերը։ Ի՛նչ սազում էր նրա երեսին և հասակին այդ կակուղ մեխակագույն «բոան», վոր անփույթ կերպով գրկել էր նրա պարանոցը։

Դիմաքսյանը կամեցավ երեսը ետ դարձնել, վոր անցնողներին չտեսնի։ Բայց Բարաթյանը դեռ հեռվից գլխարկը բարձրացրեց, իսկ Գայանեն մի քանի անգամ գլուխը շարժեց։ Նրանք անցան, թողնելով Դիմաքսյանի ականջում իրանց անհոգ քրքիջի հնչյունները։ Նրա ծնկները դողացին։ Բայց ինքնասիրությունը թելադրում էր զսպել շփոթությունը, և նա դարձյալ ծիծաղեց, այս անգամ ավելի անբնական և ավելի բռնի կերպով։

— Ինչպես երևում է, մեր պարոնի աչքը կպել է այդ աղջկան։ Ամեն օր նրանց միասին եմ տեսնում։

Ցերանի քեզ Մսերյան, որ կարողանում ես այդ խոսքերը սառն կերպով արտասանել։ Ուշադրություն դարձրու քովդ գնացողի վրա. նա միանգամայն ընկճվել է, փոքրացել։ Նա հազիվ կարողանում է քայլել, նրա շրթունքները և յերեսի կաշին ցնցվում են։

— Դու մրսում ես։

— Այո,—պատասխանեց Դիմաքսյանը, թեև նրա ամբողջ մարմինը վառվում եր ներքին կրակից։

— Մտնենք այն կաթնատունը, չես կամենում եմ մի բաժակ թեյ խմել։

Նրանք անցան հակառակ մայթի վրա և մտան մի տան սառըին հարկը։ Ցերկու փոքրիկ սենյակները լիքն եյին հյուրերով։ Նրանք նստեցին առանձին սեղանի մոտ, վոչ հեռու յերեք պարոններից, վորոնք այդ միջոցին տաք-տաք վիճաբանում եյին։ Մեկը այդ պարոններից, վոր ավելի տարիքավոր եր, պնդում եր, թե Եջմիածնի նոր բացված ճեմարանի հիմնական նպատակն է ընտիր հոգևորականներ պատրաստել։ Մյուսները հակառակում եյին, թե միայն հոգևորականներ պատրաստելը բավական չէ, ճեմարանը պետք է ազգային գիտության նախադուռը լինի, նա չպիտի սահմանափակվի կղերական հոգով և այլն և այլն։

— Ներողություն, մեր գոյությունը միայն յեկեղեցուց է կախված, մենք կրոնական ազգ ենք։

— Ուրեմն դուք հերքո՞ւմ եք ազգային գոյության առաջին հիմքը—հողը և լեզուն։

Դիմաքսյանը և Մսերյանը ակամա հետաքրքրվեցին այս վիճաբանությունով և լուռ լսում եյին։

Տարիքավոր պարոնը բարկացած ընդհատեց յուր սեղանակիցների խոսքը և վերկացավ։

— Այդպես եք, այ,—գոչեց յերիտասարդներից մեկը,—միշտ փախչում եք վիճաբանություններից։ Իզուր չի ասում Դիմաքսյանը, թե հետադեմները գիտեն միայն պատի յետեից կռվել։

— Ի՞նչ Դիմաքսյան։

— Նա, վոր հնապաշտների անմիտ կուռքերը ջարդ ու փշուր է անում։

Տարիքավոր պարոնը ուսերը թոթվեց և դուրս յեկավ։ Մյուսները նույն վայրկյանին նկատեցին Դիմաքսյանին և միաժամանակ շըփոթվելով կամացուկ դուրս գնացին։

Դիմաքսյանի սիրտը լցվեց անսահման ինքնագոհությամբ։ Այդպես, ուրեմն, արդեն նրա մասին խոսում են, նրա խոսքերը ապա-

ցույց են բերում, նրա առաջ խոնարհվում են։ Ահա խելքի ուժը։ Յեվ ո՞վ կարող է այսուհետև ասել, թե նա կոչված չէ հասարակական մտքի առաջնորդ դառնալու։ Դարձյալ նա բարձրացավ յուր աչքում, մոռացավ մի քանի րոպե առաջ կրած անախորժ զգացումները։ Նա զգաց յուր մեջ մի այնպիսի բարոյական ուժ և վստահություն, վոր մինչև այդ ժամանակ չէր զգացել։

— Լսեցի՞ր,— ընդհատեց նրա մտքերը Մսերյանը,— կնշանակե խոսքդ արդեն սկսել է ազդել, շատ ուրախալի չէ այդ։

Դիմաքսյանը պատրաստ էր գրկել և համբուրել ընկերոջը, այդ բարեսիրտ, աննախանձ և սիրելի Մսերյանին։

Նա շտապեց դուրս գալ կաթնատնից։ Այժմ նա զգում էր աշխատելու անզսպելի պահանջ։ Վո՛չ, չպիտի մտածել ուրիշ վոչ մի բանի մասին, պետք է գործել, ոգուտ բերել և անուն վաստակել։ Խելքի ուժով վստահ անել մարդկանց ծաղրը, արհամարհանքը։ Թող անուշադիր թողնեն նրան գեղեցկադեմ կանայք, կգա ժամանակ, ամենքը կխոնարհվեն և յերկրպագություն կտան նրա հանճարին։ Յերբե՛ք նա չի ընկնիլ աշխարհի հաճույքների յետևից։ Յերբե՛ք յուր թանգագին որերը չի վատնիլ անմիտ կենցաղավարությամբ։ Սիրել մեկին, ինչո՞ւ, քանի վոր կարելի յե սիրել ամբողջ մարդկությունը։ Սիրե՛լ արդյոք, վո՛չ, ատել և ատելով հանդերձ գործել ամենքի համար։

Այսպես էր մտածում նա դրսում, իսկ յերբ տուն հասավ, կրկին պատկերացավ նրա առջև զվարթ, ուրախ, գեղեցկադեմ Բարաթյանը։ Այո, նա կյանքի մեջ հաջողություն կունենա, նրան կշրջապատեն սիրուն կանայք, նա կփայլի հարուստ սալոններում. նրա յետևից զզվանքով կընկնեն մայրերը։ Իսկ ինքը կմնա աննկատելի, ընկճված, ճնշված հասարակական շրջաններում, կանանց ընկերության մեջ։ Նրան կհամարեն տաղտկալի, ձանձրալի, տգեղ, վորովհետև նա չունի Բարաթյանի շուքը և հրապույրը, նրա ուրախ և սիրուն դեմքը, նրա համարձակ և ելեգանտ ձևերը։ Կրկին նրա մտքերը տակն ու վրա յեղան, նորից դառնությունը համակեց նրա սիրտը։ Նա կատաղեց յուր թուլության դեմ, նա անիծում էր յուր փոքրոգությունը և, միևնույն ժամանակ, չէր կարողանում խեղդել յուր մեջ այն վտանգավոր ցեցը, վոր սկսել էր ուտել նրա սիրտը և վորի անունն էր նախանձ։

VIII

Որիորդ Գայանեն աշխատում էր տարածել Դիմաքսյանի դասախոսության տոմսակները։ Առանձին սիրով ոգնում էր նրան Բարաթյանը, վոչ այնքան յուր ընկերոջ ունկնդիրների թիվը շատացնելու,

վորքան որիորդին և տիկնոջը դուր գալու համար։ Ինչպես նա Դիմաքսյանի դասախոսությանը մի առանձին նշանակություն չեր տալիս և հաճախ թեթևակի հեգնում եր նրան որիորդի ու տիկնոջ մոտ։ Յուր հոգու խորքում այն կարծիքի չեր, վոր Դիմաքսյանը անկարող ե վորևե միտք լոգիկարար, գրական ձևով, անշեղ արծարծել։ Նա զգում եր ընկերոջ յեռանդը, բուռն ձգտումների ուժը, բայց համարում եր նրան անկանոն խելքի տեր։ Նա համոզված եր, վոր այդ յեռանդը ու ձգտումները նրա մեջ առաջ են գալիս անհագ փառասիրությունից, վոր նա ձգտում եր հասարակության մեջ հռչակ ձեռք բերել։

Բացի դրանից, նա Դիմաքսյանին համարում եր վերին աստիճանի նախանձոտ։ Գիտեր, վոր ընկերը անտարբեր չե դեպի որիորդ Գայանեն։ Յեվ այս առիթով մտքում ծաղրում եր Դիմաքսյանին, աչքի առջև ունենալով նրա փոքրիկ և տգեղ կերպարանքը։ Միևնույն ժամանակ, նա սրտի խորքում զգում եր մի անբացատրելի յերկյուղ այդ մարդուց և շատ էլ դյուրին բան չեր համարում նրա հետ մրցելը։

Իսկ որիորդ Գայանեն որեց որ ավելի ու ավելի ընտելանում եր Բարաթյանին։ Նրանք տեսակցում եյին այժմ շատ հաճախ։ Յուր բարեբարո բնավորության շնորհիվ նա փոքր ինչ գրավել եր Պյոտր Սոլոմոնիչին, գոնե այնչափ, վոր կարողանում եր շաբաթը մի կամ յերկու անգամ այցելել որիորդին։ Ուրիշ ժամանակ նա Գայանեյի հետ տեսնվում եր մերթ թատրոնում, իսկ ամենից ավելի փողոցում։

Սիրո բացարձակ արտահայտություն տակավին տեղի չեր ունեցել նրանց մեջ։ Սակայն յերկուսն էլ գիտեյին, վոր միմյանց համակրում են։

Մի անգամ Բարաթյանը խոսք բաց արեց Դիմաքսյանի մասին և թույլ տվեց, վոր որիորդը ասե յուր կարծիքը։ Գայանեն գովեց Դիմաքսյանին, համարելով նրան շատ խելոք, մինչև անգամ տաղանդավոր։ Բարաթյանը քթի տակ թեթևակի ծիծաղեց, որիորդը շփոթվեց։

— Իսկ ձեր կարծիքով նա ինչպես մարդ է։

Բարաթյանը մի քանի վայրկյան մտածեց, ապա խորհրդավոր յեղանակով արտասանեց.

— Նա, ըըը, նա աննորմալ մարդ է։

Ուրիշ նա վոչինչ չավելացրեց, այս յերկու խոսքով արտահայտած համարելով յուր ամբողջ գաղափարը Դիմաքսյանի մասին։

Դասախոսության յերեկո նրանք միասին գնացին կլուբ։ Հակառակ սպասածին դահլիճը կիսով չափ եր միայն լիքը։ Շատերը տոմսակների գները վճարել եյին, իրանք չեյին յեկել։ Հանդիսականների մեծ մասը բաղկացած եր ուսուցիչներից և վարժուհիներից։ Կային և

մի քանի գառող զույգեր, վորոնք իրանց արիստոկրատ էյին համարում այն հիման վրա, վոր միջոց ունեյին ժամանակակից մոդայով հագնվել: Իսկ վաճառական դասից շատ քչերն էյին ներկա:

Դահլիճի ծայրում յերևում եր գրքակալի նման մի նեղ սեղան, վորի վրա դրված էյին մի բաժակ և մի շիշ ջրով լի:

— Ճիշտ փիլիսոփայության պրոֆեսորի ամբիոն,— հեգնեց Բարաթյանը:

Հետո նա, ներողություն խնդրելով Գայանեյից, թողեց նրան մի ծանոթ տիկնոջ հետ, շտապեց Դիմաքսյանի մոտ:

Դասախոսը շրջապատված եր յուր ընկերներով: Մաքուրը, նորաձև հագնված Վեքիլյանը, տեսնելով Բարաթյանին, գլխով մի ծաղրական շարժում գործեց դասախոսի վերաբերմամբ: Նրա նոր սափրած կլորիկ թուխ յերեսի կաշին փայլում եր ինչպես լաքված ձեռնոց: Այդ յերիտասարդը առհասարակ ամեն մի հասարակական գործի և գործիչի վերաբերվում եր թերահավատորեն, բայց յերբեք պարզ չեր արտահայտում յուր կարծիքը: Միայն նրա փոքրիկ, խորամանկ աչքերի մեջ կարելի յեր կարդալ այդ կարծիքը, վոր միշտ աննպաստ եր, մանավանդ Դիմաքսյանի վերաբերմամբ:

Նա փոքր ինչ ակնածում եր միայն Բարաթյանից, վորի սուր լեզուն, անփույթ վարմունքը և, միևնույն ժամանակ, զգույշ դատողությունները թե նրան դուր էյին գալիս և թե վախեցնում էյին:

— Ինչու չի սկսում,— հարցրեց Բարաթյանը:

— Սանխոն խորհուրդ չի տալիս շուտ սկսել:

Վեքիլյանը «Սանխո» անվանում եր Մսերյանին, հարկավ, Դոն-Քիշոտի տեղ ընդունելով Դիմաքսյանին:

Այդ միջոցին դասախոսը մոտեցավ հայելուն փողկապը ուղղելու: Նա հագած եր ֆրակ, վոր նրա փոքրիկ ու վոսկորոտ մարմնի անկանոն մասերը ավելի ու ավելի վորոշ եր կացուցանում: Հայելու մեջ նա տեսավ յուր հետևում կանգնած Բարաթյանին: Մոտալուտ համեմատությունը դարձյալ գրգռեց նրա բնական նախանձը: Նա դունատ յերեսը դարձրեց, բարևեց ընկերոջը և, ճակատը շփելով, դուրս յեկավ բեմ: Հանդիսականները նրան ընդունեցին կարճատև և դանդաղ ծափահարություններով:

Դասախոսությունը բաղկացած եր յերկու մասից. առաջինը ընդհանրապես քաղաքատնտեսության եր վերաբերվում, յերկրորդը յերկրի տնտեսական վիճակին:

Ամուր, անհողդողդ և ազդու ձայնով նա բացատրում եր գիտությունը: Նա խոսում եր վոչ իբրև մի մասնագետ չոր ու ցամաք թեո-

րիայի սառն տրամաբանությունով, այլ պարզ, համառոտ և մատչելի ոճով, ինչպես մի խելական պրոպագանդիստ։

Ունկնդիրները հետաքրքրվեցին։

Հետզհետե նա վոգևորվում եր։ Մերթ նրա ձայնը բարձրանում եր, մերթ մեղմանում։ Յերբեմն նա կանգ եր առնում և մի քանի կաթիլ ջրով կոկորդը թրջում։ Նա չեր շփոթվում, չեր դողում, ինչպես անփորձ դասախոսները։ Նա ազատ տիրում եր խոսքին, վորպես հմուտ քարոզիչ կամ շնորհալի դերասան։ Շարքերով ցցված գլուխները նրա աչքում խառնվել եյին և կազմել մի ողետ, խավար ամբողջություն, դեպի ուր նա սփռում եր լույս շողքերը։ Վորքան նա բարձր եր զգում իրան այդ ամբոխից։ Թվում եր նրան, թե կանգնած է ուսուցչական ամբիոնում, յուր առաջ նստած են անչափահաս աշակերտներ։ Նա ավարտեց առաջին մասը այնպես, վոր, կարծես, մի հետաքրքրական վեպ ընդհատեց։ Նրան յերկար ժամանակ ծափահարեցին, չդուրս յեկավ շնորհակալություն հայտնելու։

Հոգնած, քրտնած, գունաթափ նա նստած եր աթոռի վրա, յերբ ամենից առաջ ներս վազեց Մսերյանը և, յուր գրկի մեջ առնելով նրան, գոչեց.

— Շնորհավորում եմ, բարեկամս, յերբեք չեյի կարծում, թե գիտությունը կարելի յե հայերեն լեզվով այդքան հետաքրքրական և հասկանալի դարձնել։

Յեկան բժիշկ Սալամբեկյանը, Վեքիլյանը և ուրիշները։ Իրավաբանը մի կոմպլիմենտ տաաց Դիմաքսյանին, բայց նրա աչքերը դարձյալ հակառակն եյին արտահայտում։ Բժիշկ Սալամբեկյանը դժգոհ եր հաջողությունից և դասախոսի ջանքը իզուր եր համարում։

Բարաթյանը ներս առաջնորդեց տիկին Բախտամյանին, որիորդ Գայանեյին և ուրիշ յերկու տիկիններին։

Բախտամյանը այնպես եր հագնվել, վոր, կարծես, պարահանդես եր յեկել։ Նա Դիմաքսյանին ծանոթացրեց յուր հետ բերած տիկինների հետ, վորոնք նոր ընկերության ղեկավարներից եյին։ Բայց դասախոսի ուշը ուրիշ կողմ եր։ Առաջին անգամ եր նա Գայանեյին հանդիպում հասարակության մեջ։ Նա սովորել եր տեսնել նրան կամ տնային անշուք հագուստով, կամ փողոցում վերարկուով։ Այժմ որիորդը հագած եր թավշյա լայն ժապավեններով զարդարած և վերջին մոդայով նոր կարած բաց-մանիշակագույն զգեստ։ Նրա դեմքի վրա խաղում եր գոհունակության ժպիտը, կապույտ աչքերի մեջ կենսականության հուրը վառվում եր տակավին չտեսնված փայլով։ Նրա ամբողջ կերպարանքից բուրում եր թարմություն և կյանքի հրապույրները վայելելու անհուն ցանկություն։

Նա հավանություն հայտնեց Դիմաքսյանին և իսկույն հեռացավ Բարաթյանի հետ, յուր հետ տանելով դասախոսի ուշ ու միտքը:

Դահլիճից լսվեցին ծափահարությունները: Դիմաքսյանը դուրս եկավ բեմ գունատ, հուզված, սրտի խորքում մի անտանելի զգացում: Նա հանկարծակի դրգռվել էր և՛ Բարաթյանի դեմ, և՛ ուրիշների դեմ, և՛ ամենքի դեմ: Այժմ նրան թվում էր, վոր բոլորը կեղծում են, բոլորը ներքուստ ծաղրում են նրան, համարում են մի տեսակ խենթ, դուրս է եկել և հասարակությունը ձանձրացնում է յուր ատենաբանությունով:

Նա մի կերպ զսպեց իրան: Անցավ առաջին հուզմունքը, նա հետզհետե հափշտակվեց յուր ճառով, մոռացավ ամեն ինչ և խոսում էր ավելի ազատ, քան առաջ: Բայց այդ յերկար չտևեց: Հանկարծ նրա հայացքը ընկավ յերկրորդ շարքի ծայրին: Պատին քաշ արած կանթեղի լույսը սփռվել էր ուղիղ նրանց վրա... Բարաթյանը, թեքված Գայանեյի կողմը, շշնջալով խոսում էր: Օրիորդը յերեսը հովհարով ծածկել էր, վոր ծիծաղը հասարակությունից թաքցնի: Այո, մեկը սրախոսում էր, մյուսը ծիծաղում: Ինչո՞ւ, ո՞ւմ վրա, միթե՞ նրան են ծաղրում: Ոհ, այդ արդեն հանդգնություն է: Ի՞նչպես, նրան չեն հարգում նույնիսկ այդ միջոցին, յերբ նա կատարում է յուր բարոյական պարտքերից մինը: Նա կորցրեց յուր խոսքի կապը, այլայլվեց, կմկմաց, սկսեց քրքրել ձեռքի տակ դրած թերթիկները: Հասարակության մեջ բարձրացավ մի խուլ շշնջյուն: Հաջող սկսված դասախոսությունը միթե խայտառակ պիտի ավարտվեր:

Վերջապես, նա ուշը ժողովեց. գտավ խոսքի թելը: Շարունակեց, բայց բոլորովին տարբեր և տարօրինակ յեղանակով: Այժմ նա չէր դասախոսում, այլ վիճում էր: Գիտության չեզոք քարոզիչը փոխվել էր կրքոտ հարվածողի: Յերկիրը չի հարստահարվում, մեքենայական արդյունաբերություն չկա, ժողովուրդը աղքատ է, քաղաքային հասարակությունը թմրած: Դրամատերերը ընկերական հոգի չունեն, ամեն ինչ նիրհում է նահապետական շարժողության մեջ: Ո՞վ պետք է դարկ տա խավարի մեջ դեգերող ամբոխի հոգուն, ո՞վ պետք է լուսավորե նրա միտքը, ցույց տա նրան բարօրության ճանապարհը: Կրթված դասը, ժամանակակից գիտության պաշար ունեցող յերիտասարդությունը:

— Ահա հենց այդ դասակարգի դեմ ես շատ բան ունեմ ասելու,— գոչեց նա, ձայնը բարձրացնելով:

Ոհ, տգեղ և այլանդակ է ինտելլիգենցիայի բարոյական պատկերը: Նա անտարբեր է դեպի յերկրի վիճակը, յեսամոլ է, շահախնդիր է:

Չկա նրա համար ընդհանուրի շահ, ամեն ինչ պտտում է սեփական ապահովության առանցքի շուրջը։ Նա ավելի զզվելի, ավելի դատապարտելի չե, քան այդ ամբոխը։

Նույն պահին նրա թափառող հայացքը դարձյալ ընկավ Բարաթյանի և Գայանեյի վրա։ Օրիորդը լսում էր խորին ուշադրությամբ, գլուխը առաջ ցցած։ Բարաթյանը նայում էր առաստաղին։ Պարզ էր, վոր նրան դուր չէր գալիս ընկերոջ բանախոսությունը և անհամբեր սպասում էր վերջանալուն։ Այո, այդ շատ լավ է, տանջվիր, կատաղիր։ Բայց այդ ինչ է, նույն անհամբերությունը նշմարվում է և՛ ուրիշ դեմքերի վրա։ Վոմանք զարմացած են, միմյանց հարցական նշաններ են անում։ Միայն ընդհանուր լռությունը վոչ վոք չե խանգարում։ Մեկը աթոռը դղրդեցնելով վերկացավ տեղից և դուրս գնաց։ Դա Վեքիլյանն էր։ Վոգևորությունը տեղի տվեց ամոթի զգացմանը։ Դասախոսը զգաց, վոր անչափ շեղվել է նյութից։ Բայց նրա սիրտը տակավին լիքն էր թույնով։ Բարաթյանի դեմքը նրան կատաղեցնում էր։ Բոլոր հարվածները նա մտքում ուղղում էր ընկերոջ դեմ, այն ընկերոջ, վոր այժմ նրա աչքում թշնամու հավասար էր, վորովհետև նա այնքան մոտիկ էր Գայանեյին։

Նա սթափվեց, մի կերպ ամփոփեց յուր ծայրահեղ խոսքերը մի վերջաբանով։ Յերբ նա ավարտեց, մի քանի յերիտասարդներ միայն ծափահարեցին, բայց ծափահարեցին յեռանդով, վոգևորված և բարձրաձայն գոչելով «կեցցե Դիմաքսյանը, կեցցե Դիմաքսյանը»։ Մյուս ունկնդիրները շտապ վերկացան, դիմեցին դեպի դռները։

Սիրտը դառն զգացմունքներով լի, ինքնասիրությունը խոցոտված, նա հեռացավ բեմից։ Այլևս վոչ վոք չեկավ նրա մոտ։ Նա միայնակ էր, անհամբեր սպասում էր Մսերյանին, նա, միայն նա յե անկեղծ, աննախանձ, բարի և վեհանձն։ Բայց ավաղ, «իդեալիստի» դեմքը տխուր էր։ Նա տխուր էր Արսենի անհաջողության պատճառով։ Նա բռնեց ընկերոջ թևից և նրա հետ միասին դուրս յեկավ լուռ և աչքունքը կիտած։

— Ախ, Մսերյան,—գոչեց հուզմունքից դողացող Դիմաքսյանը, յերբ նրանք կառք նստեցին,—յես դժբախտ մարդ եմ։

Բարեսիրտ ընկերը գիշերային մթության մեջ նայեց նրա արտասվալից աչքերին և արտասանեց.

— Դու ամենաբախտավոր մարդը կլինես։

IX

— Յես այդ տեսակ խոսող կյանքումս չեմ տեսել։ Ժամանակով կարող է Ամբակում Աֆանասյեվիչի տեղը բռնել։ Լեզու խոմ չե,

կրակ է։ Ափսոս վոր ուշ հասա. Նեգոսիմկանիր բաշխող կոմիսսիան յերեկ բանը շատ յերկարացրեց։ Տասն ու վեց հազար յերեք հարյուր տասն ու չորս մանեթ սկիզբը արեցինք։ Ալբեն Դիմաքսյան. Բարաթովդ գլուխը քաշ արած այնպես դուրս յեկավ, ինչպես պոչը կտրած գող կատու։ Հապա, վո՞նց եր, քեզ նման ուսումնականներին այնպես ել հարկավոր եր ներկել։ Ալբեն, Դիմաքսյան, ալբեն։

— Իսկ յես չհավանեցի։ Ի՞նչպես կարելի յե կոպիտ խոսել, կարծես, մարդիկ տոմսակի փող եյին տվել յեկել, վոր հայհոյանք լսեն։ Նա կավում եր, չեր խոսում։ Ճշմարիտ են ասում, վոր աննորմալ մարդ է, այսինքն խելքը գլխին դրուստ չէ։

— Խելքը գլխին դրուստ չէ, դրուստ չէ, հա հա հա։ Քո կարծիքով ո՞ւմ խելքն է դրուստ, ով վոր դրուստ դեմք ունի, չէ՞. հասկանում ենք, հասկանում ենք։ Հիմա դու տես ինչպես առաջիկա տարի այդ աննորմալին գլասնի ընտրել կտամ, իսկ քո Բարաթովդ յուր որումը այդ պատիվը չի տեսնի, թեկուզ տրաքվի յելի, այ քեզ աննորմալ...

Խոսակցությունը տեղի ուներ ամբողջ ընտանիքի ներկայությամբ, ճաշին։ Գայանեն լուռ եր, իսկ Ովսաննան զբաղված եր յերկու մանկահասակ աղջիկներով—Լիզոչկայով և Ելեչկայով, վորոնք ուտելով հանդերձ ծիծաղում եյին բարձրաձայն և խանգարում իրենց ծնողների խոսակցությունը։ Պյոտր Սոլոմոնիչը գոռաց նրանց վրա և, դառնալով կնոջը, հանդիմանեց, վոր վատ է կրթում զավակներին։

Տիկինը աչքերը լայն բաց արեց և միքանի վայրկյան նայեց յերեխաների յերեսին այնպես, վոր, կարծես, կոկորդում վոսկոր մնաց։ Փոքրիկները գլուխները միաժամանակ թեքեցին, խուսափելով իրանց մոր սպառնալից հայացքից։

— Դեռ աչքերիս մի լավ մտիկ արեք—հետո, Լիզոչկա, քեզ եմ ասում, Ե՛լեչկա, քեզ եմ ասում, ուղիղ, ուղիղ։

Կարծես, նրա աչքերի մեջ մանկական լեզվով գրված եյին մանկավարժության բոլոր կանոնները, վոր պետք է առանց խոսքի իսկույն ազդեյին։

— Իսկ յես, — հարեց Պյոտր Սոլոմոնիչը, — չեմ ասիլ աչքերիս մտիկ արեք, կասեմ մատներիս մտիկ արեք։ Յեթե մեկ ել հրա-հրա ծիծաղեք, ականջներդ այնպես կքաշեմ... վոր Բարաթովիդ ել հերն եմ անիծել։

— Պետյա, Պետյա,—դարձրեց տիկինը յուր կոթիչ աչքերը մարդուն,—դու քեզ մոռանում ես։ Առաջինը Բարաթյանը այստեղ գործ չունե, յերկրորդը տասն ու իններորդ դարի վերջն է։

— Ասեղդ ինչ է։

— Ասելս այն է, որ մեր ժամանակում ականջ քաշելով յերեխա չեն կրթում։

— Հերիք է, քո հորն ողորմի, յես դարի-մարի հետ բան չունեմ, դու շատ ես յերես տալիս յերեխաներին։

Ժամանակակից տիկինը սառն և հանդիսավոր յեղանակով պատասխանեց.

— Յես նրանց կրթում եմ սիստեմով։

Գայանեյի միտքը հեռու չեր այս ընտանեկան տեսարանից, վոր գրեթե ամեն օր կրկնվում եր նույն վարիացիաներով։ Գգվանքով նա հիշում եր այն սովորական պահը, յերբ առհասարակ տեսակցում եր Բարաթյանի հետ։ Նա մտքում բոպեները, նույնիսկ վայրկյանները հաշվում եր, թե յերբ կհասնի ցանկալի հինգ ժամը, յերբ նա սովորաբար Ովսաննայի հետ դուրս եր գնում «մաքուր օդ շնչելու»։ Ճիշտ այդ ժամին նա Դվարցովայա փողոցում հանդիպում եր Բարաթյանին զբոսնելիս կամ վորեվե մագազինայի առաջ կանգնած վիտրինում դարսած իրերը դիտելիս։ Տեսնելով միմյանց, յերկուսն ել զարմացական նշան եյին անում, իբրև թե չեյին սպասում հանդիպել իրար։ Ովսաննան առայժմ նրանց խանգարել չեր կարող, քանի վոր խոսակցությունը սովորական բարեկամության սահմանից չեր անցնում։ Բայց ինչ փույթ, նրանք արդեն միմյանց միտքը հասկանում եյին։

Տիկին Բախտամյանին շատ լավ հայտնի չեր, թե ում և ինչու համար է Գայանեն ամեն յերեկո դուրս գալիս։ Նա չեր խանգարում օրիորդին, վորովհետև կամա-ակամա սովորված է ազատամիտ մոր դեր կատարել։ Նա գիտեր, վոր բախտը հաղիվ Գայանեյին հաջողի ավելի լավ ամուսնացու գտնել։ Սակայն յերբեմն վրդովվում եր հոգու խորքում։ Նա, այդ յերիտասարդ, գեղեցիկ կինը, վոր համոզված եր, թե ընդունակ է միքանի Գայանեներ նսեմացնել, հանկարծ խնամող մոր պաշտոն է կատարում, իրանից միայն հինգ տարի յերիտասարդ օրիորդի համար։

Յերբ այդ մասին մտածում եր, յերբ նայում եր յուր ամուսնու խորշոմած յերեսին, սպիտակ մազերին, յերբ համեմատում եր նրան այն առույգ, ծիծաղկոտ, ուրախ յերիտասարդի հետ, այն ժամանակ տիկնոջ սիրտը լցվում եր դառնությամբ։ Նա նախանձում եր Գայանեյին։ Նա յուր սրտում զգում եր մինչև անգամ ատելություն դեպի օրիորդը։ Յեվ որից որ նա Գայանեյի վերաբերմամբ դառնում եր անհամբեր, դյուրագրգիռ։ Միևնույն ժամանակ, մի ծանր միտք, կարծես, հալածում եր նրան։

Մի առավոտ տիկինը մտավ Գայանեյի սենյակը։ Օրիորդը լու-

սամուտի առաջ նստած թղթատում էր մի նոր գիրք, վոր Բարաթյանն էր խորհուրդ տվել նրան կարդալու։

— Գայանե՜։

Տիկինը սովորականից ավելի չէր հուզված։

— Յես ուզում եմ այսոր հինգ ժամին քեզ հետ գնալ տիկին Միրզախանյանի մոտ։

— Ինչու համար։

— Ընկերության գործերի մասին խոսելու։

— Կանոնադրությունը ստացվե՞լ է։

— Վոչ, դեռ չի ստացվել, բայց հաստատվել է։

— Այդ յես գիտեմ։ Բայց քանի վոր չի ստացվել, ի՛նչ խոսելու բան ունենք։

— Ուրեմն չե՞ս ուզում ինձ հետ յերեկոյան հինգ ժամին գնալ Միրզախանյանի մոտ։

— Յեթե անպատճառ ցանկանում ես, գնանք,— պատասխանեց Գայանեն նշմարելի դժկամակությունով։

— Ինչպես տեսնում եմ, չես ուզում գնալ, լավ, յես չեմ ստիպում։ Յես առանց քեզ էլ կարող եմ գնալ։

Նա մի սուր հայացք ձգեց որիորդի աչքերի մեջ։ Գայանեն գլուխը խոնարհեցրեց։

— Գայանե՜։

Որիորդը դարձյալ գլուխը բարձրացրեց։

— Յերեկոյան տանն ես ուզում մնալ։

Որիորդը միքիչ տատանվեց, ապա համարձակ պատասխանեց.

— Վոչ, դուրս կգամ միքիչ զբոսնելու։

Տիկինը ժպտաց։

— Դուրս կգաս միքիչ զբոսնելու, այսինքն յերկու, յերեք, չորս ժամ։

Յեվ նա ավելի սուր նայեց որիորդի կապույտ աչքերին։ Միքանի վայրկյան նրանք լուռ եյին։ Որիորդը յերեսը դարձրեց դեպի լուսամուտը, վորտեղից յերևում եյին փոքրիկ պարտեզի տերևաթափ ծառերը։ Իսկ տիկինը աչքերը սևեռել էր նրա կիսադեմքին։

— Դու ինձանից իզուր ես թաքցնում, յես ամեն բան գիտեմ։

Տիկինը աշխատում էր խոսել մեղմ, բարեկամական յեղանակով։ Բայց ձայնը մատնում էր նրան. նա հուզված էր։

— Դու լռում ես, ուրեմն յես չեմ սխալվում։ Ե՛հ, ի՛նչ կա, նա լավ տղա չէ, դու գիտես, վոր յես էլ շատ եմ հավանում նրան։

Մինչև այդ վայրկյանը Գայանեն չէր նայում նրա կողմը։ Ամո-

թից ու կասկածից ցնցողաբար դողացող մատներով նա անընդհատ փաթաթում էր և բաց անում յուր կրծքի ժապավենը։ Կամացուկ գլուխը ծռեց և նայեց տիկնոջ յերեսին, ինչպես մի մեղանչած յերեխա, վոր ամաչում էր յուր արարքից։

— Դու կարծում ես կհակառակե՞մ, վո՛չ, Գայանե, մի՛ վախենալ։ Ապա մեկ էլ մոտիկ արա աչքերիս և ուղիղն ասա։

Փարատվեց որիորդի սրտում ծանրացած կասկածը։ Վո՛չ, անկարելի յե, վոր ուրիշ բան լինի։ Տիկինը ազնիվ է, տիկինը սիրում է նրան՝ անկեղծ սրտով և յերբեք, յերբե՛ք խոչնդոտ չի լինիլ նրա յերջանկությանը։ Զգացավ անվստահությունը, մի ինչ-վոր ներքին ուժ մղեց նրան դեպի տիկնոջ գիրկը, և գլուխը հանդարտ թեքվեց նրա ուսի վրա։

—Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։ Յես գիտեյի, գիտեյի, վոր այդպես պետք է լինի։

Տիկինը յուր գլուխը բարձր պահած, փափուկ սրածայր մատներով շոյում էր որիորդի մազերը։ Նկատելի չեր նրա դեմքի վրա մի թեթև գունատություն, նկատելի եյին նույնպես ցնցումներ նրա շըրթունքների վրա, վոր այնպես անխնա կրծոտում էր նա ատամներով։

—Ուրեմն սիրտներդ բաց եք արել միմյանց, ասա, բոլորը ասա, վոչ մի բան մի՛ թագցնիլ։ Դու լա՞ց ես լինում, ինչո՞ւ, միթե քեզ նման, հա հա հա, բախտավորը լա՞ց կլինի... Մի՞թե ճշմարիտ է, վոր մարդիկ յերջանկությունից արտասվում են, յես այդ բանին չեմ հավատում Ասա, դու նրան սիրո՞ւմ ես։

—Այո...

—Նա յել քե՞զ է սիրում։

—Այո, կարծեմ, չգիտեմ...

—Այո, կարծեմ, չգիտեմ։ Չեմ հասկանում ասածդ։ Ուրեմն բացատրություն չե՞ յեղել։

—Դեռ վոչ։

Տիկինը բաց թողեց որիորդի գլուխը։ Նրա շըրթունքները դադարեցին ցնցվելուց։ Նա հազիվ զսպեց հառաչանքը։

—Դեռ վո՛չ, ինչո՞ւ։

—Չգիտեմ։

Որիորդը աչքերը սրբում էր թաշկինակով։

—Բայց ինչի՞ցն ես իմանում, վոր նա քեզ սիրում է։ Գոնե մի խոսք ասե՞լ է այդ մասին, մի նշանով ցո՞ւյց է տվել յուր սերը։

—Սիրտս է վկայում, վոր նա ինձ սիրում է։

—Այդ շատ քիչ է, սիրելիս, սրտի վկայությունը մի մեծ բան չե. իմ սիրտս էլ ուրիշ բան է վկայում, բայց յես իրավունք չունեմ...

—Ի՞նչ ասացիր։

—Ոչինչ, Գայանե, ոչինչ։ Ինչո՞ւ այդպես հանկարծ վախեցար, ես մի բան չասացի։

Օրիորդը կարմրեց։ Բայց նույն վայրկյանին նայեց տիկնոջ աչքերին և այնտեղ նկատեց այն, ինչի մասին վաղուց կասկածում էր —նախանձ։ Դարձյալ չար, անտանելի, քստմնելի միտքը պղտորեց քանի մի րոպե գուրեկան կերպով բորբոքված սիրտը։ Այլևս նա չկարողացավ և չէր կամենում շարունակել այդ յերկդիմի, նուրբ և կասկածոտ խոսակցությունը։ Նա վեր թռավ տեղից։ Տիկինը անշարժ նստած էր և, արմունկը լուսամուտի հատակին հենած, նայում էր դեպի դուրս։ Յերկուսն էլ միմյանց դեմ մի վատ զգացում ունեյին իրանց սրտի խորքում, այնտեղ, այն անմատչելի անկյունում։ Յերկուսի համար էլ ծանր էր, անախորժ, ամոթալի այդ զգացումը։ Տիկինը ավելի ամաչում էր, օրիորդը ավելի վրդովված էր։ Անկարելի չէր ավելի հեռու գնալ, հակառակ դեպքում կամ պետք է շարունակ կեղծեյին կամ, վերջապես, միմյանց հաղորդեյին այն, ինչ-որ նրանց գաղտնիքն էր, խորհրդավոր, յերկյուղալի գաղտնիք, որ պետք է յերկու կանանց մեջ բաց աներ մի մեծ վիհ։

Իսկ լռությունը ավելի անտանելի չէր։

Տիկինը կամացուկ վերկացավ տեղից, ծանր քայլերով, գլուխը կրծքին խոնարհեցրած, դուրս գնաց սենյակից։

Օրիորդը յերեսը թաղեց բարձի մեջ և սկսեց հեկեկալ։ Իսկ յերբ Ովսաննյան ներս մտավ և նրան ճաշի հրավիրեց, նա մերժեց։

Նույն օրը յերեկոյան նա սովորականից վաղ դուրս յեկավ տնից և սովորականից ուշ վերադարձավ, այն էլ ոչ Ովսաննայի հետ։ Նա մի արտասովոր տենդային դրության մեջ էր։ Հարկավ, այդ բանը տիկնոջ աչքից չէր կարող խույս տալ։ Բայց տիկինը ոչինչ չէր խոսում։ Նա առհասարակ լուռ էր, տրտում և բարկացած։ Նա դիտում էր օրիորդին գաղտուկ, իսկ նրա հայացքից խույս էր տալիս։ Նրանք միմյանցից վախենում եյին։

Հետևյալ օրը տիկինը չկարողացավ իրան զսպել։ Արդեն օրիորդի անսահման ուրախ տրամադրությունը նրան բավական տանջանք էր պատճառել։ Նա փորձեց Գայանեյին խոստովանության կանչել, և հանդիպեց անհաջողության։ Օրիորդը բարձրաձայն ծիծաղեց և ասաց, թե հետո կպատմի։ Այդ ծիծաղը սուր ասեղի պես ցցվեց տիկնոջ սըրտին։ Նա թշնամաբար նայեց օրիորդին, ատամները կրճտեց և դուրս գնաց սենյակից, դռները ուժգին զարկելով։

Այնինչ՝ մտնում էր Բարաթյանի կազմած թատրոնական ներ-

կայացման որը։ Պետք ե խաղացվեր մի նոր պիես, վոր ի պատիվ կանանց ընկերության հատկապես ֆրանսերենից թարգմանել եր Բարաթյանը։ Բոլոր մասնակցողները հայտնի ընտանիքներից եյին։ Տիկին Բախտամյանը զբաղված եր տոմսակների հաշվով, իսկ Գայանեն հանձն եր առել նրա ոգնականը լինել։ Բարաթյանի խորհրդով նա հրաժարվել եր բեմ դուրս գալուց։ Ամբողջ որը տիկինը և որիորդը զբաղված եյին, շտապում եյին այս ու այն կողմ, մի ամենաչնչին մոռացված բան նրանց վրդովեցնում եր։ Բայց միմյանց հետ շատ քիչ եյին խոսում, այն էլ այնքան զգույշ, վոր, կարծես, վախենում եյին մի ավելորդ խոսք թռցնել իրանց բերանից։

Իսկ թե ինչ իրարանցման մեջ եյին նրանք, վոր պետք ե՝ բեմ դուրս գային, այդ արդեն աննկարագրելի յե։ Ամեն մեկը նոր հագուստներ եր պատրաստել տալիս, որը մինչև յերեկո փորձում եր պես-պես գլխարկներ, ձեռնոցներ կոշիկներ։ Կառքերը սլանում եյին աջ ու ձախ։ Փողոցներում միմյանց հանդիպելիս «գործիչ» տիկինները զբաղված դեմքերով զանազան փոխադարձ նշաններ եյին անում։ Տիկին Միրզախանյանը ասում եր, թե յուր կյանքում յերբեք այնքան «չե զգացել», վորքան այժմ։ Մի խոսքով շփոթությունը անասելի յեր։

Եկոնոմիստ-ֆինանսիստ Բարաթյանը հաշվում եր և տեսնում, վոր «գործիչ» տիկինները և որիորդները իրանց գրպանից ավելի մեծ գումար են ծախսում կառքերի, հագուստների և կոշիկների վրա, քան թե կարող ե լինել նույն իսկ ամենահաջող ներկայացման արդյունքը։

X

Յերեկո յեր։ Տիկին Բախտամյանը առանձնացած յուր սենյակում զուգվում եր։ Նա չարացած եր. որիորդ Գայանեն, առանց նրան սպասելու, արդեն գնացել եր յուր մի ընկերուհու մոտ։ Այդտեղից նա Բարաթյանի հետ պետք ե ուղևորվեր թատրոն։

Դա մի թեթև պատճառ եր տիկնոջ համար, իսկ բուն շարժառիթը ուրիշ եր։ Դառնությամբ և սրտի կսկիծով նա խորհում եր առհասարակ յուր վիճակի մասին։ Մի վիճակ, վոր ստիպում եր այնքան թարմ, այնքան գեղեցիկ կնոջը թև թևի տված թատրոն մտնել մի հնամաշ, ուժաթափ, մի ալեզարդ մարդու հետ։ Վորքա՛ն, յերևի, ծիծաղում են նրա վրա բախտավոր ընկերուհիները։ Յեվ իրավունք ունե՛ն. միթե ինքը տիկինը չե՞ր ծիծաղել մի ուրիշի վրա։

Նա կանգնած եր բարձր հայելու առջև թեթև հագուստով, կիսաբաց կրծքով և հոլանի թևերով։ Նա հիանում եր ինքն իրանով։

Գանգուր և թանձր մազերը, ինչպես մայիսյան դալար խոտ, փռվել էին նրա գլխին, սպիտակ և կիսամերկ թիկունքի և ուսերի վրա։ Ներքին հուզմունքից նրա կուրծքը ուժգին ցնցվում էր և կոկորդի բարակ կապտագույն երակները փքվում։ Նրա կամարաձև, պարսկական ճաշակով գծավորված, սև հոնքերի տակ տեղավորված թուխ աչքերը պսպղում էին կրքոտ կատվի աչքերի պես։ Նրա լիք-լիք կիսաբաց շրթունքները կապտել էին և թեթևակի դողում էին։

Ցերեկը նա գեղեցիկ արծաթյա սանրը ազատում էր հարուստ մազերի ալիքների միջից և ավելի ուշադիր դիտում իրան՝ սկսած տափակ, նեղ և սպիտակ ճակատից մինչև վոտների ծայրերը։ Նա անիծում էր յուր անսիրտ ծնողներին։ Ինչու՞ հարստությամբ հրապուրվելով իրանց տասնութ տարեկան աղջկան տվեցին քառասուն ու ինը տարեկան թառամածին։ Անգութ հայր, դու ծախեցիր քո աղջկան. դու քո պարտատերներից ազատվելու համար հարուստ փեսա գտար, վոր նա յուր փողով քեզ ոգնի։ Դու հասար քո նպատակին, քո աղջկա բախտի գնով։ Ո՜, յեթե նա այն ժամանակ ունենար այժմյան խելքը, համարձակությունը և կամքի կորովությունը, յերբեք, յերբեք չէր մըտնիլ այդ դժոխքը։

«Գոնե մեռներ, այրի դառնայի»,—կրկնում էր նա մտքում։

Բայց Պյոտր Սոլոմոնիչը չէր էլ մտածում մեռնելու մասին, այնքան նա առողջ էր, ամրակազմ և այնքան նա խնամում էր յուր առողջությունը։

Առաջին ծանոթը, վորին տիկինը պատահեց թատրոնում, Դիմաքսյանն էր։ Հակառակ սովորականին՝ նա սիրալիր կերպով բարևեց յերիտասարդին, վորպեսզի կամացուկ յուր թևը ազատե ամուսնու թևի տակից, վոր էնպես ամուր սեղմել էր նրան։

Պյոտր Սոլոմոնիչը գովեց Դիմաքսյանի դասախոսությունը, հայրաբար ձեռը խփեց նրա ուսին և բարեկամաբար հանդիմանեց, վոր ուշ-ուշ է այցելում իրանց։ Արդարև, այն որից, յերբ նա զգաց, վոր անտարբեր չէ դեպի որիորդ Գայանեն, այն որից նա ամաչում էր Բախտամյանների տուն գնալ, թեև կցանկանար ամեն որ այնտեղ լինել։ Միայն ամեն առիթից ոգտվում էր գոնե դրսում տեսնելու որիորդին և հետը խոսելու։ Յերկու շաբաթ էր նա տենդային հուզմունքի մեջ էր։ Պաշտոնակիցները նրա հետ իրանց կռիվը նորոգել էին։ Այժմ նրան հալածում էին ամենքը։ Նույնիսկ կողմնակիցները շատ թույլ պաշտպանություն էին ցույց տալիս։ Ամբողջ հոգով նա բողոք էր բարձրացրել դպրոցի հակառողջական պայմանների—սենյակների փոքրության և մթության, ոդի սակավության դեմ։ Նա պահանջում էր ար-

մատական վերանորոգություն։ Այս պատճառով հոգաբարձուների մեծ մասն ել վրդովվել եր նրա դեմ, վոր անընդհատ դատապարտում եր նրանց թուլությունը և անուշադիր լինելը դեպի աշակերտների վիճակը։

Մյուս կողմից, մի հայ լրագրում ծաղրի եյին յենթարկել նրա դասախոսությունը։ Յեվ նա յուր սրտի թույնը այժմ ուղղել եր դեպի լրագրական թշնամիները։ Բայց ավելի նա վշտացած եր մի ռուս թերթում տպված հոդվածից։ Այստեղ անհայտ հեղինակը բավական չեր վոր պարսավել եր նրա դասախոսությունը, այլև զրպարտել եր նրան, առանց փաստերի, ասելով, թե նա յուր բոլոր մտքերը քաղել ե ոտար գրքերից։ Այդ ել բավական չեր, հոդվածագիրը կծու ծաղրով ավելացրել եր.

«Պարոն դասախոսի չարությունը հայ ինտելիգենցիայի դեմ կարելի յե բացատրել հոգեբանորեն։ Բայց ի՞նչ մեղավոր են հայերը, վոր անգութ բնությունը յերբեմն մարդկանց փոքրիկ մարմնի մեջ նրանց ուժից ավելի չար նախանձ ե դնում»։

Նա մենակ նստած եր բուֆետի կիսախավար սենյակում և յուր սրտի վիշտը ճգնում եր խեղդել ծխախոտի թանձր ծխով։ Նրան մոտեցավ բժիշկ Սալամբեկյանը սովորական դժգոհ և մախձոտ ժպիտը յերեսին։

—Դատարկ բան ե,—յեղավ բժշկի առաջին խոսքը։

—Ի՞նչը։

—Աշխարհը։ Ինչի՞ համար են այդ կոմեդիաները, այդ ծիծաղելի իրարանցումը. մեր ազգից վոչինչ չի դուրս գալ, ուր մնաց կանանց գործունեյությունից։

—Դու յել որից որ պեսսիմիստ ես դառնում, չգիտեմ քե՞զ ինչ ե պատահել։

—Բժշկական որենքով խրոնիկական կատարր ունեցողները պեսսիմիստ են լինում, յերևի իմն ել դրանից ե։ Քո ստամոքսը առողջ ե, կարող ես ոպտիմիստ լինել, ինձ ինչ։ Միայն այս կասեմ, վոր յես մարդկանց չեմ հավատում, մանավանդ այդ սյուրտուկ հագած նապաստակին։

Նա գլխով ցույց տվեց իրավաբան Վեքիլյանին, վոր կանգնած եր մի խումբ մարդկանց մեջ։

— Ո՛ւհ, անճրգ, անամոթ։

Դիմաքսյանն ապշած նայեց բժշկի յերեսին. առաջին անգամն եր նրանից լսում այդպիսի կոպիտ ածականներ յուր ընկերոջ մասին։

— Ինչի՞, ի՞նչ ե պատահել,—հարցրեց նա։

— Այն ե պատահել, վոր այն գարշելի հոդվածի հեղինակը դա յե, այդ մեր խոհեմ և զգույշ ընկերը։

— Վեքիլյանը։

— Նա ինքը։

Դիմաքսյանը վոտքի կանգնեց այնքան արագ, այնպես հանկարծակի, վոր, կարծես, մեկը նրա մարմնին ելեկտրական թելի ծայր կպցրեց։ Նրա գույնը թռավ, շրթունքները կապտեցին, նոսր մորուքի յուրաքանչյուր մազն ելեկտրական մի թել դարձավ, ցնցելով յերեսի բոլոր մկանունքները։

— Այդ անկարելի յե, անհավատալի յե,— գոչեց նա շնչասպառ։

— Գիտես, վոր առանց հիմնավոր փաստի յես վոչ վոքի չեմ մեղադրում։

— Ո՞վ ասաց քեզ։

— Լրագրի աշխատակիցներից մեկը, մի բարեկամ մարդ, վոր ինքն էլ վրդովված ե այդ պատկվելի դեմ։ Բայց մի՞թե Վեքիլյանին դու նոր ես ճանաչում։

— Յես նրան միշտ ազնիվ մարդ եմ համարել։

— Պետք ե ասած, վոր դու յել Մսերյանից պակաս հափշտակվողը չես։

Մի ծանր և դառն հոգոց թռավ Դիմաքսյանի ալեկոծվող կրծքից։ Այո, բժիշկը չի սխալվում, հոդվածի վոճը, հեգնելու ձևը միայն Վեքիլյանին ե հատուկ։

— Բայց դու շատ վրդովվեցիր, Արսեն. յեթե իմանայի, չեյի ասիլ, միթե արժե՞...

— Չարժե՞, յերբ տեսնում ես, մարդիկ խախտում են հավատ դեպի ընկերական զգացումները. չարժե՞, յերբ յերեսից մեկ են ասում, յետևից — ուրիշ։ Չարժե՞ վրդովվել այդ ստոր, խարդախ յերևույթի դեմ։ Չգիտեմ ինչպես քեզ, ուրիշներին, բայց ինձ ամեն բանից ավելի մարդկանց կեղծությունը և յերկդիմի վարմունքն ե կատաղեցնում։

Նա սկսեց ուժգնաբար ներշնչել ծխախոտի ծուխը, կարծես, կամենալով հետ մղել յուր սրտի մեջ բռնկված կսկիծը։

Զանգակը հնչեց, և նա անգիտակցաբար, հուզված, դեղնած դիմեց բժշկի հետ դեպի դահլիճ։

Թատրոնը բոլորովին լիքն եր։ Նա նայեց վայր և վեր, նայեց շուրջը և դժվարությամբ անցնելով բազմած հանդիսականների միջով, գնաց նստեց յուր տեղը։ Նա չեր նկատում, վոր ներկայացումն արդեն սկսվել ե և բեմի վրա մի ինչ-վոր կին և մի ինչ-վոր տղամարդ անխնա աղավաղում են հայ լեզուն։ Նա վորոնում եր Վեքիլյանին. արդյոք գաղտագող իրավաբանը յերես կունենա ուղիղ նրա յերեսին նայելու։ Նրա հայացքը կանգ առավ ոթյակներից մեկի վրա և տեսավ մի ուրիշ կերպարանք, վորին միքանի րոպե մոռացել եր։

Դա Գայանեն էր, տիկին Բախտամյանի հետ նստած։ Հովհարը մեղմիկ շարժելով, նա մերթ նայում էր դեպի բեմ, մերթ հանդիսականներին։ Դիմաքսյանն աչքերով հետևեց նրա հայացքի ուղղությանը և այնտեղ, պատշգամբի առաջին շարքում, տեսավ Բարաթյանին, վոր յերբեմն նայում էր ցած, դեպի պարտերը, յերբեմն Գայանեյին և ժպտում։

Դիմաքսյանի նրբացած զգայուն սիրտը միայն հասկանում էր այդ ժպիտների բուն իմաստը։ Գուշակում էր նա, վոր ամեն ինչ վերջացած է, վոր հաղթանակն արդեն Բարաթյանը տարել է։ Հաղթանակ, մինչև նա մրցե՞լ էր։ Վո՛չ, նրա կռիվը ներքին էր, հոգեկան, նրան զրգռում էր վոչ այնքան այն, վոր Բարաթյանը գրավել էր այդ օրիորդին, վորքան այն, վոր ինքն անկարող է գրավել նույն օրիորդին, յեթե վոչ մի հակառակորդ էլ չունենար։ Սեփական ապիկարության սոսկալի գիտակցությունն էր նրան վշտացնում։ Ահա նա նստած է ուրիշ կանանց բազմության մեջ։ Ո՞վ է նրա վրա ուշք դարձնում։— Գրեթե վոչ վոք։ Իսկ յեթե կան նայողներ և հետաքրքրվողներ, լոկ նրա անվան համար են։ «Վե՞րն է Դիմաքսյանը. նա՞, ֆի, ինչ վողորմելի է», արդյոք կարող է սրանից ավելի վիրավորական խոսք լինել մարդու մասին։

Գործողությունը բեմի վրա վերջացավ մի պառավ կնոջ ճչով։ Թատրոնն աղմկեց։ Դիմաքսյանն ազատեց յուր փոքրիկ մարմինը բազկաթոռների նեղ միջանցքներից ու դուրս յեկավ։ Բժիշկ Սալամբեկյանը բռնեց նրա թևից, և նրանք միասին բարձրացան թատրոնի վերին հարկը։ Ոթյակների նեղ և աղեղնաձև նախագավիթը լիքն էր կանանցով։ Մի ինչ-վոր նորեկ հայ հուսար, վոր նմանում էր թևերը կտրած մորեխի, ընդհանուրի ուշադրության առարկան էր։ Կուրծքն ուռցրած, բեղերը վոլորելով, նա Մարսի շանթահար հայացքներ էր ձգում անցուդարձ անող կանանց վրա։

— Բարև, Արսեն,— գոչեց հուսարը հանկարծ։

Դիմաքսյանը հազիվ կարողացավ ճանաչել յուր մանկական ընկերներից մեկին, վոր հայտնի էր յուր գեղեցիկ դեմքով և չար բնավորությունով։ Քանի-քանի անգամ յերեխա ժամանակ հուսարը ծաղրել էր նրան։ Պետք էր մի փոքր խոսել, ուստի նա ստիպվեց կանգառնել։

— Ասա, խնդրեմ,— ընդհատեց հուսարը ինքն յուր խոսքը,— ո՞վ է այդ բ ր յ ո ւ ն ե տ կ ա ն։

Պատի տակ կանգնած էր տիկին Բախտամյանը մի ուրիշ տիկնոջ հետ և ստեպ-ստեպ հովհարի յետևից նայում էր հուսարին։ Տես-

նելով Դիմաքսյանին գեղեցիկ սպայի հետ, նա ժպտաց և գլուխը շարժեց։

— Ամ, զնաչիտ դու ծանոթ ես,—գոչեց հուսարը,— բրավո, զնաչիտ հաղթություննե՞ր ես անում։ Չի՞ կարելի, որ ինձ էլ ծանոթացնես, նե դուրնենկայա, Պիտերում բլոնդինկաները գանհես տարեցին։ Նու-սս, ծանոթացրու։ Նելյովկո, ամ, զնայու ստարովո ռևնիվցա, վախենում ես, որ խլե՞մ ձեռքիցդ։ Դու միշտ նախանձոտ էյիր, պռմնիշ։

Դիմաքսյանը, շաղակրատ հուսարին թողնելով, առավ բժշկի թևը և հեռացավ։ Այժմ նա հոգով զզվում էր թատրոն գալու մասին։ Նա չերջանիկ էր համարում Մսերյանին, որ մենակ տանը նստած միտքը զբաղեցնում է ով գիտե ինչ փիլիսոփայական գրվածքով, հանգիստ, խաղաղ, հեռու մարդկային աղմկից, հեռու կյանքի խեղդող այլանդակություններից։ Բայց մի՞թե նա կարող է Մսերյան լինել, կարող է թարմ հասակում կյանքը թաղել չորս պատերի, գրքերի փոշու մեջ։ Մինչդեռ նրա սիրտը լիքն է ապրելու և զգալու բուռն ցանկությամբ։ Մի ցանկություն, որին նա չերբեք, չերբե՛ք չի կարող դիմադրել խելքի ուժով։

Նա ուշքի չեկավ այն ժամանակ, չերբ բժիշկը ուժգին թոթվեց նրա թևը, ասելով, թե վարագույրն արդեն բացվել է բեմի վրա։ Հաջորդ խաղամիջոցներից մեկում մոտեցավ Գայանեյին և սկսեց նրա հետ շրջել։ Այս անգամ օրիորդն ավելի բարեհամբույր էր և ուրախ։ Նա ուրախ էր, որ ներկայացումը հաջողվել էր և անդադար հիշում էր Բարաթյանի անունը։ Ի՞նչ, մի՞թե նա արդեն բոլորովին հափշտակվել է, մի՞թե Դիմաքսյանն այնքան նշանակություն չունի նրա աչքում, որ գեթ միքանի վայրկյան նրա առաջ մոռանա մյուսին։

Նա զգում էր յուր տկարությունն այդ սիրուն, կենդանի և վառվռուն օրիորդի մոտ։ Նա աշխատում էր խոսքը դարձնել այնպիսի նյութերի վրա, որ նրա ուշքը խլե Բարաթյանից։ Բայց այդ չէր հաջողվում։ Ամեն անգամ, չերբ նայում էր օրիորդի կապուտակ աչքերին, նրա կամքը սառցի պես հալվում էր այդ աչքերի հրատապ ներգործություններից։ Մի վայրկյան նա այնպես հափշտակվեց, նրա միտքը այնքան պղտորվեց, խելքը այնքան մթագնեց, որ պատրաստ էր հենց այստեղ իսկ, առանց տատանման, հայտնել յուր սերը։ Այո, նա նրան սիրում է. նա նրա համար տանջվում է, մորմոքվում։ Այդ պետք է հասկանա օրիորդը, պետք է գնահատի. չեթե խելք ունե, պետք է զգա, չեթե սիրտ ունի։

Նրանք խոսեցին խաղացվող պիեսի մասին։ Հերոսը զոհ է դառ-

նում կրակոտ սիրո համար մի ընտանեկան անհաղթելի խոչընդոտ։ Դիմաքսյանը չէր հավանում պինսի գաղափարը։ Նա վոգևորված բացատրում էր սիրո անհաղթելի ուժը։ Որևորդը չէր հակառակում։ Ախ, վորքան նա այդ րոպեյին հրապուրիչ էր, վորքան բարի և ներողամիտ էր նրա հայացքը։ Դիմաքսյանի ձայնը դողում էր։ Անշուշտ նա անկարող կլիներ իրան զսպելու, յեթե նրանք առանձին լինեյին, մի խուլ անկյունում, հեռու մարդկանց այդ ատելի աչքերից։

Հանկարծ որևորդը լուրջ աչքերով նայեց նրա յերեսին և, արագորեն գլուխ տալով, հեռացավ։ Նա զգաց յուր խոսակցի հոգեկան դրությունը, նա փախավ ավելորդ խոսքերից։

Դիմաքսյանը միայնակ, շփոթված, չգիտեր ուր դիմեր, ինչպես խույս տար հասարակությունից։ Նրան թվում էր, թե չորս կողմից յուր վրա յեն նայում։ Ահա հենց այդ վայրկյանին նա տեսավ Վեքիլյանին։ Արյունը մի նոր ուժով խփեց նրա գլխին, ականջները և ճակատը սկսեցին այրվել ամոթից, յերբ իրավաբանը, անփոփոխ ժպիտը յերեսին, ցիլինդրը սեղմեց կրծքին և գլուխ տվեց։ Սովորությունը ստիպեց նրան գլխի մի թեթև շարժումով պատասխանել այդ կեղծ բարեկամական վողջույնին։

Իրավաբանը մոտեցավ նրան։

— Տեսնում ես, ինչ լավ են խաղում։

— Կյանքում ավելի լավ դերասաններ կան,—պատասխանեց Դիմաքսյանը։

— Այո, այդ էլ ճիշտ է։

— Վեքիլյան,—ավելացրեց Դիմաքսյանը խիստ ձայնով,—յես քեզանից չեյի սպասում։

— Ի՞նչ։

— Վոր կարող ես մթին անկյունից ինձ վրա քարեր արձակել։

— Չեմ հասկանում ասածդ։

— Այն անստորագիր պասկվիլի հեղինակը դու յես։

Վեքիլյանը այնպիսի մի զարմացական նշան արեց, վոր, կարծես, ավելի անհեթեթ բան չէր լսել կյանքում։

— Ո՞վ է ասում։

— Մի մարդ, վորին ամբողջ հոգով հավատում եմ։

— Այդ մարդը ապացույց ունի՞։

— Ապացույցներ պահանջում են դատարանում փաստաբաններից։ Հասարակական կյանքում մարդու խիղճն է ապացույցը։

— Արսեն, խելոք մարդը զպարտիչներին չի հավատում։

— Բայց ճշմարիտը խոսողին պետք է հավատալ։

— Հոդվածն անստորագիր է, պատասխանատու է խմբագրատունը, ապացույցների համար դիմիր այնտեղ։

— Աա, ուրեմն չես հերքում, որ դու ես հեղինակը։

— Մի բան կասեմ, Արսեն. այն հոդվածը ով որ էլ գրած լինի, իմ կարծիքով, յուր մեջ քեզ համար վիրավորական բան չի պարունակում։ Ով որ ուզում է ճշմարտություն քարոզել, պարտավոր է և՛ ճշմարտություններ լսել, որքան էլ նրանք դառն լինեն։ Pardon, հորաքույրս ինձ կանչում է։

Նա գլուխ տվեց և շտապով մոտեցավ օթյակի դռան մոտ կանգնած մի կնոջ։

Դիմաքսյանի համար այլևս կասկած չմնաց, որ Վեքիլյանը յուր դիմակավորված թշնամին է։ Ուրեմն, ճիշտ է ասում Սալամբեկյանը, թե այդ մարդու արտաքին վայելուչ ձևերի և բարեկամական ժպիտների տակ թաքնված է ոձային սիրտ։ Նա մինչև անգամ վիրավորական չէ համարում յուր տմարդի վարմունքը։

«Կնշանակէ իմ դեմ սկսել են զինվել նույնիսկ իմ ընկերները։ Բայց նրանք ինձ հետ ուխտել էին միևնույն համոզմունքով, միևնույն ուղղությամբ գործել։ Այդպես են ուրեմն կատարում իրանց ուխտը։ Այլևս ում վրա հույս դնել, ումին հավատալ»։

Միթե նա միայնակ պետք է մնա. միայնակ յուր սրտի բոլոր դառնություններով, հոգու բոլոր ձգտումներով։ Բժիշկ Սալամբեկյանը տակավին մաքուր է։ Բայց կա և մի ուրիշը—Մսերյանը։ Այո այդ մարդուն կարելի յէ հավատալ, նրա պարզության վրա հույս դնել։ Նա կա և կմնա միշտ անկեղծ, բարեհոգի, վեհանձն։

Ներկայացումը վերջացել էր։ Հանդիսականները միահամուռ դիմում էին դեպի դուրս։ Դիմաքսյանի աչքերը թափառում էին այս ու այն կողմ։ Ցեվ դարձյալ նա տեսավ Գայանեյին։ Ահա և՛ «նա», միշտ ուրախ, միշտ զվարթ, միշտ ժպտուն։ Նա հետևում է ամբոխին և շշնջում տիկին Բախտամյանի հետ։ Իսկ ինքը, Դիմաքսյանը... չէր֊բեք նա այնքան փոքրիկ, ճնշված և սեղմված չէր յուր աչքում, որքան այժմ։

Նա կարծում էր, որ ամենքը խղճում են իրան, ծաղրում են և ծիծաղում։ Մարդկանց խառն-խուռն շարքերի մեջ նա յերևում էր ինչպես ծուռ բուսած մի ծառ անտառում։ Նրա փոքրիկ մարմինը հրվում և մղվում էր ամեն կողմից, ինչպես մի տաշեղ ալիքների մեջ։ Ցեվ այդ ավելի սաստկացնում էր նրա սրտի կրակը։

Ճնշեցեք, ճնշեցեք այդ տձև մարմինը։ Նա ծծում է յուր ներսը դինամիտային մի թունավոր և պայթուցիկ ուժ։ Կգա ժամանակ, որ

այդ սղմված, կարծրացած ուժն այլևս չի դիմանալ արտաքին ճնշումներին։ Սոսկալի դղրդյունով նա դուրս կժայթքի վոչ միայն անհատների, Վեքիլյանների, Բարաթյանների գլխին, այլ և ամբողջ հասարակության, ժողովրդի, ազգի վրա, վոր ծնում է և սնուցանում այդ անհատներին։ Իսկ դու, գեղադեմ որիորդ, դու, վոր այնպես յերես ես դարձնում նրանից, զգույշ, վոր քո ընտրածը արդարացնի քո հույսերը, զգույշ, վոր այդպես ուրախ, այդպես ծիծաղկոտ, այդպես յերջանիկ կառք ես նստում նրա հետ...

XI

Բարաթյանի համար անտանելի յեր յուր հասարակական դիրքը։ Այն զգացումը, թե ինքը մի ինչ-վոր ընկերության հասարակ գործակալ է, վիրավորում եր նրա անձնասիրությունը։ Յեվ գիշեր-ցերեկ նա խորհում եր—արդյոք ինչպես ընկերական կյանքում ստեղծի մի դրություն, վոր գեթ մասամբ գոհացներ նրա փառասիրական զգացմանը։

Նա վայելում եր հոր կատարյալ հավատարմությունը։ Կարող եր, գրավելով ծերունուն, նրա կարողությունը գործադրել, ինչպես կամենար։ Բայց այդ կարողությունը այնքան մեծ չեր, վոր կարելի լիներ գոնե ֆինանսական մի խոշոր գործ սկսել։ Բացի դրանից, նրա ձըգտումը միայն փող վաստակելը չեր։ Մի՞թե դրա համար եր կյանք մաշել, «բարձրագույն» ուսում ստացել։

*Մի առավոտ նա նոր եր զարթնել, յերբ ծառան ներս մտավ և ասաց, թե հայրը կանչում ե։ Ինչպես հարգող վորդի, շտապեց հագնըվել և գնաց Գերասիմ Գերասիմիչի առանձնասենյակը։ Դա մոտ վաթսուն տարեկան մի մարդ եր վոխտ դեմքով, կարճլիկ, ծայրերը կըտրած բեղերով։ Յերեք տարի առաջ պարալիչ եր ստացել, վոտները կորցրել եյին քայլելու ուժը, և նա ամբողջ որը պառկած եր հատկապես յուր համար պատրաստած մի յերկայնաձև, շարժուն բազկաթոռի մեջ։ Մի ծառա կարգված եր նրան սպասավորելու գիշեր-ցերեկ։ Գերասիմ Գերասիմիչը նախկին չինովնիկ եր, յեղել եր զանազան պաշտոններում և վերջը հասել եր նահանգական վարչության խորհրդականի (*советник губернского правления*) պաշտոնին։ Յուր ճարպիկ բնավորության և յեռանդուն աշխատասիրության միջոցով հույս ուներ ավելի առաջ գնալ, բայց ճակատագիրը դավաճանեց նրան, և նա այժմ անդամալույծ դարձած, անպետքացած, քաշքշում եր յուր կյանքի վերջին որերը։*

Նա ծառային հրամայեց դուրս գնալ, իսկ վորդուն հրավիրեց նստել։

— Ն՛ե, ի՞նչ ես մտածում ապագայիդ մասին,— հարցրեց նա չոր խռպոտ և քայքայված ձայնով։

— Ոչինչ։

— Ոչի՜նչ։ Վրեո՜շ բրատ, քո հասակում փառասիրությունը վորդնի պես ինձ ուտում եր։ Իսկ դու և չես, բրատ, միևնույն պտուղն ենք։ Ամուսնանալու միտք— բան չունե՞ս։

— Ունեմ, պապա,— պատասխանեց վորդին համարձակ։

— Այ չերևելի բան, խի խի խի, հըմ, քեզ և ինձ նման մարդկանց համար շուտ ամուսնանալը վատ բան չէ։ Ինձ ամուսնությունը չփրկեց, քեզ էլ չի փրկիլ, բայց կարող ե գոնե մի քիչ, գնո՜յեշ, եդակույու լեոգկույու ուզդու նալոժիտ նա սոբրատի... խի խի խի։ Ի՞նչու չես գլուխդ քաշ գցում, ամաչո՞ւմ ես, եհե, գիտեմ ինչ ծառի պտուղ ես։ Քեզ ճանաչելը շատ հեշտ ե, ներսս մտիկ կանեմ, քո հոգին կտեսնեմ պարզած։ Քո չերակների մեջ վազում ե քո հոր արյունը, ինչպես իմ չերակների մեջ վազում և իմ հոր արյունը։ Մեր ցեղը հայտնի յե յուր թուլություններով։ Մոլչա՜յտ, խոմ չերեխա չես, գիտես, վոր իզուր չեմ այս որին հասել, գրեխի մոլոդոստի, բրատեց։ Նո՜ւ, տամ տեսնեմ, ո՞ւմ ես ուզում ճանկել

Վորդին, առանց մի բան թագցնելու, հայտնեց սրտի գաղտնիքը հորը, ինչպես մի հավատարիմ ընկերոջ, վոր կարող եր հարգել նրա զգացմունքները։

— Պյոտր Սոլոմոնիչի քրոջ աղջի՞կը—գոչեց անդամալուծը,— ճանաչում եմ, ճանաչում եմ, տեսել եմ։ Նիչեո, բրատեց, գուբանե դուրա։ Փողել ունի, ի հարկե։

— Այդ չգիտեմ։

— Սուտ ես ասում, շելմա, դու իմ վորդին չես լինիլ, յեթե առանց փողի աղջիկ ուզես։ Այդ աղջիկը փող պետք ե ունենա Պետրոսի մոտ, նրա հորն էլ ճանաչում եյի։ Պետրոսը վատ մարդ չե, չի խաբիլ քեզ, բայց զգույշ կաց։ Ն՛ե, ուրեմն ամեն բան վերջացրել ես, յերբ ես ուզում պսակվե՞լ։

— Դեռ հայտնի չե, պապա, դրությունս անորոշ ե, այս պատճառով տատանվում եմ։

— Պուստոյե, ինչո՞ւ դրությունդ վորոշ չե։ Քույրեր չունես ամուսնացնելու, յեղբայրդ էլ շուտով ուսումը կավարտի, դոխտորոմ մեդիցինի վիյդետ, բրատեց։ Իմ մասին մի մտածիր, իմ պենսիան ինձ բավական ե, մնացյալը ինչ վոր ունեմ քոնն ե ու յեղբորդ։

— Բայց յես հասարակական դիրք չունեմ,— նկատեց վորդին համեստաբար։

— Դուռռակ, ինչ ասել է հասարակական դիրք։ Պատի՛վ, չէ՞ն, հարգա՞նք, դու միշտ կարող ես ձեռք բերել քո ուսումով։ Ժենիա, բրատեց, Ժենիա, հետո ամեն բան հեշտ է։ Ամուսնացած մարդուն ավելի չեն հարգում, քան խալաստոյ շալապային։ Մենք մեծ կապեր չունենք, քեզ հայտնի չէ, որ մեր ազգականները, Թիմու-սըրոդ պարյադոչնիյ...Պյոտր Սոլոմոնիչը, օ՜ո, նա ուրիշ է, նա քեզ կօգնի։ Ափսոս մայրդ կենդանի չէ, շատ կուրախանար խեղճը, քեզ տեսնելով։ Շելմա, ինչ գեղեցկացել ես, հեհե, ժամանակին քեզանից վատ չէյի։ Նու, զգուշ կաց մամզելներից, ես—քեզ խրատ։ Տեսնո՞ւմ ես, յերիտասարդական սխալների հետևանքը յերբեմն այս է, օ՜ո, ինչպես ցավում են անպիտան վոսկորներս։ Բայց կնոջդ հետ պետք է լավ վարվես։ Խեղճ մայրդ, կարող եմ ասել, իմ զոհը դարձավ։ Լա՜վ, համեստ մի՛ ձևանար, յեթե ինձպես չլինես, ինձանից շատ էլ լավ չես լինի։ Ուրեմն պսակվում ես, շա՜տ լավ, շատ լավ, յես համաձայն եմ։

— Պապա, չկարծեք վոր յես առանց ձեզ մի այդպիսի քայլ կանեյի։ Յես ինքս մտադիր էյի այս որերս ձեզ հայտնել և ձեր համաձայնությունը խնդրել։

— Լադնո, լադնո, յես համառ ու կոպիտ հայրերից չեմ, վոր հակառակեմ։ Յես ժամանակակից մարդ եմ, մոդերն, բան հասկացող եմ։ Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, էհ, գնա, վորդի, աչքերիցդ յերևում է՝ Բարաթովների ցեղիցն ես։ Հաջողությո՜ւն, վոտներս ծածկիր այն պլեդով, այ, այդպես. ա՜խ, ինչպես տխուր է մենակ կյանքը, գնա...

Յեվ ծերունին, յուր հոգնած գլուխը թեքելով բազկաթոռի մեջքին, աչքերը խփեց, կարծես, նիրհելու համար։

Մարտ ամսի վերջն եր, յերբ Բարաթյանի և Գայանեյի մեջ, վերջապես, տեղի ունեցավ բացարձակ խոսակցություն։ Տարօրինակ եր այդ որը Գայանեյի դրությունը։ Վերադառնալով տուն, նա փակվեց սենյակում, վոչ վոքի չեր թողնում այնտեղ մտնել։ Վերջապես, նրա իղձը կատարվեց։ Նա վաղուց գիտեր, վոր սիրվում է, բայց ա՛յլ եյին լուռ նշանները, ա՛յլ եր բերանացի խոստովանությունը։ Յեվ Բարաթյանը բաց արեց նրա առջև յուր սիրտը, ա՛յն մարդը, վոր բոլոր յերիտասարդների շարքում միակն եր, վոր գրավել եր Գայանեյին։ Այդ յերիտասարդի մեջ, որիորդի կարծիքով, կային բարոյական ուժ, խելք և արտասովոր ձիրքեր։ Առանձնապես սիրելի յեր Գայանեյի համար նրա կիսանփույթ և կիսահեգնական վերաբերությունը կյանքին։ Նա հավատացած եր, վոր յեթե Բարաթյանը չի վոգևորվում,—վորովհետև վոգևորվելու բան չի տեսնում, յեթե լրջորեն չի վիճում, չի տաքա-

նում, ինչպես Դիմաքսյանը կամ ուրիշները,— վորովհետև խելքով իրան հավասար մարդկանց չի հանդիպում։ Նա համոզված եր, վոր հաճոյախոս, կատակասեր յերիտասարդի ներքին աշխարհը պարունակում է հարուստ գանձ, և այդ գանձը վերջի վերջո պետք է յերևան գա ու ամենքին հիացնի։ Հաճախ նա ուզում եր իմանալ, թե ինչ է այդ բանը, կամենում եր արժանանալ յերիտասարդի հավատարմությանը։ Բայց Բարաթյանը յերբեք չեր դավաճանում յուր մշտական սովորույթին։ Նա որիորդի հետ ևս վարվում եր այնպես, ինչպես ուրիշների հետ, հեգնելով և կատակելով։ Յեվ Գայանեն չեր վիրավորվում այդ բանից, ընդհակառակը նա դեռ իրան անարժան եր համարում Բարաթյանի հավատարմությանը։

Իսկ այժմ... այժմ նա սիրված է նրանից։ Ուրեմն Բարաթյանը նրա հավասարն է, այլես նրանց մեջ գաղտնիք չի կարող և չպիտի լինի։

«Յես յերջանիկ եմ», կրկնում եր նա անդադար մտքում, հետ ու առաջ անց ու դարձ անելով յուր սենյակում։ Յեվ այդ յերջանիկ առանձնության մեջ նա չեր ուզում, վոր մեկը խանգարի նրան։ Նա մինչև անգամ ճաշի չել չնստեց տնեցիների հետ, պատճառելով, թե տկար է։ Սակայն տիկին Բախտամյանը մտավ նրա սենյակը, խանգարեց նրան և մի հայացքով ամեն ինչ հասկացավ։

— Չլինի՞ թե ուզում եք առանց մեզ հարսանիք անել,— արտասանեց տիկինը դառն հեգնությամբ։

— Վաղը նա կգա քեռիի և քեզ հետ խոսելու։

— Բարի գալուստ,— մրմնջաց տիկինը, շրթունքները կրծելով։

Գայանեն այնքան վոգևորված և հափշտակված եր յուր բախտով, վոր նրա հուզմունքը այս անգամ չնկատեց։ Նա միայն մի բան եր ցանկանում, տիկինը իրան մենակ թողնի, չխանգարի նրա յերջանիկ րոպեները։

Հետևյալ որը Պյոտր Սոլոմոնիչը սուրճ խմելով լրագրներ եր կարդում, յերբ ծառան հայտնեց, թե Բարաթյանը ուզում է նրան տեսնել։ Պատկառելի բուրժուան իսկույն հասկացավ, վոր այս անգամ յերիտասարդը կարևոր գործի համար է յեկել, քանի վոր մինչև այժմ նա յերբեք յուր գալստյան մասին այդպես չեր ազդարարել ծառայի միջոցով։

Բարաթյանը հագնված եր սովորականից լավ և խնամքով։ Նրա դեմքը արտահայտում եր անսովոր լրջություն, իսկ աչքերի մեջ նկատվում եր խորին ակնածություն Պյոտր Սոլոմոնիչի։ Այս բանը մեղմացրեց ծերունու սիրտը։ Նա ընդունեց յերիտասարդին համեմատաբար ավելի հարգանքով, քան յերբևէ ընդունել եր։

Բարաթյանին հարկավոր էր մի փոքր կողմնակի բաներից խոսել, վորպեսզի մի կերպ խոսք բաց անե յուր նպատակի մասին։ Ուստի նա դիպլոմատիական հմտությունով սկսեց բավական հեռվից և այս հեռվից մոտեցավ բուն գործին։ Պյոտր Սոլոմոնիչը լսում էր նրան լուռ, մերթ ակնոցը դնելով քթին, մերթ հանելով։ Կարծես, նա փորձում էր — ապակիներով լավ կհասկանա լսածը, թե առանց ապակիների։ Յերբ Բարաթյանը ասելիքը վերջացրեց և գլուխը ուղիղ պահած խորին պատկառանքով պատասխանի յեր սպասում, Պյոտր Սոլոմոնիչը նորից հանեց ակնոցը և սկսեց նայել յուր կոճակներին։ Թվում էր, վոր նա դրսից է խորհրդակցում յուր սրտի հետ հանդիսավոր առաջարկության մասին։ Ձայն չեկավ ներսից, թե իսկի՞ չել վատ չէ Բարաթյանի նպատակը։ Նախ, վերջապես, պետք է Գայանեյին մեկի հետ ամուսնացնել, յերկրորդ, այդ Բարաթյանը, աստված վկա, վատ յերիտասարդի չի նմանվում։ Գայանեյի համար է չեղել նրա այցելությունը. կնշանակե Պյոտր Սոլոմոնիչը իզուր էր նրան ատում, կարծելով, թե... էհ, վերջապես...

— Պարոն Բարաթյան, դուք Գայանեյին անկեղծ եք սիրում։

Սիրում է անկեղծ և շատ է սիրում։

— Պարոն Բարաթյան, ձեր հորը՝ Գերասիմ Գերասիմիչին ասել եք, թե ուզում եք Պյոտր Սոլոմոնիչ Բախտամովի քրոջ աղջկա հետ պսակվել։

Ի հարկե, ինչ ասել կուզի։ Նա այն յերիտասարդներից չէ, վոր առանց իրանց ծնողների հաճության են ամուսնանում։

Յերիտասարդի պատասխանները դուր յեկան Պյոտր Սոլոմոնիչին։ Ծերունին գլուխը հավանական ձևով շարժեց և այս անգամ աչքերը հառեց դիմացինի կոճակներին։

— Մի բան էլ կա։

— Հրամայեցեք, Պյոտր Սոլոմոնիչ, ձեր խոնարհ ծառան եմ։

— Մեր ժամանակում ընտանիք պահելը մի քիչ դժվար է։

— Այսինքն ինչպես։

— Շատ փող է հարկավոր։

Բարաթյանը ստանում է տարեկան 2,000 ռուբլի ռոճիկ, ապրում է յուր հոր տանը և ամուսնանալուց հետո չել պետք է այնտեղ ապրի։ Բացի դրանից, հայրը խոստանում է նրան ամսական 200 ռուբլի։

— Հայրդ ինչքան կարողություն ունի, ամոթ չլինի հարցնելը։

— Մեր տունը տեսել եք, Պյոտր Սոլոմոնիչ։

— Լավ։ Գրավ դրած չէ՞։

— Վոչ։

— Արժե ութսուն հազար։

— Որթաճալուճն էլ մի այգի ունենք։

— Գրոշ չարժե։ Փող, բան։

— Հաստատը չգիտեմ, բայց, կարծեմ, իմ մասը մոտ քսան-քսանուհինգ հազար զուտ փող կլինի։

Պյոտր Սոլոմոնիչը լռեց և դարձյալ նայեց յուր կոճակներին։ Բարաթյանի պատասխանները բոլորովին գոհացուցիչ էին, խելոք մարդը այդ կարողությունով կարող է շատ լավ ապրել։ Բայց ինչ որինավոր ցերիտասարդ է, օժիտի մասին իսկի մի խոսք։ «Արի սրան փորձեմ», մտածեց նա։

— Պարոն Բարաթյան, ես Գայանեյին աչքիս լույսի պես եմ սիրում։

— Իհարկե, իհարկե, ես շատ լավ գիտեմ։

— Համբերեցեք։ Հանգուցյալ քույրս մեռնելիս ինձ ասաց. «Պետրոս, աղջկանցս փողոցներում չթողնես»։ Գայանեն տասներեք տարեկան էր, Ովսաննան հինգ տարեկան, երբ նրանց բերեցի իմ տուն։ Իննը տարի վեց ամիս է նրանց պահում եմ ու մեծացնում։ Ե՛հ, բան է, ժամանակիս ցերիտասարդ եք, կարելի է մտածում եք օժիտի մասին, պարզն եմ ասում, Գայանեն ոչինչ չունի։

«Խորամանկություն ես անում, բարեկամ, ինձ խաբել չես կարող», մտածեց Բարաթյանը։

Նա բարվոք համարեց առայժմ հրաժարվել օժիտի գաղափարից։ Ի՞նչ օժիտ, ի՞նչ բան, նա շատ ստոր մարդ կլիներ, եթե Գայանեյի հետ կամենար փողի համար ամուսնանալ։ Վոչ, վոչ, նա սիրում է որիորդին և միայն նրան է ուզում, թեկուզ առանց կոպեկի, թեկուզ մերկ էլ տաք, նա չի հրաժարվիլ։

— Մ ա լ ա դ չ ի ն ա,—գոչեց Պյոտր Սոլոմոնիչը միանգամայն հիացած,—լավ տղան այդպես պետք է անի։

Հազիվ նա արտահայտել էր յուր հիացումը, երբ դռները կամացուկ բացվեցին և հանդարտ քայլերով ներս մտավ տիկին Բախտամյանը։ Պյոտր Սոլոմոնիչը ուզեց պատմել նրան, բայց տիկինը ձեռի շարժումով հասկացրեց, թե տեղյակ է բանին։

— Ցերևի, եթե ինքս լսած չլինեյի, դու ինձ չեյիր կանչիլ, ասաց նա վիրավորված ձայնով։

— Փա՛ռ, վոնց չէ, դու Գայանեյի համար մայր ես։

— Նա ինքը ինձանից տասնապատիկ լավ մայր է իրան համար։

— Եհ, հիմա ասա տեսնենք, համաձա՞յն ես։

— Ի՞նչ ասել է «համաձայն ես»։ Ցես կամ դու ի՞նչ իրավունք

ունինք, խոմ մեր պապերի ժամանակը չի, այժմ աղջիկը ում հավանում է — նրան է գնում։ Միայն յես մի բան եմ ուզում ասել, պարոն Բարաթյան, լավ մտածեցեք, շատ չե՞ք վտանգում պսակվելու, դուք այնքան չերիտասարդ եք, վոր...

— Չէ՞ վոր Գայանեն էլ չերիտասարդ է, — ընդհատեց Պյոտր Սոլոմոնիչը։

Տիկինը ուսերը վեր քաշեց և ժպտալով պատասխանեց.

— Ինչո՞ւ, շատ էլ չերիտասարդ չէ, յես ու նա համարյա միասին ենք մեծացել, մարդ չպիտի թաքցնի պակասությունը, բավական հասակով է։

— Հասակի մասին խոսելը ավելորդ եմ համարում, — ասաց Բարաթյանը, չզգալով, թե վորքան վիրավորում է տիկնոջը, — միայն յես ձեր համաձայնությունն եմ խնդրում։

— Յես համաձայն եմ, — գոչեց Պյոտր Սոլոմոնիչը բանին վերջ տալու համար։

— Էհ, տա աստված, վոր բախտավոր լինեք, — ավելացրեց տիկինը հառաչելով։

Բարաթյանը թույլ տվեց, վոր Պյոտր Սոլոմոնիչը համբուրի յուր ճակատը, իսկ ինքը համբուրեց տիկնոջ ձեռքը։ Նա տիկնոջ հետ վարվում էր խորին վորդիական հարգանքով և անսահման համեստությամբ։

— Մի բան, վոր թե՛ Պյոտր Սոլոմոնիչին շատ դուր յեկավ և թե՛ նրա սրտից ջնջեց կասկածի վերջին նշույլն անգամ...

XII

Զարագուշակ յերեկոյից հետո Դիմաքսյանը առհասարակ տնից չէր դուրս գալիս, բացի դպրոց գնալուց։ Այժմ նա կատաղած էր վոչ միայն հակառակորդների, այլ և ամբողջ հասարակության, նույն իսկ մարդկության դեմ։ Ի՞նչպես նա սառնարյուն կրեր այն բոլոր ատելությունները, ծաղրը, արհամարհանքը, վորոնց հանդիպում են ամեն քայլափոխում։

Դպրոցը նա այժմ հանգիստ էր թողել, նրա մեջ տեղի ունեցած գեղծումները շատ էլ չեյին զբաղեցնում նրա միտքը։ Այս պատճառով պաշտոնակիցները և հոգաբարձուները բավական հաշտ եյին նրա հետ. վերջապես, նա ինքը առ այժմ մասամբ գոհ էր։ Նրա հարձակումները անհետևանք չեյին մնացել. հոգաբարձուների մեջ դպրոցի համար նոր շենք կառուցանելու խնդիր էր հղացել։ Նրա ցանկացածն էլ առ այժմ այդ էր, մնացյալը ապագայի խնդիր էր։ Ուստի առ ժամանակ նա լռեց։

Բայց նա նյութում եր ավելի կատարյալ կռիվ։ Դա մի առանձին գրություն եր «Հասարակություն և անհատ» անունով։ Պետք ե ապացուցաներ, թե ընդհանուրի քաղաքակրթության հիմքը անհատն ե. քանի վոր չկան բարոյական անհատներ — չի կարող լինել և բարոյական հասարակություն։ Սակայն լոկ գրելը նրան չեր գոհացնում։ Նա ձգտում եր գործով ու խոսքով էլ մաքառել ամբոխի ազդեցության դեմ։ Յեվ այստեղ նրա առջև կանգնում եր մի խոչընդոտ։ Այդ տեսակ կռիվ մղելու համար նախ հասարակ ուսուցչի պաշտոնը շատ աննշան եր, յերկրորդ, անհրաժեշտ եր նյութական անպայման անկախություն։ Նա գիտեր, վոր յեթե հոր հետ հաշտվի, կարող ե ոգտվել նրա կարողություններից։ Բայց, միևնույն ժամանակ, չեր զղջում յուր արածի մասին և յերբեք չեր համաձայնվիլ խոնարհվել ծերունու առջև, ներումն խնդրել նրանից։

Բարաթյանի նշանադրության լուրը հաղորդեց նրան Մսերյանը, վոր լսել եր Սալամբեկյանից։ Իդեալիստին հայտնի չեր, վոր Դիմաքսյանը հակված ե դեպի որիորդ Գայանեն։ Ուստի նրա բարի սիրտը թույլ չտվեց այդ փափուկ խնդրի մասին խոսքը յերկարացնել և միայն ասաց։

— Ով ուզում ե հասարակությանը ծառայել, չպիտի ամուսնանա։

Դիմաքսյանը այս խոսքերի մեջ զգաց ճշմարտության մի մաս։ Նա չվիճեց, բայց և չկարողացավ այլ ևս թագցնել յուր սրտի գրգիռը։ Յերկու ընկերների մեջ բացվեց մտերիմ խոսակցություն։ Վաղուց Դիմաքսյանը զգում եր այս տեսակ խոսակցության պահանջ, վաղուց ցանկանում եր բանալ յուր սրտի գաղտնի ծալքերը մեկի առաջ։ Գուցե այդպիսով թեթևացներ յուր հոգու ծանր բեռը։ Յեվ ո՞ւմ առջև կարող եր պարզախոս լինել, յեթե վոչ Մսերյանի, վորին հավատում եր լիովին և վորի անկեղծությունը անկասկածելի եր նրա համար։

Ճիշտ ե, նա սիրում ե Գայանեյին, ճիշտ ե, չկարողացավ հանդուրժել կանացի հրապույրներին։ Բայց նա յուր սերը որիորդին չարտահայտեց, վորովհետև ի՞նչ հետևանքի կարող եր հասնել։ Միթե մի որիորդ, վոր ինքը գեղեցիկ ե, կարո՞ղ եր նրան հավանել։

«Ի՞նձ, այլանդակի՞ս...»։

Կարո՞ղ եր գերադասել մի ուրիշից, այն մեկից, այո՛, այն ուրախ և ճարպիկ, գեղեցիկ և սալոնական Բարաթյանից։ Բայց կա և մի ուրիշ, ավելի զորավոր պատճառ, վոր ստիպում եր նրան լռել, նույնիսկ այն տաք րոպեներին, յերբ նա կարծում եր, թե անկարող ե լռել։ Յեթե Գայանեն նրան մերժեր և հետո դառնար Բարաթյանի կինը, նա կխելագարվեր։ Ինքնասիրությունը նրան կսպաներ։ Այո՛

Նա շատ ինքնասեր է, չափազանց, այդ ինքն էլ գիտե։ Բայց մի՞թե չի հասկանում, թե դա բարոյական հիվանդություն է, մի՞թե խիղճը չի բողոքում դրա դեմ։ Քանի՜-քանի անգամ նա ինքն իրան դատապարտել է, նախատել, հանդիմանել այդ մասին, բայց իզուր։ Նրա յեսը նրա մեջ մի չար ոձ է։ Գիշեր ու ցերեկ այդ ոձը արթուն ողակված է ներսումը։ Բավական է մի թույլ շշուկ, մի նուրբ շոշափում, և նա ամեն վայրկյան պատրաստ է գալարվել, բանալ բերանը, ցցել սուր ատամները նրա սրտի մեջ և թափել այնտեղ յուր սոսկալի թույնը։ Ահա հենց այդ ոձն է նրան ստիպում լինել միշտ դյուրագրգիռ, միշտ բարկացկոտ, միշտ պատրաստ չար վհուկի պես ճիրանները խրել առաջին պատահած հակառակորդի կոկորդին։

— Սմբատ, մի մեղադրիր ինձ, մի՛ հայհոյիր, ես քեզ խոստովանում եմ այն, ինչ որ յերբեմն ինքս ինձ ամաչում և վախենում եմ խոստովանել։ Բացատրի՛ր միայն ինձ, ինչու՞ բնությունը դրել է իմ սրտի մեջ այդ վիշապին...

Նրանք նստած էին հյուրանոցի մի առանձին սենյակում, ուր ոչ ոք չկար։ Մոտ կես գիշեր էր։ Ընթրիքը նոր վերջացրել էին։ Սեղանի վրա դրված էին մի շիշ գինի և յերկու բաժակ։

Մսերյանը լսում էր ընկերոջը լուռ, մերթ բարեկամի խրախուսող հայացքով, հավանություն տալով նրա յուրաքանչյուր դարձվածքին։ Կար այդ մարդու մեջ մի բան, որ խորին հավատ էր ներշընչում և դիմացինին տրամադրում էր պարզել նրա մոտ սրտի ամենանվիրական զգացումները այն անդրդվելի համոզմունքով, որ գաղտնիքը կմնա նրա մոտ գաղտնիք մինչև գերեզման։

Ավարտելով յուր խոստովանքը, Դիմաքսյանը գլուխը հենեց ձեռի ափին և հայացքը հառեց անորոշ տարածության մեջ։

Վերջապես, Մսերյանը խոսեց։ Նա յուր ընկերոջ հոգին հասկանում է, հասկանում է, ինչ է այն բանը, որին թունավոր ոձ է համարում։ Այո, նա թունավոր է, բայց միայն Դիմաքսյանի մեջ չի գըտնվում նա։ Մի-մի այդպիսի ոձ նստած է ամեն մի մարդու կրծքի տակ և գիշեր-ցերեկ կրծում է նրա սիրտը, թուլացնում է նրա հոգին, ծծում է նրա կյանքի հյութը։ Մի տարբերություն կա Դիմաքսյանի և ուրիշների մեջ, նրա սրտի ոձը ավելի մեծ է, ավելի թունավոր և ավելի արթուն ու զգայուն։ Յեվ ինչու, որովհետև նրա միտքը ևս ավելի բարձր, սիրտն ևս ավելի ընդարձակ է։

— Ոչ, — գոչեց իդեալիստը զգացված, բռնելով ընկերոջ բազուկը, — վկա յե աստված, կյանքիս յերեսուն ու հինգ տարվա ընթացքում ոչ մի անգամ ոչ մեկին չեմ շողոքորթել, թեև կարիք ունե-

ցել եմ շողոքորթելու... Բայց կգա ժամանակ, և ես համոզված եմ նրա գալուն, որ դու խելքիդ ուժով կջախջախես այդ ոճի գլուխը: Այնուհետև քո մեջ կմնա միմիայն մարդը, կատարելագործված, կյանքի բովում ձուլված և զտված մարդ: Հիշում ես այն երեկոն, երբ դու քեզ դժբախտ անվանեցիր: Ես ասացի, դու ամենաբախտավորը կլինես մարդկանց մեջ: Եվ կլինես: Սպանիր այդ ոճին, և կտեսնես, որ ես չեմ սխալվում, ինչպես չեմ սխալվում, թե կգա ժամանակ, որ անհատի բոլոր մանր ինտրիգները կենթարկվեն ընդհանուրի երջանկության պահանջներին...

Դառն և վշտալի ժպիտը մթագնեց Դիմաքսյանի երեսը: Շատ է աշխատել նա ջախջախել հրեշին, շատ է ճգնել ազատվել նրա տանջանքներից, բայց իզուր: Ծովային պոլիպի պես հարյուրավոր ճանկերով նա բռնել է նրա ամբողջ էությունը և սեղմում է անխնա:

— Այո, հենց այժմ, այս վայրկյանիս, դու խոսում ես, իսկ նա արթնանում է: Ես վշտանում եմ, ինչու դու պետք է ինձ խրատես, ինչու ես միմիայն իմ և իմ խելքին չպիտի հավատամ:

— Տարիների փորձը կտա քեզ այն զենքը, որի մի հարվածով կկտրես նրա հարյուրավոր ճանկերը: Ապրիր, գործիր և կտեսնես:

Նրանք լռեցին: Արդեն ուշ գիշեր էր: Սպասավորը հավաքում էր հյուրանոցի աթոռները: Նրանք վերկացան և դուրս եկան:

Երբեմն Դիմաքսյանը փողոցում տեսնում էր Բարաթյանին Գայանեի հետ թև թևի տված զբոսնելիս: Նա միշտ ճանապարհը փոխում էր, որ երես առ երես չհանդիպի նրանց: Դա արդեն ավելի էր, քան թե հասարակ նախանձ: Դա զուտ տանջանք էր: Տառապում էին նրա սրտի բոլոր թելերը, և տառապանքի պատճառը դարձյալ նա էր, այն ոճը: Երջանիկ Մսերյան, ինչպես կարողանա սպանել վիշապին, երբ քաջություն չունե հանդիպել անգամ մի ուրիշի երջանկությանը, որ յուր ապերջանիկ լինելն է ցույց տալիս:

Այդ օրերը նա յուր հիշատակարանի մեջ մտցրեց հետևյալ տողերը. «Եթե բնությունը իմ այս փոքրիկ մարմնի մեջ դրած լիներ մի փոքրիկ և սառն սիրտ, միթե ավելի բախտավոր չէի լինիլ: Ինչու այսքան զգայուն եմ, ինչու սիրտս լիքն է անզուսպ կրքերով, վոչխոլական կրքերով, այլ սիրելու և ատելու բուռն ավյունով»...

Նա փորձում էր յուր վիշտը մոռանալ գործերի մեջ խորասուզվելով: Դպրոցում սկսվել էին հարցաքննությունները: Առայժմ գոնե առ երես պաշտոնակիցները հաշտ էին նրա հետ: Մի անգամ միայն նա չկարողացավ իրան զսպել, երբ տեսուչը մի աշակերտի անվանեց «արջի զավակ»: Բայց վեճը սուր կերպարանք չստացավ: Գործերի

դրությունը շատ խառն էր. արձակուրդների ժամանակը մոտենում էր, հակառակորդները չկամեցան բաժանվել։

Քննությունները նոր էին վերջացել, յերբ Դիմաքսյանը մի օր հեռագիր ստացավ, թե հայրը հիվանդ է և անհապաղ պահանջում է նրան։ Որքան էլ անհաշտ լիներ, սակայն դժգոհությունը նրա մեջ տեղի տվեց վորդիական զգացմանը։ Նա շտապեց ուղևորվել հայրենիք, վոր յերկու օրվա հեռավորություն ուներ Թիֆլիզից։ Ճանապարհին նա կարծում էր ծերունին արդեն մեռել և խղճի խայթոցը տանջում էր նրան. ինչու վորդիական սերը մոռացավ ծերունու կամակորության պատճառով։ Սակայն քանի մոտենում էր հայրենի քաղաքին, այնքան խայթոցը մեղմանում էր։ Մի՞թե նա չե՞ր սիրել հորը։ Ո՛չ, նա միայն յուր աշխարհահայացքը չկամեցավ յենթարկել նրա համառ կամքին։ Գաղափարի մարդ է, պարտավոր էր այդպես անել։

«Յես կատարել եմ իմ բարոյական պարտքը, ինչու չեմ հանդիմանում ինձ»։

Այս խորհրդածություններով նա վոտք դրեց այն տան շեմքը, ուր ծնվել էր, սնվել և մինչև տասն ու հինգ տարեկան հասակը ապրել։ Չկար այլևս այն ահագին դամբռը, վոր գիշեր-ցերեկ հսկում էր այդ տան դռները և վորի հետ նա շատ էր խաղ արել։ Պարտեզի ծառերը միայն վողջունեցին նրա գալուստը։ Դարավոր կաղամախները խշխշացնում էին իրանց հղկած փայլուն տերևները սպիտակ ճյուղերի մեջ։ Յեվ նրանց վեհ ու վիթխարի տեսքը պատկառանք էր ազդում։ Հաստաբուն թթենիները արձակում էին նրա վոտների տակ իրանց հասուն պտուղները։ Իսկ արեգակի ուրախ շողքերը, ծառերի խիտ տերևների միջով անցնելով, խնամքով մաքրված գետնի վրա հազարավոր նախշեր էին գոյացնում։ Այդ բոլորը խոսում էին նրա հետ անցյալի լեզվով և նրա սրտի մեջ զարթեցնում քաղցր հիշատակներ։ Ընդարձակ տան մեջ տիրում էր մենաստանային լռություն։ Նա շտապով անցավ լայն պատշգամբը, ուր այնքան նա վազվզել էր յուր քույրերի հետ։ Նա մտավ մի նեղ, մութ նախասենյակ և այնտեղից ուղղակի հոր ննջարանը։

Ծերունին կենդանի յեր։ Անկողնի մեջ նստած, վերմակը ուսերին քաշած, հիվանդը նայում էր ցած, յերբ ներս մտավ նրա միակ արու զավակը՝ յերկար կոշիկները հագին, վոտից մինչև գլուխ փոշիի մեջ փաթաթված։ Անկողնի առաջ կանգնած էր մի շիկահեր տղամարդ, ձեռները փորի վրա դարսած, հլության դրոշմը ճակատին։ Նա սպասում էր հիվանդի հրամաններին, և թվում էր, վոր պատրաստ է ծերունու մի խոսքով կրակի մեջ նետվելու։ Այնինչ՝ հիվանդը լուռ էր,

անշարժ. կարծես, նա յուր սրտի հետ խորին խորհրդածության մեջ էր։ Նրա տափակ ծոծրակով և քառանկյունի ճակատով գլուխը հենց առաջին հայացք ազդու տպավորություն էր գործում յուր կարճլիկ մոխրագույն մազերով, վոր նմանում էին լարված նետերի, պատրաստ ամեն վայրկյան դուրս պրծնել և ցցվել առաստաղին։ Նրա թանձր ընչացքը հովանավորում էր մի խիստ բերան, վորի անկյուններում փորված էին յերկու խոշոր ակոսներ։ Հիվանդության պատճառով չսափրած յերեսի կարճ միրուքը հիշեցնում էր ծայրերը կտրըված ասեղների փունջ։

Զննելով յեղանակի տաքությունը, ընդարձակ սենյակի անպաստառ, խոնավ պատերից փչում էր մի թափանցող զով։ Կահ-կարասին բաղկացած էր մի քանի հնաձև աթոռներից և մի յերկայն ու լայն թախտից, վորի ծայրում պառկած էր հիվանդը։ Մի անկյունում սենյակի հատակին բռնված էր մի յերկաթյա ժանգոտված սնդուկ։ Նա փակ էր, նրա պարունակությունը վոչ վոք չգիտեր, ինչպես և անհայտ էր, թե ի՞նչ էին պարունակում նրա տիրոջ հոգին ու սիրտը։

Լսելով վորդու բարևելու ձայնը, Մարգար աղան գլուխը չբարձրացրեց, չնայեց նրա յերեսին, վոչ էլ մի բառ արտասանեց։ Նա միայն յուր ջլոտ ձեռը մեկնեց նրան։ Արսենը սեղմեց այդ կոշտ ձեռը։ Ծերունին շտապով յետ քաշեց, նա կարծում էր, թե վորդին գոնե կըհամբուրե հայրական աջը։ Շիկահեր մարդը մի աթոռ մոտեցրեց, և Արսենը նստեց նրա վրա։

— Ի՞նչպես եք այժմ։

Ծերունին թավ, ալեխառն հոնքերը վեր քաշեց և մի ակնաթարթ միայն նայեց վորդու յերեսին։ Այնուհետև դարձյալ նրա ծանր կուչկուչված կոպերը խոնարհվեցին լուսամուտների վարագույրների պես, վոր չթույլ տան արեգակի ճառագայթներին ներս թափանցել։ Նորից սովորական խստությունը և մռայլությունը սքողեցին նրա դեմքը։

Մի քանի րոպեյից հետո, վերջապես, լսվեց նրա ձայնը։ Այդ ձայնը հնչում էր պղնձի պես։ Նա ազդու յեր և գալիս էր մի լայն ու հուժկու կրծքից։ Նա սովոր էր հրամայել և գոռալ։

— Ինչո՞ւ յես եկել։

— Հեռագիր էյի ստացել։

Ծերունին նայեց խոշոր հայացքով անկողնի դեմ կանգնած շիկահերին և բարկացած գոչեց։

— Չասացի՞ ձեզ, թողեք մեռնեմ, դա գերեզմանս էլ չգտնի։

Հայտնվեց, վոր, իրավ, ծերունին դեմ է յեղել վորդու գալստյանը։ Արսենին, հորից գաղտնի, հեռագրած է յեղել նրա մեծ քույրը։

Հիվանդը չէր կամեցել տեսնվել յուր միակ վորդու հետ։ Նա չկատարեց յուր հոր կամքը, արհամարհեց նրան, ուսումը ավարտելուց հետո անգամ չեկավ ներում խնդրելու։ Նա վիրավորում է յուր ծնողին, ամեն ամիս յերեսին շպրտելով նրանից ստացած նպաստը։ Թող ուրեմն ինքն էլ արհամարհված և մոռացված մնա։

— Կարելի յե մտածում եյիր, շատ եմ կարոտել կերպարանքիդ։ Չե, յես վորդի չունիմ, ինչու պիտի կարոտեյի։ Քույրերդ էլ կարծում են աչքս ճանապարհին է, հա հա հա, շաբաթը յերկու անգամ գալիս են իրանց լակոտների հետ... Եհե, յես շատ լավ եմ ճանաչում ձեզ, հիմար չեմ, խելքս գլխիս դրուստ է։ Դուք անհամբեր սպասում եք իմ մեռնելուն. ասում եք, կսատկի պառավը, կգնանք ունեցած-չունեցածը կճանկենք, տակով կանենք։ Շատ եք վռազում, բայց սխալվում եք, աստուծո կարող զորությունով Մարգար աղան ձեր խաթրու չի մեռնիլ։

Արսենի ինքնասիրությունը ստիպված էր դիմանալ այդ զրպարտությանը, վորովհետև վորդին չէր կամենում հիվանդ հորը ավելի գրգռել։ Նա լուռ լսում էր, նայելով մերթ սենյակի անկյունը ու մաշված հատակին, մերթ սարդի վոստայնով ծածկված առաստաղին։

Ծերունին բարձի տակից հանեց կոտլետի չափ մի արծաթյա հնադարյան ժամացույց, նայեց և դարձավ շիկահերին.

— Այն գահրումարը տուր տեսնենք։

Շիկահերը վերցրեց լուսամուտի հատակի վրայից կարմիր հեղուկով լի սրվակը, մի գդալ լցրեց, տվեց նրան։

— Իմ տունը քանդվեց այն որը, — շարունակեց ծերունին, գույնզգույն թաշկինակով սրբելով թանձր ընչացքը, — յերբ մայրդ մեռավ։ Տասն ու հինգ տարի յե յես մենակ եմ այս չորս պատերի մեջ։ Ի՞նչ են զավակները. տանջանք։ Մարդուս բարեկամը նրա կնիկն է. «և թողյալ զհայր և զմայր յուր՝ յերթիցէ զհետ կնոջ յուրոյ»։ Վորդի ունեմ, չեկել է հոր սիրտը մխիթարելու, հա հա հա, փողի պետք ունե, չեկել է ինձ կողոպտելու...

— Հայր, — պատասխանեց վորդին խեղդված ձայնով, — մի վիրավորեք ինձ։

— Ցնդում ես, խոսում, — գոչեց ծերունին, ավելի գրգռվելով, — բաս ում գլխին թափեմ սրտիս լեղին։ Փահ, կարծում ես, չեմ լսել։ Լսել եմ, ինչպես չե, անունս աշխարհի յերեսին փառավորում ես, ասում են; գրում ես սրա ու նրա վրա։ Մարդիկ հորդ են անիծում, շատ լավ է, ինչ ասեմ, մեռնելուցս հետո յել գերեզմանս կքրքրեն։ Շնորհակալ եմ քեզանից, աստուած, լավ վորդի տվեցիր ինձ...

Նրա հազը բռնեց։ Նա թաշկինակը փնտրեց և, շուտ չգտնելով, բարձրաձայն զռաց, հայհոյեց շիկահեր մարդուն։ Մի քիչ անցած, նա հանդարտվեց։

— Այ, այստեղ եր,—շարունակեց նա,—հենց այս քանդված սենյակում։ Հանդուցյալը դրել եր քեզ թևերի վրա, մտիկ եր անում, ուրախանում։ Դու ծվծվում եյիր խոզի ձտի պես։ Մոտեցա, մտիկ արեցի աչքերիդ, սիրտս թրխկաց, հասկացա։ Ասացի. «Հերիքնազ, դու ինձ համար վորդի չես ծնել, պատիժ, պատիժ»։ Կատարվեց խոսքս։ Խեղճ կնիկ, լավ ե, վոր կենդանի չես, հըմ, ինչ կուրախանայիր դրան տեսնելով, այս այս այս... գնա, չեմ ուզում, յես վորդի չունեմ, կորիր եկած ճանապարհովդ...

Նա շտապով պառկեց, վերմակը քաշեց գլխին և յերեսը դարձրեց պատին։ Շիկահերը անդադար հառաչում եր։

XIII

Չնայելով նոր անհյուրընկալ ընդունելությանը, Դիմաքչյանը մտադրվեց մի առժամանակ մնալ հայրենի քաղաքում։ Նրա քույրերը վաղուց կարոտել եյին իրանց միակ յեղբորը, պետք եր գոնե նրանց թախանձանքը հարգել։

Մարգար աղան, յուր աղջկերանց հետ ել սառն եր։ Մենակեցությունը որից որ այդ մարդու մեջ ամրացել եր մի անգամ հղացած կասկածը։ Հնար չկար նրան համոզելու, թե յուր զավակների սերը շահախնդրությունից չի առաջանում։ Նա ինքն յերբեք չեր այցելում աղջկերանց և չեր ուզում, վոր նրանք ել իրան այցելեն։ Ապրում եր վեց ընդարձակ սենյակներից բաղկացած հայրական տնում, ինչպես յերդվյալ ճգնավոր։ Հնաշեն տան լուսամուտները դեպի փողոց միշտ փակ եյին, և վոչ վոք չեր կարող կարծել, թե այնտեղ ապրում ե կենդանի եյակ։ Նա պահում եր մի ծառա, վոր թե այգեպան եր, թե խոհարար և թե սպասավոր։ Բացի այդ բազմապաշտոն ծառայից, նրա մոտ մուտ ուներ այն շիկահերը, վորին Արսենը տեսավ։ Դա ծերունու հեռավոր ազգականներից եր—վերին աստիճանի հլու, կամակատար և շողոքորթ մի եյակ։

Սալիբեկը—այսպես եր նրա անունը—կատարում եր Մարգար աղայի կառավարիչ-հավատարմատարի պաշտոնը։ Նրա ձեռքով եյին ստացվում գյուղայիններից կալվածների հարկը և քաղաքացիներից խանութների ու տների վարձը։ Նա յեր վաճառում այգիների բերքերը, հավաքում ջրաղացների յեկամուտը և այլն։

Արսենը կողմնակի ծանոթացավ գործերի դրությանը և տեսավ, վոր նոր ձեռքը հազիվ անցնում է այն չեկամտի կեսը, վոր պետք է նրա հաշվով ստացվեր։ Մնացյալը ճանապարհին աղի պես հալվում էր Սարիբեկի խոնավ ձեռներում։

Գյուղացիները դեռ արցունք էին թափում այդ մարդու անունը հիշելիս։ Յերբեմն խմբերով գալիս էին գաղտնի կերպով Արսենի մոտ և գանգատվում։ Յերիտասարդը լսում էր նրանց աղերսանքը և վրդովվում։ Յերբեք նա չէր յերևակայել, թե յուր հայրը անգիտակցաբար-հարստահարիչի դեր է կատարում։

Նա կամենում էր ամեն բան հայտնել ծերունուն, համոզել նրան վոր խիստ հաշիվ պահանջի կառավարչից։ Բայց դրա համար հարկավոր էր, վոր առաջ ինքը գրավեր նրա հավատարմությունը։ Անա ինչու նա տատանվում էր, վախենալով մի գուցե յուր միջամտությունը ավելի վատ հետևանք ունենա գյուղացիների համար։

Իսկ ծերունին շարունակում էր նրա հետ վարվել առաջվա պես ցուրտ և անհաշտ։ Թվում էր, վոր վոչինչ չի կարող հոր և վորդու մեջ բացված վիհը լցնել։

Արդեն նա առողջացել էր, վոտքի էր կանգնել և հետևում էր անձամբ յուր գործերին։ Առավոտից մինչև յերեկո նա պտտում էր յուր տան առջև ձգված ընդարձակ պարտեզում։ Սովորաբար նա հագնում էր կաշվե բաճկոն մորթյա աստառով, ձեռին կրում էր յերկաթե սուր ծայրով մի ձեռափայտ, ճիշտ անպիսին, վոր գործ են ածում ժամհարները գավառներում։ Այգեպանը հետևում էր նրան քայլ առ քայլ և համբերությամբ լսում նրա կոպիտ հանդիմանությունները, բարձրաձայն գոռոցները և բազմատեսակ որիգինալ հիշոցները։ Յերբեմն նա յուր ուսերի վրա ընդունում էր ծերունու ուժեղ ձեռով տված փայտյա հարվածները։ Յեվ. լռում էր, չէր բողոքում, և ձեմ բողոքեր։

Արսենը հեռվից դիտում էր հորը և ականջները փակում նրա ծայրահեղ հայհոյանքները չլսելու համար։

Առավոտ յերեկո ներկայանում էր Սարիբեկը։ Մարգար աղան, թեյի բաժակը առջևը դրած, պատշգամբի վրա թիկն տված մեծ աթոռի մեջքին, լսում էր նրա զեկուցումները։ Նա Սարիբեկի վրա ևս գոռում էր ճիշտ այնպես, ինչպես այգեպան-սպասավոր-խոհարարի վրա, նույն անզուսպ հիշոցներով զարդարելով նրան վոտից մինչև գլուխ, նախահայրերից սկսած մինչև ապագա սերունդները։ Հլու կառավարիչը մի խոսք անգամ չէր արտասանում, դժկամակության մի թույլ նշան անգամ չէր ցույց տալիս։ Ընդհակառակը նրա յերեսին նայողը կկարծեր, թե ծերունու հայհոյանքները և գոռոցները նա հաճույքով է ընդունում, ինչպես յուր զանցառությունների արժանի վարձ։

Վերջանում էր զեկուցումը, և Ծերունին խիստ յեղանակով, անընդդիմադրելի ձևով տալիս էր Սարիբեկին յուր հրամանները։ Այս ինչ խանութպանի ժամանակը լրանում է, պետք է վարձը ավելացնել. այն մյուսը վարձը ուշ է բերում, պետք է դատաստան քաշել. ցորենը չպիտի ծախել, անձրև չկա, ձմեռը հացի գինը կբարձրանա, և այլն և այլն։

Յեվ յերբ Սարիբեկը, «ծառա յեմ հրամանիդ» ասելով, խոնարհ գլուխ էր տալիս և յետ ու յետ գնում, Ծերունին նրա հետևից մրթմրթում էր. «Շան ծնունդ ես, հացի տեր կլինիս, իմ վորդու պես փիլիսոփա չես»։

Վորդին լսում էր և վոչինչ չէր ասում։ Նա միայն մտածում էր, ինչպես անե, վոր Սարիբեկի զեղծումները պարզի։

Մի անգամ այլևս չկարողացավ զսպել իրան։

— Հայր (յերբեք նա «հայրիկ» չէր ասում), Սարիբեկին ինչքան ռոճիկ եք վճարում,—հարցրեց նա։

— Շատ ես ուզում իմանալ,—պատասխանեց հայրը, խոշոր հոնքերի տակից բարկացոտ աչքերը բարձրացնելով նրա վրա։

— Այո, շատ հետաքրքրական է։

— Տարեկան 130 ռուբլի և մի սոմար ցորեն։

— Տարեկան հարյուր յերեսուն ռուբլի՞...

— Յեվ մի սոմար ցորեն, ասացի քեզ,—շեշտեց Ծերունին։

— Նա կարողանում է այդ չնչին ռոճիկով ապրել։

Ծերունին զարմացած նայեց վորդու յերեսին։ Պարզ էր, վոր նրա համար ավելի հիմար հարց չէր կարող լինել։

— Ինչու չի կարող, խոմ շահզադե չէ, ապրում էլ է ու հինգ յերեխա ու կնիկ էլ է պահում։

— Հինգ յերեխա. այդ անկարելի յե։

— Յերբ վոր Մարգար աղա Դիմաքսունովը ասում է կարելի յե— հրամանքդ թող չզարմանա։

Վորդին միքանի վայրկյան լռեց, հետո դարձյալ վստահացավ շարունակել յուր հարցերը.

— Այդ Սարիբեկը մեր ի՞նչն է։

— Մորդ յեղբոր կնկա յեղբոր տղան։

— Նա ձեզ ուղիղ հաշիվ տալի՞ս է։

— Ասելդ ի՞նչ է։

— Ասելս այն է, հայր, վոր այդ մարդը աչքիս մաքուր չի յերևում։

Ծերունին մի ձեռը կոթնեց կողքին, նայեց հեգնական վորդու փոքրիկ հասակին կոշիկների ծայրից սկսած մինչև ճակատը և, քթի տակ ծիծաղելով, յերեսը յետ դարձրեց։

— Այո՛, այդ մարդը ինձ կասկածելի չի թվում,—շարունակեց վորդին,—գյուղացիներն էլ շատ են գանգատվում։

— Գյուղացիները շատ են գանգատվում, գյուղացիները…

Հեգնելով վորդու բառերը, ծերունին աթոռը ուղղեց և, յերկու ձեռները հենելով ձեռափայտի կոթին, ավելացրեց.

— Ձեր հրամանքը ճանաչում է այդ ավանակներին։

— Չգիտեմ, միայն այսքանն եմ իմանում, վոր Սարիբեկը ձեր անունը արատավորում է։

— Լեզուդ փո՛րդ քաշիր, հայվարա,—գոռաց համառ ծերունին, ձեռափայտը այնպես ուժգին զարկելով, վոր նրա սուր ծայրը մի մատնաչափ անցավ հատակի մեջ,—իմ անունը աշխարհիս յերեսին մեկ մարդ է խայտառակ անում, դո՛ւ, դու, իմ հարազատ վորդին։ Սարիբեկը ազնիվ մարդ է, նա իմ հրամանով քնում է, իմ հրամանով զարթնում, իմ հրամանով ուտում, իմ հրամանով խոսում…

Նա փոքր լռեց, յեղանակը փոխեց և, ձայնին ծաղրական տոն տալով, ավելացրեց.

— Ամոթ չլինի հարցնելը, հրամանքդ ինչո՞ւ չես խառնվում պառավ Մարգարի գործերին։ Նա հին մարդ է, գյուղացի չե, անուս, դու խոմ փիլիսոփա չես, քինթ ու պռունգիցդ իմաստություն է թափվում։

— Յես ինձ համար չեմ հոգում, այլ ձեր անվան և ձեր շահերի համար։

— Գնա բանիդ, չեմ ուզում… հարա՛յ—բիդա՛դ, ջանըմ, չեմ ուզում էլի, խոմ գլխիս քեզ սուդիա չարքեցին, փի՞…

Նա վերկացավ տեղից և բարկացած մտավ յուր սենյակը. դռները ուժգին զարկելով։

Այնուհետև Արսենը այլևս չեր խոսում նրա հետ գործերի մասին և առհասարակ հոր և վորդու մեջ մի առանձին խոսակցություն տեղի չեր ունենում։ Սակայն մի որ նա վերջին անգամ փորձեց իմանալ, արդյոք հայրը իսկապես վորքան յեկամուտ է ստանում յուր կալվածներից։ Ծերունին նույն անփոփոխ կոպտությամբ և հակիրճ պատասխանեց.

«Յես դեռ չեմ մեռնելու, տանջվիր»։

Հարկավ, այլևս ամեն մի նոր փորձ պետք է անաջող անցներ։ Մնում եր բոլորովին լռել, և Արսենը բոլորովին լռեց։ Այժմ նրա համար ձանձրալի յեր ապրել սառնասիրտ հոր ցուրտ, անհյուրընկալ տանը։ Նա ձգտում եր հեռանալ հայրական հարկի տակից, ուր մի ժամանակ այնքան փայփայվել ու շոյշոյվել եր սիրող մոր ձեռքում։ Բարի կին, յերբեք դու քո վորդուն չվիրավորեցիր մի դառն խոսքով։ Քո մայրա-

կան զգայուն սիրտը մորմոքվում էր, յերբ տեսնում էիր, թե ինչպես ծաղրվում է քո միակ արու զավակը նույնիսկ յուր հարազատ հորից: Դժբախտ էիր դու այդ մարդու հետ և քո հրեշտակային լուռ ու համբերատար բնավորությունը միայն գլմանում էր այդ ինքնակամի կենակցությանը: Դու անմռունչ հանդուրժում էիր նրա համառ կամքին և միայն քո յերկնային անդուգական հեզությունով կարողանում էիր հաղթել մարմարյա սիրտը: Ահա ինչու հարազատ զավակների համար սառած մարդու ժանգ հոգին ջերմություն է զգում քեզ հիշելիս, քո ուրվականը մտաբերելիս: Բայց արդյոք այդ անհաղթելի կամքի ցըրտությունը չէ՞ր, վոր այնքան վաղ քեզ իջեցրեց գերեզման...

Արսենը ապրում էր անգործության մեջ: Քույրերի սերը միայն փարատում էր նրա թախիծը: Յեվ օրվա մեծ մասը նա նրանց մոտ էր անցկացնում, շատ անգամ էլ այնտեղ էր ճաշում և ընթրում: Քաղաքում մեծ հետաքրքրություն էր շարժել նրա գալը: Հասարակությունը խոսում էր ժառանգության մասին. ամենքը նախանձում էին նրան: Մարգար աղայի հարստության մասին գրեթե առասպելական լուրեր էին պտտում: Պատմում էին, թե նա յուր տան ներքնահարկում դիզած ունե պապերի հավաքած վոսկիները խաների ժամանակից: Վոմանք պնդում էին մինչև անգամ, թե ծերունին գիշերները այդ վոսկիների տոպրակների վրա յե քնում, չխնայելով յուր վոսկորները: Իսկ տեղական յերիտասարդները, մանավանդ ուսուցիչները, ավելի հետաքրքրված էին Արսենի անձնավորությունով: Շատերը գալիս էին նրա հետ ծանոթանալու: Նա ընդունում էր նրանց յուր քույրերի տանը, չկամենալով դայրացնել հորը, վոր թշնամի յեր ամեն մի այցելության, ևս առավել յերիտասարդների: Նրա քարոզած գաղափարները կազմել էին մի վորոշ բանակ: Ուներ նաև հակառակորդներ, վորոնք սակայն չէյին մոտենում նրան: Կային և այնպիսիները, վոր պարծենում էին իրանց հայրենակցի անունով:

Դա մի ախորժելի և անսպասելի նորություն էր Դիմաքսյանի համար: Նրա կյանքի մեջ մտավ մի տեսակ թարմ հոսանք: Նրա տաղտկությունը անցավ, սիրտը զվարթացավ և լցվեց նոր յեռանդով: Ուրեմն նրա խոսքը իզուր չէ անցնում, նրա ցանած սերմերը ավազոտ հողի վրա չեն ընկնում: Այնտեղ, ընկերների, գաղափարակիցների շըրջանում նրան հալածում են, ծաղրում, վիրավորում: Այստեղ հարգում են, պատվում և ուշադիր են նրա ամեն մի խոսքին:

Ինչո՞ւ ուրեմն հուսահատվել: Թող հալածեն, վորքան կամենում են. թող թշնամանան, վորքան կարող են: Մազի չափ նա չի շեղվի յուր բռնած ընթացքից: Նա հավատարիմ կմնա յուր արմատական գաղա-

մարին—քարոզել ճշմարտությունը ինչ բանի մասին էլ լինի, ուր և լինի, աներկմիտ, անշեղ, աներկյուղ, և մնալ անդրդվելի, ինչպես սեպացած ժայռ ծովի հարատև ալիքների առաջ։ Ժողովուրդը կարոտ է անկեղծ քարոզչի, բավական է, վորքան նա խարխափեց տգիտության խավարի մեջ։

Իսկ այդ կամակոր ծերունին թող մնա նույնպես անհողդողդ յուր քարացած աշխարհում։ Կենդանին մեռելների հետ գործ չունի։ Թող համառը, յեթե կամենում է, բոլորովին մինչև անգամ զրկե նրան ժառանգությունից։ Նա կարող է առանց փողի, առանց հասարակական դիրքի, քաղցած փորով, դատարկ գրպանով էլ գործել և օգտավետ լինել։

«Չէ՞ վոր վեց տարի ուսանող եմ յեղել, դարձյալ կապրեմ ինչպես ուսանող»։

Միքանի անգամ նրան հրավիրեցին այս ու այնտեղ յերիտասարդների ժողովներին։ Նա հանդիպեց մի քանի առողջամիտ անձանց, խորհուրդ տվեց նրանց կազմել մի շրջան, վորի նպատակը լիներ հասարակ ժողովրդի մեջ տարածել գրագիտություն, կարդալու սեր և ժամանակակից գաղափարներ։

Առաջարկությունը ընդունվեց հրճվանքով, կազմվեց մի խումբ գործը գլուխ բերելու համար։ Յեղան և հակառակորդներ, մանավանդ Վայլյան անունով մեկը։ Դա չոր կազմվածքով, սև, յերկար մազերով, բարակ ձայնով, կապույտ ակնոցներով մի հակակրելի մարդ էր, վոր Դիմաքսյանի զզվանքն էր հարուցանում։ Հետո նա իմացավ, վոր այդ Վայլյանը առաջ ուսուցիչ է յեղել, իսկ այժմ խանութպան է և գյուղացիներին հարստահարում է։ Նա բացարձակ հայտնեց, թե պետք է այդպիսիներին հալածել, և ինքը զզվանքով յերես դարձրեց նրանից։

Շուտով նա դարձյալ սկսեց ձանձրանալ և մտադրվեց վերադառնալ Թիֆլիս։ Գավառական կյանքը թվում էր նրան միակերպ, տաղտկալի։ Այստեղ նրա խոսքը ընդունում եյին անպայման, առանց քննելու և հակաճառելու։ Իսկ նա արդեն կարոտել էր հակառակորդների հետ մրցելուն։ Նրա հոգին զգում էր խոչընդոտների հետ անընդհատ մաքառելու պահանջ։ Հարվածել, հարված ստանալ և այնպես հաղթանակ վաստակել—ահա նրա ցանկացածը, նրա սրտի և մտքի կերակուրը։ Առանց կռվի նա զգում էր իրան առանց թևերի։ Նրա սիրտը կրում էր էլեկտրական զորության միայն մի տարրը յուր մեջ։ Հարկավոր էր յերկրորդը, արտաքուստ յեկած հակառակորդ տարրը, վոր, շփվելով միմյանց, նրա հոգու մեջ առաջացնեյին լույս և ջերմություն։

Նա ուղևորվեց Թիֆլիս։ Հայրը չտվեց նրան յուր որհնանքը, վո-

վհետև նա չխոնարհվեց նրա առջև, չթեքեց յուր գլուխը կամակոր ծնողի դիմաց։ Իսկ ծերունին այդ սպասում էր նրանից։ Նա պատրաստ էր ներել վորդուն, յեթե միայն վերջինը խոստովանվեր, վոր սխալված է, և միանգամ ընդմիշտ ընդուներ նրա հեղինակությունը։ Նա հուսով էր, վոր վերջը այդպես էլ կլինի։ Բայց չարդարացավ այդ հույսը։ Հայրը բաժանվեց վորդուց այնքան սառնասիրտ, վորքան սառնասիրտ և անբարեհամբույր ընդունել էր նրան վեց ու կես տարի չտեսնելուց հետո։

XIV

Ամառվա ամենաշոգ որերն էյին, յերբ Դիմաքսյանը հասավ Թիֆլիս։ Նախ և առաջ նա ուզեց տեսնել Մսերյանին, վորին կարոտել էր ավելի, քան մի ուրիշ ընկերոջ։

Իդեալիստը յուր փոքրիկ սենյակի բաց լուսամուտի առջև գիշերային շապիկով նստած թեյ էր խմում, յերբ Դիմաքսյանը ներս մտավ։ Նա վոտքի թռավ և ուրախ բացականչությունով յուր խոշոր թևերի մեջ առավ ընկերոջը։

— Իսկ յես առանց քեզ տխուր էյի։ Նստիր ու պատմիր։ Ծերունին կենդանի՞ է, առողջացավ։ Փառք աստուծո։ Բայց ինչու այդպես նիհարել ես, յերևի, հայրական հացը քեզ չի գալիս։ Ասա, յեղբայր, ասա, ի՞նչ է անում մեր սիրելի գավառը, չէ՞ վոր մեր հույսերը նրա վրա յեն։ Վոչ, վոչ, նախ և առաջ ոձի մասին։ Ի՞նչ է անում, հանգիստ է։

— Հանգիստ է։

— Յեվ ուրա՞խ էյիր։

— Վո՛չ։

— Վո՞չ։

— Ինձ թվում է այդ ոձը վորքան էլ տանջե, դարձյալ ինձ կենդանություն տվողը նա յե։ Մի ամսից ավելի չէ նա չի կծում իմ սիրտը, և յես, կարծես, թմրած եմ։

— Կգա ժամանակ, դու հակառակը կասես։ Բայց պատմիր, պատմիր։

Դիմաքսյանը հաղորդեց յուր տպավորությունները։ Մսերյանը լսում էր և մերթ վոգևորվում, մերթ տխրում, մերթ ուրախանում, նայելով, թե ընկերը ինչ է պատմում։

— Ուրեմն այնտեղ մարդիկ շատ էլ մեռած չեն, ինչպես կարծում էյինք,— գոչեց նա հափշտակվելով,— ուրեմն դարերով թմրած մարմինը

կենդանության նշաններ է ցույց տալիս։ Տեսնո՞ւմ ես, ասում էր, վոր վոչ մի աշխատանք իզուր չի անցնում։ Գործիր, յեղբայր, գործիր վորքան յեռանդ և ուժ ունես։ Ինձ մի՛ նայիր, յես ուրիշ եմ, իմ աշխարհը ահա սրանց մեջ է։

Նա ցույց տվեց սենյակի անկյունում դրած պահարանը, վորի տախտակյա հարկերը տնքում եյին մեծահատոր գրքերի ծանրության տակ։

Նա պատմեց, վոր Դիմաքսյանը գնալուց հետո ինքը տնից շատ չի դուրս յեկել։ Տեսնում է, վոր մարդիկ նրան չեն հասկանում, շատերը մինչ անգամ ծաղրում են նրան, համարելով դատարկ ֆրազյոր։ Ե՛հ յերբ և է նա ասել է, թե օգտակար մարդ է։ Միայն չի կարող, չի կարող հաշտվել նյութապաշտության հետ։ Իսկ ո՞վ չի նյութապաշտ։ Ո՞վ կարող է խելոք համարել մի մարդու, վոր իրան բախտավոր է զգում, յերբ ունի գրքեր, ծխախոտ և մի բաժակ թեյ։ Բայց միթե գրքերը վատ ընկերներ են։ Վոչ, վոչ, ավելի հավատարիմ, ավելի ուրախալի հասարակություն դժվար է գտնել։ Լինել միշտ բարձր խելքերի, հանճարների, հոգեբան-փիլիսոփաների, սրամիտ սրտագետների ընտիր ընկերության մեջ, մի՞թե այդ յերջանկություն չէ։ Իսկ Արսենը չի կարող բավականանալ այդ հասարակությունով։ Նա Մսերյան չէ և չպիտի լինի։ Նա գործի մարդ է, ծնված է մի տգետ ժողովրդի խավար միտքը լուսավորելու, ծնված է կռվելու, հաղթելու և հաղթվելու համար։ Թող գնա յուր ընտրած ճանապարհով, տեսնո՞ւմ է վորքան արձագանք է գտնում յուր խոսքը մարդկանց սրտում։

— Ո՛ն առաջ, քաջ յեղիր, —ավարտեց Մսերյանը ուրախ տոնով, — դու մտքի զինվոր ես, յես գրքերի կենդանի պահարան։

Թեյ խմելուց հետո նրանք դուրս յեկան զբոսնելու։ Մսերյանը տեղեկություններ հաղորդեց ընկերների մասին։ Բժիշկ Սալամբեկյանը մելամաղձոտ դեմքով ման է գալիս, միշտ կրկնելով, թե աշխարհը դատարկ բան է։ Վեքիլյանը և Բարաթյանը մտադիր են քաղաքային Դումայի առաջին ընտրություններին իրանց քվեատուփը դնել և այժմյանից ձայներ են գրավում։ Պյոտր Սոլոմոնիչ Բախտամովը նրանց համար աշխատում է։

— Յեվ կընտրվեն, կտեսնես, այդ մարդկանց ամեն բան հաջողվում է։

Հանկարծ Մսերյանը, ճակատին խփելով, գոչեց.

— Այ հիմար հիշողությո՛ւն։

— Ի՞նչ կա։

— Ամենագլխավորը մոռացա ասել։ Քեզ ուզում են Ներսիսյան դպրոցի տեսուչ նշանակել։

— Ի՞նձ։

— Այո՛, քեզ։

— Այդ անհավատալի չէ։

— Իսկ չես մեր լրագրերի լեզվով կասեմ «ստույգ աղբյուրներից տեղեկացանք», վոր...

— Վոր հոգաբարձությունը Արսեն Դիմաքսյանին տալով տանում է։

— Սխալվում ես, քո գնալուց հետո քամին ուրիշ կողմից է փչում։

Նա պատմեց, թե դպրոցի շինության խնդիրը կռվածաղիկ է դարձել։ Ավելի առաջադեմները պահանջում են, վոր դպրոցը փոխվի մի ուրիշ տուն, իսկ հնամոլները վախենում են ավելորդ ծախսերից։ Կռիվը այստեղից է սկսվել, բայց նա ուրիշ պատճառներ ունի։ Մի առևտրական-հոգաբարձվի մուրհակը չեն զեղջել բանկում, նա թշնամացել է բանկիր հոգաբարձվի հետ։ Մի փաստաբան-հոգաբարձու դատարանում պաշտպանում է մի կալվածատեր-հոգաբարձվի հակառակորդին, նրանք թշնամացել են։

Դպրոցը դարձել է հասարակական բաղնիք, մարդիկ իրանց կեղտոտ շորերը այնտեղ են լվանում։ Բանից դուրս է գալիս, վոր այդ տեսուչ Համքարյանը յեզվիտ է։ Դպրոցի շինության խնդիրը ինքը չի զարթեցրել, աշխատում է գործը քանդել։ Նրա դեմ կազմվել է մի կուսակցություն, վոր ուզում է հեռացնել նրան դպրոցից։

— Շատ ուրախ եմ. նա ի՞նչ մանկավարժ է, վոր վաշխառությունով է պարապվում։

— Համքարյա՞նը, մի՞թե,— հարցրեց Դիմաքսյանը զարմացած։

— Այո՛, դու չգիտեի՞ր, յերևակայի՛ր, քսանուհինգ հազար ռուբլի դրամագլուխ ունի, տասնուհինգ տոկոսով տալիս է սրան ու նրան նույնիսկ ուսուցիչներին։ Այս էլ ստույգ աղբյուրներից տեղեկացանք»։

Յերկու որ անցած Դիմաքսյանը հրավիրվեց այն հոգաբարձվի մոտ, վոր սկզբում աշխատել եր նրա համար դպրոցում տեղ բանալ։ Նա հայտնեց հոգաբարձության նախընթաց յերեկո կայացրած վճիռը և ավելացրեց, թե իսկապես ինքն է Համքարյանին «վռնդելու» սկզբնապատճառը։

— Յեղբայր, քանի տարի յեր չեյինք կարողանում այդ մարդուց ազատվել։ Սյուլյուկի պես կպել եր դպրոցին ու ծծում եր, էլ ինչ ախտ ասես մտցրել է այնտեղ, ինչ ինտրիգներ ասես, հնարում եր։ Ճշմարիտն ասեմ, յեթե մենք միքիչ ձեզ հետ վատ եյինք, պատճառը նա յեր, հազար ու մի տեսակ բաներ եր պատմում։ Ի՞նչ և է, հուսով եմ, վոր մենք համերաշխ կգործենք. այնպես չէ՞։

— Կաշխատեմ միշտ դպրոցի շահերին ծառայել։

Նա մի պայման միայն դրեց. որ հոգաբարձությունը յերբեք չխառնվի դպրոցի բարոյական և ուսումնական գործերի մեջ։

— Արեք ինչ-որ կամենում եք, բայց զգույշ, որ շատ էլ չգըրգռեք մեր հակառակորդներին։

Ամբողջ օգոստոս ամիսը Դիմաքսյանը տենդային գործունեության մեջ էր։ Ամեն օր գնում էր դպրոց, չնայելով, որ այնտեղ դեռ գործ չուներ։ Նա դիտում էր բակը, սենյակները, խոհանոցը, հարց ու փորձ էր անում գիշերօթիկների դրության մասին, քննում էր նրանց կերակուրները և այլն։

Նա լսեց գանգատներ վերակացուների դեմ։ Նա տեսավ, որ կերակուրները վատ են պատրաստվում, սննդարար չեն։ Գիշերօթիկները թույլ են, հիվանդոտ, դեղնած, ամենքի մեջ նկատվում է արյան սակավություն։

Այս բոլորը տեսնելով, նա կազմեց արտաքին փոփոխությունների ցուցակ, որ պետք է շուտով ներկայացներ հոգաբարձությանը։

Հասավ սեպտեմբերը։ Դասերը սկսվեցին։ Ուսուցչական խումբը նրան շնորհավորեց։ Ոմանց կողմից նա տեսավ անկեղծ ուրախություն։ Իսկ շատերի սիրալիր խոսքերի և բարեկամական ցույցերի տակ նկատեց չկամություն։ Նա գիտեր, որ այլ կերպ չէր կարող լինել։ Ամենքին սիրելի լինել, կնշանակե ամենքի քմքին հաճոյանալ։ Նրա անշեղ բնավորությունը չէր սիրում յերկդիմի վարմունք։ Նա չգիտեր, արտաքուստ ժպտալ, ներքուստ հայհոյել։ Ահա ինչու չէր կարողանում մոռանալ Վեքիլյանի, այդ կարծեցյալ բարեկամի, թշնամական վարմունքը։ Ահա ինչու քանի գնում, այնքան նրա սրտում ատելություն էր ավելանում դեպի Բարաթյանը։ Այդ մարդը նրան դեռ բացարձակ թշնամություն չէր անում, բայց թե բարեկամ չէր — այդ էլ պարզ էր նրա համար։

Միքանի անգամ Դիմաքսյանը պատահեց փողոցում թե՛ մեկին և թե՛ մյուսին։ Վեքիլյանի հետ նա չէր խոսում, դադարել էր մինչև անգամ նրան բարևելուց։ Իսկ Բարաթյանը մոտեցավ նրան, ձեռը սեղմեց և շնորհավորեց, գոչելով.

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։

— Շնորհակալ եմ։ Իսկ դու, ասում են, մտադիր ես քաղաքային իրավասու ընտրվել։

— Յե՞ս։ Ոչ, բարեկամ, ժամանակ չունեմ։ Յես զբաղված եմ ամուսնությանս հոգսերով. չէ՞ որ սեպտեմբերին պսակվում եմ Գայանեյի հետ։

Յեվ միթե Դիմաքսյանը մոռացե՞լ էր չարաբաստիկ հանգամանքը

և միթե նա չէ՞ր զգում, որ յուր առջև կանգնած է այն մարդը, որ անհուն վիշտ էր պատճառել նրան՝ թե կամա, թե ակամա։ Ինչո՞ւ ուրեմն Բարաթյանը կրկին մատ է խփում նրա սրտի խոցին։ Այո, անշուշտ նրա համար, որ զգալ տա նրան յուր գերազանցությունը, յուր հաղթությունը։

— Հուսով եմ, որ հարսանիքիս հրավերը ստանալով, կբարեհաճես ներկայանալ ինչպես ընկեր-բարեկամ։

Այդ արդեն չափազանցություն էր։ Դիմաքսյանը ապշած նայեց նրա յերեսին։ Նա վոչինչ չասաց, և ինչ կարող էր ասել։ Ոձը արդեն զարթել էր և պաշարած թույնը տարածում էր նրա ամբողջ մարմնի մեջ։

Առանց մի բառ արտասանելու, առանց մինչև անգամ ձեռ տալու, նա գունատված յերեսը շուռ տվեց և հեռացավ։

Բարաթյանը չարախնդությամբ նայեց նրա յետևից և մտքում ասաց. «Դու ինձ պատերազմ ես հայտնում, լավ, տեսնենք՝ ով կտանի հաղթությունը»

Յեվ թույլ շվացնելով, հանդարտ ու հպարտ շարունակեց յուր ճանապարհը։

XV

Պսակադրության պայմանավորված ժամանակը մոտենում էր, Բարաթյանի անհանգստությունը ավելանում։ Ոժիտի խնդիրը դեռ չէր պարզվել։ Իսկ Պյոտր Սոլոմոնիչը հանգստանում էր սեփական ամառանոցում։ Որվա մեծ մասը նա, մի յերկար ճյուղավոր փայտ ձեռին, զբոսնում էր յուր բնակարանի առջև ձգված հասարակական պարտեզում։ Նա իրանից ձեացնում էր քաղաքական գործերից հոգնած մի յեվրոպական բուրժուա, վոր նոր ուժ է ժողովում հայրենիքին նոր ծառայություններ անելու։

Հարսանիքի հոգսերը նա լիովին ձգել էր յուր կնոջ և քրոջ աղջկա վրա։ Շաբաթը մի անգամ տիկինը և որիորդը գալիս էին քաղաք հագուստներ պատվիրելու։

Բարաթյանը գիտեր նրանց գալու ժամանակը։ Վորոշյալ ժամին նա միշտ յերկաթուղու կայարանումն էր լինում նրանց դիմավորելու համար։ Գայանեն ուզում էր ամեն բան նրա ճաշակով գնել և կարել տալ. ուստի ուր գնում էր, նրան էլ հետը տանում էր։ Հարսանիքի պատրաստությունները որիորդին կլանել էին լիովին։ Ամբողջ որը նա չափում էր, կտրում, փորձում և անհամբեր սպասում յերջանիկ որին։ Յեվ նա ժամանակ չուներ քննելու, թե ինչու տիկին Բախտամ-

յանը այնքան հաշտ է յուր հետ, որ, կարծես, նախկին նախանձի նշույլն անգամ չէր մնացել։

Մի օր Բարաթյանը, վերջապես, վճռեց կողմնակի կերպով խոսք բաց անել Գայանեյի հետ օժիտի մասին։ Օրիորդը այնքան համոզված էր նրա սիրույն, որ ինքը առայժմ ավելորդ էր համարում փողի մասին խոսելը։ Արժե՞ր միթե սիրո բանաստեղծական հրապույրը համեմել նյութականով և փոխադարձ զգացման յերկնային հմայքը պրոզադարձնել։ Փոխադարձ, այո, որովհետև Բարաթյանն էլ սիրում էր նրան և սիրում էր անկեղծ։ Միայն նրա զգացումը այնքան կուրացուցիչ չէր, որ միանգամայն մոռացնել տար ապագայի խնդիրը։ Չէ՞ որ կանցնի բանաստեղծականը, և կյանքի իրականությունը մի օր կմերկանա ապագա ամուսինների առջև յուր բոլոր անողոք պահանջներով։

— Ուրեմն դու և Ովսաննան ունեք տարեկան հինգ հազար ռուբլի յեկամուտ,— կնշանակե քո մասը տարեկան յերկու հազար հինգ հարյուր է։

— Այո, ի՞նչ կա, ինչո՞ւ լսեցիր։

— Պյոտր Սոլոմոնիչը ասում էր, թե քո ծնողները վոչինչ չեն թողել։

— Ի՞նչպես, դու ուրեմն նրա հետ խոսե՞լ ես այդ մասին։

— Յես չեյի հետաքրքրվում, նա ինքը ասաց հենց այն օրը, յերբ յես գնացել եյի ձեռդ խնդրելու։

— Նա չէր կարող այդպես ասել, այդ անկարելի յե։

— Հավատացնում եմ, որ ասաց։

Գայանեն լռեց։ Այդ լուրը նրա համար զգալի և տխուր լուր էր, բայց ավելի անտանելի յեր, որ Բարաթյանը խոսում էր օժիտի մասին։

— Լա՛վ,— ասաց նա,— յես նրանից բացատրություն կխնդրեմ։

— Այո, սիրելիս, խնդրիր։ Դու ուրիշ բան չկարծես, յես փողասեր չեմ, բայց յեթե կա, ինչու ուրիշների մոտ մնա, այնպես չէ՞։

— Իհարկե...

— Վերջապես, տարեկան յերկու ու կես հազարը մեզ համար մեծ բան է, դու կարող ես շիկով ապրել։

— Ինձ շիկ հարկավոր չէ, բավական է, որ դու ինձ միշտ սիրես։

— Ախ, սիրելիս, իհարկե, պետք է միշտ սիրեմ, բայց Պյոտր Սոլոմոնիչի հետ խոսիր։ Իմ սերը դեպի քեզ անհուն է, միթե դու չգիտե՞ս։ Այո, շուտով խոսիր, հենց այսոր կամ վաղը։ Մյուս անգամ գալիս ինձ համար դրական պատասխան բեր։ Միայն իմ անունը չհի-

չես, այսինքն չասես, թե յես եմ քեզ սովորեցրել կամ ինձ հետ այդ մասին խոսել ես։ Ախ սիրելիս, յե՞րբ պետք ե հասնի յերջանիկ օրը..

Յերկու շաբաթ եր մնում հարսանիքին, յերբ Գայանեն վերջապես, հարմար ժամանակ գտավ յուր քեռիի հետ խոսելու։ Պյոտր Սոլոմոնիչը սկզբում անորոշ պատասխաններ եր տալիս։ Բայց՝ յերբ տեսավ որիորդի թախանձանքը, հարցրեց.

— Փեսացո՞ւդ ե սովորեցրել այդպես համարձակ խոսել։

— Նա օժիտի մասին մի խոսք անգամ չի ասել, նա ինձ այնքան սիրում ե։

— Սիրո՞ւմ ե։

— Ինչ եք ուզում ասել, քեռի։

— Ուզում եմ հաստատ իմանալ, նա քեզ սիրո՞ւմ ե։

— Այո, շատ։

— Այնքան, վոր յեթե դու աղքատ լինես, ելի քեզանից չի՞ հրաժարվիլ։

Պյոտր Սոլոմոնիչը մի զննողական հայացք ձգեց նրա վրա։ Հետո բացատրեց, թե Գայանեն աղքատ չե, նրա հորից մնացել են մի շարք խանութներ։ Բայց նա փորձում եր թե՛ Բարաթյանին և թե՛ Գայանեյին։ Իսկ այժմ թող Գայանեյին հայտնի լինի, վոր նա ունի տարեկան 3150 ռուբլի զուտ յեկամուտ։ Յերբ վոր ուզենա, կարող ե կալվածները յուր անունով հաստատել տալ։ Յեվ Պյոտր Սոլոմոնիչը Գայանեյին խորհուրդ եր տալիս յուր անունով հաստատել և վոչ ամուսնու։

— Այդ միևնույնն ե, քեռի,— ասաց որիորդը, սիրտը շնորհակալության զգացումներով լի դեպի ազնիվ ազգականը։

— Իհարկե, միևնույնն ե, բայց դու լսիր փորձված քեռուդ խորհուրդը։ Բացի դրանից, բանկում ունես յոթ հազար ռուբլի զուտ փող, այդ ել կարող ես հենց այսոր ստանալ։ Հայրդ միքանի պարտքեր եր թողել, բոլորը վճարած են քո յեկամտից, այդ յոթ հազարը մնացորդն ե։

— Մի՞թե, յես այդ չգիտեյի,— գոչեց Գայանեն վրդովված։

— Ունիս, ունիս, վորդի, յես զրկող ազգականներից չեմ. փառք աստուծո, ինքս այնքան ունեմ, վոր վորդոց վորդի հերիք ե իմ յերեխաներին։

Հենց մյուս օրը Գայանեն շտապեց քաղաք և ուրախալի լուրը հաղորդեց Բարաթյանին։

— Յերևակայիր, քեռին քեզ և ինձ փորձելու համար եր թաքցրել իմ ունեցածի մասին,— գոչեց նա զվարթ ձայնով և պատմեց Պյոտր Սոլոմոնիչի ասածը։

Բարաթյանը մի փոքր շփոթվեց, ամաչելով յուր վարմունքից։ Նա զգաց յուր փոքրոգությունը և շտապեց մի կերպ սխալը ուղղել։

— Իսկ դու չես յերևակայիր, վոր չես ել քեզ եյի փորձում։ Ոժիտի մասին խոսելով, կամենում եյի իմանալ, արդյոք կարծիքդ կփոխե՞ս իմ մասին։ Այժմ տեսնում եմ, վոր դու հավատում ես իմ անկեղծ սիրուն, ուրեմն յերջանիկ ենք…

Տաս որ անցած կատարվեց հարսանիքը, մի փառավոր հարսանիք Պյոտր Սոլոմոնիչի շնորհով։ Հրավիրված եյին թեմական առաջնորդը, նահանգապետը, գեներալներ, հյուպատոսներ, քաղաքագլուխը բոլոր առաջնակարգ իրավաբանների հետ։ Վերջապես, յերևան յեկավ այդ Ամբակում Աֆանասյևիչ կոչված իրավաբանը, վորի ասածներից Պյոտր Սոլոմոնիչը միշտ ցիտատներ եր բերում։ Դա տեղական հայտնի տուզերից մեկն եր, հայտնի, բացի յուր դիրքից, յերեք արշին շրջապատ ունեցող փորով և ձմերուկի չափ յերեսով։ Բարաթյանը յուր կողմից հրավիրել եր ընկերներից միայն միքանիսին։ Անգործ Մսերյանը մոռացվել եր, խաչեղբայրը Վեքիլյանն եր։

Դիմաքսյանը հրավիրատոմսը պատռեց և ձգեց մի կողմ։ Այդ հրավերը նա համարում եր մի նոր ծաղր և վիրավորանք Բարաթյանի կողմից։ Նոր պաշտոնը նրան գրավել եր բոլորովին։ Ոգոստոսի ընթացքում ցուցակագրած թերությունները նա ասպարեզ եր հանել։ Կողմնակից հոգաբարձուները, հակառակ դիմադրող կուսակցության, վճռեցին կատարել նրա պահանջները։ Իսկ ինտրիգները շարունակվում եյին, մանավանդ ուսուցիչների մեջ։ Գերմանական մանկավարժ Ինյաթյանը, այդ դեղնագույն աչքերով և սառն դեմքով յերիտասարդը, վիրավորվել եր, վոր տեսչական պաշտոնը իրան չեյին հանձնել։ Ոգնության կանչելով յուր մանկավարժական պաշարը, նա կատաղի կերպով բողոքում եր Դիմաքսյանի դեմ։ Նրա կարծիքով, նոր տեսուչը վոչինչ և վոչինչ չեր հասկանում, վորովհետև մանկավարժության մեջ մասնագետ չեր։ Հանուն Հերբերտ-Ցիլլեր-Պեստալոցիի ուրվականների նա պարզել եր յուր դրոշակը մի լրագրում և անստորագիր հոդվածներով հարվածում եր Դիմաքսյանի սիստեմը։ Իսկ Դիմաքսյանը ընդունում եր այդ հարվածները։ Ծծում եր նրանց թույնը յուր սրտի մեջ և հաճախ յուր մենության մեջ վրդովվում, վորովհետև նրա ուղղությունը բացատրվում եր սխալ, վայր ի վերո, անբարեխիղճ կերպով։ Հարկավ, նա բոլորին պատասխանում եր։ Բայց յերբեմն հակառակորդները այնպիսի վտանգավոր ակնարկություններ եյին անում, վորոնց դեմ նա դժվարանում եր պատասխանել։ Դա վերաբերվում եր նրա քաղաքական հայացքներին…

Մի առավոտ նա, սովորության համեմատ, կանուխ զարթնելով, կամեցավ պարապել մինչև դպրոց գնալը։ Բայց զգաց մի թեթև տկարություն և թույլ գլխացավ։ Նա չկարողացավ պարապել։ Առհասարակ վերջին օրերը առողջ չեր զգում իրան, բայց ուշադրություն չեր դարձնում։ Նա հագուստով պառկեց անկողին հանգստանալու, թեև նոր եր վերկացել։

Սիրականը սամովարի և կոշիկների հետ ներս բերեց այն օրվա լրագիրները։ Այժմ հակառակորդները Դիմաքսյանի դեմ գրում եյին գրեթե ամեն օր։

Այս անգամ նրա աչքին ընկավ մի ֆելյետոն։ Նա սկսեց կարդալ։ Դեռ մինչև այժմ նա յուր մասին չեր հանդիպել մի այդպիսի կծու, ծաղրական գրվածի։ Ֆելյետոնի վերնագիրն եր «Վողնին Լյուտերի քղամիդով»։ Յերգիծական վոճով պատկերացրած եր մի «հերոս», սնափառության զգացումներով լի։ Ներպարանքը նկարագրված եր ճիշտ այնպես, ինչպես Դիմաքսյանն եր, ֆոտոգրաֆիական բոլոր մանրամասներով։ Վորքան ծաղր և հեգնություն կար այդ նկարագրի մեջ, վորքան ոձային սողոսկումներ դեպի «հերոսի» հոգեկան աշխարհը։ «Վողնին» մտնում ե դպրոց, «վողնին» մտնում ե ընտանիքների, հասարակական բոլոր հիմնարկությունների, բոլոր խավերի մեջ։ Ամեն տեղ նա վոգևորված նոր մտքեր ե քարոզում։ «Մկները դուրս են գալիս բներից ականջ դնելու և իրանց պոչերը շարժում են նրա առջև»։ Մի օր «վողնին» ֆրակ ե հագնում, սպիտակ փողկապ կապում, գնում ե մի գեղեցիկ և հարուստ որիորդի ձեռը խնդրելու։ Նա արտասուքը աչքերին թավալվում ե բազկաթոռից որիորդի վոտների տակ, անշնորհ կերպով յուր փշերով ծակոտում ե ձեռները, նրա հորեղբայրը գալիս ե և կոշկի ծայրով «վողնիին» դուրս շպրտում։

«Կանայք և որիորդներ, ծերեր և յերիտասարդներ, զգուշ կացեք վողնիից, նա ձեր մեջ ե պտտում»։

Նա շպրտեց լրագիրը մի կողմ և վոտքի կանգնեց։

Նա կամեցավ ծիծաղել, արհամարհել, բայց ոձը կատաղել եր։ Վո՜չ, Թող Մսերյանը անտարբեր մնա յուր փիլիսոփայական հայացքների մեջ, իսկ նա չի կարող սառնարյուն կրել այդ ստոր հարվածները։ Ի՞նչ պատասխանել, հարվածը վո՞ր կողմից ուղղել, վոր խոցոտի, վիրավորի, թավալագլոր անե հակառակորդին։

«Հալածել մարդուն նրա համար, վոր նա հանդգնում ե յուր գլուխը ձեր ստոր մակերևույթից բարձրացնե՞լ, հալածել նրան ամարդի զենքով։ Այդպես, ուրեմն, դուք ինքներդ ձեր ձեռքով հանում եք այն խցանը, վոր հազիվ զսպում եր իմ մեջ կուտված թույնը։ Սա-

սպասենք և կտեսնենք վորքան խորը կցցվեն վոզնիի ասեղները հասարակության խոցերի մեջ, վոր նրանց միջից դուրս հանեն վարակիչ թարախը»։

Նա արագ-արագ անց ու դարձ էր անում սենյակում։ Նրա յերեսին գույն չկար, նա դողում էր ամբողջ մարմնով։ Նա փորձեց հարվածին պատասխանել իսկույն, սակայն ձեռը չհնազանդվեց կամքին։ Նա շտապով դուրս յեկավ տնից։ Նա ցանկանում էր հանդիպել մեկին, բերանացի արտահայտել սրտի մաղձը։ Նա քայլերը ուղղեց դեպի Մսերյանի բնակարանը։ Առավոտյան դեռ ութ ժամն էր։ Փողոցներով անցնում եյին միայն խոհարարներ, բանվորներ և սպայեր։ Յերկինքը ամպամած էր, գիշերը մինչև լույս անձրևել էր։ Թեթև աշնանային քամին թոթափում էր ծառերի դեղնած տերևները և դարդարում ցեխոտ մայթերը։

Նա այնքան հուզված դուրս յեկավ տնից, վոր մոռացավ վերարկուն և կալոշները հագնել։ Նա զգաց վոտների վրա խոնավության ազդեցությունը։ Բայց չկամեցավ տուն վերադառնալ։ Նա կառք փնտռեց, չգտավ։ Այնինչ՝ Մսերյանը ապրում էր Կուռ գետի մյուս ափում, մի խուլ փողոցի անկյունում։

Դիմաքսյանը անցնում էր կամրջով։ Հանկարծ հեռվից նա տեսավ մի կառք, ապա յերկրորդը, յերրորդը և մի շարք միմյանց յետևից, վոր դուրս եյին գալիս փողոցի ծայրից։ Նա կանգ առավ։ Յերևի, կառքերից մեկը դատարկ կլինի, պետք է սպասել։ Մի րոպեյում առաջին կառքը հավասարվեց նրան։ Դա մի ծածկած կարեթ էր։ Յերկու սպիտակ նժույգներ ամպի արագությամբ թռցնում եյին նրան առաջ։ Մի վայրկյան Դիմաքսյանի աչքերը փակ լուսամուտով թափանցեցին կառքի ներսը։ Մի թարմ, առույգ և ուրախ յերիտասարդ ժպտաց, գլուխը շարժելով։ Ժպտաց և՛ մի կանացի վառվռուն և յերջանիկ դեմք։ Նրա կապտագույն աչքերը պսպղացին սև ու յերկար թերթերունքների միջից։

Կասկած չկար, վոր նրանք եյին։

Զույգի յետևից յերևեցան Վեքիլյանը տիկին Բախտամյանի հետ, Պյոտր Սոլոմոնիչը Ովսաննայի հետ և մի շարք ծանոթ ու անծանոթ մարդիկ ու կանայք, զույգ-զույգ նստած առանձին-առանձին կառքերում։

Նա կանգնած էր և նայում էր լուռ, սակայն շատ բան արտահայտող, յերջանիկ հանդիսի յետևից։ Կամրջի ծայրում կարեթը ծռվեց դեպի ձախ։ Նա սլանում էր դեպի յերկաթուղու կայարանը։ Յերջանիկ զույգը գնում էր ճանապարհորդելու։

Նա ամբողջ մարմնի մեջ զգաց մի տարօրինակ սառնություն։ Կարծես, արյունը նրա յերակների մեջ դադարեց վազելուց։ Անցավ, ուրեմն, նրա աչքի առջև այն յերանությունը, վորին նա հանդգնել եր մի ժամանակ յուր համար յերազել։ Գնաց հակառակորդը յուր հաղթության պտուղը վայելելու։ Իսկ նա ընկճված, վոչնչացած, հրապարակական ծաղրի յենթարկված, կանգնել ե և նայում չքացող բախտի յետևից։

Նա ձեռը հենեց կամրջի լապտերի թուջյա սյունին և անզգայաբար ցած նայեց։ Այնտեղ, հսկայական կամարների տակ մռնչալով անցնում եր պղտոր, հորդացած, դեղնագույն գետը։ Մի վայրկյան նրա աչքերը մթագնեցին, գլուխը պտտեց, ծանրացավ։ Թվաց նրան, վոր մի աներևույթ ձեռք մղում ե նրան դեպի ցած։ Դա ընթացող ջրի ձգողական ույժն եր։ Նրա մարմնով անցավ մի սուր սարսուռ։ Նա յերեսը յետ դարձրեց և վերադարձավ տուն։

Միրաքյանը, պատշգամբի վրա նստած, լսելի ձայնով կարդում եր «Վոզնին Հյուսերի քղամիդով»։ Նրա շիլ աչքերի մեջ նշմարվում եր զվարճության փայլը, յերևի, նա գրվածը շատ եր հավանել։

— Ներս յեկ,—հրամայեց Դիմաքսյանը խեղդված ձայնով։

Նա գրեց յերկու նամակ և տվեց ծառային, ասելով.

— Տար այս մեկը դպրոց, իսկ մյուսը Մսերյանին։

XVI

Բժիշկ Սալամբեկյանը հիվանդանոցից նոր եր վերադարձել և մեջքի վրա պառկած նայում եր առաստաղին։

«Արդյոք ավելի լավ չե՞ր լինել, մտածում եր նա, մի վոր և ե վանքում նստած Սաղմոս կարդալ մարդկանց մեղքերի թողության համար, քան թե նրանց բժշկելի մարմնավոր ցավերից»։

Ասում եյին և ինքն էլ տեսնում եր, վոր բժիշկները առհասարակ ճարպիկ մարդիկ են, դես ու դեն են վազում, միմյանցից հիվանդներ խլում կամ առողջներին հիվանդացնում։ Իսկ ինքը ինչ ե անում։ Ամսական ստանում ե հիսուն—վաթսուն ռուբլի և, կարծես, արդեն հասել ե բախտի զենիտին։

«Կամ պետք ե յես էլ շառլատանություն սկսեմ, կամ թե չե՝ դա ինչ ցավիս բժիշկն եմ։ Գնում եմ ամեն որ հիվանդանոց և տեսնում եմ մի շարք գլուխներ ու դեմքեր։ «Ջերմ տուր», «լեզուդ հանիր», պրծավ գնաց, հետո գալիս եմ, մեջքիս վրաահա այսպես պառկում (նա վոտները բարձրացրեց և դրեց անկողնակալի կողի վրա) ու

ինքս ինձ ասում. «աշխարհս դատարկ բան է»։ Ասենք. զահրումարը Դատարկ բան է, բայց մարդս մի քիչ յեռանդ պետք է ունենա, չէ՞…»։

«Ախ տղա, արի պառկվենք,—գոչեց նա հանկարծ և գլուխը մի քիչ բարձրացրեց,—բայց վո՛չ, ամուսնությունն էլ խաթաբալա շատ ունի։ Մեկ էլ տեսար ծնեց։ Սատանան գիտե ծնունդն էլ ինչպես կլինի, պլացենտա պրեվե, էպիզիոտոմիա, լիպորոկելի-ֆոտոմիա, իսկ յերեխաները, հոհո՛, դիֆտերիտ, սկարլատինա, ֆոլիկուլյարնայա ժաբա, թյո՛ւ, թյո՛ւ, թյո՛ւ»։

«Չեմ ուզում, չեմ ուզում»,—կրկնեց նա, ձեռները այնպես շարժելով, վոր, կարծես, նույն րոպեյին դռները բացվեցին և կես դյուժին յերեխաներ ճլվճլվալով ներս թափվեցին,

— Ի՞նչ է պատահել բժիշկ,—գոչեց Մսերյանը, շտապով ներս մտնելով յուր հաստ ձեռափայտը և լայնեզր գլխարկը ձեռին։

Բժիշկը մեջքի վրա շուռ յեկավ ընկերոջ ձայնին։

— Այդ դո՞ւ ես։ Հը՛մ, ինչ է ասում իդեալիստի վարդագույն յերևակայությունը ինֆուզորիաների մասին։

— Ժամանակ չէ, յեղբայր, պատերի հետ մասլահաթ անելու։ Այն ինչ հորս ցավը եյին տալիս, չեյիր ուզում։ Վե՛րկաց վոտքի։

—-Այսպես ավելի բանաստեղծական է, պառկի՛ր, զրույց անենք։

— Վե՛րկաց, ասում եմ, Արսենը հիվանդ է։

— Հոգեպե՞ս, թե՞ մարմնապես։

— Յերեսունութ ու վեց տասնորդական աստիճանի տաքություն ունի, իսկույն չափեցի։

— Ասենք, դա նրա նորմալ դրությունն է, տեմպերատուրան շատ բարձր է։

Մսերյանը, բռնելով նրա թևից, ուժով վոտքի կանգնեցրեց և ստիպեց հագնվել։

Յերբ նրանք ներս մտան, Դիմաքսյանը անկողնի մեջ նստած ծնկների վրա ինչ-վոր գրում եր։ Մսերյանը խլեց նրա ձեռից թուղթը ու գրիչը, գոչելով.

— Յերևակայում եմ, այդ դրության մեջ ինչ խելոք բան կգրես։

Սալամբեկյանը տնքտնքալով, ծուլաբար քննեց ընկերոջը, քթի տակ մրթմրթալով.

— Հիմա մեռնենք, թե յերեսուն տարի հետո՝ միևնույնն է։ Դատարկ բան է, մրսել ես…

Նա գրեց միքանի դեղեր։ Մսերյանը անձամբ շտապեց վազել դեղատուն։ Առհասարակ նա շատ եր վախենում ընկերոջ մասին և հոգում եր, ինչպես ավագ յեղբայր։

Ամբողջ օրը ընկերները մնացին հիվանդի մոտ։ Մսերյանը չէր թողնում Սիրականին ներս մտնել։ Մի ժամանակ նա հիվանդանոցներում շատ է հիվանդապահի պաշտոն կատարել յուր ընկերների համար, այժմ էլ կկատարի։ Եվ նա պատմում էր յուր կյանքի այդ շրջանից զանազան եպիզոդներ։

Իրիկնադեմին Դիմաքսյանը ասաց, թե թեթևություն է զգում և գրեթե ուժով Մսերյանին ստիպեց թողնել նրան մենակ։

Գիշեր էր։ Սեղանի վրա վառվում էր կանթեղը։ Մերթ ընդ մերթ Սիրականը ներս էր մտնում իմանալու արդյոք հիվանդը մի բան չէ՞ պահանջում։ Պարոնի հիվանդությունը ծառային շատ էր անհանգստացնում, վորովհետև Սիրականը նրան սիրում էր անկեղծ սիրով։

Այդ սիրո շարժառիթը՝ Դիմաքսյանի առատ-առատ նվիրած փողերը, հագուստը չէյին կամ ձրի դասատվությունը, այլ ավելի խոր պատճառ կար։ Մինչ ամենքը ծաղրում և հալածում էյին Սիրականին նրա տգեղ և ծիծաղելի կերպարանքի համար, մինչ ամենքը մի-մի կոպիտ ածական էյին տալիս նրան, մենչ յերեխաներն անգամ փողոցներում վազում էյին նրա հետևից և «մայմուն, մայմուն» կանչելով, քարեր էյին արձակում նրա վրա — Դիմաքսյանը, այդ «ուսումնական աղան», այդ «մեծ օջաղի վորդին», այդ «ինսպեկտորը», նրա հետ վարվում էր մեղմ, մարդասիրաբար, ինչպես յուր հավասարի, յուր ընկերոջ և լավ ընկերոջ հետ։ Դա մի հազվագյուտ, մի անգնահատելի բան էր Սիրականի համար։ Եվ նա չգիտեր, ինչպես արտահայտեր յուր սրտի յերախտագիտությունը։

Վերջին անգամ ներս մտնելով, նա կանգնեց հիվանդի գլխի կողմում և, շունչը զսպելով, կամեցավ իմանալ, քնա՞ծ է նա, թե՞ արթուն։

Լսվում էր հիվանդի ծանր և ընդհատվող շնչառությունը։ Մի վայրկյան նա աչքերը բաց արավ, տեսավ ծառային և հառաչեց։

— Դու այստե՞ղ ես։

— Հրամերեք, աղա։

— Քանի՞ ժամն է։

— Տասից կես է անցել։

— Ինչ ուշ է անցկենում գիշերը։ Լավ, գնա գործիդ, Սիրական, հոգնած ես, պառկիր քնիր։

— Ես հոգնած չեմ, աղա, գործ էլ չունեմ, խանումին կերակուր տվեցի, պրծա։

— Այն շիշերը և ժամացույցը դիր այս սեղանի վրա։

Սիրականը իսկույն կատարեց նրա հրամանը և, ձեռները փորի վրա դարսած, մնաց կանգնած։

— Ուզում ես ինձ մոտ մնալ, վոր ծառայե՞ս։

— Հրամերեք, աղա։

— Հարկավոր չես, յես ուզում եմ մենակ մնալ։ Գնա՛, բայց դըռները ամուր կողպիր, վոր քամին չբաց անի։

Սիրականը ակամա դուրս գնաց։ Հիվանդը մնաց մենակ։

Արդարև, այժմ նա ավելի հանգիստ եր։ Իսկապես յուր տկարությանը վոչինչ նշանակություն չեր տալիս։ Զարմանում եր անգամ Մսերյանի անհանգստանալու վրա։ Մարմնին տիրած տաքությունը մի առանձին ախորժություն եր պատճառում նրան։ Թվում եր նրան, թե կաշվի տակ մի թմրեցուցիչ և հաճոյական հեղուկ են սրսկել։ Նրա քունը չեր տանում, միայն աչքերը փակած անձնատուր եր յեղել ֆիզիկական դուրեկան անդորրությանը, վոր նմանում եր հաշիշի կամ ափիոնի ազդեցության։ Նրա մտքով անցնում եյին օրվա դեպքերը։ Առավոտյան նա զարթնեց, ճշմարիտ ե մի թեթև գլխացավով, բայց հանգիստ և խաղաղ հոգով։ Այդ ժամանակ նա մոռացել եր յուր թշնամիներին, ուզում եր պարապվել, թեև տկար եր։ Յեվ հանկարծ դարձյալ զարթեցրին նրա սրտում թունավոր օձը, դարձյալ տակն ու վրա արեցին նրա արյունը։ Բայց արժե՞ր արդյոք վրդովվել մարդկանց տմարդի վարմունքից, միթե չե՞ր կարելի սառնասիրտ արհամարհանքով վերաբերվել ստոր լուտանքներին։ Ինչու՞ նա այնպես բռնկվեց, ինչպես մի դյուրաբորբոք հեղանյութ։

«Արդյոք յե՞րբ, վերջապես, կչափավորվի իմ զգայնությունը»։

«Յերբեք, յերբե՛ք», պատասխանեց նրան մի ուրիշ ներքին ձայն։

«Ինչու՞»։

«Վորովհետև դու աննորմալ մարդ ես, Բարաթյանը ճիշտ ե ասել և ճիշտ են ասում մյուսները։

Ահ, այդ Բարաթյանը, այսօրվա այն չարագուշակ հանդեսը, նրա հաղթական ժպիտը, դեմքի յերջանիկ արտահայտությունը։

Ո՞ւր ե նա այժմ։ Յերկաթուղու գնացքը ամբողջ օրը բախտավոր զույգին սլացրել ե կայարանից կայարան։ Ահա նրանք, ահա նա մի ձեռով Գայանեյին գրկած, մյուսով շոյշոյում ե նրա գանգուր բաց գույնի մազերը։ Իսկ Գայանեն գլուխը մեղմիկ թեքած ե նրա ուսին և յուր կապուտակ կրակոտ աչքերով ցածից վեր նայում ե նրա յերեսին։

«Ցածից վեր, այո՛, յեթե յես լինեյի, պետք ե վերևից ցած նայեր ինձ»։

Նրանք կանգնած են վագոնի փոքրիկ պատուհանի առջև, իհարկե,

տանձին կուպեյում, և դիտում են աշնանային բնության հրաշալիքները։ Տեսարանները փոխվում են գեղեցիկ կալեյդոսկոպի արագությամբ։ Նրանց աչքի առաջով անցնում են գյուղական աղքատիկ խրճիթները, այս ու այն տեղ ցրված, դեղնած դաշտերը, սիրուն ձորերը և շքեղ հովիտները։

Պղտոր Քուռը այնտեղ պարզ է, փայլուն և գրավիչ։ Նա ժպտում է բախտավորների յերեսին և սիրով վողջունում նրանց միությունը։ Այնինչ՝ նույն գետը այնքան մռայլ, այնքան թշնամաբար եր նայում նրան այսօր առավոտյան։ Նա, կարծես, աշխատում եր գրավել դժբախտին դեպի յուր ցուրտ ծոցը, ուր թագնված է ժանդ մահը։ Ի՞նչ կլիներ, յեթե նա գցեր իրան այնտեղ։ Վոչ, վո՛չ, ինչու համար, ում համար, արժե՞ր...

Այստեղ հիվանդը զգաց մի նոր սառնություն յուր վոսկորների մեջ։ Յերջանիկ զույգը համբուրվում եր։ Ա՛խ, այդ սիրային համբույրները, արդյոք ի՞նչ զգացմունք են պատճառում համբուրվողներին։ Արդյոք կարժանանա՞ նա յերբ և է, գեթ մի անգամ յուր ամբողջ կյանքի ընթացքում այդպիսի ջերմ համբույրի մի այնպիսի արարածի հետ... Ի՞նչ ասել է փոխադարձ սեր։ Նա ուզում է զգալ, նա կարոտ է, նրա սիրտը պահանջում է մի այդպիսի սեր, վերջապես, իրավունք ունի պահանջելու։

Նրա ատամները դողդողում եյին և ուժգին ու արագ-արագ զարկվում միմյանց։ Ա՛հ, ցուրտ է, սաստիկ ցուրտ։ Ինչու նրա վողնաշարը այնպես ցավում է, կարծես, նա ուզում է բաժան բաժան լինել, կարծես, վոսկորները ուտում են միմյանց։ Նրա ամբողջ մարմնին տիրեց կատարյալ ծանրություն։ Այդ ի՞նչ է նշանակում. ցուրտ է, պետք է ծածկվել։ Յեվ նա վերմակը քաշեց գլխին, վոտները հավաքեց, կծկվեց, կուչ յեկավ ամբողջ մարմնով և դարձավ մի փոքրիկ կծիկ։ Լսվում եյին նրա ծանր տնքտնքոցը ու հառաչանքները։ Տասը րոպեյից հետո ցուրտն անցավ։ Սկսվեց մի նոր տաքություն. և այս անգամ ավելի սաստիկ։

Նա դեն շպրտեց վերմակը, կուրծքը բաց արավ և ձեռները տարածեց աջ ու ձախ։ Նրա պղտոր և կարմրած աչքերը թափառում եյին առաստաղի վրա, պատից պատ, անկյունից անկյուն։ Իսկ մթնած միտքը կայծակի արագությամբ վերաստեղծում եր անցյալի տպավորությունները անբնական կերպով, չափազանցացրած, անկապ, անորոշ, հատ ու կտոր...

XVII

Հանկարծ նրան թվաց, թե ինքը դպրոցումն ե։ Ահա և՛ աշակերտները, շարք-շար նստած, պատասխանում են նրա հարցերին։ Մի չար պատանի, ընկերներին աջ ու ձախ բոթելով, ստեպ-ստեպ մատը բարձրացնում ե և վոտքի կանգնում։

«Արարչյան, հանգիստ նստիր», գոչեց նա բարձրաձայն։

Բայց վո՛չ, դա ուսումնարան չե։ Նա կանգնած ե մի ընդարձակ դահլիճում։ Նրա առջև հավաքված ե անթիվ բազմություն, գյուղացիների և քաղաքացիների մի խառնիճաղանճ ամբոխ։ Նա քարոզում ե ամբոխին լույս և գիտություն։ Նրա ձայնը դյութական զորությունով ամենքին գրավել ե, լսում են լուռ, ուշադիր, անշարժ։ Ո՛հ, վո՜րքան լավ ե ընդհանուրի մտքին տիրելը։ Հանկարծ մի շշուկ ե բարձանում։ Նա զգում ե, վոր մեկը յետևից բռնեց նրա հագուստի փեշերը։ Նրան ուզում են ցած գլորել։ Նա հետ ե նայում, ա՛յ, դա նրա հակառակորդներն են — մեկը գերմանական Ինչաթյանը, մյուս փաստաբան Վեքիլյանը։ Զարամիտներ, դուք նախանձում եք, վոր խավար բազմությունը մի՛տ ե դնում նրա լուսավոր գաղափարներին։

«Ի՞նչ եք ուզում ինձանից», գոռաց նա բարձրաձայն, ձեռը խփելով բարձին։

Վոչինչ չկա, վոչ ամբոխ, վոչ թշնամիներ, վոչինչ։ Նա մենակ ե և գտնվում ե դատարկ տարածության մեջ, ոդի վրա քաշ ընկած։ Նա վոչ մի հենարան չունի, վախենում ե անհուն բարձրությունից ընկնի և անհետանա այն խավար անդունդի մեջ, վոր բացված ե ներքեում, ուղիղ նրա վոտների տակ…

Մի ինչ-վոր սպիտակահեր ծերունի տալիս ե նրան մի բազկաթոռ։ Նա նստում ե։ Այժմ նա ծանոթ ընտանիքի հյուրասենյակումն ե։ Ինչքա՛ն հյուրեր կան։ Մեծ մասը կանայք են և ինչ սիրուն, ինչ գեղեցիկ, ինչ յերիտասարդ կանայք։ Նստած են խումբ-խումբ, ուրախ դեմքերով։ Ա՛հ, հարսանիք ե, շումը։ Սենյակը ողողվում ե հյուրերի զվարթ և բարձրաձայն խոսակցություններով ու քրքիջներով։ Մի յերիտասարդ ջութակ ե ածում, մի որիորդ յերգում ե, մյուսը դաշնամուր ե նվագում։ Իսկ այնտեղ սպիտակ հագուստով, գլուխը գեղեցիկ պսակով զարդարած, դեմքը մի նոսր և նուրբ շղարշով ծածկած, կանգնած ե նա, Գայանեն…

«Բարև ձեզ», ասաց հիվանդը խռպոտ ձայնով։

Վոչ վոք ուշադրություն չի դարձնում Դիմաքսյանի վրա։ Նա նստած ե սենյակի մի անկյունում, աննշմարելի այդ ուրախ հանդի-

սում, այդ զվարթ հասարակության մեջ։ Ի՜նչ լավ նվագում է այն օրիորդը, ինչ գեղեցիկ է Գայանեն, ինչ ուրախ է Բարաթյանը։

«Բրավո, բրավո», գոչեց դարձյալ հիվանդը։

Մթություն, խավար, ոչինչ չկա, ձայներ են լսվում, տարօրինակ, սարսափելի ձայներ։ Բայց ահա դարձյալ հյուրասենյակը լուսավորվեց, և ոչ ոք չի տեսնում Դիմաքսյանին։ Այսպես չի կարելի, կամ պետք է այստեղից դուրս գալ կամ պետք է ուշադրություն գրավել։ Նա կահ-կարասի չէ, նա մի կոտրված աթոռ չէ, կամ մի անպետք լաթի կտոր,— նա Արսեն Դիմաքսյանն է...

«Տիկիննե՛ր, օրիորդնե՛ր», նորից գոռաց հիվանդը, ավելի խռպոտ ձայնով։

Հյուրասենյակում տիրում է միանվագ լռություն։ Բոլոր հանդիսականները յերեսները դարձնում են դեպի նրա կողմ։ Վերջապես, նշմարեցի՛ք Դիմաքսյանին։

«Ով է խրվել այն բազկաթոռի մեջ», ասում է մի գոռոզ տիկին, մոնոկլը պահելով աչքին։

Դիմաքսյանը ոտքի չե կանգնում։

Հիվանդը նստեց անկողնի մեջ։

Ամենքը զարմացած են։ Սպասեցե՛ք, իսկույն նա ցույց կտա, թե ով է ինքը։ Բոլորը անշարժ են, բերանները կիսաբաց, գլուխները վեր բարձրացրած։ Դյութական ձայնը նրանց մի ակնթարթում արձանացրել է նույն դիրքում, ինչ դիրքում որ եյին։ Կառքերի ձայնը խլացնում է նրան, ո՜հ, ամբողջ քաղաքը, կարծես, զվարճանում է նրանց յերջանկությունով։ Իսկ ինքը մենակ, արհամարհված, ընկճված։ Այս ի՜նչ ձայներ է լսում նա, ինչո՞ւ չեն հարձակվում նրա վրա։

«Ինչո՞ւ, ինչո՞ւ»...

Հիվանդը ձեռը զարկեց անկողնակալի կողքին։

Լսում է մի բարձր ծիծաղ։ Նա թատրոնումն է, Վեքիլյանի առաջ կանգնած։ Գայանեն մոտենում է նրան և նայում։ Նա հանկարծ բռնում է օրիորդին ամուր ձեռներով, խելագարի պես։ Վայրկենաբար օրիորդի կրծքից դուրս է թռչում մի բարձր ճիչ։ «Դա հրեշ է», գոչում է նա և սարսափած փախչում։ «Հրեշ է», կրկնում են բոլոր կանայք և վազում այս ու այն կողմ։ Տղամարդիկ ծիծաղելով հետևում են նրանց։ Ամենից հետո դուրս է գալիս Բարաթյանը և դուրս գալուց առաջ զզվանքով նայում է Դիմաքսյանի վրա։ Նա համբուրում է Գայանեյին, ո՜հ, համբուրում է յուր հարսնացվին, յուր ամուսնուն։ Հիվանդը, ատամները կրճտելով, ձեռներով ամուր բռնեց գլխի մազերը։

Նա միայնակ է և դարձյալ նույն հյուրասենյակում։

Նրա հայացքը ընկնում է դիմացի հայելու մեջ։ Այնտեղ նա տեսնում է յուր ամբողջ կերպարանքը նկարված վոտից մինչև գլուխ։ Տեր աստված, ինչ բանի չի նմանում նա։ Այտերի վոսկորները դուրս ընկած, անհելի բերանը լայն բացված, շրթունքները լնդերքին կպած։ Աչքերի փոխարեն մթին խորշեր, ականջները սևացած, պարանոցը վոսկորացած։ Իսկ մարմի՞նը։ Ի՞նչ պատիկ, ինչ զազրելի կերպարանք։ Այո, իրավունք ունի Գայանեն նրան ատելու, նա մարդկային պատկեր չունի, նա հրեշ է, ճիվաղ է...

«Յես հրեշ եմ, հրեշ եմ, բոլորը ասում են», լսվեց դարձյալ հիվանդի ձայնը։

Յեվ նա անկողնից վեր թռավ անբնական արագությամբ, կա՛նգնեց հատակի վրա։

Սեղանի վրա շարունակ վառվում էր կանթեղը։ Դրսում քամի չեր, աշնանային սարսափելի քամի, վոր ամեհի և սոված գազանի պես լիզում էր դաշտերը։ Դռների և լուսամուտների արանքից նա ներս էր թափանցում, սուլելով ինչպես օձ, բառանչելով վորպես մորթվող չորքոտանի։

Հիվանդը կանգնած էր սենյակի մեջտեղում բարակ գիշերային շապիկով, կուրծքը կիսով չափ բաց։ Նրա աչքերի շրջանակները արյունով լի պնակների էին նմանում. լայնացած բիբերը, կարծես, ձգտում էին դուրս գալ իրանց բնից։ Նա ատամները կրճտում էր կատաղի կերպով, գլխի մազերը խճճվել էին և հավաքվել գագաթում։ Նա մի բռունցքի մեջ սեղմած էր վերմակի ծայրը, մյուսի մեջ շապկի չեղերքը։ Կարծես, նա պատրաստվում էր հարձակվել մի աներևույթ թշնամու վրա։

Նա վոտները ուժգին զարկեց հատակին և գոռաց.

«Վայրենի ժողովուրդ»։

Դա մի սարսափելի, մի խուլ գոռոց էր, արձակված սաստիկ տենդի մեջ գտնվող հիվանդի տանջվող և տառապող կրծքից։

Այդ գիշերային մենավոր լռության մեջ, այդ դատարկ սենյակում նա հիշեցնում էր յուր վորջի մեջ բռնված մի վայրի գազանի, վորին դրսից պաշարել էին և կամենում էին կենդանի-կենդանի այրել։ Դեմքը կորցրել էր ամեն ինչ, վոր մարդկային էր, վոր արտահայտում է գիտակցություն և բանականություն, և յերևան էր հանել, ինչ վոր գազանային է։

Դռան արանքից ներս սլացող քամին կպչում էր նրա այրվող մարմնին։ Դա չեր, վոր մի ակնթարթ մեղմացրեց նրա տենդային ցնորքները, թույլ, շատ թույլ կերպով լուսավորեց նրա մթնած գիտակցությունը։

Նա նայեց յուր շուրջը, բռունցքները բաց արավ, հառաչեց ծանր և յերկարատև։ Նա մոտեցավ գրասեղանին, ձեռները հենեց նրա ծայրին և նորից հառաչեց։

Կանթեղի մոտ դրած եյին մի մեծ թանաքաման, միքանի գրքեր և լրագիրներ։ Նա անմիտ հայացքով նայեց նրանց, հետո պատերին, հետո առաստաղին, հետո հատակին, հետո ինքն իրան՝ վոտից մինչև գլուխ։ Յեվ յերբ գլուխը կրկին բարձրացրեց, նրա հայացքը ընկավ կանթեղի մյուս կողմում դրած փոքրիկ քառանկյունի հայելին։ Նրան թվաց, վոր այդ մի մեծ գավաթ և ջրով լի։ Նա վերցրեց յերկու ձեռներով և մոտեցրեց շրթունքներին։ Հետո ցած բերեց, նայեց նրան, նայեց յերկար ժամանակ։ Դռան արանքից սուլացող քամին մի նոր ցրտություն տարածեց նրա մարմնի վրա։ Ահա նա, այն կերպարանքը, վորին ամենքը ծաղրում են։ Ահա այն խորը թաղված աչքերը, յերեսի թույխ և կոշտ կաշին, նոսր միրուքը, տգեղ բերանը, լայն սևացած ատամները։ Իսկ հասակը։ Նա հայելին պահեց գլխիվայր, կիսահորիզոնական ձևով և նայեց իրան վոտից մինչև գլուխ։ Ա՛խ, վո՜րքան նա փոքրիկ է, վո՜րքան չնչին։ Ինչու նա այդպես է ծնվել, ինչու նրա ահագին գլուխը տեղավորված է այդ միքանի թզաչափ մարմնի վրա։ Ինչու նա և վոչ ուրիշը։ Անեծք բնությանը, անեծք նրա աներևույթ զորությանը։ Կամ գուցե այդ նրա ծնողների, նրա պապերի և նախահայրերի մեղքն է։ Բայց ինչու բնությունը նրան և միմիայն նրան է ընտրել այդ մեղքերի պատիժը կրելու, ինչու, ինչու...

Նա անթարթ աչքերով շարունակ նայում եր հայելու մեջ։ Յեվ նրա կուրծքը ուժգին բաբախում եր, յերեսի բոլոր մկանունքները ցնցվում եյին։ Սակայն նա դարձյալ նայում եր ինքն իրան։ Կարծես, առաջին անգամն եր տեսնում կամ գուցե ուզում եր վերջին անգամ սիրտը տանջել կամավոր փորձով։ Նա հայելին դրել եր սեղանի վրա։ Նա կատաղությունից յեղունգներով ճանկռտում եր սեղանի ծածկոցը, բայց ելի նայում եր։ Նա գտնվում եր կիսատենդային և կիսարթուն դրության մեջ։ Հանկարծ նա դողդոջուն ձեռներով խլեց հայելին սեղանի վրայից, ավելի ու ավելի մոտեցրեց աչքերին։ Նրա շրթունքները բացվեցին և ատամները դուրս ցցվեցին։ Նա հայելին բարձրացրեց գլխից վեր և բոլոր ուժերով զարկեց սենյակի հատակին։

Ապակին շրջանակից բաժանվեց, փշրտվեց։ Նրա տասնյակ բեկորները ցիր ու ցան յեղան այս ու այն կողմ։ Նույն միջոցին հիվանդի կուրծքը արձակեց մի դառն, յերկարատև և կատաղի ծիծաղ։

Բորբոքված աչքերով նա նայում եր հայելու կտորներին, վորոնց հնչյունների մեջ զգաց ջախջախված թշնամու վերջին հուսակտուր

հառաչանքները։ Կարծես, նա լուռ վրեժը լուծեց, տալով բնությանը արժանի վարձ նրա անարդարության համար։

Իրավ, այժմ նա ավելի հանգիստ եր յերևում, թեև տենդը տակավին չեր անցել։ Հոգնած, շնչասպառ, ծանր հառաչելով նա հետ ու հետ քայլեց և թուլացած նստեց անկողնակալի վրա։ Նրա գլուխը ծանրացել եր, թեքվել կրծքին։ Միտքը դեռ պղտորված եր, նա չեր գործում, այլ վերստեղծում եր անցյալի տպավորությունները։ Փոքր առ փոքր նա սկսեց սթափվել, բայց դեռ չգիտեր արթուն ե, թե յերազում։ Գիտեր միայն, վոր ինչ-վոր բան ե պատահում իրան, մի տարորինակ, մի չտեսնված բան։

Մի անգամ նա աչքերը վեր բարձրացրեց, և նրա պղտոր հայացքը ընկավ դիմացի դռների ապակու վրա, բայց չնշմարեց մի զարմանալի յերևույթ։ Դա յերկու ձեռնաչափ դեղնագույն մի բան եր ամուր կպած ապակուն, ինչպես չորացած, դեղնած մեծ տերև։

Ցերեկն այդ բանը շարժվում եր, քսվելով ապակուն։ Նույն միջոցին դռների հետևից լսվում եր ինչ-վոր շշուկ։ Կարծես, այդ շշուկը հասավ նրա ականջին։ Նա ձեռով շփեց տաքությունից այրվող ճակատը, տրորեց ցամաքած աչքերը…

Դեղնագույն բանը չքացավ, ապակին մթնեց։ Մեկը դրսից դռները շարժում եր։

«Կորե՛ք, կորեք», գոչեց հիվանդը խուլ ձայնով։

Դռները հանդարտ և կամացուկ բացվեցին։ Ներս մտավ կապույտ շապկով, կուրծքը բաց, վոտաբոբիկ մի արարած, ինչպես գիշերային վոգի, վոր գալիս ե վհուկի ձայնին։ Բայց վոգին կամ ուրվականը սաստիկ վախեցած եր։ Նա դողում եր վոտքի վրա, նա չգիտեր առաջ գար, թե դռների մոտ մնար։

Այնքան պղտորված եր հիվանդի միտքը, այնքան մթագնած եյին նրա աչքերը, վոր նա չճանաչեց ուրվականին։

«Կորի՛ր», կրկնեց նա, վոտքի կանգնելով։

Սիրականը, ձեռները փորի վրա դարսած, մի քանի քայլ առաջ յեկավ։

«Ջուր, ջո՛ւր», սիրտս այրվում ե։

Ծառան բարձրացրեց կանթեղի լույսը, տվեց հիվանդին մի բաժակ ջուր։

Հետո նա ասաց.

— Աղա, կմրսես, պառկի՛ր։

Հիվանդի թուլացած գլուխը թեքվեց բարձին։ Սիրականը ուղղեց նրա մարմինը և վերմակով ծածկեց։

Անցավ մոտ քառորդ ժամ, և հիվանդը, կարծես, քնեց։ Սիրականը կանգնած էր նրա գլխի մոտ, ինչպես մի խնամող մայր։ Խեղճ մարդ. Նա կարծում էր, որ յերիտասարդ պարոնը խելագարվել է։ Նա դիտմամբ յուր անկողինը բերել էր սենյակի դռների մոտ և այնտեղ պառկել, որ հիվանդին մոտիկ լինի, հարկավոր յեղած ժամանակ նրան ոգնություն հասցնելու։

Հազիվ նա նիրհել էր, Դիմաքսյանի տարորինակ գոռոցները զարթեցրին նրան։ Նա ամբողջ ժամանակ դռների հետևից հետևել էր նրա արածներին, չհամարձակվելով ներս մտնել։ Այժմ նա ապշած նայում էր հայելու կտորներին, գլուխը շարժում և հիվանդին ձեռով խաչակնքում։

Արդեն լուսաբացին մոտ էր, յերբ Սիրականը աթոռի վրա նըստած նիրհեց։ Նա սթափվեց այն ժամանակ, յերբ ուսի վրա զգաց մի ծանրություն։

Դա Մսերյանի ձեռն էր։

— Գիշերը հանգիստ է քնել։

— Չարչարվել է խեղճը մինչև լույս։

Սիրականը նրան կանչեց մի կողմ և շշնջյունով պատմեց գիշերվա յեղելությունը։ Մսերյանը վախեցած մոտեցավ հիվանդին և զգուշությամբ ձեռը շփեց նրա ճակատին։ Հիվանդը քրտնած էր։ Մսերյանը ծառային պատվիրեց հայելու բեկորները հավաքել և դուրս գնալ։ Իսկ ինքը նստեց յուր ընկերոջ անկողնակալի մոտ։

Մի ժամ անցած յեկավ բժիշկ Սալամբեկյանը։ Հիվանդը դեռ քնած էր. Մսերյանը հաղորդեց նրան ծառայի պատմածը։

— Կնշանակե սաստիկ տաքության մեջ է յեղել։ Վոչինչ, վոչինչ, մի վախենալ, սովորական ցնորք է...

Վերջապես, Դիմաքսյանը շարժվեց վերմակի տակ։ Ծանր հառաչելով, նա յերեսը դարձրեց ընկերներին և արտասանեց.

«Յես հիվանդ եմ, բժշկեցեք ինձ...»։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Յերկու ամիս ճանապարհորդելուց հետո Բարաթյանները վերադարձան Թիֆլիս։ Նորապսակների համար Գերասիմ Գերասիմիչը յուր տանը պատրաստել և գեղեցիկ կահավորել էր տվել առանձին սենյակներ։ Անդամալույծը ուրախ էր որդու ամուսնությանը, միայն յերբեմն ինքնուրույնաբար գլուխը շարժում էր և քթի տակ ասում.
«Յեթե Իսահակը իմ որդին է—հայր Աբրահամի ծնունդը չէ. այս չորացած ոտներս կկտրեմ, յեթե նա հինգ ամսից ավելի դիմանա...»։

Սովորական այցելություններից հետո, Նորապսակների համար սկսվեց բուն ընտանեկան նստակյաց կյանքը։

Բարաթյանը վճռել էր սահմանափակել յուր նախկին ծանոթների թիվը, հարաբերություն պահելով միայն այնպիսիների հետ, վոր քիչ թե շատ հասարակական դիրք ունեն։ Մսերյանին նա դուրս գցեց ցուցակից։ Բժիշկ Սալամբեկյանը պետք է ընդունվեր։ Վեքիլյանի համար, հարկավ, դռները բաց էին կլուբների վրա։ Դիմաքսյանի մասին նա ասում էր, թե արժանի չի համարում նրան յուր տունը թողնել, թեև միևնույն ժամանակ, զգում էր, վոր վիրավորված ընկերը հավիտյան ընդհատել է նրա հետ յուր հարաբերությունները։

«Իսկ քո բոլոր ազգականները և բարեկամները աչքիս վրա տեղ ունեն», ասում էր նա Գայանեյին, թվելով յուր ապագա շրջանի մարդկանց։

Տիկինը նստած էր ամուսնու դեմուդեմ և լուռ լսում էր նրա վորոշումները, առանց ընդդիմանալու, միանգամայն հպատակվելով նրա կամքին։ Նա նկատելի կերպով նիհարել էր, աչքերի տակը բավական խորացել էր։ Առհասարակ արտասահմանից նա վերադարձավ շատ փոխված։ Բայց այդ միայն արտաքուստ էր։ Իսկ հոգեպես նա այժմ ավելի բախտավոր էր, յերջանիկ ժպիտը չէր հեռանում նրա շրթունքներից։ Այժմ նա պաշտում էր ամուսնուն և կատարելապես

համոզված էր, որ ինքն էլ պաշտվում է նրանից։ Չկար նրանց փոխադարձ սիրո և չերջանկության վրա ոչ մի արատ, ոչ մի թեթև ստվեր։ Այսպես էր կարծում Գայանեն, և նրա ուրախությունը այնքան մեծ էր, որ նույն իսկ արժանի չէր համարում իրան այդ վիճակին։ Երբեմն նա մինչև անգամ արտասվում էր, հուզվելով բախտի բուռն զգացումներից։ Այդ չերջանիկ հուզմունքն էր ազդել նրա առողջության վրա և այնպես նիհարեցրել նրան։ Նա պատրաստ էր ամբողջ օրը, առավոտից մինչև չերեկո, առանց ուտել-խմելու, նստել ամուսնու գեմուդեմ, ձեռները նրա ափի մեջ դրած և աչքերը նրա աչքերին հառած։ Պատահում էր, որ նա վախենում էր—մի գուցե մի չար զորություն հանկարծ ընդհատի նրանց չերջանկությունը։ Չէ՞ որ նրանք մահկանացուներ են և կարող է մեկը կամ մյուսը հիվանդանալ, կամ մի հանկարծակի փորձանքի հանդիպել, կամ մեռնել։ Նա սարսափում էր այդ մտքից։ Պատահում էր և ուրիշ, ավելի հուզիչ բան--Գայանեն կասկածում էր։ Թվում էր նրան, որ հանկարծ յուր Իսակը կարող է դադարել սիրելուց, պաղել և աչքը ուրիշների վրա դարձնել։ Ուստի նա անդադար ստիպում էր նրան կրկնել.

«Սիրում եմ և պիտի հավիտյան սիրեմ»։

Գայանեյին չէր հետաքրքրում դրսի կյանքը։ Նա մոռացել էր ամեն բան, և՛ ազգականուհիներին, և՛ ընկերուհիներին, և՛ նույն իսկ կանանց ընկերությունը, որի համար առաջ այնքան աշխատում էր։ Ընկերուհիները զանազան կատակներ էին անում նրա հետ, անգամ ծիծաղում էին նրա վրա։ Բայց նա պատրաստ էր ամեն տեսակ ծաղր ընդունել, միայն նրան հանգիստ թողնեյին յուր Իսակի հետ։

Այդ միջոցներին քաղաքային ընտրությունների պայքարը սկը-վել էր։ Պյոտր Սոլոմոնիչը արտասովոր շարժման մեջ էր։ Կազմվել էր ընդդիմադիր կուսակցություն։ Կամենում էին հին իրավասուներից շատերին հեռացնել, նոր քաղաքագլուխ և վարչության անդամներ ընտրել։

Իրավասուների ցուցակից դուրս էին ձգել Պյոտր Սոլոմոնիչին և Ամբակում Աֆնասյեվիչին։ Վերջինը համարվում էր քաղաքի շահերի համար վնասակար, իսկ առաջինը—մի ավելորդ, անօգուտ բան։ Այսպես էլ գրված էր մի տեղական լրագրում. «ավելորդ Բախտամովը»։

Յեռանդուն քաղաքային կատաղել էր։ Ամբողջ օրը նա կլուբում ու փողոցներում բողոքում էր թշնամիների դեմ քարոզելով։

— Բաղքցիներ, խելքի յեկեք, կոռ-մոռները յեկել են ուրիշ քաղաքներից մեր հացը խլել, ուզում են մեր քաղաքն էլ իրանց ձեռքն առնեն։

Ամբակում Աֆանասյևիչը ժողովներ էր կազմում։ Առաջին կարգի ընտրողները նրա մարդիկն էին։ Յերկրորդ կարգի մեծ մասը միջին վաճառականներն էին։ Պյոտր Սոլոմոնիչը պտտում էր յուր կալվածները, վաղորոք բոլոր խանութպանների ականջին շշնջալով ապագա իրավասուների անունները։ Նոյեմբերի կեսին Ամբակում Աֆանասյևիչի կուսակցությունը տարավ առաջին հաղթությունը։ Պյոտր Սոլոմոնիչն ընտրվեց միայն մեկ ձայնի առավելությամբ։ Դա նրան վշտացրեց, բայց և այնպես ուրախ էր, որ ընտրվեց, որովհետև հույս չուներ ընտրվելու։

— Քանի որ կենդանի ենք, սա մեր ձեռքին կմնա,— պարծենում էր նա, ձեռափայտը խփելով պրոսպեկտի մայթին, որի մասին նա առաջին և վերջին անգամ Դումայում մի ճառ էր ասել ուղիղ յերկու բառից բաղկացած՝ «պետք է նորոգել»։

Որը կիրակի էր։ Ընտրության դահլիճը և մյուս սենյակները լցված էին ընտրողների բազմությամբ։ Շատ հետաքրքիր կանանց շարքում յերևում էր և Գայանեն տիկին Բախտամյանի հետ։ Ներքևում տիրում էր անասելի աղմուկ։ Նախագահն անընդհատ զանգահարում էր։ Թանձր մթնոլորտի մեջ յերևում էր ճաղատ, սևահեր, շիկահեր, կարմիր և սպիտակ գլուխների մի խայտաբղետ խառնուրդ, որը ճիշտ նկարչի պալիտրային էր նմանում։

Ամբակում Աֆանասյևիչի կարմրակաշի գլուխը փայլում էր ինչպես մի վեթխարի գնդասեղ ահագին տիկի մեջ խրած։ Նա կանգնած էր դահլիճի մի հայտնի տեղում, վոտները միմյանցից մի արշին հեռու դրած, ձեռները գրպանում, փորը դուրս գցած։ Հանդիսավոր ժպտալով, նա նայում էր սկսվող պատերազմին, ինչպես մի զորապետ, որ կանխապես համոզված է յուր զորքի հաղթությանը։ Նրա աջ ու ձախ կողմերում կանգնած էին Վեքիլյանը և Բարաթյանը։ Վերջինը մերթ ընդ մերթ նայում էր դեպի վեր և ժպտում Գայանեյին։ Նորատի տիկինը սաստիկ հետաքրքրված էր քվեարկության հետևանքով։ Յեթե յուր Իսակին սևացնեին, ո՛ո, նա անչափ պետք է վշտանար։

Վերջացավ թերթիկների ընթերցումը։ Առաջին ընտրելին Ամբակում Աֆանասյևիչն էր։ Վեքիլյանը յոթներորդն էր, իսկ Բարաթյանը քսանիններորդը։ Ուրեմն հույս կար ընտրվելու։

Ամբակումին ծափահարեցին. նա ընտրված էր։ Անցավ և Վեքիլյանը։

«Իսակ Գերասիմիչ Բարաթով», լսվեց հանկարծ նախագահի ձայնը։

Գայանեյի ականջները կարմրեցին, նա դարձավ մարմնացած

լռությունը։ Նա հետևում եր նախագահի ձեռքին, որ մեկ-մեկ բաց եր թողնում քվեները փայտյա գավաթի մեջ։ Նա ականջ եր դնում քվեներ պարունակող արկղիկի ձայնին, արդյոք շատ ե մնում այնտեղ, արդյոք կնտրվի՞ յուր պաշտելին, յուր անզուգական Իսակը, որ ահա այնտեղ կանգնած խոսում ե, ծիծաղում, զվարճանում յուր ներքին անհանգստությունը քողարկելու համար։

Յեվ նա հռչակվեց ընտրված։

Ծափահարությունների աղմկից շփոթված, նա բարձրացավ վեր, մոտեցավ Գայանեյին։ Նրանք յերկուսնել յերջանիկ եյին, յերկուսի յել սիրտը բաբախում եր։ Գայանեն տակավին դողում եր, բայց այժմ՝ ուրախությունից։ Նրա ընտրածը հասարակության ընտրածը դարձավ։ Վաղը մյուս օրը նա կփայլի յուր խելքով, յուր ուսումով, յուր հռետորական տաղանդով։ Ահա այժմ կերևա, թե ինչ ուժ ե Բարաթյանը և որքան ճաշակ ու խելք ուներ Գայանեն, որ նրան ընտրեց։

Խուռն բազմությունը ճեղքելով, նրանք դուրս յեկան փողոց։

— Ուրախ ես,— հարցրեց Իսակը։

Գայանեն ավելի ամուր կպավ նրա թևին։ Նա խոսք չեր գտնում յուր յերջանկությունը արտահայտելու։

— Ուրեմն,— շարունակեց Իսակը,— այսօրվանից յես սկսում եմ հասարակությանը ծառայել։ Այո, ծանր պարտականություն հանձն առի, եհ, ոչինչ, կաշխատեմ սև յերես չմնալ իմ ընտրողների առաջ։ Նորերը հանդես են գալիս և քշում են ասպարեզից հներին։ Կյանքի անիվը պտտվում ե, ով խելք ունի, նրա յետևից պետք ե ճանկի, որ բարձրանա վերև, որպեսզի նորից գլորվի ցած։ Բախտավորը նա յե, որ ժամանակին կաշխատի ինքը իջնել, որ չմնա անիվի տակ և ջախջախվի։ Յեթե ճակատագիրը վիճակել ե ինձ հաջողություն, կգրկեմ նրան ուրախ սրտով։ Սիրելի, անգին Գայանե, յեղիր իմ օգնականը. թևեր տուր ինձ և յես կսավառնեմ բարձր մինչև այն աստիճան, որ ամբոխը վե՛ր կողմ նայի՝ ինձ և միմիայն ինձ տեսնի։ Սիրտս լցված ե փառասիրության զգացումով, և յես կամենում եմ միշտ հաղթել, միշտ առաջ գնալ, միշտ փայլել քո և իմ յերջանկության համար։

— Իսկ յես այնքան ավելի կհպարտանամ, կպարծենամ քո անունով, որքան նա բարձր կհնչի։ Գիտես, յես ուզում եմ, որ դու լինես կամ մի հռետոր կամ մի հայտնի հասարակական գործիչ, մի խոսքով, յես ուզում եմ, որ դու բարձր լինես ամբոխից, որ քեզ հարգեն, պատվեն, սիրեն, ինչպես մի հազվագյուտ մարդու։

— Հասկանում եմ, հասկանում եմ, քո քնքուշ սրտի մեջ էլ հպարտություն և փառասիրություն կա։ Ո՜հ, յես կաշխատեմ արդա-

բացնել քո հույսերը։ Այսօր չես իրավասու ընտրվելու, իսկ չեկող տարի այսօրվա որը դու ինձ կտեսնես դպրոցի հոգաբարձու։ Յեվ գիտես վո՞ր դպրոցի. այնտեղ, ուր այժմ տեսուչ է մեկը, վոր ինձ կռիվ է հրատարակել։

Գայանեն իսկույն ընազդմամբ հասկացավ, թե նրա խոսքը ում մասին է։ Մի անորոշ, անբացատրելի յերկյուղ հանկարծ համակեց նրա սիրտը, և նա հուզված ձայնով ասաց.

— Վո՛չ, Իսակ, աշխատիր վոչ վոքի հետ չթշնամանալ։ Յես չեմ ուզում, հասկանո՞ւմ ես, չեմ ուզում, վոր դու թշնամիներ ունենաս, մարդիկ կարող են քեզ վնասել։

— Վոչ վոք չի կարող ինձ վնասել և վոչ մի թշնամուց յես չեմ վախենում։ Մանավանդ ահա այսպիսներից և սրա ընկերներից։

Դեմ ու դեմ հապաղ քայլերով գալիս եր Մսերյանը, ձեռները մեջքին դրած և ցրված հայացքով նայելով այս ու այն կողմ։ Բարաթյանը, գդակը մի արշին վեր բարձրացնելով, գոչեց հայերեն.

— Պատիվ ունեմ...

Մսերյանը հազիվ կարողացավ հանել գլխից յուր լայնեզր գլխարկը, վոր թեերը կտրված ագռավի պես փռվել եր նրա ուսերի վրա։ Միքանի քայլ հեռանալով, նա կանգ առավ, մի փիլիսոփայական հանգիստ հայացք ձգեց զույգի յետևից, գլուխը շարժեց և արտասանեց.

«Չեմ կարծում, վոր քեզ համար այժմ մեծ պատիվ լինի Մսերյաններին բարևելը»։

Յեվ նույն փիլիսոփայական հանդարտությամբ շարունակեց յուր ճանապարհը։

II

Դիմաքսյանի հիվանդությունը սուր բնավորություն ստացավ։ Բժիշկ Սալամբեկյանը, տեսնելով, վոր նա թոքերի բորբոքում ունի, հրավիրեց յուր արհեստակիցներից մի քանիսին կոնսիլիումի։ Վճռեցին, վոր հիվանդի դրությունը շատ վտանգավոր է։ Նրան ժամանակավորապես փոխադրեցին հենց նույն տանտիրուհու մոտ մի ուրիշ, ավելի հարմար սենյակ։ Մսերյանը գիշեր ու ցերեկ չեր հեռանում նրա անկողնու մոտից։

Միքանի որ շարունակ Դիմաքսյանն այնպիսի ծանր վիճակի մեջ եր, վոր Սալամբեկյանը սաստիկ վախեցավ։ Մի որ նա յուր յերկյուղը հայտնեց Մսերյանին, և յերկուսն ել արտասվեցին իրենց ընկերոջ մասին։ Սակայն դա հիվանդության տագնապալի որերն եյին, անցան, և հիվանդը նորից առողջանալու հույսեր տվեց։

Այդ միջոցին դպրոցի գործերը խառնակ դրության հասան։ Հակառակորդները ուրախ էին այդ անկարգության։ Ինչյաթյանը մինչև անգամ ցանկանում էր, որ Դիմաքսյանն այլևս անկողնուց չվերկենա, թեև արտաքուստ ցավակցություն էր հայտնում։ Բայց նրա հույսերը չիրագործվեցին։ Դիմաքսյանն ամիս ու կես պառկելուց հետո, վերկացավ և փոքր առ փոքր սկսեց պարապել գործերով։ Առաջին շաբաթ հակառակորդները խնայեցին նրան, չէին վրդովեցնում։ Բայց անցավ այդ շաբաթը, և կրկին պատերազմը սկսվեց։ Ամեն օր նա անախորժ ընդհարումներ էր ունենում, վրդովվում և հուզվում էր, նորից յերես առ յերես մարդկանց անարդարությանը հանդիպելով։

Այդ բոլորը, հարկավ, ազդում էին նրա առողջության վրա, որ բավական քայքայվել էր։ Նա նիհարել էր, գունատվել, այտերը դուրս էին ցցվել, աչքերի շրջանակները և ականջները կիտրոնի պես դեղնել էին։ Չնայելով յուր հուզվելուն, որ այժմ մարմնավոր տկարությունից էր առաջանում, հոգեպես չէին կրկնվում այն բարոյական սարսափելի տագնապները և ջղաձգությունները, որ այնքան տանջում էին նրան։

Սակայն նա չկարողացավ շատ էլ սառնարյուն լսել Բարաթյանի և Վեքիլյանի իրավասու ընտրվելու լուրը։ Նա, որ ծառայել էր ամեն տեղ հասարակական կռիվների հանուն յուր համոզմունքների, նա, որ յերբեք չէր բավականանում խաղաղ գործունեությունով, այժմ սկսեց նախանձել Բարաթյանի և Վեքիլյանի դիրքերին։ Ցեթե այդ մարդիկ ստացած լինեին փողով վարձատրվող ավելի բարձր պաշտոններ, գուցե նրանց ծաղրեր, յենթարկեր յուր կծու հեգնությանը։ Բայց տեսնել նրանց հասարակական այնպիսի պաշտոններում, ուր պետք է գործեին գործելու համար, անվարձ, պետք է ծառայեին հասարակության իրենց խելքի և գիտության պաշարով—այդ նրա համար անախորժ էր։ Այս հանգամանքը նա մի տխուր ապացույց էր համարում այն բանի, թե հասարակությունը հող է պատրաստել այնպիսի գործիչների համար, որոնք այժմ նրա գաղափարական հակառակորդներն էին։

Ծանր աշխատություն, համառ ջանքերի և ընդհարումների շնորհով նա հաջողել էր դպրոցի մեջ մտցնել կարելի փոփոխությունները։ Այժմ գիշերոթիկները հագնվում էին ավելի լավ, ավելի մաքուր, ուտում էին ավելի թարմ և սննդարար կերակուրներ։ Դպրոցի խարխուլ շինությունը պահվում էր որինակելի մաքրությամբ։ Հեռացրած էին միքանի կոպիտ, ծույլ և պղերգ վերակացուներ։ Աշակերտները վայելում էին ավելի ազատություն։ Նրանց մշտական թախծալի և

մռայլ դեմքերի վրա չերևում էյին զվարթություն, ժպիտ և ծիծաղ: Չկար այլևս առաջվա վախը ուսուցիչներից և վերակացուներից: Կար միայն սեր և հարգանք: Խստությանը փոխարինել էր խելացի, գիտակցական, մարդավարի հարաբերություն: Աշակերտները պարապում էյին ավելի յեռանդով, ավելի սիրով և ավելի հաջող: Նրանք գոհ էյին իրենց վիճակից և հասկանում էյին, թե ում են պարտական այդ փոփոխությունով: Դիմաքսյանին նրանք հարգում էյին և սիրում ինչպես իրենց հոգատար հովանավորին և պաշտպանին: Յեվ վոչ վոք չէր կարող այդ պաշտպանի մասին մի վատ խոսք ասել. վոչ վոք իրավունք չուներ նրա անունն արտասանել առանց հարգանքի, յեթե չէր կամենում յենթարկվել ծաղրի, ատելության, այո, մինչև անգամ հալածանքի:

Մինչ այս մինչ այն՝ ձմեռն անցավ: Դիմաքսյանը բոլորովին կազդուրվեց, և դարձյալ զգում էր գործելու, պատերազմելու, հարվածելու և հարվածներ ստանալու անսահման յեռանդ: Բայց հասավ գարունը, և նրա մեջ անսպասելի կերպով տեղի ունեցավ մի տարօրինակ հեղափոխություն: Նրա յեռանդը սկսեց թուլանալ, բարոյական ուժերը տկարացան. նրան տիրեց մի ինչ-վոր ծանր, ճնշող թախիծ: Կյանքը նրա համար առաջին անգամ թվաց տաղտկալի յուր բոլոր աղմուկներով և իրարանցումներով: Այժմ նա թե դպրոցում և թե տանը պարապվում էր ակամա: Վոչ մի միտք, վոչ մի նվիրական գաղափար առաջվա չափ նրան չէր գրավում: Նրա հոգին ձգտում էր դեպի մենություն: Նա ուզում էր առանձնանալ մարդկանցից և անձնատուր լինել յուր մելամաղձիկ, անորոշ մտախոհություններին: Ավարտելով դասերը դպրոցում, նա կամենում էր հանգստանալ — չէր կարողանում, փորձում էր կարդալ ու գրել — անաջող: Նա դուրս էր գալիս տնից և թափառում դես ու դեն, ինչպես թանգագին, անփոխարինելի կորուստ կրած մի մարդ, վոր վոչ մի տեղ հանգստություն չէ գտնում: Յերբեմն նա գնում էր վորևէ այգի, մտնում էր նեղ ճեմլիքները: Կար մի դառն, բայց, միևնույն ժամանակ, ախորժելի բան այդ առանձնության մեջ:

Ժամերով նա դիտում էր արեգակի ճառագայթների ուրախ խաղը ծառերի նորաբողբոջ տերևների հետ, ականջ էր դնում ոդի հանդարտ շշուկին, թռչունների ուրախ ծլվլոցներին: Նա պառկում էր նորաբույս դալար խոտի մեջ, խոնավ գետնի վրա, յերեսը դեպի վեր և աչքերով հետևում գարնանային կապույտ յերկնակամարում նազելի և հպարտ կերպով սահող ամպերին: Թեթև, հեշտաշունչ, նուրբ ոդը լեռնային մաքուր զեփյուռի պես թափանցում էր մինչև նրա վոսկոր-

ների խորքը։ Թևատարած ուրուրները սլանում էին անհուն բարձրության վրա սևորակ ամպի փոքրիկ բեկորների պես։ Ցեվ նրանց յերկսայր ստվերները մեղմիկ և արագ սահում էին գետերի մակերևույթով, լեռների կրծքով, անտառների գագաթներով, դաշտերի և մարգերի վրա։

Սովորաբար նա նստում էր գետի ափից վոչ հեռու մի վիթխարի կաղամախի տակ։ Ցեվ այստեղ դառն ու ախորժելի զգացումը ավելի սաստիկ էր համակում նրա սիրտը։ Մոռացվում էր իրականը, միտքն ակամա, ինքն ըստ ինքյան, սլանում էր դեպի յերկնքի խորությունը։ Թևավոր թագուհիների յեթերային բարձրությունը, հեռավոր ամպերի վսեմ ընթացքը, տիեզերքի անհուն, անհասանելի ծավալն ընդլայնում էին նրա յերևակայության հորիզոնը։ Նրա իմացկանությունը թըռչում էր դեպի բարձր, քան ուրուրները, հեռու քան ամպերը, արագ, քան արևի լույսը, և այնտեղից դիտում դեպի վեր յերկինքը, դեպի վայր յերկիրը։

Մերթ ընդ մերթ մի աններդաշնակ աղմուկ, մի կոպիտ ձայն ընդհատում էր նրա մտածմունքների թելը և նրա ուշը գրավում դեպի յուր շուրջը։ Դա զրոսնող մարդկանց ձայներն էին, մի յերեխայի ուրախ ճիչ—անախորժ, մի պառավ դայակի բարկացկոտ ձայն—ավելի վատ, կամ մի յերիտասարդ մոր գվարթ քրքիջ—նույնքան տաղտկալի։

Նա յերեսն իսկույն դարձնում էր և դարձյալ նայում դեպի վեր։ Այնտեղ շարունակ սլանում էին ուրուրները, սուր աչքերով ցածում վորսեր վորոնելով։ Ծառերի խիտ ճյուղերի մեջ թաքնված ճնճղուկներն անընդհատ ծլվլում էին, ինչպես լարված մեքենայիկներ։ Գետի հանդարտ հոսանքը թմրեցուցիչ ոդի մեջ տարածում էր մեղմ շշուկ, քաղցր մեղեդիով օրորելով մարդկային լսելիքը։ Արևի հեշտալի պայծառ շողքերը փետափի պարզ ճահիճների կանաչագույն մակերևույթի վրա գոյացնում էին բյուրավոր աղամանդներ։

Նա ուզում էր ներհել։ Ներհել բնության ծոցում, հեռու մարդկանց իրարանցումից, հեռու աշխարհի ապականված ալիքներից։ Հեռու նույնիսկ յուր հոգու այն տարրերից, վոր քաղաքակիրթ գոյության ընթացքում անխախտելի կապ էին հաստատել նրա և մարդկության մեջ։ Սակայն նրա սիրտն անդորր չեր։ Այնտեղ բարձրացել է մի նոր ալեկոծություն, հոգին խռովված է, միտքը շփոթված։ Ցեվ նա հառաչելով դառն մելամաղձությամբ արտասանում է.

«Ա՛խ, վորքան տխուր է առանց սիրո ապրելը...»։

Պյոտր Սոլոմոնիչը հիացած էր յուր պրոտեժեներով։ Չէր անցել չորս ամիս, յերիտասարդ իրավաբանները արդեն ցույց էին տալիս, թե վորքան հասկանում են իրանց պաշտոնի բարձրությունը։ Ամեն մի նիստին նոր հարցեր էին զարթեցնում, գրգռելով հին իրավաբաններին և ուրախացնելով նորերին, վորոնց ամենաճարտար որգանը Բարաթյանն էր։

Գայանեն ամեն յերկուշաբթի յերեկո այցելում էր Դումայի նիստերը և հրճվանքով լսում յուր ամուսնու ճառերը։ Բարաթյանը խոսում էր հանգիստ հոգով, անվրդով, առանց շեղվելու և շփոթվելու, ինչպես մի փորձառու հռետոր։ Յերբեմն նա յուր ճառը համեմում էր սրամիտ դարձվածներով, վորով պակաս հաճություն չէր պատճառում լսողներին։ Կարճ ժամանակում նա դարձավ շատերի սիրելին, հարգելի դեմք բռնելով իրավաբանների շարքում։ Նրան ընտրեցին մի քանի մասնաժողովների անդամ։

Նա թողել էր կրակից ապահովող ընկերության գործակալի պաշտոնը։ Դա նրա համար մի մեծ նյութական կորուստ չէր այժմ։ Հայրը տալիս էր նրա տնային ծախսերը։ Կնոջ կալվածներից ստացվող յեկամուտը ծածկում էր նրա մյուս ծախսերը, և նա ապրում էր այնքան ապահով, վոր փողի համար ծառայելու կարիք չուներ։ Բայց վորպեսզի ձրիակեր վորդու և պարազիտ ամուսնու հռչակ չվայելի, նա գնեց մի նշանավոր արդյունաբերական տան մի քանի բաժնետոմսեր։ Միևնույն ժամանակ, սուր աչքերով դիտում էր, թե վորտեղ կարելի յե մի արդյունավոր և քիչ աշխատություն պահանջող պաշտոն գտնել, վոչ այնքան փողի, վորքան յուր դիրքը ավելի ամրացնելու համար։

Այսպես թե այնպես, այժմ նա վարում էր հանգիստ, բախտավոր և գործունյա քաղաքացու կյանք։ Առավոտը զարթնում էր տասը ժամին, աչքի յեր անցկացնում տեղական լրագիրները։ Գայանեյի հետ զվարճախոսելով թեյ էր խմում, հետո առանձնանում յուր սենյակը պարապվելու։ Նա գրում էր ֆինանսական-տնտեսական մի շարադրություն քաղաքային գործերի մասին։ Տասներկու ժամին նա նախաճաշում էր և տնից դուրս գալիս։ Ճաշում էր նա յերեկոյան հինգ ժամին կամ ավելի ուշ—ֆրանսիական ձևով։ Այնուհետև մի փոքր հանգստանում էր։ Հետո յեթե նիստ ուներ—գնում էր, յեթե վոչ—Գայանեյի հետ այցելում էր թատրոն կամ մի ուրիշ տեղ։

Յերբեմն նա յերեկոյան տնից դուրս էր գալիս մենակ և վերադառնում էր ուշ գիշերին։ Այդ ժամանակ Գայանեն անհանգիստ

սպասում եր նրա վերադարձին, նստած լուսամուտի մոտ, ականջները լարած սպասելով կառքի ձայնին։

Ներս եր մտնում Բարաթյանը մերթ ուրախ ու զվարթ և մերթ մտազբաղ դեմքով։ Գայանեն նայում եր նրա աչքերին, միշտ աշխատելով այնտեղ կարդալ նրա հոգեկան տրամադրությունը։ Այս սովորույթը հաճախ բարկացնում եր Բարաթյանին, և նա մեղմիկ, բարեկամաբար հանդիմանում եր կնոջը։ Գայանեն գլուխը թեքում եր կրծքին և լռում։ Նրա հոգու խորքում կրկին զարթնել եր վաղուց մոռացված, վաղուց խեղդված չար կասկածը։ Նա զգում եր ակամա անհանգստություն։ Միմյանց հետևից նրա գլխում հղանում եյին զանազան մտքեր, մեկը մյուսից վատ, ատելի և զարշելի։ Նա ինքը զզվում եր այդ մտքերից և աշխատում եր խույս տալ նրանցից, ինչպես մի չարագուշակ յերևույթից, որ սպառնում եր խլել նրա անդորր յերջանկությունը, բայց չեր հաջողվում։ Միշտ այդ մտքերը հետևում եյին նրան ուր և լիներ, ինչ և աներ։

Բարաթյանի սուր աչքերից, հարկավ, չեր կարող խուսափել այս փոփոխությունը։ Յերբեմն նա հասարակ, անփույթ կերպով հարցնում եր.

—Դու անհանգիստ ես, Գայանե։

—Վո՛չ։

—Ինչո՞ւ չես մտիկ անում ինձ և հառաչում։

Գայանեն կամ մի կերպ խույս եր տալիս պատասխանից կամ բռնի կերպով ծիծաղում եր և փաթաթվում ամուսնու պարանոցին։ Կեղծիքը և արվեստականությունը այնքան պարզ եյին, որ աննկատելի չեյին կարող մնալ Բարաթյանի համար։

Մի գիշեր Բարաթյանը տուն վերադառնալով, տեսավ, որ Գայանեն լալիս ե։ Այդ առաջին տխուր արցունքն եր, որ նա տեսնում եր կնոջ աչքերի մեջ։

—Ի՞նչ ե պատահել։

—Վոչինչ։

—Դու ելի հուզված եյիր։

—Այո՛։

Բարաթյանը մեջքից թեքվեց, համբուրեց նրան արտասանելով.

—Գուցե նրանից ե։

—Այո՛... չգիտեմ... կարող ե լինել...

Յեվ յերկուսն ել խորհրդավոր կերպով նայեցին միմյանց յերեսին, յերկուսն ել լռեցին։

Այնուհետև Բարաթյանը հաճախ նրան տեսնում եր արտասվելիս։

Նա միշտ պատճառը վերագրում էր կնոջ «բնական դրությանը», աշխատելով մոռանալ ուրիշ, ավելի կարևոր, ավելի հիմնական պատճառներ: Նա ձգնում էր Գայանեյին զվարճացնել սրախոսություններով: Նա պատմում էր ծիծաղաշարժ դեպքեր Դումայի նիստերից, ներկայացնում էր այս կամ այն իրավաբանին, ինչպես մի տաղանդավոր դերասան: Նրա կոմիքական ձևերը Գայանեյին չէին դուր գալիս, վորքան էլ ծիծաղելի և զվարճալի լինեին: Կինը ցանկանում էր, վոր ամուսինը ավելի ծանրաբարո լինի, ավելի լուրջ, ինչպես վայել էր նրա դիրքին և հասակին: Բայց և այնպես այդ միջոցներին նա յերջանիկ էր, վորովհետև ամուսնու հետ էր: Իսկ հետո...յերբ Իսակը դուրս էր գալիս տնից, յերբ մնում էր մենակ, սկսվում եյին տխուր, անտանելի ժամերը: Նրա սրտում նորից բարձրանում էր սաստիկ ալեկոծություն:

Ինչեր չէր յերևակայում, ինչ սարսափելի տեսարաններ չեյին ներկայանում նրան: Թվում էր նրան, վոր Իսակը այժմ նրան չի սիրում, ձանձրացել է բոլորովին... Այժմ, ավելի քան յերբևէ, նա խույս էր տալիս ազգականներից: Այցելողներին ընդունում էր ուրախությամբ, իսկ ինքը վոչ մի տեղ չէր ցանկանում գնալ:

Յերբեմն նրա մոտ գալիս էր տիկին Բախտամյանը և ամեն անգամ հանդիմանում էր, թե սառել է դեպի յուր ամենամոտիկ ազգականները, վոր «աչքի լուսի պես՚ են սիրում նրան»:

—Այդպես շուտ գոռոզացա՞ր,—ասաց մի անգամ տիկինը:

—Յես չեմ գոռոզացել:

—Ուրեմն, ինչո՞ւ չես գալիս:—Հասկանում եմ, հասկանում եմ, մարդդ չի թողնում: Նա չի ուզում քեզանից բաժանվել. այնքան սիրում է քեզ: Գիտե՞ս, Գայանե, յես շատ ուրախ եմ, վոր այդպիսի ամուսին ճարեցիր: Իսակը օրինակելի մարդ է, նա քեզ պաշտում է, նա հոգին չի խնայիլ քեզ համար: Ուրախացի՛ր, ուրախացիր, վոր այդպիսի ամուսին ունես, դա յերկնային յերջանկություն է:

Գայանեն վոչինչ չպատասխանեց: Տիկնոջ խոսքերի մեջ նա զգում էր նուրբ, հազիվ ըմբռնելի հեգնություն, վոր կծու կերպով շոշափում էր նրա զգայուն սիրտը: Հանկարծ նրանց աչքերը հանդիպեցին միմյանց, և, ինչպես յերկու միմյանց հերքող հակատարրեր, իսկույն արագությամբ խույս տվեցին իրարուց:

Տիկին Բախտամյանը նկատելի կերպով շփոթվեց, բայց նույն վայրկյանին զսպեց իրան: Գայանեն սրտում զգաց անտանելի ատելություն և յերկյուղ դեպի այդ կինը: Կարծես, նրա առջև նստած էր մի վոխերիմ թշնամի, մի վտանգավոր, սարսափելի թշնամի, վոր յուր քնքուշ բարեկամական ձևերի տակ թագցրած էր կորստաբեր ձգտում:

Նա պատրաստ եր հենց իսկույն, նույն վայրկյանին ցույց տալ դըռները կամ մի թունավոր խոսքով վիրավորել նրան։ Բայց ինչու, ինչ փաստի հիման վրա, ինչ մի շոշափելի արարքից դրդված...

Յերկյուղը, կասկածը և ամոթխածությունը կաշկանդեց նրան։ Նա աշխատեց խեղդել յուր սրտի մեջ բռնկված թշնամական զգացումը։

Իսկ տիկին Բախտամյանն արդեն իշխել եր ինքն իրան։ Այժմ նա հանգիստ խոսում եր առօրյա բաների մասին, և այնպես, վոր, կարծես, վոչինչ չեր տեսնում կամ զգում։ Նա մինչև անգամ ուշադրություն չեր դարձնում Գայանեյի լռության վրա, վոր ուրիշ անգամ կարող եր վիրավորել նրան մինչև հոգու խորքը։ Նա հանդարտ վերկացավ և, ամուր սեղմելով Գայանեյի ձեռը, դիմեց դեպի դռները։ Գայանեյի մարմնով անցավ տարորինակ սարսուռ, յերբ յուր ձեռը զգաց նրա ձեռի մեջ. մի սարսուռ, վոր մարդ կարող է զգալ, յերբ նրա մարմնին հանկարծակի դիպչում է խոնավ, պաղ և թունավոր սողուն։ Ճանապարհ դնելով Բախտամյանին, նա անցավ յուր ննջարանը, գլուխը դրեց բարձին և ձեռներով ամուր բռնեց գլուխը։

«Մի՞թե յես չեմ սխալվում, մի՞թե յես չեմ սխալվում», կրկնում եր նա, ավելի ու ավելի սեղմելով գլուխը։

Հետզհետե նա դառնում եր զգայուն, դյուրագրգիռ։ Յերբեմն ցույց եր տալիս կապրիզներ՝ նույնիսկ ուտել-խմելու վերաբերմամբ։ Մերթ նա պահանջում եր մի վոր և է տարաժամ պտուղ, վոր անհնարին եր գտնել, մերթ ուտում եր այնպիսի բաներ, վոր ուղղակի վնասակար եյին։

Ամուսինը, այդ կապրիզները տանելով, յերբեք չեր վրդովվում, յերբեք չեր բողոքում, վորովհետև գիտեր «բնական» պատճառը։ Բայց, կատարելով կնոջ պահանջները, յերբեմն այնպիսի խոնարհ և հեզ դեմք եր ցույց տալիս, վոր տեսնողը կարող եր կարծել, թե նա մի տեսակ կամավոր նահատակ է քմահաճ կնոջ ձեռքում։ Դա մի ինքնուրույն խելացի միջոց եր Գայանեյի սրտից վորոշ կասկածներ հեռացնելու համար...

Ամբողջ օրը Նորատի տիկինը յուր ձեռքով կտրում եր, ձևում ու կարում փոքրիկ, մանկական գլխոցներ, շապիկներ ու սավաններ։ Պահարանը արդեն լցվել եր, բայց նա չեր դադարում նորերը կարելուց, և ամեն բան ուզում եր ինքը անել։ Այդ զբաղմունքը նրան պատճառում եր անսովոր հաճություն։ Յերբ ծալում եր և յուր գեղեցիկ մատներով հարթում մի թզաչափ շապիկները, նրա յերեսի վրա խաղում եր մի հանդարտ, անդորր ժպիտ։ Նրա միտքը սլանում եր հեռու, յերևակայությունը կենդանի պատկերացնում եր այն փոքրիկ

տարածին, վորի քնքուշ, փխրուն մարմնիկը պետք է ծածկվեր այդ ձերմակեղենով։ Արդյոք ում կնմանի—հորը, թե՞ մորը, բաց-կինամոնագույն աչքերով կլինի, թե՞ կապույտ աչքերով։

Այդ միջոցներին պատահում էր, վոր նա հանկարծ գլուխը բարձրացնում էր և ձեռը դնում կրծքի վրա։ Նա գունատվում էր, շրթունքները մեղմիկ ցնցվում եյին և աչքերի մեջ ցոլանում էր յերջանկության-հետ և սարսափը։ Հետո, ծանր շունչ քաշելով, մելամաղձիկ ու յերկյուղած դեմքով նստում էր անկողնի վրա։ Աչքերը լցվում եյին արցունքով, և նա հանդարտ ու կամացուկ լալիս էր, ինչպես առավոտները ցողում է գարնանային ամպամած և խաղաղ յերկինքը։ Յեվ վորքան մոտենում էր տագնապալի օրը, այնքան ավելի Գայանեն դառնում էր զգայուն, փափկասիրտ, այնքան նրա քմահաճույքները ավելանում եյին։ Մի անգամ ամուսնուց պահանջեց, վոր նա տնից չգուրս գա, միշտ, առավոտ-յերեկո, նստի յուր մոտ։

—Դու կատակ ես անում, Գայանե,—հարցրեց Բարաթյանը զարմացած։

—Յես կատակ չեմ անում, լուրջ եմ ասում, դու միշտ պետք է իմ մոտ լինես, միշտ...

— Ինչու։

— Յես այսպես եմ ուզում։ .

— Շատ լավ, յես բախտավոր կլինեյի մի վայրկյան անգամ չհեռանալ քեզանից, բայց գործերս ով կկատարի։

— Յես չգիտեմ, ինչ ուզում ես, արա։ Դու գործ չունեիր, ինձ խաբում ես, դու ազատ ես, չեմ ուզում, վոր դու ինձանից հեռանաս։ Վախենում եմ։ Ինձ անպատճառ մի վատ բան պետք է պատահի։

— Պատահելու չէ այն, ինչ-վոր բնականաբար պետք է պատահի։ Դու առաջինը չես և վոչ էլ վերջինը, մի վախենար, սիրելիս, ամեն բան հաջող կանցնի։

Յեվ մի քնքուշ, սիրալիր, ջերմ համբույր քաղեց Գայանեյի գունատ այտից։

— Վո՛չ, ինձ խոսքերով մի մխիթարիր, գործով ցույց տուր, վոր սիրում ես։ Սիրտս դողում է, յերբ մենակ եմ մնում։ «Նրանից» չէ, հասկացի՞ր; ուրիշ բան է, ուրիշ բան...

— Ուրիշ բա՞ն...

— Այո՛, դու... դու... ինչ չես սիրում, դու ինձանից փախչում ես, իհարկե, չես տգեղացել եմ, ոո, չես գիտեմ, դու լավ մարդ չես։

Յեվ նա սկսեց հեկեկալ։

— Գայանե՛, դու ջղային ես, տկար ես, իհարկե, այդ հասկանա-

լի չէ։ Բայց ինչու ես ինքդ քեզ հուզում, այդ վտանգավոր է, քեզ հանգստություն է հարկավոր։

— Հարկավոր է, ուրեմն թող ինձ, որ հանգիստ լինեմ։ Ասա, որ դու ինձ սիրում ես...

— Իհարկե, սիրում եմ, միթե դա նորություն է, որ ասեմ։

— Ուրեմն քո աչքը ուրիշի վրա չէ, իմ տգեղությունը... այ, տեսնում ես, ինչպես փոխվել եմ... քեզ չեմ զզվեցնում։ Այնպես չէ՞, ասա, չե՞ս եմ միայն քոնը, դու ինձ ես պատկանում հոգով ու սրտով։

— Քեզ և միմիայն քեզ եմ պատկանում։

— Ցավ հավիտյան իմը պետք է լինես։

Հավատյան քոնը և այն փոքրիկինը։

— Փոքրիկը... Ա՜խ, չես ինչ հիմար եմ, ճշմարիտ է, դու նրան չես թողնի, դու նրա մորը չես զոհի մի ուրիշին։ Համբուրիր ինձ, համբուրիր...

Այս տեսարանը կրկնվում էր գրեթե յերկու-յերեք օրը մի անգամ պես-պես փոփոխություններով։

Վերջապես Բարաթյանը սկսեց ձանձրանալ կնոջ կասկածներից, նախանձից և կապրիզներից։ Մի օր, յերեսը արտասվող Գայանեյից դարձնելով, արտասանեց։

«Ո՛հ, ինչ տաղտկալի յե կնոջ չափազանց սերը...»։

VI

Նույն միջոցներին Պյոտր Սոլոմոնիչը զարմացած էր մի բանի վրա. արդեն Գայանեն բավական ժամանակ էր չէր այցելում յուր քեռուն, այնինչ՝ նրա ամուսինը ճիշտ շաբաթը յերկու անգամ ներկայանում էր պատկառելի քաղաքացիին։ Նա պատճառը հարցնում էր կնոջից և մի դրական պատասխան չէր ստանում։

— Աստված գիտե ինչու չի գալիս, յերևի մ ա ղ ա մ է դարձել, փքվել է,— ասում էր տիկին Բախտամյա՛նը։

Պյոտր Սոլոմոնիչը հարցնում էր Բարաթյանից։ Սա նույն անորոշ պատասխաններն էր տալիս. «ժամանակ չունե, տկար է, „անհարմար» է համարում տնից դուրս գալ»։ Հարկավ, այդ բոլորը Պյոտր Սոլոմոնիչին չէյին գոհացնում։ Նա գուշակում էր, թե կա, անշուշտ, մի ուրիշ, ավելի հիմնավոր, պատճառ։ Նա տեսնում էր, որ յուր կինն էլ մի առանձին ցանկություն չի հայտնում Գայանեյին տեսնելու, թեև արտաքուստ տրտնջում է նրա չգալու դեմ։

— Ինձ այնպես է թվում, որ ձեր միջով սև կատու յե անցել — ասաց, վերջապես, մի անգամ ծերունին։

Տիկինը քմծիծաղ տվեց։ Ինչո՞ւ պիտի սև կատու անցներ, ինչ հաշիվ ունի նա Գալյանկի հետ այսուհետև։

— Ես պարտքս կատարեցի, վերջացրի, խոմ չեմ կարող ելի նրա համար մայրություն անել։

«Մայրություն» բառը տիկինը այնպես գրգռված, այնպիսի զզվանքով արտասանեց, վոր, կարծես, խոսքը աղախին լինելու մասին լիներ։

Հարցը մնում էր հարց, և Պյոտր Սոլոմոնիչը, ուսերը վեր քաշելով, չէր կարողանում հասկանալ կնոջ սառնության պատճառը։ Մի որ նա իրիկնադեմին կլուբից վերադարձավ սովորականից շատ վաղ։ Նա չափազանց վրդովված էր և ինքն իրան խոսում էր։ Նրա յերեսին գույն չկար, իսկ աչքերի մեջ փայլում էր անսովոր բարկություն։ Նախասենյակում նա, առանց վորևէ պատճառի, գոռաց սպասավորի վրա, վոր մոտենում էր նրա վերարկուն հանելու։ Նա մտավ ուղիղ հյուրասենյակ։ Ովսաննան Լիդոչկայի և Ելեչկայի հետ պարապում էր։

— Ի՞նչ եք անում այստեղ, չե՞ք կարող ձեր սենյակում խաղալ։ Ովսաննան վիրավորված վոտքի կանգնեց։ Մանկահասակ քույրերը ապշած նայեցին իրանց հորը, վորին հազիվ թե յերբևէ այդպես չարացած տեսած լինեյին։

— Ո՞ւր է ձեր մայրը,—գոչեց ծերունին։

— Ելեչկան, ցուցամատը բերանին դրած, մյուս ձեռը մեկնեց դեպի աջ։

Պյոտր Սոլոմոնիչը անհապաղ անցավ կից սենյակը։ Տիկինը սովորական զբոսանքից նոր վերադարձել էր և հագուստը փոխում էր։ Լսելով ամուսնու քայլերի ձայնը, նա ուզեց հանդիմանել, վոր առանց նախազգուշացնելու համարձակվում էր ներս մտնել։ Նա հետևում էր արիստոկրատ տիկինների որինակին, մարդուն թույլ չէր տալիս շատ ել համարձակ վարվել, այսինքն ուզած ժամանակը մտնել նրա սենյակը։ Բայց յերբ նայեց նրա այլայլված դեմքին, ապշեց։ Նրա ձեռները մնացին կրծքի կոճակների վրա։

Պյոտր Սոլոմոնիչը կանգնեց նրա դեմ ու դեմ, նայեց նրան վոտից մինչև գլուխ և դառն ծիծաղով արտասանեց.

— Գեղեցկուհին, ինչպես յերևում է, նոր է վերադարձել։

— Ի՞նչ է պատահել Պետյա։

«Պետյա» կամ «Պետկա» նա կոչում էր ծերունի Պետրոսին այն ժամանակ, յերբ փաղաքշանքով խոսելու կարիք էր լինում։

— Ինչ է պատահե՞լ... աստված ինձ բախտավորեցրել է։

— Ես չեմ հասկանում։

— Ոո՛ն, դու շատ լավ ես հասկանում,—մռնչաց Պյոտր Սոլոմոնիչը, ատամները չարաչար կրճտելով։

— Խելագարվել ես, ի՞նչ է։

— Ի հարկե, խելագարվել եմ, ծերացել եմ, այստեղս դրուստ չէ, մազերս-բամբակ, ինքս ուժից ընկած, թուլացած, տգեղացած, իսկ դու, դու, դու...

Նա շնչասպառ մի քայլ առաջ դրեց։ Նա դողում էր վոտից մինչև գլուխ։ Նա խոսք չէր գտնում սրտի կատաղությունը միանգամից արտահայտելու։ Տիկինը, ուսերը թոթվելով, կրկնեց, թե վոչինչ և վոչինչ չի հասկանում և շարունակեց կրծքի կոճակները կապել։ Բայց նա մասամբ կեղծում էր։ Յեթե ամեն բան չէր հասկացել, գոնե գուշակում էր գործի էությունը։ Նա զգաց,՝ վոր կատակի ժամանակ չէ, վոր, վերջապես, սկսվում է վաղուց սպասված փոթորիկը։ Միայն կամենում էր ժամանակ վորսալ, ուշ ու միտքը ժողովել, պաշտպանվելու փաստեր և միջոցներ գտնել։ Այնինչ՝ Պյոտր Սոլոմոնիչը, բռունցքները սեղմած, մի քայլ ևս առաջ դրեց և խեղդված ձայնով գոռաց.

— Անամո՛թ, խաբեբա՛։

Տիկինը հետ ու հետ քաշվեց, նայեց նրան վոտից մինչև գլուխ, ցույց տալով միաժամանակ և՛ զարմանք, և՛ բարկություն, և՛ վիրավորանք, և՛ արհամարհանք։ Թվում էր, վոր նա խոսք չի գտնում պատասխանելու ամուսնու չտեսնված, չլսված, կոշտ, կոպիտ և վայրենի խոսքերին։

Փոթորկի առաջին պտույտը անցել էր։ Ամենածանր խոսքը արտասանվել էր։ Պյոտր Սոլոմոնիչը, բռունցքները բաց արավ և շարունակեց մի քիչ հանդարտ յեղանակով։ Նա ասաց, թե գիտե յուր կնոջ նմանների սովորությունը։ Այո՛, տիկինը կզարմանա կեղծ կերպով, կգոռա, լաց էլ կլինի, կերդվի յել, բայց նրա համար միևնույնն է, ճշմարիտ է թե սուտ, անում է տիկինը թե չէ, բավական է, վոր մարդիկ խոսում են, բավական է, վոր Պյոտր Սոլոմոնիչը լսում է։

— Ախար ի՞նչ ես լսում, ի՞նչ։

— Չգիտես համ, խեղճ, վողորմելի, անմեղ կնիկ։

— Ո՞վ է խոսում, ի՞նչ են խոսում, ասա էլի, ասա, վոր յես էլ իմանամ։

— Ինձ համար միևնույնն է, ով վոր էլ խոսի... Տեր աստված, տեր աստված, այն էլ... հա, հիմա յեմ հասկանում, թե ինչու սիրտս չէր կպչում, ինչու ատում էյի...

Այստեղ տիկինը հասկացավ մնացյալը, վոր դեռ նրա համար կռահելի չէր։ Բայց նա արդեն ուշքի չէր յեկել և իշխում էր իրան

լիովին։ Այժմ յեթե Պյոտր Սոլոմոնիչը մարմնացած վրեժ դառնար, դարձյալ չէր կարող սոսկալի լինել նրա համար։

Անշարժ, անվրդով նա կանգնած էր մարդու առջև և խրոխտ կերպով նայում էր մերթ նրա նորից սեղմված բռունցքներին, մերթ կատաղի աչքերին։

— Զարմանում եմ,—արտասանեց նա հանդարտ յեղանակով, մինչև անգամ քմծիծաղ տալով,—զարմանում եմ, վոր չեք խփում։ Խփեցեք էլի, ինչո՞ւ յեք սպասում, յես պատրաստ եմ ամեն տեսակ վիրավորանք ստանալ։ Վերջացրեք, քանի վոր սկսել եք, յես սպասում եմ։

— Ուրեմն ճշմարիտ է, ասա, անպատկառ, ճշմարիտ է։

Տիկինը խորին հանդիմանությամբ և զզվանքով գլուխը յերերեց։ Ապա հանկարծ նրա դեմքը ընդունեց հպարտ արտահայտություն։ Նա հոնքերը վեր քաշեց, գլուխը բարձրացրեց և, ուսի վրայով ծուռ նայելով մարդու յերեսին, ասաց, յեթե նա կշարունակի այնպես մոռանալ ինքն իրան, յեթե մարդավարի չի խոսի, այս րոպեյին դուրս կգնա և այլևս չի վերադառնալ։

— Գնա, գնա էլի, կորիր այնպես, վոր փոշիդ էլ չմնա իմ տանը։

Տիկինը բարձրաձայն ծիծաղեց։ Ի՜նչ զվարճալի բան, նրան արտաքսում է մարդը. շատ լավ, շատ գեղեցիկ, նա կգնա, իսկույն, հենց այս րոպեյիս։ Բայց հասարակության առաջ նրա պատվի մասին պատասխանատու կլինի Պյոտր Սոլոմոնիչը։ Ուրեմն տերը նրա հետ։

Յեվ տիկինը մի քանի քայլ արեց դեպի դուռը, խրոխտ, հաստատ և անշեղ քայլեր։

Պյոտր Սոլոմոնիչը կարծեց, թե նա կարող է գնալ, կգնա և, իրավ, յերբեք չի գալ։ Նա յուր ճակատը շփեց և, ծանր հառաչելով, նայեց նրա յետևից։

— Կա՛ց,—ասաց հանկարծ,—կա՛ց, ասելիքս ասեմ, հետո գնա ուր վոր ուզում ես։ Կանգնի՛ր, ասում եմ, կարող է պատահել, վոր յես... այո, ինչ գիտեմ, խելքս կորցրել եմ...

Տիկինը, ձեռը դռան բռնակի վրա դնելով, կանգ առավ և հպարտությամբ նայեց նրան։

— Յես պահանջում եմ, վոր դու բացատրություն տաս հենց այս րոպեյիս,—շարունակեց Պյոտր Սոլոմոնիչը։

— Յես պահանջներ չեմ կատարում։

Նա առաջ յեկավ և սկսեց ինչ-վոր վորոնել յուր տվալետի սեղանի վրա, շարունակելով.

— Պահանջում եմ, կարծես, յես ստրուկ եմ կամ աղախին։

Դուք միայն կարող եք խնդրել, այն էլ խաղաղ կերպով, մարդավարի։ Կպատասխանեմ, ինչու չէ, ես պատասխանելուց չեմ վախենում։

Նա գտավ մի արկղիկ և սկսեց արագ-արագ խառնել նրա մեջ, միևնույն ժամանակ, շունչը կտրված արտասանելով.

— Ներս է մտնում և գժի պես գոռում. եթե ես մի վախկոտ կնիկ լինեի, պետք է տեղն ու տեղը սարսափից մեռնեի։

— Իսկ եթե իմ տեղը մի ուրիշը լիներ, նա, առանց գոռալու, քեզ տեղնուտեղը կսպաներ, վորովհետև...

Պյոտր Սոլոմոնիչը մի վայրկյան կանգ առավ։ Տիկինը նրա փոխարեն շարունակեց.

— Վորովհետև ես խաբեբա չեմ, չէ՞, անամոթ եմ, անպատկառ, այնպես չէ՞։ Դուք ասում եք, թե խոսում են. ի՞նչ են խոսում... Ինձ բամբասում են, այնպես չէ՞, այսինքն,—պարզ խոսիր էլի, ինչո՞ւ ես թաքցնում,—ասում են, վոր ես լավ կնիկ չեմ, հավատարիմ չեմ։ Դա ինձ համար նորություն չէ։ Մի զարմանաք, մի վեր թռչեք, հանգիստ նստեցեք ու լսեցեք։

Ցեվ տիկինը շարունակեց հանդարտ հոգով, սառն կերպով, տրամաբանորեն «բացատրել»։ Այո, մարդկանց բամբասանքը նոր բան չէ նրա համար։ Բայց ի՞նչ է կարծում Պյոտր Սոլոմոնիչը, չպիտի՞ խոսեն, չպիտի՞ բամբասեն։ Վո՛չ, ընդհակառակը, զարմանալի կլիներ, յեթե չբամբասեյին։ Թող լավ մտածի Պյոտր Սոլոմոնիչը և կտեսնի, վոր աշխարհի յերեսին վոչ մի կնոջ այնքան լավ չէ սազում զրպարտությունը, վորքան նրա կնոջը։ Ուրիշ բանի մասին չէ ասում տիկինը, կարելի յե Պյոտր Սոլոմոնիչը շատ խելոք է, շատ կրթված է։ Բայց տարի՞քը, տեր աստված, տարի՞քը։ Ինչո՞ւ յե Պյոտր Սոլոմոնիչը վըրդովվում, խոմ նրա ծերությունը թաքցնելու բան չէ, ինչպես և թաքցնելու բան չէ նրա կնոջ յերիտասարդությունը և գեղեցկությունը։ Ի՞նչ կմտածի Պյոտր Սոլոմոնիչը, յեթե ինքը մի այդպիսի զույգ տեսնի մի տեղ։ Նա իսկույն կասի. «յերևի, հայր ու աղջիկ են»։ Իսկ յեթե իմանա, վոր մարդ ու կնիկ են, կասի. «ծնողները խեղճ աղջկան փողի համար ծախել են այդ պառավին»։ Հիմա, բան է, մի որ մի հանդիսում, թատրոնում կամ հենց փողոցում Պյոտր Սոլոմոնիչը պառավ մարդու ջահիլ կնկան տեսնի մի յերիտասարդի հետ, չի՞ մտածիլ, թե կնիկը անխիղճ է, նա վողորմելի ծերունուն դավաճանում է։

— Զեյի՞ք ասիլ, ոոո, այնպես կասեյիք, վոր... Դա հերիք չէ, դուք այն ժամանակ էլ կբամբասեյիք, յեթե այդ պառավ մարդու ջահիլ կնոջը տեսնեյիք յուր ամենամոտիկ, ջահիլ, գեղեցիկ, կրթված, խելոք, սրախոս ազգականի հետ...

Պյոտր Սոլոմոնիչը մի զորեղ շարժում գործեց և հառաչեց։ Բայց կնոջ խոսքը չընդհատեց։ Տիկինը շարունակեց.

— Կրկնում եմ, յեթե այդ ամենամոտիկ ազգականի հետ էլ տեսնվեք, կասեք. «միմյանց սիրում են» կամ, էհ, մի ուրիշ, ավելի վատ բան։ Ձեր խիղճը ձեզ չեր տանջիլ, վորովհետև դուք ինչ գիտեք այդ պառավ մարդու ջահիլ կնոջ սիրտը։ Ինչ գիտեք, վոր նա վոչ միայն չի խաբում յուր պառավ, ուժից ընկած, ապխտած, մեջքից կռացած, ատամները թափված մարդուն, այլ մինչև անգամ մտքում ծաղրում էլ և բոլոր յերիտասարդներին։ Ինչ գիտեք, վոր այդ ջահիլ, գեղեցիկ կինը միայն մեկին ե պատկանում աշխարհի յերեսին, այսինքն յուր զավակների հորը, յուր օրինավոր ամուսնուն։ Վայ մեզ, վայ մեզ, վայ խեղճ կանանցս, մեր դրությունը ահա այսպես ե։ Մարդիկ մեզ պ ր ի ն ց ի պ ն ե ր ի ց զուրկ են համարում։ Կարծում են, վոր մենք յերեխաներ ենք, յեթե մեր առաջ կարմրացրած յերկաթ պահեն, կասենք վոսկի յե, կվերցնենք։ Չեն մտածում, վոր մենք հասկանում ենք, թե յերկաթը մեր ձեռքը կայրի, մեր գեղեցիկ մարմնի վրա կդնի մի վերք, մի արատ, վոր վոչնչով, վոչնչով չի կարելի մաքրել։ Հույս ունեմ, վոր դուք իմ ասածը հասկացաք, ուրիշ ասելիք չունեմ, մնացյալը դուք գիտեք...

Վորքա՜ն այդ վայրկյանին նա Պյոտր Սոլոմոնիչի աչքում գեղեցիկ եր, վորքա՜ն խելոք և հրապուրիչ։ Բայց և վո՜րքան Պյոտր Սոլոմոնիչը ինքն յուր աչքում ծեր եր, զառամյալ և անարժան այդ գրավիչ արարածին։

— Կա՛ց,— ասաց նա, տեսնելով, վոր կինը, խոսքը ավարտելուց հետո, ուզում եր դուրս գնալ։

Ի՞նչ, կանգնի, վոր նա հայհոյի՞, գոռա՜, «կինտոյի պես» ձեռք բարձրացնի նրա վրա։ Վոչ, վոչ, տիկինը վճռել ե և պետք ե գնա։

Պյոտր Սոլոմոնիչը մոտեցավ նրան մի քանի քայլ, կանգնեց նրա առաջ, նայեց աչքերին։ Ո՜ո, յեթե Աննայի ասածների կեսը, կեսի կեսը ճշմարիտ ե, այն ժամանակ անխիղճ չար լեզուները, վոր բամբասում են։ Միթե՞ Պյոտր Սոլոմոնիչը կարող եր հավատալ, յեթե ուրիշներից լսած չլիներ։ Սովորական ժամին նա մտավ կլուբ։ Նա կամենում եր միքիչ թղթախաղ խաղալ։ Նա պ ա ր տ ն յ ո ր ն ե ր եր փնտրում, հանկարծ նրա ականջին հասավ յուր անունը։ Նա կանգ առավ դռների մոտ։ Կանաչ սեղաններից մեկի շուրջը նստած եյին չորս չարամիտներ և խոսում եյին։ Խոսում եյին նրա մասին այն ամենը, ինչ-վոր կարելի յե խոսել մի պատվավոր մարդու անունը աղբի մեջ թաղելու համար։ Նա ականջները փակեց և հեռացավ։ Չար կասկածը նրա ար-

յունը տակն ու վրա արեց։ Նա ամոթից չկարողացավ կլուբում յերկար մնալ և շտապեց տուն, խելքը կորցրած, աչքերը արյուն կոխած։

— Յես ձեզ չեմ մեղադրում,—պատասխանեց տիկինը, նրա բացատրությունը լսելուց հետո,—դուք միամիտ մարդ եք, ձեզ ամեն մի յերեխա կարող ե խաբել։ Ախ, տեր աստված, տեր աստված,. յես խաբեցի՞, յես անամո՞թ, յես անպատկա՞ռ, յես դավաճա՞ն...

Նա սկսեց բարձրաձայն հեկեկալ։ Պյոտր Սոլոմոնիչը շտապեց ներողություն խնդրել։ Նա ծեր ե, միամիտ ե, նրան խելքից հանեցին, բայց նա այժմ չե հավատում, և չի հավատալ, յեթե ամբողջ աշխարհն ել խոսի։

— Հեռու ինձանից,—գոչեց տիկինը, ձեռով հրելով նրան,—յես ձեր վիրավորանքի պատճառով չեմ լաց լինում, արդար մարդը վոչ մի զրպարտությունից չի վիրավորվում, յես իմ բախտն եմ վողբում...

Դռների միջից ներս ցցվեցին յերկու գանգրահեր փոքրիկ գլուխներ։ Լիզոչկան և Ելեչկան վախեցած դեմքերով նայում եյին իրանց բարձրաձայն արտասվող մորը։

Տիկինը արագությամբ աչքերը սրբեց և մոտեցավ նրանց, գոչելով.

«Անբախտ յերեխաներ, ինչ կրթություն կարող եք ստանալ այս տանը...»։

V

Ամառը սկսվել եր։ Դիմաքսյանը դպրոցում գործ չուներ։ Տնային պարապմունքը թեև առաջվա պես չեր յեռում նրա ձեռքի տակ, բայց այժմ աշխատելու ցանկություն ուներ։ Նրա գլխում հղանում եյին նորանոր գաղափարներ, նրա յեռանդուն միտքը հանգիստ չուներ։ Դիտելով հասարակական կյանքի բազմատեսակ վատ յերևույթները, նա որ որի վրա համոզվում եր, վոր բոլոր այդ յերևույթների հիմնական պատճառը մի բան ե—անհատի բարոյական աշխարհի սղությունը։ Նա ասում եր, թե վոչ մի հասարակություն չե կարող առաջադիմություն անել, յեթե նրա մեջ չկան բարոյապես զորեղ անձինք։

«Բարձրացրեք անհատին, կրկնում եր նա, կբարձրանա և շրջանը։ Վոչ մի բարեփոխություն չե կարող հիմք գտնել, յեթե նա չունե ապահով պատնեշներ։ Այդ պատնեշներն են առանձին անձնավորությունները, զինված մտավոր և բարոյական ուժերով։ Հասարակությունը կարող ե մի վորևե վերանորոգության համար պատրաստ հող չունենալ։ Անհատները կարող են այդ վերանորոգությունը իրանց ու-

սերի վրա պահել, մինչև վոր նրանք ամուր պատվանդան կպատրաստեն»։

Նրա խորին համոզմունքով լոկ գիտությունը դեռ բավական չեր՝ մարդկանց հասարակական ուղեցույց ջահեր դարձնելու համար։ Անկեղծ հավատ դեպի քաղաքակիրթ ապագան, խորին հույս վորև ձեռնարկած գործի հաջողության վրա և անդրդվելի կամք—ահա այն պայմանները, վոր նա պահանջում եր ամեն մեկից, վոր ձգտում եր ուրիշներին ոգտավետ լինել։

«Յեթե դու ուզում ես ծառայել մի գործի—առաջ ինքդ պարտավոր ես կուրորեն հավատալ այդ գործի ճշմարտությանը։ Յեթե դու հույս չունես քո ուժերի վրա—մի՛ դուրս գալ ասպարեզ։ Յեթե դու կամք չունես—մի՛ կարծիր, թե մազի չափ կարող ես ուրիշի կամքի վրա ազդել»։

Այս եր նրա նշանաբանը, և այս եր նա քարոզում թե՛ գրչով և թե բերանացի։ Յեվ նրա խոսքերը ապարդյուն չեյին անցնում։ Նրա հորդորանքով կազմվում եր մի ընկերություն, վորի նպատակը պետք է լիներ տարածել յեվրոպական գիտության տարրերը ժողովրդի բոլոր խավերի մեջ։ Նա այժմ շրջապատված եր բավականաչափ բարեկամներով, վորոնց նա միշտ, ինչպես հարատև խթան, դրդում եր գործել։ Ավելի մեծ խրախույս եր այդ բարեկամների համար նրա անձնական որինակը։ Նա այդ տեսնում եր և զգում։ Ահա ինչու, չնայելով հոգնածությանը, նա գործում եր անդադար։ Նա արդեն վերջացրել եր անցյալ տարի սկսած յուր գլխավոր այն աշխատությունը, վոր պետք է պարզեր նրա գաղափարների ամբողջ աշխարհը։ Նա բաց չեր թողնում վոչ մի ընկերական ժողով, վոչ մի գործ, ուր հարկավոր եր նրա ոգնությունը կամ խորհուրդը։

Դպրոցի շրջանավարտներին նա տվեց մի համառոտ ծրագիր, վորով և նրանք պետք է գործեյին իրանց շրջաններում, ուր վոր լինեն նրանք—գյուղում թե քաղաքում և թե ինչ պաշտոն ես ունենան—ուսուցչական թե քահանայական։ Նրա միտքը միշտ զբաղված եր լուրջ խնդիրներով։ Նրա գլուխը գործում եր անընդհատ, ինչպես մի լարված մեքենա։ Յեվ այդ մեքենան յերբեք չեր հոգնում, յերբեք չեր ձանձրանում։ Հոգնում եյին միայն այդ մարդու ջղերը, հոգնում եր նա ֆիզիկապես և վոչ բարոյապես։

Մի առավոտ նա յուր սովորական առանձնակի զբոսանքից տուն եր վերադառնում։ Միքայելյան ծառազարդ փողոցի վրա նա հանդիպեց Մսերյանին և բժիշկ Սալամբեկյանին։ Նրանք գալիս եյին դեմ ու դեմ մի ծանոթ որիորդի հետ։

— Լավ պատահեցինք,—գոչեց Մսերյանը բռնելով Դիմաքսյանի թևից,—կա՛ց: Խնդրեմ, ծանոթանաք. որիորդ Կարինյան, Դիմաքսյան—իմ ամենաթանգագին ընկերը:

Իդեալիստը ստիպեց նրան հետ դառնալ:

— Այս րոպեյիս քո մասին եյինք խոսում: Որիորդին հարկավոր են միքանի տեղեկություններ, վոր քեզանից լավ վոչ-վոք չգիտե: Խոսեցեք...

Նա, բժիշկ Սալամբեկյանի հետ յետ կանգնելով, որիորդին թողեց առաջ Դիմաքսյանի հետ: Հայտնվեց, վոր Կարինյանը մի մասնավոր վարժուհի յե, պատրաստվում ե գնալ արտասահման՝ գործնական մանկավարժություն սովորելու, վորպեսզի հետո Թիֆլիսում մանկական պարտեզ բաց անի: Նա միայն կամենում եր իմանալ՝ ո՞ւր ավելի նպատակահարմար ե գնալ:

Դիմաքսյանը հաղորդեց որիորդին անհրաժեշտ տեղեկությունները, յուր կողմից ավելացնելով միքանի խորհուրդներ: Որիորդը լսում եր նրան ուշադիր և մինչև անգամ ակնհայտ ակնածությամբ:

Դա մի գունատ արարած եր, նիհար, սակավ ինչ թուխ դեմքով, խելացի և արտահայտիչ գծերով: Ընդհանրապես նա վոչ միայն սիրուն չեր, այլ և կարող եր տգեղ համարվել, յեթե չունենար յուր ձայնի և աչքերի մեջ անչափ յեռանդի և տոկունության հետ մի տեսակ հեզ անուշություն: Նա խոսում եր դրական յեղանակով, համոզված մարդու պես, նրա շարժվածները ազատ եյին, բայց, միևնույն ժամանակ, ամոթխածությամբ լի:

Նա Դիմաքսյանի վրա լավ տպավորություն գործեց:

— Վերջացրե՞ք,—ասաց Մսերյանը, վոր ամբողջ ժամանակ աչքը չեր հեռացնում որիորդից,—ուրեմն մենք այժմ կարող ենք միասին խոսակցել:

Նա մոտեցավ որիորդին և սկսեց նրա հետ քայլել, բժշկին թողնելով հետ: Այս հանգամանքը բավական զարմացրեց Դիմաքսյանին: Առաջին անգամն եր նա տեսնում Մսերյանին այդքան ուշադիր դեպի մի կին:

Բժիշկ Սալամբեկյանը Դիմաքսյանին հաղորդեց, վոր իրան մի նոր պաշտոն են առաջարկում և առաջարկողն ե Բարաթյանը: Քաղաքը նոր հիվանդանոց ե բաց անում, հարկավոր ե մի բժիշկ դիրեկտոր: Բարաթյանը խոստանում ե յուր բարեկամների հետ միասին ամեն ճիգ գործ դնել, վոր Սալամբեկյանը ընտրվի:

— Տեսնո՞ւմ ես, մարդը այնքան առաջ ե գնացել, վոր յուր ընկերներին ել հովանավորություն ե ցույց տալիս: Բայց յես չեմ ուզում այդ հովանավորությունը:

— Ինչո՞ւ։

— Նրա համար, վոր չեմ ուզում վոչ մի բանով պարտական լինել այդ մարդուն։

— Պատճառը։

— Նրա յերգը վերջացած է, նա ուխտադրուժ է, գաղափարի դավաճան։

Դիմաքսյանը զգուշացրեց, թե անհարմար է մի ոտար որիորդի մոտ այդ բանի մասին խոսել։ Բժիշկը յուր քայլերը ծանրացնելով, պատասխանեց, թե որիորդը լավ է ճանաչում Բարաթյանին և թե նրանք այժմ մինչև անգամ ազգականներ են։

— Ոո՛, ինչպես փոխվում են մարդիկ,—շարունակեց նա վրդովված,—յերկու տարի չկա և արդեն... ուֆ, վոչինչ չի մնացել անցյալից, շոգիացել է...

Այն մարդիկ, վորոնց դեմ Բարաթյանը պետք է մաքառեր, այժմ նրա բարեկամներն են դառել։ Նա մտերմաբար սեղմում է յերեկվա կ ո ն տ ր ա ռ ա ն դ ի ս տ ի կամ վաշխառուի ձեռը։ Նա թև թևի տված ման է գալիս խաբեբա կապալառուի հետ, վորովհետև մտադիր էր ընկերանալ նրան։ Այժմ նա ուզում էր կապալներ վերցնել նոր կառուցվող յերկաթուղու վրա։

Բժիշկը ստիպված յեղավ խոսքը ընդհատել, յերբ որիորդը և Մսերյանը, փողոցի ծայրին հասնելով, հետ դարձան։ Մսերյանը վոգևորված մի ինչ-վոր պատմություն էր անում որիորդի համար, և առհասարակ շատ էր զբաղված նրանով։

Փողոցի կիսում որիորդը ցտեսություն ասաց, խնդրելով ամենքին մի որ շնորհ բերել յուր տունը։

— Յես ապրում եմ մեծ մորս և հորաքրոջս հետ։ Դեռ մի ամիս այստեղ եմ, շատ ուրախ կլինեմ յեթե գաք։

Բժիշկը գնաց նրան ուղեկցելու։

— Ո՞վ է այդ որիորդը,—հարցրեց Դիմաքսյանը Մսերյանից։

— Սալամբեկյանի մի մեռած ընկերոջ քույրն է։ Հավանեցի՞ր։ Գիտես, վոր յես կանանց առհասարակ չեմ սիրում, բայց այս մեկը ինձ դուր է գալիս։ Արի մի որ միասին այցելենք նրան։

Դիմաքսյանը խոսք տվեց և մի շաբաթ անցած գնաց նրա հետ որիորդի մոտ։

Կարինյանը բնակվում էր գետի ափում գտնվող միհարկանի մի տան մեջ, վոր բավական բանաստեղծական դիրք ուներ։ Տան առջև տարածված էր մի ընդարձակ այգի, վոր վերջանում էր գետափին։ Բակի վիթխարի ընկուզենիի տակ նստած էր մի զառամյալ պառավ,

շրջապատված անթիվ հավերով։ Նա գարիի հատիկները ցրվելով, խոսում էր հավերի հետ, հանդիմանելով նրանց ագահության համար։ Դա Կարինյանի տատն էր։

Օրիորդը հյուրերին ընդունեց քաղաքավարի և պարզ կերպով։ Նրա հորաքույրը տանը չէր, իսկ ինքը, կարի մեքենան առջևը դրած, պատշգամբի վրա յուր համար հագուստ էր կարում։

Յերեք սերունդների ներկայացուցիչները միասին ապրելով, հաճախ հայացքների տարբերությունից իրարու հետ ընդհարումներ էին ունենում։ Այս պատճառով օրիորդի կյանքը մխիթարական չէր այդ շրջանում։ Տատը հաշտվել անգամ չէր ուզում այն մտքի հետ, թե պետք է յուր թոռնը, մենակ աղջիկ, ինքնագլուխ գնա ով գիտե ինչ յերկիրներ։ Նույն մտքի յեր և նրա հորաքույրը, վոր յուր կողմից ավելի յեր գրգռում պառավին օրիորդի դեմ։

Այս բոլորը պատմեց ինքը օրիորդը, անկեղծաբար, առանց յուր դրությունից քաշվելու։

— Բայց ինչ էլ լինի, նրանք արդեն համաձայնվել են իմ գնալուս, թեև ամեն օր տրտնջում են։

Դիմաքսյանին դուր չեկավ օրիորդի հաստատակամությունը։ Ահա, վերջապես մի հայ կին, վոր ինքնուրույն է և չի խոնարհվում կամակոր հնության առջև։ Նա գովեց օրիորդի նպատակը։

— Թողեք հներին, աշխատեցեք նորերի համար։ Շատ անգամ մեռնող սերունդը յուր յեսին ուզում է զոհել հաջորդի յերջանկությունը։ Յեթե մենք նրա ամեն քմահաճույքներին սանտիմենտալ կերպով հպատակվենք, վոչինչ առաջադիմություն չենք կարող անել։ Հիշեցեք, թե ձեր ձեռնարկությունը վորքան օգուտ պետք է տա ապագա սերնդին, և դուք կտեսնեք, վոր անարդար կլիներ այդ գեղեցիկ նպատակը զոհել պառավներին։

Բայց պառավը ընկուզենիի տակ հավերի հետ նստած կապված տատն էր։ Իսկ մյուսը, օրիորդի հորաքույրը, յեթե պառավ ածականը լսեր, առանց այլևայլի պետք է արտաքսեր Դիմաքսյանին։ Ահա նա, այրի Մելանիա Բոլումբաշյանը, սանդխով վեր է բարձրանում։ Իսկապես նրա քառասնյակը վաղուց արդեն անցել է, բայց ով կարող է նրան յերեսներկու տարեկանից ավելի համարել։

Այրին համարձակ քայլերով մոտեցավ և թոթվեց Մսերյանի ձեռը։ Նրանք արդեն ծանոթ էին։

Նա հագնված էր ժամանակի մոդայով։ Ամեն բան նրա վրա յեվրոպական էր, բացի թասակրավից։ Նա գլխարկ չէր հագնում, քաջ համոզված լինելով, վոր վիրական գլխակապը ավելի է սազ գալիս

յուր կոլորիկ կարմրախայտ յերեսին։ Նա խոսում եր ռուսերեն, արագ-արագ, արհամարհելով քերականական բոլոր կանոնները։ Յեվ խոսում եր մեծ մասամբ Մսերյանի հետ, վորի յերեսին շուտ-շուտ ժպտում եր, ծիծաղում։ Զգալի յեր, վոր վողբացյալ այրին չեր հրաժարվել ամուսնության դառն լուծը յերկրորդ անգամ քաղցրությամբ հանձն առնելուց, յեթե Մսերյանը բարեհաճեր ուշադիր լինել դեպի նա։ Սակայն խղեալխատը այրիի մասին այնքան եր մտածում, վորքան և՛ յուր հագուստի մասին։ Իսկ նրա հագուստը այսոր մի առանձին բանաստեղծական անկարգության մեջ եր։ Մաշված և արրոված սև սյուրտուկի կուրծքը փայլում եր սափրավիլի սրոցի պես, իսկ ձմեռային վունավարտիկը վաղուց արդեն գրավել եր փողոցային հնավաճառների ուշադրությունը։ Ավելի վողբալի չեր նրա հին ձևի շապիկը, վորի օձիքը ճմլվել եր և կպել նրա կոկորդին յախուլի պես։ Այնինչ՝ սև փողկապը թողել եր վզին և այնտեղ նստել յերկչոտ ծիծեռնակի նման։

Նա այրիի բարբաջանքին պատասխանում եր «այո», «ինչպես չե», «ցը ցը ցը» և այլն հնչյուններով, իսկ ուշը օրիորդի կողմն եր։ Վերջապես, շաղակրատ տիկնոջից ձանձրացած, նա ցտեսություն ասաց և ընկերոջ հետ դուրս յեկավ։

— Հը՞մ, հավանո՞ւմ ես,—դարձյալ հարցրեց նա Դիմաքսյանից։

— Վորի՞ն։

— Ի հարկե, օրիորդին, մյուսը ինչ հորս ցավն ե։

— Ի՞նչ ասեմ...

— Յեղբայր պատվական, յես հիացած եմ, իսկ և իսկ յեռանդուն և տոկուն հայուհու տիպարն ե, միայն տաշված, հղկված, հասկանո՞ւմ ես։

— Ելի վոգևորվեցի՞ր։

—Ի՞նչպես չվոգևորվեմ, նորոգիչներից ե, հասկանո՞ւմ ես...

Այդ օրից հետո Դիմաքսյանը Մսերյանի հետ մի քանի անգամ ել այցելեց Կարինյանին։ Ժամերով նաև խոսում եր ու վիճում օրիորդի հետ և հաճույք եր զգում, տեսնելով, վոր նա հասկանում ե իրան, ունե զարգացում և հազիվ ե նեղն ընկնում լուրջ խոսակցության ժամանակ։ Նա չեր քաշվում օրիորդի մոտ, չեր կաշկանդվում այնպես, ինչպես Գայանեյի առջև։ Նրա մեջ չեր շարժվում ոձը, սիրտը հանգիստ եր։ Սակայն ինչ և լիներ, վորքան ես Կարինյանը համակրելի լիներ՝ յերբեք և վայրկյան անգամ չեր մոռացնել տալիս նրան այն մյուսին, վորի պատկերը այնքան ամուր և այնքան վորոշ դրոշմվել եր նրա սրտի մեջ։ Կանգնած եր գիշեր ցերեկ այդ պատկերը նրա աչքի առջև, ինչպես նրա անաջող բախտի ուրվականը և մենության մեջ միշտ նրան պատճառում եր այն ծանր թախիծը, վոր կարծես հավիտյան տիրել եր նրա հոգուն...

VI

Հուլիսի վերջին Դիմաքսյանը ուղևորվեց Անդրկովկասի մի մասում ճանապարհորդելու։ Նա կամենում էր մոտիկից ծանոթանալ ժողովրդի բարոյական կացության հետ։ Բայց ժամանակը շատ էլ չէր ներում. մի ամիս մի քանի տեղեր այցելելուց հետո, նա թարմացած վերադարձավ և յեռանդով անձնատուր յեղավ յուր զբաղմունքին։

Դպրոցի մեջ բարձրացրել էին նոր աղմուկներ։ Շուտով պետք է ընտրվեյին նոր հոգաբարձուներ։ Դիմաքսյանի հակառակորդները սկսել էին ծածուկ գործել։ Նրանք մտադիր էին նրա կողմնակից հոգաբարձուներին սևացնել և փոխարենը ուրիշներին ընտրել։

Նախագահը, վոր նրանց աջակիցն էր, գաղտնի հրահանգ էր տվել ծխական քահանաներին։ Պատվիրված էր յեկեղեցական ընտրությունների ժամանակ առաջ գցել այնպիսիներին, վոր պետք է նախագահի ուզած մարդկանց քվե տային։

Հակառակ կուսակցությունը հասկացել էր բանի էությունը և բացարձակ հարձակվում էր նախագահի վրա։

Յերկու բանակների մեջ սկսվել էր մի ծայրահեղ բանակռիվ, վորի արտահայտիչներն էին յերկու միմյանց թշնամի լրագիրները։ Վոչ մեկը չէր խնայում մյուսին. յերկու կողմից էլ լսվում էին ծանր մեղադրանքներ, ծաղր, հայհոյանք, նույնիսկ զրպարտություններ։

Դիմաքսյանը սկզբում կամեցավ հեռու պահել իրան այդ կռվից։ Սակայն չկարողացավ։ Նորից նրա արյունը բորբոքվեց, աչքերը վառվեցին, և հարձակվեց ասպարեզ, ինչպես պատերազմի ծարավ մի քաջ զինվոր։ Նա մոռացավ դպրոցը, նա չէր հոգում մի վայրկյան անգամ յուր մասին, նրա մտքովն անգամ չէր անցնում, թե կարող է զրկվել պաշտոնից, յեթե հաղթությունը թշնամիները տանեն։

Նրա դեմ ասպարեզ էր դուրս յեկել և՛ Վեքիլյանը, այս անգամ յուր իսկական անունով և ազգանունով։

«Փաստեր, փաստե՛ր», կրկնում էր փաստաբանը, մոռանալով, վոր ինքը վոչինչ փաստեր չի տալիս հակառակորդին, բացի վիրավորիչ ակնարկներից։

Մի որ Դիմաքսյանը դարձյալ յուր մասին կարդաց մի ֆելյետոն, միայն ուրիշ կեղծանունով։ Այս անգամ նրա անձնականին չէյին կպչում, խոսում էին նրա գործունեյության մասին։ Ֆելյետոնը գրված էր սուր գրչով, զարդարված ճարպիկ կալամբուրներով և շնորհալի սրախոսություններով։

Առաջին անգամ Դիմաքսյանը զգաց, վոր հանդիպում է վոչ թե

մի ստոր սողոսկողի, այլ մի զորեղ հակառակորդի, վորի հետ կռվելը շատ էլ դյուրին բան չե։

Արյունը խփեց գլխին։ Մի չարագուշակ ժպիտ աղավաղեց նրա բերանը։ Առանց յերկար մտածելու, նա աչքը լարեց դեպի այն կողմ, ուսկից գիտեր, վոր գալիս են վարագուրված հարվածները։

Ահ, բավական չե Բարաթյանի գործով արածը, պրծավ էլ ե ուզում նրա հետ մրցել։ Դա առանց նպատակի չե։ Անշուշտ նա հոգաբարձու ընտրվելու միտումներ ունի։

Այսպես էր մտածում Դիմաքսյանը, և նա չսխալվեց։ Բարաթյանը ընտրվեց յեկեղեցական պատգամավոր։ Մի քայլ արված էր, մընում էր մյուսը, և նա արդեն Դիմաքսյանի իշխանավորն էր—հոգաբարձու։

— Կարծեմ, մենք կհաղթենք,—ասաց մի օր Դիմաքսյանին նրա կողմնակից հոգաբարձուներից մեկը,—Ամբակում Աֆանասյեվիչը շատ ե աշխատում։ Յերեկ լյանաթեը նրա մոտ ճաշի յեն յեղել. նրանք գործում են ձեռք-ձեռքի տված։

Այն ժամանակ յերկու հակառակորդ բանակները պաշարեցին ընտրողներին։ Շատերի գույնը արդեն վորոշ էր, քաշել նրանց մի բանակից մյուսը—դժվար էր։ Հարկավոր էր գրավել չեզոքներին, և ահա սրանց վրա հարձակվեցին յերկու կողմից գիշակեր ագռավների պես։ Գործ եյին դրվում քաղցր ժպիտներ, սիրալիր բարևներ, սպառնալիքներ, խոստումներ։

— Նուկուջան Փարսադանովիչին իմ խորին հարգանքն եմ վկայում։ Հը՛մ, ամսիս քսանվեցին ընտրում ենք։

— Ընտրում ենք, վոնց չե, ընտրում ենք։

— Նուկուջան Փարսադանովիչ, չմոռանաք, վոր մենք հին քաղքեցիներ ենք, դուք մերն եք։

— Վա՜հ, հեստի չորնի զակատիտ անիմ վուր ե[1]...

Կռիվը քանի գնում սաստկանում էր և խեղճ Նուկուջաններին այնքան քշեցին այս բանակից այն բանակ, վոր ընտրության օրը նրանք ներկայացան միանգամայն ջարդուփշուր յեղած խելքով։ Պատարագի ժամանակ մի քարոզ ընտրողներին բացատրեց նրանց պարտքը յեկեղեցու և ազգի առաջ, «քանզի պետք ե խղճի մտոք և անաչառությամբ» տային իրանց քվեները։

Նույնը կրկնվեց և՛ ընտրությունների դահլիճում։

Ամբակում Աֆանասյեվիչի բանակը հաղթեց։ Դիմաքսյանի կողմնակից հոգաբարձուներից չորսը սևացան։ Փոխարենը ընտրվեցին

[1] Այսինքն՝ այնպես սևացնեմ վոր...

Ամբակումը, Բարաթյանը, Վեքիլյանը և մի ուրիշը սրանց բարեկամներից։

Բարաթյանը անմիջապես շտապեց տուն և ուրախ-ուրախ համբուրեց յուր մի ամսական ժառանգին։

Գայանեն նոր եր վերկացել անկողնից։ Նա գունատ եր, նիհար, անզոր։ Այլևս անցել եյին կապրիզները։ Այժմ նա խաղաղ եր, հանգիստ, գոնե արտաքուստ այդպես եր յերևում։

Ամբողջ որը նա չեր հեռանում նորածնի որորանից։ Համբուրում եր նրան քնքուշաբար, խոսում եր նրա հետ, հարցեր եր տալիս և ինքը նրա փոխարեն պատասխանում։ Նրա աշխարհը այժմ ամփոփված եր այդ փոքրիկ արարածի մեջ, և ուրիշ վոչ մի բան նրան չեր հետաքրքրում։ Նա մոռացել եր նույնիսկ յուր մշտական կասկածները, արյունի ու մարմնի դարձած կասկածները ամուսնու վերաբերմամբ։

Տիկին Բախտամյանը յերբեմն այցելում եր նրան։ Ցերեկայի մկրտության որը նա հետը բերել եր անթիվ ընծաներ։ Առհասարակ նորածինը յերկու տիկինների մեջ ձգել եր մի նոր բարեկամություն։ Միայն տիկին Բախտամյանի և Բարաթյանի մեջ յերևում եր մի անհասկանալի փոխադարձ սառնություն։ Գոնե այդպես եյին նկատում մի կողմից Գայանեն, մյուս կողմից—Պյոտր Սոլոմոնիչը։

Ծերունին յուր կնոջ հետ այլևս նախանձի տեսարաններ չեր սարքում։ Արդեն բավական պատժվել եր այնորվա յուր շտապ մեղադրանքի փոխարեն։ Նա զղջում եր, վոր շատ կոշտ վարվեց կնոջ հետ և մըտքում հայհոյում եր չար բամբասասերներին։ Սակայն, միևնույն ժամանակ, կասկածը արմատախիլ չեր յեղել նրա մեջ։ Այժմ նա տանջվում եր լուռ, առանց արտահայտելու յուր սրտի մեջ բույն դրածը։

Հաճախ նա մենակ, առանձնացած յուր սենյակում, մտածում եր ամուսնական կյանքի դառնությունների մասին։ Նա մեղադրում եր ինքն իրան։ Տասը տարի յեր նա միշտ նախանձում եր, միշտ կասկածում, միշտ լարված դրության մեջ եր։ «Միթե այդ կյա՞նք ե։ Վոչ, վոչ, տանջանք ու աստծու պատիժ ե», կրկնում եր նա։

Մյուս կողմից նա սիրում եր Աննային, ինչպես մի կենդանի, վարվռուն պատանի, և ցավում ու մորմոքվում եր, վոր վաղուց կորցրել եր յուր յերիտասարդությունը։ Իրավ, մի՞թե նա ինքը չգիտեր, վոր Աննայի ընկերը չե, վոր ամոթ ե մինչև անգամ մի թառամած ծերունու մի այդպիսի թարմ կին ունենալ։ Բայց, եհ, ի՞նչ արած, թող նախանձը միշտ տանջե նրան, միշտ չարչարե, միայն թե Աննային նրա ձեռքից չխլեն և միայն թե Աննան խնայի նրա ընտանեկան պատիվը։

Իսկ Աննան նրա հետ վարվում եր սառն, խոսում եր միշտ «դուք»-ով, այն ել խոսում եր այն ժամանակ, յերբ անհրաժեշտությունը ստիպում եր։ Նա գիտեր, վոր յուր պաղությունով տանջում է ծերունուն և հենց դիտմամբ շարունակում եր, անուշադիր թողնելով նրա փաղաքշանքները, աղերսանքները և պես-պես խոստումները։

«Թողե՛ք ինձ, թողե՛ք իմ հիմարության պատիժը քաշեմ», կրկնում եր նա միշտ։

Իսկ հիմարություն նա համարում է ծերունու հետ ամուսնանալը, մի ծերունու, վոր թունավորում եր նրա կյանքը «անտեղի կասկածներով, անտեղի զրպարտություններով»։

Մի որ Պյոտր Սոլոմոնիչը վճռեց յուր կնոջը մի սյուրպրիզ անել, վորպեսզի, վերջապես, ձեռք բերի նրա հաշտությունը։

— Ա՛ննիչկա, յե՞րբ է ձեր ընկերության տարեդարձը,— հարցրեց նա։

— Յես ի՛նչ գիտեմ յերբ է, յես ձեռք եմ քաշել ընկերություններից ել, մարդկանցից ել, յես դժբախտ կին եմ։

— Դե լավ, բավական է, յես քեզ մի լավ բան պետք է ասեմ։

Տիկինը կամեցավ սառն լինել, բայց միևնույն ժամանակ, չկարողացավ զսպել կանացի հետաքրքրությունը։ Նա աչքի տակով ծուռ-ծուռ նայեց ամուսնուն։

— Ուզում եմ քո անունով,— պատասխանեց Պյոտր Սոլոմոնիչը,— քո անունով ընկերությանը հազար ռուբլի բաշխել, վոր դու պատվավոր անդամուհի լինես։

Սնափառ տիկնոջ համար, արդարև, դա մի վերին աստիճանի ախորժելի սյուրպրիզ եր։ Մինչև այդ ժամանակ կանանց ընկերությունը վոչ մի պատվավոր անդամուհի չուներ, ուրեմն նա առաջինը կարող եր լինել։ Բայց նա թաքցրեց յուր ուրախությունը, վոչինչ չասաց և միայն հառաչեց։

Տարեդարձի որը Պյոտր Սոլոմոնիչը փողերը համրեց կնոջ առջև։ Վերջապես, Աննան թույլ տվեց նրան, վոր համբուրի իրան և այդպիսով հաշտվեց ամուսնու հետ։

VII

Բարաթյանի և Վեքիլյանի հոգաբարձու ընտրվելը, հարկավ, ազդեցություն գործեց Դիմաքսյանի վրա։ Նա զգաց, վոր այժմ նրանց հետ պետք է ընդհարումներ ունենա յերես առ յերես։

Կռվից նա չեր վախենում, չեր մտածում և՛ յուր պաշտոնի մասին։ Նրան անհանգստացնում եր աշակերտների դրությունը և առհա-

սարակ դպրոցի վիճակը, այն դպրոցի, որը արդեն կրում էր յուր վրա նրա գաղափարների դրոշմը։ Այնուհետև, ուրեմն, նրա հարուցած ամեն մի խնդիր պետք է հանդիպի Բարաթյանի ու Վեքիլյանի կամքին և հետո իրագործվի կամ ոչ։ Արդեն նա անհաղթելի չէր համարում յուր և նրանց մեջ բացված վիհը։ Պետք է այսպես թե այնպես կռվել։ Պետք է մեկը մյուսին գլորի — այդ անկասկած է։ Միևնույն շրջանում, միևնույն ժամանակ յերկու հակադիր ձգտումներ չեն կարող հավասար համակրություն վայելել և իրանց գոյությունը շարունակել։

Առաջ այդ մարդիկ հաշտ եյին, գաղափարակից եյին, ընկեր եյին նրա հետ։ Նրանք ուխտել եյին միասին գործել, այժմ բաժանված են։ Կյանքը տվեց մեկին մի ուղղություն, մյուսներին այլ ուղղություն։ Գուցե մտքերի այս հակադրությունը առաջ էլ կար, միայն չէր արտահայտվում։ Այժմ ասպարեզ կա, նա յերևան է գալիս։ Բարաթյանը և Վեքիլյանը աշխատում են խոչընդոտ լինել նրա գործունեյությանը, ծաղրում են, հալածում, կնշանակե նրանք թշնամիներ են։

Սակայն նոր հոգաբարձուները դեռ լուռ եյին, չնայելով, որ յերկու ամիս էր արդեն հաստատվել եյին իրանց պաշտոնում։ Բարաթյանը ուսումնասիրում էր հանգամանքները։ Շաբաթը մի կամ յերկու անգամ այցելում էր դպրոցը։ Դիմաքսյանը նրան ընդունում էր պաշտոնական ձևով, խոսում էր «դու»-ով, բայց սառն և առանց ընկերական մտերմության։ Դպրոցի տնտեսականի և վարչականի վերաբերմամբ նոր հոգաբարձվին տալիս էր մանրամասն տեղեկություններ, բայց յերբ հարց էր լինում ուսումնականի և բարոյականի մասին, խույս էր տալիս պատասխաններից և առհասարակ չէր ուզում խոսքը յերկարացնել։ Նա կամենում էր հենց առաջին քայլից նոր հոգաբարձվին զգալ տալ նրա իրավունքների սահմանը։ Բարաթյանը, հարկավ, հասկանում էր նրա միտքը։ Նա ոչինչ չէր ասում, բայց մտքում կրկնում էր.

«Յեթե դու ուզում ես քեզ ցույց տալ, յես էլ շուտով ինձ ցույց կտամ»։

Մեծ պասի առաջին օրերն եյին։ Տրամադրությունը կրոնական էր, դպրոցը — հոգևոր։ Հոգաբարձուներից յերկուսը յեկեղեցասեր վաճառականներ եյին, մեկը յեպիսկոպոսի յեղբայր, յերկուսն էլ յերեցփոխներ։ Բարաթյանը մի նիստում թեթև կերպով հարց բարձրացրեց՝ արդյոք աշակերտների կրոնական կրթության վրա բավարար ուշադրություն դարձնո՞ւմ են դպրոցում։

Նախագահի կարմիր և առույգ դեմքի վրա խաղաց գոհունակության ժպիտը։ Նա յուր յերկայն, թիաձև, չալ միրուքը շփելով, հայտ-

նեց, թե այդ հարցով ինքն էլ զբաղված է։ Ավելացրեց, թե խնդիրը վերին աստիճանի կարևոր է, բայց ինքը չէր կամենում նախկին հոգաբարձությանը առաջարկել, սպասում էր նորերի ընտրությանը։ Այժմ նա կարող է խոսել։ Յեվ սկսեց խոսել։

— Հրամանոցդ հայտ է, վոր մեր դպրոցները գտանին ի ներքո հովանավորության Հայաստանյայց առաքելական յեկեղեցվո և նորին վեհափառության տյառն տյառն սրբազնագույն կաթողիկոսին ամենայն հայոց։ Այսպես։ Գերազնիվ պարոնայք, մենք ժամու և տարաժամու պարտ ենք յերախտապարտ և ջերմեռանդագույն հոգով զգացված լինել առ մերս առաքելական յեկեղեցի հարսնացյալն ի տերն մեր հիսուս քրիստոս և նորին աստվածընտրյալ պետն, հաղագս կենաց վորին աղոթեմ ի տվընջյան և ի գիշերի։ Այսպես։ Սակայն իմ հոգևոր տկար աչոքս այս վերջին տարիներ այլ և այլ խուսափումներ նկատում եմ ի մեծս և փոքունս, իսկ առավելագույն չափով ի մերում դպրանոցի։ Հուսամ առ ամենաբարձրյալն, վոր այսուհետև այդ զանցառությունները վերացվին, քանզի մեր հոգաբարձություն այսոր, հուրախություն սրտի իմո, կազմեն ձեզի պես գերաշնորհ, պայծառամիտ, խոհունակ, հանճարազարդ և պարկեշտասուն անձինք։ Այսպես։ Պարոն քարտուղարեն կխնդրեմ արձանագրել այս իմ համեստագույն խոսք—ատենաբանություն։

— Ձեր ասածը միանգամայն արդարացի չէ։ Մեր աշակերտների մեջ պետք է զարգացնել բարոյականություն, մանավանդ կրոնասիրություն։ Արևմտյան Յեվրոպայում կրոնի դասավանդությունը շատ հարգելի տեղ է բռնում դպրոցներում։ Ուրեմն այն, ինչ-վոր ընդունված է լուսավորված ազգերի մեջ, կարծում եմ, չպիտի արհամարհվի մեզ նման մի փոքրիկ ազգի կողմից։

— Պարոն քարտուղարեն կխնդրեմ շնորհազարդ պարոն Բարաթյանի խոսքերը արձանագրել։

— Այդ ճշմարիտ է, մանավանդ վոր մեր դպրոցը հոգևոր է։

— Պարոն քարտուղար, բարեծնունդ Ամբակում աղա Սարգավյանի խոսքեր մեկիկ-մեկիկ թարգմանեցեք ու շարադրեցեք։

— Բացի դրանից, մենք նախ և առաջ կրոնական ազգ ենք և յեկեղեցուց ավելի վոչինչ չունենք։

— Պարոն քարտուղար, ուշի ուշով դիտեցեք վողջախոհ պարոն Վեքիլյանի ասածները։ Ի՛ա, հեր որհնած, ի՞նչ ես Բեթանիացի բորոտի պես քինթդ քորում։ Այսպես, գերազնիվ պարոնայք, խնդիրը յեզրափակենք։ Ըստ իս՝ վաղը մեր մեծապատիվ պարոն տեսչին հայտնելու յե այս մեր վորոշում։ Շնորհազարդ պարոն Բարաթյան, կարծյոք,

այս պարտքը ձեր վրա դնելու չէ, քանզի, չեմ թե չեմ սխալվում, դուք եք հերթակալը։ Պարոն քարտուղար, արձանագրեցեք մեր վորոշում այսպես. «Առաջարկյալ չողեցի վերատեսչին պարոն Արսեն Մարգարյան Դիմաքսյանի՝ հարգել գկրոն ըստ չափու պահանջման հոգաբարձության և զսանս դպրանոցի հանապազորյա առաջնորդել չեկեղեցի անձամբ»։

Հին հոգաբարձուներից մեկը, վոր նորից ընտրվել էր, նկատեց, թե տեսչի համար վիրավորական է այս տեսակ վորոշում՝ «հարգել գկրոն», քանի վոր նա առանց այդ էլ հարգում է կրոնը։

Նախագահը խնդիրը քվեարկեց, և ձայների ճնշող մեծամասնությամբ նրա վորոշումը ընդունվեց։

Հետևյալ օրը Բարաթյանը Դիմաքսյանի մոտ կարդաց արձանագրությունը։ Մի արհամարհական ժպիտ փոփոխեց տեսչի դեմքը, հետո նրա կրծքից թռավ մի կծու ծիծաղ։

— Ինչու՞ ես ծիծաղում։

— Նրա համար, վոր քիչ է մնում ինձ հերետիկոսության մեջ մեղադրեք։ Լաված բա՞ն է այդ տեսակ վորոշում մտցնել մի պաշտոնական արձանագրության մեջ, վորի տակ ստորագրել են տասնումեկ հասարակական ներկայացուցիչներ։ «Հարգել գկրոն»։ Ասա խնդրեմ, յե՞րբ եմ ես արհամարհել կրոնը։

— Վոչ վոք չի ասում, թե արհամարհել ես, միայն այսպես գրված է։ Դու գիտես, վոր պրոցը հոգևոր է։

— Հետո՞։

— Ուրեմն զարմանալի բան չկա այս վորոշման մեջ։

— Զարմանալին այն է, վոր այդ կրոնապաշտական դատավճռի տակ ստորագրել եք դու և Վեքիլյանը։ Դա բավական չէ, հարցը մինչև անգամ դու ես զարթեցրել։

— Ես զարթեցրել եմ մի շատ ժամանակակից հարց։

— Ա՛խ Բարաթյան, ինքդ էլ շատ լավ գիտես, վոր կեղծում ես, վոր այդ սուտ է, չես հավատում, ծիծաղում ես մտքումդ։

— Մի՞թե դու համաձայն չես, վոր պետք է աշակերտների մեջ կրոնական զգացմունք զարթեցնել։

— Զգացմունք և վոչ փարիսեցություն։

— Ասում են, աշակերտներին թույլ չես տալիս յեկեղեցի գնալու։

— Սուտ են ասում։ Ես յերբեք նրանց միտքը և զգացմունքը չեմ բռնաբարում։

— Բայց չի կարելի պատանիների զգացմունքները թողնել առանց վորևե ուղղության։

Դիմաքսյանը զայրացած նայեց ընկերոջ յերեսին։ Նրան թվաց, թե յուր առջև կանգնած է մի սուտ ճգնավոր և վոչ մի դիպլոմավոր յերիտասարդ։ Նա ասաց, թե վոչ մի զգացում—լինի նա կրոնական թե ուրիշ—չի կարելի բռնի ուժով արմատացնել ուրիշի սրտում։ Պատիժը, յերկյուղը, նույնիսկ խրատը չեն կարող փոխել սաների բարոյական կազմը։ Մարդու սրտում պատվաստվում և արմատ է ձգում այն գաղափարը, վոր ազատ սիրելուց է առաջանում։ Վերջապես, բռնությամբ և արվեստական կերպով պատվաստել զգացումը շատ անգամ հակառակ հետևանք է ունենում։

— Ուրեմն, դու հերքում ես կրթության նշանակությունը,— հարցրեց Բարաթյանը, ժպտալով,—դու չե՞ս ընդունում ղեկավարի կամ առաջնորդող մարդու ազդեցությունը։

— Ազդեցություն է վոչ բռնություն։ Ի՞նչ ես կարծում, պատանիների համար վո՞րն է ազդու՝ սպառնալի՞քը, թե՞ կենդանի որինակը։ Յեթե դուք կրոնի անունով աշակերտին ստիպում եք յեկեղեցի գնալ, ի՞նչ կմտածի նա, տեսնելով, վոր դուք ինքներդ յեկեղեցի չեք հաճախում, փախչում եք նրանից, ինչպես մի ավելորդ բեռնից։ Վերջապես, ի՞նչ կարիք կա յերկար վիճելու, իմ պատասխանը մեկ է. յես համաձայն չեմ, վոր հոգաբարձությունը խառնվի դպրոցի ուսումնական-բարոյական մասի մեջ։ Նա իրավունք էլ չունի։

Դիմաքսյանը քանի գնում, այնքան ավելի գրգռվում էր և ձայնը բարձրացնում։ Բարաթյանը խոսում էր սառն, անվրդով։ Հենց այդ էր, վոր ավելի բորբոքում էր նրա հակառակորդին։

Մի բան շատ պարզ էր Դիմաքսյանի համար—ընկերոջ բուն նպատակը։ Ուստի նա վորոշ և դրական յեղանակով ասաց.

— Յես չեմ ընդունում ձեր վորոշումը։

— Այո՞։

— Այո՛։

Յեվ դուրս յեկավ սենյակից վրդովված։ «Ահա ինչ ծայրից են սկսում,—ասում էր նա մտքում,—քիչ է մնում ինձ անաստված հրատարակեն»։

Նա համոզված էր, վոր յուր բոլոր պաշտոնակիցները նույնպես կվրդովվեն հոգաբարձության դեմ։ Բայց վո՜րքան մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ նրա զայրացումը հանդիպեց ընդհանուր լռության։

Բոլոր ուսուցիչները նայեցին միմյանց յերեսին։ Կարծես, ամեն մեկը սպասում էր, վոր մյուսը խոսի։ Այդ լռության մեջ Դիմաքսյանի համար կար վիրավորական, միևնույն ժամանակ, ատելի մի բան։ Դա այն ընդհանուր յերկյուղն ու տատանումն էր, վոր յերևում էր ամեն-

քի, նույնիսկ յուր կողմնակիցների, դեմքերի վրա։ Նա ասաց, թե հեր-թակալ հոգաբարձվին հայտնել ե, վոր հոգաբարձությունը իրավունք չունի խառնվել դպրոցի ուսումնական-բարոյական գործերի մեջ։ Նա հույս հայտնեց, վոր ամենքը համաձայն են այս մտքի հետ և հարկա-վոր յեղած ժամանակ նրան ձայնակից կլինեն։

Համր լռությունը Դիմաքսյանի միակ պատասխանը յեղավ։

— Ինչո՞ւ եք լռում,— գոչեց նա։

— Սկզբունքով համաձայն ենք,— խոսեց, վերջապես, նրա կողմ-նակիցներից մեկը,— բայց յեթե...

— Յեթե՞։

— Յեթե հոգաբարձությունը կամենա խառնվել, մենք ինչ կա-րող ենք անել։ Նա իշխանություն ե, մենք ստորադրյալներ. .

Գերմանական մանկավարժ Ինյաթյանը քթի տակ ծիծաղեց, ծաղրաբար և անհոգ քայլերով դուրս յեկավ։ Մյուսները վոչինչ չա-սացին։

Խնդիրը շատ պարզ եր Դիմաքսյանի համար։ Մի վայրկյան նա կարողացավ իրան զսպել և հեգնաբար ասաց.

— Ձեր ասածը ճիշտ ե. Նրանք իշխանավորներ են, մենք ստո-րադրյալներ, այսինքն անբան ստրուկներ։ Ուրիշ վոչինչ, պարոններ, գնացեք, զանգակը դասի յե հրավիրում։

VIII

Նա մնաց միայնակ ուսուցչական սենյակում, միայնակ յուր բո-լոր սկզբունքների և համոզմունքների հետ։ Կրկին զգաց, վորքան դժվար ե մարդկանց հավատ ընծայելը։ Ուրեմն վոչ վոք ձայն չբարձ-րացրեց անարդար վոտնձգության դեմ, վոչ վոք չպաշտպանեց և չպի-տի պաշտպանի նրան։ Կնշանակի՝ նրա կողմնակիցները հասկացել են հակառակ կուսակցության ուժը։

«Վախ, վա՜խ, միշտ մի կտոր հացի համար վախ, ահա այն հրե-շը, վոր ջլատում ե մարդկանց բարոյական ուժը»։

Նա ձեռը ուժգին զարկեց սեղանին, վոտքի կանգնեց։ Յերբ յետ նայեց, տեսավ մենակ չե։ Սենյակի ծայրում կանգնած եր Ինյաթյանը և, ձեռները մեջքին դրած, անհոգ կերպով նայում եր պատին։

— Մեծ մարդ ե յեղել հանգուցյալը,— ասաց նա, ցույց տալով Ներսես Աշտարակցու պատկերը։

— Այո, մեծ մարդ ե յեղել, պարոն Ինյաթյան։

— Ասում են, յերբեք չեր հուսահատվում խոչընդոտների հան-

գլխկլխ։ Հենց այդ բանն է մարդկանց մեծացնում։ Հուսահատությունը թուլամորթներին է միայն հատուկ։ Հա, ինչ էյի ուզում ասել, այս չերեկո, չիրևի, ուսուցչական ժողովը չի կայանալ։

— Ինչո՞ւ։

— Վորովհետև բոլոր ավագ ուսուցիչները հրավիրված են հոգաբարձու պարոն Վեքիլյանի մոտ։

— Հրավիրվա՞ծ...

— Մի՞թե դուք չգիտեյի՞ք, ձեզ չի՞ հրավիրել։ Զարմանալի չե՛։ Խնձույքի նման մի բան է սարքել։ Ասում են նպատակ ունե պարոն Վեքիլյանը, այսինքն ուզում է ուսուցիչների հետ բարոյական կապ հաստատել։ Ուրեմն ժողովը կհետաձգեք, չե՞։

— Յեթե Վեքիլյանի խնձույքը ավելի հետաքրքրական է ձեզ համար, ժողովը պետք է հետաձգել։

Ինչաթյանը, քթի տակ չերգելով, դուրս գնաց։

Այդ որը Դիմաքսյանը սխորժակ անգամ չունեցավ ճաշելու,— այնքան վրդովված եր։ Սիրականն այնպես սովորել եր նրա բնավորությանը, վոր իսկույն հասկացավ, թե նա վատ է տրամադրված։ Նա հոգում եր Դիմաքսյանի մասին ինչպես սիրող, զգայուն չեղբայր։ Նա պատրաստ եր ամեն րոպե մահու է կյանքի կռվի մեջ մտնել նրա համար, չեթե միայն այդ հարկավոր լիներ։ Յեվ Դիմաքսյանը լիովին հավատում եր նրա անկեղծ հավատարմությանը։ Ուրախալի չեր նրա համար անկիրթ ժողովրդի այդ հարազատ զավակի մեջ տեսնել այդքան սեր։

Իրիկնադեմին նա գնաց Մսերյանի մոտ, ուր միշտ գնում եր, չերբ հուզված եր լինում։

Իդեալիստը այս անգամ՝ անսովոր աշխույժ ստացած՝ անց ու դարձ եր անում սենյակում, ինքն յուր հետ ձեռներով խոսելով։ Բանն այն է, վոր նա այդ որը պաշտոն եր ստացել մի արքունական հիմնարկության մեջ և վաղվանից պետք է սկսեր ծառայել։ Նույն րոպեյին նա մտքում հաշվում եր—արդյոք պաշտոնը նրա ամբո՞ղջ ժամանակը պետք է խլե, թե՞ կարդալու համար ազատ ժամեր կթողնի։

Դիմաքսյանը շնորհավորեց նրան։

— Բայց դու ինչո՞ւ տխուր ես,—գոչեց Մսերյանը,—ելի ո՞վ է եշիդ կաղ ասել։

Դիմաքսյանը պատմեց որվա չեղելությունը։ Մսերյանը, ինչ ասել կուզե, վրդովվեց։ Ի՞նչպես, Բարաթյանը կրոնի և չեկեղեցու պաշտպան է դարձել։ Ուրեմն նա ուզում է ծախել այն, ինչ-վոր չունե։—Դա բարոյական գողություն է։

— Յեվ նա խոսում եր համոզված, ինչպես ճշմարիտ քրիստոնյա։

Դիմաքսյանը հեգնաբար ժպտաց։ Մի՞թե կարող ե համոզմունքը լինել մի բան, վոր մարդու հոգուց չի բղխում։ Դա մի վտանգավոր զենք ե նրա դեմ, ուրիշ վոչինչ։ Ո՛ռ, Բարաթյանը խելոք ե, շատ լավ ե ճանաչում հասարակության թույլ յերակը։ Նա ուզում ե Դիմաքսյանի վարկը կոտրել, նրա հեղինակությունը վոտնատակ անել, ահա նրա նպատակը։

— Ներողություն,— ընդհատեց Մսերյանը ընկերոջ խոսքը,— նա ինչպես կարող ե քո հեղինակությունը վոտնատակ անել։

— Հրապարակելով ինձ անկրոն։ Դա, իհարկե, նրան կհաջողվի, մարդկանց փոփոխամտության շնորհով։ Յերևակայիր, ամբողջ մեր ուսուցչական խմբի մեջ այսօր մեկը չգտնվեց, վոր ինձ հետ բողոքեր։ Յես մնացի մենակ, հասկանո՞ւմ ես, մենակ։

Յեվ նա ավելացրեց, վոր այսուհետև ամենքը իրանից պիտի յերես դարձնեն։ Նա հաղորդեց Վեքիլյանի հացկերույթի մասին։ Նա հասկանում ե, ինչ ասել ե բարոյական կապ. Վեքիլյանը կամենում ե նրա դեմ զինել ուսուցիչներին։ ,

Մսերյանը գլուխը շարժեց։

— Ինչու՞ չես ժպտում, յեթե դու իմ տեղը լինեյիր, չեյի՞ր հուսահատվի։

— Յե՞ս, վո՛չ։

— Վո՛չ։

— Չեյի հուսահատվի։ Նախ և առաջ յես քո տեղը յերբեք չեմ կարող լինել։ Ով ինձ նման քամի կուլ տվողին սեմինարիայի ինսպեկտորի պաշտոն կտար։ Յերկրորդ, յեթե յես քո տեղը լինեյի, իսկույն գդակս կվերցնեյի, կասեյի՝ մնաք բարով, հորս ցավը ձեզ ել ու ձեր դպրոցին ել։

— Այդ կնշանակե չհուսահատվե՞լ։ Բայց յես գոնե այդպես չեմ անում, յես միայն վրդովվում եմ։

— Դու այդ ել չպիտի անես։

Դիմաքսյանը զարմացած նայեց ընկերոջ յերեսին։ Նա բոլորովին վոչինչ չեր հասկանում նրա հակասական խոսքերից։ Մի րոպեյաչափ նրանք լուռ եյին։

Մսերյանը, նայելով յուր ծխախոտի ծայրին, ինքն յուր հետ խորհրդածության մեջ եր։ Պարզ եր, վոր նա մի բան ուզում եր ասել, բայց չգիտեր վոր կողմից սկսել։

Վերջապես, նա ձեռքը խփելով Դիմաքսյանի ծնկին, ասաց.

— Գիտե՞ս ինչ, Արսեն, յես քանի անգամ ասել եմ, վոր դու ինձ

յերբեք որինակ չվերցնես քեզ համար։ Դու ուրիշ մարդ ես, իսկ յես ուրիշ։ Մենք հակատիպարներ ենք։

Ճիշտ է, նա գդակ կվերցներ ու դպրոցից դուրս կգար, բայց յերբեք չեր կամենալ, վոր յուր ընկերն էլ այդպես անի։ Չեր կամենալ, մինչև անգամ, վոր նա հուսահատվի մազաչափ։ Վաղուց, շատ վաղուց նրա գլխում կազմվել եր հասարակական գործիչի լիակատար իդեալը։ Ո՛վ գիտե, վորքան նա բախտավոր մարդ կհամարեր իրան, յեթե կարողանար տասներորդի չափ լինել այն, ինչ-վոր նրա կարծիքով պետք է լինի հասարակական գործիչը։ Բայց նա զգում եր, վոր չի կարող և հենց ավելի ցավալին եր այդ, վոր զգում եր։

— Իսկ դու կարող ես լինել,— շարունակեց նա վրդովված,— յեթե միայն աշխատես։ Բայց դու, Արսեն, դեռ, ներիր, վոր պարզն եմ ասում, դեռ շատ անեփ ես, անեփ, թե՛ ինչպես ընկերական մարդ և թե ինչպես գործի մարդ։ Քանի-քանի անգամ յես տեսել եմ, վոր ամեն մի չնչին բան քեզ հուսահատեցնում և կամ խռովում, վրդովում։ Յերբեք յես չեմ մոռանալ այն որը, յերբ մի ինչ-վոր լրագրի հոդվածից, մի վայր ի վերո գրվածքից քիչ եր մնում խելագարվեյիր։ Կարծես, չգիտեյիր, վոր այդ թուղթ մրոտողների հարյուրից իննսունն իննը չարժեն ընկուզի կճեպին։ Չեմ մոռանալ և՛ այն որը, յերբ դու վրդովված և հիացած պատմում եյիր, թե ինչպես քեզ ընդունել են քո հայրենի քաղաքում։

Յեվ միքանի վայրկյան լռելուց հետո, իդեալիստը շարունակեց, ձայնի տոնը փոխելով և ավելի սառն կերպով։ Նա ասաց, թե բուն հասարակական գործիչը այդպես չի լինում. նա հեռու յե սնափառության վտանգավոր ախտից։ Նրա համար նշանակություն չունեն վոչ ծափահարությունները և վոչ հալածանքները։ Նա վոչ վոքից չի սպասում վո՛չ վարձատրություն, վո՛չ յերկրպագություն։ Նա յուր վարձը և խրախույսը պտրում է յուր անձնավորության մեջ և այնտեղ է գտնում։ Նրա բարոյական սնունդը, նրա հոգեկան քաջության միակ աղբյուրը յուր սիրտն է, յուր ներքին աշխարհը։ Այնտեղ է նա վորոնում գովասանքն էլ, պարսավանքն էլ։ Այնտեղ է նա զգում և՛ ծափահարության ձայնը, և՛ անաչառ, խիստ քննության հարվածները։ Դրսի աշխարհը այս դեպքում նրա համար գոյություն չունի։

Նա դարձյալ լռեց, նայեց ընկերոջ յերեսին և ապա ավելացրեց.

— Ասա, այսպե՞ս է, թե՞ չե, հերքիր, յեթե սխալվում եմ։

Բայց Դիմաքսյանը լուռ եր և ուշադիր լսում եր ընկերոջը։ Նա համաձայն եր նրա ասածների հետ. նա ինքը վաղուց այդ բանը գիտեր։ Բայց լսել մի ուրիշից այդպես բացարձակ, անկեղծ և խիստ

կերպով—ծանր էր նրա համար, այդ ուրիշը լինի նրա ամենամտերիմ ընկերը։

Նա վախենում էր նայել Մսերյանի չերեսին, վոր այդ րոպեյին այնքան խիստ, չերկյուղալի, բայց և հարգելի չէր նրա համար։ Նա զգում էր յուր դեմ նստած մի անողոք բուժիչ։ Սուր դանակը ձեռին, սառնությամբ այդ բժիշկը ոպերացիայի չեր չենթարկում նրա հոգու ամենաթույլ, ամենահիվանդոտ մասերը։ Բայց նա գիտեր, վոր այդ խստությունը առաջանում է միմիայն հիվանդին բուժելու անկեղծ և ջերմ ցանկությունից։ Նա դողում էր, հուզվում, բարկանում, բայց և չէր ընդդիմանում այդ անողոք վերլուծությանը։

Գունատ դեմքով, աչքերը խոնարհեցրած, շնչասպառ և դժվարությամբ արտասանեց.

— Շարունակիր։

Մսերյանը ասաց, թե յուր ասելիքը վերջացրել է։ Նա ավելացրեց միայն, թե յուր շրջանին, հասարակությանը, վերջապես մարդկությանը ծառայող ամեն մի փոքր թե մեծ մարդ ունե մի վորոշ իդեալ։ Նա մաղթեց, վոր Արսենի բարձրագույն իդեալը լինի նա, վորին վոչ մի իդեալ չե կարող հասնել։ Նրան չծափահարեցին, այլ հալածեցին, վորովհետև ոտարոտի գաղափարներ էր քարոզում։ Բայց նա չէր հուսահատվում, այլ գործում էր մարդկային տգիտության դեմ։ Նա ցավ չէր զգում մինչև անգամ այն ժամանակ, չերբ բևեռված էր։

— Վորովհետև նա յուր սրտի խորքում, գիտես, այստեղ, ուներ անսահման սփոփանքի և բերկրության աղբյուր։ Դա աստվածային լույսն էր։ Այո, նա չե բուն մարդը, ով այդ լույսը գոնե մի նշույլն ունե յուր մեջ։ Առանց նրան չկա ճշմարիտ մարդ, չկա մանավանդ ուրիշներին ոգտավետ լինել կամեցող մի անհատ։

Նա վերջացրեց խոսքը և սկսեց անց ու դարձ անել սենյակում։ Արդեն որը բավական մթնել էր։ Նա պարզ չեր տեսնում Դիմաքսյանի դեմքը, և չեթե տեսներ, պետք է այնտեղ կարդար յուր խոսքերի խոր ազդեցությունը։

— Իհարկե, դու ինձ կարող ես ֆրազյոր համարել։ Բայց այդ ինձ համար միևնույնն է, միայն թող իմ կարծիքը քեզ չվիրավորի։ Դու շատ լավ գիտես, վոր մի ուրիշի հետ այսպես պարզ չեյի խոսիլ։ Բայց քեզ սիրում եմ և հարգում։

— Շնորհակալ եմ, մրմնջաց Դիմաքսյանը խուլ ձայնով,—շնորհակալ եմ։

Ցեվ միքանի վայրկյան լռելուց հետո, հառաչելով ավելացրեց.

— Այո, չես անեփ եմ, չես շատ թերություններ ունեմ։

IX

Գայանեի թախիծը քանի գնում, այնքան սաստկանում էր։ Դեռ առաջին միքանի ամիսները նորածինը գրավել էր նրա միտքը։ Չար կասկածը տեղի չէր տվել մայրական անդրանիկ սիրո զգացմանը։ Բայց անցան այդ ամիսները, և նա դարձյալ յենթարկվեց մի անգամ արդեն յուր սրտի մեջ արմատ ձգած տանջանքին։

Շատ անգամ ամուսինների մեջ տեղի էին ունենում ընտանեկան անախորժ տեսարաններ։ Մարդը, հարկավ, աշխատում էր փարատել կնոջ կասկածը, բայց իզուր։ Յեթե ամենքը հավատացնեյին, դարձյալ Գայանեն չէր համոզվի, թե միմիայն ինքն է սիրելի յուր ամուսնու համար և թե Իսակը ուրիշ վոչ վոքի վրա աչք չունի։ Գալով փաղաքշանքներին, այստեղ էլ Գայանեն զգում էր մի կեղծիք, մի նուրբ փարիսեցիություն։— Մի բան, վոր տեսնում էր յուր ամուսնու հասարակական կյանքի մեջ էլ։ Ո՞ւր է այն հոգեկան զորությունը, վոր սպասում էր նա, թե մի օր պետք է յերևան գա։ Ո՞ւր են այն բարոյական անխախտ սկզբունքները, վոր տղամարդին աստվածացնում են կինարմատի աչքում, իսկ կնոջ սիրտը լցնում հպարտ պարծանքով յուր մարդու վերաբերմամբ։ Ինչո՞ւ նրա և Դիմաքսյանի մեջ ծագեցին այդ յերկպառակությունները։ Չէ՞ վոր նրանք գաղափարակից ընկերներ էին, կնշանակե յերկուսից մեկը փոխեց յուր հայացքները։

«Վո՞րը փոխեց»,— հարցնում էր ինքն իրան Գայանեն, և մի ներքին ձայն նրան պատասխանում էր, թե վոչ Դիմաքսյանը։

Յեվ վորքան Բարաթյանը արհամարհանք ցույց տար դեպի այդ մարդը, սակայն նուրբ բնազդումով Գայանեն զգում էր, թե Դիմաքսյանն է գաղափարի մարդ, նա յե վորոշ և անխախտ համոզմունքների տեր։ Նրան թվում էր, վոր հաճախ յուր ամուսինը այդ մարդու դեմ խոսում է նախանձից դրդված։

Մի անգամ Գայանեն, իրան չկարողանալով զսպել, մի այդպիսի ակնարկություն արեց։

Բարաթյանը բարձրաձայն ծիծաղեց և յերեսը հետ դարձրեց։ Բայց արդեն նկատելի էր, վոր նրա ծիծաղը և արհամարհանքը դեպի Դիմաքսյանը արվեստական էին դառնում և կնոջ պաշտպանությունը վրդովեցնում է նրան։ Իսկ Գայանեն նայեց հետևից նրա առողջ պարանոցին և մի տեսակ ատելություն զգաց։— Մի տարօրինակ, անբացատրելի ատելություն, վոր առաջին անգամն էր զգում։

Մի ուրիշ անգամ Գայանեն բացարձակ հայտարարեց յուր ամուս-

նուն բոլոր այն հույսերը, որ դրել եր նրա վրա։ Նա ուրիշ բան եր սպասում Բարաթյանից։ Նա կարծում եր, թե ահա գտել ե, վերջապես այն մարդուն, որ կարող է իրագործել նրա իդեալը տղամարդի մասին։

—Յես շատ բան եյի պահանջում տղամարդից, ով գիտե, գուցե անիրագործելի բաներ։ Բայց չե՞ որ դու յել այն ժամանակ գոնե բերանացի համաձայնվում եյիր իմ պահանջների հետ։ Կարելի յե յես յերեխա եյի, անփորձ, միամիտ, աշխարհի վրա վարդագույն աչքերով եյի նայում։ Բայց այժմ յես չափավորել եմ իմ պահանջները և տեսնում եմ, որ ելի խաբված եմ, որ ամենաչնչին հույսս անգամ չի իրագործվում։ Իսկ, այժմ յես քեզանից ոչինչ չեմ ուզում, ոչինչ, բացի մի բանից, այն է, որ դու այս չար կասկածը հանես իմ սրտից...

Նրա աչքերի մեջ փայլեց ներքին հոգեկան դառնություն։ Նա մի յեռանդուն ճիգ արեց և զսպեց յուր արտասուքը։

Բարաթյանը մի վայրկյան նայեց նրա յերեսին և մի ինչ-որ միտք անմիջապես թելադրեց նրան փոխվել։ Նրա դեմքից չքացավ կծու հեգնության ժպիտը, տեղի տալով մեղմ և փաղաքշական արտահայտությանը։ Նա հանդարտ մոտեցավ Գայանեյին, բռնեց նրա ձեռը և նայելով նրա աչքերին, հարցրեց.

—Ո՞ւմ դեմ է քո կասկածը։

—Ո՛չ, մի՛ հարցնիր ինձանից, մի՛ հարցնիր, չեմ կարող ասել...

—Գայանե, դու իրավունք չունիս, գիտե՞ս, իրավունք չունիս ինձ սրբապիղծ մարդ համարելու։

Այս խոսքերը նա մի այնպիսի յեղանակով արտասանեց, որ մի վայրկյան Գայանեյի սիրտը, կարծես, թեթևություն զգաց։ Նա թույլ տվեց ամուսնուն իրան համբուրել։ Բայց անցավ այդ վայրկյանը, յերբ նա նայեց մարդու աչքերին։ Այնտեղ, այն քնքուշ և մեղմ արտահայտության տակ, Գայանեն տեսավ մի ավելի կեղծ բան, որ միայն նրա համար եր նշմարելի։

Նա կամացուկ յուր ձեռը ազատեց մարդու ձեռներից և մի քայլ հետ կանգնեց։

Բարաթյանը հասկացավ այդ շարժման իմաստը և յերեսը հետ դարձրեց։ Նա գիտեր, որ դժվար, մինչև անգամ անհնարին է փարատել յերիտասարդ կնոջ զգայուն սրտի մեջ բույն դրած կասկածը։ Ուստի բարվոք համարեց խոսակցությունը չերկարացնել։

—Բայց արդեն ժամանակ է ճաշելու, սիրելիս,—ասաց նա զվարթ յեղանակով,—որքան ել բանաստեղծական լինենք, ստամոքսը յուր ուզածն է պահանջում։

Յեվ շվացնելով անցավ սեղանատուն։

Նույն որերը կանանց ընկերության ոգտին ժողովարանի դահլիճում յերեկույթ եր նշանակված։ Գայանեն վճռել եր չգնալ, բայց ամուսինը սաստիկ թախանձեց նրան, վոր համառություն չանի։ Անկարելի չե, վերջապես, բոլորովին յերես դարձնել հասարակությունից։ Ի՞նչ կմտածեն մարդիկ, միշտ նրան առանց կնոջ տեսնելով հանդեսներում։ Ընտանեկան խռովություններ կարելի յե ունենալ, բայց միշտ ուրիշների աչքից պետք ե քողարկած պահել։ Թող ամենքը համոզված լինեն, վոր նրանց մեջ տիրում ե փոխադարձ սեր։

Յերեկույթը բաղկացած եր նվագահանդեսից և պարերից։ Մի հնամաշ դերասանուհի յերգում եր մի ինչ-վոր դրամատիկական յերգ։ Գայանեն նստած եր յուր ամուսնու մոտ տխուր, լուռ և անտարբեր։ Նրա դեմքի վրա չկար նախկին գրավիչ ժպիտների նշույլն անգամ։ Այդ դեմքը բարկացնում եր ամուսնուն, և սա ստեպ-ստեպ շշնջում եր նրա ականջին, խնդրելով, վոր գոնե ուրիշների առաջ ուրախ ձեվանա։

«Յես վոչ կարող եմ կեղծել, և վոչ կամենում եմ», պատասխանում եր Գայանեն։

Նվագահանդեսը վերջացավ։ Բարաթյանները դուրս յեկան դահլիճից մի փոքր անցուդարձ անելու։ Հասարակության խուռն բազմության մեջ Գայանեն նկատեց Դիմաքսյանին։ Մի անկյունում կանգնած՝ նա խոսակցում եր մի ինչ-վոր պարոնի հետ։ Տեսնելով Գայանեյին, սառն քաղաքավարությունով գլուխ տվեց և կամենում եր յերեսը կրկին դարձնել յուր խոսակցին, յերբ տիկինը ձեռը մեկնեց նրան։

Դիմաքսյանը շփոթված սեղմեց այդ ձեռը, հարցնելով տիկնոջ առողջությունը։

—Շնորհակալ եմ,—պատասխանեց Գայանեն,—բայց ինչո՞ւ դուք մեզանից բոլորովին յերես դարձրիք. այդ լավ բան չե...

Այս անկեղծ հանդիմանությունը կատաղի հակառակորդի կնոջ կողմից անսպասելի յեր Դիմաքսյանի համար։ Մինչ նա մտածում եր ինչ պատասխանել, չկարողանալով ակնարկել փոխադարձ սառնության բուն պատճառը, Գայանեն պարզությամբ ասաց, թե ինքը ամեն ինչ գիտե։

—Ձեր կռիվը իմ ամուսնու հետ ե, իսկ յես չեզոք մարդ եմ։

Նրա ձայնը այնքան մեղմ և անկեղծ եր, նրա հայացքը այնքան պարզ և բարեհամբույր եր, վոր Դիմաքսյանը ակամա մոռացավ յուր ատելությունը։ Այդ կապուտակ աչքերը զարթեցրին նրա մեջ անցյալի հիշատակները, և դարձյալ նրա սիրտը սկսեց բաբախել։

Բայց ինչու՞ հուզվել։ Չէ՞ որ Գայանեն այժմ ուրիշին է պատկանում և այն էլ նրա հակառակորդին։ Պետք է համատատմիտ լինել, սառնությունն ցույց տալ այդ կնոջ, որ այնպես արհամարհեց նրան։

Այսպես դատում էր Դիմաքսյանի խելքը։ Այնինչ՝ նա չէր զգում, թե ինչպես անցավ կես ժամ, մի ժամ, և դեռ խոսում էր նրա հետ։

Գայանեն էր խոսակցությունը չերկարացնողը։ Ցեվ խոսում էր այնպիսի նյութերի մասին, որ ակամա շարժում էին Դիմաքսյանի հետաքրքրությունը։ Միայն մի բանից էր խույս տալիս Դիմաքսյանը —տիկնոջ ամուսնու հետ ունեցած ընդհարումներից։ Անցյալի վերաբերյալ նա նույնն էր, ինչ-որ առաջ—շուտ վրդովվող, պարզ, անշեղ և չերբեմն խստադատ։

Նա մազու չափ չէ փոխվել, նրա հայացքները նույնն են, կյանքը նրան չէ աղավաղել. այդ պարզ է Գայանեյի համար։

Նրանք կանգնած էին դահլիճի դռներից վոչ հեռու, պատի տակ։ Գայանեն չերբեմն նայում էր պարողների կողմը։ Նրա աչքերը ակամա վորոնում էին ամուսնուն և չէին գտնում։ Նա մի քայլ առաջ գնաց և մոտեցավ պարողներին։ Դիմաքսյանը հետևեց նրան։ Վերջապես, ահա նա… Տիկին Բախտամյանի հետ թև թևի տված՝ դուրս է գալիս դահլիճից։ Ցերևի շատ պարելուց հոգնել են, և տիկինը կամենում է սեղանատանը մի սառը բանով զովացնել յուր ծարավը։

—Այստեղ սաստիկ տոթ է, անցնենք մյուս դահլիճը,—ասաց Գայանեն, ներքին խռովությունից շրթունքները ատամների տակ սեղմելով։

Դիմաքսյանը հետևեց նրան ծանր քայլերով։ Նա չտեսավ Բարաթյանին։ Նա այլևս վոչինչ չէր տեսնում, չէր նկատում, չէր լսում, բացի Գայանեյից և նրա մեղմ, հոգնած ձայնից։ Վորքան փոխվել էր չերիտասարդ տիկինը նրա աչքում, վո՜րքան գունատ էր, նիհար, այո, մինչև անգամ տգեղացած։ Միթե ընտանեկան հոգսե՞րն են այդպես ազդել նրա վրա…

Կար ժամանակ, չերբ Գայանեն այդ մարդուց փախչում էր, մինչև անգամ վախենում էր դեմ առ դեմ խոսել, և ինքն էլ չգիտեր ինչու։ Այժմ չքացել էր այդ չերկյուղը։ Այժմ նա խոսում էր ազատ, համարձակ։ Հաճելի չէր նրա համար մտածել, թե մի ժամանակ այդ մարդը սիրել էր նրան և գուցե տանջվել։ Այդ միտքը նրան չէր շփոթեցնում։ Չէ՞ որ ամեն ինչ անցել է, այլևս չկա այդ սերը, ուրեմն նրանք կարող են լինել բարեկամներ։ Իրավ, Գայանեյի համար ցանկալի չէ բարեկամ ունենալ Դիմաքչյանին, այդ խելացի, ազնիվ, զարգացած, գաղափարական մարդուն։

նայում էր դեպի սենյակի հեռավոր անկյունը։ Հանկարծ նա գունատվեց։ Նա արագությամբ վեր թռավ տեղից, ասելով

—Կարծեմ, ժամանակ է տուն գնալու։

Նրանք մտան պարերի դահլիճը։ Դիմաքսյանի վռանները դողում էին ներքին հուզմունքից։ Նա ուրախ էր, յերջանիկ էր։ Նա ամբողջ ժամ ու կես խոսել էր այն էյակի հետ, վորից նա իրան ատված և ծաղրված էր համարում։

Գայանեյի հետևից նույն սենյակից դուրս յեկավ նրա ամուսինը տիկին Բախտամյանի հետ։ Նա տիկնոջ թեը բաց թողեց ճիշտ այն վայրկյանին միայն, յերբ Գայանեն Դիմաքսյանին «ցտեսություն» ասաց։

Առանց միմյանց մի խոսք ասելու, մի ակնարկով մարդ ու՛ կին հասկացան իրարու սրտինը։ Նրանք դուրս յեկան ժողովարանից թևթևի տված—այսպես կամեցավ Բարաթյանը։

Կառքը նրանց սլացնում էր Թիֆլիսի փողոցներով. յերկուսն էլ լուռ էին։ Գայանեն անընդհատ հառաչում էր, իսկ Իսակը անընդհատ շվացնում էր և ցածր յերգում։

Յերբ տուն հասան, Գայանեն խելագարի պես վազեց յերեխայի սենյակը, հարձակվեց նրա վրա և սկսեց արագ-արագ ու ամուր համբուրել։ Յերեխան զարթնեց և լաց յեղավ։ Դայակը առավ նրան յուր գիրկը։

Սեղանատանը ընթրիքը պատրաստ էր։ Գայանեն հրաժարվեց ուտելուց, մնաց յերեխայի սենյակում և այնտեղ էլ գիշերեց։ Իսկ ամուսինը ընթրեց հանգիստ ու զվարթ, ինչպես միշտ, ծառայի հետ կատակներ անելով։

Մյուս առավոտ թեյ խմելիս նա ժպտալով դարձավ Գայանեյին.

—Հըմ, ի՞նչպես ես յերեկվանից դես։

—Շատ լավ։

—Սրտիդ փափագը առի՞ր «նրանից»։

—Իսկ դուք նույնպես ձեր սրտի փափագը առի՞ք «նրանից»։

—«Մենք» «ձեր» ազգականուհու հետ էինք։

—Յես էլ ձեր ընկերոջ հետ էի։

—Նախկին ընկերոջ, այս մեկը յերբեք մի մոռանար։

—Բավական է,—գոչեց Գայանեն վրդովված,—յերեկ, վերջապես, պարզվեց ձեր բարոյական պատկերը։

—Ի՞նչ ես ուզում ասել։

—Այն, վոր... այն, վոր... յես դժբախտ եմ։

Յեվ բուռն արցունքը, անզսպելի ուժով դուրս բղխելով, վողողեց նրա այտերը։

—Ինչու չես լալիս,—ասաց մարդը սառն կերպով,—դու ինձ էիր փորձում, ես էլ քեզ փորձեցի։

—Ե՛ս, փորձում էի ձեզ,—պատասխանեց Գայանեն խեղդված ձայնով,—ո՛չ, ես այդ տեսակ խաղեր չգիտեմ, դա ստորություն է։

Նա վերկացավ տեղից և դուրս գնաց։

Մարդը հետևեց կնոջը և տեսավ, որ նա, երեսը բարձի մեջ թաղած, ուժգին հեկեկում է...

X

Սկզբում Գայանեյի անսպասելի բարեկամական վարմունքը Դիմաքսյանին պատճառեց անսովոր բերկրություն։ Տուն վերադառնալով, նա անընդհատ շվացնում էր և քթի տակ երգում. մի բան, որ երբեք չէր արել և որ հետևյալ օրը կրկնելով, շատ ուրախացրեց և շատ զարմացրեց Սիրականին։ Գայանեն նրան չի ատում, չի արհամարհում։ Նա մինչև անգամ հանդիմանում է նրան, թե ինչու այնպես երես է դարձրել նրանից։

Բայց անցավ առաջին տպավորությունը, և Դիմաքսյանի լուրջ միտքը շուտով մոռացավ տարօրինակ բերկրությունը։ Դարձյալ մտատանջությունը տիրեց նրան, և այս անգամ ավելի ծանր մի մտատանջություն։

«Ի՞նչ օգուտ. ի՞նչ օգուտ, գոչեց նա հանկարծ, բևեռվածի պես կանգ առնելով սենյակի մեջտեղում, չէ՞ որ այսուհետև ուշ է և շատ ուշ»։

Միթե բախտը կարող է այլ ևս ժպտալ նրան, և ինչպես։ Ո՛չ, նա չպիտի մոտենար Գայանեյին, չպիտի խոսեր նրա հետ։ Ի՞նչ ապացույց կա, որ այդ սիրուն տիկինը չի ուզում նրան ծաղրել յուր մտքում։

Նա մի բարկացոտ շարժում գործեց, շտապով հագնվեց և գնաց դպրոց։ Այստեղ երկպառակությունները օրից օր սաստկանում էին։ Արդեն բացարձակ խոսվում էր, թե առաջիկա տարի Ինչաթյանը տեսուչ պետք է նշանակվի։

Դիմաքսյանի դրությունը քանի գնում վատանում էր։ Այժմ ամենքն էին նրա դեմ։ Ամբողջ մեծ պասի ընթացքում Ինչաթյանը աշակերտներին, առանց տեսչի հրամանի, տանում էր եկեղեցի։ Չարչարման շաբաթը նա ինքն էլ նրանց հետ հաղորդվեց, յուր դեմքի վրա պահելով խորին ջերմեռանդության արտահայտություն։

Նկատելի էր, որ հետզհետե աշխատում էին դպրոցից վանել

այն բոլոր վերանորոգումները, որ Դիմաքսյանը մտցրել եր այնտեղ։ Յեվ այդ բոլորը կատարվում եր հոգաբարձուների գիտությամբ։ Դիմաքսյանը բարկանում եր, կատաղում, բողոքում։ Նրա առջև դնում եյին դպրոցի կանոնադրությունը և հոգաբարձության իրավունքները։

Ցավալի և վշտալի չեր նրա համար տեսնել, թե ինչպես նորից աշակերտները սկսում են թառամել, նորից անհետանում ե նրանց դեմքերից զվարթությունը և տեղի տալիս ճնշող մելամաղձությանը։ Յեվ նա գիտեր, որ այդ բոլորի իսկական հեղինակները յերկու մարդ են—Բարաթյանը և Վեքիլյանը։

Չեր կարելի ասել, թե այդ մարդիկ բոլորը բացառապես Դիմաքսյանի ջգրու եյին անում։ Ո՛չ, մեծ մասամբ այդ բղխում եր նրանց համոզմունքից։ Աշակերտների մեջ հղացած հլությունը նրանք համարում եյին համեստություն, յերկյուղը—հեզություն։ Դա չեր նրանց աչքում բարոյական դիսցիպլինան։

— Այժմ դպրոցը դպրոցի յե նման և ո՛չ թե նիհիլիստների ժողովարանի,—կրկնում եր Վեքիլյանը, ձեռները հաճույքով շփելով միմյանց։

— Այո, ի հարկե,—պատասխանում եր Բարաթյանը,—յեթե ո՛չ, առաջ ամեն մի գլուխ առանձին գաղափար ուներ։ Ամեն մի աշակերտ արդեն խոսքը այսպես եր սկսում. «իմ կարծիքով»... Աշակերտ և կարծի՞ք...

Հոգաբարձության ծայրահեղ կամայականության դեմ Դիմաքսյանը գրավոր բողոք ուղարկեց Սինոդին։ Բայց անցել եր հինգ շաբաթ և դեռ պատասխան չեր ստանում։

—Յեվ յերբեք չես ստանա,—ասաց մի որ բժիշկ Սալամբեկյանը։

Բժիշկը ասաց, թե բողոքը այժմ առաջնորդի գրասեղանի մեջ ե։ Դիմաքսյանը սխալվել եր, անմիջապես դիմելով Սինոդին. նա պետք ե առաջնորդի միջոցով բողոքեր։ Այժմ թող նա սպասի սրբազանի «վերաքննությանը»։

— Քեզ ո՞վ ասաց այդ,—հարցրեց Դիմաքսյանը։

— Վեքիլյանը։

Բժիշկը պատմեց, թե նախընթաց որը սաստիկ ընդհարում ե ունեցել իրավարանի հետ Դիմաքսյանի պատճառով։ Վեքիլյանը աշխատելիս ե յեղել ապացուցել, որ տեսուչը յուր գաղափարներով դպրոցը տակն ու վրա յե արել։ Սալամբեկյանը հաստատել ե, թե Վեքիլյանը և Բարաթյանը իրանց գաղափարներով դպրոցը ուզում են բարոյական անկելանոց դարձնել։ Վեճը հասել ե ծայրահեղության, յերկու ընկերներ միմյանց վիրավորական խոսքեր են ասել։

— Յես սառնարյուն մարդ եմ, բայց այդ անխիղճը մի այնպիսի սատանայական ակնարկություն արեց, մի այնպիսի ածական տվեց քեզ, որ արյունս գլուխս խփեց, յես ուզում եյի մինչև անգամ ապտակել նրան։

Խոսակցությունը տեղի ուներ Մսերյանի սենյակում։ Իդեալիստը վրդովված ականջ եր դնում, սակայն խոսակցությանը չեր մասնակցում։

— Այժմ ի՞նչ կհրամայես անել,—դարձավ Դիմաքսյանը նրան։

— Կհրամայեմ, որ մրցումդ շարունակես։

— Առանց զենքի՞, միայնա՞կ։

— Քո զենքը թող լինի ճշմարտությունը, յեթե համոզված ես, որ այն քո կողմն է։

— Այդ կնշանակե յերկաթե պատը յեղունգներով փորել։

— Փորի՛ր, բայց մի հրաժարվիր գործից։

— Յես չեմ հրաժարվիլ, բայց իրանք կհրաժարեցնեն։

— Խելոք մարդիկ նրանց վարմունքը կհամարեն բռնություն։

— Իսկ յես կասեմ,—մեջ մտավ բժիշկ Սալամբեկյանը—որ խելոք մարդիկ կծիծաղեն Արսենի վրա։ Ասա խնդրեմ, քո կարծիքով, ովքե՞ր են այդ խելոք ասածներդ։ Չլինի՞ թե քեզ և ինձ ես համարում. յերեսիդ խաչակնքիր ու մեղա յեկ։ Այո, մեծապատիվ պարոն ողջամիտ-իդեալիստ, խելոքը նա չե, ով որ յուր բարեկամի վոտների տակ ձմերուկի կճեպ է դնում, որ նա մի լավ սալտոմորտալ անի։ Այսպես է անում ընկերը ընկերոջը, իսկ թշնամիները, Ինչաթյանները և նրանց նմանները, գիտե՞ս ինչ են անում։ Նրանք հասարակության մեջ տարածում են, թե Դիմաքսյանը կաշառված դավաճան է, հասկանում ես ինչի մասին է խոսքս...

—Ինչաթյանը, իմ մասի՞ն,—գոչեց Դիմաքսյանը խեղդված ձայնով։

Բուռն կատաղությունը խլեց նրա կրծքից մի յերկարատև դառն ծիծաղ։ Ձեռը խփելով ճակատին, նա ուժասպառ նստեց աթոռի վրա, կրկնելով.

— Յե՞ս դավաճան, ազգավաճա՞ռ...

Անցել եյին մի քանի օրեր այդ խոսակցությունից։ Դիմաքսյանը տանը նստած խորհում եր յուր անելիքի մասին։ Տոն որ եր։ Հանկարծ նա լուսամուտի առջև, պատշգամբի վրա, տեսավ մի խումբ աշակերտներ, որ, միմյանց ուսերի վրայով գլուխները բարձրացրած, նայում եյին դեպի ներս։

Նա դուրս յեկավ և հարցրեց, ինչ են կամենում։

— Բողոք ունենք, պարոն տեսուչ։

— Մտե՛ք։

Միմյանց հետևից, ամաչելով ու քաշվելով, ներս մտան վեց պատանիներ տասնույոթից մինչև քսանուերկու տարեկան։ Բոլորին էլ Դիմաքսյանը առանձին-առանձին ճանաչում էր, բոլորն էլ գյուղացիներ էին՝ հինգերորդ ու վեցերորդ դասատան աշակերտներ։

Գդակները փորների վրա պահած, նրանք շարվեցին պատի տակ, «Ավետիս» տաղի տիրացուների պես։

— Ի՞նչ եք կամենում։

Աշակերտները իրանց միջից մեկին բոթելով առաջ գցեցին։ Դա ամուր կազմվածքով, դեմքի խոշոր գծերով լոռեցի Մարաքյանն էր, թվարանության մեջ ամենից ընդունակ աշակերտը։

— Պարոն տեսուչ,— խոսեց նա, առաջ նայելով յուր գդակին, հետո առաստաղին, հետո տեսչին,— մենք բողոքում ենք։

Նա շփոթված էր, հազիվ կարողանում էր բառերը արտասանել։ Դիմաքսյանը խրախուսեց նրան և բարեկամաբար հրավիրեց ամենքին նստել։ Բայց աշակերտները գդակները շուռ տվեցին ձեռներում, հազացին, այս ու այն վոտի վրա տատանվեցին և չնստեցին։

Մարաքյանը շարունակեց։

— Մեզ հետ շատ վատ են վարվում, պարոն տեսուչ, կարծես, մենք վայրենիներ ենք։

— Առանց ավելորդ խոսքերի, պատմե՛ք, ինչ-վոր պատահել է։ Ո՞վ է ձեզ հետ վատ վարվում։

— Վերակացուները։ Յերեկ յերեկոյան միասին հավաքված «Արկածներ» էինք կարդում։ Հանկարծ հերթակալ վերակացու պարոն Թունիբեկյանը յեկավ գիրքը ձեռքիցս խլեց, գլխիս խփելով ասաց. «Բոլի լոռեցի, քեզ չե՞մ ասել ընկերներիդ մի՛ անբարոյականացնիլ»։

— Ձեզ արգելե՞լ են այդ գիրքը կարդալ։

— Այո։

— Ուրեմն պարտավոր էիք չկարդալ։ Ա՞յդ է միայն ձեր բողոքը։

— Վոչ, պատճառներ շատ կան։ Չորրորդ դասատանը Մուրղուլյանին, հինգերորդ դասատանը Մարբաղյանին, վեցերորդում Սալնյանին մեր գլխին լրտես են նշանակել։

— Լրտե՞ս,— գոչեց Դիմաքսյանը զարմացած։

— Այո, մեր ընկերներին մեր գլխին լրտեսներ են նշանակել։ Ինչ վոր խոսում ենք՝ ասում են Ինյաթյանին, նա յել հայտնում է հոգաբարձուներին։ Մենք ի՞նչ ենք անում, մենք վոչինչ չենք անում։

Հետո աշակերտները միմյանց հետևից պատմեցին մի քանի վրդովեցուցիչ դեպքեր։ Անցյալ որը Սարաֆյանը գիշերօթիկների հա-

մար թուղթ էր գնել յուր փողով։ Վերակացու Դիլբիլյանը տեսել էր թե չէ՝ առել էր թուղթը նրա ձեռից և ամանով խփել Սարաֆյանի գլխին։ Այսօր էլ Ինչաթյանը աշակերտներին ասել է. «Լսել եմ, խոսք եք կապել վերակացուներին ծեծելու, խառնակիչների ազգանունները ծոցատետրումս նշանակել եմ, պետք է հոգաբարձությանը հայտնեմ, որ բոլորին վռնդի դպրոցից»։

— Բայց ճշմարիտ է, կամեցե՞լ եք ծեծել։

— Մտքներովս էլ չի անցել,—պատասխանեց Մարաքյանը։

— Այո, մտքներովս էլ չի անցել,—կրկնեցին մյուսները։

— Մենք միայն Ջալբամյանի մասին ենք խոսել մեր մեջ։ Պարոն տեսուչ, նա մաքուր մարդ չէ, անպիտան մարդ է, բայց ծեծելու մասին խոսք չի եղել։

— Այո Ջալբամյանը անպիտան մարդ է։

— Կեղտոտ է։

— Անբարոյական է։

— Լավ, բավական է,—ընդհատեց Դիմաքսյանը մեղմ ձայնով,— շատ ուրախ եմ, որ ծեծելու մասին չեք մտածել։ Դա վայրենություն կլիներ, այդ տեսակ բաներ չերբեք չանեք։

Բայց պատգամավորները գրգռված էին։ Նրանք միաբերան պահանջեցին, որ Ջալբամյանը հեռացվի դպրոցից. հակառակ դեպքում, ասացին, թե ստիպված կլինեն դիմել այդ վայրենի միջոցին։

— Այո, կծեծենք նրան։

— Անպատճառ կծեծենք։

— Կջարդենք։

— Ցեթե դուք թույլ կտաք։

— Այո, յեթե դուք թույլ կտաք, պարոն տեսուչ։

— Մենք ձեզանից ենք միայն վախենում։

— Մենք միայն ձեզ ենք հարգում...

Մեկը, մի շիկահեր պատանի, մինչև անգամ բռունցքը սեղմելով, մի քանի քայլ առաջ գրեց այնպես, որ, կարծես, նույն վայրկյանին պատրաստ էր հարձակվել նույնիսկ Դիմաքսյանի վրա։

— Այն էլ ասա, այն էլ ասա,—շշնջացին մի քանիսը Մարաքյանի յետևից։

Առաջնորդ-պատգամավորը դարձյալ նայեց գդակին, շապիկի փեշերը ուղղեց և արտասանեց.

— Պարոն տեսուչ, մի բան էլ կա։

— Ի՞նչ է։

— Ձեզ վրա յել լրտես է նշանակված։

— Ի՞նձ վրա, ձիվ է նշանակել։

— Չենք իմանում, միայն դուք ինչ-որ աշակերտների մոտ խոսում եք, պատմում են պարոն Ինչաթյանին։

Դիմաքսյանը չկարողացավ յուր զայրույթը թագցնել, բայց, միևնույն ժամանակ, չհարցրեց, թե ով է յուր վրա լրտես նշանակված։ Առհասարակ նա չթողեց այդ մասին յերկար խոսել։

— Այժմ ինձանից ի՞նչ եք պահանջում,—հարցրեց նա։

— Խնդրում ենք, որ դուք մեզ պաշտպանեք։ Մենք յեթե մինչև օրս անկարգություն չենք արել, ձեզ հարգելուց չենք արել։ Մենք գիտենք, որ դուք մեզ սիրում եք, թույլ տվեք, պարոն տեսուչ, մենք նրանց կխրատենք։

— Այո, կխրատենք։

— Ջարդ ու...

— Սո՛ւս, լռեցե՛ք։ Ի՞նչ ասացի ձեզ. յերբեք թույլ չեմ տալ ձեզ այդ տեսակ վայրենություն։ Յեթե ինձ մոտ խորհրդի յեք յեկել, շատ շնորհակալ եմ։ Այո, յես ձեզ սիրում եմ, ուրեմն դուք էլ լսեցեք իմ խորհուրդը և կատարեցեք։ Ահա ինչ. գնացեք, հանգիստ շարունակեցեք ձեր դասերը, քննությունները վերջացրեք։ Արձակուրդներից հետո, յես հուսով եմ, ձեր դրությունը կփոխվի։

Նա կամենում եր առ ժամանակ խաղաղացնել բորբոքված սրտերը, բայց այդ շատ էլ դյուրին բան չեր։ Պատանի պատգամավորները այնչափ գրգռված եյին, որ տեսչի հանդարտ հորդորները նրանց ավելի վրդովեցնում եյին։ Վերջապես Դիմաքսյանը խոստացավ անպատճառ և շուտով միջամտել հոգաբարձության առաջ նրանց մասին, և պատանիները հրաժեշտ տվեցին, կրկնելով.

«Ձեր խաթրու կհամբերենք»։

VI

Մի քանի օր անցած դպրոցում լուր տարածվեց, թե տեսուչը աշակերտներին հորդորում է ապստամբվել։ Պատմում եյին, թե այս նպատակով նա յուր մոտ է կանչել մի խումբ չարամիտ առաջավորներ և ապստամբության հրահանգը տվել։

Ինչաթյանը պնդում եր, թե առաջին հարձակումը յուր վրա պետք է լինի, «վասն զի» Դիմաքսյանի գլխավոր հակառակորդն ինքն է։ Նա ամեն ճիգ գործ է դրել այդ «խելացնորի անմիտ, վնասակար գաղափարների» առաջն առնելու։ Նա կամեցել է դպրոցը «փրկել անկումից»։ Շատ հասկանալի յե, որ Դիմաքսյանը չպիտի մարսեր նրան։ Բայց նա վախկոտ մարդ չե, պատրաստ է «նահատակվել յուր համոզմունքների և նորագույն սերնդի փրկության» համար։

Վերակացու Զալբամյանը բակի մի անկյունում պահել եր մի կույտ քարեր։ Նա յերդվում եր, թե խառնակիչներն են վաղորոք այդ քարերը պատրաստել ապստամբության համար։ Հինգերորդ դասատան լոտես Մարբաղյանը յերաշխավոր եր Զալբամյանի ասածի ճշմարտության։ Յուր կողմից նա հավատացնում եր, թե միքանիսի վրա մինչև անգամ ատրճանակ ե նկատել։ Իսկապես նա վեցերորդ դասատան աշակերտ Աֆրիկյանի գրպանում մի բան նկատել եր, բայց հաստատ չգիտեր ատրճանա՞կ եր, թե՞ վարունգ, որ Աֆրիկյանը շատ եր սիրում և միշտ գաղտնի ուտում եր։

Հոգաբարձությունը անմիջապես խառն նիստ հրավիրեց ուսուցիչների հետ։ Ցերեկո յեր, ամենքը սպասում եյին նախագահի գալըստյանը։ Դիմաքսյանին ներկայացած վեց պատգամավորներին փակել եյին առանձին-առանձին սենյակներում։ Նրանց պետք ե հարց ու փորձ յենթարկեյին ջոկ-ջոկ, ուստի անջատել եյին միմյանցից, որպեսզի խոսք մեկ անելու միջոց չունենան։

Գիշերօթիկներին վաղորոք քշել եյին ննջարանները, դռները փակել եյին և պահապան դրել մի հաստաբազուկ մշեցու, որ չգիտեր, թե այդ ինչ իրարանցում ե սկսվել։ Հայրենիքի տխուր վիճակից վըշտացած հայաստանցին այնքան ծարավ եր թշնամու արյունին, որ յերևակայում եր, թե ամեն մի գիշերօթիկ մի յեզիդ ե։ Յեվ, կարծես, պատրաստ եր մահակը «զարնել» այն գլխին, որ կհանդգներ դռներից դուրս ցցվել։

Նիստին հրավիրվածները շփոթման մեջ եյին։ Շտապով անցնում եյին մի սենյակից մյուս սենյակ, խորհրդավոր կերպով միմյանց ականջին շշնջալով ապստամբության մանրամասն պարագաները։

Վեքիլյանը չափից դուրս վախեցած եր։ Ինյաթյանը նրան հավատացրել եր, թե ապստամբության հրահանգի մեջ նրա անունը յերկրորդ տեղն ե բռնում։ Նա հերթակալ եր։ Իբրև թե «չարամիտները» պետք ե սպանեյին նրա պալատյանը և Ինյաթյանից հետո նրան հարվածեյին։

— Ի՞նչ հանդգնություն, ի՞նչ հանդգնություն,—կրկնում եր նա անդադար,—բայց ի՞նչպես բաց արեցիք դավադրությունը, պատմեցե՛ք, պատմեցե՛ք։

Սակայն վոչ վոք հաստատ չգիտեր, թե «դավադրությունն» յեղել ե, թե չե։ Բանն այն եր իսկապես, որ նախընթաց որը վերակացու Զալբամյանը Մարաքյանից հարցրել եր, արդյոք ինչու յերկու որ առաջ նա յուր ընկերների հետ ներկայացել եր տեսչին։ Մարաքյանին այդ հարցը շփոթեցրել եր, որովհետև նա յերևակայել չեր կարող, թե

տուր պատգամավորությունը, բացի հինգ աշակերտներից, ուրիշ մեկին հայտնի չէ։ Զալբամյանը ստիպել էր նրան խոստովանվել, սպառնացել էր և վերջը, տեսնելով, որ ոչինչ չի օգնում, մի կեղտոտ հիշոց էր տվել Մարաքյանին։ Տաքարյուն պատանին, չկարողանալով իրան զսպել, ապտակել էր կոպիտ վերակացվին, ավելացնելով.

«Ձեզ բոլորիդ էլ պետք է այսպես պատժենք»։

Զալբամյանը աղմուկ էր բարձրացրել և ամենքին համոզել, որ ահավոր դավադրություն կա աշակերտների մեջ ուսուցիչների և հոգաբարձության դեմ։

Բարաթյանը շատ սառն էր պահում իրան։ Նա ընդդեմ էր ամեն մի ծայրահեղ միջոցի։ Նա ասում էր, թե «մտքերի խառնակության ժամանակ սառնասրտությունը ամենազորեղ զենքն է մարդու համար»։ Նա պնդում էր, որ ամեն ինչ պետք է գաղտնի կերպով անել, գործը չպիտի հռչակել, չէ՞ որ «դպրոցի ճակատագիրը կարող է վտանգի ենթարկվել»։ Սակայն Վեքիլյանը, Ամբակում Աֆանասյեվիչը և ուրիշները համոզել էին նախագահին, որ տեսչին հրավիրե ժողովի նիստին, ամենքի առաջ հարց ու փորձ անե և հետո հանդիմանե։

«Ի՜նչ չքնաղ տեսարան, ի՜նչ էֆեկտ—մտածում էր Վեքիլյանը —տեսնել Դիմաքսյանին մեղադրյալի նստարանի վրա, ամոթահար և ճնշված յուր հանցանքի ծանրության տակ»։

Սկզբում Դիմաքսյանը զարմացած և շփոթված էր։ Նա լսել էր անհեթեթ լուրը, բայց խառն ժողովի մասին տեղեկություն չուներ։ Նրան վերին աստիճանի քաղաքավարի կերպով հրավիրեցին նստել ընդհանուր սեղանի շուրջը, որ ծածկված էր կանաչ մահուդով։ Բայց նա հասկացել էր բանի էությունը, գիտեր, որ ամենքը իրան մեղադրյալ են համարում։ Նա մի կես արհամարհական և կես բարկացոտ հայացք ձգեց հանդիսավոր ժողովի վրա, և մի աթոռ վերցնելով, նստեց ժողովից հեռու, պատի տակ։

Նախագահը, յուր դեմքին տալով լուրջ բայց ներողամիտ արտահայտություն, մի համառոտ ճառով բացատրեց ժողովի նպատակը։

— Ոչ վասն պատժելո զմեղավորս, այլ վասն ա՛բառնալո զմեղս, — ավարտեց նա յուր ատենաբանությունը։

Դիմաքսյանը լուռ լսում էր։ Այժմ նա բոլորովին հանգիստ էր, այնպես, որպես յերբեք չէր յեղել այդ մարդկանց ներկայությամբ։ Նրան չէր վրդովեցնում մեղադրյալի վիճակը, որի մեջ դրել էին նրան։ Նա այդ բանի վրա մտքում ծիծաղում էր։ Նրան զայրացնում էր այդ հասարակական ներկայացուցիչների վարմունքը, առհասարակ, որպես վարմունք։

Երբ նրան հարցրին — արդյոք ճի՞շտ է, որ նա դրդել է աշակերտներին ապստամբելու — գլուխը ցավակցաբար շարժելով, արտասանեց.

— Եթե իմ պատասխանը ձեզ գոհացներ, անկասկած այս ժողովը տեղի չպիտի ունենար։

— Մեկիկ-մեկիկ առաջ բերեք հանցավորներին, — հրամայեց նախագահը։

Ջալլամյանը աներևութացավ և մի րոպե չանցած ներս բերեց միտասնութ տարեկան պատանի։ Դա վեց պատգամավորներից մեկն էր։

— Այդ դու չես, Դարբինյան. ճանաչում եմ, որդյակ, պատմիր հանցանքդ։

Տիրեց ընդհանուր լռություն։ Երեսուն ու չորս հայացքներ միաժամանակ բևեռվեցին պատանիի վրա։ Հանդիսավոր ժողովը նրան շփոթեցրեց։ Նա գունատ էր, կարմրեց, դողաց և միայն կարողացավ արտասանել.

— Ներեցե՛ք...

— Կներենք, որդի, ասա մեղքդ, մի վախենար։ Մենք քեզ չենք մեղադրել, դու տեսնես ես, «զի որ՜ չ գիտես զոր ինչ գործես»։ Անշուշտ քեզ այլ և այլ հորդորողներ չեղել են, հիշատակիր անունները, տեսնենք։

— Ես չգիտեմ, չես չեմ խոսել, Մարաքյանը և Սրիկյանը գիտեն...

— Երեք որ առաջ, այսինքն ամսույս վեցին, որն հինգշաբթի, առավոտյան տասն ու մեկ ժամեն ցտասներկու ու կես ժամը, ո՞ւմ մոտ չեղել եք։

— Պարոն տեսչի մոտ։

— Այսպես։ Պարոն քարտուղար. «չեղել ենք պարոն տեսչի մոտ»։

— Ինչու՞ համար չեղել եք այնտեղ։

— Բողոքելու։

— Ու՞մ դեմ։

— Վերակացուների։

— Այսպես։ Պարոն քարտուղար. «բողոքելու վերակացուների դեմ»։

Վեքիլյանը ինչպես իրավաբան-փաստաբան հարկ համարեց նախագահի խոսքը ընդհատել։ Նա միքանի շեշտակի հարցեր տվեց մեղադրյալին։ Պատանին այնքան շփոթվեց, որ ամեն քայլում ինքը իրան հակասում էր։ Վերջապես, նա արտասվեց։ Թևից բռնելով՝ նրան դուրս տարեցին։

Երկրորդ պատգամավորը չեղելությունը պատմեց ավելի ան–

խռով։ Վորքան նրան զանազան հարցերով նեղն եյին գցում, միշտ կրկնում եր.

— Պարոն տեսուչը մեզ խրատում եր հանգիստ մնալ։

Այդ միջոցին տեսուչը այնպես եր նստել, վոր քննվողները չգիտեյին անգամ, թե նա ներկա յե։

Նույնը կրկնեցին յերրորդ, չորրորդ և հինգերորդ աշակերտները։

Վերջապես, հերթը հասավ գլխավոր պատգամավորին։ Մարաքյանը անվեհեր ներս յեկավ, գլուխը բարձր պահած, հպարտ, ինչպես վայել եր որվա հերոսին։ Յերևում եր, վոր նա արդեն ամեն պատիժ աչքի առաջ եր առել։ Ուստի իրան տված քննական հարցերին նա պատասխանում եր համարձակ, աներկյուղ և մինչև անգամ կոպիտ յեղանակով։

Յերբ հարցրին տեսչի մասին, նա դրականապես պատասխանեց.

— Յեթե պարոն տեսուչը չլիներ, մենք անպատճառ պետք ե ապստամբվեյինք։

Ժողովը շշնջաց։ Վեքիլյանը փսփսաց Բարաթյանի ականջին. «Ամենքը կաշառված են»։

Այն ինչ Մարաքյանը, դառնալով իրան ներս բերող վերակացվին, ավելացրեց։

— Շնորհակալ յեղեք պարոն Դիմաքսյանից, վոր մի ապտակով միայն ազատվեցիք, թե չե՝ ձեր վոսկորները ջարդ ու փշուր պետք ե անեյինք...

— Դուրս տարեք Բեհեզզերուզի զավակին,— գոչեց նախագահը համբերությունը հատած։

Վերակացուն հանդուգն աշակերտին դուրս մղեց։ Ժողովականները շփոթված նայում եյին միմյանց։

Վեքիլյանը մինչև դռները աչքերով ուղեկցեց աշակերտին։ Նա վախենում եր, մի գուցե Մարաքյանը գրպանում մի բան ունի և իսկույն կարձակի նրա գլխին։ Հետո նա լուսամուտին նայեց և տեղը փոխեց. չե՞ վոր ապստամբը կարող եր դրսից ել քարեր արձակել։

— Պարոն քարտուղար, «ձեր վոսկորները ջարդ ու փշուր կանեյինք» բառերը չմոռանաք։ Այժմ, գերամեծար տյարք, կարծեմ այսորվա արտաքո կարգի նիստը պետք ե ավարտված համարել։

Դիմաքսյանը նստած եր դեռ լուռ, վոչինչ չեր ասում։ Նա գլուխը հպարտ պահած՝ հեզնորեն ժպտում եր և արհամարհական հայացք ձգում յուր նախկին ընկերակիցների վրա։

Բարաթյանը, վոր ամոթահար եր յեղել, մտածում եր՝ ինչպես մի կերպ դուրս գա անհարմար դրությունից։

— Սրբազա՛ն հայր,— պատասխանեց նա, վորքան կարող եր յուր դեմքին տխուր լրջություն տալով,— նախ քան ժողովը արձակելը, պետք է հարգելի տեսչին խնդրել, վոր ներկա թյուրիմացությունը բացատրե։ Այո, յես կարծում եմ, վոր այս բոլորը թյուրիմացություն է, ուրիշ վոչինչ։ Մեր հոգեկան տրամադրությանը և մեր բարի նպատակին անտեղյակ մարդը կարող է կարծել, վոր այստեղ մենք մի տեսակ դատավորներ ենք, իսկ մեծապատիվ պարոն Դիմաքսյանը մեղադրյալ։ Այնինչ՝ վոչ դատաստան կա և վոչ քննություն։ Մեր բոլորի ցանկությունը մի բան է. վերացնել մեր ազգային թանգագին հիմնարկությունից մի անգամ ընդ միշտ բոլոր անհաճո յերկպառակությունները։ Յես համոզված եմ, վոր մեր մեծապատիվ պարոն տեսուչը մեզանից ավելի չէ փափագում, վոր այս հիմնարկությունը ազատ լինի տխուր անցքերից։ Ուրեմն խնդրենք հարգելի պարոն Դիմաքսյանին, վոր նա մեզ մի յելք ցույց տա։

Այդ միջոցին Դիմաքսյանը վոտքի յեր կանգնել։ Նրա աչքերի մեջ փայլում եր կատաղությունը կծու հեգնության հետ։ Նրա յերեսի բոլոր մկանունքները դողում եյին։

Ամենքը նայեցին նրա կողմ։ Վեքիլյանը ինչ-վոր շշնջաց նախագահի ականջին։ Նախագահը նայեց Բարաթյանի յերեսին, և նրանք հայացքներով խոսեցին միմյանց հետ։

Խնդիրն այն եր, վոր ամենքը անախորժ դրության մեջ եյին, ամենքը զգում եյին մի տեսակ ամոթ Դիմաքսյանից և չգիտեյին, ինչպես վերջ տալ տեսարանին։

Այնինչ՝ Դիմաքսյանը, խորին արհամարհանքով լսելով Բարաթյանի առածները, քանի մի վայրկյան լուռ նայեց ամբողջ ժողովին և ապա զորեղ և խրոխտ ձայնով պատասխանեց.

— Վողորմելինե՛ր։

Այս մի հատիկ բառը, արձակված վրդովված և աներկյուղ կրծքից, ցնցեց ամենքին, կաշկանդեց բոլորի ուշքը։ Մեղադրվածը վայրկենաբար նրանց աչքում փոխվեց մի զորավոր տիտանի, վոր ինչպես մարմնացած վրիժառություն կանգնել եր նրանց գլխին, աչքերից կայծեր ցայտեցնելով։

— Վողորմելինե՛ր,— կրկնեց նա,— ի՞նչ եյիք կամենում. պատժե՞լ ինձ, թե՞ պաշտպանել դպրոցը։ Արդյոք, ի՞նչ մի չար վտանգից կամ ո՞ւմ դեմ եյիք ուզում պաշտպանել — մի խումբ տկար պատանիների՞։ Ի՞նչ է նրանց մեղքը. միթե այն, վոր չե՞ն դիմանում դպրոցում տիրող բռնություններին, վրդովվո՞ւմ են ընկերական դրպարտությունների, քսության և լրտեսության դեմ։ Յեթե դա չե նրանց մեղքը, այսորվա

Նիստը մի անջնջելի արատ կլինի թե հոգաբարձության և թե ուսուցչական այս խմբի վրա։ Ինձանից պահանջում են, վոր յես խոսեմ։ Յես գիտեմ այդ առաջարկությունը ինչ զգացմունքներից է թելադրվում։ Քողը շատ թափանցիկ է, և նրա տակից յերևում է սուտ քաղաքագիտության պատկերը։ Կամենում եք, վոր յես, ինչպես մեղադրված, պաշտպանեմ ինքս ինձ։ Յերբեք իմ հակառակորդները այդ պատվին չեն արժանանալ։ Կարծում եք, յես ինձ վիրավորված եմ համարում։ Բավ լիցի։ Իմ հակառակորդները պարզ տեսնում են, վոր իրանց նետը նպատակին չհասավ։ Միքանի անչափահաս, անփորձ, անպաշտպան պատանիներ նրանց ստիպեցին ամաչել, կարմրել։ Ո՛հ, վորքան նրանք այս րոպեյիս խղճալի յեն նույնիսկ իրանց աչքում…

Նախագահը զանգահարելով, ճառախոսին «կարգի» հրավիրեց։ Դիմաքսյանը թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը և, հպարտությամբ նայելով ժողովին, շարունակեց.

— Այսպես, ուրեմն, իմ հակառակորդները իրանք իրանց պատասխանը ստացան։ Նրանք տեսան, վոր վոչ մի մեքենայություն ինձ չի կարող արատավորել, միայն կարող է կորստի յենթարկել մի ամբողջ հիմնարկություն։ Բայց ինչ փույթ նրանց դպրոցի վիճակը. նրանց միակ նպատակն է ինձ հաղթված և ստորացած տեսնել… յես չեմ կամենում ավելի խոսել։ Սակայն ներեցեք, այսօրվա յեղելությունը յես վարագույրի յետևում չեմ թողնիլ։ Ասպարեզ կհանեմ այն յուր բոլոր մանրամասնություններով։ Կարծում եք, վրեժխնդիր լինելու համար։ Վոչ։ Յես այդ կանեմ, վորպեսզի մեր միամիտ հասարակությունը ճանաչի այն մարդկանց, վորոնց յուր գործերի ղեկավար է ընտրում, վորոնց ձայնին ականջ է դնում և վորոնց մտքերին շատ անգամ ծափահարում է։ Գալով իմ պաշտոնին, ինձ շատ լավ հայտնի յե իմ հակառակորդների նպատակը։ Նրանք փափագում են, վոր յես կամավոր կերպով հեռանամ կռվի ասպարեզից, վորպեսզի հետևից զըվարճանան, ծիծաղեն։ Բայց հայտնում եմ այդ պարոններին. յես իմ ազատ կամքով յերբեք չեմ հեռանալ իմ պաշտոնից, մինչև վոր հոգաբարձությունը ինքը ինձ չասի. «հեռացիր, վորովհետև դու վնասակար ես մեզ համար»։

Արտասանելով այս խոսքերը, նա մի անգամ էլ արհամարհանքով և զզվանքով նայեց յուր նախկին ընկերների յերեսին։ Հետո ծանր, հպարտ և հանդարտ քայլերով, միայն սաստիկ գունատված, նա դուրս յեկավ դահլիճից։

Նույն վայրկյանին գերմանական մանկավարժ Ինյաթյանի դեմքի վրա փայլեց մի ուրախ ժպիտ։

Զնայելով Դիմաքսյանի սպառնալիքին, հետևյալ օրը հոգաբարձությունը առանձին նիստում վճռեց նրան թողնել յուր պաշտոնում մինչև պայմանավորված ժամանակի լրանալը, այսինքն մի. տարի: Այսպիսով նա կամեցավ մեղմացնել տեսչի սիրտը, վոր սա յեղելությունը հրապարակ չհանի:

Բայց մի շաբաթ անցած դուրս յեկավ Դիմաքսյանի մերկացնող գրությունը վեց աշակերտների դպրոցից արձակելու մասին:

Հոգաբարձությունը պատասխանեց նրան սառը պաշտոնական ձևով: Յերևում եր, նա աշխատում եր իրողությունը քողարկել: Փաստեր չեր բերում, հակառակորդի ասածը հերքում եր խոսքերով:

Բայց ապարեղ յեկավ Վեքիլյանը և կռիվը այլ կերպարանք ստացավ:

Դիմաքսյանն այժմ բոլորովին ընտելացել եր անձնական հարվածներին: Հակառակորդների հարձակումները նրան չեյին վշտացնում, այլ գրգռում եյին, նրա բորբոքված սրտի մեջ ավելացնելով կիզանուտ հեղուկը: Ամեն կերպ աշխատում եյին նրան ցույց տալ իբրև մի վնասակար, անաստված, կործանիչ մարդ, վորից մեծ վտանգ ե սպառնում հասարակությանը:

Խնդիրը միայն դպրոցի մասին չեր: Մասնավորից սկսելով, Դիմաքսյանն այժմ հարվածում եր հասարակական ընդհանուր ախտերը: Առանձին ախորժակով և կատաղությամբ նա մերկացնում եր կրթված դասի սխալ և վնասակար ուղղությունը, միշտ իբրև որինակ աչքի առաջ ունենալով Բարաթյանին և Վեքիլյանին: Այժմ նրա կռիվը հասարակության դեմ եր:

Այսպես անցան ամիսներ, անցան ամբողջ աշունն ու ձմեռը: Վերջապես, հասավ գարունը և հարցաքննություններից հետո Դիմաքսյանն արձակվեց պաշտոնից: Նրա տեղը նշանակվեց Ինչաթյանը:

Նույն միջոցին Դիմաքսյանը դարձյալ հեռագիր ստացավ, թե հայրը մահամերձ հիվանդ ե:

Նա շտապեց հայրենիք և այս անգամ ծերունուն մեռած գտավ: Քույրերը հանգուցյալի թաղումը միքանի որով հետաձգել եյին, սպասելով իրանց յեղբոր գալստյանը:

Յերեք որ տևեց սգավոր հանդեսը: Առավոտ յերեկո քաղաքացիները խումբ-խումբ գալիս եյին՝ իրանց ցավակցությունն Արսենին հայտնելու: Վերջապես, ընդհատվեցին ձանձրալի այցելությունները, և վորբացած վորդին ժամանակ ունեցավ հետաքրքրվելու հոր գործերով:

Հանգուցյալը կտակ չեր թողել:

Նա մինչև հետին շունչը չէր հավատացել մահվանը և մինչև անգամ կռվել էր նրա մասին խոսողների հետ։

Աղջկերանց հետ նա տեսակցություն էր ունեցել մեռնելու նախընթաց օրը։ Վոչ մի խոսք չէր ասել նրանց յուր կարողության մասին։ Մեռնելուց մի ժամ առաջ հիշել էր Արսենին, մեղադրելով նրան, թե մոռացել է ծերունի հորը։ Նույն ժամին նա վռնդել էր բժշկին, բարկանալով, վոր նրա դեղերը չեն ազդում։ Հոգեվարքի ժամանակ կռվել էր մահվան դեմ, հայհոյել էր նրան ամեն տեսակ խոսքերով։ Բռնանան կանչվել էր վերջին րոպեյին, սուրբ հաղորդությունը դժարով եյին տվել հանգուցյալի կոկորդը։

Այս բոլորը արտասուքն աչքերին պատմեց նրա ավագ քույրը, կրկնելով.

«Համառ մարդ էր, համառ էլ մեռավ»։

Ցերկու շաբաթվա ընթացքում Դիմաքսյանի համար պարզվեց գործերի դրությունը։ Ցերկաթյա սնդուկի մեջ, բացի հին մուրհակներից և մի քանի կապ պայմանագրերից, նա վոչինչ չգտավ։ Պարզ էր, վոր հավատարիմ Սարիբեկի խոնավ ձեռը այնտեղ էլ մտել էր։ Իսկ թե հանգուցյալը ղուտ փող ունեցել էր, այդ յերևաց նրա մի փոքրիկ ձեռատետրից, վոր կառավարիչը մոռացել էր թաքցնել։ Այնտեղ նշանակված եյին ստացած յեկամուտները և ծախսերը։

Անհետացել եյին և այն բոլոր վոսկեղեններն ու ակնեղենները, վոր մի ժամանակ Արսենի մոր զարդերն եյին կազմում և վորոնց ծերունին խնամքով պահում էր, ինչպես մի սրբություն։

Կողոպուտը հաստատելու և հանցավորին պատժելու համար պետք էր դիմել դատաստանին։ Տեղական փաստաբաններից մեկն առաջարկեց յուր ծառայությունը։ Դիմաքսյանը մերժեց։ Նա զզվում էր դատաստանական գործերից և չէր ուզում ժամանակը զոհել անվերջ վեճերի։ Բացի դրանից, նա խնայում էր Սարիբեկի ութ հոգուց բաղկացած ընտանիքին։ Նա անմիջապես վռնդեց կողոպտիչին, փորձեց ինքն անձամբ կառավարել գործերը։ Սակայն քիչ ժամանակ անցած տեսավ յուր տնտեսական ապիկարությունը՝ նա, վոր թեորիայով միայն գիտեր ինչ ասել է տնտեսություն։

Նա վճռեց սահմանափակել գործերը։ Ժառանգությունը որինական կերպով հաստատելուց հետո, կալվածների մի մասը նվիրեց քույրերին։ Այդպիսով նա ազատեց նրանց մի մշտական նախատինքից, վոր խեղճ կանայք կրում եյին ամուսիններից իրանց ժլատ հոր պատճառով։

Նրա յեռանդուն միտքն անգործ չմնաց հայրենի քաղաքում։ Նա

ուսումնասիրում եր գավառական կյանքը, հավաքում եր տեղեկություններ ժողովրդի բարոյական վիճակի մասին։ Ամեն որ նա շրջապատված եր տեղական յերիտասարդներով, վորոնք արդեն իրագործել եյին նրա առաջին գալստյան ժամանակ առաջարկած ընկերությունը։ Նրա նոր կռիվը մեծ հետաքրքրություն եր շարժել։ Նրա կողմնակիցներն այժմ ավելի վորոշ և ավելի ընդարձակ շրջան եյին կազմում։ Բայց շատացել եր և հակառակորդների թիվը։

Պատահել եյին մի քանի խոշոր ընդհարումներ յերկու հակառակորդ խմբերի մեջ։ Նկատել եր, վոր ինչ-վոր կատարվում ե Թիֆլիսում, նույնն անդրադառնում ե և փոքրիկ քաղաքների կյանքի վրա։ Այստեղ ևս տիրում եյին նույն յերկպառակությունները բոլոր հասարակական խնդիրների մասին։ Տարբերությունը միայն մեկ եր. կյանքը ավելի սահմանափակ լինելով, փոխադարձ խռովություններին ել ավելի նեղ հողի յեր ներշնչում։ Մարդիկ ավելի աններողամիտ եյին, ավելի կրքոտ և ավելի հիշաչար։ Շատ անգամ վեճերը հասնում եյին սարսափելի ծայրահեղության։ Հակառակորդները պատրաստ եյին մտքի պատերազմը փոխել բռունցքի՝ կռվի և միմյանց գանգը ջարդել և դուրս թափել այնտեղից այն ուղեղը, վոր հանդգնում եր ուրիշ կերպ դատել քան թե իրանցը։

Այս հանգամանքը Դիմաքսյանի համար հետաքրքրական եր յուր բնորոշ կողմերով։ Նա տեսնում եր, վոր մարդը վորքան քիչ ե կրթված, այնքան քիչ ե համբերող, այնքան ավելի կատաղի յե, սակայն, միևնույն ժամանակ, այնքան ավելի պարզ և անկեղծ ե յուր համակրության և հակակրության մեջ։ Բայց ամենահետաքրքրականը նրա համար ուրիշ բան եր։ Նա նկատում եր հասարակության մեջ մի նոր յերևույթ, այն ե՝ կռիվ յերկու սերունդների մեջ—հնի և նորի։ Դա հայրերի և զավակների կռիվ եր։ Մի կռիվ, վոր հայ կյանքի մեջ առաջին անգամն եր յերևան գալիս այնպիսի վորոշ կերպով։

Յեվ յերբեմն յուր առանձնության մեջ նա մտածում եր, արդյոք ինչ հետևանք կունենա այդ բոլորը։ Նրա առջև պատկերանում եր կյանքի մի բարոյական քաոս, ուր առաջին հայացքով անհնարին եր մի բան վորոշել։ Վորդին դիմադրում ե հորը, աշակերտն ապստամբվում ե ուսուցչի դեմ, ամեն տեղ թարմը, նորաբույսը և կենդանին բողոքում են և դիմադրում են հնին ու թմրածին։

Արդյոք այդպիսի ճյուղերը չե՞ն բաժանվիլ արմատից, և դալարավոր բունը հանկարծ չի՞ չորանալ։

Այս միտքը վայրկենաբար սարսափեցնում եր նրան։ Նա սկսում եր վախենալ ծագած պատերազմից։

Բայց անցողիկ երկյուղը տեղի չէր տալիս վարդագույն հույսերին։ Ներկայությունն առաջնորդում էր նրան դեպի մի բարվոք ապագա։ Այստեղ նրա մեջ երևան էր գալիս մի տեսակ ոպտիմիստ և իդեալիստ Մսերյան, սակայն այլ գույներով։ Նա լիովին իրագործված չէր նախագուշակում մարդկության լավագույն մասի իդեալը։ Նրա խելքը դառնում էր համեմատական մեթոդով։ Նա տեսնում էր անընդհատ, հարատև պատերազմ դարերի ընթացքում, սերնդից սերունդ և սերունդների մեջ։ Երբեք չի դադարել հնի և նորի այդ պատերազմը, կփոխվեն միայն մարդիկ, կփոխվեն նրանց զենքերը, փոխադարձ դիմադրության եղանակը և միջոցները։ Բայց միշտ հաջորդ սերունդը ուր կյանքի քաղաքակիրթ կողմերով կգերազանցի նախընթաց սերնդից... և այսպես անվերջ...

Կրկին նա վոգևորվում էր, կրկին սիրտը լցվում էր քարոզելու, գործելու և անընդհատ մաքառելու անհուն եռանդով և ձգտումներով։

Ձմեռվա վերջին նա կամեցավ հեռանալ հայրենի քաղաքից։ Նրան զուտ փող էր հարկավոր ապրելու և գործելու համար։ Նա ծախեց հայրական կալվածներից մի փոքրիկը, մյուսների կառավարությունը հանձնեց Հաբիգյան ազգանունով մի երիտասարդի։ Դա նրա նախկին ընկերներից մեկն էր, վոր մասնագիտաբար ուսումնասիրել էր գյուղատնտեսությունը։ Նա լիազոր իրավունք տվեց Հաբիգյանին կառավարել յուր կալվածներն ինչպես կամենում է, եկամտից մի վորոշ տոկոսիք հատկացնելով նրան։

Նա վերադարձավ Թիֆլիս։ Այստեղ նրա բացակայության ժամանակ կողմնակիցները շարունակել էին ընդդիմադրել հակառակորդներին կյանքի զանազան խնդիրներում։ Բայց կռիվը առաջվա եռանդով չէր կատարվել։

Մսերյանը բարկացած պատմեց, թե երևան են եկել անկոչ պաշտպաններ, վորոնք իրանց տգիտության շնորհիվ գործին ավելի վնասում են, քան օգնում։

— Վոչինչ,— ասում էր նա,— ինձ համար այնքան ատելի և վոչինչ այնքան վտանգավոր չէ, վորքան տխմարությունն իմաստունի դիմակով։ Ամենաբարձր գաղափարը տգետի շրթունքներից կարող է ծաղրելի հնչել։ Զորեղ գործի համար զորավոր զենք է հարկավոր։ Զգուշացիր անմիտներից, մի հավատալ անկիրթների խելքին և վոչ էլ անկեղծությանը։ Բարոյական անխախտ սկզբունքները ձեռք են բերվում միայն մտքի հարատև գործունեությամբ։ Տգետի օրենքը նախապաշարմունքներն են և արտաքին ուժը։ Լուսամիտ մարդու ղեկավարը միմիայն յուր խելքն է և սիրտը։ Մի հաստատամիտ, կըրթ-

ված, զարգացած, մտածող բարեկամիդ գերադասիր հարյուրավոր թերհաս, անկիրթ պաշտպաններից։

Այդ կարճ միջոցում Իդեալիստը բավական ծերացել եր։ Նրա մազերը ավելի ճերմակել եյին, յերեսի խորշերը շատացել։ Նա հաղորդեց, թե առաջիկա քաղաքային ընտրությունների կողմնակիցները մտադիր են Դիմաքսյանին առաջարկել, վոր յուր քվետուփը դնի։ Ցուցակ ե կազմված և նրա անունն էլ մտցրած ե ընտրելի իրավասուների շարքը։ Դիմաքսյանը պատասխանեց, թե ցանկություն չունե քաղաքային գործերի մեջ խառնվել, թեև առաջ ձգտում եր։

— Յես էլ խորհուրդ չեյի տալ,—ասաց Մսերյանը,—լավ ե մի գործի ծառայել, քան թե ուժերը ցրվել մի խառնիճաղանջ հասարակության մեջ։

Իդեալիստը, ի միջի այլոց, հայտնեց, թե որիորդ Կարինյանը արտասահմանից վերադարձել ե։

— Այո՞։ Ի՞նչպես ե, փոխվե՞լ ե,—հարցրեց Դիմաքսյանը։

— Շատ։

— Մի՞թե։

— Ուզում եմ ասել ավելի լավացել ե, թե՛ արտաքուստ և թե՛ հոգով ու սրտով։ Այո, նա այժմ ինձ ավելի չե դուր գալիս։

Վերջին դարձվածը Մսերյանը արտասանեց ձայնը ցածացնելով, կարծես, ինքն յուր համար։ Հանկարծ նա ընդհատեց խոսքը որիորդի մասին և դարձավ ուրիշ բաների։

Դիմաքսյանը նայեց նրա յերեսին և նրա աչքերի մեջ նկատեց մի անսովոր բան…

XIII

Մի անգամ Մսերյանը Դիմաքսյանին խնդրեց միասին այցելել Կարինյանին։

Որիորդը բնակվում եր նույն տանը և նույն պառավ տատի և այրի հորաքրոջ հետ։

— Ա՛ս,—շատ ուրախ եմ,—գոչեց նա, դուրս գալով պատշգամբ հյուրերին դիմավորելու։

Արդարև, նա փոխվել եր արտաքուստ։ Նրա առաջվա նիհար այտերը լցվել եյին, դեմքի գույնը ավելի պարզվել եր։ Սովորական մռայլությունը տեղի չեր տվել աշխուժության և կենդանության։ Նա դարձել եր ավելի արագաշարժ, ավելի համարձակ, միևնույն ժամա-

նակ, նրա ձևերն ավելի տաշվել և կրթվել եյին։ Այս փոփոխությունը Դիմիքսյանը վերագրեց յեվրոպական ազատ կյանքի ազդեցությանը։ Հիշեց, թե ինչպես ինքն ել աշխույժ և կենդանի յեր այնտեղից վերադառնալիս և վորքան այժմ ասիական կյանքի ճնշող պայմաններն ազդել են յուր վրա։

Պառավը մյուս սենյակում հիվանդ պառկած տնքտնքում եր։ Այլի Բոլումբաշյանը դարձյալ տանը չեր։ Բայց որիորդը մենակ չեր։ Նրա մոտ հյուր կար, և այդ հյուրն եր տիկին Բախտամյանը, վոր և շատ զարմացրեց Դիմաքսյանին։ Նրանք բարևեցին ինչպես հին ծանոթներ։ Հետո տիկինը, թույլ տալով, վոր որիորդը վերջացնի յուր հյուրերի հետ սովորական հարց ու փորձը, դարձավ Դիմաքսյանին.

— Յես յեկել եմ Աշխենին մի առաջարկություն անելու, հույս ունեմ, պարոններ, դուք ել ինձ կոգնեք։

Այստեղ Դիմաքսյանն առաջին անգամ իմացավ, վոր Կարինյա՛նը տիկին Բախտամյանի մորաքրոջ աղջիկն ե։ Կարմրախայտ այտերին լուրջ արտահայտություն տալով, տիկինն ասաց, թե կանանց ընկերությունն ուզում ե աղքատ աղջկանց համար ուսումնարան բաց անել։ Յեկել ե որիորդին առաջարկելու, վոր նա հանձն առնի տեսչուհու պաշտոնը։ Բայց որիորդը մերժում ե.

— Յուր քրոջ խոսքը չի հարգում, ձեր խոսքն անպատճառ կհարգի, ոգնեցեք ինձ, պարոն Դիմաքսյան։ Բայց յես շատ նեղացած եմ ձեզ վրա։ Առաջինը, ինչու մեր տունը չեք գալիս, յերկրորդ, ինչու մեր ընկերությունը չեք պաշտպանում մի քանի անկիրթ գրչակների դեմ։ Ախ, ի՞նչ գռեհիկ են այդ լրագիր մրոտողները, ոգնելու փոխարեն մեզ ծաղրում են ու հալածում։ Ի՞նչ լավ կլիներ, պարոն Դիմաքսյան, յեթե մի փոքր տրորեյիք այդ մարդկանց քիթը։ Խեղճ կանայք, խեղճ կանայք, այսպես ե ձեր բախտը... Ո՛ո, յեթե իմանաք ինչքան ենք չարչարվում։ Հիմա յել ուսումնարանի հոգսը գցեցին ինձ վրա։ Աշխեն, հոգիս, յեկ հանձն առ, աստված սիրես։ Պարոն Դիմաքսյան, խոսեցեք, համոզեցեք...

Վերջապես, նա մի քանի վայրկյան կանգ առավ։ Այն ժամանակ որիորդը բացատրեց, թե ինչու հանձն չե առնում տեսչուհու պաշտոնը։ Միթե չգիտե՞ն, թե ինչ նպատակով ե նա գնացել արտասահման։ Այժմ հասել ե այդ նպատակն իրագործելու ժամանակը, և նա պետք ե թողնի՞ յուր վաղուց յերևակայած և փայփայած գործը։ Բացի դրանից, նա ուզում ե բոլորովին անկախ գործել, ինքն յուր պարապմունքի համար պատասխանատու լինել խղճի և հասարակության առջև։

Դիմաքսյանը հավանեց որիորդի վերջին պատճառաբանությու-

նը։ Ինչպես ամեն բանում, այստեղ էլ նրան գրավեց անհատի ազատ գործունեության սկզբունքը։ Նա դարձավ տիկնոջը և ասաց, թե համակրելով որիորդի նպատակին, դժբախտաբար, չի կարող տիկնոջ առաջարկությունը պաշտպանել։ Ամեն մարդ պետք է ծառայի այն գործին, վորին ավելի յե համակրում և այնպես ծառայի, ինչպես ինքն է ուզում։

Տիկնոջ դեմքի վրա յերևաց դժգոհության նշան։ Նա մտքում չարացավ Դիմաքսյանի դեմ։ Բանն այն եր, վոր նա յուր ընկերուհիների մոտ պարծեցել եր, թե մեծ ազդեցություն ունե որիորդ Կարինյանի վրա և թե կարող է ինչ-վոր կամենա նրան անել տալ, վորովհետև շատ յերախտիք ունե նրա վրա։ Իսկ ճշմարտությունը այն եր, վոր մինչև որիորդի արտասահման գնալը տիկինը գրեթե վոչինչ հարաբերություն չեր ունեցել նրա հետ։ Այն ժամանակ նա չեր էլ ուզում ազգականուհի համարել մի որիորդի, վոր յուր աշխատանքով եր ապրում։

— Իհարկե,—դարձավ տիկինը որիորդին, չկարողանալով զսպել ներքին մաղձը,—իմ խնդիրը քեզ համար վոչինչ, քանի վոր պարոն Դիմաքսյանը չի բարեհաճում քեզ խորհուրդ տալ...

Այս խոսքերի մեջ կար մի հետին իմաստ։ Դիմաքսյանը հասկացավ և մի անզուսպ ատելություն զգաց դեպի այդ կինը, վորի յուրաքանչյուր խոսքից բուրում եր կեղծություն և սնափառություն։ Մանավանդ ատելի յերևաց նրան տիկինը յուր հարուստ մետաքսյա հագուստով, վոր բնավ չեր համապատասխանում նրա արվեստական լրջությանը։

— Խնդրեմ ծառային հրամայես մի կառք կանչել,—ասաց տիկինը որիորդին, վոտքի կանգնելով,—յես ժամանակ չունիմ յերկար խոսելու, մինչև կոկորդս գործերի մեջ թաղված եմ։ Ուրեմն մերժում ես. շատ լավ, մնաս բարով, չեմ մոռանալ։

Յեվ արհամարհանքով ու գոռոզությամբ վողջունելով Դիմաքսյանին և Մսերյանին, շտապով դուրս գնաց։

— Շատ լավ արեցիք հանձն չառիք,—ասաց Դիմաքսյանը որիորդին։

— Բայց իմ մերժելը ինձ եժան չի նստի։

— Ի՞նչպես։

— Ընկերության կառավարչուհիները կաշխատեն իմ գործին վնասել։

— Իսկ մենք կպաշտպանենք ձեր գեղեցիկ գործը,—ասաց Մսերյանը, վոր ինքն էլ չգիտեր, թե ինչպես պետք է պաշտպանի։

Նրա համար այժմ Կարինյանը մի անգնահատելի գյուտ էր հայ կանանց շրջանում։ Նա հիացած էր օրիորդի եռանդով և այն վոգևորությամբ, վոր նա աշխատում էր իրագործել յուր փայփայած ձեռնարկությունը։

Նրա միտքը մանկական պարտեզի վիճակով զբաղված էր վոչ պակաս քան օրիորդինը։ Սրտի հաճույքով նա յերևակայում էր Կարինյանին շրջապատված հարյուրավոր փոքրիկ էյակներով, վորոնց մատաղ հոգու մեջ պետք է ցաներ կրթության առաջին սերմերը։ Վորքան ազնիվ և նախանձելի չէր այդ գործը նրա աչքում և ինչքան նա կցանկանար մի վոր և է փոքրիկ դեր կատարել այդտեղ։ Նա կկատարեր նույնիսկ հասարակ վերակացվի պաշտոն, յեթե միայն օրիորդը թույլ տար։

Արդեն Կարինյանը թույլտվություն ստացել էր պարտեզը բանալու։ Սակայն սկզբնական ծախքերի համար փող էր հարկավոր, և նա չուներ։ Նա վճռել էր յուր հայրական տան առջև գտնվող այգին գրավ դնել, բայց այդ բավական չէր. Նա մասնավոր պարտքեր ուներ։ Այս պատճառով օրիորդը հուսահատության մեջ էր։ Դիմաքսյանը պատրաստ էր անմիջապես առաջարկել յուր ոգնությունը, բայց չէր վստահանում։ Մի գուցե դիպչեր նրա ինքնասիրությանը։

Մի անգամ նա յուր ցանկությունը հայտնեց Մսերյանին և խորհուրդ հարցրեց, արդյոք ինչ կերպ օրիորդին ոգնի, վոր վիրավորական չլինի։

— Յես շատ համակրում եմ նրա ձեռնարկությանը և շատ կցավեյի, յեթե միայն փողի պակասության պատճառով նա գլուխ չգար։

Խեղճ իդեալիստ։ Նույն րոպեյին նա զգաց փողի քաղցրությունը և ուժը այնպես, վոր յերբեք չէր զգացել։ Ինչու նրա գրպանը լիքը չէ, վոր նա ինքը յուր կողմից ոգնե օրիորդին։ Առաջին անգամ նա յուր սրտում զգաց նախանձ դեպի Դիմաքսյանի հարստությունը։ Նա մինչև անգամ վրդովվեց։

— Չեմ կարծում, վոր օրիորդ Կարինյանը ումից և է պարտք վերցնի։ Նա հպարտ է, նա կվիրավորվի, վերջապես, նա ուրիշների ոգնությանը բնավ կարոտ էլ չէ։

Յեվ այս խոսքերը արտասանելիս իդեալիստի ձայնը դողաց, արտահայտելով նրա հուզմունքը։

Դիմաքսյանի համար այդ տարօրինակ խռովությունը դեռ անհասկանալի չէր։ Ուստի նա միամտաբար նկատեց.

— Դու այնպես ես պաշտպանում որիորդին, վոր, կարծես, յես վիրավորեցի նրան։

— Յես նրան հարգում եմ, հասկանո՞ւմ ես, հարգում եմ...

— Միթե յես չե՞մ հարգում։

— Բայց դու... դու ուրիշ կերպ...

Հանկարծ նա սթափվեց, ուշքի յեկավ, խոսքը ընդհատեց։

Խոսակցությունը տեղի ուներ Մսերյանի տանը։ Նրանք ճաշից հետո նստած եյին լուսամուտի առջև։ Իդեալիստը անորոշ հայացքով նայում եր հեռավոր հորիզոնի վրա կուտակվող սև ամպերին։ Նրա խորշոմած ճակատի վրա ընկերը նշմարեց մի տեսակ մռայլություն։ Դա այն մշտական թախծությունը չեր, վոր դրոշմված եր նրա դեմքին շատ վաղուց և վոր յերբեմն միայն սքողվում եր ․ զվարթության րոպեներին։

Յերբ Դիմաքսյանը տուն վերադարձավ, միտքը շարունակ զբաղված եր Կարինյանի ձեռնարկությունով։ Որիորդի մտազբաղ կերպարանքը չեր հեռանում նրա աչքի առջևից։ Իրավ, ճիշտ եր ասում Մսերյանը, նա փոխվել ե, շատ ե փոխվել։ Նա այժմ տգեղ չե յերեվում, մինչև անգամ սիրուն ե դարձել։ Նա խելոք ե, յեռանդուն ե, աշխատասեր,— ահա հատկություններ, վոր կարող են գրավել մտածող տղամարդին։

Ե՜հ, տերը նրա հետ, թող ինչ ուզում ե լինի, ի՞նչ գործ ունե նրա հետ։ Նա կամենում եր ոգնել, Մսերյանը ասաց անկարելի չե, «հպարտ ե, ոգնություն չի ընդունիլ»։ Բայց ինչու չեր Մսերյանը վրդովված։ Անշուշտ այդ մարդուն մի բան պատահել ե և Դիմաքսյանը չգիտե։

Փոքր ինչ անցած նա մոռացավ որիորդին ել, Մսերյանին ել և նրան տիրեց պարբերաբար կրկնվող տխրությունը։ Սարսափով, այո, կատարյալ սարսափով նա հիշեց, վոր գարունը մոտենում ե։ Դարձյալ նա պետք ե յենթարկվի թախծալի հոգեկան մենության տառապանքներին, դարձյալ պետք ե զգա սիրվելու բուռն պահանջ, դարձյալ կյանքը պետք ե ապարդյուն և ամայի թվա նրան... Այս մտատանջության միջոցին նրա առջև կենդանի պատկերացավ Գայանեն։ Նրա կրծքից դուրս թռավ մի ծանր հառաչանք։ Ահա նա յուր հրապուրիչ կապուտակ աչքերով։ Ինչու նա փոխվել ե, ուր ե նրա նախկին կենսական զվարթությունը, ինչու նա այնքան նիհարել ե, դալկացել և այնպես մելամաղձոտ ե յերևում «նրա» հետ թև թևի տված զբոսնելիս։

Միթե նա դժբախտ ե։

Պյոտր Սոլոմոնիչը մի զարմանալի հոգեկան այլափոխություն էր ենթարկվել։ Այդ զվարթ, բարեսիրտ, առույգ մարդու ամբողջ բնավորությունը կոտրվել էր և յերկու մասի բաժանվել։ Այժմ նրա մեջ բնակվում էին յերկու միմյանց բոլորովին հակառակ մարդիկ — ներքին և արտաքին, ընտանեկան և հասարակական։ Տնային Պյոտր Սոլոմոնիչը վերին աստիճանի դյուրագրգիռ էր, անհամբեր, ամենաչնչին բաների համար գռռացող, կռվարար, մինչև անգամ հայհոյող։ Հասարակական Պյոտր Սոլոմոնիչը համբերող էր, ամենքի հետ համաձայնվող, վոչ վոքի չհակառակող, շփոթվող և այնքան հեզ, վոր ամենահեռավոր ծանոթներին անգամ զարմացնում էր։ Նա վոչ միայն առաջվա պես տաք-տաք չէր վիճում քաղաքային գործերի մասին, այլ և չէր պաշտպանում վոչ քաղաքագլխին, վոչ Ամբակում Աֆանասյեվիչին և վոչ էլ ինքն իրան, յեթե մինչև անգամ յերբեմն հայհոյեյին էլ։ Բայց, վոր ամենազարմանալին էր, շատ անգամ նա քաղաքային Խորհրդի նիստերն էլ բաց էր թողնում։ Որվա մեծ մասը նա տանն էր լինում, ծխում էր, մտածում, մանգալիս և ինքն յուր հետ խոսում։ Շարունակում էր լրագիրներ կարդալ, բայց այժմ ուրիշ կերպով։ Առաջ նա պարտավորապես սկսում էր Խորհրդին վերաբերվող գրվածներից և առհասարակ քաղաքային լուրերից։ Այժմ նա նախ և առաջ ուշադրություն էր դարձնում չորրորդ յերեսի վրա, ուր պատմվում էին զանազան տարորինակ դեպքեր, խորհրդավոր յեղելություններ, ռոմանտիկական ինտրիգներ, գաղտնի սպանություններ և այլն, և այլն։

Ցերեկոները, հակառակ նախկին սովորության, նա կլուբ չէր գնում և վոչ էլ դուրս էր գալիս փողոց մշտական զբոսանքը կատարելու։ Միքանի անգամ կինը փորձեց իմանալ, արդյոք ինչու նա հասարակությունից յերես է դարձրել։ Բայց ծերունին այնպես կատաղեց, այնպիսի վայրենի գոռոցներ արձակեց, վոր ապշած կինը պապանձվեց։

Առհասարակ տարորինակ բաներ էր անում այդ մարդը։ Դիցուք նա նստած է յուր սենյակում մենակ, մտածում է կամ ինչ-վոր հաշիվներ անում։ Հանկարծ նրա ականջին մի ձայն է հասնում, նա արագությամբ վեր է թռչում և անցնում մյուս սենյակ, ուր գտնվում են նրա կինը, զավակները և Ովսաննան։

— Այստեղ ո՞վ էր խոսում։

— Մենք։

— Ուրիշ մարդ չկա՞ր։
— Ուրիշ վոչ վոք չկար։
— Ցես կարծեցի հյուր յեկավ։
Ցեվ ծերունին շփոթված, ծանր քայլերով անցնում եր դարձյալ յուր սենյակը։
Մի անգամ դարձավ կնոջը.
— Աննա, Ովսաննան այժմ մեծացել ե, չե՞։
— Առաջիկա հունիսին տասնութ տարին կլրանա։
— Ուսումն ել կվերջացնի, չե՞։
— Իհարկե։
— Ես, չե՞ս մտածում նրա մասին։
— Ի՞նչ պետք ե մտածել։
— Մարդու տալու համար։
— Նա ինքն յուր համար մարդ կգտնի։
— Հա՞մ, ինքը։
— Այո՛, ինչ կա, ինչո՞ւ յես այդպես զարմացած մտիկ անում աչքերիս։
— Ցես կարծում եյի, վոր նրա համար ել դու պետք ե փեսացու ճարես, հասկանո՞ւմ ես, յերիտասարդ, գեղեցիկ, կրթված փեսացու։
Ցեվ «յերիտասարդ, գեղեցիկ, կրթված» բառերը առանձին շեշտելով, մի սուր հայացք ձգեց կնոջ վրա վոտից մինչև գլուխ և գնաց։
Մի ուրիշ անգամ.
— Աննա՛։
— Ի՞նչ կա։
— Լիզոչկան և Ելեչկան ել մեծանում են։
— Տեսնում եմ։
— Են, ուրեմն շուտով դու յել հարսնացու աղջիկների մայր կլինես։
— Այդ մասին դեռ ժամանակ չե մտածելու, վաղ ե։
— Ժամանակ չե՞,—գոռաց Պյոտր Սոլոմոնիչը, վոտը ուժգին զարկելով հատակին,—ժամանակ ե, տես, նրանց հայրը ինչպես պառավել ե։
Կինը սիրալիր ժպտաց, նրա ասածը կատակի տեղ ընդունելով։
— Ծիծաղում ես, հա՞մ, իհարկե, կծիծաղես։ Ցես պառավ եմ, ուզում եմ իմ աղջիկներիս շուտով մարդու տալ, թոռներ եմ ուզում տեսնել և հետո մեռնել։
— Ի՞նչ մեռնելու ժամանակ ես գտել, Պետյա, դու դեռ այնքան...
— Ցես դեռ այնքան ինչ, ասա, ինչ...

— Առողջ ես։

— Բայց պառավ եմ, չէ՞, պառավ, քավթառ, կուչ յեկած, սպիտակ մազերով, կեղծ ատամներով...

Յեվ նա դարձյալ մի տարօրինակ հայացք ձգելով կնոջ վրա, քթի տակ ինչ-վոր մրթմրթաց և հեռացավ։

Կինը ապշած շարժում էր ուսերը, նայելով նրա յետևից։ Իսկապես նա գիտեր ամուսնու տրամադրության բուն պատճառը։ Բայց չէր հասկանում, ինչու ծերունին առաջ այդպես չէր, հանկարծ փոխվեց այժմ, յերբ տիկինն իրան համարում էր ավելի պակաս մեղավոր։ Նրան սարսափեցնում եյին այդ կիսավայրենի հայացքները, այդ սոսկալի լռությունը, այդ հիվանդոտ կասկածամտությունը, վերջապես, այդ անտեղի գոռոցները։

Այժմ տիկինը ապրում էր գրեթե հեռու հասարակությունից։ Պյոտր Սոլոմոնիչը հյուրեր չէր ընդունում, խույս տալով նույն իսկ ազգականներից։ Նա սաստիկ կատաղում էր, յերբ կինը զուգվում էր մի տեղ գնալու, ուր վոր լիներ, թեկուզ մի հիվանդ ազգականուհու մոտ, թեկուզ խանութից մի բան գնելու։ Իսկ յերբ դուրս գալը անհրաժեշտ էր, նա Ովսաննային խնդրում էր ուղեկցել տիկնոջը, վոր «մենակ տխուր չլինի»։ Իսկ ինքը յերբեք նրա հետ դուրս չէր գալիս։

Այդ անտանելի կացությունը, հարկավ, չէր կարող չազդել յերիտասարդ տիկնոջ վրա։ Յեվ նա տեսնում էր, վոր օրից օր կորցնում է յուր զվարթությունը։ Ի՞նչ սարսափ զգաց նա, յերբ առաջին անգամ հայելու մեջ նկատեց յուր գլխի մազերի մեջ սպիտակներ։ Մի՞թե նա արդեն յերեսուն ու չորս տարեկա՞ն է։ Բայց մա՛րդը, մա՛րդը, ո՛հ, նա վաղուց վաթսունից անցել է։ Դժբախտ կյանք, անիծյա՜լ կյանք։ Նա կատաղությունից բռունցքները սեղմեց, շրթունքները այնպես կծեց, վոր արյուն դուրս յեկավ։

Մոտեցավ ամառը։ Տիկինը կարծում էր, վոր գոնե ամառանոցում նրա կյանքի պայմանները ավելի կթեթևանան։ Բայց վորքա՜ն հուսախափ յեղավ, յերբ Պյոտր Սոլոմոնիչը դրականապես հայտնեց, թե վճռել է ամառը ապրել... Մարդկոպում...

Մարդկոպ, Խութերա, տիկին Բախտամյանը գնա Խութերա՞։ Վո՛չ, այդ անկարելի յե, անհավատալի յե, այդ չափազանցություն է, խայտառակություն է։ Վոչ մի հարուստ, վոչ մի քիչ թե շատ հայտնի ընտանիք չի գնում այդ յետ ընկած ամառանոցը։

Նա հակառակեց, նա լաց յեղավ։ Բայց վոչինչ չօգնեց։ Պյոտր Սոլոմոնիչը վճռել էր և պետք է յուր վճիռը կատարեր։

Այն ժամանակ տիկինը փորձեց մի անգամ էլ գործ դնել սպառ-

նալիք։ Նա ասաց, թե այդ տեսակ կյանք կրել չի կարող, թե կթողնի մարդուն էլ, յերեխաներին էլ և կբաժանվի։

Մի դառն հեգնական ժպիտ մարդու կողմից յեղավ կնոջ պատասխանը։ Պյոտր Սոլոմոնիչը դուռը լայն բաց արեց, կանգնեց և, ձեռը մեկնելով դեպի դուրս, ասաց.

«Համեցեք»։

Վոչ մի տեղ նա չի կարող գնալ։ Նա Պյոտր Սոլոմոնիչ Բախտամովի օրինավոր կինն է, պետք է հնազանդվի նրա կամքին։ Իսկ յեթե հանդգնի տնից վոտը դուրս դնել, վոստիկանության միջոցով, օրենքի և յեկեղեցու անունով հետ բերել կտա։ Ո՞վ պետք է նրան պաշտպանի։ Պառավ մայրը։—Նա քաղցից մեռնում է։ Յեղբայրը։—Չունի յեղբայր։ Ազգականնե՞րը։—Չեն համարձակվի։

Վերջապես, տիկինը խնդրեց խնայել գոնե Ովսաննային։ Հարսնացու աղջիկ է, ի՞նչ մեղք ունի, վոր նրան դատապարտում են յերեք ամիս ապրել մի խուլ անկյունում, ուր, բացի կոպիտ գյուղացիներից, վոչ վոք չկա։

Սակայն Պյոտր Սոլոմոնիչը պատասխանեց, թե Ովսաննան, յեթե ուզում է, կարող է քրոջ հետ ամառանոց գնալ։ Բարաթյանները կամ Բորժոմ կգնան կամ Աբասթուման կամ մի ուրիշ ավելի լավ տեղ։

— Նրանք ջահիլ են, նրանց ուրախ կյանք, ուրախ տեղ է հարկավոր։ Մենք պառավ մարդիկ ենք, վորտեղ էլ վոր լինի միևնույնն է մեզ համար, միայն թե օդը մաքուր լինի։

Վոչինչ չէր կարելի անել։ Տիկինը ակամա հնազանդվեց։ Բայց Ովսաննային չթողեց Գայանեյի հետ ամառանոց գնալ։ Ինչու, թող այդ աղջիկն էլ տխրի նրա հետ մի աննշան գյուղում։ «Գոնե նա կարող է մխիթարել ինձ», ասում էր տիկինը։

Պյոտր Սոլոմոնիչը չարախնդությամբ ժպտում էր, տեսնելով կնոջ հուսահատությունը։ Պարզ էր, վոր նրան սատանայական հաճույք էր պատճառում այդ բոլորը։

Անվերջ, ձանձրալի և տխուր էին տիկնոջ համար այդ յերեք ամիսները։ Նրան թվում էր, թե աքսորականի կյանք է վարում։ Ուրախությամբ կհամաձայնվեր մնալ քաղաքում, խաշվել թեկուզ աֆրիկյան անտանելի շոգերի մեջ, միայն թե «մարդկանց» յերես տեսներ, մարդկանց և վոչ մի քանի «հավլաբարցիների, վոչ հավ ու ձու ծախող շինականների»։

Հետզհետե նա յել Պյոտր Սոլոմոնիչի պես դառնում էր դյուրագրգիռ, կռվարար։ Յուր սրտի թույնը թափում էր շրջապատողների գլխին։ Յերբեմն մինչև անգամ ձեռք էր բարձրացնում անմեղ զավակների վրա՝ չնչին զանցառության համար։

Աշնան սկզբին քաղաք վերադառնալով, նրան թվաց, թե դժոխքից արքայություն տեղափոխվեց։ Նա ագահությամբ վազեց փողոց, պտտեց խանութները, այցելեց բոլոր ընկերուհիներին։ Պյոտր Սոլոմոնիչը մտքում վճռել էր նրան մի շաբաթ ազատ թողնել. միայն մի շաբաթ, իսկ հետո դարձյալ պետք է նրան յուր ճանկերի մեջ առներ։

Յերբ Աննային հարցնում էին, ի՞նչ զարմանալի միտք ստիպեց նրան Մարգկոպը գերադասել գեղեցիկ ամառանոցներին, նա պատասխանում էր.

— Ձանձրացել էի հասարակությունից։

— Ո՛հ, էլ մի՛ ասեք, մենք Վիսբադենում զզվեցինք…

— Սիրտս էր տրաքում Վիեննայում…

— Այս ամառ Պարիզում շատ շոգ էր…

Այս բոլորը դիտմամբ արձակված փշեր էին խեղճ տիկնոջ սիրտը խոցոտելու համար։

Վորքան Պյոտր Սոլոմոնիչը սառած լիներ դեպի հասարակական գործերը, չկարողացավ անտարբեր մնալ քաղաքային նոր ընտրությունների ժամանակ։ Հայտնվեց, թե այս անգամ ընտրողական պայքարը ավելի սաստիկ պետք է լինի, կուսակցությունները ավելի թշնամաբար են տրամադրված։

Ամբակում Աֆանասևիչը անչափ վրդովված էր։

— Այդ կոռները,— բացականչում էր նա,— ամեն տեղ ասում են, թե մենք քաղքցիներս վոչ մի բանի ընդունակ չենք, բացի Կախեթի գինի խմելուց ու շարմանկա լսելուց։ Ջհուդներ, հաց խլողներ։

Այստեղ Պյոտր Սոլոմոնիչի թմրած աչքերը մի վայրկյան վառվեցին։ Նա սրտմտությամբ գոչեց.

— Մերոնք կոռ-ջհուդներից վատ են։ Յեթե նրանք մեր հացն են խլում, մերոնք էլ մեր տան պատիվն են վոտքի տակ տալիս…

Ասաց նա այս խոսքերը, վորովհետև չկարողացավ զսպել սրտի մաղձը։ Սակայն նույն պահին զգաց յուր անզգուշությունը, լռեց իսկույն և, յերեսը շուռ տալով, հեռացավ, առանց մինչև անգամ ցտեսություն ասելու։

Ամբակում Աֆանասևիչը չափից դուրս զարմացած նայեց նրա յետևից և աչքերը լայն բաց անելով, արտասանեց.

«Եհե՛, խեղճ մարդ, բանդ բուրդ է»…։

XV

Որիորդ Կարինյանը արտասահմանից վերադառնալուց հետո ընդհանուր ուշադրություն էր գրավել։ Նրա անխառն, անշեղ բնավո-

րությունը, անկեղծ և հասարակ վարմունքը հավաքել էին շուրջը մի խումբ որսորդներ և յերիտասարդներ։ Շաբաթը յերկու անգամ նրա բնակարանը լիքն էր լինում հյուրերով։

Այցելում էին հաճախ և Մսերյանը, բժիշկ Սալամբեկյանը և Դիմաքսյանը։ Տանտիրուհու պարզ վարմունքը ամենքին տրամադրում էր լինել ազատ, զվարթ։

Հյուրերը սովորաբար հավաքվում էին հինգշաբթի և շաբաթ յերեկոները, յերբ որսորդը ազատ էր լինում զբաղմունքներից։ Մսերյանի վոգևորիչ զրույցները և Դիմաքսյանի սուր, առողջ դատողությունները ընկերական շրջանին տալիս էին լրջություն։

Սակայն յերեկույթների կենտրոնը բժիշկ Սալամբեկյանն էր։ Նրա սառն, դանդաղ յեղանակով արտասանած կատակները, կիսահիասթափ և հեռատես սրախոսությունները կամա ակամա շարժում էին ամենքի ծիծաղը։ Նա ինքը յերբեք չէր ծիծաղում, նույնիսկ ամենազվարճալի մի բան պատմելիս նրա մելամաղձոտ դեմքի վրա ժպիտ չէր յերևում։ Դա ավելի համեմում էր նրա հումորը, վոր անիմաստ և դատարկ բաների մասին չէր, այլ միշտ հարվածում էր կյանքի վորևէ վատ յերևույթ։

Այնուամենայնիվ, վերջին ժամանակ նրա մեջ էլ նկատելի էր մի տեսակ փոփոխություն։ Նա դարձել էր համեմատաբար ավելի գործունյա և յեռանդուն։ Նա առաջվա չափ հաճախ չէր կրկնում «աշխարհը դատարկ բան է»։ Բացի հիվանդանոցում ունեցած պաշտոնից, նա ձեռք էր բերել և ուրիշ մի թեթև բժշկական պաշտոն, ուներ նաև «պրակտիկա»։ Առհասարակ մելամաղձության հետ այժմ նրա աչքերի մեջ յերևում էր և մի տեսակ զվարթություն։ Կարծես, կյանքը նրա համար ավելի հրապուրիչ էր դարձել։

Ժողովների ժամանակ Մսերյանը դիտում էր բժշկին, մանավանդ այն րոպեներին, յերբ սա Կարինյանի հետ էր խոսում։ Այդ միջոցին իդեալիստը նկատում էր, վոր բժիշկը ավելի զվարթանում է և ավելի աշխույժ դառնում։ Յեվ նա զգում էր մի ակամա նախանձ։ Թախիծը սրտում նա հետևում էր որսորդի յուրաքանչյուր քայլին, աշխատում էր գտնել հարմար ժամանակ նրա հետ առանձին խոսակցելու։ Բայց յերբ հարմար ժամանակը գալիս էր, նա շփոթվում էր, հուզվում և չէր կարողանում ինչի մասին խոսել և ինչպես սկսել։

Ամբողջ կյանքի ընթացքում նա այդ տեսակ շփոթություն առաջին անգամն էր զգում, և յերեսնութ տարեկան տղամարդը այս դեպքում նմանվում էր մի անփորձ պատանու։

Բայց ինչքան ձանձրացնում էր Մսերյանին այրի Բոլումբաշյա-

նը։ Այդ հասակավոր կինը յերիտասարդների շրջանում իրան պահում էր ավելի քան յերիտասարդ։ Նա, կարծես, յերդվել էր ամուրի Մսերյանին հալածել մինչև վերջին շունչ, այնքան, մինչև վոր գուցե նա հաղթվի։

Ամառվա սկզբին ընկերական շրջանը ցրվեց։ Ամենքը գնացին այս ու այն կողմը։ Որիորդ Կարինյանը հրավիրվեց ամառանոց յուր մի ազգական ընտանիքի հետ ամառը անցկացնելու։

Դիմաքսյանի ջղերը բոլորովին հոգնել էյին, նա զգում էր հանգստանալու կարիք։ Նա վշտացած էր մի անհաջողությամբ։ Նա ավարտել էր յուր գրվածքը «անհատի և հասարակության մասին», բայց մի անհաղթելի խոչընդոտի պատճառով ստիպված էր նրան լույս չընծայել։

Նա առաջարկեց Մսերյանին միասին գնալ մի տեղ ոդափոխության։ Յեվ նրանք ուղևորվեցին այն ամառանոցը, ուր հրավիրված էր Կարինյանը։

Այնտեղ էր նաև Գայանեն յուր զավակների հետ։

Յերկու ընկերները վարձեցին մի հյուրանոցում յերկու սենյակ, վճարելով միայն մի ամբողջ ամիս, վորից հետո Դիմաքսյանը մտադիր էր գնալ յուր ծննդավայրը։ Ամեն որ նրանք առավոտյան դուրս էյին գալիս լեռնային մաքուր ոդ շնչելու և բնության հրաշալի տեսարաններով զվարճանալու։

Մի անգամ Դիմաքսյանը հանդիպեց Գայանեյին։ Տիկինը յուր յերկու փոքրիկ զավակների և դայակի հետ հասարակական ծառաստանումն էր։ Դիմաքսյանի հետ էյին Մսերյանը և որիորդ Կարինյանը։ Նա կամեցավ բարևել տիկնոջը և անցնել։ Բայց որիորդը մոտեցավ Գայանեյին, համբուրեց նրա յերեխաներին։ Ուղեկիցները ստիպված յեղան կանգ առնել։

Գայանեն հագած էր հասարակ չթյա ամառային զգեստ, վորի մուգ կապույտ գույնը ավելի ակնհայտ էր կացուցանում նրա դեմքի գունատությունը։

Խումբը նստեց մի փայտյա նստարանի վրա։ Դայակը յերեխաների հետ խաղում էր մի քանի քայլ հեռու, կանաչ խոտի մեջ։ Մեծ յերեխան արդեն վազվզում էր, փոքրը հազիվ կարողանում էր յուր թույլ վոտիկների վրա կանգ առնել։

Գայանեն պատմեց որիորդին, թե նրա ամուսինը բնակվում է քաղաքում և միայն շաբաթը կամ յերկու շաբաթը մի անգամ գալիս է ամառանոց մի քանի որով։ Որիորդի և տիկնոջ հարաբերությունը բավական բարեկամական էր։ Բացի հեռավոր ազգականուհիներ լինելուց, նրանք գիմնազիական ընկերուհիներ էյին յեղել։

Դիմաքսյանը Գայանեյի խոսքերից բնազդումով զգաց վոր տիկինը աշխատում է ցույց տալ, թե յուր կյանքը անցնում է շատ ուրախ, յերջանիկ։ Բայց նա կեղծիքը հասկանում էր և չէր կարող չհասկանալ։ Նա ծանոթ էր յուր նախկին ընկերոջ բնավորությանը, գիտեր, թե այժմ նա ինչ տեսակ կյանք է վարում տնից դուրս։ Ուստի յերևակայում էր, թե վորքան կարող էր յերջանիկ լինել մի կնոջ կյանք, վոր այդպիսի ամուսին ունե, յեթե միայն այդ կինը կամ չափազանց հիմար կամ չափազանց դյուրահավան չէ։ Իսկ թե Գայանեն վոչ այս էր, վոչ այն, վոր նա խելոք էր, զգայուն, վոր նրան գոնե այժմ խաբելը դժվար էր — այդ շատ լավ գիտեր Դիմաքսյանը։

Նա սկսեց խղճալ տիկնոջը, բայց միևնույն ժամանակ վրդովվեց։ Թող նա կրե յուր անզգուշության և կուրության պատիժը։ Թող տեսնի, թե ում հետ կապեց յուր կյանքը հավիտյան, գերադասելով արտաքին փայլը և շուքը ներքին, հոգեկան արժանավորություններից։

Այնուհետև Դիմաքսյանը հաճախ պատահում էր Գայանեյին, վոր միշտ յուր փոքրիկների և նրանց դայակի հետ էր լինում և միշտ միևնույն նստարանի վրա նստած։ Յերբ Դիմաքսյանը մենակ էր լինում, ամաչում էր մոտենալ նրան, թեև տիկինը ընդունում էր նրա բարևները այնքան սիրալիր, այնքան բարեկամական կերպով, վոր կարող էր վստահ մոտենալ, առանց կասկածելու, թե այդ դուր չի գալ նրան։

Հետզհետե նրա սրտում պակասում էր նախկին ատելությունը, տեղի տալով ցավակցությանը։ Նա ցավում էր Գայանեյի մասին, վորովհետև համոզվում էր, վոր նա դժբախտ էր։ Յերբեմն նա Մսերյանի հետ հյուրանոցի պատշգամբի վրա նստած մինչև ուշ գիշեր խոսակցում էր։ Յեվ նրանց խոսակցության առարկան մեծ մասամբ Գայանեն և որիորդ Կարինյանն էին։ Իդեալիստի համար այժմ չկար ուրիշ ավելի հետաքրքրական թեմա, քան որիորդը։ Այժմ նա անչափ ուրախ էր, վոր Կարինյանը, առանց ուրիշի օգնության, յուր գործը նյութականի կողմից հաջողեցրել էր և սեպտեմբերի սկզբին արդեն պետք է բաց աներ մանկական պարտեզը։

Մի որ հանկարծ ամառանոցում յերևաց բժիշկ Սալամբեկյանը։ Նա ասաց, թե յեկել է մի շաբաթով յուր ազգական մի ընտանիքի մոտ, վոր Ախալցխայից էր տեղափոխվել ամառանոց։ Նրա գալը, ինչպես յերևում էր, Մսերյանին դուր չեկավ։ Դիմաքսյանը նկատում էր, վոր այդ որերը իդեալիստը շատ տխուր է, թեև վոչինչ չի ասում և առհասարակ շատ գաղտնապահ է դարձել։ Վորքան այս հանգամանքը հետաքրքրական լիներ Դիմաքսյանի համար, բայց սեփական մտա-

տանջությունը ամեն բան մոռացնել եր տալիս նրան։ Նրա մտքից և աչքից չեր հեռանում Գայանեն։ Ահա նա, միշտ մելամաղձոտ, միշտ գունատ, միշտ նստած միևնույն նստարանի վրա, մայրական զգուշ աչքերով հսկում ե յուր փոքրիկներին։ Յերբ նա տեսնում ե Դիմաքսյանին, բռնի զվարթության ժպիտը յերևան ե գալիս նրա դեմքի վրա։ Նրա կապուտակ աչքերը դարձյալ փայլում են։ Կեղծ ե՛ր, կեղծ ե՛ր, բայց քո դժբախտությունը նկարված ե այդ մռայլոտ աչքերիդ մեջ։

Մի անգամ Դիմաքսյանը տիկնոջը հանդիպեց ամուսնու հետ։ Նրանք զբոսնում եյին հասարակական պարտեզում, ուր նվագում եր յերաժշտությունը և անցուդարձ եյին անում ամառանոցի անհոգ բնակիչները։

Վերջին ժամանակ Բարաթյանը գրեթե անճանաչելի յեր դարձել արտաքուստ։ Մի ժամանակվա նրբակազմ գեղեցիկ յերիտասարդը վերացել եր, փոր գցել։ Նրա այտերը ուռել եյին, կարմրել, պարանոցը հաստացել եր։ Դեմքի նախկին նրբությունը և խելացի արտահայտությունը տեղի յեր տվել բուրժուական կուշտ, անհոգ արտահայտության։

Գայանեյի համար այդ փոփոխությունն էլ անախորժ եր։ Յերբեմն, դիտելով ամուսնուն, նա հիշում եր, վոր մի ժամանակ այդ մարդու գրավիչ հատկություններից մեկը նրա համար յեղել ե՛ գեղեցկությունը։ Մե՞կը. գուցե հենց այդ մեկն եր գլխավորը։ Այժմ այդ էլ դավաճանում ե նրան։ Ուրեմն ինչն ե նրա մեջ հարատև, մշտական...

Այժմ նրանց մեջ այլևս տեղի չեյին ունենում ընտանեկան բուռն տեսարաններ։ Գայանեն տանջվում եր լուռ, անբողոք։ Բայց վորքան թանգ եր նստում նրա սրտին այդ լռությունը։ Շատ անգամ կարելի յեր տեսնել նրան յուր սենյակում առանձնացած արտասվելիս։ Չե՞ վոր այժմ նա միայնակ ե, գրեթե բոլորովին միայնակ, վորբ, անպաշտպան։ Ինչու տիկին Բախտամյանը չթողեց Ովսաննային, նրա հարազատ քրոջը, գալ նրա մոտ։

Ա՜խ, այդ կինը, ամեն տեղ նա յե Գայանեյի բախտի խոչընդոտը։ Այո, նա առաջինը ստվեր գցեց նրա ընտանեկան յերջանկության վրա, առաջինը կորզեց նրա բախտը։

«Այսպե՞ս ե արդյոք, իզուր չե՞ իմ մեղադրանքը»։

Վոչ, վոչ, հազար անգամ վոչ։ Փաստե՛ր։ — Մի՞թե Իսակը անփորձ պատանի յե, վոր չհասկանա, թե վորքան ծանր ե հանցանքը, այնքան պետք ե զգույշ լինել «փաստեր» ջնջելում։ «Չե՞ վոր հարյուր անգամ բռնել եմ նրա սուտը...»։ Յեվ այդ բոլորից հետո, մի որ, մի դժբախտ որ... ահա և փաստը...

Յերեկո յեր։ Նրանք նստած յեին ամառային կացարանի ընդարձակ պատշգամբի վրա։ Դայակը յերեխաներին քնեցրել էր և ինքը տնից հեռացել։ Բացակա յեին և մյուս ծառաները։ Մարդ ու կին առանձին յեին։

Հասարակական պարտեզից լսվում էր յերաժշտության ձայնը։ Զով յեղանակ էր, թեթև անտառային զեփյուռը մեղմիկ սոսափում էր ծառերի ճյուղերը։ Գայանեն, արմունկը հենած պատշգամբի վանդակապատին, դիտում էր ոգոստոսի պարզ յերկնակամարը, պսպղում յեին պայծառ աստղերը։ Վաղուց նրա թեյը սառել էր, բայց նա ձեռ չէր տալիս բաժակին։

— Վերջապես, պետք է խոսես, թե՞ չէ,— արտասանեց Բարաթյանը,— դու կարող ես մարդ խելագարեցնել։

— Ուզու՞մ եք, որ խոսեմ։

— Ոչ միայն ուզում եմ, այլ դա մի բնական պահանջ է։ Ամբողջ շաբաթը անտանելի շոգերում շան նման չարչարվում եմ, գալիս եմ այստեղ մի քիչ հանգստանալու և ինչ եմ տեսնում. մի տխուր, թթված կերպարանք։ Մինչև յե՞րբ, սամ, մինչև յե՞րբ պետք է այդպես շարունակվի։

— Այո, մինչև յե՞րբ,— կրկնեց Գայանեն հանդարտ, կարծես, ինքն յուր հետ խոսելով։

— Ուրեմն դու դեռ մտադիր ես յերկա՞ր շարունակել։ Ո՛չ, ի սեր աստծու, բավական է, մի՛ տանջիր ո՛չ քեզ, և ո՛չ էլ ինձ։

— Յեթե իմ ձեռքից լիներ այդ տանջանքից ձեզ ազատելը, աստծուն է հայտնի, կազատեյի։ Բայց... չեմ կարող, ո՛չ, չեմ կարող, այն անմեղները...

Ձայնը դողալով, մատնեց նրան։ Սակայն նա կարողացավ զսպել իրան։ Մի քանի վայրկյան լռելուց հետո, ուղիղ նայեց ամուսնու յերեսին և, թեթև հառաչելով, ասաց.

— Յես ձեզ համար մի սյուրպրիզ ունեմ։

Բարաթյանը աչքերը լայն բաց արեց։

— Ի՞նչ բան է այդ,— հարցրեց նա վախեցած։

Գայանեն հանդարտ վերկացավ տեղից, անցավ յուր սենյակը։ Մի րոպե չանցած նա դուրս յեկավ՝ մի փոքրիկ ծրար ձեռին։

— Ճակատագիրը ինքն է յերբեմն մարդկանց մեծ զգուշությունով թագցրած կեղտը պարզում,— ասաց նա,— բայց յեթե այդ կինը այնքան խելոք լիներ, որքան դուք, այս բանը այստեղ չէր ուղարկիլ։ Գիտեմ, վատ բան է արածս, հասցեն ձերն էր, իրավունք չունեյի բաց անելու, բայց ի՞նչ արած, փաստ էյիք պահանջում, ահա...

Բարաթյանը նստած էր ներսից լուսավորված պատուհանի առջև, ուստի նկատելի չէր, թե ինչպես մի ակնթարթում փոխվեց նրա դեմքը։

— Խեղճ կին, նա տանջվում է։ Միթե դուք չե՞ք կարող վոչնչով օգնել նրան, ազատել մի խելագար ծերունու ձեռքից, ինչպես նա անվանում է այն ազնիվ մարդուն։

Յերբեք Գայանեն այնչափ հանդիստ է, միևնույն ժամանակ, այնչափ սարսափելի չէր յեղել յուր մարդու համար, վորչափ այդ րոպեյին։ Ինչպես բարոյականության անողոք դատավոր, կանգնած էր մեղապարտ ամուսնու առջև և տալիս էր յուր դատավճիռը։

Բարաթյանը միայն նայեց ծրարին, ամեն բան հասկացավ, դրեց գրպանը։ Հերքել անկարելի յեր։ Հարկավոր էր միայն պաշտպանվել։ Նա հազիվ կարողացավ ուշքի գալ, հնարել արդարանալու մի միջոց, մի խոսք։ Սակայն Գայանեն չթողեց նրան բերան բաց անել։ Դրական և անդիմադրելի յեղանակով նա ասաց.

— Վո՛չ մի խոսք...

Հետո, մի ծանր հառաչանք արձակելով տառապող սրտի խորքից, ավելացրեց.

— Մեր մեջ այսուհետև ամեն կապ պետք է կտրված համարել։

Նա գլուխը բարձր պահած, գունատ, ինչպես դիակ, զզվանքով և ատելությամբ լի մի հայացք ձգեց ամուսնու վրա և ծանր քայլերով անցավ յուր սենյակը։

Բարաթյանը ժամանակ չունեցավ մի բառ անգամ արտասանելու։ Բայց յերբ Գայանեն անհետացավ, նա ձեռները հենեց ծնկներին, նայեց հատակին և, գլուխը շարժելով, արտասանեց.

«Կոմեդիան դրամա չե դառնում»...։

XVI

Ամառանոցը գտնվում էր Կովկասյան յերկրի մի գեղեցիկ վայրում։ Դա սքանչելի Բորժոմն էր, շրջապատված բարձր, անտառապատ լեռներով և ուղղահայաց, անմատչելի ժայռերով։

Այստեղ մի կողմից հանդարտ հոսում է Քուռը։ Մյուս կողմից սրընթաց վազում է մի փոքրիկ լեռնային գետակ, վոր կրում է ամառանոցի անունը։ Գետը կլանում է գետակին հովիտի կենտրոնում և գոյացնում յերեք թերակղզիներ, վորոնց վրա սփռված են հարուստ ու շքեղ ամառային կացարանները։

Արեգակը միայն միջորեյին մի քիչ ժամանակ նայում է հովիտի խորքը, այնուհետև ահռելի ժայռերը ամեն ինչ քողավորում են իրանց

մութ ստվերներով։ Գետակը լեռների ծոցից քշում բերում է մի անընդհատ զով։ Յեվ այդ զովն է, վոր հալածում է ձորի մեջ տիրող բնական տոթը։ Շարժվում են հսկայական յեղևինների և մայր ծառերի գագաթները, խաղում են բազմատեսակ թփերի տերևները և ոդը լեցնում բնության մշտական համերգով։

Գետակը հուսահատ կռվում է ժայռերից թավալված վիթխարի բեկորների հետ, և նրա հատակից լսվում են տարորինակ մնչյուններ, նման մարդկային հուսահատ զառանցների։

Տեղ-տեղ այդ բեկորները գոյացնում են փոքրիկ ջրվեժներ, վորոնք իրանց փրփուրներով հեռվից նմանվում են գետակի վրա սփռած սպիտակ սավանների։ Իսկ տեղ-տեղ նրանք գոյացնում են մանր կղզիներ, ուր առավոտից մինչև յերեկո թռչկոտում են տեսակ-տեսակ թռչուններ։ Թանձր մացառներով ծածկված քարքարոտ ափերից տարածվում են աջ ու ձախ բազմաթիվ ուղիներ, վորոնք տանում են դեպի անտառապատ լեռների բարձրությունը։ Տեսարանը ավելի ամփոփ և ավելի գեղեցիկ է յերևում այդ լեռներից մեկի գագաթից դիտելիս։ Այստեղից բացվում է անթիվ ձորերի, կիրճերի և այրերի մի շարք։ Յերևում են ուրիշ գետակներ և առվակներ, վորոնց մակերևույթները մերթ ժպտում են արևի ճառագայթներից, մերթ մթնանում ծառերի և ժայռերի ստվերներից։ Նուրբ լռությունը այստեղ կարող է զվարճանալ մի տարորինակ և վերին աստիճանի դուրեկան յերաժշտությունով, վոր բաղկանում է ստորոտում հոսող ջրերի ձայներից, թռչունների կչկչոցներից և մեղմիկ հողմի շշնջյուններից։ Յեվ այդ յերաժշտությունը ավելի գեղեցիկ է հնչում, ավելի ֆանտաստիկական թվում, յերբ լսողի հայացքը թափառում է հեռավոր լեռների գագաթներով, ուր դարավոր ծառերը, կարծես, պարզ և կապույտ յերկնքի հորիզոնում դյութական սիլվետների պես պար են բռնում։ Միջորեյին մոտ արևի ջերմությունը անտառի ծառերի, թփերի ու ծաղիկների միջից դուրս է մղում պես-պես բուրմունքներ և նրանց անուշ խառնուրդով տոգորում լեռնային հստակ ոդը։ Այդ միջոցին ոդը փոքր ինչ փոխում է յուր գույնը։ Յերևում է նրա մեջ մի նուրբ արծաթագույն փոշի, վոր թեթև գոլորշիի պես բարձրանում է դեպի վեր և յերկնքի մուգ կապտությունը սքողում բարակ, թափանցիկ շղարշով։

Ինքը ամառանոցը յերևում է լեռների մեջ ամփոփված և ծառերի խտության մեջ թաղված։ Բանաստեղծական անկարգությամբ տեղավորված տների և տնակների կանաչ, կարմիր մոխրագույն և սպիտակ կտուրները հազիվ հազ նշմարվում են, ինչպես դալար խոտի մեջ հանգչող կրյաներ գույնզգույն կեղևներով։

Դիմաքսյանը յերբեմն մենակ նստում եր մի մամռապատ ապառաժի վրա ու ժամերով դիտում շրջակայքը։ Այդ միջոցին նրա թախիծը չեր նմանվում սովորականին։ Նրա սիրտը լցվում եր զորավոր զգացումներով ու տարորինակ ձգտումներով։ Նա նախանձում եր բնությանը, այո, նախանձում եր նրա գեղեցկությանը, նրա հարատև գոյությանը, նրա անսահման ուժին և որենքներին։ Հեռավոր լեռների վեհ տեսքը, սրածայր ժայռերի սոսկալի կերպարանքը, ընթացող ջրի մշտականությունը, այդ բոլորը նրա սիրտը ճնշում եին և, միևնույն ժամանակ, բորբոքում։ Արյունը յեռում եր յերակների մեջ, և նա վրդովվում եր, թե ինչու բնության ստեղծագործության մեջ բանական արարածը, մարդը, չպիտի հարատև վայելի այդ բոլոր սքանչելիքները։ Ինչո՞ւ այդ գետակը, այդ անտառը, վերջապես, այդ անոգուտ ժայռի բեկորը ավելի պետք ե շարունակի յուր գոյությունը, քան թե ինքը։ Ինչո՞ւ մարդ այնքան փոքրիկ ե, այնքան աննշան, վոր մատաղ ծառ, մի վորևե թուփ կարող ե ծածկել նրան բնության այդ վիթխարի ուժի առջև։

Յերեսուն ու մեկ տարեկան ե, դարձյալ մի տասը տարի, և ահա վոտք կդնի ծերության առաջին շրջանը։ Այնուհետև արագ-արագ կսպառվեն նրա ուժերը, կսառչեն նրա զգացումները, և հետո, մի որ, մի սարսափելի որ, նա այլևս չկա։ Իսկ ինչ ե արել նա մինչև այժմ, և մի՞թե նա պետք ե չքանա առանց մի խոշոր հետք թողնելու յուր յետևից...

Կեսոր եր։ Նա արմունկը հենած կանաչ գետնին, գլուխը ձեռի ափի մեջ պահած, դիտում եր թփերի մեջ թռչկոտող ինչ-վոր խայտաբղետ թռչնիկների խաղը։ Հանկարծ նրա առջև նկարվեց մի մարդկային մարմնի շվաք։

Նա հետ նայեց։ Մսերյանը կանգնած եր նրա գլխի մոտ գունաթափ դեմքով, վհատված աչքերով, տրտում և միանգամայն անճանաչելի։

— Անպատճառ մի դժբախտություն ե պատահել,— գոչեց Դիմաքսյանը, գլուխը բարձրացնելով։

Մսերյանը ձեռքով մի հուսահատ շարժում գործեց և, ուժասպառ ընկղմվելով կանաչ խոտի մեջ, թույլ և ընկճված ձայնով պատասխանեց.

— Յերկու ժամ ե քեզ փնտրում եմ։

— Նստիր և հանգստացիր, յերեսիդ գույն չկա, դողում ես։

— Դողո՞ւմ եմ. լավ, դողում եմ, ինչ ես ուզում ինձանից,— գոչեց Մսերյանը բարկանալով,— տեսնում ես, վոր չորացած, կուչ յեկած տերևի յեմ նմանվում։ Բայց չե՞ որ եմ ասել, թե ուզում եմ մրցել ուրիշ-

ների հետ, այն էլ իմ սիրած ընկերոջ հետ։ Ախ, Արսեն, յեթե իմանայիր վորքան ինքս իմ դեմ վրդովված եմ, վորքան ինքս իմ աչքում խղճալի։ Այո, այո, խղճալի չեմ, և ի՞նչ կապեր ինձ այս հասակումս խելքից զրկվել…

Արդեն Դիմաքսյանը մասամբ գուշակում էր, թե ինչ է պատահել։ Անցան մի քանի րոպեներ, Մսերյանը փոքր ինչ հանդարտվեց և սկսեց յեղելությունը պատմել։

Միթե Դիմաքսյանը չգիտե՞ր նրա ամառանոց գալու շարժառիթը։

— Ուրեմն մի՛ ստիպիր ինձ կարմրել, մանրամասնությունները պատմելով։ Յես կասեմ այն, ինչ-վոր միայն այսոր անցավ իմ գլխով։

Բժիշկ Սալամբեկյանի յերևալը զարթեցրեց նրա մեջ մի անտանելի նախանձ։ Նա այլևս չկարողացավ դիմանալ սրտի բուռն զգացմանը։ Նա գուշակում էր, վոր մի բան կա որիորդ Կարինյանի և բժշկի մեջն և, յեթե լիներ դրական մարդ, կարող էր հետ կանգնել յուր սնոտի հույսերից։ Բայց մի անհաղթելի ուժ մղեց նրան դեպի առաջ և բաց արեց նրա վոտների տակ մի վիհ։ Յերանի գոնե մի որ նա լիներ Վեքիլյան կամ ունենար նրա քարոզած զգուշությունը և խոհեմությունը։ Այն ժամանակ նա այսորվա «հիմարությունը» չէր անիլ։ Կտանջվեր, բայց առանց ամոթի, առանց խղճի խայթոցի։

— Յեվ գիտե՞ս ինչն է ինձ տանջողը։ Կարծում ես նրա մերժե՞լը։ Վո՛չ. այդ բանին յես արդեն մի քիչ նախապատրաստված էի, յերբ սկսեցի բացարձակ խոսել։ Ինձ վշտացնում է այն, վոր նա խելոք վարվեց, իսկ յես հիմար։ Յեթե տեսնեյիր, ինչպես նա աշխատում էր ինձ չվշտացնել։ Յես պարզում էի նրան իմ սիրտը, նա լսում էր հրեշտակի համբերությունով։ Բայց խոսքս չվերջացրած, նրա աչքերի մեջ կարդացի իմ պատասխանը։ Նա մերժեց, բայց ի՞նչպես, կարծես, նա մեղավոր էր իմ առջև և ուզում էր արդարանալ։ Ե՛հ, ինչ յերկարացնեմ։ Նա բժշկին սկսել է համակրել դեռ ինձ հետ ծանոթանալուց առաջ։ Նրանք նամակագրություն են ունեցել միմյանց հետ, յերբ որիորդը արտասահմանումն էր։

Նա փոքր կանգնեց։ Այդ րոպեյին նա այնքան ճնշված, այնքան վշտալի էր, վոր Դիմաքսյանը պատրաստ էր ամեն բան անել, միայն թե այդպե՛ս չտեսներ նրան։ Նա մոռացել էր սեփական վիշտը և մտքում վորոնում էր խոսքեր, վորոնցով հնար լիներ մխիթարել ընկերոջը։ Բայց այդ դյուրին չէր։ Ի՞նչ խոսքեր կարող էին սփոփել մի սիրտ, վոր յերեսունութ տարի կույս էր մնացել, առաջին անգամ համակվել էր սիրո զգացումով, և այդպես անաջող։

Մի ժամանակ նույն հուսահատությամբ Դիմաքսյանը պարզում

էր յուր սիրտը Սահրյանի մոտ, և սա կարողանում էր նրան մխիթարել։ Իսկ այժմ իդեալիստի աչքերի մեջ յերևացող թացությունն անգամ չթեթևացրեց նրան մի մխիթարական դարձված, մի խոսք։ Ճիշտ որ այդ չափահաս մարդը, որի աչքերը գուցե կյանքի ամենադժվար րոպեներում արցունք չէին տեսել, այժմ, կարծես, ուզում էր արտասվել։ Բայց ո՛չ, նա յերեսը հետ դարձրեց, զսպեց իրան և յերբ կրկին նայեց ընկերոջը, արդեն բավական հանգիստ էր նրա դեմքը։

— Սմբատ,—խոսեց, վերջապես, Դիմաքսյանը—մի՞թե դու ինձանից թույլ ես, որ այդպես հուսահատվում ես։ Ճշմարիտ է, քոնը ավելի ցավալի չէ, որովհետև դու բացարձակ հայտնեցիր քո սերը և բացարձակ էլ մերժում ստացար։ Բայց մտածիր, որ Կարինյանը քո ընկերոջը, այն էլ լավ ընկերոջը, ընտրեց, իսկ Գայանեն իմ թշնամու, այն էլ վատ թշնամու կինը դարձավ։ Գոնե այսքանը թող քեզ մխիթարի։

— Ընկեր,—կրկնեց Սահրյանը հեգնորեն,—վե՞րն է զորեղ, ընկերական սերը, թե՞ սերը դեպի կինը։ Համոզված ես, արդյոք, որ քո և Բարաթյանի թշնամության գլխավոր հիմքը Գայանեն չէ...

Այս խոսքերի մեջ կար մի փոքր ճշմարտություն։ Դիմաքսյանը զգաց, որ լոկ համոզմունքների տարբերությունը գուցե այնքան սուր կերպարանք չտար նրանց թշնամությանը, յեթե մեջ տեղ չլիներ Գայանեն։

— Ուրեմն,—շարունակեց Սահրյանը,—մի՛ զարմանալ, յեթե ասեմ, որ յես այլևս այստեղ չեմ կարող մնալ և նրա յերեսը տեսնել։

Յեվ նա, անմիջապես ձեռը թույլ կերպով մեկնելով Դիմաքսյանին, ավելացրեց.

— Յերևի, դու դեռ կմնաս այստեղ։

— Իսկ դո՞ւ։

— Գնում եմ։

— Ո՞ւր։

— Չգիտեմ, միայն այստեղից պետք է հեռանամ հենց այսօր, հենց այս ժամին։

Նա ձեռքով մի տխուր, հուսահատ շարժում գործեց և քայլերը արագացրեց։ Յերկու ժամ անցած նա ուղևորվեց ամառանոցից, չնայելով ընկերոջ թախանձանքին՝ գեթ մի քանի օր էլ սպասել։

Մնալով միայնակ, Դիմաքսյանը սկսեց ավելի տխրել։ Նա ցավակցում էր Սահրյանին անչափ, բայց, միևնույն ժամանակ, ընկերոջ դժբախտության մեջ զգում էր մի տեսակ մխիթարություն։ Այժմ նա տեսնում էր, որ միայն ինքը չէ անաջող բախտի տեր, մերժված և մոռացված։

Նա շարունակում էր յուր մենակի զբոսանքները։ Յեվ միշտ նրա քայլերը ակամա դիմում էին այն կողմ, ուր սովորաբար լինում էր Գայանեն։ Բայց յերեխաները և դայակը միշտ միևնույն տեղն էին լինում սովորական ժամին, իսկ Գայանեն մի քանի օր էր չէր յերևվում։ Նա սկսեց անհանգստանալ. չլինի՞ թե հիվանդ է տիկինը։ Մի անգամ, չկարողանալով զսպել բուռն հետաքրքրությունը, զգուշաբար հարցրեց դայակին։ Ռուս կինը աչքունքը թթվացնելով պատասխանեց, թե «տիրուհին» թեև պառկած չէ, բայց «տկար է»։

Դիմաքսյանը անտակտություն համարեց ավելի հարցնել։ Նա համբուրեց յերեխաներին, նայեց մեծ աղջկա աչքերին, վոր մոր աչքերին էին նմանում, թեթև հառաչեց և հեռացավ, յուր սրտում տանելով մի ցավակցություն դեպի այդ անմեղ արարածները։ Ցավակցություն, բայց խառն մի անբացատրելի ատելության հետ։

Նա անցնում էր մի նեղ ծառուղիով, վոչ հեռու գետակից, գլուխը կրծքին թեքած, անուշադիր դեպի յուր շուրջը։ Հանկարծ մեկը արտասանեց նրա անունը յետևից։ Նա յետ նայեց և տեսավ բժիշկ Սալամբեկյանին որիորդ Կարինյանի հետ։

— Յես կամենում էի հարցնել, յե՞րբ եք մտադիր վերադառնալ քաղաք,—հարցրեց որիորդը Դիմաքսյանին։

Նա ինքը չգիտեր, թե յերբ կվերադառնա, գուցե վաղը, մյուս որը, գուցե դեռ յերկար ժամանակ կմնա։

— Ինչու՞ համար էիք հարցնում,—ասաց նա։

— Վոչի՜նչ, այնպես։

Որիորդը խոսում էր տատանվելով և կմկմալով։ Նրանք առաջ գնացին մի քանի քայլ լուռ։ Բժիշկը մտախոհության մեջ էր, չէր խոսում։ Որիորդը նայեց նրա յերեսին, մտածեց մի վայրկյան և ապա կրկին դարձավ Դիմաքսյանին.

— Արդյոք պարոն Մսերյանի մասին տեղեկություն ունե՞ք։

— Վո՛չ։

— Քանի՞ ժամանակ է անցել նրա գնալուց։

— Արդեն տասն օր է։

— Յեվ դուք նամակ չունե՞ք։

— Դեռ վոչ. ի՞նչ կա…

Նա վախեցավ, կարծելով ընկերոջը մի բան է պատահել, վոր որիորդը այնքան անհանգիստ կերպով հարց ու փորձ է անում։

— Վոչինչ չի պատահել, յես միայն ուզում էի նրա մասին տեղեկություն ունենալ, յես նրան անչափ հարգում եմ…

Բժիշկը տակավին լուռ էր։ Մոտենալով ճեմելիքի ծայրին, նա

նստեց նստարանի վրա, ասելով, թե սաստիկ հոգնած ե։ Մի քանի րոպե անցած, որսորդը հեռացավ, մտնելով դիմացի ամառանոցը, ուր նա բնակվում եր։ Յերկու ընկերները մնացին առանձին։

— Յես զգում եմ, վոր նա քեզ բոլորը պատմել ե, — խոսեց վերջապես բժիշկը, — ուրեմն հարկ չկա թաքցնելու։ Բայց միթե յես մեղավո՞ր եմ, վոր գործը այս ընթացքը ստացավ։ Դու գիտես, թե յես վորքան սիրում եմ և հարգում Մսերյանին...

— Միթե յես այդ մասին մի խոսք ասացի՞, քեզ մեղադրեցի՞։

— Վո՛չ, բայց ի՞նչ և լինի, այժմ դու ինձ վրա ուրիշ աչքով ես նայում...

— Յես քեզ վրա այժմ ել այն աչքով եմ նայում, ինչ աչքով նայում եյի առաջ։

— Շնորհակալ եմ, — պատասխանեց բժիշկը զվարթանալով, — ինձ համար այդ մեծ նշանակություն ունի։

— Յես միայն զարմանում եմ բնության խաղի վրա։ Յերբեք չեյի կարող յերևակայել, վոր Մսերյանը մի որ կհափշտակվի այդպես։ Իսկ դու, վոր այնքան ծաղրաբար եյիր վերաբերվում կյանքին, դու, վոր դատարկ եյիր համարում նրան, ի՞նչպես յեղավ, վոր այսոր հանկարծ յերկու ձեռքով ես գրկում այդ դատարկ բանը։

— Յես ինքս չգիտեմ, ինչպես բացատրել։ Միայն այսքանը կասեմ, վոր այն որից, յերբ յես մոտիկ ճանաչեցի այդ աղջկան, իմ մեջ սկսվեց մի հոգեկան հեղափոխություն։ Թող հոգեբանը բացատրի այս, իսկ յես այժմ այնքան ուզում եմ ապրել, վորքան յերբեք, յերբեք չեմ կամեցել...

Յեվ բժիշկը սկսեց վոգևորված գովել որսորդ Կարինյանին, հարկավ, ինչպես սիրահար, կրկնապատկելով նրա արժանավորությունները։ Դիմաքսյանը զգում եր, վոր յուր մեջ դարձյալ շարժվում ե նախանձը։ Նա մտքում պարսավեց ինքն իրան և, աշխատելով զսպել վատ զգացումը, անկեղծաբար արտահայտեց յուր բերկրությունը ընկերոջ յերջանկության մասին։

Որեցոր նրա անհանգստությունը սաստկանում եր։ Տասնյակ միմյանցից վատ մտքեր նրան հալածում եյին։ Արդյոք Գայանին նրանից ե խույս տալիս, վոր տնից չե դուրս գալիս։ Գուցե նա վախենում ե յուր ամուսնուց կամ հասարակական բամբասանքից։ Բամբասա՞նք, բայց ինչո՞ւ համար. վոր նա յերբեմն զբոսում պատահում ե և խոսում մի ոտար տղամարդի հետ։

Նա աշխատում եր մի անգամ, անպատճառ, ինչպես և ե, տեսնել Գայանեյին, ցույց տալ նրան յուր սառն հարգանքը. մի հարգանք,

վոր կարող ե տիկնոջը համոզել, թե չերբեք նրա վրա Դիմաքսյանը չի նայում սիրահարված մարդու աչքով:

«Այո, այսպես պետք ե անեմ, ասում եր նա ինքն իրան, վոր չկարծի, թե յես կամենում եմ ծաղրել նրա դժբախտությունը»:

XVII

Գայանեն գալիս եր մի հարևան ամառանոցից, ուր բնակվում եր նրա ազգական ընտանիքներից մեկը: Նա մենակ եր և ծանր, հանդարտ քայլերով ընթանում եր առաջ, հայացքը ուղղած դեպի անորոշ տարածություն: Թվում եր, վոր ամբողջ եյությունով նա խորասուզված ե յուր հոգու մեջ և արտաքին աշխարհը նրա համար գոյություն չունի:

Տեսնելով Դիմաքսյանին, նա չշփոթվեց: Միայն մի թեթև անցողիկ ժպիտ սահեց նրա դեմքի վրա, ինչպես անձայն հողմի մեղմիկ շունչը անդորր ծովի մակերևույթով:

Դիմաքսյանը մոտեցավ նրան, գդակը ձեռին և ջերմ հարգանքով սեղմեց նրա աջը: Այլևս Գայանեն ճիգ չեր անում յուր տխրությունը թագցնելու: Նրա խոհուն ճակատի վրա վորոշ գծագրված եր այն տառապանքը, վոր տիրել եր նրա հոգուն: Դիմաքսյանը շտապեց հարցնել նրա առողջության մասին և իսկույն խոսքը դարձրեց այնպիսի նյութերի վրա, վորոնց մասին առիթ եր վորոնում խոսելու: Նա տեսավ, վոր տիկինը խույս չի տալիս խոսակցությունից, այլ ընդհակառակը տրամադիր ե յերկար խոսելու:

— Յես ամեն որ պատահում եմ ձեր յերեխաներին, ինչքան նման են նրանք ձեզ: Սովորած լինելով նրանց միշտ իրանց մոր հետ տեսնել, ցավում եյի մենակ տեսնելով:

— Դուք առհասարակ յերեխաներ սիրում եք,— հարցրեց տիկինը:

— Միթե կարելի՞ ե չսիրել անմեղությունը:

Տիկինը անփույթ կերպով նստեց առաջին պատահած նստարանի վրա: Դիմաքսյանը կանգնեց նրա դեմ, շարունակելով.

— Մարդկային եյակներն արժանի յեն սիրո, քանի վոր փոքրիկ են:

— Քանի վոր փոքրիկ են, իսկ հետո՞:

— Հետո, պետք ե խղճալ նրանց:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև ապագայում կյանքը այնքան աղավաղում ե նրանց, վոր միայն խղճալու յեն արժանի:

Գայանեն, որ սովոր էր միշտ յուր ամուսնուց լսել կիսահեգնական և կատականման խոսակցություն նույնիսկ ամենալուրջ նյութերի մասին, մի տեսակ թարմություն զգաց, խոսակցելով մի մարդու հետ, որի ուղեղը ընդհակառակը միշտ լուրջ և տրամադրված։

— Մի՞թե ձեր կարծիքով կյանքը ամենքի՞ն և աղավաղում,— հարցրեց նա։

— Անկասկած, քանի որ մարդը չի կարող միշտ յերեխա մնալ։ Այստեղ խնդիրը վերաբերվում և կրթությանը և կյանքի ազդեցությանը։ Կրթության այն յեղանակը, որ տիրում և մեր դպրոցներում, ավելի աղավաղում և, քան կրթում մարդկային բնավորությունը։ Մնացյալը լրացնում են ընտանիքը և հասարակությունը։ Անշուշտ, դուք պետք և համաձայն լինեք ինձ հետ, որ սուտը և կեղծությունը վտանգավոր են. նույնպես չպիտի հերքեք, որ մեր կյանքում այդ բացասական հատկությունները զորեղ դեր են կատարում։

— Դուք խոսում եք այնպես, ինչպես մի քանի տարի առաջ։

Անցյալի մտաբերելը Դիմաքսյանին շփոթեցրեց ախորժելի կերպով։ Ներքին հաճույքից նրա աչքերը փայլեցին և շարժուն դեմքը արտահայտեց մի անզսպելի բերկրություն։

— Մի՞թե դուք կկամենայիք, որ այժմ ուրիշ կերպ խոսեյի,— ասաց նա վոգևորվելով,— սուտը և կեղծությունը յես միշտ դատապարտել եմ և միշտ պիտի դատապարտեմ, առանց ուշադրություն դարձնելու նրանց արդարացնող պատճառների վրա...

Նա կանգ առավ։ Նա վճռել էր միմիայն սառն բարեկամական հարգանք ցույց տալ տիկնոջը։ Իսկ այժմ զգում էր, որ անկարող և յուր վճիռը հաստատապես կատարել։ Մի քանի վայրկյան լռելուց հետո, նա ավելացրեց.

— Բայց յերբեմն ամենաառաքինի մարդիկ անգամ յենթարկվում են սուտի և կեղծության ազդեցության, և յենթարկվում են ակամա, անգիտակցաբար։ Յեթե նրանք ունենային ավելի քաջություն դիմադրելու ավանդական նախապաշարմունքներին, այն ժամանակ կլինեյին ավելի անկեղծ և միշտ ճշմարտախոս։

Գայանեն լուռ լսում էր նրան, աշխատելով ըմբռնել այդ անորոշ խոսքերի տակ թաքնված իմաստը։

— Յես կարծում եմ,— շարունակեց Դիմաքսյանը ավելի վոգևորվելով,— թե կգա ժամանակ, որ այդ մարդիկ իմ ասած քաջությունն էլ կունենան։ Ուզում եմ ասել, թե կգա ժամանակ, յերբ մեր խոսքի և մտքի, զգացումների և գործերի մեջ տիրող հակասությունը կպակասի։ Տիկին, մենք այժմ հազիվ կիսով չափ պատկանում ենք մեզ, իսկ

մեր էյության, մեր բարոյական և մտավոր կազմի մյուս կեսը հասարակական նախապաշարմունքների ստրուկն է։ Գուցե հենց այդպես էլ հարկավոր է, գուցե անհրաժեշտ է, որ հասարակությունը մարդու գլխին լինի մի դատավոր, մի վերահսկող, քանի որ անհատը դեռ չի կատարելագործվել։ Բայց նա, որ զգում է յուր մեջ սեփական ուժ, ինքնուրույնություն և մտքի աներկյուղ քաջություն, նա վրդովվում է այդ ինքնակոչ վերահսկողի դեմ, որ միշտ ձգտում է բռնակալի դեր կատարել։ Ինչևէ։ Որովհետև նա տեսնում է, որ այդ վերահսկողը ինքը, իբրև անհատ կրթիչ, իբրև ուղեցույց, իբրև առաջնորդ, տհաս է, կարճատես է։ Այդ տեսակ ինքնուրույն խելք և սկզբունքներ ունեցող մարդը մտածում է. «Ինչ անեմ, մի՞թե գնամ ընդհանուր հոսանքով»։ «Ո՛չ, պատասխանում է նրան ներքին ձայնը, չպիտի գնաս, աշխատիր ինքդ առաջնորդել և, յեթե ուժերդ քեզ չեն դավաճանիլ, մեկ-մեկ խորտակիր նրա դեմ կանգնած խոչընդոտները»։

Վերջացնելով խոսքը, նա ձեռները հենեց ձեռափայտին և հայացքը ձգեց հեռու ու հեռու։ Կարծես, այդ վայրկյանին նա մոռացել էր յուր խոսակցին, ինքն յուր մտքերի բուռն հոսանքով հափշտակված։

Գայանեն լուռ էր։ Նա արդեն մասամբ գուշակում էր, թե Դիմաքսյանը ինչ բան է ակնարկում և առհասարակ ինչ տեսակ քաջության ու ինքնուրույնության մասին է խոսում։ Այդ խոսքերը բաց էյին անում նրա համար մի նոր, բոլորովին անծանոթ աշխարհ, ուր մինչև այդ ժամանակ չէր թափանցել նրա միտքը։

Ուշադրությամբ լսելով Դիմաքսյանին, նա թույլ էր տալիս իրան միանգամայն անձնատուր լինել նրա ասածների ազդեցությանը։ Յեվ զգում էր, որ մի ինչ-որ բուռն, անդիմադրելի, բայց վերին աստիճանի ախորժելի հոսանք հետզհետե գրավելով քաշում ու տանում է նրան հայտնի չէ ուր։

Մի վայրկյան նա նայեց վոգևորված յերիտասարդի դեմքին և այդ վայրկյանին Դիմաքսյանը յերևաց նրան միանգամայն կերպարանափոխված։ Կարծես, դա այն մարդը չէր, որին հինգ-վեց տարի առաջ տեսավ Բարաթյանի հետ առաջին անգամ։ Նրա դեմքի գծերը հարատև և լարված մտավոր գործունեյությունից մեղմացել էյին և նրբացել։ Խոշոր, ազդու աչքերի մեջ հասուն խելքի հետ անդրադառնում էյին հոգու ազնվությունը և կամքի անշեղությունը։

Այստեղ Գայանեյի միտքը դարձյալ թռավ դեպի համեմատություն։ Նրա առջև պատկերացավ մի ժամանակվա յուր գեղեցիկ ամուսնու այժմյան կուշտ, կարմիր դեմքը, ուռած այտերով և յուղալի աչքերով։ Ի՜նչ տարբերություն. մեկի մտքի կորովությունը տեղի չէր տվել մարմ-

նի պարզությունը, հոգին սրտի հետ պատել էր թանձր ճարպով։ Մյուսի հոգեկան ուժը տաշել և հղկել էր նրա վոչ-գեղեցիկ դեմքը և դարձյալ միանգամայն անճանաչելի։

Յուր կողմից Դիմաքսյանը գաղտուկ դիտում էր տիկնոջը և գրեթե նույն փոփոխությունը տեսնում։ Ճշմարիտ է, չկար նախկին թարմությունը և աշխույժը, կենսականության հուրը առաջվա զորությունով չէր փայլում նրա կապուտակ աչքերի մեջ։ Բայց սրա փոխարեն նրա դեմքը այժմ այնքան մտախոհ, լուրջ և արտահայտիչ էր դարձել, վոր Դիմաքսյանը այժմյան Գայանեյին չէր կամենալ փոխել առաջվա արագաշարժ, զվարթ և վառվռուն որիորդի հետ։ Ընտանեկան անաջող կյանքը, հոգու հարատև տառապանքը խլել էին նրա յերիտասարդական կրակը և փոխարենը պարգևել մի մեղմ, մի հեզ, մի անուշ թովչություն։ Ո՜հ, վո՛րքան նա պաշտելի յեր յուր դժբախտության մեջ և վո՛րքան անմատչելի յուր բարձրության վրա։

Նայելով նրան, Դիմաքսյանի մեջ զարթնում էին ամենաազնիվ և ամենաանարատ զգացումներ։ Նա պատրաստ էր այդ անբախտ կնոջ համար հանդիսանալ մի անկեղծ, անձնվեր պաշտպան և յուր սրտի նվիրական հուրը զոհել նրա բախտին։ Յեվ նա փափագում էր, բայց չգիտեր ինչ խոսքերով արտահայտել այդ զգացումը։ Միևնույն ժամանակ նա սաստիկ ցանկանում էր, վոր Գայանեն պարզի յուր ցավերը նրա առջև անկեղծաբար, հավատալով նրա ազնվությանը։ Նրան թվում էր, թե Գայանեն ինքը զգում է այդ տեսակ պահանջ, վոր ապերջանիկ կնոջ դառնությունները այնքան ծանր և անտանելի յեն, վոր պատրաստ է մի հավատարիմ մարդու մոտ պարզել յուր սիրտը։ Սակայն նույն «կեղծությունը» կաշկանդում է նրա լեզուն։

— Պարզությունը իմ կարծիքով ամենագլխավոր առաքինությունն է,— շարունակեց նա, այլևս չկարողանալով զսպել իրան։— Ով զուրկ է անկեղծությունից, նրա մյուս բոլոր արժանավորությունները նսեմանում են իմ աչքում։ Շատ անգամ մտածում եմ և ինձ համար բնավ անհասկանալի յե դառնում՝ ինչու մենք միշտ կեղծում ենք։ Ինչու հարուստը աղքատ է ձևանում, աղքատը—հարուստ, հիմարը—փիլիսոփա, խելոքը—ճգնավոր։ Ինչու նա, վորին ճակատագիրը անբախտ է դարձրել—բախտավոր է ձևանում։ Մինչդեռ նրա քայլվածքը, նրա ձայնը, վերջապես, նրա ամբողջ կերպարանքը մատնում են նրան, ցույց տալով նրա վախը նախապաշարմունքներից, նրա կեղծությունը...

Նրանց աչքերը կրկին հանդիպեցին միմյանց։

Գայանեն գլուխը խոնարհեցրեց և սկսեց հովանիի ծայրով ցնցողաբար փորփորոտել խոնավ գետինը։

Ակնարկը բավական պարզ եր, բավական հասկանալի։ Նա զգաց, վոր Դիմաքսյանը սպասում եր նրանից անկեղծություն, վոր նա արդեն թափանցել ե նրա հոգու խորքը և այնտեղ պարզ կարդում ե բոլոր վշտերը։ Բայց ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով։ Ո՞վ ե նա, վոր այնպիսի հանդգնությամբ մտնում ե նրա ներքին աշխարհին և այնտեղ միևնույն խստությամբ շոշափում ե նրա հոգու նվիրական գաղտնիքները։ Վո՛չ, վո՛չ, դա աններելի ե մարդու կողմից, վորին նա վոչ մի իրավունք չի տվել, վո՛չ մի ակնարկով չի մոտեցրել իրան։ Նա գլուխը բարձրացրեց այն ժամանակ, յերբ Դիմաքսյանը նայում եր մի ուրիշ կողմ։ Յերիտասարդի գունատ և խելացի ճակատը, յերեսի մեղմիկ ցնցվող մկանունքները պարզ արտահայտում եյին, թե ինչ ե կատարվում նրա հոգում։ Մի վայրկյանում տիկնոջ հայացքը դարձյալ փոխվեց նրա մասին։ Ինչ-վոր մի ներքին ուժ, ցավակցության թե խղճահարության նման մի բան, հուզեց նրա սիրտը։ Նա զղջաց, վոր նույնիսկ մի վայրկյան թույլ եր տվել իրան կասկածել այդ մարդու հոգու մաքրության մասին։

— Դուք ամեն բանում պահանջում եք պարզություն,— արտասանեց նա յերերվող ձայնով,— այդ անկարելի ե։

— Գիտեմ անկարելի ե, չե՞ վոր բնական վերահսկողը թույլ չի տալիս, չե՞ վոր մենք սարսափում ենք նրա միակողմանի դատաստանից։

— Այդ չե միայն, այդ չե,— կրկնեց Գայանեն, հովանիի ծայրը մի քանի անգամ թեթևակի խփելով գետնին,— կան բաներ, վորոնց մասին մարդ չի կարող անկեղծ լինել, յեթե նա չի կամենում հիմարի անուն ստանալ։

— Այո, այն մարդկանցից, վորոնք անկեղծությունը հիմարությունից ջոկել չգիտեն։ Յեթե յես համոզված եմ մեկի խելքին և ազնվությանը, յեթե յես հավատացած եմ, վոր այդ մարդը յերբեք ի չարը չի գործ դնիլ իմ հավատարմությունը, միշտ կարող եմ նրա հետ պարզախոս լինել։

Նա կանգ առավ։ Նա զգաց, վոր շատ ե հափշտակվում, շատ ե հեռու գնում։ Նա կարծեց, վոր մինչև անգամ վիրավորեց տիկնոջը։ Բայց նայեց նրա յերեսին և այնտեղ նկատեց մի ներողամիտ և, միևնույն ժամանակ, մի քաջալերական հայացք։ Այդ հայացքը, կարծես, ասում եր. «Յես հավատում եմ, վոր դուք և՛ խելոք եք, և՛ ազնիվ, կարող եք և՛ հավատարիմ լինել, բայց մի՛ պահանջեք ինձանից անկարելի անկեղծություն։ Մի՛ պահանջեք, վորովհետև յես կին եմ, դուք տղամարդ, վորովհետև դուք ոտար եք ինձ համար և վորովհետև դուք իմ ամուսնու թշնամին եք»։

Նա արագությամբ վոտքի կանգնեց։ Նա կորցրեց յուր բռնի սառնության վերջին կաթիլը։ Դողդոջուն ձայնով և շնչասպառ արտասանեց.

— Թող վորքան կամենում են թագցնեն, բայց յես մարդկանց աչքերի մեջ կարդում եմ նրանց հոգին, նրանց սրտի վիճակը, նրանց դժբախտությունը...

Յեվ մի վայրկյան շունչ առնելուց հետո, ավելի հափշտակված ավելացրեց.

Իմ գաղափարները իմ սրբություններն են, յերդվում եմ նրանցով, վոր իմ սրտում կա միայն ցավակցություն, անկեղծ բարեկամական ցավակցություն։ Տիկին, յես սուտ կասեյի, բայց չգիտեմ սուտ ասել, յես կկեղծեյի, բայց վարպետ չեմ կեղծելու. ահա ինչն ե ստիպում ինձ ձեր յերեսին ասել այն, ինչ վոր ուրիշները կթագցնեյին...

Այս խոսքերը նա մի այնպիսի ներշնչված հոգով եր արտասանում, այնքան անկեղծություն և ազնվություն եր բուրում նրա դեմքից, ձայնից և ամբողջ եյությունից, վոր Գայանեն չկարողացավ վոչ վիրավորվել, վոչ հակաճառել։ Նա տեսնում եր յուր առջև մի մարդ, վոր վոչնչով չեր նմանվում այն բոլոր մարդկանց, վորոնց մինչ այդ որը նա հանդիպել եր։ Մի մարդ, վորը վորքան համարձակ, աներկյուղ և մինչև անգամ հանդուգն լիներ, այնքան նրա հոգին բարձր եր, սիրտը անարատ և խիղճը անշեղ, կտրուկ։ Նա այդպես զգաց և հուզվեց։ Նա այլևս չկարողացավ պաշտպանվել, կեղծել, թագցնել յուր դժբախտությունը։ Յեվ ինչ ոգուտ, քանի վոր պետք ե նորից ստեր նրա առջև և նորից ցույց տար յուր հոգու տկարությունը։

Զգացված մինչև հոգու խորքը, նա գլուխը դարձյալ թեքեց կրծքին և կամացուկ արտասանեց.

—Յես հավատում եմ ձեր ազնվությանը...

Նույն վայրկյանին նա խոսքը ընդհատեց և իսկույն վոտքի կանգնեց։ Նա դողում եր, նա մի տարորինակ յերկյուղի մեջ եր։ Կարծես, մի բան եր արել, վոր չպիտի աներ, մի համարձակ, մի վերին աստիճանի պատասխանատու քայլ, վոր, միևնույն ժամանակ, ցույց եր տալիս նրա հոգու ուժը և կամքի ինքնուրույնությունը։ Նա նայեց գետնին, ապա գլուխը բարձրացրեց։ Կարծես նա ուզում եր խոսքը կիսատ թողնել և հեռանալ, բայց տատանվում եր։

Այնինչ՝ Դիմաքսյանի սիրտը լցվել եր ասպետական հպարտ զգացումներով։ Այն կինը, վորին պաշտում եր, վորի պատկերը մի քանի տարի շարունակ չեր հեռանում նրա մտքից և աչքերից, վերջապես, ասում ե, թե հավատում ե նրա ազնվությանը։ Նա չի մերժում նրա բարեկամությունը, չի վիրավորվում նրա պարզախոսությունից։ Ի՜նչ անսպասելի յերջանկություն։

Տիկինը լուռ մեկնեց նրան յուր ձեռը։ Նա պատրաստ էր խոնարհվել և համբուրել այդ ձեռը ինչպես մի սրբություն։ Բայց այդ անկարելի էր, բնական ամոթխածությունը մի անգամ ևս կաշկանդեց նրան։ Յեվ նա, ջերմագին սեղմելով Գայանեյի ձեռը, ասաց.

—Արդյոք յես ձեզ վիրավորեցի՞։

—Վոչ, ընդհակառակը, դուք ցույց եք տալիս ձեր բարեկամությունը։ Շնորհակալ եմ, յեթե յերբեք չեք շեղվիլ բարեկամության շավղից և ավելի...

Դիմաքսյանը ընդհատեց նրա խոսքը, մի ցնցողաբար շարժում գործելով և արտասանելով.

—Տալիս եմ ձեզ ազնիվ խոսք՝ յերբեք չշեղվել...

Յեվ մնալով միևնույն տեղում, աչքերով մինչև ամառանոցի դուռը ուղեկցեց Գայանեյին, վոր հեռանում էր արագ քայլերով։

«Յերբեք չշեղվել, կրկնեց նա մտքում, վոչ, չեմ շեղվիլ, պաշտելի եյակ, վորովհետև միայն քո բարեկամությունը կարող է ինձ յերջանկացնել...»։

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Պյոտր Սոլոմոնիչը յուր կնոջը տանջում եր անխնա, վորպես միայն կարող եր տանջել մի պաղած, յեսացած, բռնակալ ծերունի: Այլես նրան մազու չափ չեյին շարժում կամ մեղմացնում Աննայի աղաչանքները, աղերսանքը և վոչ նույնիսկ արտասուքը: Այդ ամենը նրա համար իբր շինովի հնարներ եյին, վորոնցով կինը աշխատում եր «ծածկել յուր խայտառակությունը»: Նա խղճի խայթոց և մինչև անգամ մարդկային հասարակ ցավակցություն չեր զգում, տեսնելով, թե ինչպես որից-որ ընկճվում, թառամում և այդ տակավին յերիտասարդ կինը, վորի սիրտը լիքն եր ապրելու անհուն սիրով:

Նա տանջում եր կնոջը, վորովհետև ինքն էլ նրանից պակաս չեր տանջվում: Այժմ նա չեր կարողանում հանգիստ ճաշել և հանգիստ քնել: Մեծ մասամբ պառկում եր շորերով անկողնակալի վրա և ինքն յուր հետ խոսում, պես-պես շարժումներ անում: Յեթե մեկը այդ միջոցներին նրան գաղտնի դիտեր, պետք է կարծեր, վոր նա ցնորվել ե: Յերբեմն գիշերվա կիսին հանկարծ վեր եր կենում անկողնից և աչքերը տրորելով, նայում չորս կողմ: Հետո մոտենում եր կնոջ անկողնակալին, լսում եր նրա շնչառությունը, ականջ եր դնում դեպի դուրս և, յերեսին խաչակնքելով, նորից պառկում եր: Այդ միջոցներին կինը զարթնում եր և յերկյուղով դիտում նրան՝ շատ անգամ լուռ և յերբեմն հարցնելով.

—Ինչու զարթնեցիր:

—Վատ յերազ տեսա:

Յեվ իրավ ծերունին հալածվում եր չար յերազներից: Աննան լսում եր քնած ժամանակ արտասանած հատ-հատ անկապ բառերը, «աչքովս... ինքս... այստեղ...», «մարդասպաններ», «ծածկեցեք գերեզմանս», «տեսա... տեսա...», «կխեղդեմ», «շանսատակ կանեմ» և այլն, և այլն:

Այս անորոշ բացականչությունները սարսափ էյին ազդում Աննայի վրա, վորովհետև հաճախ նա շատ վորոշ լսում էր մի անուն, վոր չարիք էր սպառնում նրան։ Նա ամբողջ մարմնով դողում էր և մի անգամ զարթնելուց հետո այլևս չէր կարողանում քնել մինչև լույս։ Նա փորձեց մի գիշեր անցկացնել ուրիշ սենյակում, հեռու միայ ծերունու ահեղ շնչից, վոր կարծես մեռելություն էր սփռում նրա ամուսնական առագաստի վրա։ Բայց Պյոտր Սոլոմոնիչը մի այնպիսի ընդդիմություն ցույց տվեց, այնպես գոռաց, վոր Աննան բարվոք համարեց լռել և մշտապես թողնել առանձնանալու միտքը։

Մի անգամ ծերունին հանկարծ բռնեց կնոջ ձեռից, քաշեց սենյակի մի անկյունը և կատաղած աչքերով նայեց նրա յերեսին։ Աննան կարծեց, վոր նա արդեն ցնդվել է։ Նրան թվաց, թե ծերունին ուզում է ծեծել իրան, աղաղակելով փախավ յուր սենյակը և դռները փակեց։ Պյոտր Սոլոմոնիչը վազեց նրա հետևից, ուզեց դռները կոտրել և ներս մտնել։ Բայց ուշքի յեկավ, ձեռը խփեց ճակատին և, աթոռի վրա ընկղմվելով, խուլ ձայնով արտասանեց.

«Անեծք չար Սաթայելին»...

Մարդ ու կնոջ այդ սարսափելի հարաբերությունը, հարկավ, աննկատելի չէր կարող մնալ վոչ նրանց զավակներից և վոչ մանավանդ Ովսաննայից։

Մանկահասակ Լիզոչկան և Ելեչկան ապշած նայում էյին իրանց հոր աչքերին, յերբ նա կատաղում էր, հետո հարցական հայացք էյին ձգում իրանց մոր յերեսին։ Զգում էյին նրանք, վոր տանը մի վատ բան էր կատարվում, բայց թե ինչ—չգիտեյին։ Յեվ այդ վատ բանը վոչ թե միայն վշտացնում էր իրանց մատաղ զգայուն սրտերը, այլ և ազդում էր փափուկ բնավորության վրա։

Իրանց կասկածները և յերկյուղը նրանք չէյին հայտնում վոչ վոքի. վոչ նույնիսկ Ովսաննային, վորին, բնազդումով թե՛ գիտակցաբար, օտար էյին համարում։ Բայց հաճախ յերկու քույրերը միմյանց հաղորդում էյին իրանց տպավորությունները։ Յերկուսն էլ խղճում էյին իրանց մորը, զգալով, վոր տանջվում է։ Բայց չէյին ատում և՛ իրանց հորը, քանի վոր չգիտեյին վո՞րն է արդարը և վո՞րը մեղավորը, վորին պետք է պաշտպանել և վորին ատել։

Այնինչ՝ Ովսաննան մասամբ գուշակում էր ընտանեկան խռովության բուն պատճառը։ Նա հասկանում էր, վոր յուր բարեսիրտ քեռին այդ աստիճան գազանացնողը խանդն է։ Բայց թե ո՞վ է այդ խանդի առիթը, ում վրա յէ ծերունու կասկածը, այդ չգիտեր և, հարկավ, չէր էլ կարող իմանալ։ Ահա ինչու նա բոլոր տեսած ու լսածները միամտաբար պատմում էր Գայանեյին։

Մի օր նա գունատված չեկավ քրոջ մոտ և՝ ներս մտավ թե չէ՝ շնչասպառ հայտնեց, թե Պյոտր Սոլոմոնիչը ծեծել է Աննային։ Գայանեն հարցրեց մանրամասն, և օրիորդը միայն այսքանը կարողացավ պատմել, վոր ինքը մյուս սենյակից դռների հետևից տեսավ, թե ինչպես մարդ ու կին կռվում էին ննջարանում։ Աննան հայտնի չէր ինչ ասաց, Պյոտր Սոլոմոնիչը բռունցքով խփեց նրա կրծքին և գցեց անկողնակալի վրա։

—Ա՜խ, Գայանե, այնպես վախենում եմ, այնպես վախենում եմ, վոր չգիտեմ ինչ անեմ,—ավելացրեց Օվսաննան հուզված։—Յես վաղուց կտեղափոխվեի քեզ մոտ, բայց չեմ ուզում նրանց առանձին թողնել, իսկ ամենից ավելի յերեխաներին եմ խղճում։

Արդարև, բուռն նախանձի և կատաղության վայրկյանին ծերունին առաջին անգամ ձեռք բարձրացրեց կնոջ վրա։ Այդ հարվածը կտրեց Աննայի վերջին հույսը, թե յերբ և է Պյոտր Սոլոմոնիչը կխաղաղվի։

Նա ամեն ինչ ավարտված համարեց։

Ի՞նչ չէր գտներ վերջ տալու յուր անտանելի վիճակին։ Բաժանվե՞լ—Ո՞ւր գնալ։ Այս միտքը շղթայում էր ապահով ապրուստի սովոր տիկնոջը։ Ինքնասպանությո՞ւն գործել։—Նա այդքան քաջություն չուներ։ Մեռնել մի ծերունու պատճառով, և մեռնել այդ յերիտասարդ հասակում, յերբ կնոջ համար մի նոր կյանք է սկսվում։ Վո՛չ, վո՛չ, վո՛չ։ Գանգատվե՞լ։—Ո՞ւմ և ինչպե՞ս։ Նա Պյոտր Սոլոմոնիչի օրինավոր կինն է, յեկեղեցական անխախտելի կապով շաղկապված այդ ատելի, զզվելի և այժմ սարսափելի ծերունու հետ։ Յեվ տիկինը, կծու վշտերից արբեցած, անիծում էր ամենքին և՛ ամեն ինչ, և՛ հասարակական կարծիք ու օրենքներ, և՛ յեկեղեցի ու կրոն, և՛ յուր հոր գերեզմանը, և՛ ամբողջ աշխարհը։

Խորին վշտերը անխնա սպառում էին նրա ուժերը։ Նա թառամում էր վոչ օրերով, այլ ժամերով, րոպեներով, ինչպես արմատից կտրված մի քնքուշ ծաղիկ։ Սակայն այդ անբախտ վիճակի մեջ էլ նա չէր մոռանում յուր սովորական կոկետությունը։ Վոչինչ նրան այնքան չէր վշտացնում, վորքան յուր արտաքին փոփոխությունը։ Ինչու, ինչու այդպես վաղ պչկում է և դալկանում յուր գեղեցկությունը, վոր այնքան յերիտասարդներ է հրապուրում։ Յեվ բարկությունից նա ճանկռում էր յուր մարմինը, ինչպես կատաղած կապիկ, փետում էր գլխի առատ մազերը, վորոնց մեջ սպիտակները օրից օր շատանում էին։

Յերբեմն նրա փափուկ ու նեղ ճակատի տակ հղանում էին չար

մաքեր։ Թողնել ծերունու տառապանքը անուշադիր, մոռանալ նրա հալածանքները, հասցնել ծայրահեղ հուսահատության և սպանել նրան կամացուկ, դանդաղ մահով։ Կամ մի հարված, ձեռի մի թեթև շարժում գիշերային լռության մեջ, ննջարանի մութ անկյունում, և ծերունու քայքայված կյանքի վերջին թելը կտրել։ Իսկ հետո, յեթե հանցանքը բացվի՞, ի՞նչ կլինի նրա դրությունը։ — Վո՛չ, վո՛չ, սոսկալի է։

Այդ դժոխային մտքերի տակ նա դարձավ լուռ, ինչպես թունավոր օձ։ Շրջում եր նա սենյակից սենյակ, ինչպես լուսնոտ, մռայլ հայացքներ ձգելով յուր շուրջը։

Այնինչ՝ Պյոտր Սոլոմոնիչը արթուն աչքերով հսկում եր նրան, դիտում եր նրա ամեն մի քայլը։ Կնոջ լռությունը նրա մեջ հղացրեց մի ուրիշ կասկած։ Նա առաջ ել համոզված եր, վոր Աննան հոգով ու սրտով ցանկանում ե նրա մահը։ Իսկ այժմ մտածեց, վոր դայլրացած կինը նրա համար մահ ե նյութում։ Նա սկսեց զգույշ վարվել և գիշեր ու ցերեկ հետամուտ լինել նրա ամեն մի քայլին։

Մի անգամ Աննան պատահաբար նրա բարձի տակ տեսավ մի ատրճանակ։ Նա վախեցավ։ Չգիտեր, թե ծերունին այդ զենքը ձեռք ե բերել անձնապաշտպանության և վոչ թե նրան սպանելու համար։ Մի ուրիշ անգամ տիկինը նկատեց, վոր Պյոտր Սոլոմոնիչը ուշադրությամբ փորձում ե ննջարանի դռների և լուսամուտների ամրությունը։ Այո, անպատճառ նա ուզում ե սենյակը փակած սպանել նրան, վորպեսզի վոչ վոք չլսի նրա մահվան աղաղակները։

Այնուհետև մարդ ու կին փոխադարձաբար միմյանցից վախենում եյին և միմյանցից զգուշանում։ Ճաշից առաջ Պյոտր Սոլոմոնիչը մտնում եր խոհանոց, նայում եր կերակրի կաթսաները, հարց ու փորձ եր անում խոհարարին պաշարեղենի մասին։ Ճաշի ժամանակ նա աչքի տակով հետևում եր կնոջ ձեռներին, յերբեմն հացի կտորը, կերակրի պնակը, դդալը, պատառաքաղը փոխելով նրա հետ։

Գիշերները նա քնում եր կնոջից ուշ և վեր եր կենում առավոտյան շատ վաղ, միշտ ձեռքում սեղմած ատրճանակի կոթը։ Պատահում եր, վոր ինքն իրանից դժգոհ եր լինում։ Կարծում եր, թե մի ինչ վոր մեղք ե գործել, մի շատ ծանր մեղք, բայց թե ինչ — չգիտեր։ Կամենում եր աղոթք անել — չեր կարողանում։ Նրան թվում եր, վոր աստված իրանից յերես ե դարձրել, ինչպես մի հանցավորից։

Նա ուզում եր յերեխաներին փայփայել, հայրական սեր ցույց տալ, այդ ել չեր հաջողվում։ Նրա փաղաքշանքները դուրս եյին գալիս կոշտ, սերը — բռնազբոսիկ, իսկ համբույրները ցուրտ, ինչպես սառած ապակուց — գոնե այսպես եր թվում նրան։ Մանկական անմեղ

թերթերի մեջ նա կարդում էր յերկյուղ, և նրա սիրտը մորմոքվում էր այնպես, վոր ներքին տանջանքից աչքերը փակում էր և գլուխը բռունցքներով ամուր սեղմում։

Նույն յերկյուղը տեսնում էր և բոլոր տնեցիների դեմքերի վրա։ Նրան թվում էր, վոր ծառաները իրանից սարսափում են, ինչպես մի վտանգավոր մարդուց, մի խելագարից, բայց, միևնույն ժամանակ, և՛ խղճում են նրան։ Ո՛հ, վոչ վոք, վոչ վոք իրավունք չունի նրան խղճալու…

Յերբեմն նա գանգատվում էր Ովսաննային, թե գլուխը ցավում է, ականջները խշխշում են, վոտները չեն հնազանդվում նրան, քայլել չի կարող։

«Այստեղ, այստեղ, — ասում էր, ձեռով ցույց տալով սրտի կողմը, — կարծես, մի քար են դրել։ Քարը սեղմում է, սեղմում, կարծես, նրա տակից մի բան է ուզում դուրս գալ և ինձ խեղդել։ Ովսաննա, Ովսաննա, յերանի քեզ, վոր ջահել ես…»։

Ընտրողական պայքարի ամենատաք միջոցին մի որ նրա մոտ յեկավ Ամբակում Աֆանասյեվիչը։ Հավատարիմ «քաղքցին» զարմանք հայտնեց, վոր մի ժամանակվա յեռանդուն իրավաբանն այժմ վոչ միայն չի հետաքրքրվում քաղաքային շահերով, այլ և տնից էլ չի դուրս գալիս։ Ինչու, ինչ է պատահել, խոմ հիվանդ չէ։ «Հիվանդ» բառը Պյոտր Սոլոմոնիչին վախեցրեց։ Վո՛չ, ով ասաց, վոր նա հիվանդ է, ընդհակառակը շատ առողջ է։

— Բաս ինչու յես տանը փակվել, հեր որհնած, խոմ մուրհակներդ պրոտեստ չեն արել, — շարունակեց հետաքրքրված Ամբակում Աֆանասյեվիչը։

Հարկավ, նա շատ լավ գիտեր յուր բարեկամի հասարակությունից փախչելու պատճառը։ Նա անկեղծ խղճում էր ծերունուն և այժմ յեկել էր մի կերպ նրան մխիթարելու։ Նա թախանձեց Պյոտր Սոլոմոնիչին՝ դուրս գալ մի քիչ զբոսնելու։ Ծերունին կտրականապես մերժեց։ Սակայն նա կամենում է իմանալ ինչ են խոսում յուր մասին հասարակության մեջ և չգիտեր ինչպես հարցներ։ Նա մի խորը զննողական հայացք ձգեց Ամբակումի յերեսին՝ գոնե իմանալու, թե նա ինչ է մտածում։ Բայց Ամբակումը խորամանկությամբ խույս տվեց յուր միտքը մինչև անգամ լուռ արտահայտելուց և կատակով ասաց.

— Բժիշկները ինձ խորհուրդ են տվել որական յոթ վերստ մացիոն անել, վոր փորս մի քիչ բարակի։ Արի, Պետրոս ջան, գնանք մի քիչ վոտով ման գանք, լավ յեղանակ է, ոգտակար է։ Փահ, այդ ինչ մաշվել ես…

Պյոտր Սոլոմոնիչը դարձյալ մերժեց, բայց այս անգամ միանգամայն վախեցավ Ամբակումի վերջին նկատողություններից։ Նա կամենում էր հյուրը շուտով հեռանա, վոր ինքը լավ դիտե իրան հայելու մեջ — ճշմարիտ է, վոր նա այնքան մաշվել է։

Ա՜և, սուտ չեն ասում, վորքա՜ն նա փոխվել է։ Նա վոչ միայն նիհարել է, ծերացել, այլ և բոլորովին այլանդակվել։

Այդ օրից նա էլ յուր կնոջ պես ստեպ-ստեպ դիտում էր յուր կերպարանքը։ Մի անգամ կես գիշերին, երկար խալաթը հագին, թավամազ կուրծքը կիսով չափ բաց, նա մոտեցավ հայելուն և հանկարծ սարսափած հետ կանգնեց։ Մարդկային դեմքի փոխարեն հայելին ներկայացնում էր խոզի դունչի պես մի բան, աչքերը սեղմված, ծնոտը յերկարացած, ականջները սրածայր։ Նա կարծեց, վոր իրավ ինքը խոզ է դարձել։ Նա մինչև անգամ փորձեց քթի տակ խոռթալ կամացուկ։ Հետո ուշքի եկավ, նայեց շուրջը։ Բարեբախտաբար, սենյակում վոչ վոք չկար։ Նա ծիծաղեց... Նույն տարօրինակ, նույն անբնական ծիծաղը։

Հետևյալ օրը, կեսօրվա դեմ, նա տանից դուրս եկավ, առաջին անգամ մի ամսվա փակ կյանքից հետո։ Վորովհետև այլ ևս լրագիրներ չէր կարդում, ուստի չգիտեր քաղաքում ինչ է կատարվում։ Ծանոթներից նա լսեց, վոր ընտրությունները վերջացել են, ինքը սևացել է, իսկ Ամբակում Աֆանասևիչը, Բարաթյանը և Վեքիլյանը դարձյալ ընտրվել են։

Լուրը նրա վրա վոչինչ տպավորություն չգործեց, նրա անշարժ դեմքի մկանունքներից մեկն անգամ չշարժվեց։ Այժմ նրա գլխում ու սրտում տեղ չկար ուրիշ գործի համար, բացի մի գաղափարից, թե նա խաբված ու ամոթի դատապարտված մի ամուսին է, թե ամենքը նրա մասին են խոսում, թե նրան խղճում են, արհամարհում, թե նրա պատվավոր անունը հավիտյան թաղված է սև հողի մեջ, ինչպես մի աննամուս մարդու անուն։ Նա մտիկ էր անում պատահող ծանոթներին և անծանոթներին և, կարծես, սպասում էր, թե ահա մեկը անպատճառ նրա յերեսին կշպրտի՝ «կինդ անառակ է»։

Նա միայն յերկու ժամ կարողացավ դրսում մնալ։ Հետո շտապեց տուն։ Նա գնում էր այնպես արագ, վոր, կարծես, տանը թողել էր մի սիրելի հիվանդ, վորին շուտափույթ օգնություն էր հարկավոր։ Մարդկանց հայացքները այրում էին նրան. Նա ամաչում էր պատերից անգամ և գնում էր գլուխը կրծքին թեքած։

Մի անգամ նա վեր բարձրացրեց այդ հոգնած, ծանրացած, դառնացյալ գլուխը։ Հանկարծ նրա թմրած աչքերը վառվեցին, քունքերի

մեջ զգաց մի տարօրինակ տաքություն։ Նա քայլերը դանդաղեցրեց։

Դեմ ու դեմ գալիս էր նա, վորին աշնան սկզբից չէր տեսել։ Կարծես, մի չար, աներևույթ ուժ իսկույն ստեղծեց այդ հանդիպումը, վորպեսզի ավելի փութացնի ծերունու անկումը։

Ինչպես միշտ, այժմ էլ Բարաթյանը ընթանում էր գլուխը բարձր պահած, կուրծքը դուրս ցցած, անհոգ, զվարթ։ Մոտենալով Պյոտր Սոլոմոնիչին, նա գդակը բարձրացրեց վեր և գլուխը խոնարհեցրեց ինչպես մի հարգելի ազգականի, մի պատկառելի ծերունու, մի վաղուցվա բարեկամի առաջ։

Ծերունին նրա ճանապարհը կտրեց, կանգ առավ և, մի վայրկյան ատամները կրճտելով, արտասանեց.

«Ավազակ...»

Բարաթյանը շտապեց մայթից իջնել փողոց և նայեց շուրջը։ Նա հառաչեց, յերբ հավատացավ, թե վոչ վոք չկար, վոր լսեր այդ անարգանքը։ Հետո նա անվրդով շտապեց հեռանալ։

Պյոտր Սոլոմոնիչը մոտեցավ յուր տանը, վոր ընդամենը քառասուն քայլ հեռու չէր հանդիպման տեղից։ Նա մատը սեղմեց դռների զանգակի կոճակին։ Ծառան դուրս յեկավ։ Ծերունին ձեռը հանկարծ տարավ ճակատին, ախ, չլինի, թե «նա» այստեղից դուրս յեկավ։ Նույն վայրկյանին նրա արյունը խփեց քունքերին, աչքերը պղտորվեցին, գլուխը պտտեց։ Նա վոչինչ չէր տեսնում, բացի չորս տառերի, զազրելի թևերից, վոր գրկում էին միմյանց և վոտնատակ անում նրա պատիվը...

Նա ձեռը տարավ շապկի օձիքին և թուլացած ընկավ ծառայի թևերի վրա։ Հարկավոր յեղավ խոհարարին և նրա օգնականին էլ կանչել, վորպեսզի ուժասպառ և գրեթե անշնչացած ծերունուն սանդուխքով վեր բարձրացնեն։ Նրան տարան ներս, նստեցրին բազկաթոռի վրա։

Նա մի անմիտ, ապշած հայացք ձգեց յուր շուրջը։ Նրա յերեսի մկանունքները, կարծես, քարացել էին, աչքերի բիբերը անշարժ էին, թեթև կերպով դողում էին նրա աջ վոտը և աջ ձեռը, իսկ մարմնի մյուս կեսը հանգիստ էր...

Մյուս սենյակից ներս վազեց Աննան։ Ծերունին նայեց նրա յերեսին քարացած հայացքով։ Պարզ էր, վոր նա մարդ չէր ճանաչում։

— Բժիշկ, բժիշկ կանչեցեք,— աղաղակեց Ովսաննան բարձրաձայն և, չոքելով ծերունու մոտ, սկսեց հեկեկալ...

II

Ոգոստոսի վերջին Դիմաքսյանն ամառանոցից ուղղակի գնաց յուր ծննդավայրը։ Նոր կառավարիչը նրա կալվածները բավական կարգի չեր բերել և յեկամուտներն ավելացրել։ Գյուղացիներն այժմ չեյին ճնշվում կալվածատիրոջ ձեռքում։ Նրանք գոհ եյին իրանց վիճակից։ Դիմաքսյանը թեթև կերպով աչքի անցկացրեց Հարիգյանի հաշիվները և շնորհակալություն հայտնեց նրան։ Նա բնավ տրամադիր չեր այս անգամ նյութականով զբաղվելու, այս պատճառով մերժեց կառավարչի առաջարկությունը՝ անձամբ տեսնել կալվածները։ Նա միայն վերցրեց ամբողջ տարվա միացած յեկամուտը և, տասն որ յուր քույրերի հետ անցկացնելուց հետո, շտապեց վերադառնալ Թիֆլիս, դեպի ուր մղում եր նրան մի անհաղթելի ուժ։ Նա ուզում եր մաքառել ուժի դեմ, բայց իզուր. վոչ մի սառն դատողություն չեր դիմանում նրա սրտի կրակին...

Այդ միջոցին Մսերյանը Թիֆլիսումն եր, ուր նա վերադարձել եր ամառանոցից ուղղակի և բնակվում եր յուր նախկին սենյակում։ Իդեալիստը թեև դեռ չեր կարողանում ընտելանալ յուր վշտին, բայց առաջվա հուսահատությունը տեղի յեր տվել թախծալի հիասթափման։ Այժմ քաղաքային կյանքը նրան զզվելի յեր թվում։ Նա ասում եր, թե մտադիր ե գյուղ գնալ և այնտեղ յուր «վշտերը մոռացության տալ, ժողովրդի հսկայական վշտերը աչքով տեսնելով»։ Վոչ, նա չի ուզում կորչել մի ինչ-վոր յերեխայական հիմար մոլորության պատճառով։

— Ճշմարիտ ե, յես ամաչում եմ իմ զգացմունքից, վորովհետև ինչ կսազեր ինձ հափշտակվել այս հասակում, բայց մյուս կողմից շատ ուրախ եմ, վոր այդ բանն ինձ պատահեց։ Յես թմրած եյի, կենդանություն ստացա։ Այժմ ուզում եմ ազատվել իմ մեջ զարթնած յեռանդից, այս կենսական ջերմությունից, և գործ դնել նրան մի վորևե նպատակի համար։

Նա վերկացավ, կանգնեց լուսամուտի առջև և, ձեռը տարածելով դեպի դուրս, շարունակեց.

— Տեսնում ես այն հեռավոր լեռները, այն անտառները, այնտեղ ել ապրում են քեզ և ինձ նման եյակներ։ Նրանք ել մարդիկ են, բայց նրանց զբաղեցնում են ուրիշ հոգսեր։ Մենք ուզում ենք հոգեկան հանգստություն, իսկ նրանք տառապում են աղքատության խավարի մեջ։ Լուսավորել նրանց միտքը, բաց անել նրանց առաջ քաղաքակրթության առաջին շավիղը—ահա ինչ ե պահանջում մեզանից մեր ստացած ուսումը։

Նա խոսում էր այնպես հափշտակված և այնպիսի դրական եղանակով, որ կասկածել չէր կարելի, թե նա յուր ասածը պատրաստ է իսկույն կատարել: Նա շարունակեց նույն վոգևորությամբ: Վաղն ևեթ նա կգնա թեմական տեսչի մոտ, կխնդրի նրանից գյուղական վարժապետի պաշտոն: Նա կընտրի մի ամենախուլ անկյուն, ուր ժողովուրդն ավելի կարոտություն ունի և ուր չեն համաձայնվում ուսուցիչները գնալ: Ձմեռը նա կպարապի դասատվությունով, գարնանը և ամառը յերկրագործությունով: Նա կվարի, կցանի, ամեն բան կանի, միայն թե ազատվել լինի հասարակ ամբոխին և յուր կյանքն ապարդյուն չանցկացնի, ինչպես անց է կացրել մինչև այսօր:

Այսպես էր խոսում նա Դիմաքսյանի ներկայությամբ: Իսկ յերբ վերջինը հեռացավ, նա պառկեց յերեսն ի վեր անկողնու վրա և սկսեց խորհել՝ արդյոք կարող էր յուր ասածը կատարել: Ահա հենց այդ հարցը նրան հոգնեցնում էր և մինչև անգամ վախեցնում: Նա յերևակայում էր, թե ինչպես գյուղական կոշտ ու կոպիտ պատանիներին այբուբեն է սովորեցնում, իսկ դասերից հետո հասակավոր գյուղացիներին գլխին հավաքած բացատրում է բնության տարրական օրենքները: Կհասկանան արդյոք նրա լեզուն. գռեհիկները միջոց կտա՞ն արդյոք գործելու, թե՞ կծիծաղեն նրա վրա...

Այնինչ՝ Դիմաքսյանն արդեն սկսել էր ձանձրանալ անգործությունից: Խոսում էին, թե թեմական տեսուչը հրաժարական է տալիս, և այդ ճիշտ էր: Նա կամեցավ այդ պաշտոնն ընդունել: Նա փորձեց խնդրել ում հարկն է: Գործը գլխավորապես կախված էր թեմական առաջնորդից: Բայց յերբ մի օր սրբազանի մոտ հիշեցին Դիմաքսյանի անունը, ասացին, թե նա պատրաստ է մինչև անգամ անվարձ ծառայել, նա յերեսին խաչակնքելով, արտասանեց.

«Հրաժարիմք ի չար սատանայե»:

Այսպիսով մի անգամ ևս նա զգաց յուր հակառակորդի ուժը: Բայց չհուսահատվեց: Վոչինչ, յեթե մի տեղ փակեն ճանապարհը, նա մյուս տեղ ասպարեզ կգտնի, բավական է, վոր գործելու ցանկությունը չմեռնի նրա սրտում:

Մի օր նա յուր սովորական մտքերի մեջ խորասուզված, Ալեքսանդրյան այգու մոտով բարձրանում էր դեպի քաղաքի կենտրոնը: Նրա հետևից լսվեց յուր անունը և, յետ նայելով, տեսավ Սալամբեկյանին, վորին վաղուց չէր հանդիպել: Բժիշկը վերադառնում էր հիվանդանոցից վոտով: Նա միակ մարդն էր յուր արհեստակիցների մեջ, վոր չէր ամաչում վոտով շրջել:

— Տխուր նորությունը լսե՞լ ես,— ասաց բժիշկը, սովորական բարևներից հետո:

Ի՞նչ է պատահել։

Բժիշկը հաղորդեց Բախտամյանի կաթվածահար լինելու լուրը։ Բանն այն է, վոր մոտիկ բնակվելով, ամենից առաջ իբրև բժիշկ նա յեր կանչվել ծերունուն օգնելու։ Գնացել եր, իհարկե, բայց ի՞նչ օգուտ, բանը բանից անցած եր։ Բախտամյանն այժմ կես մարդ է։

Լուրը Դիմաքսյանի վրա տպավորություն գործեց։ Ինչ ել լիներ, նա Պյոտր Սոլոմոնիչին համարում եր բարեխիղճ և ազնիվ մարդ։ Նա հոգով խղճաց ծերունուն։ Նա հարցրեց դժբախտության պատճառը։ Բժիշկը, գլուխը խորհրդավոր շարժելով, արտասանեց.

— Հարյուր տեսակ բաներ են պատմում, ով գիտե։

Նա հաղորդեց այդ պատմվածներից այն, վոր ավելի հավանական եր թվում և վորի մասին ամենքը խոսում եյին։

— Բայց տես, Արսեն,—վերջացրեց նա յուր խոսքը,—միթե այդ կարելի՞ չե, միթե դու հավատում ես։

Դիմաքսյանը կկամենար չհավատալ «տարածված լուրին», բայց մի ներքին ձայն համոզում եր նրան, վոր վոչ միայն կարելի չե, այլև կատարված իրողություն է այն, ինչ-վոր լսել է բժիշկը։

— Վատ մարդ,—գոչեց Սալամբեկյանը, մինչև հոգու խորքը վըր-դովված,—խաբել, տանջել մի այնպիսի հազվագյուտ կնոջ և այն ել ի՞նչ միջոցով։

Դիմաքսյանը դառնությամբ ժպտաց և վոչինչ չասաց։ Այն բանը, ինչ-վոր այժմ եր յուր ընկերոջը վրդովեցնում, վաղուց նրան վըշ-տացնում եր։ Նրա աչքի առջև պատկերացած եյին միշտ յերկու ծա-նոթ ընտանիքներ, յերկուսն ել անբախտացած։ Նա վրդովված է մի թշվառ ծերունու դեմ, վոր յուր մաշված, քայքայված կյանքը կապել եր մի յերիտասարդ կնոջ թարմ կյանքի հետ և դժբախտացրել թե իրան և թե նրան։ Նա կատաղած եր մի յերիտասարդի դեմ, վոր յուր վատթար կրքերի պատճառով թշվառացրել եր յերեք կյանք։ Դեռ վո-չինչ ծերունին. նա յուր գոյության շրջանն արդեն անց եր կացրել, նա արժանի չե յուր պատժին։ Գուցե ավելի ցավալի չե նրա կնոջ վիճակը, գուցե նրան պետք է խղճալ...

Իսկ այն «մյուսը»—ահա բուն դժբախտը։ Ինչպե՞ս «նա» պետք է թշվառանա, ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս, մի՞թե նույնպես յուր սխալի համար...

Յեվ Դիմաքսյանի մտքերը պղտորվեցին։ Նա հիշեց յուր գուշա-կությունը Գայանեյի ապագայի մասին. չե՞ վոր գիտեր, վոր վերջն այդպես պետք է լինի։ Բայց անցավ յեսական զգացումը, և նա զգաց մի սուր դառնություն այն եյակի վիճակի համար, վորին նա սիրում

ներ անհուն սիրով։ Բաժանվելով Սալամբեկյանից, նա յերկար ժամանակ խորհում եր նրա մասին։ Մի՞թե պետք ե նրան այդ վիճակի մեջ թողնել. մի՞թե չի կարելի նրան օգնել։ Բայց ի՞նչպես և ի՞նչ իրավունքով։

Ցավալի չեր նրա՛ համար ամենից ավելի այն, վոր չկար մեկը, վորի մոտ կարողանար պարզել յուր սրտի նվիրական զգացումները, ասել այն, ինչ-վոր չեր կարելի ուրիշներին ասել։ Գուցե այդպիսով նա թեթևացներ յուր հոգին։ Մսերյանը։—Նա այնքան խորասուզված եր յուր անձի մեջ, վոր վոչ մի արտաքին յերևույթ, կարծես, նրան չեր հետաքրքրում։

— Գյուղ պետք ե գնալ, գյուղ,—կրկնում եր նա միշտ,—այնտեղից պետք ե ամեն բան սկսել։

Սակայն օրերն անցնում եյին, և նա դեռ տատանվում եր։ Իսկ Դիմաքսյանը կասկածում եր, թե յերբևե նա կկատարի յուր վորոշումը։ Նա գիտեր, վոր Մսերյանի խոսքի և գործի մեջ կա անհաղթին պատնեշ—կամքի թուլություն։ Անցնել այդ պատնեշը նա անհնարին եր համարում մի մարդու համար, վորի բնավորությունը վաղուց արդեն կազմվել և ամրացել եր յուր վորոշ հատկանիշներով։

— Վոչ, իզուր ես աշխատում ինձ համոզել, թե այս տիղմի մեջ կարելի յե մաքուր շենք կառուցանել,—վիճում եր Մսերյանը յուր ընկերոջ հետ, թեև Դիմաքսյանը չեր ել աշխատում «համոզել» նրան։—Հիմքն այստեղ խախուտ ե, չի դիմանալ, պետք ե ավելի խորը գնալ։ Թո՛ղ ամեն ինչ, գնանք ժողովրդի մեջ…

Նրա խոսքերի մեջ թեև կար նախկին պատանեկական վոգևորությունը, բայց զգացվում եր նույնպես և մի տեսակ վհատություն։ Կարծես, նա ինքն այժմ չեր հավատում, թե կարող ե իրագործել յուր ասածը։

Մի առավոտ բժիշկ Սալամբեկյանը յեկավ Դիմաքսյանի մոտ և թախանձեց նրան՝ միասին գնալ օրիորդ Նարինյանի մանկական պարտեզը։ Այդ օրն առաջին անգամ օրիորդը մանկական հանդես եր տալիս։

Այնտեղ Դիմաքսյանին սպասում եր մի անսպասելի հանդիպում։ Ընդարձակ սենյակի մի ծայրում խմբված եյին յերեսուն—քառասուն մանուկներ և յերգում եյին։ Մյուս ծայրում հավաքված եյին նրանց մայրերը և հրճվանքով լսում եյին իրանց զավակների թռչնային ծլվլոցը։ Ահա այստեղ եր և՛ Գայանեն։ Գլուխը թեթևակի ուսին ծռած, ձեռներն անփույթ կերպով ծնկների վրա դրած, նա նստած եր պատի մոտ և խոսում եր մի օրիորդի հետ։

Միքանի կանայք Դիմաքսյանին տեսնելով, անմիջապես շշնջացին միմյանց ականջին։ Նա շփոթվեց, նա զղջաց անգամ յուր գալու մասին, բայց նրա սիրտը ակամա բաբախեց ուրախությունից։

Օրիորդ Կարինյանը նրան ներկայացրեց յուր հյուրերից մի քանիսին և հետո խնդրեց նրան տեսնել, թե արդյոք յուր աշակերտները հառաջադիմություն անում են։

Վերջապես, Դիմաքսյանը վստահացավ մոտենալ Գայանեյին։

Նրանք սկսեցին խոսել մանկական պարտիզի մասին։ Դիմաքսյանը հետաքրքրվեց իմանալ, արդյոք Գայանեն մտադիր է յուր զավակներին հանձնել պարտեզ։ Հայտնվեց, որ տիկինը հենց այս մտքով է յեկել օրվա հանդեսին. Նա կամենում է ծանոթանալ Կարինյանի կրթության յեղանակին։

Կանանց շրջանում շշնջյունները և խորհրդավոր հայացքները սաստկացան։ Դիմաքսյանն այդ նկատեց և նորից շփոթվեց։ Նա համոզված էր, որ կանայք բամբասում են իրան և Գայանեյին։ Ուստի, հարմար վայրկյան գտնելով, վերկացավ տիկնոջ մոտից և մոտեցավ բժիշկ Սալամբեկյանին։

— Լսիր,— ասաց նա,— դու ինձ ուժով բերիր, բայց, կարծեմ, յես ավելորդ եմ այստեղ։

— Ընդհակառակը քո ներկայությունը այստեղ անհրաժեշտ է հենց քեզ համար։ Պահիր քեզ ազատ, բնական, վարվիր ամենքի հետ այնպես, ինչպես վարվել ես։ Հիմար ամոթ...

Ինչ էին նշանակում այդ խոսքերը— Դիմաքսյանը չհասկացավ։ Յեթե նա Սալամբեկյանին չճանաչեր ինչպես անկեղծ, անխարդախ ընկերոջ, կարող էր կարծել, որ բժիշկն ուզում է նրա հետ մի խաղ խաղալ։ Ի՛նչ և է, նա մնաց դահլիճում։ Բայց որքան նա դիտում էր յուր շուրջը, նույնքան համոզվում էր, որ ինչ-որ հասկանալի, խորհրդավոր և անսովոր ուշադրության առարկա յէ ընդհանուրի համար։

Յերեխաներն անցան մյուս սենյակ։ Նրանց պետք է խաղալիքներ բաժանեյին։ Օրիորդ Կարինյանը հյուրերին հրավիրեց այնտեղ։ Մի խումբ կանայք դանդաղեցրին իրենց քայլերը։ Նրանք շարունակ նայում էին Դիմաքսյանին։ Սալամբեկյանն առավ նրա թևը և առաջնորդեց մյուս սենյակ։ Մինչ նա խոսում էր բժշկի հետ, մի տարիքավոր տիկին գլուխը մոտեցրած սկսեց ականջ դնել, աչքունքով զանազան նշաններ անելով մյուս կանանց։ Դիմաքսյանը նկատեց այդ նշանները և այնքան զայրացավ, որ քիչ էր մնում մի խիստ նկատողություն անի տարիքավոր տիկնոջը։ Տարիքավոր տիկինը սարսափած հետ քաշվեց, և Դիմաքսյանը լսեց, որ նա շշնջաց. «Յերևում է, չերևում է»։

Վերջապես, նա ներողություն խնդրեց Կարինյանին և դուրս յեկավ։ Նրա յետևից դուրս յեկավ և Սալամբեկյանը։

— Ո՞ւր ես շտապում,—հարցրեց նա։

— Ասա ինձ, ի սեր մեր ընկերության, այս կանայք ինչ են խոսում իմ մասին։

Բժիշկը աշխատեց ժպտալ։

— Այսօր յես քեզ դիտմամբ բերեցի այստեղ,—պատասխանեց նա,—և նպատակով եյի ասում, վոր դու քեզ ազատ պահես։ Լսիր, չգիտեմ ինչ պատճառով և ինչպես, մի հիմար լուր է տարածվել։ Քո մասին պտտում են զանազան առասպելներ և բոլորը հնարված են մի բան ապացուցանելու համար, այն է, վոր դու ցնդվել ես։ Մի՛ զարմանար և մի բարկանար, բավական է մի թեթև լուր, վոր ամբոխի բերանում մեծանալով դառնա հրեշավոր պատմություն։ Յես չգիտեմ, ով է հնարել այդ լուրը, բայց համոզված եմ, վոր այդ քո թշնամիների գործն է։ Ահա ինչու չեն շշնջում և ինչ են շշնջում այդ կանայք քո մասին։

Արտասանելով այս խոսքերը, բժիշկը փորձեց ծիծաղել. բայց նույն վայրկյանին նրա հայացքն ընկավ Դիմաքսյանի այլայլված դեմքին, և ծիծաղը մնաց սառած նրա շրթունքների վրա։ Դիմաքսյանը ձեռով շփեց ճակատը, տրորեց աչքերը, գլուխը ցնցեց, կարծես, իրանից մի միտք հեռացնելու համար և արտասանեց.

— Այո, այդպես ուրեմն... ինձ խելագար են համարում։

Հետո նա, մի արագ շարժում գործելով, ավելացրեց.

— Գուցե իմ թշնամիները չեն սխալվում։

III

Այն օրից, յերբ Գայանեն յուր ամուսնու հետ ամառանոցում վերջին ընդհարումը ունեցավ, նրանց ընտանեկան հարաբերությունը անպայման խախտվեց։ Ամիսներ անցան, և կինը չեր հաշտվում նույնիսկ չեր ուզում խոսել յուր մարդու հետ։

Այս համառ խռովությունը Բարաթյանի համար անտանելի յեր։ Նրա ուրախ ու զվարթ բնավորությունը չեր սիրում ընտանեկան լարված հարաբերություն։ Նա կամենում եր ինչպես և է հաշտվել Գայանեյի հետ, վորպեսզի մի կերպ վերականգնի յուր հոգեկան անդորրությունը։ Նա պնդում եր, թե հասարակական մարդու համար այդ անդորրությունը անհրաժեշտ է։ Առանց այդ ել նա դրսում բարոյապես շատ է հուզվում, հոգնում, տանը պետք է հանգստություն վայելի։ Նա խնդրում եր Գայանեյին մոռանալ նրա «մանր սխալները»։ Նա

հավատացնում էր, որ չնայելով այդ «մանր սխալներին», դարձյալ սիրում է Գայանեյին։ Այս դեպքում նա չէր կեղծում։ Յեվ յուր սերը արտահայտելու համար չէր խնայում վոչ մի փաղաքշանք։ Նա գործ էր դնում յուր բոլոր սրախոսությունները և հրապույրները։ Յերբ տեսավ, վոր սովորական փաղաքշանքները չեն ազդում, իրան ձևացրեց մի տեսակ հեզ նահատակ։ Ա՛խ, ինչպես նա տանջվում է մի անհաշտ, քմահաճ և կամակոր կնոջ ձեռքում։ Իսկ յերբ տեսավ, վոր այդ էլ չի օգնում, վճռեց տալ Գայանեյին այն, ինչ-վոր վաղուց զգում էր։ Նախ կատակով, ապա լրջորեն հայտնեց, թե նախանձը կամ կասկածները չեն Գայանեյի անհաշտության պատճառը, այլ այն սառնությունը, վոր ամեն մի կին սովորաբար զգում է դեպի յուր մարդը ամուսնական առաջին տարիները անցնելուց հետո։

— Ճիշտ պատճառը հենց այս է։ Յես ձեզ համար շատ հասարակ մարդ եմ—ահա ինչ։ Դուք հույս ունեյիք իմ մեջ գտնել մի գաղափարի հերոս, մի արտաքո կարգի մարդ, չգտաք և հիասթափվեցիք։ Այժմ ձեզ հետաքրքրում են ուրիշները, դա շատ սովորական բան է։

Պյոտր Սոլոմոնիչին պատահած դժբախտությունը միքանի օր Բարաթյանին ստիպեց լռել և մինչև անգամ տխրություն պատճառեց նրան։ Հարկավ, նա վոչ վոքի չէր կարող հայտնել այն վիրավորանքը, վոր ծերունին հասցրեց նրան փողոցում։ Նա ուրախ էր, վոր վոչ վոք այդ չգիտե։ Բայց առանձնության մեջ նա ինքն իրան դատապարտում էր և, միևնույն ժամանակ, յուր վարմունքը աշխատում էր արդարացնել ուրիշների համանման օրինակներով։ Ինչո՞վ է մեղավոր, վոր մի գեղեցիկ կին օգտվեց նրա թուլությունից։ Վո՞ր տղամարդը կարող էր դիմանալ այն հրապույրին, վոր մոլորեցրեց նրան։ Վերջապես, ինչո՞վ է տարբերվում նրա արածը մյուս հարյուրավոր, հազարավոր ամուսինների արածից։ Մի՞թե միայն մի բանով... վոր նրա խղճի առջև կանգնած է մի պատկառելի ծերունու, մի ազգականի, այո, յուր պաշտպանի և հովանավորի պատկերը։ Հե՜յ, ինչ հիմարություն, ինչ նախապաշարմունք։ Ո՞վ կարող է յերաշխավորել, վոր հենց այդ ծերունին յուր հարյուրավոր «նույնանման» մեղքերի պատիժը չի քաշում այսօր։ Ի՞նչ անենք, վոր այդ պատիժը կատարվեց Բարաթյանի և վոչ մի ուրիշի ձեռքով։

Այս դատողությունները սառն ջուր սրսկեցին նրա փոքր ինչ տաքացած խղճի վրա։ Նա հանգստացավ։

Այդ միջոցին նա նուրբ հոտառությամբ զգաց, վոր յուր կնոջ մասին վատ լուրեր են պտտում։ Սկզբում նա կատաղեց, հարվածը անսպասելի յեր։ Բայց շուտով սառն դատողությունը դարձյալ օգնու

թյան հասավ։ Նա մտածեց, վոր պետք ե զգույշ վարվել, և յուր վիրավորանքը խոհեմաբար թաքցրեց ամենքից։ Նա ձևացրեց իրան այնպես, իբրև թե վոչինչ չի լսել, վոչինչ չի զգում և հասկանում։ Նրան հայտնի չեր, վոր Գայանեն հարգում ե Դիմաքսյանին, ինչպես և գիտեր, վոր Դիմաքսյանի սրտում դեռ վառ ե գաղտնի պահած նախկին սերը։ Բայց այսքանը բավական չեր Գայանեյի մասին վորևե վատ կասկած ունենալու։ Նա անպայման համոզված եր, վոր յուր կինը մաքուր ե, ինչպես լեռնային նորեկ ձյունը։ Յեվ վոչ մի զրպարտություն, վոչ մի չարախոսություն չի կարող ստվեր ձգել նրա ընտանեկան անարատ պատվի վրա։

Այնինչ՝ մյուս կողմից ամոթի և վրեժխնդրության զգացումը ներսից կրծում եր նրա սիրտը։ Նա այնքան մեծ նշանակություն եր տալիս հասարակական կարծիքին, վոր չեր կարող սառնարյուն վերաբերվել նույնիսկ դեպի մի պարզ զրպարտություն։ Յերկար ժամանակ տատանվելուց հետո, մի որ նա վճռեց հայտնել յուր վրդովմունքը Գայանեյին։ Հարցրեց, արդյոք նա գիտե՞ յուր մասին տարածված լուրը։

Այս անգամ Գայանեն չկարողացավ իրան զսպել և չխոսել։ Նա պատասխանեց, թե, այո, գիտե, վոր իրան բամբասում են։ Այն սառնությունը, վորով տվեց յուր պատասխանը, սպառեց Բարաթյանի համբերությունը. Նա առաջին անգամ բարձր ձայնով գոռաց յուր կնոջ վրա։ Այդ ել չվրդովեց Գայանեյին։ Նա այնքան արհամարհանքով եր վերաբերվում յուր մասին տարածված զրպարտությանը, վոր արժանի չեր համարում պաշտպանվել վոչ մի խոսքով։ Գիտեր, վոր յուր ամուսինն ել մտքում արհամարհում ե այդ զրպարտությունը և գոռում ե միայն յուր սեփական հանցանքը մոռացնել տալու համար։

— Լսեցե՛ք,— գոչեց Բարաթյանը, նորից զսպելով իրան,— ձեր անտարբերությունը անտանելի յե։ Մարդիկ ձեր պատիվը շոշափում են, դուք չեք վրդովվում։ Յես պահանջում եմ, վոր դուք ձեզ արդարացնեք։

— Ո՞ւմ առջև։

— Իմ։

— Հա հա հա, հանցավորը դատավոր ե դարձել։

— Դուք ծիծաղո՞ւմ եք, դուք արհամարհո՞ւմ եք հասարակական կարծիքը։ Ուրեմն լսեցե՛ք, յես պետք ե ձեզ մի ճշմարտություն ասեմ։— Տղամարդի մեղքը ամենքի համար սովորական բան ե, իսկ յերբ կնոջն են բամբասում, թեկուզ զուր տեղը, թեկուզ հենց այն պատճառով, վոր այդ կնոջ հետևից ընկել ե մի... խելագար, այն ժամանակ վայ ընտանիքի պատվին։ Մեր մեղքերը մեզ ներվում են, իսկ ձեր մի սխալը — յերբեք։ Այս բանը լավ հասկացեք։

— Մեղքը մեղք ե, կինն ե կատարում, թե տղամարդը, միևնույնն ե։ Բացի հասարակական կարծիքից կա խղճի դատաստան։ Դուք այդ բանը մոռանում եք։

— Խղճի դատաստա՞ն,— կրկնեց Բարսեղյանը ծաղրաբար,— բարեհաճեցեք այդ խոսքը ուրիշ բանի մասին գործածել։ Ընտանեկան պատիվը շատ նուրբ խնդիր ե։ Խիղճը չի կարող օգնել, յերբ այդ պատվին վտանգն ե սպառնում։ Ի՞նչ նշանակություն ունի ձեր, իմ կամ մի ուրիշի խիղճը ընդհանուրի աչքում։ Կյանքի օրենքները և ավանդությունները ամբոխն ե ստեղծում և վոչ անհատները։ Շատ կարելի յե իմ խիղճը ձեզ անմեղ ե համարում, բայց նա Մովսես մարգարեյի տախտակը չե, վորի վրա գրվածները ամբողջ աստվածային պատգամների տեղ ընդունի։ Տիկին, մենք հասարակական կարծիքի ստրուկներն ենք, պարտավոր ենք տալ նրան բոլորը, ինչ-վոր մեզանից պահանջում ե։

Յեվ վորքան այդ հայացքը անիրավ, վորքան անգութ և դատապարտելի լիներ — Գայանեն չեր կարող նրա մեջ չզգալ մի վորոշ չափի ճշմարտություն։ Այո, այր մարդուն ներվում ե նրա ակնհայտ հանցանքը, նրա հետ հաշտվում են, նրան ընդունում են ամեն տեղ. նույնիսկ ամենաառաքինի կինը նրանից չի խորշում։ Իսկ կին մարդը. նրա համար մի անխիղճ լուր, մի քսու և չար խոսք շատ անգամ կործանիչ նշանակություն ունի։

Միքանի վայրկյան այսպես մտածեց նա։ Բայց հանկարծ նրա ուղեղի մեջ մի հեղաշրջում տեղի ունեցավ։ Նրա սիրտը ալեկոծվեց մի մրրիկով, նրա գունատ այտերը շառագունեցին և աչքերի մեջ պսպղաց անսովոր զայրույթ։ Ինչու պետք ե այդպես լինի, ինչու, ի՞նչ իրավունքով։ Դա բռնություն ե, դա անգթություն ե։ Միթե միշտ կինը պետք ե պատժվի, իսկ տղամարդը անպատիժ մնա։ Ինչու կանայք չեն բողոքում բռնության դեմ, ինչու նրանք գոնե իրանց զզվանքը բացարձակ չեն արտահայտում այդ տղամարդկանց, ահա հենց այդ անպատկառ մարդուն, վոր յերբեք նրա աչքում այնքան քստմնելի չեր յերևացել, վորքան այժմ։ Ի՞նչ ասի նրան, ինչպես արտահայտի յուր սրտի անհուն նողկանքը։ Վոչ, չարժե ավելի քրքրել այդ տիղմը...

Նա յերեսը դարձրեց խորին զզվանքով և ուզում եր դուրս գնալ, յերբ դռների հետևից լսվեց մի դղրդյուն։ Նա կանգ առավ։ Նույն վայրկյանին դռները լայն բացվեցին, և հետևյալ տեսարանը ներկայացավ։ Յերկայն անկողնաձև բազկաթոռի վրա տարածված եր Գերասիմ Գերասիմիչը, վոտները պլեդով ծածկած, ձեռները գլխատակին դրած։ Հինավուրց ծառայի ձեռքով անդամալույծը ներս եր մղվում յուր

շարժական կայարանի հետ, ինչպես մի ահագին կրյա յուր կճղևի մեջ։ Նա քնթի տակ ցածր ձայնով յերգում եր, կարծես, ինքն յուր համար որոր ասելով։

— Սըպրա՛վա, դուռռակ.—ղեկավարում եր նա ծառային յերբեմն,—սըզա՛դի, բալըես, պրավո՛րնո, ույո՛լ, վոտ տա՛կ, ատեպեր տաշչի... հոլա՛մ...

Գայանեն հետ քաշվեց, վոր հանդիսավոր գնացքին ճանապարհ տա։

— Պա՛պա, ինչ գործ ունեք այստեղ,— ասաց Բարաթյանը կես հարցանքով և կես վրդովված։

— Մոլչա՛յտ. ոգնիր ինձ ներս մտնելու։

Վորդին ընկեց բազկաթոռի կողքից և քաշեց սենյակի մեջտեղը։

— Տեպե՛ր ոտվա՛լիվայ,—հրամայեց ծերունին ծառային, վոր և իսկույն դուրս յեկավ։—Հիմա կասեմ, ինչ գործ ունիմ այստեղ։ Նստեցեք։ Ոհ, ինչպես ցավում է անպիտանը։ Իսո՛կ, տավո՛, պլեդը քաշիր ցած, վոտներս ծածկիր. հա՛, այդպես։ Դե՛հ, լսեցեք, ինչու ճանապարհորդեցի այս ընտանեկան դրախտը, հա, հա, հա, չոռտ յեվո դերի, լավ դրախտ եւ ի՞նչ եք գիշեր-ցերեկ միմյանց միսը կրծում։ Նի սլո՛վա, եա, բրա՛տեց, նե դուռակ, շատ լավ տեսնում եմ, շե՛լմա, վոր, տա՛վո, կնոջդ խաբում ես...

— Պա՛պա։

— Գոլո՛ւբչիկ,—դարձրեց ծերունին յուր կիսախուփ աչքերը Գայանեյին,—մի զարմանար, դա Բարաթովների արյունն է։ Շատ էլ, տավո՛, ուշադրություն մի դարձնիլ։ Նո՛ւ, չո՛ռտ, ուրիշ կանանց հետևից է ընկած, վո՞ր մարդը չէ ընկած։ Բայց շատ լավ գիտեմ, վոր քեզ սիրում է։ Յես ինքս էլ այդպես էյի, միայն հանգուցյալին էյի սիրում, նո՛ւ, չոռտ յեվո դերի, աչքս միշտ ուրիշների վրա յեր...

— Պապա՛...

— Նո՛ւ, պա՛պա, պապա՛, ի՞նչ կա, սո՞ւտ եմ ասում։ Նու դա, գոլուբչիկ, գեղեցիկ հարսս, մարդ շատ անգամ էլ ինքն է նրան անբախտացնում... Մի բան ասեմ. յեթե ատամդ ցավում է, քիչ մտածիր, ինչքան շատ մտածես, այնքան շատ կցավի։ Դու, վեդ, աշխարհը փոխել չես կարող։ Նրա ստեղծվելուց մինչև որս միայն Ադամն է հավատարիմ ամուսին յեղա՛լ, վորովհետև բացի Յեվայից ուրիշը չկար...

Գայանեն ամոթից չգիտեր յերեսը վոր կողմ դարձներ։ Ծալքալված ծերունու արձակ խոսքերը դիպչում եյին նրա կանացի ամոթխածությանը։ Բայց նա գիտեր, վոր Գերասիմ Գերասիմիչը ուրիշ լեզվով խոսելու ընդունակ չէ։

— Նուս,—շարունակեց ծերունին,—ուրեմն հաշտվիր դրությանդ

հետ։ Լավ չէ շուն ու կատու լինելը, աստված վկա, լավ չէ։ Հաշտվեցեք, թե չէ, յերդվում եմ հանդուցյալի գերեզմանով, վոչինչ չեմ կտակիլ ձեզ։ Իսկ յես ուզում եմ ունեցածիս մեծ մասը ձեզ համար թողնել։ Մյուս վորդիս վճռել ե Ռուսաստանում մնալ. ե շ չ ո-բ ի, Պետերբուրգի ա մ ա գ ե լ ն ե ր ի ն կարող ե գտնել Թիֆլիզում։ Միքանի հազար կգցեմ առաջը, բերանը կկապի, մնացյալը ձերն ե։ Ասում եմ, հաշտվեցեք, վաղը կտակս գրել տամ, յերազ եմ տեսել, պ ր ե ս կ վ ե ր ն ի յ յերազ, իմ յերազները միշտ կատարվում են։ Ն ո՛ ւ, հասկացա՞ք, հաշտվեցե՛ք։ Ինչ, գեղեցկուհի, խոսք մի լաց լինիլ, արտասուքը յերեսդ կփչացնի, ափսոս ես։ Ի ս ա՛ կ, համբուրվեցե՛ք, լսում եք, շուտ, այս րոպեյիս, թե չե գնացի... Ոհ, վոսկորնե՛րս, վոսկորնե՛րս...

Բարաթյանը մի կողմնակի հայացք ձգեց Գուլյանեյի վրա։ Նա պատրաստ եր հաշտվել, նույնիսկ շատ ուրախ եր ծերունու միջամտությանը։

Այնինչ՝ Գուլյանեն կանգնած եր նույն դրության մեջ, նույնքան վրդովված։ Այժմ նրա մեջ զզվանք եր հարուցանում և՛ այդ անդամալույծ ծերունին։ Հայր և վորդի նրա աչքում ներկայացնում եյին միևնույն տիպարը։ Զանազանությունը այն եր, վոր ծերունին անամոթաբար խոստովանում եր յուր ախտը, իսկ յերիտասարդը հանդգնաբար դեռ ծածկում եր յուր անծածկելի հանցանքը։

— Հա՛յդա, յես շատ սպասել չեմ կարող։ Ձե՞ք ուզում։ Հասկանում եմ, հասկանում եմ, ամաչում եք ինձ մոտ համբուրվել։ Շատ լավ, յես կգնամ, յերեկոյան ձեզ կսպասեմ։ Կգաք ինձ մոտ հաշտված, յես ձեզ կորհնեմ, թե չե, հորս գերեզմանը վկա, կոպեկ չեմ տալ, տ ո յ ե ս տ — ն ի գ ր ո շ ա՛։ Ա՜խ վոսկորներս... Անդրեյ, քշի՛ր ինձ...

Հինավուրց ծառան ներս ցցեց գարիի հասկերի նման բեղերը։ Դռները բացվեցին, և ծերունին յուր կացարանի հետ միասին նույն հանդիսավոր կերպով դուրս քշվեց։

IV

«Դիմաքսյանի ուղեղը խանգարված ե»։ Այս դարձվածը կրկնում եյին շատերը։ Այս առթիվ պատմվում եյին տեսակ-տեսակ իրողություններ, վորոնք յերկու անգամ յերկու չորս, ապացուցանում եյին տարածված լուրի ճշմարտությունը։

— Դեղին տուն, դեղին տուն, յես վաղուց եյի ասում, թե նրա դպրոցը այն ե,—կրկնում եր տեսուչ Ինչաթյանը, հոգեբանական մեթոդով ապացուցանելով յուր նախորդի խելագարությունը։

Վոչ վոք նրան չեր հակառակում, իսկ ով թերահավատորեն եր վերաբերվում տարածված լուրին, նրան համոզելու համար տասնյակ «ապացույցներ» եյին բերվում։ Բավական ե մոտիկ անել նրա աչքերին և կարելի յե իսկույն հասկանալ, վոր այնտեղ «մի բան կա»։ Ահա և՛ նրա ձայնը, մի՞թե խելագարի ձայն չե։ Իսկ քնթի պնչե՞րը խոսելու ժամանակ։

Անցնում եր Դիմաքսյանը փողոցով, գնում եր թատրոն, թե մի ուրիշ հասարակական տեղ — միշտ լինում եյին մարդիկ, վոր, նայելով նրան, միմյանց ականջին շշնջում եյին։ Յերբ նա մեկի հետ խոսում եր, խոսակիցը լսում եր ուշադրությամբ, վիճում եր նրա հետ, հերքում եր նրա ասածը կամ ընդունում, բայց, միևնույն ժամանակ, յերբեմն խորհրդավոր հայացք եր ձգում նրա աչքերի մեջ։ Իսկ յերբ մի վորևե միտք պնդելիս նա տաքանում եր և ձայնը քիչ թե շատ բարձրացնում, խոսակիցը համաձայնվում եր նրա հետ հակառակ յուր համոզմունքին, ինչպես սովորաբար անում են ուղեղը խանգարվածների հետ։

Սկզբում Դիմաքսյանը այդ կասկածների վրա ուշադրություն չեր դարձնում։ Իսկ յերբ բժիշկ Սալամբեկյանը հայտնեց նրան գաղտնիքը, այն որից նա ինքը կամա-ակամա սկսեց կասկածներ վորոնել։ Հետզհետե նրան թվում եր, վոր լուրը տարածվել ե ամեն տեղ և ամենքը արդեն հավատում են։ Նույն իսկ չհավատացողները նրա մեջ կասկած եյին զարթեցնում։ «Յերևի, մտածում եր նա, քաղաքավարությունն ե ձեզ ստիպում ցույց տալ, թե իբր չեք հավատում, բայց իսկապես դուք ել հավատում եք»։

Նա կամենում եր իմանալ մարդկանց միտքը, թափանցել նրանց հոգին և ճշտությամբ կարդալ նրանց սրտինը։ Ահա ինչու մեկի հետ խոսելիս յերբեմն նրա ուղեղը ավելի դիմացինին ուսումնասիրելով եր զբաղվում, քան թե խոսակցության նյութով։ Այդ միջոցներին նա հաճախ շփոթվում եր և, յերբ խոսակիցը հարցնում եր. «ճշմարի՞տ եմ ասում», նա սթափվելով արտասանում եր՝ «հը՞մ...»։

Այսպիսով նա ինքը անգիտակցաբար կասկած եր զարթեցնում ուրիշների սրտում։ Նա ուղղակի վոչ վոքի հետ չեր խոսում պղտոր լուրի մասին։ Նա չեր ուզում առիթ տալ կարծելու, թե ինքը վորևե նշանակություն ե տալիս չարախոսներին։ Բայց և այնպես կասկածը ավելի ու ավելի խոր արմատ եր գցում նրա սրտում հակառակ յուր կամքին, հակառակ յուր տրամաբանությանը։

Դա մի անբնական հոգեկան դրություն եր, վոր պետք ե քայքայեր նրա նյարդերը։ Նա զգում եր այս բանը և վորքան աշխատում

էր մտքում ծաղրել յուր հակառակորդներին, այնքան ընդհակառակը ավելի յեր վրդովվում նրանց դեմ։

Վերջապես, մի օր նա վճռեց խոսել Մսերյանի հետ։ Նա համոզված էր, յեթե ամբողջ աշխարհն էլ հավատա, իդեալիստը դարձյալ չի հավատալ և կծիծաղի չար լուրը տարածողների վրա։

Իսկ Մսերյանը դեռ ես այնքան խորասուզված էր ինքն յուր մեջ, վոր վոչինչ չգիտեր տարածված լուրի մասին։ Ամբողջ օրը նա տանը նստած շարունակ կարդում էր փիլիսոփայական հաստ գրքերը։ Սակայն գյուղ գնալու միտքը դեռ նրա գլխից չէր դուրս յեկել։ Նա նորանոր ծրագիրներ էր կազմում, պատկերացնում էր ապագա գործունեության բոլոր մանրամասները։ Բայց յերբ բանը գործնականին էր գալիս, բարոյական ուժը սկսում էր դավաճանել նրան և խորտակել բոլոր թեորիաները։

— Գիտես, ինձ համար աշխարհիս յերեսին ամենադժվարը մարդկանցից մի բան խնդրելն է։ Ամեն յերեկո վճռում եմ մյուս օրը դիմել թեմական տեսչին, բայց յերբ օրը լուսանում է—իմ վճիռն էլ վոչնչանում է։ Ցես տեսնում եմ, վոր գործնականի համար բոլորովին անպետքացել եմ։ Գրքերը սպանեցին իմ յեռանդը և ինձ փալաս դարձրին...

Այս խոսքերը նա ասաց Դիմաքսյանը ներս մտնելիս, դեռ նրա բարևին չպատասխանած։ Նկատելի յեր, վոր նա ամաչում է յուր թուլության համար և՝ նախ քան յուր ընկերից հանդիմանություն լսելը՝ ինքն էր հանդիմանում իրան։

Դիմաքսյանը իսկույն խոսքը փոխեց, վորով մեծ հաճություն պատճառեց Մսերյանին։ Նա յեկել էր ուրիշ բանի համար և այժմ վոչինչ նրան չէր հետաքրքրում բացի այդ բանից։

— Դու ինչու ինձ չես շնորհավորում,—ասաց նա հանկարծ, մի քանի րոպե կողմնակի բաների մասին խոսելուց հետո։

— Ի՞նչը շնորհավորեմ։

— Իմ խելագարությունը, յես խելագար եմ...

Այս ասելով նա հավատացած էր, վոր Մսերյանը կծիծաղի, կըսկսի կատակ անել։ Մինչդեռ իդեալիստը ամենալուրջ յեղանակով արտասանեց.

— Զարմանում եմ, վոր դու նոր ես իմանում քո խելագար լինելը, դա հին բան է։

— Ի՞նչպես...

— Իհարկե, խելագար ես, կատարյալ խելագար...

Դիմաքսյանը գունատվեց և ապշած մտիկ տվեց ընկերոջ յերեսին։

— Յեվ դու Բրուտոս,—գոչեց նա իբրև թե ծիծաղելով, բայց իսկապես ավելի վրդովված։

— Ի՞նչ կա, վոր զարմանում ես, մի՞թե խելքը գլխին մարդը…

Դիմաքսյանը մի թեթև, բայց տարորինակ ճիչ արձակեց և մի շարժումով ստիպեց նրան լռել։ Մսերյանը զարմացած նայում եր նրան։ Նա դեռ չգիտեր ինչ անսովոր հոգեկան տրամադրության մեջ ե գտնվում Դիմաքսյանը։ Խելագար ասելով, նա հասկանում եր հասարակական մտավոր մակերևույթից բարձր մարդուն կամ շրջանի բարոյական օրենքներին չհարմարվողին։ Այդպիսի մեկն եր համարում նա յուր ընկերոջը և առաջին անգամը չեր, վոր նրան խելագար եր կոչում։

Դիմաքսյանը յերկու ձեռներով գլուխը ամուր բռնած, աչքերը հառել եր սեղանի մի կետին։ Թվում եր նրան, վոր արդարև յուր ուղեղին մի վտանգ եր սպառնում, վոր այդ վտանգը շատ մոտիկ ե, բավական ե Մսերյանը մի անգամ ել կրկնի «ինհարկե, խելագար ես», և նա իսկույն կցնորվի։ Նույն դրության մեջ նա բութ մատների ծայրերով փակեց ականջները և պատմեց անհեթեթ լուրերը։ Արտահայտեց բոլորը, ինչ·վոր զգացել եր և զգում եր թե մարդկանց շրջանում և թե առանձին ժամանակ։ Ավելացրեց, թե այնքան վերջին ժամանակ մտածում ե այդ մասին, այնքան ուրիշները կասկածով են նայում նրա վրա, վոր վախենում ե։ Մարդկանց կասկածավոր հարաբերությունը խլում ե նրա յեռանդը, ջլատում ե նրա ուժերը։

— Բոլոր իմ ծրագիրները խորտակվում են միայն և միմիայն այդ կասկածից։ Ինչ ձեռնարկության մասին մտածում եմ, իսկույն այդ հրեշավոր կասկածը կանգնում ե իմ առջև։ Յես ուզում եմ գործել, հասկանում ես, բայց մտածում եմ, ինչ կարող ե անել մի մարդ, վորին ամենքը յեթե վոչ խելագար, գոնե աննորմալ են համարում։ Վոչ, այսպես չե կարելի, կամ յես իսկապես խելագար եմ և ինձ պետք ե գժատուն ուղարկել կամ պետք ե մի կերպ վերադարձնեմ իմ հոգեկան խաղաղությունը, վոր կարողանամ մի գործ սկսել։

Մսերյանը այժմ միայն հասկացավ բանի եյությունը։ Նա տեսավ, վոր Դիմաքսյանի հոգեկան դրության հետ կատակ անել չի կարելի։ Պետք եր միանգամից ազատել նրան այդ կասկածներից, վորքան ես նրանք անհիմն և անմիտ լինեյին։ Յեվ նա, չնայելով յուր թախծալի տրամադրությանը, հանկարծ բարձրաձայն ծիծաղեց։ Հետո վոտքի կանգնեց և, ձեռը ձեռին խփելով, գոչեց.

— Խեղկատակներ, խեղկատակներ, յերկինքը վկա, այդ մարդկանց տեղը կրկեսն ե և վոչ թե հասարակական ասպարեզը։ Հա հա

հա, Դիմաքսյանը ցնդվել է, հա հա հա... Կեցցես, Արսեն, վոր այդորին հասար, խելագար անունը վաստակեցիր հիմարների և ապուշների շրջանում։ Այսուհետև դու կարող ես պարծենալ, խելագար ես, վորովհետև խելք ունես...

Նա կանգ առավ։ Դիմաքսյանը, առաջին անգամ՝ կասկածը յուր սրտում բույն դնելուց հետո՝ զգաց հոգեկան թեթևություն։ Ընկերոջ անարվեստ վրդովմունքը և անկեղծ ծիծաղը նրան մխիթարեցին։ Նա սթափվեց, նա սկսեց սառնորեն մտածել յուր մասին և զգաց, վոր իրավ ինքը շատ թույլ է եղել, տեղ տալով յուր սրտում մի անմիտ կասկածի։

— Բայց կատակը մի կողմ,—շարունակեց Մսերյանը, նստելով նրա դեմ,—դա շատ ցավալի բան է։ Ցավալի չէ վոչ թե այն, վոր այդ խեղկատակները հիմար լուրեր են տարածում քո մասին, ցավալի չէ, վոր մեր բոլոր գործերը այդ մարդկանց ձեռքումն է։ Իսկ. դու մենակ ես, կարող եմ ասել բոլորովին մենակ։

— Յես մենակ չեմ, յես ունիմ յերկու հավատարիմ ընկերներ և բարեկամներ, քեզ և...

— Յեվ բժիշկ Սալամբեկյանին, ինչու չես ասում, կարծում ես, ինձ կվիրավորե՞ս։ Վո՛չ, դու ելի ինձ լավ չես ճանաչում մինչև հիմա։ Յես նրա դեմ այժմ մազու չափ վոխ չունիմ։ Բայց թողնենք այդ, յես ուրիշ բան եյի ուզում ասել։ Գիտե՞ս, Արսեն, յես շատ եմ մտածել մեր հասարակական կյանքի մասին, գործելու ընդունակ չեմ, բայց մտածել գիտեմ։ Յես յեկել եմ այն յեզրակացության, վոր մեր յերիտասարդությունը բարոյական հաստատ սկզբունք չունի։

Դիմաքսյանը վոչինչ նկատողություն չարեց։ Նա միայն գլուխը կրծքին թեքեց և աչքերը հառեց սենյակի հատակին։ Այնինչ՝ Մսերյանը կանգ առավ, միմյանց յետևից միքանի անգամ ուժգնաբար ծխեց, բաց թողնելով գլխից վեր ծխի թանձր քուլաներ։ Հանկարծ նրա դեմքը փոխվեց, աչքերը փայլեցին, և ձեռը խփելով յուր ծնկին, արագությամբ վոտքի կանգնեց, գոչելով.

— Բայց այնուամենայնիվ կգա մի որ և մենք կունենանք յերիտասարդություն, մաքուր և հաստատ բարոյական սկզբունքների տեր յերիտասարդություն։

Խորին հավատով և վոգևորությամբ արտասանված այդ խոսքերը վոգևորեցին և Դիմաքսյանին։ Նա զգաց մի անբացատրելի ուրախություն։

— Այդպես ահա,—ասաց նա,—այդպես խոսիր, այժմ յես ճանաչում եմ իմ Մսերյանին։ Թող հուսահատությունդ, վոգևորվիր և ուրիշներին ել վոգևորիր առաջվա պես։

— Բայց ափսոս միայն, վոր մենք չենք տեսնիլ այդ օրը...

Նա շարունակեց նույն ուղղությամբ ապագայի մասին: Այո, կգա այն օրը, յերբ ամեն ինչ կփոխվի, կշատանա խելագարների թիվը և այժմյան խելոքներին նրանք կուղարկեն հիմարանոց: Ապագան նրանն ե—ով համոզմունք ունե և գործում ե անկեղծ սրտով:

Նախկին Մսերյանը դարձյալ յերևան յեկավ յուր բոլոր վարվռուն զգացումներով: Կարծես, վերջին ժամանակվա թախիծը մի վայրկյանում անհետացավ և նա մոռացավ յուր հուսահատ յերկվորությունը, վոր այնպես թմրեցրել եր նրան: Յեթե այդ պահին բժիշկ Սալամբեկյանը ներկա լիներ, իդեալիստը, առանց վոր և ե վախի, կգրկեր նրան և կշնորհավորեր: Նա այս բանը չթաքցրեց Դիմաքսյանից:

— Ինչ արած, յես այսպիսի մարդ եմ,—ավելացրեց նա,—կուզես ինձ անվանիր հիմար, տխմար, բայց այսպես եմ...

Դիմաքսյանը դուրս յեկավ նրա մոտից գրեթե բոլորովին փոխված: Կասկածի նշույլ անգամ չեր մնացել նրա սրտում և վոչ իսկ մի մազու չափ վհատություն: Նա մի առանձին վոգևորություն եր ստացել և զգում եր յուր մեջ մի նոր ուժ մաքառելու յուր գաղափարների համար: «Անմիտներ, ասում եր նա մտքում, դուք կամեցաք ինձ ծաղրե՛լ, ձեզ չի հաջողվիլ այդ: Խելագար եմ յես, շատ գեղեցիկ, ուրեմն ունիմ իրավունք ինչ-վոր ուզում եմ—անել և ինչ-վոր ուզում եմ—խոսել»:

Մի ամբողջ շաբաթ նա փակված յուր բնակարանում գրում եր: Կյանքի դառն փորձերը նրա ուղեղում կազմել եյին մի աշխարհահայացք: Պետք ե փշրել այն բոլոր հասարակական նախապաշարմունքները, վոր կաշկանդում են անհատի բարոյական ազատությունը—այս եր այն կենտրոնական առանցքը, վորի շուրջը պտտում եյին նրա բոլոր մտքերը: Դա չեր այն անսպառելի աղբյուրը, ուսկից սկիզբն եյին առնում նրա գաղափարները, հետո զարգանում, բեղմնավորվում և հափշտակում նրան իրանց բուռն, անընդդիմադրելի հոսանքով:

Մի այդպիսի հոսանք դարձյալ նրան մոռացնել տվեց ամեն ինչ: Նրա միտքը գործում եր տենդային աշխուժով, վորոնելով և գտնելով այն բոլոր աննպաստ պայմանները, վորոնք խանգարում եյին շրջանի վրա անհատի բարոյական ազդեցությանը: Նա ուզում եր ապացուցանել, վոր ամբոխի սրբությունները շատ են կարոտ արմատական վերանորոգության: Նա պնդում եր, թե քանի կյանք կա—պետք ե փոխվեն և՛ նրա ղեկավարող պայմանները, թեկուզ նրանք լինեն հիմնական օրենքներ, թե կենդանին չի կարող կապված մնալ մեռյալի պաղ շղթաներով:

Թմրած ճահճի մեջ դարձյալ համարձակ ձեռքը արձակեց մի քար, և նա պետք է պղտորվեր։ Դա մի փոքրիկ բրոշյուր էր, ուր Դիմաքսյանը կատաղի կերպով քննում էր ու վերլուծում հասարակական կյանքի ախտերը և անխնա հարձակվում նրանց վրա։

V

Պյոտր Սոլոմոնիչի դրությունը շատ ծանր էր։ Հրավիրված բժիշկները չկարողացան օգնել։ Նրանք միայն խորհուրդ էին տալիս յեղանակը տաքանալուց հետո հիվանդին ուղարկել արտասահման, գուցե այնտեղ հռչակավոր բժիշկները մի բան կարողանան անել։

Բայց տիկին Բախտամյանը հակառակում էր։ Նա ասում էր, թե օտար յերկրներում յուր ամուսինը կմնա զուրկ խնամող աչքից, այն ինչ՝ ինքը այստեղ գոնե քնքուշ հոգացողությամբ աշխատում է թեթևացնել նրա ցավը։ Ճշմարիտն այն էր, վոր բժիշկներից ամենահմուտը նրան գաղտնի ասել էր, թե ծերունու օրերը հաշված են, և նա շատ-շատ կարող է ապրել՝ միայն յերկու ամիս։

Տիկինը վախենում էր՝ մի գուցե հիվանդը հանկարծ արտասահմանում առողջանա և այնուհետև մի՞թե նորից ինքը պետք է տանջվեր նրա ձեռքում։ Բացի դրանից, նա կամենում էր վերջին օրերը իրան հոգատար ամուսին ցույց տալ, հուսալով գեթ մասամբ հասարակական կարծիքը փոխել յուր մասին։

Այժմ նրա դռները նորից բացվել էին ծանոթների և բարեկամների առջև։ Ամեն օր հյուրեր էին գալիս հիվանդին տեսնելու։ Պյոտր Սոլոմոնիչը նրանց ընդունում էր միայն քառորդ կամ կես ժամով, հետո նրան պաշարում էր ընդհանուր մարմնային թուլություն։ Նա ընկնում էր մի տեսակ կիսաարթուն և կիսաթմրած դրության մեջ։

Այդ ժամանակ տիկինը հյուրերին հրավիրում էր դահլիճ, վորովհետև դա հիվանդից ամենահեռու սենյակն էր։ Այստեղ ամեն ինչ փոխվում էր, սուգը դառնում էր ուրախություն։ Հյուրերի դեմքերից անհետանում էր կեղծ ցավակցության արտահայտությունը և տեղի յեր տալիս զվարթության։ Սկսում էին զվարճախոսել, ծիծաղել, յերբեմն էլ այնքան բարձր, վոր նրանց ձայնը կարող էր հիվանդին հասնել։

— Ախ, շատ շնորհակալ եմ, վոր ինձ մխիթարում եք,— ասում էր տիկին Բախտամյանը, աչքերի բիբերը հեզ մայրապետի պես դեպի վեր բարձրացնելով։

Հաճախ նրա սեղանի շուրջը նստում էին հինգ-վեց կանայք և

յերիտասարդներ։ Այդ միջոցներին տիկնոջ «մխիթարությունը» արտահայտվում էր անդուսպ զվարճություններով։ Կարելի չէր կարծել, վոր վոչինչ անախորժ բան չի անցել նրա գլխով, վոր ընդհակառակը բախտը նրա համար ուղարկել է մի նոր յերջանկություն։

Միայն յերբեմն ձևի համար նա հանկարծ հառաչում էր, շտապով փակում էր ամուսնու սենյակը և, անդամալույծին նույն թմրության մեջ տեսնելով, վերադառնում էր և նորից շարունակում յուր զվարճությունը։ Նա հավատացնում էր հյուրերին, թե դիտմամբ է աշխատում մոռանալ յուր վիշտը, վորպեսզի «ուժերը չկորցնի»։ Յեթե նա յել հիվանդանա, էլ ով պետք է մտիկ անի «խեղճ մարդուն»։

— Իհարկե, իհարկե,— կրկնում էր կեղծավորների, շողոքորթների և հացկատակների յերամը,— այդ ջահել հասակում, ափսոս, ափսոս ձեր գեղեցկությունը։

Բայց տիկինը վոչ վոքի չէր կարող խաբել, մանավանդ Վեքիլյանին, վոր նույնպես մշտական հյուրերի թվումն էր։ Յերդվյալ փաստաբանը տարիներից ուշ իմացավ յուր ազգականի թշվառության բուն պատճառը։ Սկզբում նա անչափ վրդովվեց յուր ընկերոջ դեմ։

«Ի՞նչ ապերախտություն,— ասում էր նա մտքում,— ինչու այդպես անմարդավարի և անարժան կերպով վարձատրեց այն հյուրասիրությունը, վորին յես արժանացրի նրան Բախտամյանների ընտանիքում...»։

Բայց անցավ առաջին վրդովմունքը, նա, ավելի սառն մտածելով, գտավ ծանր հանցանքի «արդարացուցիչ պատճառները», ինչպես սովոր էր գտնել բոլոր յուր պաշտպանած հանցավորների համար։ Յերկուսն էլ յերիտասարդ էին, մոլորվեցին։ Մեղքը ծերունունն է, վոր ամուսնացավ իրանից յերկու ու կես անգամ յերիտասարդ կնոջ հետ։ Չպիտի անեյին, բայց արեցին, էհ, խաբվեցին։ Այսպես էր դատում Վեքիլյանը, և դա մի առիթ էր, վորպեսզի ինքը ստիպված չլինի ասպարեզ դուրս գալ ինչպես արյունակցական պատվի վրեժխնդիր ազգական։ Նա չէր ուզում թշնամանալ այն մարդու հետ, վորի գործակիցն էր շատ բաներում, վորից ակնածում էր և վորը միշտ նրան հարկավոր էր։ Վերջապես, նա խոհեմություն էր համարում լռելը, քան աղմուկ հանելը։

Յուր զգույշ, խոհեմ և հեռատես վարմունքի շնորհիվ նա բավական շահել էր Պյոտր Սոլոմոնիչի սիրտը։ Ծերունին վոչ միայն անտրտունջ ընդունում էր նրան, այլև զգում էր նրա կարևորությունը։ Նա վճռել էր գործերը կարգի բերել, նրան հարկավոր էր մի հավատարմատար. ուրիշ ով կարող էր ավելի օգտավետ լինել այս բանում,

յեթե վոչ Վեքիլյանը։ Իրավաբանը լիազորություն ստացավ ծերունու կալվածները կառավարելու և առհասարակ նրա բոլոր գործերին հետամուտ լինելու։

Օր օրի վրա Պյոտր Սոլոմոնիչի հիվանդությունը վատ ընթացք եր ստանում։ Նա միանգամայն կերպարանափոխվել եր։ Նրա նիհար դեմքի կաշին սևացել եր, աչքերը պղծել եին։ Նախկին կատաղության նշույլն անգամ չեր մնացել, գոնե այսպես եր յերևում արտաքուստ։ Այժմ նա մի թույլ, անզոր, խղճալի մարմին եր, որը մինչև յերեկո տարածված թախտի վրա։ Կնոջը նա արտաքուստ վերաբերվում եր շատ անտարբեր։ Կարծես, մոռացել եր նրա պատճառով կրած յուր անհուն տառապանքները։ Միայն յերբեմն հեռուից գաղտուկ նայում եր նրա գեղեցիկ հասակին, սպիտակ պարանոցին և գլուխը տրտմությամբ շարժում։

Մի որ նա Վեքիլյանին կանչեց յուր մոտ, դռները կողպել տվեց և մնաց նրա հետ։

Յերկար ժամանակ մյուս սենյակում տիկին Բախտամյանը անհամբեր սպասում եր յուր ազգականի փաստաբանի դուրս գալուն։ Նրա սրտում ծագել եր մի կասկած։ Ստեպ-ստեպ նա վոտների ծայրերի վրա զգույշ քայլերով մոտենում եր կողպած դռներին, կռանում և նայում դեպի ներս։ Բայց բանալին խանգարում եր, և նա չգիտեր, ինչ է կատարվում ներսում։

Նա առհասարակ մեծ հավատ չուներ դեպի Վեքիլյանը։ Նա վախենում եր՝ մի գուցե փաստաբանը ծերունու դաշնակիցը դառնա և, ով գիտե, ինչեր անեն միասին։

Վերջապես շշնջյունները ընդհատվեցին, տիկինը լսեց Վեքիլյանի քայլերի ձայնը։ Նա հեռացավ դռնից, վոր յուր լրտեսությունը չնկատվի։ Վեքիլյանը շտապով դուրս յեկավ և, առանց տիկնոջ կողմը նայելու, անցավ ու հեռացավ։ Աննան անմիջապես մտավ Պյոտր Սոլոմոնիչի սենյակը։ Խալաթը հագին, թախտի վրա յերեսն ի վեր տարածված, հիվանդը նայում եր առաստաղին՝ մտածմունքի մեջ։ Նա յուր աջ ձեռում բռնած եր մի թերթ գրած թուղթ, վորը շտապեց թաքցնել բարձի տակ։

— Ի՞նչպես ես այժմ,—հարցրեց տիկինը, ներքին խռովությունից շրթունքները կրծելով և նայելով ծերունու ձեռքին։

— Հ՞ըմ,—մրմնջաց հիվանդը անորոշաբար։

— Լա՞վ ես։

— Շշամատ,—պատասխանեց հիվանդը դանդաղ և թլված լեզվով։ Արդարև, կարծես, նա կենդանություն եր ստացել։ Նրա ապշած

աչքերը նայում եյին աշխուժով։ Այս փոփոխությունը տիկնոջը վախեցրեց. չլինի՞ թե հիվանդը առողջանում է։ Նա հետաքրքրված եր բարձի տակ թագցրած թղթի բովանդակությունով։ Նա համոզված եր, վոր դա ծերունու կտակն է։

— Այնքան յերկար ժամանակ ինչի՞ մասին եյիր խոսում Վեքիլյանի հետ,—հարցրեց տիկինը, չկարողանալով զսպել յուր անհամբերությունը։

— Վ.ըվոչչինչ...

Հիվանդը յերեսը դարձրեց պատին, ավելի ամուր սեղմելով բարձը։ Կինը նայեց նրան՝ գոսացած վոտներից սկսած մինչև զառամյալ գլուխը, վոտը խփեց հատակին և ամբողջ մարմնով ցնցվեց։ Չկար այդ վայրկյանին նրա համար ավելի ատելի, ավելի զզվելի մի բան աշխարհի յերեսին, քան այդ քայքայված մարմինը, վորի մեջ տակավին ապրում եր անողոք հոգին։

Ահա նա, ահա այն անիծյալ ծերունին, վոր տարիների ընթացքում ծծել է նրա յերիտասարդական թարմ արյունը, ապրել է նրա կյանքի հյութով ինչպես մի տզրուկ։ Իսկ այժմ, յերբ նա պարտավոր է այդ բոլորի գինը վճարել, յերե՜ս է դարձնում, չի ուզում անգամ խոսել նրա հետ։ Վո՛չ, կոպիտ անդամալույծ, վո՛չ, անխիղճ ծերունի, վո՛չ, դու պետք է խոսես քո օրինավոր կնոջ հետ։ Դու հենց այս րոպեյիս, քանի ուշ չե, քանի վոր քո ատելի հոգին «սատանաների բաժինը» չի դարձել, պարտավոր ես հայտնել քո կամքը, ապա թե վո՛չ... Կատաղած տիկինը բռունցքները սեղմեց, մի քայլ առաջ դրեց, աչքերը պսպղացնելով և ատամների արանքից դողդոջուն ձայնով արտասանեց.

— Մի մոռանար, վոր դու յերեխաներ ունես...

Ծերունին յերեսը մի քիչ շուռ տվեց նրա կողմը։ Մի չարախնդիր ժպիտ աղավաղեց նրա դալկացած դեմքը և մի կծու հեգնություն պսպղաց նրա աչքերի մեջ։ Դեռ ևս նրա ուղեղը այնքան տկար չեր, վոր չկարողանար հասկանալ կնոջ միտքը։ «Եհե՛, քաղցրաբարո գեղեցկուհի, կարծում եյիր մինչև վերջը կարո՞ղ ես խաբել քո մարդուն։ Կարծում եյիր ինձ գերեզման գլորելով, ինքդ իմ հարստությունով նոր կյանք կվայելես մի ուրիշի, մի վորևե գեղեցիկ, առողջ յերիտասարդի հետ։ Չե՛, չե, հույսդ կտրիր»։

Յերկուսն էլ լուռ եյին, բայց յերկուսն էլ իրար հասկանում եյին։ Մերթ ընդ մերթ ծերունին գլուխը բարձրացնում եր և դեպի դուրս ականջ դնում։ Յերևում եր, նա մեկին ամեն րոպե սպասում է և շատ բարկանում եր, վոր այդ մեկը ուշանում է։

— Զանգակը,—արտասանեց, վերջապես, նա, աչքերը սևեռելով դռներին և, միևնույն ժամանակ, ձեռը ավելի սեղմելով բարձին։

Տիկինը տատանման մեջ էր. Մնա՞լ արդյոք մինչև վերջը, տեսնե՞լ, թե ով պետք է գա, ինչ պետք է վճռեն և հաստատեն, թե՞ թքել և դուրս գնալ։ Մի քանի վայրկյան անցած, ծանր շունչ քաշելով և Վեքիլյանի հետ բարձր ձայնով խոսելով, ներս մտավ Ամբակում Աֆանասևիչը։ Նրանց հետևից յերևաց շեկ ու յերկայն մորուքով մի պարոն կռնատակին պահած մի կաշվե թղթապանակ և հետո յերկու ուրիշ անծանոթ մարդիկ։

Պյոտր Սոլոմոնիչը նշաններով առաջարկեց յուր ամուսնուն դուրս գնալ։ Բայց միայն մի քանի օտար հյուրերի ներկայությունը ստիպեց Աննային թողնել այնտեղը, ուր վճռվում էր նրա ճակատագիրը։ Նա ակամա քայլերով դուրս գնաց։ Նրա յետևից Վեքիլյանը հանդգնաբար դռները փակեց։

Նա մնաց մենակ և հուսահատված։ Թվում էր նրան, որ այնտեղ հավաքվել են մի խումբ ավազակներ և կողոպտում են նրա տունն ու տեղը, հարստությունը և ամբողջ բախտը։ Յեվ ավազակների պարագլուխն է յուր ազգականը, այդ սափրած, հղկված, կլորիկ դեմքով, սուր աչքերով փաստաբանը, որ հրացանի ու դաշույնի տեղ գործ է դնում գրիչ և խորամանկություն։

Նա պատրաստ էր գոռալ բարձրաձայն. «օգնեցե՛ք, կողոպտեցին»։ Նա ուզում էր դռները կոտրել, ներս վազել, ապտակել մեկին, մյուսին, վռնդել բոլորին յուր սեփական տնից։ Բայց ինչ, նա մի թույլ կին է, անտեր, անպաշտպան։ Ո՜ անգութներ, ո՛վ անաստվածներ, ինչո՞ւ այդպես ջախջախում եք նրա փայփայած հույսերը։ Տասնուչորս տարի տանջվելուց հետո մի՞թե նա իրավունք չուներ գոնե տասնուչորս տարի յել ապրելու։ Յեվ քանի-քանի յերիտասարդներ կային, որ կարող էին նրան յերջանկացնել. նա մինչև անգամ չգիտեր նրանցից որին ընտրել։ Այժմ ինչ առաջարկե յուր ընտրելիին, յեթե նրանից խլում եք ամենամեծ հրապույրը—հարստությունը։ Գեղեցկությո՞ւնը. ո՜, նա թառամում է, կորչում, մի քանի տարի ևս, և այնուհետև ինչ՞ կնմանի նա։

Անցավ մի ժամ, մի ամբողջ դառն և անտանելի ժամ։ Բանալին դռան մեջ պտույտ յեկավ։ Տիկինը վազեց սենյակի անկյունում դրած պահարանի մոտ և սկսեց այնտեղ իբրև թե ինչ-որ որոնել։

— Աննա Պավլովնա, Պյոտր Սոլոմոնիչը կանչում է,—լսվեց Վեքիլյանի պաղ ձայնը։

Յերբ տիկինը շփոթված ներս մտավ, բոլոր հյուրերը հարգանքով

վոտքի կանգնեցին և մի անգամ ևս գլուխ տվեցին։ Ծերունին հրավիրեց նրան նստել, հետո անմիջապես խնդրեց շիկամորուս նոտարին կարդալ յուր ձեռի թուղթը։

Կտակը գրված էր մանրամասն։ Առաջին մասը պարունակում էր բարեգործություններ։ Էջմիածնի վանքին տասը հազար, Ներսիսյան դպրոցին մի շարք խանութներ, քաղաքային ինքնավարությանը քսանուհինգ հազար ռուբլու տոկոսաբեր թղթեր յերեք վորդեգիր պահելու համար։ Ցեվ բոլորը Պյոտր Սոլոմոնիչ Բախտամյանի և միմիայն նրա անունով։ Կարծես, ծերունին վճռել էր յուր անունը անմահացնել։

Բայց կար մի հատված, վորի կարդալու միջոցին ծերունին խորհրդավոր կերպով գլուխը շարժեց, աչքերը հառելով կնոջ յերեսին։ Նա կտակում էր յուր քրոջ դուստր Գայանե Բարաթյանին յերեսուն հազար ռուբլի զուտ փող ինչպես սեփականություն։ Կտակում էր դարձյալ նրան յերեսուն հազար ռուբլի, վոր այս գումարով բաց անի աղքատ աղջիկների համար մի ուսումնարան յուր անունով։

«Այսինքն ուսումնարանը պետք է լինի Գայանեյի ուսումնարանը և վոչ թե տիկին Բախտամյանի։ Թող հայերը վորդոց վորդի օրհնեն իմ Գայանեյի անունը և հիշատակը»։

Կտակած գումարները ծերունու մահվան քառասունքի օրը տոկոսաբեր թղթերով պետք է հանձնվեյին Գայանեյին։ Կտակակատարներին վոչինչ իրավունք չէր տրվում ուսումնարանի վերաբերմամբ։

Տիկինը շրթունքները ատամներով այնքան ամուր սեղմեց, վոր նրանք սպիտակեցին, հետո կարմրեցին, հետո կապտեցին։

Նոտարը շարունակեց։ Մնացյալ կարողությունը ծերունին թողնում էր յուր զավակներին։ Կտակակատար և խնամակալ նշանակվում եյին Ամբակում Աֆանասյեվիչը և Վեքիլյանը մինչև ծերունու աղջկերանց չափահաս դառնալը։ Այնուհետև հարստությունը հավասար չափով բաժանվում էր յերկու քույրերի մեջ այն պայմանով, վոր նրանց ամուսնանալուց հետո անձնապես իրանց պատկանի, առանց վորևե իրավունքի ամուսինների կողմից։

Բոլոր գործերը պետք է կառավարեյին խնամակալները։ Նույն իսկ ընտանիքի ծախսերը նրանք պետք է աներին, նույնպես հոգային Լիզոչկայի և Նելեչկայի կրթության մասին։ Այդ բոլորի համար նշանակված էր այնքան, վոր ավելորդ շռայլություն թույլ չէր տալիս։ Ցեթե տիկին Բախտամյանը կամենար ամուսնանալ, զրկվում էր ծախսերից, իսկ զավակները մնում եյին խնամակալների հսկողության տակ, թեև իրանց մոր մոտ։ Մի խոսքով, տիկնոջը վոչինչ իրավունք

չէր հատկացվում, բացի այն, որ նա նշանակվում էր մի տեսակ պատվավոր աղախին յուր զավակների համար գրեթե մի փոր հացի գնով։

Յերբ նոտարը վերջացրեց ընթերցումը, բոլորը մեքենայաբար նայեցին տիկնոջ յերեսին և հետո սենյակի հատակին։ Նա կանգնած էր անշարժ, անլուր, դժգույն, ինչպես արձան։ Հանկարծ նրա աչքերը փայլեցին, կուրծքը բարձրացավ, բուռն արցունքը խեղդելով նրա կոկորդը, դուրս թափվեց նրա գունատ յերեսի վրա։

Նա ընկղմվեց բազկաթոռի վրա և սկսեց հեկեկալ...

VI

Իզուր Գերասիմ Գերասիմիչը առաջին յերեկո, հետևյալ և նույն իսկ յերրորդ օրը սպասեց, որդին և հարսը չեկան նրա մոտ հաշտված, ուրախ-ուրախ, ինչպես նա պատկերել էր։ Վերջապես անդամալույծի համբերությունը սպառվեց։ Նա կանչեց յուր որդուն և սաստիկ հանդիմանեց։ Որդին ասաց, թե ինքը «ամեն բան ներում է», պատրաստ է հաշտվել, բայց Գայանեն չի ուզում և քանի գնում, այնքան ավելի յերես է դարձնում նրանից։

— Յերեք օր է նա կանչել է քրոջը յուր մոտ և նրա հետ գաղտնի խոսակցություն ունեն։ Մինչև անգամ այդ աղջիկն էլ չի ուզում ինձ հետ խոսել։

Ծերունին յուր Անդրեյին հրամայեց կանչել «մեծամիտ» տիկնոջը։ Գայանեն իսկույն յեկավ։ Նա հասկացավ, ինչու համար են իրան կանչում, և արդեն գիտեր, թե ինչ պետք է պատասխանի։ Որքան ծերունին հորդորեց, որքան խրատեց, վերջապես, սպառնաց, տիկինը միայն արտասանեց.

— Յես կեղծել չեմ կարող։

— Ի՞նչ ասել է կեղծել,— գոչեց ծերունին խռպոտ ձայնով։

— Ձեզ, ինձ և ուրիշներին խաբել։ Այսօր կհաշտվեմ, վաղը ձեր որդին էլի յուր ուզածը կանի։ Յեթե չանի յել, էլի չեմ կարող հաշտվել։

— Իսակ,— դարձավ հայրը որդուն,— մորդ գերեզմանով յերդվիր, որ կնոջդ հավատարիմ կմնաս այսուհետև, ժ ի վ ո...

Դա միակ սրբությունն էր, որ Բարաթյանը անխախտ պահպանում էր յուր սրտի խորքում։ Յերդվել մոր գերեզմանով — կնշանակե, ինչպես և լինի, անպատճառ կատարել այդ յերդումը։ Բայց նա շատ լավ զգում էր, որ չի կարող այդ անել և վաղ թե ուշ պետք է յուր

յերդումը քանդի։ Ուրեմն ինչու՞ սրբապղծություն գործել մոր հիշատակի դեմ, մանավանդ վոր նա մտքում դրել է միայն առերես հաշտվել Գայանեյի հետ, արդեն ինքն էլ ձանձրացած լինելով նրանից։ Կամենալով մի կերպ խույս տալ ծանր յերդումից, նա ասաց.

— Յես ազնիվ խոսք եմ տալիս։

— Ն ո ւ, շ տ ո ժ,—դարձավ ծերունին Գայանեյին,—ազնիվ խոսք է տալիս։

Տիկինը ուսերը թեթև կերպով վեր քաշեց, յերեսը մի կողմ դարձնելով։

Նա չգիտեր վորի վրա ավելի զարմանար, վորդու, վոր այդպես հանդգնաբար ուզում եր նորից խաբել նրան, թե՞ հոր, վոր, կարծես, խրախուսում եր նրա անառակությունը։

Վերջին անգամ Գայանեն դրականապես մերժեց ծերունու խընդիրը։

— Ուրեմն ի՞նչ ես ուզում անել,—գոչեց անդամալույծը արդեն բարկացած,—չլինի՞ թե մտքումդ դրել ես բաժանվել։ Իհարկե, այդ էլ մոդա է, կարող է խելքիդ փչել։

Հետո, մի քիչ իրան զսպելով, նա առաջ բերեց այն բոլոր վատ պայմանները, վորոնցով շրջապատված է մարդուց բաժանված կինը։ Նա ապացուցեց, վոր հազար անգամ լավ է ապրել վոչ միայն Իսակ Բարաթովի պես մի «շատ սովորական» ամուսնու, այլ նույն իսկ ամենաստոր մարդու հետ, ինչպես որինական կին, կրել ամեն տեսակ տանջանքներ, քան թե բաժանվել։ Խոմ, յերիտասարդ կինը առանց տղամարդի չի կարող մնալ. այդ աներևակայելի է, «ն ե վ ո զ մ ո ժ ն ո, ն ե յ ե ս տ ե ս տ վ ե ն ն ո»։

Նա խոսում եր իրան հատուկ ազատ, նույնիսկ անհամեստ վոճով։ Յեվ այս անգամ վորդին չեր ընդհատում նրա խոսքը։ Նա ինքը համաձայն եր հոր մտքերին և ուրախ եր, վոր յուր մտածածը նա է ասում։

Գայանեն լուռ նստած եր, աջ ձեռով աչքերը ծածկած և ձախ ձեռը թույլ կերպով ծնկի վրա դրած։ Ծերունու խոսքերի մեջ նա զգում եր մի ճշմարտություն, այն է, վոր ինքը վոչ մի պաշտպան չունե։ Այն որից, յերբ Բարաթյանի տնից վոտը դուրս կդնի, նրա անունը հարյուր տեսակ վատաբանությունների առարկա պետք է դառնա։ Այդ նա շատ լավ գիտե։ Բայց մի՞թե հենց դրա համար մնալ և շարունակել այդ դժոխային կյանքը արդեն քստմնելի դարձած մի մարդու հետ, վորի շնչառությունն անգամ թունավորում է նրա օդը։

Նրա աչքի առջև, ինչպես կենդանի սպառնալիք, կանգնած եյին

յերեխաները։ Այն բնական անխորտակելի կապը, վորի առջև փշրըտ-վում են բոլոր բարոյական ուժերը։ Բայց արդյոք նրանք բախտավո՞ր են, սնվելով և կրթվելով անվերջ յերկպառակությունների ազդեցության տակ։ Յեթե նա յերբեք չի կարող հաշտվել նրանց հոր հետ, յեթե նրա սրտում արմատացած բուռն զզվանքը հավիտյան պետք ե մնա այնտեղ, չե՞ վոր այդ փոքրիկները, վոր որ որի վրա հասունանում են, պետք ե, վերջապես, տեսնեն, զգան և հասկանան սոսկալի յեղելությունը։ Այն ժամանակ միթե նրանց զգայուն սրտերը չե՞ն փշանալ, նրանց դյուրաթեք հոգիները չե՞ն աղավաղվիլ։ Ավելի լավ չե՞, քանի վոր նրանք փոքրիկ են, քանի վոր վոչինչ չեն հասկանում, վաղորոք, մի հարվածով վերջ տալ խճճված հանգույցին։ «Վոչ, ծերունի, վոչ, զուր ես ինձ համոզում, դու սխալվում ես, հերիք ե ինչ վոր չես քաշեցի քո վորդուց։ Այժմ չեմ կարող և չեմ ուզում ելի խաբվել, ելի տանջվել»։

Մինչ այս բոլորը վայրկենաբար անցավ Գայանեյի մտքով, ծերունին, յուր խոսքը ավարտած, սպասում եր պատասխանի։ Իսկ վորդին տխուր դեմքով՝ կանգնած, գլուխը մի քիչ դեպի ուսը թեքած, հեզությամբ նայում եր նրան։ Տե՛ս, ծերունի, տե՛ս, ինչքան նա ներողամիտ ե, բարի, համբերող և ինչքան, ընդհակառակը, նրա կինը խըստասիրտ ե, կամակոր, անհաշտ։ Միթե դու հենց այս պատճառով նրան կզրկե՞ս ժառանգությունից։

— Շ ա ռ ժ, շա՛տ պետք ե սպասենք ձերդ գերազանցության ռ ե զ ո լ յ ու ց ի ա յ ի ն։

Գայանեն ձեռը հեռացրեց յերեսից. վոտի կանգնեց և պատասխանեց.

— Յերբե՛ք չեմ հաշտվիլ։

Ծերունու կիսախուփ աչքերը կատաղությունից մի վայրկյան լայն բացվեցին։ Նա գոռաց.

— Ուրեմն, կորի՛ր, անա...

— Պապա,—ընդհատեց վորդին խիստ ձայնով։

— Յ ա, բ ր ա տ, այժմ հասկանում եմ ամեն բան։ Բ ր ո ս, ե տ ո — ֆ ու ր ի ա, թող գնա, ուր վոր ուզում ե...

— Աստծու տաճարի առաջ յերդվել եմ մինչև մահ իմ կնոջ հետ ապրել,—ասաց Իսակը հանդարտ ձայնով, վորի կեղծ հնչյունը միայն Գայանեյի համար կարող եր զգալի լինել,—և պատրաստ եմ ապրել։

Հետո նա դարձավ կնոջը և ավելացրեց.

— Իսկ յեթե ձեզ, տիկին, այնքան զզվացրել եմ, վոր իմ բարեսիրտ հոր աղաչանքն ել չեք հարգում, յես մեղավոր չեմ... բարի ճանապարհ։

— Դա-սս, բարի ճանապարհ,— կրկնեց ծերունին,— յերեխաները կմնան մեզ մոտ։ Կարող եմ ասել, մադամ, վոր նրանք, վովսյակոմ սլուչայե, Բարաթովների տանը լավ կկրթվեն։ Մենք շատ պակասություններ ունենք, բայց վոչ հիմար ենք, վոչ էլ անկիրթ։

Գայանեն սարսափած նայեց նախ վորդուն, ապա հորը։ Նա այնպես զգաց, թե ընկել է յերկու անխիղճ դահիճների ձեռքը, վորոնք բութ դանակով կտրում են նրա սրտի ամենազգայուն կտորը։ Բայց նա գիտեր, վոր այդպես էլ պետք է լինի, վոր Բարաթյանները յերբեք չեն համաձայնվի յերեխաներին իրան տալ։ Նա գունատ էր ինչպես կտավ և միայն աչքերի մեջ վառվում էր մի տարօրինակ կրակ։ Դա մայրական կատաղի սիրո փայլն էր։

Մեկը դրսից կամացուկ յերեք անգամ զարկեց դռներին։ Գայանեն սթափվեց, խելքը գլուխը ժողովեց և, մի քանի վայրկյան իրան իշխելով, գոչեց.

— Վոչ, դուք մինչև անգամ այդ սպառնալիքով չեք կարող ինձ փոխել։

Բարաթյանը դռները բաց արեց, յերևաց Վեքիլյանի կերպարանքը։

— Ախ, ներեցեք, վոր այսպես անժամանակ յեկա,— ասաց իրավաբանը մշտական ժպիտի փոխանակ մի շինովի տրտմություն յերեսին.— յես յեկել եմ մի ցավալի լուր հաղորդելու։

Յեվ, դառնալով Գայանեյին, ավելացրեց.

— Պյոտր Սոլոմոնիչը մեռնում է և ուզում է ձեզ վերջին անգամ տեսնել։

Լուրը սարսափեցրեց Գերասիմ Գերասիմիչին։ Կարծես, դա սեփական մահվան նախերգանքն էր։

— Խեղճ Պետրոս,— գոչեց նա հուզված,— ինչու այդպես շուտ, խեղճ Պետրոս...

Նա վոչինչ տեղեկություն չուներ Պյոտր Սոլոմոնիչի ընտանեկան դժբախտության մասին, թեև լսել էր նրա կաթվածահար լինելը։

Մի վայրկյան Գայանեն տատանվեց. գնա՞լ արդյոք, հանդիպե՞լ Աննային նույնիսկ յուր տան մեջ։ Բայց նա այնքան հարգում էր և սիրում էր յուր քեռուն, վոր չգնալ չէր կարող։

Առանց ուշացնելու նա հագնվեց և իսկույն ուղևորվեց դեպի այն տունը, ուր վաղուց վոտք չէր դրել։ Վեքիլյանի հետ կառքում նստած, նա ամբողջ ճանապարհը մի բառ անգամ չարտասանեց։ Նա դեռ տեղի ունեցած տեսարանի թարմ տպավորության տակ էր։ Ներկան նրա

համար վորոշվեց, քանդվեց այն փտած կապը, վոր մինչև այժմ առերես պահում էր նրան նախկին դրության մեջ։ Իսկ ապագան ներկայացնում է անորոշ խառնուրդ, անթափանցելի քաոս։ Մերթ նրան թվում էր, վոր յուր արածը անհաշիվ, լավ չմտածված, գուցե վտանգավոր քայլ է, մերթ նա աշխատում էր համոզել ինքն իրան, վոր ընդհակառակը դա շատ հասարակ, շատ սովորական բան է։—Մի բան, վոր ուրիշները անում են առանց տանջվելու, առանց հասարակական կարծիքի վրա ուշադրություն դարձնելու։

Նա այնքան կլանված էր յուր մտքերով, վոր վոչինչ չէր տեսնում, վոչինչ չէր լսում։ Նա չէր նկատում յուր ծանոթներին, վոր աջ ու ձախից բարևելով անցնում եյին։ Մի վայրկյան միայն նա, կարծես, մի տեսակ մոխրագույն գոլորշիի մեջ նշմարեց մի շատ ծանոթ կերպարանք, վոր կանգնած էր մի փողոցի անկյունում և մռայլ հայացքով ուղեկցում էր նրան։ Նա կրկին նայեց այն կողմ և ակամա մի ցնցում զգաց։ Դա Դիմաքսյանն էր։ Սիրո՞ւմ է նա արդյոք այդ ամենից հալածված մարդուն, վոր նրա աչքում այժմ ամենքից խելոք է, ամենքից ազնիվ, ամենքից մաքուր և բարձր։ Այո, սիրում է։ Վոչ, վոչ, դա այն սերը չէ, վոր կնոջը մոռացնել է տալիս ամեն բան, և՛ հասարակական նախապաշարմունքներ, և՛ բամբասանք, և՛ շատ անգամ նույնիսկ զավակներին։ Դա մինչև անգամ սեր չէ, այլ սիրո պատվանդանին հասնող, նրա պես պայծառ, նրանից մեղմ, բայց ավելի հուսալի և հարատև մի զգացում է—հարգանք և յերկրպագություն համոզմունքների գերի և վսեմ ձգտումների տեր մի մարդու առջև...

Դիմաքսյանը ուղեկցեց աչքերով Գայանեյին, մինչև վոր կառքը բոլորովին անհետացավ փողոցի ծայրում։ Հետո յերկար ժամանակ մնաց միևնույն տեղը անշարժ։ Հիշեց այն օրը, յերբ Գայանեն ուրախ ու զվարթ դեմքով կարեթի մեջ նստած սլանում էր Բարաթյանի հետ դեպի յերկաթուղու կայարանը։ Հիշեց բոլոր յուր տառապանքները, վոր կրել էր մինչև այդ օրը և այնուհետև։ Համեմատեց այն ժամանակվա Գայանեյին այժմյանի հետ։ Վորքան փոփոխություն։ Այն դեմքը, վորի յուրաքանչյուր գիծը այն ժամանակ արտահայտում էր անհուն յերջանկություն, այժմ ինչպես սքողվել էր դառն տխրությունով։ Բայց այս տխրությունը այժմ բոլորովին ուրիշ ազդեցություն գործեց նրա վրա։ Բնազդմամբ զգաց, վոր անկասկած մի արտաքո կարգի բան է պատահել Գայանեյին։

«Միթե արդեն բաժանվե՞լ է ամուսնուց», մտածեց Դիմաքսյանը մարգարեյաբար, և մի ինչ-վոր անբացատրելի վայրկենական ուրախություն համակեց նրա սիրտը։

Յերբ Գայանեն մտավ Պյոտր Սոլոմոնիչի սենյակը, այնտեղ տիրում էր այն խորին սրբազան լռությունը, որ մահվան ներկայությունն է զգալ տալիս։ Լուսամուտների ծանր վարագույրները ցած էին իջեցրած, սենյակը կիսով չափ մութն էր։ Յերեխաներին նոր հեռացրել էին ծերունու մոտից։ Չէր երևում նույնպես և տիկին Բախտամյանը։ Միայն Ովսաննան էր նստած հիվանդի գլխի մոտ, աչքերը արտասուքով թաց։ Ավելի մոտիկ նստած էր բժիշկը, հիվանդի բազուկը բռնած։

Քայլերի ձայն լսելով, Պյոտր Սոլոմոնիչը ծանրությամբ աչքերը բաց արեց և ձեռը թույլ կերպով շարժեց։ Գայանեն թեքվեց, համբուրեց այդ ձեռը, թույլ տալով, որ ծերունին յուր ալկած, պաղ շրթունքները հպի նրա ճակատին։ Նա նստեց մահճակալի մոտ, թաշկինակը սեղմելով աչքերին և աշխատելով զսպել արտասուքը, որ խեղդում էր նրա կոկորդը։ Տառապյալ ծերունին նրա սիրտն էր մորմոքում։ «Խեղճ մարդ, դու քո սխալանքի զոհ դարձրիր թե՛ քեզ, թե՛ քո պատիվը և թե ինձ...»։

Նա ուժ չունեցավ իրան զսպելու, սկսեց հեկեկալ, փաթաթվելով Ովսաննային, որ յուր քրոջը տեսնելու վայրկյանից արդեն հեկեկում էր։

Հիվանդը Վեքիլյանին նշան արեց։ Իրավաբանը հանեց նրա բարձի տակից կտակագիրը և կարդաց այն հատվածը, որ վերաբերվում էր Գայանեյին։ Ծերունին աչքերը սևեռել էր յուր քեռորդու յերեսին և շրթունքների մեղմիկ շարժումով արտահայտում էր յուր սրտի գոհունակությունը։ Նա խոսելու ընդունակությունը կես ժամ էր կորցրել էր։

— Ոհ, յես սրբությամբ կկատարեմ ձեր կամքը,—գոչեց Գայանեն բարձր ձայնով, որ հիվանդի թմրած լսելիքին հասնի և նրա պաղ ձեռը նորից ամուր սեղմեց յուր շրթունքներին,—յես իմ անձը կզոհեմ այդ նպատակին, բարեսիրտ, թանգագին քեռիս...

Ծերունու հողագույն դեմքով անցավ շնորհակալության պարզ ցոլմունքը։

Գայանեն մնաց մեռնողի մոտ մինչև վերջին վայրկյան. ծերունու վերջին հայացքը սառավ նրա վրա, դրոշմելով նրա փափկացած սրտի վրա մի նոր, անջնջելի վիշտ։

Նույն րոպեյին պատկառելի քաղաքացու մահը, բերանից-բերան անցնելով, տարածվեց համարյա ամբողջ քաղաքում։ Իսկ հետևյալ օրը

նրա կտակի բովանդակությունը հայտնի չեղավ ամբողջ հասարակությանը։ Որվա հերոսները Ամբակում Աֆանասյեվիչը և Վեքիլյանն եյին։ Իրավաբանը, վոչ առանց պարծանքի, հաղորդում եր յուր բարեկամներին կտակի բոլոր մանրամասնությունները։ Նա շատ ջանք եր արել ծերունուն դեպի բարեգործություն թեքելու, և նրա ջանքը պսակվեց հաջողությամբ։ Այո, յեթե նա չլիներ, Եջմիածնի ճեմարանը և Ներսիսյան դպրոցը խակի գրոշ կստանային։

Յեվ այսպես նա անխնա խլում եր հանգուցյալ Պյոտր Սոլոմոնիչի փառքի պսակի տերևները, բոլորը յուր անձնական ազդեցությանը վերագրելով, մի չնչին մաս ել հատկացնելով Ամբակում Աֆանասյեվիչին։ Հապա, նա ինչ կարելի յե անել համբերությամբ, գթությամբ և խոհեմությամբ։ Թող այժմ «խելագարը» կամ խելագարները ինչքան ուզում են հարձակվեն նրա վրա։

Նա իսկույն այցելեց մի բարեկամ խմբագրի։ Յեվ ծերունու թաղման որը հրատարակվեց հանգուցյալի հիշատակին մի հոդված, ուր «ճշմարիտ ազգասերների ազդեցությունը» գովաբանված եր ճարտասանական ծաղկազարդ վոճով։

«Կան մարդիկ, ասված եր այդ հոդվածում, իրանց հարազատ հորը գերեզման են ուղարկում վատ վարվողությամբ, վոր նրանց փողերը վատնեն իրանց խղճալի անձի վրա։ Այդպիսիներից պետք ե զզվանքով յերես դարձնել։ Բայց կան այնպիսի բուն ազգասեր յերիտասարդներ, վոր ամեն մի մեռնող ազգականի մոտ դառն վշտերի մեջ ել իրանց յեկեղեցու ու ազգի կարիքն են հոգում։ Փառք և պատիվ այդպիսիներին...»

Կային և այնպիսի մարդիկ, վոր միմյանց ականջին շշնջում եյին այն փոքրիկ գումարի մասին, վոր «բուն ազգասերները» շպրտել եյին պանեգիրիստ խմբագրին։ — Մի չնչին մասն այն հազարներից, վոր կտակակատարները «արտաքո կտակի» կորզել եյին հանգուցյալից։

Գալյանեն յուր քեռու տանը մնաց հինգ որ, ամեն կերպ աշխատելով յերես առ յերես չհանդիպել տիկին Բախտամյանին։ Հանգուցյալի թաղումից հետո յերեկոյան դարձյալ Ովսաննայի հետ յերկար խորհրդակցություն ունեցավ քեռու սենյակում։ Այնտեղ եր նաև որիորդ Կարինյանը։

Հետևյալ որը առավոտյան Ովսաննան մտավ Աննայի սենյակը, ուր այրիացած տիկինը փակված եր ամբողջ որը։ Նա յերկու խոսքով հայտնեց, թե Պյոտր Սոլոմոնիչի մահից հետո ինքը այլ ևս չի կարող ապրել նրա տանը։

Որիորդի այս անսպասելի վճիռը տիկին Բախտամյանը վերագրեց

Գայանեյի աղջկությունը։ Պյոտր Սոլոմոնիչի կտակում մանրամասն բացատրված էր Ովսաննայի հայրական ժառանգության գործը։ Այն անշարժ կալվածքը, վոր պատկանում էր նրան և Գայանեյին, կես մասով հատկացրած էր որիորդին, վոր պետք է տիրեր նրան յերկու ու կես տարուց հետո։

— Ինչպես ուզում եք, այնպես արեք,—պատասխանեց տիկին Բախտամյանը սաստիկ վրդովված։

Նա իսկապես հոգով ուրախ էր Ովսաննայի հեռանալուն, բայց վրդովվեց, վորովհետև որիորդի նյութական անկախ դրությունը նրա նախանձը շարժեց։ Մի արհամարհական հայացքով չափելով որիոր-դին վոտից մինչև գլուխ, ավելացրեց.

— Ամոթ չլինի հարցնելը, վո՞րտեղ եք ուզում գնալ...

— Որիորդ Կարինյանի մոտ։

— Ահո, լավ տեղ եք գնում։ Նա ազատություն սիրող, դուք էլ... Ե՛հ, տերը ձեզ հետ։ Բայց յես զարմանում եմ, ինչու ձեր քրոջ մոտ չեք գնում։

Այստեղ Ովսաննան հուզված հաղորդեց Գայանեյի վորոշումը. նրանք այսուհետև յերկու քույր պետք է բնակվեն որիորդ Կարինյանի մոտ։

— Ի՜նչ, ուրեմն քույրդ մարդուց բաժանվում է,—գոչեց Բախտամյանը, մի տեսակ ուրախություն զգալով։

Ովսաննան գլխով անորոշ շարժում արեց։ Տիկինը անսպասելի աշխույժ ստացած վոտքի կանգնեց և սկսեց արագ-արագ անցուդարձ անել սենյակում։ Նա փորձեց Ովսաննայից գործի մանրամասնությունները իմանալու։ Բայց որիորդը համառությամբ պնդում էր, թե ինքը ավելի վոչինչ չգիտե և չի կարող ասել։

Նույն որը յերեկոյան Գայանեն Ովսաննայի հետ տեղափոխվեց որիորդ Կարինյանի մոտ։ Վերջին ժամին տեղի ունեցավ մի սրտահույզ տեսարան։ Ովսաննան չկարողացավ սառնարյուն բաժանվել այն տնից, ուր նա անց էր կացրել յուր մանկությունը ու պատանեկությունը և այժմ նոր-նոր սկսում էր յուր չափահասությունը։ Հավաքելով և դասավորելով յուր հագուստեղենը սնդուկի մեջ, նա անդադար լալիս էր։ Ամեն մի չնչին իր հիշեցնում էր նրան յուր անցկացրած ուրախ և տխուր որերը։ Նույն րոպեյին, յերբ նա արդեն պատրաստվել էր դուրս գնալու, Լիզոչկան և Նելիչկան փաթաթվեցին նրա պարանոցին և չեյին ուզում բաժանվել նրանից։ Բայց տիկին Բախտամյանը մոտեցավ և, խստությամբ բռնելով ձեռներից, հեռացրեց նրանց որիորդից։

Վաղուց բժիշկ Սալամբեկյանը նկատում էր, որ Դիմաքսյանը չափից դուրս շատ է հետաքրքրված Գայանեյի վիճակով։ Նա զգում էր, որ յուր ընկերը սիրում է տիկնոջը և այդ սերը նոր չէ, բայց թե որքան նա զորեղ է—չգիտեր։

Բարաթյանների բաժանվելու լուրը առաջինը նա հաղորդեց Դիմաքսյանին։ Որքան Գայանեյի արածը սպասելի լիներ Դիմաքսյանի համար, այնուամենայնիվ լուրը խորը տպավորություն գործեց նրա վրա։ Այնուհետև նա աշխատում էր ստեպ-ստեպ տեսնվել Սալամբեկյանի հետ։ Բժիշկը ամեն օր այցելում էր օրիորդ Կարինյանին և Գայանեյին հանդիպում, բնական էր ուրեմն, որ միայն նա կարող էր ճիշտ տեղեկություն տալ Դիմաքսյանին։

Մի օր նա ասաց, թե նախընթաց յերեկոյան դայակը յերեխաներին բերել էր Գայանեյի մոտ։ Բարաթյանը համաձայնվել է, որ շաբաթը մի կամ յերկու անգամ մայրը տեսնվի յուր զավակների հետ։ Բժիշկ Սալամբեկյանի ասելով, դա նրա կողմից մի ճարպիկ միջոց էր հասարակության աչքում բարեսիրտ ու ներողամիտ մարդ յերևալու, նրա համակրանքին արժանանալու։ Այսպես թե այնպես, Դիմաքսյանը փոքր ինչ ուրախացավ Գայանեյի համար, որ բոլորովին չէր զրկվում յուր յերեխաներից։ Այժմ նրա առաջին մտատանջությունը տիկնոջ վիճակն էր, և ամեն մի թեթևություն այդ վիճակի մեջ նրան մխիթարանք էր պատճառում։ Ահա ինչու մի անգամ նա հարցրեց՝ արդյոք ինչ են մտածում օրիորդ Կարինյանը և բժիշկ Սալամբեկյանը Գայանեյի արածի մասին։ Թե՛ մեկի և թե մյուսի կարծիքը նշանակություն ուներ, որովհետև նրանց հարաբերությունից էր մասամբ կախված Գայանեյի վիճակը։ Իսկ Դիմաքսյանը գիտեր, որ շրջապատողների մի թեթև աններողամտությունն անգամ կարող է ճնշող ներգործություն ունենալ Գայանեյի վրա։

— Իմ կարծիքով,—պատասխանեց Սալամբեկյանը նրա հարցին,—դա միակ յելքն էր, ուրիշը չկար նրա համար։

— Նույն իսկ յեթե հասարակությունն էլ բամբասի՞։

— Հասարակությո՞ւնը... յեթե նա հոգեբանական ռեզոններ ընդունում է—չպիտի բամբասի մի այդպիսի կնոջ։ Յեթե չի ընդունում, կնշանակե նա բռնակալ է։ Իսկ բռնակալին ներելի չէ դիմադրել։

Որերը անցնում էին, Դիմաքսյանի անհանգստությունը քանի գնում ավելանում էր։ Նա ցանկանում էր Գայանեյի հետ գեթ մի անգամ տեսնվել, անձամբ իմանալ նրա դրությունը։ Բայց չէր վստահա-

նում գնալ նրա մոտ, մի կողմից քաշվելով օրիորդ Կարինյանից և բժիշկ Սալամբեկյանից, մյուս կողմից՝ խնայելով Գայանեյի անունը, վոր առանց այն էլ բամբասանքի առարկա չեր։

Վերջապես, առիթը մոտեցավ. դա Սալամբեկյանի ամուսնությունն եր Կարինյանի հետ։ Յերջանիկ բժիշկ, վորքան նա ուրախ եր, գոնե Դիմաքսյանի աչքում, և ինչ աշխույժ եր ստացել։ Կարծես, դա այն ծույլ ու դանդաղ մարդը չեր, վոր դեռ յերկու տարի առաջ մեջքի վրա պառկում եր ամեն օր և կրկնում. «աշխարհը դատարկ բան ե»։ Արդյոք սերը չե՞ր, վոր այդ դատարկությունը լրացրեց նրա համար։

Բժիշկը վճռել եր, վոր հարսանիքը համեստ լինի։ Հրավիրված եյին միայն նրա և օրիորդի ամենամոտիկ ազգականները ու ծանոթները։ Հարսանիքը մի տեսակ ընկերական խնճույքի չեր նմանվում։ Միայն այրի Բոլումբաշյանը չեր ուզում հաշտվել այդ անշքության հետ։ Նա յերեկույթի կառավարիչն եր, հանդիմանում եր օրիորդին, վոր համաձայնվել եր բժշկի խորհրդով յուր հարուստ ազգականներին չհրավիրել։ Բայց և այնպես նա աշխատում եր աշխույժ հյուրընկալ լինել։ Նա հագնվել եր ինչպես մի վրաց իշխանուհի։ Մետաքսյա լայն փեշերը հատակին քսելով, մեջքից մի զույգ գույնզգույն յերկայն ժապավեններ կախած, նա սահում եր սենյակից սենյակ ինչպես թևերը փռած սիրամարգ։

Հարսանիքի նախընթաց որը օրիորդ Կարինյանը խնդրեց յուր փեսացուին անձամբ գնալ Մսերյանի մոտ և «թյուրիմացություններին» վերջ տալ։ Բժիշկը անտրտունջ կատարեց նրա խնդիրը, մանավանդ վոր ինքն ել ուզում եր հաշտվել յուր ընկերոջ հետ։

Կարելի չեր կարծել, թե իդեալիստը յուր ախոյանին կընդունի դժկամակությամբ կամ չի ընդունիլ բոլորովին։ Այնինչ՝ հակառակը պատահեց։ Նա քիչ մնաց հուզմունքից արտասվեր, յերբ յուր լուսամուտի առջև տեսավ ընկերոջ կերպարանքը։ Դա նրա բարի բնավորության խոշոր հատկություններից մեկն եր։ Նա ընդունեց Սալամբեկյանին այնպես, վոր, կարծես, վոչինչ չեր անցել նրանց մեջ, շնորհավորեց, բայց հրաժարվեց հարսանիքին ներկա լինելուց։

Բժիշկը չթախանձեց, չեր կարելի մի մարդուց ավելի վեհանձնություն պահանջել։ Նա այնքան զգացվեց, վոր չկարողացավ իրան զսպել, փաթաթվեց ընկերոջ պարանոցին և համբուրվեց նրա հետ։

Յերբ այս սրտառուչ տեսարանի պատմությունը օրիորդ Կարինյանը լսեց, նրա աչքերը արտասուքով լցվեցին։

— Յես համոզված եմ,— ասաց նա,— վոր Մսերյանը քո ամենա անկեղծ բարեկամներից մեկն ե։

Մինչդեռ բոլոր հրավիրվածները արդեն գնացել էին, Դիմաքսյանը Գայանեյին փնտրում էր և չէր տեսնում։ Միթե նա ամաչում է յերևալ հասարակության մեջ կամ գուցե հիվանդ է և Դիմաքսյանը մոտեցավ որիորդ Կարինյանին, վոր յերջանիկ ժպիտը յերեսին պսակադրության զգեստով նստած էր պայծառ լուսավորված դահլիճի ծայրում։

Լսվեց դաշնամուրի ձայնը։ Հյուրերը քաշվեցին դահլիճի պատերի տակ, պարողներին տեղ տալու համար։

Դիմաքսյանը, հարսնացվին շնորհավորելուց և նրա հետ մի փոքր խոսելուց հետո, հեռացավ հանդիսականներից, կանգնեց վոչ հեռու դեպի պատշգամբ նայող մի լուսամուտից։ Նա նայում էր պարողներին և մտածում Գայանեյի մասին։ Հանկարծ վարագույրի յետևից նրա ականջին հասավ մի խոսակցություն, վորի մեջ հիշվում էր նրա ազգանունը։ Նա զգաց, վոր իրան բամբասում են, հեռացավ լուսամուտից, մտավ հանդիսականների շարքը։

Մի ժամ անցած նա, առանձին կառք նստած, հետևում էր հարսանիքի հանդեսին դեպի յեկեղեցի։ Հոգեկան վատ տրամադրության մեջ նա չկամեցավ վոչ վոքի հետ ընկերանալ, վորպեսզի ստիպված չլինի խոսակցել։

Տարօրինակ ու մռայլ տպավորություն գործեց նրա վրա ներսից լուսավորված և դրսից խավար յեկեղեցին։ Յերկնքի մթին հորիզոնի վրա նկարված էր նրա ութանկյունանի գմբեթը, ինչպես մի անշունչ ներկայացուցիչ դարավոր հաստատության։ Մի կոթող, վոր վայրկենաբար հիշեցրեց նրան քրիստոնեյական գաղափարների յերկար դարերի թագավորությունը։ Նեղ ու յերկայնաձև պատուհանները իրանց աղոտ կաթնագույն լուսով նայում էին ինչպես թախծալի և խորհրդավոր աչքեր։

Նա ներս մտավ սիրտը լցված բանաստեղծական զգացումներով և պատկառանքով գլուխը խոնարհեցրեց վաղեմի սրբության առջև։ Քարաշեն սյուների և պատերի մթին պաղությունը նրա սրտի մեջ տարածեց մի նոր ջերմություն։ Յուր ազգի պատմությունը նկարվեց նրա հոգու մեջ, ինչպես յերկար դարերի մթության մեջ կորած մի ամբողջ կյանք։ Վերակենդանացան նրա աչքի առջև այն բոլոր մարտիրոսները, վորոնց տվայտանքով պահպանվել էր այդ կյանքը և հասել ներկա որերին։ Պատկերացավ մի տառապող ժողովրդի ներկան, վոր ունեցել էր անցյալ և այդ անցյալը ապագային կտակելու համար յուր միջից տվել էր անձնազոհ նահատակների մի անվերջ շարք։ Ազգի հետ մի հոգի, մի արյուն դարձած, նրանք դարեր շարունակ մաքառեցին քրիստոնեյական լուսավոր գաղափարների համար։

«Ո՛չ, մրմնջացին Դիմաքսյանի շրթունքները, իմ կրծքի մեջ մեռած չէ նվիրական զգացումը և չի մեռնիլ հավիտյան։ Ես հավատում եմ հավատի անհաղթելի ուժին, ես կմաքառեմ միայն այդ ուժին ապավինելով։ Հեռու ինձանից սպանիչ հուսահատությունը։ Ես ուզում եմ ապրել և գործել մի անբախտ ժողովրդի համար, ես նրա հարազատ զավակն եմ։ Անմահ նահատակներ, ներշնչեցե՛ք ինձ ձեր համբերության և տոկունության հոգին, տվե՛ք ինձ մի չնչին մաս ձեր ուժից։ Ժամանակներն անցան, ձեր պաշտպանած ազգի պահանջներն այժմ փոխվել են, բայց ձեր նման անվեհեր զինվորների կարիքը կա և կմնա, քանի որ գոյություն ունի այս թշվառ ժողովուրդը...

Մինչ նա խորասուզված էր այս մտքերի մեջ, եկեղեցին հետզհետե լցվում էր հետաքրքիր ամբոխով։ Պսակվողները չէին երևում բազմաթիվ գլուխների շարքում, որ երկու կենդանի պատեր էին կազմել եկեղեցու երկարությամբ։ Լսվեցին երգիչ տիրացուների աններդաշնակ ձայները, ընդհանուր շշուկները և իրարանցումը սաստկացան։ Մի րոպե ամեն ինչ լռեց, ամբոխը կուտվեց մի տեղ, շրջապատելով պսակվողներին։

«Որդի՛, հնազա՛նդ ես մինչև մահ»։

Վայրկենաբար Դիմաքսյանի մտքերը կենտրոնացան պսակ կատարող քահանայի այս բառերի վրա։

«Ինչո՛ւ չէ, կհնազանդվի, բայց ոչ մոլորություններին և անառակություններին, այլ առաքինությանը։ Կհնազանդվի փոխադարձ գաղափարական համակրությանը, ոչ խաբեբայությանը, ոչ անառակությանը... Միթե մեծ մարդասերը մարմնացած բողոք և վրեժխնդրություն չէ՞ր թույլերի, խաբվածների, ճնշվածների համար՝ զորավորների դեմ։ Միթե նա կարո՞ղ էր ստրկություն քարոզել։ Ո՛չ, նրա սերն անհուն էր դեպի անհատի ազատությունը։ Նա չասաց, թե օրենքները պետք է քարացնել և նրանց ամբողջ ծանրությամբ ճնշել մարդկանց հոգին...»։

«Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ, Գայանեն չէր կարող մինչև մահ հնազանդ լինել։ Արձակեցե՛ք նրա կաշկանդված ձեռները, թողե՛ք նա ազատվի։ Կամ դարձրե՛ք նրա կողակցին նրա չափ մաքուր... ինչ-որ պահանջում եք մեկից, պահանջեցեք և մյուսից...»։

Նա կանգնած էր խոնավ պատի տակ, քարաշեն սյունի ստվերում, հեռու հանդեսից, գլուխը մտքերի ծանրությունից կրծքին թեքած։

Ամբոխի միջից լսվում էին ծիծաղ, քրքիջ, սրախոսություններ։ Խորհրդավոր հանդեսը, որ մարդկանց ճակատագիրն էր վճռում, նրանց համար արձակ զվարճության և ծաղրի առարկա չէր դարձել։

Յերբ հանդեսը վերջացավ, նա զգացված մոտեցավ, շնորհավորեց յերջանիկ զույգին։ Հետո դարձյալ առանձին կառք նստեց և մենակ վերադարձավ։ Նա ներս մտավ Գայանեյին հանդիպելու հույսով։ Ահա նա, սպիտակ կրուժևոներով զարդարած ընկուզեգույն մետաքսյա զգեստով։ Յուր ընկերուհու սիրտը չկոտրելու համար նա ուրախ հագուստ ե հագել։ Նա մոտեցավ, գրկեց նորապսակ ընկերուհուն և արտասվեց։

Ամեն ինչ խառնվեց Դիմաքսյանի աչքում և դարձավ մի զույգ կապտագույն աչքեր։ Նա մոտեցավ և սկսեց խոսել Գայանեյի հետ։ Հարկավ, այնքան անզգույշ չեր, վոր ակնարկեր տիկնոջ ներկա վիճակը։ Ինչու՞, քանի վոր խոսելու նյութ կար. Պյոտր Սոլոմոնիչի կտակած ուսումնարանը։ Գայանեյի դեմքը զվարթացավ։ Նա ասաց, թե աշխատում ե շուտով կատարել հանգուցյալի կտակը։ Նա չգիտեր վորտեղ հիմնել ուսումնարանը՝ Թիֆլիսում, թե գավառական քաղաքում։ Նա չասաց տատանման պատճառը։ Հոգով ցանկանում եր հեռանալ վորևե մի խուլ անկյուն և այնտեղ հաստատվել, հեռու այն հասարակությունից, վոր բամբասում եր նրան, հեռու և՛ այն մարդուց վորին կարող ե յերբեմն հանդիպել։ Բայց զավակները կաշկանդում եյին նրան։

Նրանք բավական յերկար խոսեցին։ Գայանեյի միտքը շատ եր զբաղված ուսումնարանի գործով։ Գգվանքով նա պատկերացնում եր յուր ապագա գործունեյությունը։ Վորքան յերախտապարտ եր նա հանգուցյալ ծերունուն և քանի՜-քանի չքավորներ պետք ե յերախտապարտ լինեյին նրան։ Նա ասաց, թե գուշակում ե, ինչպես յերջանիկ պետք ե լինի մի մարդ, վոր մի վորևե ոգուտ ե բերում ուրիշներին։ Դիմաքսյանը շտապեց ավելացնել, թե բուն յերջանկությունը հենց այդ բանի մեջ ե, միայն մարդ պետք ե նախ ձեռք վերցնի անձնական յերջանկությունից, մոռանա նույնիսկ յուր սրտին ամենամոտիկ արարածներին։ Նա կամենում ե իմանալ, արդյոք կարո՞ղ ե Գայանեն առանց յուր զավակների ապրել, յեթե նրանց խլեն նրանից։

Գայանեն, առանց մի խոսք ասելու, նայեց նրա յերեսին յերկմտաբար։ Նա գուշակեց յուր խոսակցի միտքը։ Ճի՞շտ ե արդյոք, կարելի՞ չե ուրիշների ոգտի համար մոռանալ հարազատ զավակներին։ Նրա սիրտը մորմոքվեց, յերբ մի վայրկյան մտածեց, թե կարող ե բոլորովին յերես դարձնել նրանցից։ Վո՛չ, այդ անկարելի յե...

Պարերը վերջացան, հյուրերը հրավիրվեցին ընթրիքի։ Գայանեն հեռացավ։ Դահլիճը դատարկվեց Դիմաքսյանի համար։

Տուն վերադառնալով, նա աշխատեց մտաբերել Գայանեյի բոլոր

ասածները, բոլոր ձևերը և գտնել նրանց մեջ սիրո մի նշույլ։ Նրան տիրեց մի նոր վհատություն։ «Նա ինձ չի սիրում, նա ինձ չի կարող սիրել, կրկնում էր նա մտքում, նա միայն հարգում է ինձ...»։

IX

Սկզբում Բարաթյանը կարծում էր, թե Գայանեն կսթափվի և կվերադառնա։ Բայց ժամանակն անցնում էր, և նրա հույսը չէր արդարանում։

Մի օր նա կանչեց Ովսաննային յուր մոտ և ամենասառն կերպով բացատրեց այն ծանր պայմանները, որոնցով շրջապատված է Գայանեն։ Նա առաջարկում էր յուր կնոջը լավ մտածել, քանի ուշ չէ, քանի հասարակությունը դեռ կասկածում է նրանց բաժանվելու մասին։ Իսկ յերբ ամենքին հայտնի կլինի, այն ժամանակ վոչինչ չէ կարող օգնել, և Բարաթյանը ստիպված կլինի յուր անունը պաշտպանել։

Անփորձ Ովսաննան վախեցավ նրա սպառնալիքից, բայց քրոջից ընդունած հրահանգը ճշտությամբ կատարեց։ Գայանեն յերբեք չի վերադառնալ Բարաթյանի տունը։ Նա այդ քայլը արել է յերկար մտածելուց հետո։ Բարաթյանը, տեսնելով, վոր օրիորդն այդպիսի յեռանդով պաշտպանում է յուր քրոջը, համոզվեց, թե նրա միջոցով վոչինչ չի կարելի անել։ Վերջապես, կային բաներ, վորոնց մասին անկարելի յեր խոսել օրիորդի հետ։ Նա մի յերկար նամակ գրեց Գայանեյին, վորից նա հենց նույն օրը պատասխան ստացավ։

«Ցեթե ձեր արածը, գրում էր Գայանեն, ուրիշների արածների նման լիներ, կարելի յեր համբերել։ Բայց դուք գիտեք, թե ինչը ստիպեց ինձ հեռանալ ձեր տնից։ Ինձ գիշեր-ցերեկ կտանջեր այն խեղճ մարդու ուրվականը։ Նա ինձ համար յերկրորդ հայր էր, դուք պետք է այս բանը հասկանայիք։ Բայց ինչ արեցիք, դուք սպանեցիք նրան, և այժմ ուզում եք մի մարդասպանի, իմ հայրասպանի հետ ապրեմ...»։

Հետո նա գրում էր յերեխաների մասին։ Ահա այն միակ կապը, վոր մինչև այժմ նրան կաշկանդում էր։ Բայց այդ կապն էլ չկարողացավ նրան պահել։

«Այժմ իմ վերջին խոսքն այս է. յես խնդրում եմ, աղաչում եմ, տվեք ինձ իմ յերեխաներին։ Ձեզ ասում թե դուք նրանց չեք սիրում և հեշտությամբ կարող եք նրանցից բաժանվել։ Բայց, հասկացեք, նրանք իմ շունչն են, իմ կյանքը, մի զրկեք ինձ նրանցից։ Թողնում եմ ձեզ իմ հայրական կալվածը, իմ բոլոր վոսկեղենները, բոլորը, բոլորը, ինչ-վոր ունեյի, բայց յերեխաներին տվեք ինձ...»։

Դյուրին ե ասել «տվեք յերեխաներին»։ Յեթե Բարաթյանը սիրող հայր չե, մի՞թե այնքան անհեռատես մարդ ե, վոր չհասկանա, ինչ հետևանք կունենա յերեխաներին իրենց մորը հանձնելը։ Մի՞թե նա չգիտե, վոր այդ կնշանակե՝ լուռ կերպով հրապարակորեն հանձն առնել հանցանքի ամբողջ ծանրությունը։ Վո՛չ, այդ անկարելի յե։ Թող նրա խղճի առջև Գայանեն արդար լինի, թող նա զգա, վոր ինքը անարդարար վարվեց նրա հետ, բայց հասարակության աչքում յուր վարկը պետք ե պաշտպանի։ Յերեխաները պետք ե մնան նրա մոտ, ինչպես նրա անմեղության գրավական մարդկանց աչքում։

Այսպես վճռելով, նա անպատասխան թողեց Գայանեյի նամակը, աշխատելով մոռանալ ամեն ինչ և շարունակել յուր կյանքի սովորական ընթացքը։ Վորքան նա զգույշ լիներ, վորքան աշխատեր թաքցնել յուր բուն պատկերը, վերջին ժամանակ հասարակությունը սկսել եր նրա վրա այլ կերպ նայել։ Կային մարդիկ, վոր նրա անունը արտասանում եյին ատելությամբ, մինչև անգամ զզվանքով։ Յուր ընկերների և բարեկամների շրջանում նա զգում եր մի տեսակ ճնշում և ամոթ։ Յեվ այդ ազդում եր նրա հասարակական գործունեության վրա։ Նկատելի յեր, վոր նա այլևս առաջվա ինքնավստահությամբ չեր կարողանում խոսել Դումայի և գավառական հոգաբարձության նիստերում։

Յերբեմն նա հանդիպում եր Դիմաքսյանին հասարակության մեջ։ Այն մարդը, վորին նա առաջ գոնե արտաքուստ կարողանում եր արհամարհանք ցույց տալ, այժմ նրա բարկությունն եր շարժում, նրան հուզում ու վրդովեցնում եր։ Պակաս չեր վրդովվում ինքը Դիմաքսյանը, նրան տեսնելիս։ Բայց նա ամեն կերպ աշխատում եր վոչ մի կերպ չարտահայտել յուր վրդովմունքը։ Մի անգամ նրանք մի հասարակական հիմնարկության ընդհանուր ժողովի նիստում ունեցան մտքերի մի թեթև ընդհարում։ Յերկուսն ել նկատեցին, վոր ժողովականները մի տարորինակ ուշադրությամբ են հետևում նրանց ընդհարմանը։ Բայց Բարաթյանը շուտով վերջ տվեց յուր վեճին, ձգելով Դիմաքսյանի կողմ մի շինովի արհամարհական հայացք։ Այնուամենայնիվ նա դարձյալ զգում եր յուր հակառակորդի բարոյական ուժերի գերազանցությունը։ Մասնավոր շրջաններում, յերբ Դիմաքսյանի մասին խոսք եր բացվում, աշխատում եր խույս տալ խոսակցությունից։ Նա չեր ասում, թե Դիմաքսյանը «խելագար ե», «ցնորված» ե կամ նույնիսկ «անորմալ» ածականը այլևս չեր տալիս նրան։ Նա միայն լռում եր, թողնելով, վոր Վեքիլյանը ապացուցանե տարածված լուրի ճշտությունը։ Նրա միտքն այժմ մեծ մասամբ կլանված եր

յուր նյութական վիճակով։ Բարոյականի մասին նա շատ էլ չէր մտատանջվում։ Նա համոզված էր, որ լեթև մարդիկ այսօր փոքր ինչ ծուռ աչքով են նայում յուր վրա, վաղը կմոռանան ամեն ինչ, նորից կբարեկամանան, մինչև անգամ կխոնարհվեն նրա առջև։ Հարկավոր է միայն նյութական դիրքից չզրկվել, հարկավոր է արտաքին շուքը միշտ բարձր պահել և որ որի վրա ավելացնել այդ շուքը։

Այնինչ՝ նյութականի կողմից էլ նրա գործերը աննախանձելի էյին. Այն առևտրական ընկերությունը, որի բաժնետերերից մեկն էր, մեծ վնասներ էր ունեցել։ Կորուստը նրա գրպանի համար զգալի չէր։ Ցերեկը տարի չէր արդեն նա գրավ էր դրել կնոջ կալվածը, և նրա յեկամուտի մեծ մասը գնում էր պարտքի զեղջելուն և տոկոսներին։ Հորից ստացած ժառանգը նա վոչինչ բան էր համարում։

Մենակ նրա հույսը յուր ժառանգության վրա չէր։ Իսկ Գերասիմ Գերասիմիչը դեռ կտակը չէր կազմել, և նրա վերջին կամքը շատ անհանգստացնում էր վորդուն։ «Ով գիտե, այդ խենթ ծերունին ինչ կարող է վճռել», ասում էր նա մտքում։

Մի առավոտ նա մտավ անդամալույծի սենյակը և պատմեց Գայանեյից ստացած նամակի բովանդակությունը, հարկավ, թագցնելով Պյոտր Սոլոմոնիչին վերաբերվող կետը։ Գերասիմ Գերասիմիչը խորհրդավոր ժպտաց, լսելով յուր հարսի գրական մերժումը ամուսնական հարկի տակ վերադառնալու մասին։

— Դամ,—ասաց նա,—ժամանակները փոխվել են։ Իմ կնիկը մինչև մահ դիմացավ ինձ, իսկ քո կնիկը քեզ չդիմացավ, գնաց։ Բաղումե՛յետյա, կանայք մարդ չեն ինչ է, նրանք ապրել չե՛ն ուզում...

Նա հետաքրքրվեց յերեխաների հարցով։ Բարաթյանը հայտնեց նրան յուր վերջնական միտքը. ինչպես վճռված է, յերեխաները նրա մոտ պետք է մնան։ Հակառակ սպասվածին, ծերունին հանկարծ վրդովվեց այդ վճռի դեմ։ Վորդին զարմացած նայեց նրա յերեսին. չէ՞ վոր միքանի օր առաջ Գերասիմ Գերասիմիչը ինքն էր ասում, թե յերեխաները հորն են պատկանում։

— Մի վոտս գերեզմանի մեջ է,—բացատրեց ծերունին անսովոր հուզմունքով,—ուզում եմ կյանքիս վերջին որերին մի քիչ էլ խղճմտանքիս ձայնին լսել։ Իսակ, կնիկդ խեղճ է, դասս, պրիզնայուս, շատ խեղճ եւ Ցես մինչև հիմա չեյի մտածել այս մասին, հիմա տեսնում եմ, վոր մենք բարբարոս ենք, դասս, դե՛սպոտի մըի, բատյուշկա, վարվարի։

Նա սկսեց պարզել յուր հանկարծակի փոփոխության պատճառը։ Հայտնեց, վոր անցյալ գիշեր նա յերազում տեսել է յուր կնոջը, Իսակի հանգուցյալ մորը։

— Լզար, տ ո՛ չ ն ո ս կ ե լ ե տ, նա կանգնած էր հեռվում, ինձ նշան արեց. մոտեցա: Նա մոտիկ տվեց յերեսիս, տ ա կ ի մ ս ո ր ա՛ չ ն ի մ վ զ գ լ յ ա՛ դ ո մ, տեր աստված, տեր աստված, յես սարսափեցի։ Նա ասաց «Գ ե ր ա ս ի մ, Գ ե ր ա ս ի մ, դու խղճմտանք չունես, աստված քեզ ներքևում պատժեց, վերևումն էլ կպատժի, խելքի յեկ»։ «Ի՞նչ է», հարցրի յես։ Նա ձեռով ցույց տվեց մի կողմ և պատասխանեց. «Տես»։ Յես մոտիկ արեցի, և ինչ տեսա, ժ ո՛ ւ տ կ ո, ժ ո՛ ւ տ կ ո... Իսակ, դու մի յերկար յերեսսրբիչ ձեռումդ վոլորած՝ Գայանեյին խեղդում եյիր։ Յերեխաներդ իրանց խեղճ մոր փեշը բռնած գոռում եյին, այնպես գոռում, վոր յես դողում եյի։ Դու ուզում եյիր նրանց բաժանել իրանց մորից և կնոջդ սպանել։ «Ազատի՛ր, ազատի՛ր», ասում էր մայրդ, յուր խեղճ հարսին ցույց տալով։ Այս ձայնից սարսափած զարթնեցի։ Ի՞նչ է դա, տեր աստված, ի՞նչ է, ասում եյի ինքս ինձ։ Ամբողջ գիշեր «հայր մեր» ասելով եմ անցկացրել, քունը փախել էր աչքերիցս։ Յեթե դու յեկած չլինեյիր, պետք է յես ինքս քեզ կանչեյի, վոր իմ միտքը հայտնեմ։ Լսի՛ր, Իսակ, լսի՛ր, կնիկդ չի՞ ուզում քեզ հետ հաշտվել, շ տ ո ժ, լա՞վ է անում, շատ լավ է անում։ Դու ինքդ էլ ուրախ ես, ոռ՛, պ ո դ լ ա դ ա՛ յ վ ի ժ ո ւ, ուրախ ես, յ ե շ չ յ ո՛-բ ի, այժմ չէ՞ վոր ազատ ես, հանդիմանող չկա... Բայց ասում եմ քեզ, խնայի՛ր նրան, տուր յերեխաներին նրան, նա քեզանից լավ կկրթի նրանց։ Նա խելոք է, բարոյական եւ Դ ա, բ ր ա տ, ո ն ա՛ վ ը ի ս ո կ ո ն ր ա՛ վ ս տ վ ե ն ն ա յ ե ա ժ ե՛ ն շ չ ի ն ա...

Այս անսպասելի փոփոխությունը սառն ջրի ազդեցություն ունեցավ Բարաթյանի վրա։ Նա սկսեց մեղադրել յուր կնոջը և պաշտպանել իրան։ Նա առաջ բերեց այն պատճառները, վորոնց հիման վրա չէր ուզում յերեխաներին տալ իրանց մորը։ Բայց չօգնեց։ Ծերունին զարմանալի համառությամբ պաշտպանում էր յուր հարսին, վորդուն անվանելով «անբարոյական, շռայլ, կնոջ փողերով մարդ դարձած»։ Իսկ յերբ վորդին շարունակեց հակառակել, ծերունին կատաղեց, փրփրաց և քիչ էր մնում խեղդվեր։ Նա բղավեց խռպոտ ձայնով և կապտեց լեղակի պես։ Վորդին վախեցավ. նա կարծում էր, վոր հայրը մեռնում է առանց հաղորդվելու, առանց յուր վերջին կամքը արտահայտելու։ Բայց մի փոքր անցած՝ ծերունին նորից ուշքի յեկավ և արտասանեց.

— Տեսնում ես, մեռնում եմ...

Վորդին նստեց նրա մոտ, աշխատելով հանգստացնել նրան։ Անդամալույծը լայն բաց արեց կիսախուփ աչքերը և սուր հայացքով նայեց նրա յերեսին։

— Ո՛հ, քո աչքերի մեջ կարդում եմ փուչ յերիտասարդության բոլոր մեղքերը... Ո՛չ, ո՛չ, կամ պետք է կատարես իմ կամքը, կամ թե չէ՝ յես քեզ զրկում եմ ժառանգությունից... Յես չեմ ուզում այն կյանքումն էլ տանջվել, յերազս ինձ սարսափեցնում է...

Բարաթյանը ժամանակ խնդրեց հորից նրա պահանջի մասին մտածելու և հեռացավ յուր սենյակը: Հարցը, արդարև, դժվար լուծելի էր: Ի՞նչպես վճռել նրան: Մի՞թե արհամարհել ծերունու պատվերը, խաբե՞լ նրան, խոսք տալ յերեխաներին իրանց մորը հանձնելու և հետո չկատարե՞լ: Այստեղ նրա խիղճը սկսեց բողոքել. ինչ ծայրահեղ ստորություն—խաբել յուր հարազատ հորը գերեզմանի ծայրին հասած: Ավելի լավ չէ՞ ուղղակի մերժել նրա պահանջը: Բայց ինչ, միթե ժառանգությունից զրկվե՞լ: Ինչու համար, ինչ պատճառով: Ա՛հ, թուլություն, ա՛հ, հիմարություն: «Ի՞նչ եմ ուզում յես ապացուցանել հասարակությանը, յերեխաներին իմ մոտ պահելով: Որ յես հավատարիմ ամուսի՞ն եմ: Ո՞վ կհավատա ինձ, ո՞ւմ կարող եմ յես խաբել: Նախապաշարմունք, որի անունով միմիայն ապուշը կհամաձայնվի զրկվել մի ամբողջ ժառանգությունից, այն էլ իմ այժմյան նյութական վատ հանգամանքներում»:

Ամբողջ գիշերը նա այդ մասին էր մտածում՝ յուր սենյակում առանձնացած: Առավոտյան վաղորդյալ ժամին նա ներկայացավ ծերունուն և հայտնեց նրան յուր վճիռը: Նա ընդունում է հոր պայմանները, նա ինքն էլ համոզված է, որ Գայանեն յերեխաներին ավելի լավ կկրթի, քան թե ինքը: Գերասիմ Գերասիմիչը հանգստացավ: Կարծես, նա յուր ուսերից մի ծանր բեռ ձգեց: Հետևյալ օրը նա յուր կտակը կազմեց Իսակի անունով: Նույն օրը յերեկոյան Բարաթյանը նստած էր յուր առանձնասենյակում և հաշվում էր յուր հոր կարողության չափը: Ներս մտավ ծառան, և հանձնեց մի փոքրիկ ծրար: Նա բաց արեց ծրարը անհամբերությամբ: Նա գիտեր ումից է նամակը, կարդաց և հոնքերը կիտեց:

— Լա՛վ,—դարձավ նա ծառային,—ասա այս նամակը բերողին՝ «լավ»:

Յեվ ծրարը, նամակի հետ պահելով, ճրագի վրա այրեց, մոխիր դարձրեց...

X

Մի ժամ անցած, յերբ արդեն բոլորովին մութն էր, Բարաթյանը աջ ու ձախ նայելով, մտավ Բախտամյանների բնակարանը: Ո՛չ ոք նրան չդիմավորեց. ո՛չ ծառա, ո՛չ աղախին և ո՛չ տանտիրուհին:

Դռները բաց էին, ամբողջ տան մեջ տիրում էր անսովոր լռություն։ Կարծես, յերեխաներն անգամ այնտեղ չէին։ Մի կանթեղ կիսով չափ լուսավորում էր նախասենյակը։ Առանց վերարկուն հանելու, Բարաթյանը մտավ ներս, անցավ ընդարձակ դահլիճը և գնաց մի ուրիշ սենյակ։ Այստեղ թավշյա բազկաթոռի վրա նստած էր այրիացած տիկին Բախտամյանը, ձեռները կրծքին ծալած և աչքերը դռներին հառած։ Տեսնելով Բարաթյանին, նա հառաչեց, տեղից թեթև շարժվեց, առանց վոտքի կանգնելու։ Նա հագած էր սև հագուստ, վոր նրա դեմքի գունատությունը ավելի պարզ էր կացուցանում։ Նրա նիհարած յերեսը, կնճռված ճակատը և սղմված շրթունքները արտահայտում էին սգավոր այրու բոլոր նշանները։

Նրանք լուռ սեղմեցին միմյանց ձեռը. Բարաթյանը վերարկուն ձգեց անկյունում դրած մի աթոռի վրա և նստեց տիկնոջ հանդեպ՝ գլխարկը ձեռին բռնած, ինչպես կարճ միջոցով յեկած մի հյուր։ Տիկինը անսովոր լրջությամբ և սառն յեղանակով ասաց, թե Բարաթյանին հրավիրել է մի շատ կարևոր գործի համար։ Նա խնդրեց առայժմ վոչինչ չհարցնել վերջին ժամանակվա պատահած անցքերի մասին. նրանք առանց այն էլ պարզ են Բարաթյանի համար։ Շրթունքները ներքին խռովությունից անխնա կրծոտելով, նա բացատրեց յուր ներկա դրությունը և նկարագրեց յուր կյանքը մռայլ գույներով։ Նա սեփական տանը ապրում է ինչպես մի օտարական։ Նրա փողերով նրան վողորմություն են անում, նա յուր գլխի տերը չէ։

— Պետք է ինձ օգնես, ավարտեց նա յուր խոսքը,— յես ուրիշ հույս չունիմ, բացի քեզանից։

«Դու»-ով խոսելը այս անգամ Բարաթյանին դուր չեկավ։ Նա շտապեց յեղանակը փոխել և հարցրեց, թե արդյոք ինչպես կարող է օգնել տիկնոջը։

— Պետք է այն ծերունու կտակը քանդել,— պատասխանեց այրին վճռողական յեղանակով և համառոտ։

Բարաթյանը զարմացած նայեց նրա յերեսին։ Նույն վճռողական յեղանակով այրին կրկնեց յուր ասածը։ Այո, պետք է Պյոտր Սոլոմոնիչի կտակը անպատճառ քանդել, այստեղ զարմանալու վոչինչ բան չկա, ծերունու խելքը գլխին չի յեղել կտակը կազմելիս, նրան խաբել են անաստվածները։

— Այդ կրթված ավազակ Վեքիլովը և այն ուղտապան Սմբակում Աֆոնասյեվիչը, յերկուսն էլ գող են, սրիկա յեն, պետք է նրանց դեմ դատ բաց անել։

— Ասացեք խնդրեմ, ո՞վ է ձեզ այդ խորհուրդը տվել,— հարցրեց Բարաթյանը։

— Վոչ վոք, յես ինքս եմ մտածել այս մասին։ Իմ դրությունը այնպես է, վոր յես ուրիշ միջոց չունեմ այդ խաբեբաներից ազատվելու։ Տասնուչորս տարի շարունակ յես տանջվել եմ, չարչարվել մի «քավթառի» ձեռքին, գերի պես ծառայել եմ նրան հիվանդ ժամանակ, հազար տեսակ հայհոյանքներ եմ լսել։ Սիրելուց եմ արել, հա, հա, հա... Միթե այժմ էլ ուրիշնե՞րը պետք է ինձ տանջեն։ Վոչ, վոչ, յես չեմ կարող այս տեսակ անպատվությանը դիմանալ։ Պետք է կտակը քանդել և ժառանգությունը իմ անունով հաստատել, վորովհետև յես եմ միայն Պյոտր Սոլոմովիչ Բախտամովի որինավոր ժառանգը, յերեխաները իմն են—վոչ թե Վեքիլովինը կամ Սարգափովինը։

Բարաթյանը հանդարտ և անվրդով սկսեց բացատրել, թե մի կտակ, վոր կազմված է նոտարի ձեռքով, որինական կարգով և վոր շուտով պետք է հաստատվի կառավարությունից, չի կարելի քանդել։

— Ի՞նչ անեմ նոտարիուսի ձեռքով է կազմված,—գոչեց այրին գայրացած,—նոտարիուսը խոմ թագավոր չէ, վոր նրա արածը փոխել չլինի։

Բարաթյանը մի րոպե ընկավ մտատանջության մեջ։ Տիկնոջ դրությունը նրա համար հասկանալի չէր, բայց ինչո՞վ կարող է ոգնել նրան։ Նա աշխատեց նրան համոզել, վոր թողնի յուր վտանգավոր միտքը և համբերությամբ հպատակվի յուր ճակատագրին։ Որենքի դեմ նրանք վոչինչ չեն կարող անել, բացի իրանց անունը խայտառակելուց։

— Դուք ուրեմն վախենում եք խայտառակությունից,—ընդհատեց այրին, ավելի ու ավելի գայրանալով,—իսկ յես չեմ վախենում։ Այո, վոչ մի բանից չեմ վախենում, վորովհետև առանց այդ էլ խայտառակված եմ... հենց ձեր պատճառով...

Բարաթյանը անտարբեր նայում եր վրդովված այրու յերեսին, վորի մկանունքները ցնցվում եյին ամեն մի բառ արտասանելիս։ Այդ րոպեյին նա հանկարծ զգաց մի անբացատրելի ատելություն դեպի այդ կինը, նկատելով նրա ճակատի վրա, բերանի անկյուններում և աչքերի տակերում բարակ խորշեր։ Գեղեցկուհին մի վայրկյան այնքան տգեղացած և ծերացած թվաց նրան, վոր նա յերեսը մի կողմ դարձրեց յուր վատ տպավորությունը թագցնելու համար։ Բայց այրին գուշակեց նրա միտքը։ Նրա աչքերը պսպղացին, յերեսան յեկավ բնական կատաղությունը կանացի խայթված ինքնասիրության հետ։

— Ահա ինչ մարդ եք յեղել, յես չեյի իմանում, — գոչեց նա, ձեռներով ճանկռտելով սեղանի սփռոցը,--ահա իմ վարձը... վախկոտ։

Նա, ատամները կրճտելով, մի կերպ իրան զսպեց, վորպեսզի ա-

վելի խիստ ածական չտա այն մարդուն, վորին հանձնել եր յուր պատիվը և վորից սակայն դեռ հույս ուներ ոգնություն ստանալու։ Այն ինչ՝ Բարաթյանը մազու չափ չկորցրեց յուր սառնասրտությունը։ Նա հանգարտ յեղանակով շարունակեց բացատրել բոլոր հանգամանքները։ Մարդը սխալական է, տիկինը մոլորվեց, նա ինքն էլ մոլորվեց։ Միթե հենց այս պատճառով նրանք իրենց անունը պետք է թղթախաղի՞ տան։ Յեթե առաջարկությունը անիրագործելի չլիներ, նա կընդուներ։ Նա պատրաստ է ամեն բանում ոգնել տիկնոջը։ Բայց այս բանում—վոչ, չի կարող, հակառակ յուր կամքին և ցանկության։

— Յերևակայեցեք, հանկարծ յերկուսս միասին մի որ ներկայանում ենք դատաստանին, ինչպես միևնույն գործի համար համերաշխ ընկերներ. Ո՞վ եմ յես ձեզ համար, ո՞վ եք դուք ինձ համար։—Ոտարներ։ Յեթե մեր մեջ կար մի ազգակցական կապ, այն էլ հայտնի չե ձեզ, քանդվեց—ձեր ամուսնու քրոջ աղջիկը այժմ իմ կինը չե։ Ուրեմն ինչ եք պահանջում, ասացեք։

— Դուք եք ինձ անբախտացնողը, դուք էլ պետք է ազատեք ինձ այս դրությունից։

Բարաթյանը, ուսերը թոթվելով, ժպտաց և կծու հեգնությամբ պատասխանեց.

— Յերբ յերկու մարդ իրանց հաճույքի համար գողանում են ուրիշների պատիվը և իրանք են զրկվում պատվից—վոչ մեկը իրավունք չունի մյուսին մեղադրելու։ Մեր մեղքերը հավասար են, յերկուսս էլ հանցավոր ենք։ Յեթե դուք անբախտ եք, յես էլ շատ բախտավոր չեմ։ Ջեռք վերցնենք միմյանցից, թողնենք մեր սխալները և մեր անունը ազատենք մարդկանց բամբասանքից։

— Ազատենք մեր անունը, հա հա հա, ազատենք, հա հա հա...

Յեվ այրին մի րոպեյաչափ իստերիկական ծիծաղից բազկաթոռի մեջ յերերվելով, ձեռներով ճմլում եր բատիստյա թաշկինակը։ Վերջապես, նա մի քիչ խաղաղվեց, նորից կատաղեց և խեղդված ձայնով գոչեց.

— Խաբեբա...

— Տիկին...

Արտասանելով վիրավորական բառը, այրին դարձյալ փոխվեց։ Կարծես, նույն վայրկյանին զղջաց, վոր այնքան հեռու գնաց։ Նրա շունչը սկսվեց սպառվել, կուրծքը ուժգին բարձրացավ, կոկորդի բարակ, կապույտ. թափանցիկ յերակները փքվեցին։ Նա սկսեց հեկեկալ, արտասանելով. «Յես անբախտ եմ... յես ատելի յեմ... խայտառակված...»։

Մի րոպե Բարաթյանը խղճաց այրիին։ Բայց կրկին նայեց նրա

յերեսին, ձեռների յերկար մատներին և նորից ատելությունը շարժվեց նրա սրտում։ Այդ կինը, վոր մի ժամանակ այնպես կուրացրել եր նրան, այժմ թվում եր հրեշ, ատելի և զզվելի մի եյակ։

Այրին արտասուքը սրբեց։ Նա այլևս առաջվանը չեր։ Խեղճացած, ընկճված, նա սկսեց աղերսել Բարաթյանին, վոր կամ ինքը ոգնի կամ վորևե յելք ցույց տա այժմյան դրությունից դուրս գալու։ Նա կվարձատրի նրան առատ ձեռքով, կտա նրան ժառանգության մի մասը, քառորդը, մինչև անգամ ամբողջ կեսը, միայն թե ինքը յուր գլխի տերը լինի։

Միքանի վայրկյան տիկնոջ խոստացած կաշառը գրավեց Բարաթյանին։ Յեթե նրա ձեռքը անցնի Բախտամյանի ժառանգության տասներորդ մասն անգամ, նա կրկնակի կհարստանա։ Նա մտատանջության մեջ ընկավ, տատանվեց, յեղավ մի վայրկյան, յերբ կամեցավ խոսք տալ այրիին ոգնելու։ Բայց նորից հիշեց այն ծանր պատասխանատվությունը, վոր պետք ե հանձն առներ, նորից պատկերացավ նրա առջև դատաստանի սոսկալի պերսպեկտիվը, հասարակական կարծիքի ճնշող ծանրությունը, և նա ցնցվեց։ Վոչ, վոչ, նա այդ չի կարող անել, վտանգավոր ե, փոխանակ շահվելու, կարող ե կորցնել...

Նա կամացուկ վեր կացավ տեղից և ձեռը հանդարտ մեկնեց տանտիրուհուն, վորը յուր կապտած շրթունքները ամուր սեղմելով, նայեց նրա յերեսին և նույնպես վոտքի կանգնեց։ Այլևս այրին կասկած չուներ, վոր Բարաթյանը բոլորովին սառել ե դեպի նա և անկարելի յե նրա մեջ գրգռել նախկին զգացումը։ Վայրկենաբար նրա մեջ բորբոքվեց մի ցանկություն—փաթաթվել այդ մարդու պարանոցին և խեղդել նրան յուր տարփալից գրկի մեջ։ Բայց պաղսիրտ սիրականի անտարբեր հայացքը բռնեց նրան տեղն ու տեղը։ Նա կատաղությունից ճանկռտեց յուր յերեսը, տեսնելով այդ հայացքի մեջ մի պարզ զզվանք, վոր ծայրահեղ հանդգնության և անխղճության եր հասնում։ Նա չգիտեր ինչ աներ, ինչպես պատժեր այդ մարդուն, վորպեսզի սա հավիտյան հիշե այդ պատիժը և հավիտյան տանջվի։

Բարաթյանը նույն սառնությունը յերեսին գլուխ տվեց, վերցրեց վերարկուն և դիմեց դեպի դռները։ Ա՛հ, ուրեմն վո՛չ մի խոսք, վո՛չ մի բացատրություն, վո՛չ մի ներողություն։ Նա գնում ե, և յերբեք չպիտի վերադառնա։ Այրին միքանի քայլ արեց նրա յետևից և հանկարծ կանգ առավ, մտածեց, նորից առաջ գնաց։ Նա վազեց մյուս սենյակ և, Բարաթյանի ճանապարհը կտրելով, գոչեց.

— Կա՛ց...

Այն վայրկյանին, յերբ Բարաթյանը նայեց այրիի այլայլված դեմ-

քին, կիսախավար սենյակի լռության մեջ լսվեց մի ամուր ապտակի ձայն։

— Այժմ կորիր…

Բարաթյանը վոչ մի խոսք չարտասանեց, վոչ մի ձայն չհանեց։ Միայն ընազդմամբ նայեց շուրջը և գդակը հագնելով շտապեց դեպի դուրս։ Ընդարձակ մարմարյա սանդուխքի վրա նրա արյունը խփեց գլխին, յերբ յուր աջ այտի վրա զգաց մի տաքություն։ Մի՞թե նա այնքան ընկավ, ստորացավ… Վերադառնա՞լ արդյոք, պատժի փոխարենը հատուցանե՞լ։ Բայց ո՞ւմ։ Մի հուսախափված, մի անբախտ կնո՞ջ, վոր կրքերից կուրացած ինքն էլ չիմացավ ինչ արեց։ Վոչ, չպիտի իզուր տեղը աղմուկ հանել։ Կանցնի, կմոռացվի, ինչպես ամեն բան անցնում է և մոռացվում աշխարհի յերեսին…

Յեվ յուր հուզմունքը խեղդելու համար նա վառեց մի ծխախոտ, սկսեց արագ-արագ ծխել։ Նա նստեց առաջին պատահած կառքը և կառապանին հրամայեց քշել հեռու, հեռու, թեկուզ քաղաքից դուրս։ Պետք է մի փոքր զբոսնել, հանգստանալ, ցրվել ծանր մտքերը։

Մի ժամ անցած նա մտավ կլուբ։ Նա ձգեց վերարկուն սպասավորի վրա, շտապով մոտեցավ հայելուն իբրև թե փողկապը ուղղելու համար։ Ապտակի վոչ մի հետք, վոչ մի նշան չի մնացել նրա կլորիկ, մսալի յերեսի վրա։ Նա կարող է ապահով յերևալ մարդկանց մեջ։ Նա հանդարտ քայլերով բարձրացավ սանդուխքով և սալոնական քաղցր ժպիտը յերեսին բարևեց յուր ծանոթներին ու բարեկամներին…

XI

Գարնան առաջին որերը հասնելուն պես Դիմաքսյանի գլխում միտք հղացավ թողնել ամեն ինչ և հեռանալ մի վորևէ տեղ։ Նա տեսնում էր, վոր քանի հասարակությունը սկսել է կասկածով նայել նրա վրա—վոչ մի գործի չի կարող ձեռնարկել և քանի Գայանեյի պատկերը հալածում է նրան—վոչ մի բանի մասին հանգիստ և լուրջ մտածել չի կարող։

Մինչդեռ անգործությունը գրգռում էր նրա նյարդերը և ավելի հիվանդացնում։ Մանավանդ վրդովվում էր նա, մտածելով, թե վորքան անզոր է յուր սրտի մի զգացումը զսպելու խելքի ուժով։ Ինչո՞ւ, մի՞թե նա այնքան տկար է, վոր չի կարող բռնանալ յուր հոգու վրա, կեղծել, ստել և բուռն սիրով տոգորված մարդու փոխարեն հարգող բարեկամ ձևանալ, կամ վոչ այս լինել, վոչ այն։

Սկզբում նա մտածեց ուղևորվել Յեվրոպա, և այն մտքով, վոր

այլևս այնտեղից չվերադառնա։ Նա ազատ է, անկախ, մենակ և նյութապես ապահով։ Կգնա մի վորևե քաղաքակիրթ յերկիր, կսկսի պարապվել գիտություններով և մի ազգի համար աշխատելու փոխարեն— կաշխատի ամբողջ մարդկության ոգտին։ Ի՛նչ նախապաշարմունք՝ ծառայել անպատճառ այն հասարակության, վորին բախտի բերմամբ պատկանում ես։ Չէ՞ վոր այս հասարակությունն էլ ամբողջի մի մասնիկն է, չէ՞ վոր ամեն մի անհատ նախ յուր ընտանիքի անդամն է, ապա յուր ժողովրդի, ապա մարդկության։ Յեթե ազգի համար ներելի չէ մոռանալ ծնողներ, ընտանիք, ինչու ներելի չէ մոռանալ և՛ ազգին, այդ փոքրիկ մասնավորին, խոշոր ընդհանուրի համար։ Մի՞թե մարդը մարդ չի՞ մնում ամեն մի շրջանում, միթե մի հողից մյուսը տեղափոխվելով զրկվում է յուր արժանավորություններից։

«Կթողնեմ այս տեղը, խավար շրջանը և ինձ համար կընտրեմ մի առողջարար և կենսատու շրջան, ուր կարող եմ ազատ շնչել, գործել և գնահատվել...»։

Այսպես եր մտածում նա սկզբում։ Բայց շուտով նրա գլխում ծագեցին ուրիշ մտքեր, վոր չեկան հերքելու և վոչնչացնելու այդ բոլորը։ Նա տեսավ, վոր յուր դատողությունները հիմնում է մի տեսակ սոփեստության վրա։ Նա զգաց, վոր կամենալով փախչել մայրենի շրջանից, աշխատում է վոչ միայն յուր փախուստը արդարացնել շողոմական գաղափարներով, այլ և նրանից ստեղծել մի ինչ-վոր բարոյական սկզբունք։

Չէ՞ վոր առաջ հենց ինքը պնդում եր, թե առանց մասնավորի չկա ընդհանուր յերջանկություն։ Միթե տմարդություն չի՞ լինիլ թողնել մի անբախտ ժողովուրդ, յերես դարձնել նրանից, և ինչու։ Այն պատճառով, վոր այդ ժողովրդի դեմքը տգեղ է, այլանդակ, դարերի ընթացքում կրած զրկանքներից աղավաղված։ Յեվ վո՞ր խելացի ոտարը գրկաբաց կընդունի յուր հայրագատ շրջանից փախած մարդուն. Ո՞վ կարդարացնի այն վորդուն, վոր յուր քաղցած, հիվանդ հորը յերեսի վրա ձգելով, կգնա սպասավորելու մի հարուստ ազգականի, վոր իսկի կարոտ էլ չէ նրա ոգնությանը։

«Վերջապես, յես ի՞նչ մեծ տառապանք քաշեցի, վոր այսպես վհատվում եմ։ Ծիծաղելի չի՞ լինիլ արդյոք ինքս ինձ նահատակ համարեմ այն ժամանակ, յերբ իմ գլուխը դեռ շատ և շատ հեռու չէ փշյա պսակին արժանանալուց...»։

Կապեցին նրա ճանապարհը այստեղ, մի ուրիշ տեղ ճանապարհ կգտնի։ Միայն նեխված ճահիճն է մնում միևնույն փոսի մեջ անշարժ, ընթացող ջուրը միշտ յուր համար յելք է գտնում։

Մինչ այս խորհրդածությունները պաշարել էին նրան, դարձյալ Գայանեյի պատկերը չէր հեռանում նրա աչքի առջևից։

Մի օր ճաշից հետո նա դուրս ելավ զբոսնելու։ Նա դիմեց դեպի քաղաքից դուրս գտնվող մի բարձրավանդակ, ուր մի նեղ ուղի տանում էր շրջակա լեռներից մեկը։ Նա դանդաղ քայլերով բարձրանում էր այդ ուղիով դեպի վեր, երբ ետևից լսեց յուր անունը։ Նա հետ նայեց և տեսավ, որ բժիշկ Սալամբեկյանը յուր ամուսնու հետ թևթևի տված բարձրանում է նույն ճանապարհով։ Սպասեց և միացավ նրանց։ Հասնելով մի փոքրիկ տափարակի, տիկին Սալամբեկյանը բաց թողեց յուր ամուսնու թևը և հոգնած նստեց մի մամռապատ քարի վրա։

Նրանց աչքի առջև տարածված էր մի գեղեցիկ տեսարան։ Ամբողջ քաղաքը երևում էր ներքևում ինչպես մի սիրուն պանորամա, որին մի առանձին կենդանություն էր տալիս դեղնագույն Քուռի ողակ-ողակ ընթացքը։

-- Ես այստեղից մեր տունը տեսնում եմ,--ընդհատեց լռությունը տիկին Սալամբեկյանը,—ահա մեր պատշգամբը, այն կանաչ կտուրի տակ։ Կարող եմ երդվել, որ այնտեղ կանգնած է Գայանեն։ Ահա նա շարժվեց։ Այն մյուսն էլ, երևի, Ովսաննան է։ Ինչքան խնդրեցի, Գայանեն չուզեց մեզ հետ գալ։ Տխուր է, միշտ տխուր, խեղճ կին...

Վերջին բառերը տիկինը արտասանեց հազիվ լսելի ձայնով և հառաչեց։ Դիմաքսյանը հայացքը հառել էր դեպի հեռու։ Նրա մտքերը վայրկենաբար թռան ահա այնտեղ, ուր հազիվ նշմարվում էր Գայանեյի անորոշ կերպարանքը։ Նա չլսեց, երբ բժիշկը առաջարկեց մի փոքր էլ դեպի վեր բարձրանալ։ Երբ սթափվեց, բախտավոր զույգն արդեն բավական հեռացել էր։ Նա շտապեց հասնել նրանց և, յուր հուզմունքը թաքցնելու համար, սկսեց խոսել առօրյա բաների մասին։

Մի ժամի չափ նրանք բարձրավանդակի վրա այս ու այն կողմ սպասելուց և շրջակայքը դիտելուց հետո ցած եկան մի ուրիշ ուղիով։ Տիկին Սալամբեկյանը հրավիրեց Դիմաքսյանին թեյի, բժիշկը թախանձեց, և նա հրավերը ընդունեց։

Երբ նրանք ներս մտան, Գայանեն դեռ կանգնած էր պատշգամբի վրա ձեռին մի հեռադիտակ բռնած։ Նա ասաց, թե հեռվից դիտում էր Սալամբեկյաններին և նկատեց, որ մի երրորդ անձ մոտեցավ նրանց։

Ովսաննան բժշկին տվեց մի այցետոմս, ասելով, թե կես ժամ առաջ մի անծանոթ մարդ բերեց։

— Իմ հիվանդներից մեկն է ուղարկել,— ասաց բժիշկը և շտապեց գնալ, խնդրելով Դիմաքսյանին, վոր նա մնա մինչև յուր վերադարձը։

Օրը մթնում էր, արևը արդեն մայր էր մտել և նրա վերջին ճառագայթները անդրադառնում էին լեռնակամարի վրա։ Ընդարձակ և մաքուր բակում տարածվել էր մեղմ իրիկնային զովը։ Ովսաննան, տիկին Սալամբեկյանը, Գայանեն և Դիմաքսյանը նստած էին պատշգամբի վրա՝ մի փոքրիկ շրջան կազմած։ Գայանեն պատասխանում էր Դիմաքսյանի հարցերին յուր ուսումնարանի մասին։ Նա արդեն թույլտվություն էր ստացել և առաջիկա աշնանը պետք է գործը սկսեր։ Վճռել էր ուսումնարանը բաց անել քաղաքի աղքատ թաղերից մեկում, մի յեկեղեցու գավթում, չքավոր դասի աղջկանց համար։ Դպրոցի շինությունը պատրաստ էր, հարկավոր էր միայն մի փոքր նրան վերանորոգել։ Ուսումը պետք է ավանդվեր ձրի։ Ինքը Գայանեն պետք է հանձն առներ ուսուցչուհիներից մեկի պաշտոնը։ Նա ասում էր, թե գիմնազիոնում ուսածից շատ բան մոռացել է և պետք է ամառվա ընթացքում պարապվի մոռացածները հիշելու համար։

Դիմաքսյանը թեև խոսակցում էր նույն բանի մասին, բայց միտքը շատ հեռու չէր խոսակցության նյութից, և կարելի չէր կարծել, վոր նա ձանձրանում է։

Տիկին Սալամբեկյանը գնաց յուր գիշերօթիկ սաներին նայելու։ Ովսաննան հետևեց նրան, վոր աղախնին հրամայե սամովարը դնելու։

Գայանեն և Դիմաքսյանը մնացին դեմ ու դեմ մենակ։ Բակի մի անկյունում փայլեց մի դեղնագույն բան և ծառայի վառած լապտերի շողքերը տարածվեցին կարմիր աղյուսի փոշիով հարթած գետնի վրա։

Մի ինչ-վոր ծանր, բայց ախորժելի զգացում տիրեց Դիմաքսյանի սրտին։ Ուրախություն էր այդ, թե թախիծ—չգիտեր։ Մերթ նայում էր Գայանեյի կիսով չափ լուսավորված դեմքին, մերթ դեպի բակը։ Երբեմն աջ ձեռով սեղմում էր յուր ճակատը, կարծես, յուր գլխից մի միտք հեռացնելու համար։

Գայանեն խոսում էր միայն լուռ չմնալու համար—յեղանակի փոփոխության; անցած ձմեռվա ցրտերի, առաջիկա շոգերի մասին։

Դիմաքսյանը նրա վոչ մի խոսքը անուշադիր չէր թողնում, բայց և՛ վոչ մի խոսքով չէր հետաքրքրվում։ Նա զգում էր, վոր փոքր առ փոքր կորցնում է յուր սառնությունը։ Նա ցանկանում էր, շուտով տիկին Սալամբեկյանը կամ Ովսաննան դուրս գային պատշգամբ, բայց, միևնույն ժամանակ, ուրախ էր, վոր վոչ մեկը դեռ չի յերևում։

Մի վայրկյան նա ուզեց տեղից վերկենալ, հրաժեշտ տալ, հեռա-

նալ և, կարծես, փախչել մի նախազգացվող վտանգից։ Բայց մի ուրիշ զգացում նրան բռնել էր աթոռի վրա և չէր թողնում տեղից շարժվել։ Նրա սիրտը սկսեց արագ բաբախել և հազիվ կարողանում էր զսպել իրան, վորպեսզի չարտահայտի այն, ինչ-վոր անհաղթելի ուժով ձգտում էր ինքն իրան արտահայտվելու։

Նա նկատեց, վոր Գայանեն ուզում է վերկենալ, կամ գուցե այսպես թվաց նրան։ Նա ինքը վոտքի կանգնեց, չգիտեր ինչու համար, և բնազդումով նայեց չորս կողմ։ Վոչ վոք չկար, վոչ մի ձայն չէր լսվում կամ գոնե նա ինքը չէր լսում, բացի յուր սրտի բաբախումից, վոր քանի գնում այնքան սաստկանում էր։

— Յեղանակը ցրտանում է, դուք չե՞ք մրսել,— ասաց նա և իսկույն փոշմանեց, վոր ասաց, վորովհետև ինքն յուր ձայնի մեջ զգաց կեղծ, անախորժ հնչյուն։

Գայանեն պատասխանեց, թե այո, յեղանակը ցրտեց և պետք է ներս գնալ։ Յեվ նա կամենում էր վոտքի կանգնել, յերբ լսեց.

— Ոհ, ինչքան դժվար է, ինչքան դժվար…

Այս խոսքերը Դիմաքսյանը արտասանեց ցածր, հազիվ լսելի ձայնով, կարծես, ակամա։ Բայց և այնպես նրանք շատ պարզ, շատ վորոշ հասան Գայանեյի ականջին։

Դիմաքսյանը աչքերը ծածկեց ամոթից և նույն վայրկյանին իսկույն գլուխը բարձրացրեց։ Նա կրկին նստել էր, այժմ նորից վոտքի կանգնեց, և նրանց աչքերը կիսախավարի մեջ հանդիպեցին միմյանց։

— Անվանեցեք ինձ — ինչպես կամենում եք, բայց յես այլ ևս չեմ կարող պահել իմ խոսքը… Բարեկամ մնալ… Վոչ, յեթե յես կարողանայի արտահայտել իմ զգացածը, կտեսնեիք, վոր անհնարին է, դժվար է դիմանալ… Մի՞թե ամեն բան ձեզ հայտնի՞ չէ, մի՞թե չե՞ք տեսնում, ինչպես տանջվում եմ յես…

Կասկած չկար, վոր Գայանեն յեթե մինչև այժմ չէր զգացել, այժմ ամեն ինչ հասկացավ։ Ավելի վոչինչ չկարողացավ արտասանել Դիմաքսյանը։ Ներսից, կարծես, մի բան խեղդում էր նրա կոկորդը։ Իսկ Գայանեն, վոր ուզում էր գնալ, դեռ անշարժ կանգնած էր նրա առջև։ Նայելով չորս կողմ, նա շփոթված արտասանեց.

— Ի՞նչ պատահեց ձեզ… Յես չէի սպասում ձեզանից այդչափ թուլություն։ Հարգեցե՛ք ձեզ… ուշքի յեկեք…

Նա սկսեց դողալ ինքն էլ չգիտեր ինչու — յերկյուղից, ամոթից, թե՞ մի ուրիշ ավելի զորավոր զգացումից։ Յերբ նա տեսավ, վոր Դիմաքսյանը լուռ է, կարծեց, թե նա ուզում է բացատրել յուր սիրտը ավելի պարզ։ Այժմ նա չգիտեր ինչ անել, գնա՞լ, թե՞ մնալ։ Զգում էր

միայն, վոր յուր գնալը պետք է հավիտյան վիրավորե Դիմաքսյանին, այն մարդուն, վորի ազնվության մասին րոպե անգամ չէր կասկածել, չէր կասկածում և՛ այժմ, այդ վայրկյանին։

Դիմաքսյանը մի քայլ հետ կանգնեց, յուր սրտում զգալով մի սուր ցավ։ Այն լուռ տեսարանը, վոր տեղի ուներ, ավելի քան պերճախոս կերպով պարզեց նրա համար ամեն բան։ Նա տեսնում էր յուր և Գայանեյի մեջ մի հսկայական պատնեշ, վորի առջև ինքը տկար էր, անզոր բոլոր յուր զգացումներով հանդերձ։ Այդ կինը սարսափում է և ամաչում յուր դրությունից։ Հանդգնե՞լ արդյոք ավելի առաջ գնալու, թե՞ կանգ առնել և ամեն բան վերջացած համարել։

Յեվ մինչ նա այս տատանման մեջ էր, տեսավ, վոր Գայանեն հանդարտ քայլերով հեռանում է։ Հետևե՞լ նրան, ներողություն խնդրել, բացատրե՞լ, վոր մոլորվեց, կուրացավ, չպիտի աներ։ Վո՛չ, ինչու կեղծել և սուտ, ինչու խաբել և մի ուրիշ, ավելի վատ, սխալ գործել։ Վերջապես, արդեն ուշ է, ահա Գայանեն գնաց, մտավ իր սենյակը և դռները յետևից ծածկեց…

Նա դողում էր վոտից մինչև գլուխ։ Խելքը պղտորված, շշկլված, նա կանգնած էր, գլուխը յերկու ձեռներով ամուր բռնած, այնքան ամուր, վոր կարծես վախենում էր, թե նա կարող է անջատվել ուսերից և թավալվել պատշգամբի վրա։ Ներսից վոչ մի ձայն չէր լսվում։ Կայծակի պես մի բան փայլեց, հետո լուսամուտների մթին ապակիները դեղնեցին։ Դա տիկին Սալամբեկյանը կանթեղ է վառում սեղանատանը։ Անշուշտ նա իսկույն դուրս կգա հյուրերին թեյի հրավիրելու։ Յերևա՞լ արդյոք նրա աչքին։—Վո՛չ, անկարելի յե, պետք է հեռանալ, առանց նրան տեսնելու, թող այդ լինի անքաղաքավարություն, փույթ չէ, բայց պետք է հեռանալ…

Վերջացավ ամեն ինչ, ուրեմն այլ ևս հույս չկա։

Ինքն յուր աչքում ընկճված, գրեթե վոչնչացած, նա կառքի մի անկյունում սեղմվել էր այնպես, վոր վոչ վոքին չերևա։ Չնայելով յերեկոյան բավական թանձր մթանը, նրան թվում էր, վոր չորս կողմից ինքը լուսավորված է պայծառ էլեկտրական լույսով և ամենքը տեսնում են նրան։ Անաջողությունը դրոշմված է նրա կերպարանքին, բոլոր անցորդները տեսնում են այդ, խղճում են ու ծաղրում նրան։

XII

Միքանի րոպե նա լուռ անցուդարձ էր անում յուր մթին սենյակում։ Ներս մտավ Միրաքյանը և, վառ կանթեղը դնելով սեղանի

վրա, մի քանի քայլ հետ քաշվեց, սկսեց դիտել նրան։ Նա իսկույն հասկացավ, վոր ելի մի բան է պատահել յուր պարոնին։ Դիմաքսյանը հրամայեց նրան դուրս գնալ, նա ուզում էր մենակ մնալ։ Ծառան անցավ նախասենյակ և դարձյալ կանգնեց դռների յետևում, վոր տեսնե, ինչ պիտի անի յուր պարոնը։

Դիմաքսյանը թուլացած ընկղմվեց աթոռի վրա, յերեսը ձեռներով ծածկեց, գլուխը դրեց սեղանին։ Նրա սիրտը լցվել էր, նա ուզում էր լաց լինել, այո, հեկեկալ ինչպես մի յերեխա։ Բայց նա ճիգն արեց յուր դառն հեկեկանքը զսպելու, և զսպեց։ Արտասուքը չէր կարող թեթևացնել նրա սիրտը։ Նա զգում էր իրան կյանքից անջատված, մի դատարկ տարածության մեջ, անհեն, անմխիթար։ Նրա շուրջը տիրում է մեռցնող ցրտություն, և չկա մեկը, վոր փարատե այդ ցրտությունը։

Նա հիշեց Մսերյանին, նրա անկեղծ ընկերական համակրությունը։ Շատ անգամ է այդ մարդը մխիթարել նրան և պահպանել հոգեկան դառնությունների ժամանակ յուր խրախուսիչ խոսքերով։ Այժմ նա յել չի կարող օգնել։ Հարկավոր է ավելի ջերմ, ավելի քնքուշ սիրտ, վոչ մխիթարելու, այլ և նրա հետ դառնանալու, նրա վշտին վշտակից լինելու համար։

Վճռեց գտնել մի այդպիսի սիրտ։ Ա՜խ, վորքան նա այդ ժամին կկամենար յուր մոտ տեսնել այն միակ էակին, վորին վոչ վոք չի կարող փոխարինել, վոչ ընկեր, վոչ բարեկամ, վորի սերը վորքան անկաշառ է, այնքան անսպառելի յե, անհուն և ջերմ։ Նա յուր վորդու դեմքի մի թեթև արտահայտությունից, կրծքից դուրս յեկած մի թույլ հառաչանքից կհասկանար նրա բոլոր ցավերը։ Յուր մայրական վշտակցությամբ կպահպաներ նրա հուսահատ հոգու մեջ կենսական ջերմություն։ Նա կասեր. «Ապրիր առանց սիրվելու, վորովհետև այդ հնարավոր է, և յես ապրեցի վոչ միայն չսիրված, այլ և ամբողջ կյանքիս ընթացքում տանջվելով»։ Կասեր. «Մի՛ սպասիր կնոջ կողմից սեր, վորովհետև յեթե աշխարհի յերեսին կա իսկական սեր—դա մայրական սերն է և միայն մայրը կարող է անկեղծ սիրել յուր զավակին, ուրիշ վոչ վոք, վոչ վոք...»։

«Յես հիշում եմ, նա ինչպես փայփայում էր ինձ և ինչ նուրբ զգացողությամբ էր արտահայտում յուր սերը, յերբ յես մի թեթև դառնություն եյի ունենում։ Ահա քո դալկահար դեմքը, վորի վրա պարզ նկարված են քո սրտի բոլոր ցլևեջները։ Տեսնում եմ քեզ, տեսնում եմ, գլուխդ ուսիդ ծռած մտիկ ես անում վորդուդ, ուզում ես գուշակե՜լ իմ միտքը։ Ի՞նչ, միթե դու այժմ էլ զգում ես հավիտենականության մեջ... Ցնորք, ցնորք...»։

Ցել Դիմաքսյանի հայացքը կենտրոնացել էր անորոշ տարածության մեջ, և այդ րոպեյին կենդանացել էին նրա աչքի առջև ամբողջ մանկությունը ու պատանեկությունը, և այդ հեռու, վաղուց մոռացված անցյալի մեջ նշմարում էր յուր մոր պատկերը։

Նրա աչքերը պղտորվեցին և գրեթե ոչինչ չէր տեսնում, բացի այդ պատկերից, որ նրա աչքի առջև կենդանացել էր գրգռված երևակայության զորությամբ։ Նա զգաց յուր ուղեղի մեջ մի տարօրինակ ցավ։ Նա բռնեց յերկու ձեռներով գլուխը և մոտեցավ անկողնակալին։ Այստեղ նրա մտքով անցավ մի դեպք, որ վաղուց կարդացել էր յեվրոպական լրագիրներում։ Շվեյցարիայի մի քաղաքում կյանքից ձանձրացած մի մարդ վճռել էր ինքնասպանություն գործել։ Յերեք անգամ նա փորձել էր վերջ տալ յուր կյանքին, և ամեն անգամ փորձը անհաջող էր անցել։ Յերկու անգամ նա ատրճանակ էր արձակել և միայն թեթև վերք էր ստացել։ Նա ձգել էր իրան մի լճի մեջ—նավավարները ազատել էին։ Վերջապես, նա փակվել էր յուր սենյակում, դռները կողպել էր և թույն ընդունել։

«Վո՛չ, յես այդպես չեմ անիլ», ասաց նա, ձեռը մեկնեց բարձի տակ և այնտեղից հանեց մի փոքրիկ, պսպղուն և ծանր առարկա։

Նրա դեմքի կնճիռները բացվեցին։ Ահա վորտեղ է նրա փրկությունը, ահա ինչու գրկաբաց սպասում է նրան յուր մայրը։ Աներկյուղ ձեռի մի հաջող հարված, և նա անցնելով Ռուբիկոնը, կհասնի անզգայության աշխարհը, ուր չկա վոչ տանջանք, վոչ յերջանկության փափագ, վոչ նախանձ, վոչ փառասիրություն, վոչինչ, վոչինչ... Ինչո՞ւ յերկար մտածել, միթե ամենքի վերջը այդ չէ, սկսած Ալեքսանդր Մակեդոնացուց մինչև ամենահետին անբախտը։ Տանջվել, հալածվել, չարչարվել և ինչո՞ւ, միմիայն մի անհուն թողնելու համար։ Ջի՞ վոր այդ անունը վորքան բարձր հնչի, վորքան հմայիչ լինի ամբոխի համար, դարձյալ վերջը պետք է մոռացվի։

Նա մոլոր քայլերով անցուդարձ էր անում, բռունցքի մեջ ավելի ու ավելի ամուր սեղմելով փոքրիկ զենքի կոթը։ Մի վճռական շարժում անելով, նա նստեց սեղանի մոտ, վերցրեց գրիչը։ Հարկավոր է վերջին քաղաքացիական մի պարտք կատարել—գրել մի քանի տող, վոր վոչ վոք կասկածի տակ չընկնի։ Բայց առաջին բառը չգրած, նա հանկարծ ցնցվեց ամբողջ մարմնով, դողաց. գրիչը ընկավ նրա ձեռից և մարմնով անցավ մի տարօրինակ սառնություն։ Մի՞թե նա վախեցավ, մի՞թե այնքան թուլասիրտ է, յերկչոտ։ Նա դարձյալ վերցրեց գրիչը։ Մարմնի սառնությունը անցավ ուղեղին և վայրկենաբար փարատեց այնտեղ տիրած խավարը։ Նա աչքերը ծածկեց ձեռներով, և

չերևակայությունը դարձյալ պատկերացրեց յուր մոր հեզ կերպարանքը: Այժմ դա մի լուսավոր կետ եր, վոր քաշում եր նրան դեպի ինքը, աշխատելով դուրս բերել նրան սոսկալի խավարից, հեռացնել յուր վոտների տակ բացված անդնդից:

«Մայր, մայր, դու դժգոհ ես քո վորդուց, վոր այսպես հուսահատվում ե, դու չես կանչում նրան քեզ մոտ, այլ խրախուսում ես այնտեղից, դու կանխես նրան, յեթե յուր վրա ձեռք բարձրացնի: Իսկ քույրերը, ինչու այդպես անգութ վարվի նրանց հետ, ինչու ձգի նրանց անվերջ վշտի մեջ... Ի՞նչ անմտություն, ի՛նչ չերեխայություն: Ինչու համար մեռնել: Վոր թշնամիները ուրախանան և ավելի ծաղրեն նրան, վոր բարեկամները համոզվեն, վերջապես, թե նա իրավ խելագար եր...»:

Նա ատրճանակը ձեռով հրեց սեղանի մի անկյունը և նորից վոտքի կանգնեց միանգամայն փոխված, վերակենդանացած: Նրան թվաց, վոր մեռած եր, այժմ կյանք ստացավ, վոր նրա առջև հանկարծակի բացվել եր մի մթին գերեզման և նույնպես հանկարծակի ծածկվեց:

Մի ձեռք զգուշությամբ սեղանի վրայից վերցրեց ատրճանակը: Նա նայեց և տեսավ Սիրականին, վոր կես չերկյուղած և կես կասկածալի դեմքով կանգնած եր նրա առջև:

— Դու ինչ գործ ունիս այստեղ:

Սիրականը ատրճանակը թագցրեց յուր գրպանում և լուռ մտիկ տվեց նրա չերեսին:

— Ի՞նչ ես ուզում ինձանից,— կրկնեց Դիմաքսյանը,— ինչու մտար այստեղ: Դու ինձ հարկավոր չես, թող ինձ հանգիստ, գնա...

— Մի աղաչանք ունիմ,— խոսեց ծառան անվստահ ձայնով:

Նրա նշաձև աչքը փակվեց, իսկ կոլորակը մնաց անշարժ: Դա նշան եր, վոր նա մտադիր եր չերկար խոսելու:

— Ասա տեսնեմ, ինչ ե աղաչանքդ,— ասաց Դիմաքսյանը, նստելով սեղանի մոտ:

— Աղա ջան, մայրս մեր գյուղում հեքիմ եր, անվանի հեքիմ: Տարին տասներկու ամիս նա աղոթք եր անում, պաս եր պահում, շաբաթներով ել ծոմ եր մնում, չունքի, որհնյալ յեղիցի կամք աստուծո, ընկնավոր եր... Բոլոր սրբերի անունով ջոկ-ջոկ աղոթքներ ուներ: Մեղայ քեզ, մեղայ քեզ, չարը պատահելիս, տեսնում եյիր ընկավ, բերանը փրփրեց, աչքերը բացվեցին, սկսեցին Սաթայելի հետ կռիվ անել: Այդ ժամանակ սրբերը սկսում եյին նրա բերանով խոսել... Մի անգամ, ժամաժամքին, մութը նոր ընկնելիս, լուսահոգին թոնրատան

առաջ բռնվեց, ընկավ յերեսը դեպի աղոթարան։ Յես տասը տարեկան եյի, աչքովս տեսա։ Նա բերանը բաց արեց, ասաց. «Աղոթք արեք, տեսնում եմ քամբախտություն ե գալիս, աղոթք արեք, վոչխար մորթեցեք, մոմ վառեցեք»… Զորս որ անցած, աղոթարանից բարձրացավ մի քամի, անձրև բռնեց։ Սկսվեց մի կարկուտ, տեր, դու ցույց չտաս, հավը հավի ձվի չափ։ Տասնուչորս գյուղերի հասած հունձքը կոտրեց, նստեցրեց, փչացրեց, սով ընկավ…

Դիմաքսյանը ակամա հետաքրքրվել եր այս պատմությունով և լսում եր ծառային, առանց ընդհատելու նրա խոսքը։ Նա գիտեր, վոր Սիրականը անշուշտ մի նպատակով ե այդ պատմում, և հենց՝ այդ նպատակը իմանալու համար նա համբերությամբ ականջ եր դնում նրան։

— Շինականները մորս պաշտում եյին, չունքի լուսահոգին սուրբ Գևորգի «դուլն» եր։ Սուրբը նրա ձախ վոտի և աջ ձեռի վրա մոր արգանդում նշաններ եր դրել, մեկը տերևի նման, մյուսը թռչնի պես։ Սուրբի գերեզմանի հողը պահում եր մեր թոնրատանը, գիշեր-ցերեկ նրա առաջ մոմ եր վառում… Քանի-քանի հիվանդներ ե փրկել, վորին աչքացավից, վորին գլխացավից, վորին վոսկրացավից, վորին ել յարա-փարաներից։ Աղա, յես ել ընկնավոր եմ։

— Դո՞ւ,—հարցրեց Դիմաքսյանը զարմացած և ցավակցաբար։

— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, յես սուրբի «դուլ» չեմ, յես մարգարեյություն չեմ անում, բայց ընկնավոր եմ։ Հենց վոր առաջին փորձանքը գլխիս հասավ, մայրս տնից տուն ման յեկավ, կոպեկ-կոպեկ փող հավաքեց, շորեր հավաքեց, տվեց ինձ ու ասաց. «Գնա՛, Սիրական, գնա՛, բոլոր սրբերին ուխտ արա, գերեզմանների հողը լիզիր, յեթե մեկը չփրկի, մյուսը կփրկի»… Գնացի, աղա ջան, քսան տարեկան եյի, գնացի, յերկու տարի վոտով թափառեցի Գյանջա, Ղարաբաղ, Պարսկաստան, Տաճկաստան, վորտեղ վոր հայ քրիստոնեյի սուրբ կա, գերեզմանին յերկրպագություն տվեցի…

— Լավացա՞ր։

— Լավացել եյի, մեռնեմ նրանց սուրբ աջին, բայց հետո մեղքերս յերևի ելի շատացան, ելի «չարը» մտավ հոգիս։ Այժմ տարենը մեկ կամ յերկու անգամ փորձում ե։ Սրա՛նից յերեք ամիս առաջ Սալդատսկի բազարում ընկա, գ ա ր ա դ ա վ ո յ ը բերեց տուն։ Կինտոները գրպանիցս տասը մանեթ եյին հանել…

Դիմաքսյանը անկեղծ ցավակցեց Սիրականին, վորի անբուժելի հիվանդության մասին առաջին անգամն եր լսում։

— Լա՛վ, Սիրական—ասաց նա բարեկամաբար,—այժմ ի՞նչ ես ուզում ինձանից։

— Աղաչանք ունիմ, մեծ աղաչանք,— պատասխանեց Սիրականն այժմ ավելի վստահացած։ — Աղա, դու ինձ լավություն շատ ես արել, Ե՜հ, յես ինչո՞վ կարող եմ պարտքս վճարել։ Յես էլ ուզում եմ քեզ տալ ինչ որ ունիմ...

Նա ձեռը տարավ ծոցը և այնտեղից հանեց մի բան։

— Այս պստիկ կապոցը մորս Թանգագին կտակն է, տալիս եմ քեզ, աղա, իմ խաթրու վզիցդ քաշ տուր։

Նա ջերմեռանդորեն համբուրեց ձեռի բանը։ Դա կապտագույն լաթի կտորից կարած մի յեռանկյունի կապոց էր լուցկիի տուփից քիչ փոքր։

— Այդ ի՞նչ է։

— Սուրբ Գևորգի մարմնի փոշին է, չարը խափանելու համար, շատ թանգ բան է...

Դիմաքսյանը գլուխը ներողամտաբար շարժելով, բարեկամական հանդիմանությամբ ասաց.

— Դո՞ւ յել, Սիրական, դո՞ւ յել ուրիշների պես հավատացած ես, որ յես խելագարվել եմ։

Սիրականն ամաչելով գլուխը թեքեց կրծքին։ Պարզ էր, որ նա հավատում էր տարածված լուրերին։ Հետաքրքրական էր Դիմաքսյանի համար իմանալ՝ ի՞նչ փաստերի հիման վրա յե այդ մարդը նրան խելագար համարում։

— Ասա ինձ, Սիրական, տեսե՞լ ես ինձ գժություն անելիս։

Սիրականն աշխատեց խույս տալ ուղիղ պատասխանից։ Բայց յերբ Դիմաքսյանը ստիպեց, նրա շրթունքները սեղմվեցին, շիլ աչքերի մեջ յերևաց մի խորին ցավակցության արտահայտություն։ Նա պատմեց մի քանի բաներ, որ նկատել էր Դիմաքսյանի կողմից և որ յերբեմն վախեցրել էին նրան։ Օրինակ, մենակ ժամանակ նա ինքն յուր հետ շատ անգամ խոսում է, զանազան շարժումներ է անում...

— Բայց յես խոմ ընկնավոր չե՞մ։

— Չե, աղա, աստված վո՛չ անի, որ այդ փորձանքին հասնես, դա ուրիշ բան է, բայց...

Նա չկամեցավ շարունակել, տատանվեց։

— Ասա, ասա, ե՞լ ինչ ես տեսել։

Ծառան զգուշությամբ ակնարկեց այն չարագուշակ գիշերվա դեպքը, յերբ Դիմաքսյանը սաստիկ տենդի մեջ էր։ Բոլորը, ինչ-որ նա արել էր այդ գիշեր և խոսել, Սիրականը հիշում էր։ Այնինչ՝ ինքը ոչինչ չէր մտաբերում, բացի նրանից, որ մահամերձ հիվանդ էր յեղել։ Առողջանալուց հետո նա մի անգամ հարցրել էր հայելու

մասին։ Մսերյանը պատասխանել եր, թե ինքն ե անզգուշությամբ կոտրել, և նա հավատացել եր։

— Յեվ դու այժմ ուզում ես ինձ չարից փրկե՞լ,— գոչեց Դիմաքսյանը վոչ այնքան բարկացած, վորքան կատակով։

— Աղաչում եմ, վոր այս բանը վզիդ քաշ տաս...

— Գիտես ինչ, Սիրական, դու ինձ բավական զբաղեցրիր, յես տխուր եյի, շատ տխուր, մտքերս ցրվեցին, շնորհակալ եմ։ Դու բարի մարդ ես, Սիրական, անկեղծ ես, իսկ յես անկեղծ մարդկանց սիրում եմ։ Բայց այդ կապոցը, չնեղանաս ինձանից, յես վզիս քաշ տալ չեմ կարող...

Նա ձեռով մի դրական շարժում արեց, վոր ցույց եր տալիս, թե այլևս չի ուզում խոսել։

Սիրականը լաթի կապը ծոցը դնելով, դուրս յեկավ սենյակից։

Մի դառն և կծու ծիծաղ դուրս թռավ Դիմաքսյանի կրծքից, և նա արտասանեց.

«Վողորմելի ամբոխ, թշվա՛ռ ամբոխ, քանի վոր մենք քեզ չենք ուզում կրթել, դու ինքդ ես ուզում մեզ կրթել...»։

XIII

Դրեթե ամբողջ գիշեր Գայանեն չկարողացավ քնել պատահած անցքի տպավորությանը յենթարկված։ Նրա ականջին շարունակ հընչում եր Դիմաքսյանի հուսահատ ձայնը. «Միթե չե՞ք տեսնում, թե ինչպես տանջվում եմ յես...»։

Նա վիրավորված չեր, այլ վշտացած։ Նա չեր մեղադրում Դիմաքսյանին և վոչ ել վրդովված եր նրա դեմ։ Ի՞նչպես կարող եր նրան զսպել, քանի վոր սիրում ե, իսկ թե սիրում ե—միթե՞ այդ վաղուց հայտնի չեր Գայանեյին։ Բայց ինչո՞ւ նա այնքան հուսահատված եր և հենց առաջին խոսքն արտասանեց հուսահատ ձայնով։

«Մի՞թե նա բոլորովին համոզված եր, վոր յուր սերը ուրիշ վոչ մի արձագանք չի գտնում իմ սրտում, բացի բարեկամական զգացմունքից։ Վերջապես, յես ինքս կարո՞ղ եմ հաստատ ասել, թե այդ մարդուն միայն հարգում եմ։ Յեթե այդպես լիներ, մի՞թե չեյի աշխատել ժամանակին նրան ինձանից հեռացնել։ Իսկ յես ինչ արեցի, ինչ արեցի. վոչ մի անգամ նրան չզգուշացրի, վոչ մի անգամ... Այժմ յես ի՞նչ իրավունքով նրանից վիրավորվեմ։ Տեր աստված, գլուխս պըտտում ե, չգիտեմ ինչ մտածել... Իհարկե, նա այժմ համոզված ե, վոր յես նրան ատում եմ։ Բայց այդպես չե, վոչ, այդպես չե։ Ուրեմն ի՞նչ ե... Մի՞թե վախեցա հասարակական կարծիքից։ Սխալ ե, այդ չե...

Յես կամենում եմ իմ խղճի առջև արդար լինել։ Այո՛, ճիշտ դա չե։ Յեթե յես այդ մարդուն առաջ սիրեյի և հետո բաժանվեյի իմ ամուսնուց, այն ժամանակ շատ կարելի յե այդպես չվարվեյի նրա հետ։ Բայց այդ մարդն իմ ուշադրությունը գրավեց հետո, յերբ յես ատում եյի Բաբաթյանին։ Յեվ այն ժամանակ համեմատեցի յերկուսին, յերբ համեմատելը անկարելի յեր։ Այն ժամանակ ճանաչեցի մեկի արժանավորությունները, յերբ մյուսի անբարոյական լինելն ինձ համար բոլորովին պարզվեց...»։

Ի՞նչ կլիներ, յեթե նա կուրացած սիրեր Դիմաքսյանին, յեթե արհամարհելով ամեն ինչ, գնար նրա հետևից։ Միթե դա կլիներ սե՞ր և վե՞հ վրեժխնդրություն։ Յեվ ու՞մից պետք ե վրեժը հաներ։ Բաբաթյանի՞ց։ Ոչ, այդ մարդը վիրավորվելու փոխարեն կծիծաղեր, կզվարճանար։ Նա ինքն յուր վրեժը լուծված կհամարեր, տեսնելով յուր կնոջն յուր թշնամու հետ միացած։ Նա այդ փաստն յուր ձեռքում զենք կդարձներ նրա դեմ, կպարծենար հասարակության առջև և ամենքին ցույց տալով, կասեր. «Ահա, տեսեք, կինս բաժանվեց ինձանից վո՛չ թե այն պատճառով, վոր յես անբարոյական եյի, այլ վորովհետև նա ինքը չուզեց բարոյական ամուսին մնալ...»։

Յեվ վորքան Գայանեն այսպես մտածում եր, այնքան ավելի համոզվում եր, վոր ուրիշ կերպ չեր կարող վարվել։ Միակ յուր սխալը նա համարում եր այն, վոր չուզեց կամ չկարողացավ ժամանակին Դիմաքսյանի սերը զսպել յուր սառնությունով։ Մյուս կողմից, մի միտք նրան սաստիկ մտատանջություն եր պատճառում. կդիմանա՞ արդյոք Դիմաքսյանն այդ վշտին, թե՞ մի փորձանք կբերի յուր գլխին։

Մերթ նա կարծում եր, թե չի կարող դիմանալ և մերթ մտածում եր, թե պետք ե դիմանա, քանի վոր խելոք ե, մտածող։ Նա ինքն ինքնասեր ե, հպարտ ե—պետք ե յուր սիրածի ինքնասիրությունն ու հպարտությունն ել խնայի։ Նա պատվախնդիր ե և ազատասեր—պետք ե ուրիշներից ել նույնը պահանջի։ Յեթե նա սիրում ե բարձր սիրով և վոչ լոկ յուր յեսի խորությունից անշուշտ կհասկանա յուր սիրածի վիճակը։

Ի՞նչ, միթե նա չի՞ հարգիլ իմ մայրական զգացումները, միթե չի՞ մտածիլ, վոր յեթե յես չմերժեյի—պետք ե զրկվեյի յերեխաներիցս։ Զրկվել յերեխաների՞ց։ Վոչ, վոչ, այդ յես չեմ կարող անել, յերբեք, յես առանց նրանց չեմ կարող ապրել...»։

Արմունկները պատշգամբի վանդակապատին հենած՝ նա կանգնած եր ուղիղ այնտեղ, ուր յերեք որ առաջ Դիմաքսյանն արտահայտեց յուր սրտի զգացումը։ Նա նայում եր ցած, դեպի գավիթ, ուր

խաղում էր չորսից մինչև տասը տարեկան մանուկների և աղջիկների մի մեծ խումբ։ Օդի բյուրեղյա հստակությունը, ծիծեռնակների ծըլվլոցը և յերեխաների պայծառ, մետաղահնչյուն ձայները կարոտ մոր սիրտը լցնում էին ճնշող զգացումներով։ Ինչո՞ւ նրա փոքրիկները չկան այդ զվարթ խմբի մեջ։

Յոթ օր էր անցել նրանցից բաժանվելուց, դառն և տաղտկալի օրեր, վոր յոթ ամսվա չափ յերկար էին տևել։ Կտեսնվի՞ արդյոք նրանց հետ դարձյալ, թե՞ այդ վերջին անգամն էր։ Մի վայրկյան նա մտածեց՝ արդյոք ավելի լավ չէ՞ր լինի, յեթե նա յուր ծանր խաչը կրեր զավակների սիրո և նրանց հետ ապրելու համար։ Բայց հենց նույն վայրկյանին նա հիշեց անցկացրած տարիները, և կրկին նրա աչքի առջև պատկերացավ խաբված, անարգված և պատվի զոհ դարձած ծերունին։ Յեվ նա ավելի սաստիկ նողկանք զգաց դեպի յուր անցյալը։ Յերբեք նա չպիտի փոշմանի յուր արած քայլի մասին։ Թող մարդիկ դատապարտեն, բայց նա յուր խղճի առջև արդար է։ Թող զավակների կարոտը ցեցի պես ուտի նրա սիրտը, մեռցնի, բայց չէր կարող ապրել այն մարդու հետ։

Նա յերեսը հետ դարձրեց գավթից և աչքերը գաղտուկ սրբեց։ Նա չէր ուզում, վոր յուր արտասուքը նկատեն տիկին Սալամբեկյանը և Ովսաննան, վոր այդ միջոցին ներքևում ղեկավարում էին փոքրիկ սաների խաղերը։ Իսկ մանկական ձայները քանի գնում այնքան ավելի զվարթ էին հնչում, իսկ գարնանային օդը քանի գնում, այնքան ավելի տաքանում էր և ապրելու, յերջանիկ ապրելու ցանկությունը բորբոքում մարդու սրտում։

Տիկին Սալամբեկյանը վերջացրեց յուր պարապմունքը սաների հետ, բարձրացավ վերև, մոտեցավ Գայանեյին, բռնեց նրա թևից և տարավ սեղանատուն։ Նա դեռ տեղեկություն չուներ վերջին դեպքի մասին։ Տեսնելով Գայանեյի կարմրած աչքերը, նա սկսեց ընկերաբար հանդիմանել.

—Յեթե դու այդպես շարունակես, կարճ ժամանակում կյանքդ բոլորովին կմաշես։ Չպետք է լիներ, բայց վոր պատահեց, մի՞թե ինքդ քեզ պիտի սպանես։ Դու վոչ առաջինն ես, սիրելիս, վոչ էլ վերջինը կլինես, քեզ նման շատերը կան...

—Մի՞թե դու կարծում ես, վոր յես իմ արածի մասին փոշմանել եմ։

—Յերբեք չեմ կարծում։ Դու միայն յերեխաների մասին ես հոգս անում։ Բայց քեզ խոմ նրանցից չեն զրկում, դու էլի խոմ տեսնվում ես նրանց հետ։

Այրի Բուլումբաշյանը սեղանատանը, պատրաստ սեղանի մոտ

նստած, նախանձելի ախորժակով վոչնչացնում եր յուղապատառները։ Մյուս սենյակից հիվանդի ծանր տնքտնքոցի ձայն եր լսվում։ Դա տիկին Սալամբեկյանի տատն եր, վոր մեռնում եր մեռնում և դեռ կենդանի յեր, տանջելով շրջապատողներին և չկամենալով կյանքից բաժանվել։

Այրին Գայանեյին նստեցրեց յուր մոտ և նույնպես հանդիմանեց։ Նրա ասելով Գայանեն այժմ ավելի բախտավոր ե, քան առաջ։ Այդ ամուսին ասած արարածները իրանց կանանց վերաբերմամբ առհասարակ շատ գարշելի յեն, իսկի չարժե նրանց վրա ուշադրություն դարձնել։

—Խելոք կնիկը նա յե, ով վոր յուր մարդու արածի տեղ յերկուսն ե անում նրան խելքի բերելու համար։ Հավատա, հոգիս, մարդն այն կնկան ե սիրում, վորը նրա գլխատակը փափուկ բարձ ե դնում, քնացնում ու հետո ինքն յուր ուզածն անում։ Ինչքան քիչ մտածես, այնքան բախտավոր կլինես։ Ականջներդ փակիր ու քեֆդ տվածի պես պար յեկ, այն ժամանակ կասեմ «ապրես»։ Յերեխանե՞րը, ինչ, նրանց մասին էլ չարժե մտածել, տեսնում ես ինձ, շատ ուրախ եմ, վոր յերեխաներ չունիմ, գլուխս ցավերից ազատ ե։ Ապրիր, քեֆ արա ինձ նման... Տեսնում ես, մարդիկ շատ բաներ են ասում իմ մասին, թող հաչեն, ինչքան ուզում են, շատ հարկավո՞րս ե...

Այս ասելով, նա շտապով վերկացավ, պահարանի վրայից վերցրեց ֆիսգարմոնիան և սկսեց նվագել ու հետը յերգել ինչ-վոր վրացական յերգ։ Մյուս սենյակում հիվանդ պառավի տնքտնքոցը սաստկացավ։ Բայց այրին մինչև չվերջացրեց յուր յերգը, չլռեց։ Հետո նա անցավ յուր սենյակը, շուտով զուգվեց և շտապով դուրս յեկավ տնից։

Տիկին Սալամբեկյանը ամբողջ որը զբաղված եր յուր պարտիզով և սաների համար հոգում եր ինչպես հարազատ մայր։ Սիրով հետևում եր նրանց առաջադիմությանը, ուսումնասիրում եր ամեն մեկին, վաղորոք գուշակություններ եր անում, թե այս կամ այն յերեխայից ապագայում ինչ դուրս կգա։ Ամեն որ, դասերը ավարտելուց հետո, վոգևորված պատմում եր յուր «սիրելի զավակների» մասին։

«Չգիտես ինչ յերջանկություն ե այդ անմեղ եյակների շրջանում լինելը։ Մարդ ինքն էլ յերեխա յե դառնում նրանց հետ։ Մինչև մահ չպիտի թողնեմ այդ շրջանը...»։

Յեվ նրա զվարթ դեմքը, հոգեկան յեռանդուն տրամադրությունն ակամա շարժում եյին Գայանեյի նախանձը։ Վորքան կյանքը ժպտում եր յուր արժանավոր ընկերուհուն և ինչպես նա բախտավոր եր ամուսնության մեջ։

Մի ժամանակվա ծույլ-պեսսիմիստ բժիշկ Սալամբեկյանն այժմ,

կարծես, բոլորովին յուր հայացքը փոխել էր կյանքի մասին։ Հիվանդներին ընդունելուց և այցելելուց հետո, նա յուր ամբողջ ժամանակը նվիրում էր տնային պարապմունքներին։ Նա օրինակելի ամուսին էր և հոգատար, մինչև անգամ մանրակրկիտ տանտեր։ Մի րոպե հանգիստ չէր նստում յուր տեղը, միշտ զբաղված էր մանր-մունր գործերով։ Հոգեկան փոփոխությունն ազդել էր և՛ նրա մարմնի վրա։ Այժմ նա դեմքով առողջ էր, զվարթ, մինչև անգամ աչքի ընկնելու չափ չաղացել էր։

Երբեմն նա այցելում էր Դիմաքսյանին և շատ ցավում էր, վոր յուր ընկերը յենթարկված է ընդհանուր հալածանքի։ Բացարձակ չէր ասում, բայց մտքում սկսել էր մի փոքր քննադատել յուր ընկերոջ ուղղությունը։ Արդյոք, ծայրահեղ արմատական չէ՞, ինչու ամբողջ հասարակությունն յուր դեմ վոտքի յե կանգնեցնում, միթե չի՞ կարող ավելի խաղաղ գործել։

Նա մտածում էր և՛ Գայանեյի մասին, աշխատում էր վորևե կերպ թեթևացնել նրա վիճակը և գիտեր, վոր այդ կարելի յե միայն զավակներին իրանց մորը վերադարձնելով։ Հաճախ նա խոսում էր Վեքիլյանի հետ, խնդրելով սրան միջնորդել Բարաթյանի մոտ։ Բայց օրենսգետ իրավաբանը այս դեպքում վոչ մի «արդարացուցիչ» պատճառ չէր ուզում ընդունել, բացի օրենքի տառացի մտքից։ Կինն յուր կամքով է հեռացել մարդուց, յերեխաները օրենքով հորն են պատկանում։ Դրա դեմ վոչինչ չի կարելի անել։

Երբեմն բժիշկը փողոցում հանդիպում էր Բարաթյանին։ Նրանք շատ սառն բարևում եյին միմյանց և անցնում։ Մի անգամ նա մոտեցավ յուր նախկին ընկերոջը, կամենալով անպատճառ իմանալ նրա մտադրությունը յերեխաների վերաբերմամբ։ Բարաթյանը նախ շատ անտարբեր ընդունեց նրա ակնարկները, ապա սկսեց յուր դրությունը բացատրել։ Նա վոչ իրան է մեղադրում, վոչ Գայանեյին։ Հայացքների «տարբերությունն»—ահա այն գլխավոր պատճառը, վոր բաժանեց նրանց միմյանցից։

—Ես վոչինչ վոխ չունիմ այդ կնոջ դեմ և հոգով-սրտով ցանկանում եմ, վոր նա բախտավոր լինի, առանց ամուսնի, առանց յերեխաների։

—Բայց առանց յերեխաների նա դժբախտ է, միթե մտադիր ես միշտ նրան զրկած պահել յուր զավակներից,—հարցրեց բժիշկը։

—Ես մի անգամ ուղարկեցի, ելի, յերեխի, կուղարկեմ մի ժամով, կես ժամով։

—Այդ շատ քիչ է, դու պետք է ավելի բարեսիրտ վարվես։

—Այդ մասին վոչ մի խոսք. յերեխաները ինձ են պատկանում, իրավունք ունիմ բոլորովին չուղարկել։

Բժիշկը չկարողացավ հակառակել և հեռացավ վիրավորված։

Այդ խոսակցությունից մի քանի օր անցած Բարաթյանը կանգնեցրեց նրան փողոցում, և մի կողմ տանելով, հայտնեց յուր վճիռը.

—Գիտես, յես իմ յերեխաներին սիրում եմ, չեմ ուզում, վոր նրանք զուրկ մնան իրանց մորից։ Վճռեցի, վոր նրանք մի ամիս իրանց մոր մոտ ապրեն, մի ամիս ինձ մոտ։ Բայց մի պայման եմ դնում. չլինի թե նա յերեխաների սրտում իմ դեմ ատելություն զարթեցնի... այդ պատահում է։

—Գայանեն այնքան խելոք և բարի կին է,—պատասխանեց բժիշկը,—վոր յուր յերեխաների հոգին չփչացնելու համար այդ բանը չի անիլ։ Շնորհակալ եմ, յես իսկույն կշտապեմ քո վճիռը հայտնել նրան և ուրախացնել։

Յերրորդ օրը Գայանեն յուր սենյակում լուսամուտի առջև նստած կար եր անում յուր միտքը զբաղեցնելու համար։ Փողոցից նրա ականջին հասավ մի ծանոթ կանացի ձայն։ Նա գլուխը դուրս բերեց լուսամուտից, նայեց դուրս և իսկույն մի ուրախ ճիչ արձակեց, կարը ձեռից ձգելով։

Պառավ դայակը մի ձեռով բռնած հինգ տարեկան Թամարին, մյուսով յերեք և կես տարեկան Լևոնի ձեռը, զվարթ դեմքով սանդուխքով բարձրանում եր։ Ուրախությունից նրա լեզուն անատամ լնդերքի միջից դուրս եր ընկել, և նա հազիվ հազ շունչ եր առնում, շտապելով ուրախացնել կարոտած մորը։

Գայանեն սեղմեց կրծքին յերկուսին միասին և յերկար ժամանակ համբուրում եր մերթ մեկին, մերթ մյուսին, կրկնելով.

—Վերջապես, վերջապես...

Յերբ նա յուր սրտի փափագը մի փոքր հագեցրեց, դայակը հառաչելով հաղորդեց, թե անդամալույծ Գերասիմ Գերասիմիչը առավոտյան լուսաբացին հոգին ավանդել է։ Լուրը Գայանեյի վրա տպավորություն չգործեց, այնքան դեռ նրա միտքը զբաղված եր յերեխաներով։

—Յերեկ յերեկոյան յերեխաներին կանչեց, համբուրեց, մեկ մեկ օրհնեց։ Ձեր անունն էլ հիշեց, ձեզ էլ օրհնեց, աստված վկա, օրհնեց։ Ասաց, Ֆեոդորա, կասես հարսիս, յես օրհնում եմ, լավ կնիկ է, թող հաշտվի վորդուս հետ...

Հետո պառավ դայակը ավելացրեց, թե յերիտասարդ պարոնը հիվանդ է։ Վեց տարվա կենակցությունը զուր չեր անցել։ «Սովորություն» զգացումը Գայանեյին չթողեց շատ էլ անտարբեր լսել այդ լուրը։ Բայց յերբ դայակի պատասխաններից իմացավ, վոր Բարաթ-

յանի ցավը ուրիշ վոչինչ է, յեթե վոչ այն ժառանգական հիվանդությունը, վոր տարենը կամ յերկու տարենը մի անգամ պարբերաբար կրկնվում է — նա ձեռով մի բացասական շարժում արեց, մի շարժում, վոր արտահայտում եր նրա պարզ զզվանքը, և գրկեց յուր Լեոնիկին:

Մի քանի որ նա վոչ մի բանի մասին չեր մտածում, բացի յերեխաներից և ամբողջ ժամանակ նրանցով եր զբաղված: Բայց անցան այդ որերը, նրա սիրտը կշտացավ, և նորից նա սկսեց տխրել: Ինչ և լիներ, դրությունը անորոշ եր, չգիտեր ինչ ապագա յե սպասում յերեխաներին:

Գերասիմ Գերասիմիչի թաղման որը նա մենակ նստած եր յուր սենյակում և հիշում եր անցկացրած դառն որերը: Նա կրկին հուզվեց, կրկին արտասվեց և, գլուխը դնելով բարձին, սկսեց հեկեկալ: Նա վողբում եր յուր քայքայված, խորտակված կյանքը և դժբախտ յերիտասարդական որերը: Ո՛հ, անցած կորած հույսեր, վոր մի ժամանակ այնպես վոգևորում եյին նրան, միթե չպիտի՞ վերադառնաք: Ինչու նա այնպես մոլորվեց, ինչու նա չունեցավ վեց տարի առաջ կյանքի մասին այն հայացքը, վոր ունի այժմ: Ինչու չմտածեց, վոր ընտանեկան յերջանկությունը չպիտի վորոնել ամուսնու վոչ արտաքին գեղեցկության, վոչ աշխարհային շուքի և փայլի, այլ նրա հոգեկան և բարոյական արժանավորությունների մեջ: Յեվ այժմ, յերբ նա կրում է յուր դառն սխալի պատիժը, յերբ նրա աչքերը բացվել են, մի՞թե արհամարհի ամեն ինչ և ընկնի մի նոր յերջանկության հետևից: Ո՞ւր, ի՞նչպես, մի՞թե աչքերը փակելով հասարակական որենքների, արմատացած ավանդությունների և նախապաշարմունքների առջև, մի՞թե ապորինի կենակցության մեջ վորոնելով այդ յերջանկությունը: Վոչ, վոչ, դարձյալ վոչ, այդ անկարելի յե, անհնարին, վերջապես այդ բարձր է նրա բարոյական ուժերից: Ուրեմն, հեռու մոլորություն, հեռու խարուսիկ հույսեր, նա չի ուզում յուր սեփական բախտի համար զավակների վիճակը յենթարկել վտանգի, ահա այդ անմեղ, սիրուն և քնքուշ եյակներին...

«Մայրի՛կ, ինչու յես լալիս»:

Տեսնելով նույն պահին ներս վազող Թամարին, Գայանեն շտապով յերեսը դարձրեց, աչքերը սրբեց և աշխատեց ժպտալ: Փոքրիկ աղջիկը զգաց նրա կեղծիքը և կրկնեց յուր հարցը, բայց պատասխան չստացավ:

— Մայրի՛կ, յե՞րբ պետք է գնանք, — ասաց նա, մի փոքր լռելուց հետո:

— Ո՞ւր:

— Հայրիկի մոտ։
— Երբ որ դու կամենաս։
— Ես ուզում եմ հենց հիմա։
— Գնա, եթե ուզում ես։
— Դու չե՞ս կգա մեզ հետ։
— Ո՛չ։
— Ինչո՞ւ։
Մայրը չիմացավ ինչ պատասխանել։
— Մայրիկ, ինչո՞ւ դու այստեղ ես մնում։
— Ես... մնում եմ... հյուր եմ...
— Այդքան ժամանակ հյուր կլինե՞ն։
Մայրը կամեցավ ասել աղջկան, որ, վերջապես, դադարի այդ սիրտ մորմոքող հարցերը տալուց։ Բայց նայեց նրա մանկական անուշ հետաքրքրությամբ լի աչքերին և մի սուր ցավ զգաց յուր սրտում։ Ոչինչ չէր կարելի անել. մատաղ սրտում արդեն կասկածը արմատ էր գցել։ Պարզ էր, որ այդ փոքրիկ գլուխը զբաղված է յուր մոր վիճակով և բնազդմամբ հասկանում է այդ վիճակը։
«Աստված իմ, աստված իմ — ասաց մտքում Գայանեն, ձեռը Թամարի ուսին դրած, աչքերը վեր բարձրացնելով, — ուժ տուր ինձ, որ կարողանամ այս ցավին դիմանալ...»։

XVI

Այն օրից, ինչ որ Դիմաքսյանը խորհել էր Գայանեյին յուր սիրտը պարզելուց առաջ, այժմ մնում էր մի միտք, թե պետք է հեռանա և չի կարող չհեռանալ Թիֆլիսից։
Օր օրի վրա նա յուր կառավարչից սպասում էր փողի։ Յուր հետ բերած փողերից այժմ նրա մոտ համարյա ոչինչ չէր մնացել, թեև բերել էր բավականաչափ գումար։ Յուր վրա նա առհասարակ ծախսում էր շատ քիչ, բայց այս անգամ ունեցավ արտաքո կարգի ծախսեր։ Նրա տեսչության ժամանակ դպրոցից արտաքսված աշակերտները աղքատ վիճակի մեջ էին, բացի մեկից, որ գործակատարի պաշտոն էր գտել մի վաճառականի մոտ։ Զորս աշակերտի նա տվեց ճանապարհածախս և ուղարկեց հայրենիք։ Իսկ հինգերորդը — Մարաքյանը, այն ընդունակ աշակերտը, որին նա ամենից ավելի էր սիրում, ոչ ուզում էր հայրենիք վերադառնալ և ոչ էլ միջոց ուներ քաղաքում ապրելու։ Նա այնքան ինքնասեր էր, որ ամաչում էր վռնդված աշակերտի անունով ներկայանալ յուր ծնողներին։ Նա ու-

զում եր անպատճառ, ինչպես և իրեն, ուսումը շարունակել, մինչև անգամ փափագում եր համալսարան մտնել և ասում եր, յեթե այդ չհաջողվի — ինքնապատրաստություն կգործի։

Յերբ Դիմաքսյանը անձամբ հարց ու փորձ անելով այս բոլորը իմացավ, վճռեց օգնել այդ գյուղական ինքնակամ, կոպիտ, բայց ընդունակ յերիտասարդին։

— Դու կստանաս բարձր կրթություն, — ասաց նա մի օր Մարաքյանին յուր տանը, — յես քեզ վերցնում եմ իմ հովանավորության տակ։

«Բաքի լոռեցին», ինչպես կոչում եյին նրան ուսուցիչները, այնքան զգացվեց, վոր նրա աչքերի մեջ ուրախության արցունք յերևաց։ Դիմաքսյանը խորհուրդ տվեց նրան գնալ Ռուսաստան։

— Այնտեղ դու կարող ես պատրաստվել մի տարի, գիմնազիական քննություն տալ և հետո մտնել համալսարան։ Աշխատիր իմ հույսերը արդարացնել։

Քիչ ժամանակ անցած Մարաքյանը ստացավ ճանապարհածախս և ամբողջ տարվա թոշակը, ուղևորվեց Օդեսա։

Վերջապես Դիմաքսյանը ստացավ կառավարչից սպասած նամակը և բարկացած ձգեց մի կողմ։ Փող ուղարկելու փոխարեն Հարիգյանը հաղորդում եր մանրամասն տեղեկություններ նրա գործերի մասին։ Միայն նամակի վերջում նա ավելացնում եր. «Հինգ օրից հետո կուղարկեմ չորս հարյուր ռուբլի»։ Այս տողը ավելի գրգռեց Դիմաքսյանին։ Նրան ամենաքիչը յերկու անգամ ավելի յեր հարկավոր և դեռ համոզված եր, վոր յուր պահանջը շատ չափավոր է։

Նա ուզեց իսկույն հեռագրել Հարիգյանին և պահանջել, վոր յուր պատվերը անհապաղ կատարի։ Բայց այդ տեսակ մի հեռագիր կարող եր գուցե վիրավորել նրա ընկերոջը։ Այնինչ՝ նամակ գրելու համբերություն չուներ։ Առանց յերկար մտածելու նա վճռեց հենց վաղն իսկ ճանապարհ ընկնել հայրենիք կարճ ժամանակով։

Առավոտը կանուխ զարթնելով, նա մի նամակ թողեց Մսերյանի անունով և անմիջապես ուղևորվեց։

Այս անգամ ճանապարհորդությունը նրա վրա բոլորովին ուրիշ տպավորություն ունեցավ։ Կար ժամանակ, յերբ նա գրեթե ակամա յեր դիմում դեպի յուր ծննդավայրը, իսկ այժմ շտապում եր վորքան կարելի յե շուտով հասնել այնտեղ։ Նա փափագում եր որ առաջ տեսնել յուր քույրերին, վորոնց, կարծես, շատ տարիներ եր չեր տեսել։ Նրան թվում եր, վոր այնտեղ, յուր արյունակիցների շրջանում միայն կարող է գեթ ժամանակավոր մխիթարություն գտնել և հանդիմանում եր իրան, թե ինչու այդ մասին առաջ չեր մտածել։

Հեռանալով այն քաղաքից, ուր նա յոթ տարի շարունակ անց եր կացրել փոթորկալից կյանք, զգում եր, վոր յուր հետևում թողնում է մի տեսակ բեռն, վորից բաժանվելը և՛ ցանկալի չեր, և՛ դառն։ Նա հիշում եր յուր կրած վշտերը և, կարծես, մի ներքին ձայն շշնջում եր, թե այդ վշտերը կարող եյին առաջանալ հենց այն մթնոլորտում միայն, վորտեղից հեռանում եր։

Նա ուզում եր հոգով անձնատուր լինել լայնատարած դաշտերի, անտառների և լեռների ազդեցությանը։ Յեվ պատահում եյին րոպեներ, յերբ նա մոռանում եր ամեն ինչ և թարմանում գարնանային ոգով արձակ բնության մեջ։ Բայց անցնում եյին այդ րոպեները, նորից գրգռվում եյին ցավված, խեղդված զգացումները, և դարձյալ թվում եր նրան, թե այդ զգացումներից գուցե կարող է ազատվել միայն յուր արյունակիցների շրջանում։ Յեվ ահա ամեն փոստային կայարանում նա անհամբերությունից բարկանում եր, վոր ձիերը ուշ են փոխում։ Նա անընդհատ կաշառում եր կառավարներին շտապել և անդադար շտապել դեպի առաջ։

Յերկու օրվա ճանապարհը նա այս անգամ կտրեց յերեսուն ժամվա մեջ, գիշերը վոչ մի տեղ կանգ չառնելով։ Նա շտապեց մտնել հայրենի տունը։ Այստեղ այժմ բնակվում եր նրա մեծ քույրը — այրին Մարթան յուր ընտանիքով։ Մռայլ և նիրհած տունը այժմ կենդանություն եր ստացել։ Որը մինչև յերեկ ընդարձակ պարտեզի մեջ թաչկոտում եյին Մարթայի յերեքից մինչև ինը տարեկան յերկու զույգ յերեխաները։ Փողոցի կողմի լուսամուտները բացվել եյին, արևի կենդանացուցիչ լույսը առատորեն հոսում եր ներս, դեպի մաքրված, նորոգված սենյակները։ Պատերը ծածկվել եյին ուրախ գույնի պաստառներով, հատակները ներկվել եյին, կահ-կարասին փոխվել։ Խոհանոցից լսվում եր ամանեղենի և պղնձեղենի ձայներ։ Ախոռատանը խրխնջում եր մի նժույգ, վոր պատկանում եր Մարթայի ամուսնուն, լսվում եր Զատկի տոներին յերեխաների համար բերված գառնուկների մլավոցը։ Մի նորատի հայ աղախին վազում եր յերեխաներին սաստելու, վոր պարտեզի ծաղիկները չփչացնեն։

Ամեն ինչ փոխվել եր, նորոգվել, զվարթացել։ Նույն իսկ պտղատու և անպտուղ ծառերը, կարծես, ավելի ուրախ եյին նայում, գոնե այսպես եր թվում Դիմաքսյանին։ Պատշգամբի վրա այլ ևս չեր յերևում այն հնամաշ փայտյա մեծ բազկաթոռը, վոր միշտ միևնույն տեղն եր լինում և վորի վրա նստում եր հանգուցյալ Մարգար աղան։

Դիմաքսյանը ներս չմտած առանձին-առանձին բռնեց յուր քրոջ զավակներին, համբուրեց, այստեղ միայն հիշելով, վոր պետք է այդ փոքրիկների համար նվերներ բերեր։

Տիկին Մարթան նրան դիմավորեց, վազելով պատշգամբ և ուրախ բացականչելով։

— Փառք աստուծո, փառք աստուծո...

Նա Արսենից յերկու տարով մեծ էր, բայց դեռ պահպանել էր յերիտասարդական թարմությունը, չնայելով յոթերորդ բերքին։ Նրա դեմքի բարի, հեզ արտահայտությունը և մուգ գույնի թախծալի աչքերը, մանավանդ կակուղ ձայնը հիշեցնում էին յուր մորը։ Նա հագնվում էր անխառն յեվրոպական տարազով—այսպես կամենում էր նրա ամուսինը, վոր արքունական պաշտոնյա լինելով, մեծ մասամբ յուր ոտարազգի պաշտոնակիցների շրջանում էր պտտում

Նա մի քանի անգամ յեղբորը համբուրելուց հետո, անմիջապես ծառային ուղարկեց յուր կրտսեր քրոջը կանչելու։ Կես ժամ անցած յեկավ Արսենից չորս տարով փոքր Անիկը։ Յերկու քույրերի արտաքինի, ինչպես և ներքին հատկանիշների մեջ կար խիստ տարբերություն։ Հասակով Անիկը ավելի բարձր էր, կազմվածքով խոշոր, թեև վոչ այնքան գեր։ Նրա յերեսի գծերը կանացի փափկության հետ ունեյին նաև մի ինչ-վոր ազդու տղամարդային արտահայտություն։ Իսկ փոքր ինչ լայն ծնոտը, սղմված շրթունքները հիշեցնում էյին Մարգար աղային։ Հետևելով յուր ավագ քրոջ որինակին, նա նույնպես յեվրոպական տարազով էր հագնվում։

Նա, գոնե արտաքուստ, մի առանձին ուրախություն ցույց չտըվեց յեղբորը տեսնելով։ Նա միայն մի անգամ համբուրվեց նրա հետ, հարցնելով.

— Լա՞վ ես։

Արսենը այս անգամ սովորականից ավելի հետաքրքրված հարցնում էր յուր քույրերի կենցաղավարության մասին։ Այնինչ՝ քույրերն ստիպում էյին նրան պատմել յուր կյանքից։ Մարթայի աչքում նա և՛ նիհարել էր, և՛ ծերացել։ Սկզբում կատակով, ապա լրջորեն յերկու քույր հանդիմանեցին իրանց միակ յեղբորը, թե ինչու մինչև այժմ չի ամուսնացել։ Այս կողմից ավելի խիստ էր Մարթան։

— Ինչու՞ ես հորդ տունը անտեր թողնում,— ասում էր նա,— ինչու՞ մեզ չես ուզում ուրախացնել։ Աստծուն է հայտնի, սիրտս կտոր կտոր էր լինում ամեն անգամ այս տան մոտով անցկենալիս։ Յես կարծում էյի մի ավերակի մոտով եմ անցկենում։ Վերջը՝ էլ չհամբերեցի, յեկա այստեղ ապրելու։ Խեղճ մայր, մտքովդ անց կկենա՞ր, վոր քո մի հատիկ աչքի լույս վորդին այսոր պետք է ծնողներից զուրկ, քույրերից հեռու, հոր տնից դուրս, ով գիտե ինչ յերկրում կյանք անցկացնի։

Նրա ձայնը զգացվեց, աչքերը արտասվեցին։

— Մի՞թե ամուսնությունը շատ լավ բան է, վոր ինձ էլ խորհուրդ եք տալիս ամուսնանալու,— հարցրեց Արսենը լոկ այն նպատակով, վոր իմանա վո՛րքան յուր քույրերը յերջանիկ են ընտանեկան կյանքում։

— Ամուսնությունը մի պարտք է, լավ — վատ, ամեն մեկը պարտավոր է կատարել,— պատասխանեց Մարթան։

— Բայց այդ պարտքը շատերին է թանգ նստում։ Դու ուրա՞խ ես, վոր ամուսնացել ես։

— Վոչ ուրախ եմ, վոչ տխուր, բախտիցս գանգատվել չեմ կարող, ինչ վոր ճակատիս գրված է, պետք է կատարվի։ Բայց ելի փառք աստուծո, յերեխաներովս բախտավոր եմ։

— Իսկ դու, Անիկ...

— Ինձ համար միևնույնն է։

— Մարդդ քեզ հետ լա՞վ է վարվում։

— Այդ մասին մի՛ հարցնիլ,— մեջ մտավ Մարթան ծիծաղելով,— Անիկը այն կանանցից չէ, վոր յուր մարդու խոսքի տակ մնա...

Մի թեթև ժպիտ անցավ Անիկի դեմքով. պարզ էր, վոր քրոջ ասածը նրան դուր չեկավ։ Հոր չափ համառ և ինքնակամ՝ նա ընտանեկան կյանքում ձգտում էր կին-բռնակալի դեր կատարելու՝ սկսած այն որից, յերբ Արսենը տվեց նրան յուր ժառանգության մի մասը։ Վորովհետև նրա ամուսինն էլ հեշտ հպատակվողներից չէր, ուստի յերբեմն նրանց մեջ տեղի եյին ունենում ընտանեկան խռովություններ։ Բայց յերբեք այդ խռովությունները ծայրահեղության չեյին հասնում, վորովհետև մարդը միշտ զիջողություն էր անում, նախ՝ յուր ընտանեկան կյանքը շատ էլ չթունավորելու համար, յերկրորդ՝ համոզված լինելով, վոր յուր համառության տակ Անիկը ունի իսկապես բարի հոգի...

Շուտով յեկավ Մարթայի ամուսինը պաշտոնական համազգեստով, կռնատակին բռնած մի մեծ պորտֆել։ Դա մի հաստափոր մարդ էր բարակ վոտներով։ Բարևելով Արսենին ռուսերեն լեզվով, վոր քաղաքակրթության նշան էր համարում, նա մի քանի անգամ գրկեց նրան, գոչելով. «Ն ա կ ա ն ե ց, Ն ա կ ա ն ե ց»... Յեկավ և՛ Անիկի ամուսինը, վոր, հակառակ յուր քենակալին, նիհար դեմքով, չոր կազմվածքով մի բարձրահասակ մարդ էր, պարապվում էր վաճառականությամբ։

Ընտանեկան ճաշը անցավ բավական ուրախ, շնորհիվ Մարթայի ամուսնու, վոր անդադար խմում էր, սրախոսում, ծիծաղում և ծիծաղեցնում։

Իրիկնադեմին Դիմաքսյանը ծառային ուղարկեց Հարիֆյանին

կանչելու։ Հայտնվեց, վոր կառավարիչը գնացել է մոտակա գյուղերից մեկը և միայն վաղը պետք է վերադառնա։ Այժմ Դիմաքսյանը, հակառակ սովորականին, շատ հետաքրքրված էր յուր գործերի դրությունով, փափագում էր տեսնել կալվածները։

XV

Հետևյալ առավոտ նա նոր էր զարթնել, յերբ ծառան հայտնեց Հաբիգյանի գալստյան մասին։

Ներս մտավ առողջ կազմվածքով, արևից այրված պղնձագույն դեմքով մի տղամարդ, մոտ յերեսուն ու յերեք տարեկան։ Նա հագած էր կոշտ մոխրագույն կտորից կարած կարճ բաճկոն և յերկայն կոշիկներ, վոր ծածկված եյին թանձր սպիտակ փոշիով։

Դիմաքսյանը ընդունեց նրան այն սենյակում, վոր մի ժամանակ ծառայում էր Մարգար աղային։ Բոլոր հին կահկարասիներից այստեղ մնում էր միայն յերկաթյա ժանգոտած սնդուկը, վորի մեջ այժմ վոչինչ չկար։

Հաբիգյանը նոր էր վերադարձել գյուղից և ճանապարհի հագուստը չփոխած շտապել էր Դիմաքսյանի մոտ։

— Գնացել եյի ապառիկներ ժողովելու,— ասաց նա, անմիջապես դիմելով գործին, ինչպես մի մարդ, . վորի համար ամեն մի րոպեն թանգ արժեր, — այսոր ուզում եյի փոստով ձեզ համար փող ուղարկել, շատ լավ յեղավ, ինքներդ յեկաք։

Դիմաքսյանը ընդհատեց նրա խոսքը, առաջարկելով խոսել յուր հետ «դու»-ով, ինչպես առաջ։

Արդարև մի ժամանակ նրանք ընկերներ եյին և բավական մոտիկ ընկերներ։ Հաբիգյանը գյուղական քահանայի վորդի էր, սկզբնական կրթությունը ստացել էր Դիմաքսյանի ծննդավայր քաղաքի հոգևոր դպրոցում։ Հետո նա յուր մի վաճառական քեռու ոգնությամբ տեղափոխվել էր Թիֆլիս և մտել ռեալական դպրոց։ Պանդխտության մեջ յերկու հայրենակից պատանիները ընկերացել եյին և դեռ այդ ժամանակ արդեն նրանց ապագա հայացքների մեջ պարզվեց մի խիստ տարբերություն։

Մինչ Դիմաքսյանի յերևակայությունը պատանեկական հասակում զարմանալի թռիչքներ էր անում, մինչ նա փայփայում էր մի իդեալ, վոր քանի գնում այնքան զարգանում էր, հասունանում և բարդանում, Հաբիգյանը, այդ լուռ, սառն և միշտ յուր դասերով զբաղված պատանին, հիանում էր յուր հայրենակցի իդեալով, բայց յերբեք

չէր հափշտակվում։ Ծնված և սնված լինելով գյուղական շրջանում, նա տեսել էր չքավորության դառնությունները և մասամբ փորձել յուր վրա։ Եվ յուր համար լոկ կազմել էր մի ուրիշ, ուրույն գաղափար թե՛ յուր ապագայի և թե առհասարակ կյանքի մասին. մի գաղափար, վորի առջև նսեմանում էին և գրեթե վոչնչանում բոլոր մյուս գաղափարները։

Մարդկանց թշվառության հիմնաքարը նա համարում էր աղքատությունը։ Սրանից էին ծագում նաև տգիտությունը, փոխադարձ նախանձը, ատելությունը և թշնամությունը։ Երբ Դիմաքսյանը նրա մոտ վոգևորված խոսում էր ժողովրդի բարոյական վերածնության մասին, նա պնդում էր, թե վոչինչ վերածնություն չի կարելի մտցնել մի ժողովրդի մեջ, ուր մարդկանց ամբողջ ժամանակը և բոլոր հոգեկան ուժերը սպառվում են ստամոքսի համար։ Եվ ժողովուրդ ասելով, Հաբիգյանը միշտ աչքի առաջ ուներ յուր գյուղի համայնքը։ Այստեղ էր հիմք առել և այստեղից էր սկսվում նրա ամբողջ աշխարհայեցողությունը, վոր շատերին թվում էր նեղ, սահմանափակ։ Եվ վորքան նրա միտքը լուսավորվում էր, այնքան սիրտը մոտենում էր այդ համայնքին. մի բան, վոր շատ քիչ գյուղացի ուսանողների մեջ է նկատվում։

Մոսկվայի գյուղատնտեսական ճեմարանի յերրորդ կուրսը նոր անցած, նա հիվանդացավ և ստիպվեց վերադառնալ հայրենիք։ Քիչ ժամանակից հետո այստեղ բոլորովին կազդուրվեց, բայց հայրը չկամեցավ, վոր նա նորից գնա հյուսիս։ Այն ժամանակ նա վճռեց անպատճառ, ինչպես և լինի շարունակել յուր ուսումը արտասահմանում և թախանձեց հորը՝ վոչինչ չխնայել։ Գյուղական համեստ քահանան, վոր ինքը հազիվ գրել կարդալ գիտեր, հասկանում էր գիտության ուժը։ Նա գրավ դրեց յուր այգին, պարտքի մեջ ընկավ, վորպեսզի յուր վորդուն կրթված տեսնի։

Չորս տարի Հաբիգյանը արտասահմանում վարեց այնպիսի սուղ կյանք, վոր վոչ մի աղքատ ուսանող չէր վարել։ Վերջապես, նա հասավ յուր նպատակին, վերադարձավ հայրենիք գյուղատնտեսական գիտությունների գործնական և տեսական պաշարով։ Նա սկսեց ոգնել յուր ցեղբայրներին, վոր պարապվում էին գինեգործությունով։ Բայց յուր մտադրությունները իրագործելու համար նրան պակասում էր մի բան—դրամագլուխ, վոր վոչ նրա հայրը ուներ և վոչ ցեղբայրները ունեյին։ Հենց այդ միջոցին Դիմաքսյանը հրավիրեց նրան յուր կալվածները կառավարելու, և նա ուրախությամբ ընդունեց այդ հրավերը։

— Արդյոք շա՞տ փող պետք է ուղարկեյիր ինձ համար,—հարցրեց Դիմաքսյանը ժպտալով։

— Այնքան, ինչքան խոստացել եյի նամակումս։

Այդ ինձ բավական չեր լինի։ Իմ այստեղ գալուս մի պատճառն էլ այն է, որ քեզ համոզեմ՝ շատ էլ ժլատ չլինես իմ վերաբերմամբ։

— Ինչ արած, ստիպված եմ ժլատ լինել։

— Ինչու, միթե յես այդքան աղքատացել եմ։

— Դու աղքատ չես, բայց յես ուզում եմ, վոր ավելի հարստանաս։

— Ապագայում։ Վոչ, յես այդ բանին համաձայն չեմ։ Լսիր, Հարիգյան, գուցե յես քո աչքում մի փոքր թեթևամիտ յերևամ, բայց ուղիղն ասած, իմ նյութական ապագայի մասին յես բոլորովին չեմ մտածում։ Ինձ հարկավոր չեն վոչ խոշոր գումարներ և վոչ մեծ կալվածատիրոջ անուն, թեև, համաձայն եմ, փողը մեծ ուժ է մեր ժամանակում։

Հարիգյանը, լավ ճանաչելով Դիմաքսյանին, վոչինչ չասաց։ Բայց գլուխը բացասական կերպով շարժեց, վոր արտահայտում եր թե՛ զարմանք և թե անհամաձայնություն ընկերոջ ասածին։

Կես ժամ անցած նրանք պտտում եյին տան առջև տարածված պարտեզում։ Այստեղ ևս նկատվում եյին փոփոխություններ։ Ծառուղիները հարթվել եյին, մաքրվել, կանոնավորվել, հնադարյան պարիսպը նորոգվել եր։ Յերևում եյին տեսակ-տեսակ նոր տնկած ծառեր, բույսեր, ծաղիկներ։ Յեվ այդ բոլորը Հարիգյանի գործն եր։

Պարտիզպանը նույն մարդն եր, վոր ծառայում եր Մարգար աղայի ժամանակից։ Այժմ վոչ վոք նրա վրա չեր գոռում, վոչ վոք չեր հայհոյում նրան, մանավանդ ծեծում, և նա ավելի սիրով եր աշխատում։ Նա ուրախ-ուրախ առաջնորդում եր յուր պարոնին, ցույց տալով բոլոր փոփոխությունները։ Պարտեզը, բացի գեղեցկանալուց և հարստանալուց, այժմ մի վորոշ յեկամուտ էլ տալիս եր. ավելացած պտուղները և մրգերը ծախվում եյին մրգավաճառներին։

Մի ժամի չափ անցուդարձ անելով պարտեզում, նրանք գնացին քաղաքի կենտրոնական շուկան։ Այստեղ Դիմաքսյանը ուներ մի շարք խանութներ և մի քարվանսարա, ուր կանգ եյին առնում քաղաք մըտնող սայլերը և ֆուրգոնները։ Մարգար աղայի կենդանության ժամանակ խանութները կիսավեր դրության եյին հասել, քարվանսարան քայքայվել եր, բակը պահվում եր կեղտոտ և միշտ լիքն եր ձիերի ու տավարի աղբի կույտերով։ Այժմ խանութների փլատակված պատերը նորոգվել եյին, մաշված ծածկոցները և դռները փոխվել եյին, ներկվել։ Քարվանսարայի բակը մաքրվել եր, քարով ծածկվել։ Հարիգյանը ասաց, թե ուզում է շուտով այդ բակի շուրջը կառուցանել մի նոր յերկհարկանի շինություն, վերևում բնակարաններ, ներքևում խանութներ։

Ճաշից հետո նրանք գնացին քաղաքի շրջակա այգեստանը։ Հա-

բիգյանը Դիմաքսյանին ընդարձակ քարաշեն դարբասով առաջնորդեց մի մեծ այգի։ Ծառերը նոր եյին կանաչել, պարարտ յերկիրը դեռ խոնավ եր անցյալ գիշերը յեկած անձրևից։ Խաղողի վորթերը արդեն տերևներ եյին արձակել և կանաչ սփռոցի պես ծածկել մի ընդարձակ տափարակ։ Հեռվում յերևում եր մի շինություն կարմիր աղյուսից։ Իրիկնադեմի արևի ճառագայթները լուսավորում եյին նրա կանաչադույն յերկաթյա յեռանկյունի կտուրը։ Այս շինությունը նոր եր և կառուցվել եր գինիի ու օղիի գործարանի համար։ Դեպի ձախ յերևում եր մի ուրիշ ավելի մեծ տափարակ խաղողի վորթերով ծածկված։ Դիմաքսյանը հիշում եր, վոր յուր հոր կենդանության ժամանակ այդ տարածությունը մնում եր անմշակ։ Այժմ Հաբիգյանը միացրել եր նրան մեծ այգիի հետ և սկսել շահագործել։

— Ահա ինչի վրա յեն փողերը ծախսվում,— ասաց կառավարիչը, Դիմաքսյանին առաջնորդելով աղյուսյա շինության ներսը։

Այստեղ դրված եյին մի քանի պղնձյա նոր կաթսաներ։ Մի վորմնադիր յուր օգնականի հետ շինում եր գործարանի վառարանները։ Դրսում լցված եյին մի խումբ մշակներ․ վոմանք հող եյին փորում, վոմանք խաղողի վորթերի համար ցիցեր եյին տնկում։

Հաբիգյանը պատմում եր յուր ձեռնարկությունների մասին այնպես դրական յեղանակով, վոր հատուկ ե գործնական մարդուն։ Նա նկարագրում եր այն մոտիկ ապագան, յերբ Դիմաքսյանի բոլոր կալվածների մշակությունը պիտի հասներ ցանկալի զարգացման և բարգավաճման։

— Դեռ շատ բան կա անելու, յեթե միայն թույլ կտաս։ Գինեգործության համար անհրաժեշտ ե արտասահմանից հրավիրել մի հմուտ վարպետ։ Ժամանակ ե մեր թթու գինիներից ձեռք վերցնել։ Ափսոս ե մեր խաղողը, կարելի յե նրանցից տասը տեսակ խմիչքներ պատրաստել։ Յես ինքս ուրախությամբ կպարապվեյի միայն գինեգործությունով։ Բայց աշխատանքի բաժանման մասին առայժմ մտածել չի կարելի, ուրիշ շատ գործեր ունեմ։ Պետք ե մի շոգեշարժ աղորիք շինել։ Վարուցանք անելու և հնձելու համար վատ չեր լինիլ մեքենաներ բերել տալ։ Կարելի յե այստեղ մի ուրիշ գործարան շինել միրգ չորացնելու համար։ Այս բոլորը փող ե պահանջում, և դու ասում ես, վոր յես ժլատ չլինեմ...

Որն արդեն մթնելու վրա յեր, յերբ նրանք վերադարձան քաղաք։ Ամբողջ յերեկո նրանք խոսում եյին գործերի մասին։ Դիմաքսյանը յերախտապարտաբար սեղմեց Հաբիգյանի ձեռը, հայտնելով նրան յուր շնորհակալությունը։ Նա հիացած եր յուր կառավարչի աշխատասիրու-

թյան վրա և, միևնույն ժամանակ, ուզում եր իմանալ նրա յեռանդի գրգիչ գաղափարը: Նա չեր հավատում, թե խելոք, կրթված, յեվրոպական քաղաքակրթության ճաշակն առած մի յերիտասարդ կարող է հոգեկան անթերի հաճույք գտնել լոկ նյութական գործունեության մեջ: Նա ուզում եր համոզվել, վոր Հաբիգյանի արտաքին գործնականության տակ թաքնված է մի հասարակական գաղափար, վոր նա չի ուզում պարզել:

Մի շաբաթ անցած նա այցելեց մի քանի գյուղեր, ուր գտնվում եյին նրա վարելահողերը: Այս ճանապարհորդությունը տևեց յերեք որ, և նա տուն վերադարձավ նորանոր տպավորությունների տակ: Նա գիտեր գյուղական ժողովրդի մտավոր և տնտեսական վիճակը, բայց գիտեր վոչ այնքան գործնապես, վորքան տեսականապես—գրքերի և լրագրների միջոցով: Ճշմարիտ է, մի քանի տարի առաջ նա ճանապարհորդեց Անդրկովկասի մի մասում, տեսավ գյուղեր, բայց արդյոք այդ ժամանակվա նրա հոգեկան տրամադրությունն եր պատճառը, թե մի ուրիշ բան, այդ մի ամսվա ընթացքում նրա համար չեր պարզվել գյուղացու դրությունը այնպես, ինչպես պարզվեց այժմ, յերեք որվա մեջ:

Յեվ պարզողը Հաբիգյանն եր: Գործնական մարդը նրա ուշադրությունը դարձրեց այն բոլոր առօրյա կարիքների վրա, վոր կազմում եյին մի ամբողջ ժողովրդի կյանքը: Նրանք անցան մի գյուղով, վորի բնակիչները հողի պակասությունից ազատվելու համար պատրաստ եյին իրանց «հարազատ զավակներին գրավ դնել», ինչպես ասում եր Հաբիգյանը: Անցան անբերրի, քարքարոտ հողերով, ուր գյուղացին գերբնական աշխատանք եր գործ դնում յուր որական պարենը վաստակելու համար: Մի գյուղից մի ուրիշ գյուղ անցնելու ժամանակ Հաբիգյանը ցույց տվեց խորդուբորդերով լի նեղ ուղին և նկարագրեց այն բոլոր վնասներն ու չարիքները, վոր առաջանում եյին կանոնավոր ճանապարհների բացակայությունից:

Վոչ մեկը նրանց այցելած գյուղերից ուսումնարան չուներ: Յերեխաները թափառում եյին փողոցներում, խաղալով հորթերի, շների և հավերի հետ, մերկանդամ, գլխաբաց, վոտաբոբիկ: Ամեն տեղ թագավորում եր մտավոր մթություն, մի թանձր, հուսահատեցուցիչ խավար, ուր վոչինչ և վոչինչ մխիթարական չեր նշմարվում: Բայց արդյոք այդ խավարի մեջ դեգերվողները գոնե զգում են լուսո կարոտը:

— Վո՛չ,—պատասխանեց Հաբիգյանը դրական յեղանակով,—նրանք միայն մի կարոտ են զգում —տնտեսական:

— Գուցե կարելի յե հասկացնել նրանց, վոր բացի չքավորությունից ունեն և մի ուրիշ թշնամի—տգիտությունը:

— Ես շատ անգամ եմ խոսել նրանց հետ այդ մասին, շատ եմ բացատրել գրագիտության նշանակությունը։ Նրանք միշտ լուռ ականջ են դնում այնպես, որ մարդ կարծում է համոզվեցին։ Բայց տեսնում ես, նայեցին միմյանց չերեսին և հետո անտարբեր արտասանեցին. «Աղա, շատ լավ ես խոսում»։

— Ուրեմն համաձայնվում են։

— Այո, բայց պետք է տեսնել, թե ինչպես և ինչ չեղանակով են ասում. «Աղա, շատ լավ ես խոսում»։ Կարծես, այդ խոսքերով մարդու գլխին սառը ջուր են ածում։ Պատահում է, որ չես մինչև անգամ բարկանում եմ նրանց վրա և գոռում. «Հիմարներ, դուք ձեր զավակների համար պետք է ուսումնարան պահեք»։ Բայց նրանք հարցնում են՝ «Բաս վարժապետի փողը վերտեղից գտնենք»։ Ցեվ միայն այս հարցը ինձ միշտ նեղն է գցում, չես մոփկ եմ անում նրանց վողորմելի դեմ-քերին և կամա ակամա լռում եմ։

— Ուրեմն քո կարծիքով վոչինչ միջոց չկա ժողովրդի մեջ լույս տարածելու,— գոչեց Դիմաքսյանը միքիչ վրդովված Հարիգյանի սառ-նասրտության դեմ։

— Ինչու. չէ. կա։

— Վ՞րն է։

— Իմ կարծիքով այն, վոր մեր կրթված չերիտասարդները մի փոքր ոգնեն ժողովրդին, չփախչեն նրանից այնպես, ինչպես այժմ։

— Աա, դա շատ սովորական դարձված է։

— Բայց զուտ ճշմարտություն է։

— Ցերևի, դու ուզում ես, վոր ամենքն էլ գան և քեզ նման գյուղատնտեսությամբ պարապվեն, չէ՞։

— Թեկուզ հեց այդ լինի իմ ցանկությունը, չե՞ս համակրում։

— Համակրում եմ, բայց, ասա խնդրեմ, ի՞նչ ոգուտ ունեն գյու-ղացիները դիցուք հենց քո այժմյան գործունեությունից։

— Ես այդ մասին չեյի կամենալ խոսել գոնե այժմ,— պատաս-խանեց Հարիգյանը սառը կերպով,— բայց քանի վոր հարցնում ես, կբացատրեմ...

XVI

Նրանք նստած եյին Մարգար աղայի սենյակում առանձին։ Դի-մաքսյանը փափագում եր ուսումնասիրել յուր ընկերոջ նիրքին աշ-խարհը, թափանցել նրա սիրտը և տեսնել՝ կա՞ արդյոք այնտեղ մի բարձր գաղափար։ Ահա ինչու նա խորին հետաքրքրությամբ, աչքերը հառած Հարիգյանի չերեսին, սպասում եր նրա բացատրությանը։

— Գիտես ինչ,— սկսեց Հարիգյանը հանդարտ ձայնով,— յես առհասարակ այն մտքի դեմ եմ, թե իբր հասարակական գործիչը պետք է լինի անսահման անձնվեր, անշահասեր։ Լավ է, վոր այդպես լինի, բայց դա գեղեցիկ և անիրագործելի ցնորք է։ Աշխարհիս յերեսին, իմ կարծիքով, չկա վոչ անպայման անձնվիրություն, վոչ առասպելական անշահասիրություն։ Յեվ յեթե կա, դա միայն հազվագյուտ ընտրյալների հատկություններն են, ընտրյալներ, վորոնք յերկար դարերի ծնունդ են։ Մարդիկ սովորաբար ուրիշների ոգտի համար գործում են յերկու շարժառիթներից դրդված—բարոյական և նյութական։ Բարոյականը—փառասիրությունն է, յեթե չասենք փառամոլությունը, նյութականը—շահասիրությունն է, յեթե չասենք շահամոլությունը։ Յերկու դեպքում էլ չկա և չի կարող լինել անպայման ինքնամոռացություն։

— Փառասիրությունից դրդված ուրիշների համար գործելը,— նկատեց Դիմաքսյանը,— ինձ համար դեռ հասկանալի յե, բայց ինչ ասել և շահասիրությունից գործել, այդ ինձ համար անհասկանալի յե։

— Կպարզեմ վորքան կարող եմ։ Յես աշխատում եմ քեզ հարըստացնել, վորովհետև ինքս էլ ոգուտ ունիմ քո հարստանալուց։ Դուցե, յեթե դու ինձ մի հայտնի տոկոս չտայիր քո յեկամուտներից, յեթե ծառայեյի մի ուրիշ ռոճիկով—ավելի պակաս յեռանդով վերաբերվեյի քո գործերին կամ ուղղակի անտարբեր լինեյի։ Բայց այժմ յես քո գործը իմն եմ համարում։ Ահա այստեղ իմ նյութական շահը իմ յեռանդի առաջին ստիմուլն է։

— Ընդունենք, վոր այդպես է. որինակը պարզ է, բայց վոչ այնքան հաջող։ Դու կապեցիր միմյանց հետ քո և իմ շահերը, բայց մենք յերկու անհատներ ենք, և դու ծառայելով իմ գործերին, չես կարող ասել, թե ծառայում ես հասարակությանը։

— Թող աստված հեռու պահի ինձ այն մտքից, վոր յերբ և իցե ինձ հասարակական գործիչ համարեմ։ Վոչ, յես այդ չեյի ուզում ասել։ Բայց կարծում եմ, վոր աշխատելով խելացի կերպով շահագործել քո կալվածները, դրանով այսպես թե այնպես հարստացնում եմ յերկրի ընդհանուր արդյունաբերությունը։

— Որինա՞կ։

— Որինակ, իմ և քո շահերը պահանջում են մի գյուղից մյուս գյուղ ճանապարհ շինել, մենք շինել ենք տալիս, և դրանով հեշտացնում ենք բոլոր գյուղացիների համար հաղորդակցության միջոցները։ Մեր անձնական շահերը պահանջում են մի շոգեշարժ աղորիք ունենալ—մենք շինում ենք, և դրանով միջոց ենք տալիս գյուղացիներին

կարճ ժամանակում և եժան գնով իրանց ցորենը աղալ։ Մենք ժամանակակից եղանակով մշակում ենք մեր հողերը, մեզանից որինակ են առնում մեր դրացիները։ Այս դեպքում մենք դառնում ենք մի տեսակ ուսուցիչ, քաղաքակրթություն տարածող գործոններ։

Մի վայրկյան նա լռեց, մի ծխախոտ վառեց և ապա շարունակեց նույն սառնասրտությամբ և դրական վոճով։

— Յես քեզ ցույց տվեցի հողեր, վորոնք ջրի պակասությունից չեն մշակվում կամ մշակվում են շատ անհաջող։ Յեթե մեր ծախսով այդ հողերով մի առու անցկացնենք, նախ, մենք ինքներս կունենանք մեծ շահ, յերկրորդ, գյուղացիները մեզ կհամարեն հավագույն բարերարներ, մեզ յերկրպագություն կտան, կպաշտեն։ Յես կարող եմ հարյուրավոր որինակներ առաջ բերել, բայց կարծեմ այսքանն էլ բավական է։ Այս է գործնական մարդու բերած օգուտը, այսինքն ինձ նման մի մարդու, վոր, յեթե ուզում ես, միայն իմ անձնական շահը ունիմ աչքի առջև։ Բայց ինչե՞ր կարող է անել մի ուրիշը, դիցուք հենց քեզ նման մի գաղափարական մարդ։ Դու ունես բավական մեծ հարստություն, և նա որից որ պետք է ավելանա։ Յեթե չես ուզում խոշոր դրամատեր կամ, ինչպես ասում ես, մեծ կալվածատեր լինել, շատ գեղեցիկ, մի՛ լինիր։ Բայց մի՛ թողնիր, վոր քո հարստությունը իզուր տեղը անգործ մնա։ Յեկ այստեղ, բաց արա քո հաշվով ուսումնարաններ աղքատ գյուղերում, թող հարյուրավոր գյուղական խեղճ մանուկներ ձրի կրթություն ստանան։ Հիմնիր մի գյուղատնտեսական դպրոց կամ մի որինակելի ագարակ և թող այնտեղ գյուղացիները դասեր առնեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերաբերմամբ։ Յեվ միթե այս միայն կարող ես անել դու։ Քո առջև գործելու մի այնպիսի ասպարեզ կա, վոր, ճշմարիտ, զարմանում եմ, ինչու դու արհամարհում ես այդ ասպարեզը և հուսահատ կռիվ մղում մի ամբողջ հասարակության դեմ։

Նա վոտքի կանգնեց, մի անգամ անցավ սենյակի մյուս ծայրը, հետ դարձավ, նորից նստեց և շարունակեց։

— Յես ինքս մեծ հետաքրքրությամբ հետևում եմ քո գործունեյությանը և, անկեղծ եմ ասում, զարմանում եմ քո յեռանդի, հոգեկան ուժի և մտավոր կարողության վրա։ Տեսնում եմ, վոր դու մեր թըմբած հասարակության մեջ մտցրել ես նոր մտքերի մի թարմ հոսանք։ Այո՛, այդ ամենը հարկավոր է, հիանալի յե և ծափահարության արժանի, բայց, ասա խնդրեմ, ի՞նչ վերջ պետք է ունենա քո կռիվը։ Չեմ ասում քեզ համար, քեզ այնքան պետք է հալածեն, վոր վերջը վոչընչացնեն ինչպես մի մարդու, վոր աշխատում է քանդել խավար ամբո-

խի համար սրբություն համարված վնասակար նախապաշարմունքները:
Այո՛, ինչ ուզում, անմիջական ուզում, պետք ե ունենա քո գործունեությունը այն թշվառ ժողովրդի համար, վորին քո աչքով տեսար: Մինչդեռ հենց այդ ժողովուրդն ե կարոտ վերակենդանության և հենց նրա անմիջական շահերի համար և նույնիսկ նրա շրջանում պետք ե գործել:

Վերջին խոսքերը արտասանելիս Հարիգյանի կոշտ ձայնի մեջ զգացվեց բավական մեղմ հնչյուն: Կարծես, նա փոքր ինչ զգացվել եր, յերկար տարիներից հետո առաջին անգամ այդպես մտերմաբար խոսելով յուր նախկին ընկերոջ հետ: Դիմաքսյանը լուռ լսում եր, առանց հերքելու նրա ասածները կամ համաձայնության որևե նշան ցույց տալու: Նա, կարծես, մտքում կշռում եր Հարիգյանի յուրաքանչյուր խոսքը:

— Կարելի յե յես սխալվում եմ,—շարունակեց Հարիգյանը,—բայց իմ խորին համոզմունքը այս ե. դու այստեղ, քո ծննդավայր հողի վրա, կարող ես ավելի օգտակար լինել, քան թե այնտեղ, ուր այժմ գործում ես: Այս պատճառով յես շատ ուրախ կլինեյի, վոր դու թողնեյիր ամեն ինչ և գայիր այստեղ գործելու: Այն ժամանակ քեզ հետ կարելի յե յես էլ միքիչ գաղափարական մարդ դառնայի և միայն իմ անձնական շահերից դրդված չաշխատեյի: Դու կտայիր ինձ ծրագիր—յես կկատարեյի, դու կլինեյիր կարգադրող—յես հրամանակատար, այդ ինձ համար թե հաճելի կլիներ և թե բարոյապես օգտակար:

Մի ժամանակ գրեթե միևնույնը առաջարկում եր և Մսերյանը: Բայց այնտեղ չեր զգացվում այնչափ հավատ, համոզմունք, վորչափ Հարիգյանի խոսքերի մեջ: Գուցե այդ նրանից եր, վոր իդեալիստի բերանով խոսում եր մի ժամանակավորապես վհատված հոգի, մի վշտացած սիրտ, կյանքի անհաջող դեպքերի տպավորության տակ: Դիմաքսյանը զգաց, վոր Հարիգյանը համեստությունից ե ասում, թե յուր գործունեյության շարժառիթը անձնական շահերն են: Նա կարծում եր, յեթե այդ մարդը լիներ նրա հարստության լիազոր տերը, նույնը պետք ե աներ, ինչ-վոր առաջարկում եր նրան:

Այս խոսակցությունից միքանի որ անցած Դիմաքսյանը մի անգամ ևս Հարիգյանի հետ ճանապարհորդեց գյուղերը և այս անգամ ավելի մոտիկ ծանոթացավ ժողովրդի կարիքների հետ: Այնուհետև հաճախ նա մտածում եր Հարիգյանի առաջարկության մասին: Հետևե՞լ արդյոք նրա խորհրդին, թողնե՞լ գործունեյության այժմյան յեղանակը, կտրե՞լ բոլոր կապերը մոտիկ անցյալի հետ և ընտրել նոր ասպարեզ:

Նա տատանվում եր, կասկածում, թե կարող ե ավելի օգտավետ

լինել այդ ասպարիզում։ Կար մի կետ, վոր նրա աչքին ներկայանում էր ինչպես մի մեծ խոչընդոտ․ յուր սրտի մեջ նա չէր գտնում բավականաչափ սեր դեպի գավառական կյանքը։ Նա զգում էր, վոր վոչ մի նպատակ չի կարող իրան յերկար ժամանակ պահել մի շրջանում, ուր չէր տեսնում մտքի պատերազմի համար քիչ թե շատ ընդարձակ ասպարեզ։ Վոչ, վոչ․ նա յուր մեջ չի գտնում խաղաղ, անխռով գործունեյության ձգտում, նա ծարավ է հասարակական կռվի։ Նա չէ կարող շնչել և ապրել առանց հավասար թշնամիների։

«Ավելի լավ է միշտ հալածվեմ, միայն թե կռվեմ այդ անշարժ հասարակության նախապաշարմունքների դեմ, քան թե թմրած կյանք վարեմ մի խուլ անկյունում։ Ի՞նչ կարող եմ անել գյուղական ժողովրդի համար․ ճանապարհնե՞ր շինել, ջրե՞ր անցկացնել նրա հողերով, ուսումնարաննե՞ր բաց անել։ Այդ բոլորը լավ գործեր են, մեծ գործեր են, բայց ինձ համար չեն։ Հարիզյանը ավելի հաջող կարող է կատարել այդ գործերը, քան թե յես, վորովհետև նա ավելի սերտ կապերով է կապված գյուղական ամբոխի հետ…»։

Յեվ միթե նա այդ գաղափարն էր փայփայել տարիների ընթացքում։ Մի՞թե յերբեք յերևակայել էր, թե յուր կյանքը պետք է դնի մի նեղ շրջանակի մեջ։

«Ներքևից սկսել, ինչպես ասում էր Մսերյանը և ինչպես կրկնում է այսօր Հարիզյանը։ Իսկ յեթե յես այդպիսի ձգտում չունե՞մ, միթե կեղծե՞մ, ստե՞մ և սկսեմ գործել հակառակ իմ զգացումների։ Վոչ, չեմ ուզում, չեմ կարող։ Թող դա լինի անհամեստություն, բայց յես իմ մեջ զգում եմ «վերևից» ազդելու ուժ։ Այո, յես չեմ կարող հասարակ գործիք լինել, բայց կարող եմ գործիքներ պատրաստել։ Յես այդ կապացուցանեմ և ընդունակ եմ ապացուցանելու։ Չէ՞ վոր յեթե մի կողմից ինձ հալածում են, մյուս կողմից կան մարդիկ, վոր ինձ հավատում են, վորոնց վրա յես ազդեցություն եմ արել․․»։

Դարձյալ նրա միտքը պարզվեց, սիրտը գրգռվեց։ Դարձյալ նրա աչքի առջև պատկերացավ մի լուսավոր ապագա, դեպի ուր վճռել է և պետք է դիմե յուր ամբողջ կյանքի ընթացքում։ Անցան րոպեյական տատանումները, կասկածները և նորից նա հետաքրքրվեց տեղական հասարակական կյանքով։ Նա հանդիպեց նույն սիրալիր ընդունելության, նույն հարգանքին, ինչ վոր առաջ։ Կրկին նրան շրջապատեցին այն մարդիկ, վորոնց մտքի և սրտի վրա նա ազդեցություն էր ունեցել։ Վոչ վոք կասկածանքով չէր վերաբերվում դեպի նա։ Յերևի, կամ նրա մասին տարածված լուրը չէր հասել յուր հայրենի քաղաքը կամ հասել էր, և վոչ վոք նշանակություն չէր տալիս նրան։

Որերը անցնում եյին որերի յետևից, և նա դեռ չեր մտածում Թիֆլիս վերադառնալու մասին։ Այն զգացումները, վոր այնքան տանջում եյին նրան, այժմ մեղմացել եյին և ճնշող ներգործություն չեյին անում նրա վրա։ Առավոտները նա զարթնում եր վաղ, զբոսնում եր պարտեզում, խաղում եր յուր քրոջ զավակների հետ, ապա փակվում եր յուր սենյակում և յերկար ժամանակ պարապվում։

Յերբեմն միայն առանձնության մեջ նրա սրտում բարձրանում եր մի թեթև փոթորիկ։ Նա հիշում եր յուր անցյալի ամենածանր րոպեները և ամենից պարզ ու վառ պատկերանում եր այն վերջին յերեկոն, յերբ նա խորհել եր ինքնասպանության մասին։ Վոչ, վոչ՛ այլևս նա այդչափ չի հուսահատվիլ, այդ րոպեները անցան, գնացին անդառնալի։ Այժմ նա բժշկվել ե և յեթե վոչ բոլորովին, շուտով շուտով կբժշկվի։

«Յես զգում եմ, վոր իմ մեջ մի ինչ-վոր փոփոխություն ե կատարվում,—գրում եր նա Մսերյանին յուր վերջին նամակում,—թե ինչ կլինի վերջը—չգիտեմ։ Բայց հույս ունիմ, վոր դու ինձ այլևս այնպես չես տեսնիլ, ինչպես եյի մի ժամանակ... Անցյալ նամակումս յես գրել եյի քեզ Հարիզյանի մասին, այո, նա հազվագյուտ մարդ ե։ Իմ մեջ հղացել ե մի միտք - ձեզ յերկուսիդ մոտեցնել միմյանց մի ընդհանուր գործով։ Այսպիսի մի գործ կա, և յես հույս ունիմ դու հանձն կառնես նրան ծառայելու։ Բայց առայժմ քեզ վոչինչ չեմ գրիլ այս մասին, շուտով անձամբ կտեսնվենք և կխոսենք... Մի կարծիր, վոր այստեղ անգործ նստած եմ, յերբեք յես այնպես զբաղված չեմ յեղել, ինչպես այժմ... Ցտեսություն, նամակ մի գրիր, սպասիր ինձ...»։

Յերբեմն նա կանչում եր յուր մոտ Հարիզյանին, կրկին և կրկին անգամ հարցուփորձ եր անում յուր այցելած գյուղերի մասին։ Առանձնապես նա հետաքրքրված եր գյուղական մանուկների թվով։ Նա զանազան հաշիվներ եր անում, գրում եր, մտածում և ստեպ-ստեպ այցելություն անում տեղական թեմական առաջնորդին։

Հարիզյանը հետաքրքրված հարցնում եր, թե նա ինչու համար ե այդ տեղեկությունները հավաքում։ Բայց Դիմաքսյանը վոչինչ չեր պատասխանում։ Մի անգամ նա միայն ասաց անորոշ.

— Ուզում եմ քո աչքին անոգուտ մարդ չերևալ...

XVII

Մոտ յերկու շաբաթ անկողնում պառկելուց հետո Բարաթյանը կարողացավ, վերջապես, վոտքի կանգնել։ Բայց նա բոլորովին չեր առողջացել։ Բժիշկներից վոմանք խորհուրդ եյին տալիս նրան գնալ

արտասահման և այնտեղ յենթարկվել մի դժվարին օպերացիայի, յեթե կամենում ե մի անգամ ևեթ արմատապես բժշկվել ժառանգական ցավից։ Յեվ նա մտադիր եր հետևել նրանց խորհրդին։

Առայժմ նա կարգադրում եր յուր հայրական գործերը։ Նա վճարեց յուր բոլոր պարտքերը և, ժառանգությունը հաստատելով յուր անունով՝ ապահովեց իրան բոլորովին։ Այժմ նա իրան զգում եր ավելի բախտավոր, քան յերբևե զգացել եր։ Թվում եր նրան, վոր դրամական վարկի հետ նորից ամրանում ե և յուր բարոյական վարկը։ Հասարակությունը այլևս առաջվա պես չեր զբաղվում նրա ընտանեկան կյանքով, և կարծես ամենքը սկսել եյին մոռանալ նրա մասին տարածված աննպաստ լուրերը։

Յերբեմն նա հիշում եր այրի Բախտամյանից ստացած վիրավորանքը, բայց հիշում եր վայրկենաբար, առանց յերկար մտածելու այդ մասին։

«Բարոյական վիրավորանքը, ասում եր նա ինքն իրան, այն ժամանակ ե ազդու, յերբ կատարվում ե հրապարակորեն։ Այդ կինը յերբեք չի համարձակվիլ ուրիշին հաղորդելու ապտակի մասին, ուրեմն ինչու արյունս պղտորեմ մի չնչին բանի համար։ Այո, մարդիկ շատ անգամ վոչինչ բանից իրանց համար տանջանք են ստեղծում։ Ճշմարիտ եր ասում հայրս, թե «ինչքան քիչ մտածես վերքիդ մասին, այնքան նա քեզ քիչ ցավ կպատճառի...»։ Այո, այո, չմտածել, այլ ապրել ե հարկավոր և միայն ապրել...»։

Հաճախ նա տեսնվում եր Վեքիլյանի հետ։ Նրանց հարաբերությունները շարունակվում եյին առաջվա ուղղությունով, թեև զգալի չեր, վոր իրավաբանը յուր սրտում ամեն կերպ աշխատում եր թաքցնել մի տեսակ ատելություն դեպի յուր ընկերը։

Առավոտ եր։ Թեյի բաժակը առջևը դրած, Բարաթյանը կարդում եր օրվա լրագիրները, յերբ ներս մտավ Վեքիլյանը բոլորովին անսպասելի։ Յերբեք նա այդպես վաղ չեր այցելել յուր ընկերոջը։

— Յես յեկել եմ մի անհետաձգելի և կարևոր գործի համար,— ասաց նա լուրջ ձայնով,— և այսպես վաղ յեկա, վոր քեզ տանը տեսնեմ։ Լսիր, այրին ուզում ե Պյոտր Սոլոմոնիչի կտակի դեմ դատ բաց անել։

— Մի՞թե,— արտասանեց Բարաթյանը անտարբեր։

— Յես այդ իմացա յերեկ գիշեր կլուբում։ Այնտեղ քեզ շատ պտրեցի, բայց չտեսա...

— Յերեկ թատրոնից գնացի կրուժոկ ընթրելու։ Ո՞ւմ միջոցով ե ուզում դատ բաց անել։

— Փաստաբանի։

— Միթե կա այնպիսի փաստաբան, որ այդ գործը հանձն առնի։

— Կան փաստաբաններ, որոնք ոչ մի գործից չեն հրաժարվում։ Այլին մի այդ տեսակ մարդու չէ դիմել։

— Այո, — արտասանեց Բարաթյանը անորոշ, — ուրեմն նա քո և Ամբակում Աֆանասևիչի դեմ վատ խաղ է սկսում...

— Ինչու միայն իմ և Ամբակում Աֆանասևիչի, գուցե և մի ուրիշի դեմ, — նկատեց Վեքիլյանը խորամանկությամբ։

Լուրը Բարաթյանի վրա վատ տպավորություն էր գործել, իսկ իրավաբանի վերջին նկատողությունը ավելի վախեցրեց նրան։ Նորից նրա աչքի առջև պատկերացավ դատաստանի խայտառակ սպեկտակլը, նորից նա յուր անունը, պատիվը և վարկը տեսավ հասարակության բամբասանքին ենթարկված։

— Միթե տիկինը այդ բանը կանի՞, — հարցրեց նա, դեռ ես կարողանալով զսպել յուր վրդովմունքը։

— Յեթե չկամենա յել, փաստաբանը անպատճառ կհամոզի նրան անել։

— Բայց կհաջողվի՞ նրան դատը։

— Դժվար է նախագուշակել. որենսդրության մեջ կան այնպիսի բաց տեղեր, որոնք շատ անգամ ճարպիկ փաստաբանի ձեռքում հաջող գործիք են դառնում։ Յես այդ դատից վախենում եմ։

— Վախենալով բան չի լինի, պետք է գործել։ Ի՞նչ ես մտադիր անելու։

Վեքիլյանը մի քանի վայրկյան մտածեց, ապա դրական յեղանակով պատասխանեց.

— Իմ խորին համոզմունքով քանի որ գործը սկսված չէ, պետք է նրան խափանել։ Յեթե այլին մինչև անգամ բոլորովին էլ դատը տանուլ տա, դարձյալ դատաստանական պրոցեսը վտանգավոր է։ Չեմ կարող ասել, թե նա ում նյութականին կվնասի, բայց թե բարոյական վնաս կունենա — դա անհերքելի չէ։

— Չեմ հասկանում ասածդ։

— Պետք է ասած, — շարունակեց Վեքիլյանը նույն յեղանակով, — որ այդ տեսակ գործերում շատ անգամ մի յերրորդ, չորրորդ, մի չեզոք համարված մարդ ավելի յե պատժվում, — բարոյապես եմ ասում, — քան թե դատին անմիջապես խառը մարդիկ...

Այս անգամ ակնարկը կարոտ չէր բացատրության. սակայն Բարաթյանը դարձյալ փորձեց իրան չգիտցող ձևացնել և ասաց՝

— Այո՛, քո ասածը ճիշտ է, այդ պատահում է, ուրեմն աշխատիր դատի առաջն առնելու...

— Յես կկամենայի, որ դու յել մեզ օգնես այս գործում։

— Յես ի՞նչ կարող եմ անել։

— Պետք է փաստաբանին կաշառել։

— Կաշառե՞լ։

— Այո՛, դա միակ միջոցն է խայտառակ դատից ազատվելու համար։

— Եհ, շատ լավ, ինչու չես կաշառում։

— Յերեկ գիշեր Ամբակում Աֆանասյևիչը և յես վճռեցինք այս գործը քեզ հանձնել։

— Ի՞նձ։

— Այո՛։

— Ինչու։

— Որովհետև թե՛ ինձ և թե՛ նրա համար անհարմար է։

Բայց յես ինչո՞ւ պիտի խառնվեմ այդ գործին։

— Այդ, կարծեմ, քեզ ավելի հայտնի պետք է լինի, քան թե ինձ...

Բարաթյանը նայեց ընկերոջ յերեսին և, աշխատելով անփույթ ժպտալ, արտասանեց.

— Դու, յերևի, ինձ հետ կատակ ես անում։

— Յերբե՛ք։

— Ուրեմն ավելի պարզ խոսիր։

Իրավաբանը մի առժամանակ լռեց, սեղմեց շրթունքները ատամներով և, վերջապես, ուղիղ նայելով Բարաթյանի յերեսին, ասաց.

— Լսի՛ր, դու միշտ յեղել ես զգուշ, խոհեմ և խելոք։ Հենց այդ հատկությունների համար յես քեզ միշտ հարգել եմ։ Այս անգամ յել յեղի՛ր զգուշ, խոհեմ և խելոք, մի՛ ստիպիր ինձ ամեն բան բացատրել, հասկացի՛ր, որ քո անունին վտանգ է սպառնում։

Բարաթյանը լռեց և ընկավ մտատանջության մեջ։ Նա չեր կամենում իսկույն, առանց ընդդիմադրության, չենթարկվել յուր ընկերոջ կամքին։

— Գիտե՞ս,—ասաց նա,—դու ինձ շատ վատ առաջարկություն ես անում. կաշառել և կաշառք վերցնել—միևնույն հանցանքն է։

—Հանցա՞նք,—կրկնեց Վեքիլյանը, հեգնորեն ժպտալով,- յերանի քո և իմ հանցանքը միայն այդ լիներ... համառություն մի՛ անիր, դու ստիպված ես յերկու չարիքից փոքրագույնը ընտրել։

— Ինչու յեմ ստիպված,—գոչեց Բարաթյանը վերջապես, չկարողանալով զսպել յուր վրդովմունքը։

— Ինչու... Լա՛վ, քանի որ ուզում ես իմանալ, լսի՛ր ուրեմն։

Սխալված ես դու, ինչպես և՛ յես, որովհետև այրու դատը կարող է մեր յերկուսի անունին կպցնել մի կարճ ածական — գող։

— Վեքիլյան...

— Իզուր ես վրդովվում։ Այո, յես ու դու գող ենք։ Զանազանությունը միայն այն է, որ յես հասարակ գող եմ, իսկ դու պատվի գող։ Թողնում եմ քեզ դատելու, թե որն է այս յերկուսից ավելի վատը։ Բարաթյան, մենք միմյանց շատ լավ ենք ճանաչում, այնպես չէ՞, տեսնում ես, որ յես ճշմարտությունը քեզանից չեմ թաքցնում։ Ուրեմն դու յել ինձ հետ անկեղծ յեղիր գոնե մի որ, մի ժամ։ Ամբակում Աֆանասյեվիչը և յես օգտվել ենք հանգուցյալի հարստությունից, թե ինչպես — դա կպարզվի դատաստանում։ Իսկ դու հափշտակել ես նրա պատիվը. թե ինչպես — դա յել կպարզվի դատաստանում։ Այո, յես համոզված եմ, որ ինչքան ել դատը զգուշ տարվի, պետք է այս գաղտնիքները պարզվեն։ Այրին խելոք կին չէ. նա չի մտածում յուր անվան մասին, կամ շատ կարելի յե մտածում է, բայց չէ՞ որ հուսահատված մարդը կորցնում է յուր առողջ դատողությունը։ Իսկ դու խելոք ես, գոնե դու մտածիր քեզ համար...

Բարաթյանը չհակառակեց։ Նա լուռ և հուզված լսում եր, միևնույն ժամանակ ատելությամբ նայելով իրավաբանի յերեսին։

— Վճռիր և խոսքդ հանձն առ, — շարունակեց Վեքիլյանը, — որովհետև անկարելի յե գործը հետաձգել։ Վաղը կամ մյուս օրը փաստաբանը կարող է դատաստանին խնդիր ներկայացնել։ Այդ մարդուն կաշառելը դժվար բան չէ, բայց դա բավական չէ։ Դրանով մենք կարող ենք միայն ստիպել նրան գործից հրաժարվել։ Բայց ուրիշ փաստաբաններ շատ կան։ Անհրաժեշտ է այրին ել կաշառել։ Վերջապես, յես ինքս այժմ տեսնում եմ, որ անզգուշություն է խեղճ կնոջը թողնել այժմյան դրության մեջ։ Բայց այդ արդեն իմ և Ամբակում Աֆանասյեվիչի գործն է. մենք վճռել ենք նրան մի կերպ գոհացնել։

Յերկար խորհրդակցելուց հետո, վճռեցին այսպես անել. Վեքիլյանը հենց այսօր ևեթ Բարաթյանին կլուբում հասարակ կերպով կծանոթացնի այրու փաստաբանի հետ։ Բարաթյանը խոսք բաց կանի ապագա դատի մասին, ի հարկե, զգուշությամբ, որ փաստաբանին չխրտնեցնի։ Իբրև հոգաբարձու նա իրավունք ունի պաշտպանել Ներսեսյան դպրոցի շահերը, որովհետև յեթե կտակը ջնջվի, դպրոցն ել կզրկվի յուր մասից։ Այսպիսով նա փաստաբանին կներկայանա ինչպես մի հիմնարկության շահերի պաշտպան, և ինքն ըստ ինքյան փոքր մի կասկած չի կարող տեղի ունենալ։

Այդ օրից սկսած Բարաթյանը հանգստություն չուներ։ Նա մո-

ռացավ ամեն ինչ և սկսեց հետամուտ լինել, վոր մի կերպ խայտառակ դատի առաջն առնի։ Չնայելով, վոր արդեն լրացել էր յուր վորոշած ժամանակամիջոցը, նա դեռ չէր մտածում յերեխաներին բերել տալ Գայանեյի մոտից։ Այնինչ՝ ամառվա շոգերը վրա էյին հասել, հարկավոր էր յերեխաներին ամառանոց ուղարկել։

Տիկին Սալամբեկյանը յուր սանիկներին արձակուրդ էր տվել։ Մնում էյին նրա մոտ միայն մի քանի գիշերօթիկներ, վորոնց ծնողները օտար քաղաքներումն էյին։ Նա խնդրում էր Գայանեյին վերցնել յերեխաներին և նրա հետ միասին տեղափոխվել մոտակա գյուղերից մեկը, ուր նա ամառանոց էր վարձել։ Բայց Գայանեն դեռ չէր վստահանում այդ անելու։ Որ օրի վրա նա սպասում էր, թե ահա՛ ներս կմտնի Բարաթյանի ծառան և կպահանջի յերեխաներին։ Սարսափով, այո, կատաղի սարսափով նա յերևակայում էր այն րոպեն, յերբ նա ստիպված պետք է լիներ բաժանվել նրանցից։ Մի ամսվա ընթացքում նա այնպես ընտելացել էր յուր զավակների ներկայությանը, վոր դժվարանում էր հավատալ, թե կարող է մի օր անգամ առանց նրանց ապրել։

Յերկդիմի վիճակը օրից օր աճելով, դարձրել էր նրան նյարդային, անհամբեր․ ամեն անգամ յերբ նայում էր յերեխաների անմեղ աչքերին, հիշում էր նրանց դրությունը, նրա սիրտն էր մորմոքվում։ Պետք է վերջ տալ այդ վիճակին, դժվար է, անհնարին է յերկար ապրել այդ անորոշության մեջ։

Յեվ վոչ մեկը չէր կարողանում նրան մի վորոշ յելք ցույց տալ։ Տիկին Սալամբեկյանը ճգնում էր ամեն կերպ մխիթարել նրան։ Աշխատում էր համոզել, թե չպիտի շատ էլ փափկասիրտ լինել, թե յերեխաներն իրանց հարազատ հոր մոտ պետք է գնան և վոչ թե օտարի, թե Գայանեն նրանց դարձյալ կտեսնի և այլն և այլն…

Յերբեմն նա փորձում էր մինչև անգամ ամաչացնել Գայանեյին, կոչելով նրա ինքնասիրությանը։

Չգիտեմ, ինչպես ես համարձակվում ուսումնարան բաց անել՝ ուրիշների յերեխաներին կրթելու, յերբ քո սիրտը միայն քո զավակներին ես նվիրել։ Վոչ, դու յեսասեր ես, թույլ ես, դու չես կարող դաստիարակ լինել…

Այս խոսքերը զուր չէյին անցնում, ազդում էյին Գայանեյի վրա։ Նա սկսեց մտածել, վոր իրավ ինքը չափազանցության է հասցնում յուր մայրական սերը։ Այո, պետք է վերջապես զսպի յուր զգացմունքը հենց նույն իսկ յուր զավակների ապագայի մասին պարզ մտքով խորհելու համար։ Յեվ ահա նա ինքն յուր մտքում աշխատում էր հաշտ-

վել նույնիսկ ծայրահեղ թշվառության հետ։ Նա յերևակայում էր ամենամեծ դժբախտությունը, այն է, որ ինքն իբրև թե բնավ զրկված է յերեխաներից։ Ի՞նչ պետք է անել, չէ՞ որ կան մայրեր, որոնք թաղել են իրենց բոլոր զավակներին. հապա ինչպես են նրանք կրում իրենց վշտերը։ Վերջապես, ինչու հուսահատվել, խոմ այդ յերեխաները պետք է մեծանան, պետք է հասկանան իրենց դրությունը։ Այն ժամանակ նրանք իրենց կամքով կգան իրենց մոր մոտ... Այո, պետք է ապրել նրանց մի օր բախտավոր տեսնելու համար...

Այս խորհրդածությունները հետզհետե ամրացնում էին նրա հոգին։ Նա վճռեց արիությամբ սպասել ամեն տեսակ հարվածների։ Ահա ինչու յերբ, վերջապես, Բարաթյանը ծառային ուղարկեց յերեխաների յետևից, նա շատ էլ չհուսահատվեց։ Նա խնդրեց բժիշկ Սալամբեկյանին մի անգամ ևս միջամտել։ Թող Բարաթյանը թույլ տա Թամարին հանձնել տիկին Սալամբեկյանի պարտեզը, իսկ Լևոնիկին պահել յուր մոտ մինչև աշուն։

Բժիշկն անմիջապես գնաց Բարաթյանի մոտ։ Հակառակ սպասածին, Բարաթյանը նրան այս անգամ ընդունեց սիրով։ Նա հոգեկան լավ տրամադրության մեջ էր։ Բանն այն էր, որ մի քանի օր առաջ հաջող կերպով գործն ավարտել էր այրի Բախտամյանի փաստաբանի հետ։ Վերջապես, Վեքիլյանը և Ամբակում Աֆանասյեվիչն էլ գոհացրել էին այրիին, նշանակելով նրա համար առանձին թոշակ։ Այսպիսով դատի առաջն առնվել էր և թե Բարաթյանի, թե Վեքիլյանի ու Ամբակում Աֆանասյեվիչի անունները ազատվել էին սպառնացող վտանգից։

Այժմ Բարաթյանը զբաղված էր քանի մի մանր գործերով, որոնց վերջացնելուց հետո պետք է ուղևորվեր արտասահման։ Նա սաստիկ ցանկանում էր ճանապարհորդել, «մի փոքրիկ ազատ օդ շնչել»։ Նա ինքն ուրախ էր այժմ առանց յերեխաների ապրել՝ բոլորովին համոզված, որ իրենց մոր մոտ նրանք ավելի լավ են խնամվում։ Ծառային նրանց յետևից ուղարկելը արտաքին պատճառ ուներ. նա ուզում էր ցույց տալ, որ յուր զավակներին չի մոռացել։ Իսկ վճռել էր ստիպողական դիրք չընդունել, յեթե Գայանեն մի փոքրիկ անգամ ընդդիմություն ցույց տա։

Յուր իսկական միտումները բժիշկ Սալամբեկյանից թաքցնելով, նա արտաքուստ դարձյալ համառվեց յերեխաներին իրենց մոր մոտ թողնելու։ Սակայն յերբ բժիշկը սկսեց թախանձել, նա, իբր թե ակամա արտասանեց.

— Թող քո ասածը լինի, յես խղճում եմ այդ կնոջը...

Բժիշկը զգացված հայտնեց յուր շնորհակալիքը և շտապեց ուրախալի լուրը Գայանեյին հաղորդել։

Նրա դուրս գալուց հետո Բարաթյանի դեմքը սկսեց փայլել։ Նա ինքն իրան ասաց.

«Այժմ դու կրկին անգամ ամուրի ես և ազատ... ապրիր, ինչպես ուզում ես»...

Նրա աչքերի մեջ ցոլաց անսովոր յերիտասարդական զվարթություն, նա սկսեց ուրախ-ուրախ շվացնել...

Մի քանի որ անցած Գայանեն Սալամբեկյանների հետ ուղևորվեց ամառանոց։ Այժմ նա այլևս չէր մտածում ապագայի մասին։ Նա յերջանիկ էր, վոր յերեխաներին անորոշ ժամանակով իրան եյին հանձնել։ Իսկ հետո... հույս ուներ այլևս հավիտյան չբաժանվել նրանցից...

XVIII

Ամառվա ճիշտ այն միջոցն էր, յերբ յոթ տարի առաջ Դիմաքսյանը Թիֆլիսի փողոցներն ընկած յուր համար բնակարան էր փնտրում։

Քաղաքը կիսով չափ դատարկվել էր, բոլոր քիչ թե շատ միջոց ունեցող ընտանիքները հեռացել եյին ամառանոցները։ Կյանքը թմրել էր, փողոցներում շարժում չէր յերևում։ Որը մինչև յերեկո մարդիկ արևի տապից պատսպարվում եյին իրանց տներում, խանութներում։ Շրջակա լեռների ու դաշտերի խոտը չորացել էր, դեղնել ու կպել յերկրին։ Քուռ գետը փոքրացել էր, սեղմվել, մտել յուր նեղ շավիղի մեջ և ընթանում էր մռայլ ու դանդաղ։ Տխուր ու ճնշող տպավորություն էր անում առհասարակ քաղաքն յուր տեսքով։ Յերեք կողմից շրջապատված մերկ լեռներով, կարծես, պարփակված լիներ մի յեռանկյունի կաթսայի մեջ, ուր մարդիկ դատապարտված եյին տապակվելու հեղձուցիչ մթնոլորտում։

Միայն յերեկոյան մութը ընկնելիս օդը մի քիչ թեթևանում էր։ Այդ ժամանակ բնակիչները տներից թափվում եյին դուրս, քաղաքը փոքր ինչ կենդանանում էր։ Այգիները լցվում եյին, փողոցներում սկսում էր շարժում, ձիաքարշի կառքերը անդադար անցնում եյին այս ու այն կողմ ուղևորներով լի։ Յեվ այդ շարժումը տևում էր մինչև ուշ գիշեր, այնուհետև քաղաքը նորից նիրհում էր մինչև հետևյալ յերեկո։

Մսերյանը վոչ մի տեղ չգնաց ամառելու։ Նա անբաժան բնակ-

վում էր յուր առաջվա բնակարանում: Օրերը նրա համար անցնում եյին միատեսակ, ձանձրալի, տխուր: Ցերեկը յերկու-յերեք ժամ լինում էր յուր պաշտոնատեղում, հետո գալիս էր տուն, ճաշում, քնում և շարունակ կարդում:

Յերեկոները վորոշյալ ժամին նա դուրս էր գալիս զբոսնելու: Յերբեմն այցելում էր մի փոքրիկ պարտեզ, ուր հասարակ սեղանների շուրջը հոգնած, վաստակած և շոքից թուլացած մարդիկ նստած խոսակցում եյին, մերթ ընդ մերթ գարեջրի դատարկ բաժակները սեղանին զարկելով, վոր սպասավորը գա նորից լցնելու:

Նա միշտ նստում էր առանձին սեղանի մոտ և մի շիշ գարեջուր առջևը դրած դիտում էր այցելուներին: Նա ուներ մի քանի ծանոթներ, վորոնց միայն հեռվից բարևում էր: Նա դարձյալ խույս էր տալիս հասարակությունից, ուստի շատերը նրան համարում եյին անմատչելի, գոռոզ, մինչև անգամ տարօրինակ, խենթ: Դիմաքսյանի բացակայությունը նրա տաղտկությունը ավելացնում էր: Վերջին նամակը ստանալուց անցել էր մի շաբաթ, և նա դեռ չեր գալիս: Ի՞նչն է, արդյոք, այդ մարդուն պահում հայրենի քաղաքում, քանի վոր նա յերբեք այդքան ժամանակ չի մնացել այնտեղ:

Իրիկնադեմ էր: Թեյ խմելուց հետո Մսերյանը նստած էր յուր սենյակի առջև գտնվող պատշգամբի վրա: Արևը նոր մայր էր մտել, ոդի մեջ թողնելով ծանր տոթ: Փոքրիկ գավթում վոչ վոք չկար: Տանտիրուհու բադերը լողում եյին մի մեծ քարյա ջրամանում, յերբեմն դուրս գալով ցամաք և իրանց թևերը թափահարելով:

Մսերյանը թղթատում էր մի նոր գիրք, վոր այն որն էր գնել: Յերբեմն նայում էր գրքի եջերին, յերբեմն դեպի յերկինք: Այնտեղ, դիմացի հեռու լեռան յետևից բարձրանում էր սպիտակ ամպերի մի սար, վոր հետզհետե ուռչում էր, լայնանում և զանազան ձևեր ընդունում: Արևի վերջին շողքերը արագ-արագ փոփոխում եյին նրա գույնը, ներկելով մերթ մանիշակագույն, մերթ դեղին, մերթ կարմիր և այդ գույների խառնուրդից առաջացնում տասնյակ ֆանտաստիկական յերանգներ:

Պատշգամբի մյուս ծայրին նստած էր տանտիրուհին — մի պառավ վրացի կին — յուր յոթ-ութ տարեկան թոռան հետ: Դա մի սևաչյա, գեղեցիկ, աշխույժ աղջիկ էր, վոր շարունակ բարձր ձայնով ծիծաղում էր, խփելով յուր տատի ծնկներին, ուսերին, ձեռներին: Ժամանակ առ ժամանակ Մսերյանը նայում էր այն կողմ և ժպտում: Դեռահաս աղջկա անզուսպ քրքիջները, վոր բղխում եյին մանկական անհոգ սրտից, մի տեսակ մելամաղձոտ հաճույք եյին պատճառում նրան: Մի

րոպե ձեռը դնելով գրքի վրա, նա մտքով սլացավ դեպի յուր մանկությունը, այդ տասնյակ տարիների թանձրության յետևում կորած, մոռացված հեռավոր անցյալը: Շատ քիչ բան եր հիշում այդ անցյալից կամ վոչի՞նչ չեր հիշում: Թվում եր նրան, վոր յերբեք չի ունեցել վոչ միայն մանկություն, այլև պատանեկություն, այլև յերիտասարդություն, վոր միշտ յեղել ե այնպես, ինչպես կա այժմ—յուր ներկա մտքերով, հոգսերով և թախիծով:

Ահա լրացավ նրա քառասուն տարին—չորս ամբողջ տասնյակներ: Միթե այդ չե՞ ծերությունը: Ի՞նչ ե արել մինչև այժմ, ի՞նչ կյանք ե ունեցել, ի՞նչ ուրախություն, ի՞նչ մխիթարություն: Մի՞թե վոչինչ և վոչինչ: Որերը անցնում են իրանց սովորական ընթացքով, այսօրը նման յերեկվան, վաղը՝ այսօրվան և այսպես միշտ ու շարունակ... կհասնի մի օր վերջին ժամը, և նա այլևս չկա աշխարհի յերեսին բոլոր յուր գաղափարներով, բոլոր յուր իղձերով...

Իղձե՞ր: Արդյոք ունեցե՞լ ե նա իղձ... Ինչո՞ւ չե, ունեցել ե և այժմ իսկ ունի... Նա շատ ե վհատվել, բայց յերբեք չի կորցրել յուր հույսը մարդկության լավագույն ապագայի մասին: Նա միշտ հավատացել ե, այժմ ել հավատում ե, թե ամեն ինչ պետք ե փոխվի, վերանորոգվի: Բայց այն ի՞նչ հավատ ե յեղել, վոր չի սովորել նրան գործելու յուր գաղափարների համար:

Այո, ժամանակ ե, վոր նա ինքն իրան հաշիվ տա, ժամանակ ե, վոր ինքն իրան հարցնի—ի՞նչ նպատակի յե ծառայում յուր կյանքը: Մի՞թե ապրում ե նրա համար, վոր գիշեր-ցերեկ կարդա և կարդում ե նրա համար, վոր որից օր ավելի ու ավելի ծուլանա...

Վոչ, վոչ, այդ. անկարելի յե, պետք ե մի կերպ վերջ տալ այս վհատեցնող, մեռցնող միատեսակությանը: Աններելի յե, այո, մինչև անգամ կատարյալ բարոյական հանցանք ե այս տեսակ բուսական կյանք վարելը...

«Կյանք, վորից վոչ վոք վոչինչ օգուտ և վոչինչ վնաս չունի...»:

Նա գիրքը արհամարհանքով ձգեց մի կողմ, արմունկները հենեց պատշգամբի վանդակապատին և յուր մտախոհ հայացքը հառեց անորոշ տարածության մեջ: Նրա խաղաղ հոգու մեջ բարձրացել եր անսովոր մրրիկ: Նրա անդորր թախիծը տեղի յեր տվել այն ծանր ինքնադժգոհությանը, վոր չափահաս տղամարդի մեջ առաջացնում ե դառն տանջանք:

Յեվ մինչ նա յուր մտքերի մեջ խորասուզված եր, հանկարծ նրա ականջին հասավ մի ձայն: Նա լսեց յուր անունը, նայեց աջ ու ձախ—վոչ վոք չկար, նայեց դեպի գավիթ և բացականչեց.

— Արսե՞ն...

Մսերյանը անսովոր աշխուժով վոտքի թռավ, վազեց առաջ։ Յերկու ընկեր գրկեցին միմյանց։ Յերբեք իդեալիստն այնքան չեր ուրախացել յուր ընկերոջը տեսնելով, վորքան այժմ, ընդամենը յերկու ու կես ամիս նրան չտեսնելուց հետո։

— Ո՞ւր եյիր, ինչո՞ւ ուշացար, առո՞ղջ ես, ուրա՞խ ես,—հարցնում եր նա շտապով։

— Դիմաքսյանը և՛ առողջ եր, և՛ զվարթ, գոնե այսպես յերևաց վոչ միայն նրա խոսքերից այլ և ձայնից, դեմքից և բոլոր շարժումներից։

— Յերդվում եմ,—գոչեց նա, պատշգամբի վրայից վերցնելով գիրքը և վանդակապատի վրա դնելով,—վոր քեզ ճիշտ այն դրության մեջ եմ գտնում, ինչպես ճանապարհին յերևակայում եյի։

— Ի՞նչպես...

— Նստած պատշգամբի վրա, գիրքն առջևդ դրած, միայն թեյն ե պակասում... Բայց սպասի՛ր, այդ արդեն չեյի յերևակայում, հեր որհնած, մի՞թե կարելի յե այդպես նիհարել...

Մսերյանը հառաչելով ժպտաց և վոչինչ չասաց։ Հրավիրեց ընկերոջը ներս։ Որն արդեն մթնում եր։ Սենյակի լուսամուտները բաց եյին, որը բավական զովացել եր։ Մսերյանը յուր ձեռքով վառեց կանթեղը, հարցրեց Դիմաքսյանին, արդյոք թեյ կկամենա՞ խմել։

— Յես արդեն խմել եմ հյուրանոցում։

— Հյուրանոցու՞մ, մի՞թե դու այնտե՞ղ ես իջևանել։

— Այո՛։

— Ինչո՞ւ վոչ քո բնակարանը։

— Վորովհետև շատ կարճ ժամանակով եմ յեկել։

— Այն ժամանակ ինձ մոտ կիջևանեյիր։

— Դու յել չպիտի մնաս այստեղ։ Բայց այդ դեռ թողնենք։ Պատմի՛ր ինձ, ի՞նչ կա այստեղ, ի՞նչ են անում մարդիկ, ի՞նչ գործի յեն։

Մսերյանը համառոտ պատասխանեց, թե նրա գնալուց հետո վոչինչ փոփոխություն չի յեղել, մարդիկ նույնն են, ինչ վոր առաջ, հասարակական կյանքը դարձյալ թմրել ե, մաքերի կռիվ չկա, վերջապես ամենքը ցրվել են ամառանոցները։

— Մինչև անգամ բժիշկ Սալամբեկյանն ել,—ավարտեց նա յուր խոսքը մի անսովոր յեղանակով, վորի մեջ զգացվում եր մի տեսակ դառն հեգնություն։

— Բժի՞շկը,—կրկնեց Դիմաքսյանը և մի փոքր լռեց, ապա ավելացրեց,—յերևի նա այժմ բախտավոր ե...

— Պետք է կարծել...

Նրանք լռեցին։ Մսերյանը դարձյալ հառաչելով յերեսը մի կողմ դարձրեց։ Նույն վայրկյանին նա ձեռով մի շարժում գործեց, կարծես, մի միտք իրանից հեռացնելու համար։

— Ահ, մոռացա ասել,—գոչեց նա նորից զվարթանալով,—յես մի ուրախալի նորություն եմ իմացել։

— Այն ե՞։

— Վոր գավառներում մեծ հարգանք ես վայելում։

— Ի՞նչպես, միթե դու գնացել եյիր գավառնե՞րը։

— Վոչ, յես այստեղ իմացա։ Կա այստեղ մի փոքրիկ պարտեզ, ուր մի գերմանացի գարեջուր է ծախում։ Յերբեմն յես յերեկոները գնում եմ այնտեղ կես ժամ, մի ժամ նստելու։ Դա մի տեսակ ամառային կլուբ է, ուր մեծ մասամբ հավաքվում են գավառներից յեկած վարժապետները։ Ի՞նչ խեղճ կերպարանք ունեն այդ մարդիկ և ի՞նչպես շատախոս են։ Շատ անգամ հեռվից լսում եմ նրանց խոսակցությունը, չկարծես հետաքրքրությունից դրդված, այլ վորովհետև այդ մարդիկ միշտ բարձր ձայնով են խոսում։ Յերևակայի՛ր, հազիվ է պատահում, վոր նրանք քո անունը չհիշեն, քո գրածների մասին չվիճեն։ Յես միշտ նկատել եմ, վոր նրանք քո մասին խոսում են հարգանքով և սիրով։ Ամենքի վրա յերևում է քո մեծ ազդեցությունը։

Դիմաքսյանը ընդհատեց նրա խոսքը, կամենալով, վոր իդեալիստը պատմի յուր մասին։ Նրա համար սաստիկ հետաքրքրական եր իմանալ, ինչպես է յուր ընկերը վերջին ժամանակ յուր որերը անցկացրել։ Մսերյանն յերրորդ անգամ հառաչեց և մի տեսակ վհատված ձայնով պատասխանեց.

— Միթե քեզ հայտնի՞ չէ, թե ինչ եմ անում։

Յերկու ընկեր նայեցին միմյանց յերեսին։ Դիմաքսյանը Մսերյանի աչքերի մեջ կարդաց նրա հոգեկան խորին դժգոհությունը յուր այժմյան վիճակից։ Նա թախանձեց նրան պարզ խոստովանվել, արդյոք զգում է յուր կյանքի մեջ մի փոփոխություն մտցնելու կարիք, արդյոք կկամենար վերջ տալ հարատև և ձանձրալի միատեսակությանը։ Մսերյանը զարմացած նայեց նրա յերեսին։ Կարծես, Դիմաքսյանը մարգարեյաբար գուշակել եր այն բոլորը, ինչ վոր մի ժամ առաջ անցնում եր յուր ընկերոջ մտքով։ Այս հանգամանքը մի փոքր շփոթեցրեց Մսերյանին։ Կարծես, նա ամաչում եր յուր հոգեկան դժգոհությունից, համարելով այդ մի տեսակ բարոյական տկարություն։

— Հասկանում եմ քո միտքը,—գոչեց նա վրդովվելով,—դու ուզում ես ասել, թե յես անոգուտ մարդ եմ։ Այդ ճիշտ է և, յեթե կա-

մենում ես իմանալ, վոչ վոք այնքան զզված չե ինձանից, վորքան յես։ Յեվ հենց քո գալուցդ մի փոքր առաջ յես մտքումս վճռեցի վորևե փոփոխություն մտցնել իմ կյանքի մեջ։ Կհաջողի թե չե—չգիտեմ, բայց իմ վճիռը հաստատ ե, յես պետք ե դադարեմ անոգուտ մարդ լինելուց։

Մի պարզ, մաքուր յեղբայրասիրական ժպիտ սահեց Դիմաքսյանի խելացի, արտահայտիչ դեմքով և նրա թափանցող, խոշոր աչքերի մեջ փայլեց ուրախություն։

— Լսիր,—ասաց նա հանդարտ ձայնով,—յես քեզ հետ կամենում եմ մի բանի մասին լրջորեն խոսել և շատ ուրախ եմ, վոր դու այդ վճիռը կայացրել ես քո մասին։ Նստիր և լսիր։

Մսրյանը, վոր քայլում եր սենյակի մի ծայրից դեպի մյուս ծայրը, նստեց նրա դեմ և, ձեռները հենելով ծնկներին, պատրաստվեց ականջ դնելու նրան։ Դիմաքսյանը մի ծխախոտ վառելով, սկսեց մանրամասն պատմել այն բոլորը, ինչ վոր տեսել եր, ուսումնասիրել և զգացել յուր հայրենիքում վերջին յերկու ու կես ամսվա ընթացքում։ Նա տխուր գույներով նկարագրեց գյուղական ամբոխի տնտեսական և բարոյական վիճակը. նա առանձին յեռանդով շեշտեց ուսումնարանների բացակայության և նրանց անհրաժեշտ կարևորության փաստը։ Նա խոսեց Հայրիգյանի մասին։ Մսրյանը ճանաչում եր նրան Մոսկվայից, բայց լավ չեր հիշում։ Դիմաքսյանը գովեց նրան, ինչպես յեռանդուն, խելացի յերիտասարդի, վորի գործնական հայացքները չեն խանգարում նրան լինել վերին աստիճանի ոգտավետ անդամ յուր հասարակության։ Նա ասաց, թե Մսրյանը, յեթե լավ ճանաչի այդ մարդուն, անշուշտ պետք ե սիրի, հարգի և մինչև անգամ մտերմանա նրա հետ։

— Յես այս բոլորը ասում եմ քեզ նրա համար, վորովհետև յես ունեմ մի ծրագիր, վոր դուք յերկուսդ միասին պիտի իրագործեք։ Այո, թող քեզ չզարմացնեն իմ խոսքերը։ Լսիր։ Բոլոր իմ աչքով տեսածները ինձ համոզեցին, վոր մեզ համար հանցանք ե մեր կարողությամբ չոգնել գյուղական ժողովրդին։ Յեվ ահա յերկար ժամանակ Հայրիգյանի հետ խորհրդակցելով, յեկա այն յեզրակացության, վոր իմ կողմից միակ ոգնությունը կարող ե լինել այն, վոր յես իմ հաշվով մի ուսումնարան բաց անեմ։ Հայրիգյանը ցույց տվեց ինձ մի ամենահարմար կենտրոնական գյուղ։ Այնտեղ կարող են հավաքվել միքանի շրջակա գյուղերի յերեխաները։ Այս մասին յես հարկավոր կարգադրությունները արել եմ, ուսումնարան բանալու բոլոր արգելքները հեռացված են։ Բանը այժմ կախված ե քեզանից։

— Ինձանի՞ց։

— Այո։ Յես հատկապես յեկա այստեղ քեզ առաջարկելու, որ հանձն առնես ուսումնարանը կառավարել։ Բոլոր տնտեսական գործերը կկատարի Հարիգյանը, յես միայն ուզում եմ, որ դու լինես ուսումնական մասի կառավարիչը, լինես գործի գլուխ, տեսուչ... Ասա, համակրո՞ւմ ես իմ վճռին։

Արտասանելով վերջին խոսքերը, Դիմաքսյանը ուղիղ նայեց Մսերյանի աչքերին, որ նախ նրանց մեջ կարդա յուր ընկերոջ համաձայնությունը կամ մերժումը։ Իդեալիստը յերեսը դարձրեց մի կողմ և լուռ նայեց լամպայի հանդարտ և անշարժ վառվող բոցային լեզվակին, կարծես, նրա հետ խորհրդակցելով, ընդունե՞լ, արդյոք, Դիմաքսյանի առաջարկությունը։ Այդ տևեց ընդամենը մի քանի վայրկյան. հանկարծ նրա աչքերը վառվեցին, նա ոգևորվեց և զգացված արտասանեց.

— Յես ամենաանպիտան մարդը կլինեյի, յեթե չընդունեյի այդ առաջարկությունը։ Ոչ միայն համաձայն եմ, այլ և հայտնում եմ խորին շնորհակալությունս, որ մի այդպիսի ծանր և լուրջ գործ ինձ ես հանձնում։

— Ուրեմն վճռված է, գործը չպիտի հետաձգել։ Թափիր քեզանից անշարժության փոշին, թող այդ միատեսակ կյանքը, սկսիր գործել։ Հիշո՞ւմ ես, ինչպես դու մի ժամանակ փափագում եյիր ծառայել գյուղական ամբոխին։ Ահա քեզ համար առիթ և գեղեցիկ ասպարեզ, ոգևորվիր, յեթե քո փափագն այժմ էլ կենդանի է։ Յես այստեղ մնալու յեմ միայն վաղը, մյուս օրը անպատճառ պիտի գնամ, դու յել պատրաստվիր իմ հայրենիքը ուղևորվելու։ Այնտեղ քեզ անհամբեր սպասում է Հարիգյանը։

— Միայն ի՞նձ է սպասում, իսկ քե՞զ, դո՞ւ...

— Յե՞ս...— պատասխանեց Դիմաքսյանը, մի քիչ տատանվելով...— յես էլ պետք է գնամ իմ ճանապարհով...

— Ինձ հետ միասի՞ն...

— Այո, գաղափարով, բայց ոչ միևնույն ճանապարհով։

Մսերյանը յերկմտաբար նայեց նրա աչքերի մեջ, չհասկանալով նրա խոսքերի միտքը։

— Լսի՛ր,— խոսեց Դիմաքսյանը, դարձյալ մի փոքր լռելուց հետո,— յերբ յես հայրենիքումն եյի, իմ գլխում ծագեց՝ թողնել քաղաքային կյանքը և գնալ այն ճանապարհով, որ այժմ առաջարկում եմ քեզ։ Այս միտքը ինձ բավական ժամանակ զբաղեցրեց, բայց չեղավ մի վայրկյան, որ նա ինձ գրավեր։ Յերկար մտածողությունից հետո

յեկա այն հաստատ եզրակացության, որ ես ստեղծված չեմ խաղաղ գործունեության համար։ Թույլ տուր ինձ, Սմբատ, հաղորդել քեզ մի նորություն, այն է, որ իմ մեջ տեղի է ունեցել մի մեծ փոփոխություն, մի տեսակ բարոյական հեղաշրջում։ Երկար կլինի բացատրել, թե ինչպես կատարվեց այս հեղաշրջումը և հազիվ թե կարողանայի բացատրել։ Բայց այսքանը կարող եմ ասել, որ այս րոպեիս քո առջև նստած է ուրիշ մարդ, որ այժմ ես այն չեմ, ինչ որ մի քանի ժամանակ սրանից առաջ, այն վհատվող, այն ընկճվող, այն չափազանց դյուրագրգիռ, այո, այն հիվանդոտ—ինքնասեր Դիմաքսյանը, որ ամեն մի վայրկյան հուզվում էր, վրդովվում և վիրավորվում։ Ես զգում եմ, որ ինձ համար անհրաժեշտ էր տանջվել—տանջվեյի, ես պետք է փորձվեյի—փորձվեյի կյանքի քուրայում։ Ես շատ անգամ վհատվեցի, շատ անգամ տատանվեցի, եղան վայրկյաններ, երբ վճռում էի թողել իմ ընտրած ճանապարհը... Բայց այժմ այդ չկա, այժմ այդ բոլորից մնաց իմ մեջ մի ձգտում—շարունակել այն, ինչ-որ սկսել եմ յոթ տարի առաջ. կռվել միշտ և անդադար կռվել հասարակական ընդհանուր վնասակար երևույթների դեմ։ Այո, թող ես անհամեստ լինիմ, բայց անկեղծ եմ. ես զգում եմ, որ միայն և միմիայն այդ տեսակ գործունեության փափագ կա իմ սրտում։ Խաղաղ կյանքը, անվրդով գործունեությունն ինձ համար հավասար է մեռելության։

Նա վոգևորված էր, նրա աչքերի մեջ փայլում էր մի նոր, արտաքո կարգի եռանդ, մի պայծառ լույս, որ խրախուսանք, ուժ և հավատ էր ներշնչում Մսերյանին։ Թվում էր, որ նա այդ րոպեյին ազդված էր ինչ-որ բարձրագույն, վեհ, անհասանելի ոգով. որի առջև կարող են խորտակվել կյանքի բոլոր հարվածները։ Իդեալիստն յուր սրտում զգաց այնպիսի պատկառանք դեպի յուր ընկերը, որ հավասար էր պաշտելության։ Նա տեսնում էր յուր դեմ մի մարդ ամբողջովին կլանված յուր նվիրական, սուրբ և վսեմ գաղափարներով, որոնց նա յերբեք, յերբեք և ոչ մի դառն հանգամանքում չպիտի դավաճաներ։ Նա զգացված բռնեց Դիմաքսյանի ձեռը, ամուր սեղմեց և վոգևորությամբ գոչեց.

— Այո, այդ ճիշտ է, ես տեսնում եմ պարզ... Թույլ տուր շնորհավորեմ քեզ քո հաղթության համար...

— Հաղթությո՞ւն։

— Այո, կատարյալ հաղթություն. դու սպանել ես քո մեջ այն օձը, որ քեզ այնքան խանգարում էր...

Արդարև, Դիմաքսյանը կարող էր պարծենալ, որ նրան հաջող-

վեց սպանել այն ոձին։ Բայց նրա մեջ ծնվեց մի ուրիշ ոձ։ Վստահությամբ կարող եր ասել, վոր այսուհետև մարդանց վոչ հալածանքը, վոչ վիրավորանքը, վոչ նախանձը, վոչ ատելությունը նրան չեն հուսահատեցնի։ Նա քաջություն կունենա արհամարհել բոլոր հալածանքները, վոր կուղղվեն նրա անձնավորության դեմ։ Այն նոր ոձը, վոր այժմ զարթնել է նրա մեջ, նրա անհատական խորքին յեսը չէ, այլ ուրիշ բան։ Այսուհետև էլ նա կվրդովվի, կգրգռվի, կբորբոքվի, բայց, վստահ է, վոչ անձնական վիրավորանքներից, այլ հասարակական կյանքի վատ յերևույթներից...

Այս խոսքերը նա արտասանեց մի այնպիսի զգացմունքով, հավատով և վոգևորությամբ, վոր ամենաթերահավատ մարդուն կարող եր համոզել։

— Կեցցես, ուրեմն,—գոչեց դարձյալ Մսերյանը,— յես համոզված եյի, վոր այդպես էլ պիտի լինի վերջը։

Յեվ, մի փոքր լռելուց հետո, ավելացրեց.

— Հիշում ես, ինչպես յես քեզ ասում եյի, թե կգա ժամանակ, վոր դու ամենաբախտավոր մարդը կլինես... Այժմ կարող եմ ասել, վոր դու բախտավոր ես։

— Ա, յես գիտեմ, վոր դու բախտավոր համարելով ինձ, չես մոռանում և իմ անհատական բախտը,— գոչեց Արսենը,— չէ՞ վոր մարդ, իբրև հասարակության անդամ, իբրև գործիչ կարող է բախտավոր լինել, իսկ իբրև անհատ — դժբախտ։ Մի եյակ, վոր կարող եր իմ անհատական յերջանկությունը ստեղծել, չկարողացավ կամ չկամեցավ այդ անել։ Դու գիտես այս բանը։ Հուսահատության վայրկյաններ յեղան, յերբ յես կամենում եյի վերջ տալ իմ կյանքին այդ եյակի պատճառով։ Բայց, շնորհակալ եմ ճակատագրից, այդ չեղավ, յես կարողացա հաղթել իմ մեջ մի սպանիչ զգացում։ Այժմ յես վերակենդանացած եմ։ Գայանեյի պատկերը իմ յերևակայության մեջ մինչև կյանքիս վերջը կմնա կենդանի, վառ և, ինչպես մի իդեալ, յես միշտ կպաշտեմ այդ պատկերը։ Բայց, ինչպես իրական եյություն, ինչպես անհատ — նա այլ ևս գոյություն չունի ինձ համար...

Այլ ևս նա վոչինչ չասաց, և Մսերյանն էլ այդ մասին չխոսեց վոչինչ։

Առավոտյան յոթ ժամը դեռ չեր լրացել, Դիմաքսյանն արդեն վոտքի վրա յեր։ Հյուրանոցի սպասավորի ոգնությամբ նա կապում եր յուր ճանապարհի արկղերը, յերգելով, շվացնելով և յերբեմն ծառայի հետ զվարճախոսելով։

Մի ժամ անցած նա պետք է ճանապարհ ընկներ առավոտյան գնացքով դեպի Բաթում, իսկ այնտեղից արտասահման։ Նա սպասում էր Մսերյանին, վոր պետք է գար նրան ուղեկցելու մինչև յերկաթուղու կայարանը։ Նախընթաց յերեկո ընկերական ուրախ ընթրիքի ժամանակ նրանք վճռել եյին այսպես. Դիմաքսյանն առավոտյան ճանապարհ կընկնի, Մսերյանը հենց նույն որը հրաժարական կտա յուր պաշտոնից և յերկու որ անցած կուղևորվի Դիմաքսյանի հայրենիքը։ Նախ քան ուղևորվելը նա պետք է գնար յուր ընկերոջ նախկին բնակարանը և այնտեղից վերցներ Սիրականին պահ տրված գրքերը և միքանի իրեղենները։

Ուղևորվելու ժամանակը մոտենում եր, իսկ Մսերյանը դեռ չեր յերևում։ Վերջացնելով յուր գործը, Դիմաքսյանը շտապով մի բաժակ թեյ խմեց, նայեց ժամացույցին և սպասավորին հրամայեց մի կառք կանչել։ Մսերյանի բնակարանը ճանապարհի վրա չեր, նա կարող եր հանդիպել նրան և այնտեղ յուր վերջին բարևները տալ ընկերոջը։

Հենց սպասավորը նոր եր դուրս յեկել, յերբ ներս մտավ Մսերյանը շտապով և շնչասպառ։

— Ներողություն, վոր ուշացա,—գոչեց նա զվարթ յեղանակով,— բայց մեղավոր չեմ։ Հուզմունքից ամբողջ գիշեր չեմ կարողացել քնել, շարունակ մտածում եյի ու մտածում։

— Ի՞նչի մասին։

— Ոռ, մի՛ վախենար, այժմ յես առաջվա պես չեմ մտածում, այժմ իմ բոլոր մտքերը կենտրոնացած են մի բանի վրա՝ շտապել շուտով այնտեղ, ուր խոսք եմ տվել գնալու։ Ահա, դու արդեն պատրաստվել ես. դե՛հ, գնանք, կարող ես ուշանալ։ Բայց սպասի՛ր, քեզ մոտ հյուր եմ բերել, կարծում եմ, դժգոհ չես լինիլ...

Այս ասելով, նա բաց դռներով գլուխը դուրս բերեց դեպի կորրիդոր և ձայնեց.

— Արի՛, արի՛ ներս...

Նույն վայրկյանին յերևեցավ Սիրականը՝ գդակը ձեռին, մաքուր հագուստով։ Նա լուռ գլուխ տվեց և կանգնեց դռների մոտ։ Դիմաքսյանը, ուրախ և բարեկամաբար ժպտալով, հարցրեց նրա առողջության մասին, և ձեռը խփելով նրա ուսին, ասաց.

— Չկարծես քեզ մոռացել եյի, մտադիր եյի կայարան գնալիս կառքը կանգնեցնել, քեզ դուրս կանչել և «մնաս բարև» ասել։

Սիրականի կլորիկ աչքի մեջ ցոլաց անչափ ուրախության փայլը, բայց և նույն վայրկյանին նրա դեմքը ծածկվեց տխրության քողով։ Յերկու ու կես ամիս եր նա չեր տեսել յուր սիրելի պարոնին,

այժմ տեսնում եր մի քառորդ ժամ և, ով գիտե, գուցե այնուհետև այլ ես չպիտի տեսներ։

— Դե՛հ,— գոչեց Մսերյանը, նույնպես դառնալով ծառային,— մի ամաչիր, ղոչաղ կաց, հայտնիր խնդիրդ, նա կկատարե։

Սիրականն ամաչելով և տատանվելով մի քայլ առա՛ջ դրեց և հայտնեց յուր խնդիրը։ Բանն այն եր, վոր նա, Մսերյանից տեղեկանալով Դիմաքսյանի գալստյան մասին և նույնպես այն, թե այսօր ճանապարհվում ե, առավոտյան կանուխ հագնվել եր և յեկել իդեալիստի մոտ։ Նա չեր ուզում ծառայել յուր այժմյան պաշտոնում և խնդրում եր, վոր Մսերյանը նրան յուր հետ տանի Դիմաքսյանի հայրենիքը և այնտեղ բարեխիղճ պարոնի կալվածներում մի պաշտոն հանձնի նրան։ Իսկապես նրա բուն ցանկությունն եր՝ ծառայել անձնապես միմիայն Դիմաքսյանին, վորին նա այնքան ընտելացել եր, վոր դժբախտ եր համարում իրան առանց նրան։ Բայց նա այդ ուղղակի չասաց։ Նա միայն խնդրում եր՝ ազատել իրան այժմյան պաշտոնից։

Առանց յերկար տատանվելու՝ Դիմաքսյանը կարգադրեց Սիրականի վիճակը նրա ցանկության համեմատ։ Մսերյանը նրան յուր հետ կվերցնի, Հաբիգյանը կտա նրան մի պաշտոն առժամանակ։

— Այսինքն մինչև արտասահմանից վերադառնալս։ Հենց վոր վերադարձա, իսկույն Մսերյանին կհեռագրեմ, վոր քեզ ինձ մոտ ուղարկի։ Բայց ինչու, նախ քան այստեղ գալը յես մտադիր եմ իմ հայրենիքը գնալ, այնտեղից մենք միասին կգանք այստեղ։

Դարձյալ ուրախության ժպիտը փայլեց Սիրականի թավամազ դեմքի վրա։ Այս անգամ արդեն նա իրան յերջանիկ եր համարում։

Կառքը պատրաստ եր։ Սպասավորը Սիրականի օգնությամբ արկղերը դուրս տարավ և տեղավորեց կառքի վրա։ Յերկու ընկեր, ուրախ ու զվարթ խոսակցելով, դուրս յեկան։ Չնայելով, վոր օրը բավական անցել եր, փողոցում մարդիկ չեյին յերևում։ Միայն դանդաղ ընթացքով անցնում եյին միքանի սայլեր աղյուսով և կրով բեռնավորված և մի վոստիկան մայթի վրա կանգնած՝ դիտում եր հյուրանոցից դուրս յեկողներին։

Դիմաքսյանը և Մսերյանը նստեցին կառք։ Սիրականը, գդակը ձեռին բռնած, մնաց մայթի վրա։ Դիմաքսյանը նրան ձեռով նշան արավ, վոր կառք նստի։ Նա կամեցավ բարձրանալ կառապանի նստարանի վրա։

— Ոչ, այստեղ նստիր,— ասաց Դիմաքսյանը և, մի կողմ քաշելով յուր առջև դրած չեմոդանը, ցույց տվեց դիմացի փոքրիկ նստա-

բանը,—մենք յերկուսս էլ շատ փոքրիկ մարդիկ ենք, կտեղավորվենք ամեն մի անկյունում։

Դա առաջին կատակն էր, վոր նա արավ յուր մարմնի փոքրության մասին։ Յեվ վոչ մի կեղծիք, վոչ մի ցավ, վոչ մի ափսոսանք չզգացվեց այդ կատակի մեջ։ Նա ուրախ էր և զգացված։ Նա անընդհատ խոսում էր, ծիծաղում և սրախոսում Սիրականի վերաբերմամբ։ Ո՛ո, յերբեք, յերբեք խեղճ ծառան այնքան յերջանիկ չէր յեղել, յուր մասին կատակներ լսելով, վորչափ այդ պահին։

Բայց քանի կառքը մոտենում էր կայարանին, այնքան նրանց խոսակցությունն ավելի ու ավելի ընդհատվում էր և այնքան յերկու ընկերների զվարթությունը պակասում էր։ Յերբ նրանք կառքից ցած իջան և մտան կայարան, ընդամենը հինգ րոպե յեր մնում գնացքի հեռանալուն։ Սիրականը արկղերը տարավ ուղևորների դահլիճը, շտապով Դիմաքսյանի համար տոմսակ վերցրեց։ Ուղևորների թիվը շատ քիչ էր, հեռավոր տեղեր ճանապարհորդողներ չկային. գրեթե ամենքն էլ գնում էին ամառանոցներ իրանց ընտանիքների մոտ։

Զանգակը հնչեց յերկրորդ անգամ և այդ հնչյունը մի տխուր զգացմունք զարթեցրեց թե Դիմաքսյանի և թե Մսերյանի ու Սիրականի սրտում։ Չնայելով, վոր յերեքն էլ հուսով լի էին, թե շուտով, ընդամենը յերեք չորս ամսից հետո, պետք է տեսնվեն, բայց բաժանման զգացումն ավելի հաղթող հանդիսացավ։

Դիմաքսյանն յերեք անգամ համբուրվեց Մսերյանի հետ, Սիրականի ձեռի մեջ սեղմեց մի բուռն թղթադրամ և շտապով պլատֆորմից վոտքը դրեց գնացքի կառքերից մեկի սանդուխքի վրա։ Ճիշտ այն վայրկյանին, յերբ նա բարձրանում էր վեր, անզգուշությամբ ուսով կպավ մեկին։ Նա յետ նայեց ներողություն խնդրելու և յերես առ յերես հանդիպեց Բարաթյանին...

Նրա մարմնով տկամտ մի ցնցումն անցավ։ Բայց դա մի վայրկենական անցողիկ ցնցում էր, վոր վոչինչ կապ չուներ նրա գիտակցության հետ։ Նրա դեմքի վրա յերևաց մի սառն ժպիտ։ Նա անտարբեր կերպով յերեսը դարձրեց և հանդարտ բարձրացավ վերև։ Բարաթյանը կանգնած էր դեռ ցածում։ Նա չէր շտապում։ Մի ձեռը ճանապարհի պայուսակին հենած, մյուսով վոլորելով յուր բեղերը, նա խոսում էր յուր մոտ կանգնած Վեքիլյանի հետ։ Հենց վոր տեսավ Դիմաքսյանին, նա ճիգն արավ յուր գեր ու կարմիր դեմքին արհամարհական արտահայտություն տալ։ Բայց այս անգամ այդ չհաջողվեց նրան...

Նա աչքունքը թթվեցրեց և բարձրացավ կառքի վրա։ Զանգակը

հնչեց յոթերորդ անգամ։ Փոքրիկ լուսամուտներից մեկում ցրեաց Դիմաքսյանի գլուխը, մյուսում Բարաթյանի գլուխն ու կուրծքը։

— Վաղը չի մյուս որ անպատճառ,— գոչեց Դիմաքսյանը, դդակը վերցնելով վերջին բարևը տալու Մսերյանին։

— Վոչ, հենց վաղն և եթ,— պատասխանեց իդեալիստը,— հենց վաղն և եթ, ցես և Սիրականը…

Այո, տալով վերջին բարևը յուր ընկերոջ, նա նույն վայրկյանին մտքում վճռեց այլ ևս վոչ մի ավելորդ որ չսպասել և հենց վաղն ուղևորվել այնտեղ, ուր նա հույս ուներ օգտավետ մարդ դառնալու…

Գնացքը շարժվեց, կառքերը միմյանց ցնտեից դղրդալով անցան Մսերյանի առջևով։ Միևնույն կառքի մեջ անցան նրա յերկու ընկերները, վորոնցից մեկը տանում եր նրա խորին սերը, հարգանքը, մյուսը՝ նրա արհամարհանքը և ատելությունը…

ՎՈ՞ՐՆ Է ՄԱՅՐԸ

1915

ՎՈ՞ՐՆ Է ՄԱՅՐԸ

I

Կինը վշտանում էր առանց զավակների։ Դա նրա կյանքում մի խոշոր բաց էր, հավասար անայության։

Վեց-յոթ տարի հուսալուց հետո արդեն կորցրել էր հավատը։ Ոչ մի բժշկություն, ոչ մի միջոց և ոչ մի աղոթք չօգնեց նրան։

Այնինչ՝ ցերջանիկ լինելու համար միայն զավակն էր պակասում։ Այսպես էր մտածում Լիդիան։ Եվ Գուրգենը հավատացնում էր, թե ինքն էլ այդպես է կարծում։

Սիրում էին իրարու յուրովի, բայց հավատում էին միմյանց հավասար։

— Նա ինձ դեռ չի զավաճանել,— ասում էր Լիդիան յուր բարեկամուհիներին,— իսկ չեթե մի օր դավաճանե, ինչ արտաքո կարգի հանցանք կլինի գործած։ Այժմ բոլոր տղամարդիկ դավաճանում են իրանց կանանց...

— Նա չերբեք չի համարձակվիլ ինձ դավաճանել,— ասում էր Գուրգենը մտերիմների շրջանում,— իսկ չեթե մի օր դավաճանե— կխեղդեմ։

Ցերբեմն կրքերը բռնկվում էին այնպես, վոր նրանք գրկախառնվում էին նույն անզուսպ ավյունով, վորով գրկախառնվեցին յոթ տարի առաջ այն նշանակալից գիշերը, չերբ Գուրգենը Լիդիային ուղեկցեց կառքով տուն։

Պատահում էր նաև, վոր հագուրդ ստացած սերը նիրհում էր։ Այդ ժամանակ նրանք որերով չեյին ժպտում միմյանց։

Բայց չերբեք իրանց ընտանեկան խռովությունները ուրիշներին չեյին հայտնում։ Ընդհակառակը, գիտեյին իրարու հարգել շատերի նախանձը գրգռելու չափ։

Լիդիան մտածում էր.

— Ինձ համար նա արհամարհեց շատ հարուստ որիորդների և ամուսնացավ մի աղքատ աղջկա հետ։ Չէ՞ վոր իմ հայրը, բացի իշխանական տիտղոսից, վոչինչ չէր թողել և յես ստիպված էյի չնչին վարձով յերաժշտության դասեր տալով գլուխս պահել։

Գուրգենը մտածում էր․

— Ինձ համար նա մերժեց տասնյակ փայլուն յերիտասարդների առաջարկը և ամուսնացավ մի մարդու հետ, վոր խայտառակ վաշխառվի վորդի յե և չի կարող պարծենալ վոչ յուր գեղեցկությամբ, վոչ խելքով և վոչ բարոյականությամբ։

Կար մի ուրիշ բան յեթե վոչ ավելի զորավոր, գոնե ավելի հիմնավոր քան սերը։

Լիդիան գեղեցիկ էր, Գուրգենը—հարուստ։

Յերբ Լիդիան առաջնակարգ խանութները մտնելիս տերերն ու գործակատարները վազում էյին ընդ առաջ նրա նուրբ ճաշակին գոհացում տալու հոգացողությամբ, հրճվում էր։ Հրճվում այն գիտակցությունից, վոր բոլոր յուր նախանձոտ ընկերուհիների մեջ իրան վիճակվեց տիրել հայտնի կալվածատիրոջ վորդու հարստությանը։

Յերբ Գուրգենը հասարակական վայրերում կամ փողոցներում Լիդիայի հետ թևանցուկ զբոսնում էր, ընդհանուր ուշադրություն էր գրավում յուր բարձր հասակով, նուրբ կազմվածքով, դեմքի զարմանալի կանոնավոր գծերով և մանավանդ յերկնագույն աչքերով։ Յեվ սնափառ ամուսինը զգում էր անսահման ուրախություն ու հպարտանում էր մտքում, վոր իրան վիճակվեց տիրել աննման գեղեցկուհուն։

Մի որ նա ասաց․

— Լիդիա, յես ուզում եմ կտակս գրել տալ։

Լիդիան սև ունքերի տակից կապտագույն աչքերը զարմացմամբ հառեց ամուսնու յերեսին։ Յեվ, տեսնելով Գուրգենի դեմքի լրջությունը, հանկարծ բարձրաձայն ծիծաղեց։ Նրա առողջ ձայնի արծաթե հնչյունները լցրին սենյակը, վոր տոգորված էր գարնանային արեգակի շողերով։

— Մի՛ ծիծաղիր, Լիդիա, յես կատակ չեմ անում։

— Ահ, ահ,—շարունակեց Լիդիան,—մարդը կատակ չի անում և ուզում է, վոր յես չծիծաղեմ էլ...

— Բայց ինչու։ Չէ՞ վոր արդեն ժամանակ է այս մասին մտածելու։

— Վո՞ր հասակում։

— Ոգոստոսին կլրանա քառասունս...

— Հետո...

— Մահը միայն ծերերի հյուրը չէ, Լիդիա։ Նրա առջև բաց են

բոլոր դռները ժամանակ անժամանակ։ Իսկ հարուստներին նա այցելում է հաճախ առանց զեկուցման։

— Բայց ի՞նչը քեզ ստիպեց մտածել կտակի մասին, այս է հետաքրքրականը,— հարցրեց Լիդիան և, նայելով իրան պահարանի հայելու մեջ վոտքից մինչև գլուխ, նստեց ամուսնու գրասեղանի քովը։

— Քո վիճակը, Լիդիա, միայն քո վիճակը։ Յեթե յես վաղը-մյուս որը հանկարծամահ լինեմ, դու պիտի ստանաս իմ կարողության միայն յոթներորդ մասը։ Մնացյալը կանցնե իմ քրոջը, Յելենային, այսինքն նրա զավակներին։ Իսկ դու գիտես, վոր յես ատելով ատում եմ նրանց, ինչպես ատում եյի և՛ նրանց հանգուցյալ հորը։ Նրանք մի տարում քամուն կտան հանգուցյալ հորս քառասուն տարվա արյուն-քրտինքի արդյունքը... Համաձայնվիր, վոր դա շատ էլ ցանկալի հեռանկար չե քեզ համար։

— Ուրեմն, դու ուզում ես, վոր միայն յե՛ս լինեմ քո ժառանգը,— հարցրեց Լիդիան վոչ առանց ներքին անհանգստության։

— Դա իմ անկեղծ ցանկությունն է։

— Շնորհակալ եմ. այդ ցույց է տալիս, վոր յես դեռ իմ հրապույրը չեմ կորցրել քո աչքում։ Բայց մի որ կկորցնեմ, և այն ժամանակ կտակդ գրել կտաս սառույցի վրա։ Յերեխա՛, յերեխա, ի՛նչ ժամանակ է մահվան մասին մտածել։ Կյանքը չի կրկնվում, մտածիր ապրելու և վայելելու մասին։

— Բայց ի՛նչ գեղեցիկ ես այսոր, Լիդիա. նայում եմ և սքանչանում։ Քո թանձր մազերը, քո խոշոր նշաձև կապուտակ աչքերն յերկայն թերթերունքներով, քո բարակ սևաթույր ունքերը — նորից կարող են ինձ խելքից հանել։ Լիդիա, այդպիսի գեղեցկություն ունեցող մի կին չպիտի հրաժարվի ճաշակել յերիտասարդ և հարուստ այրի զգացումները։ Ո՛հ, դա յերանելի վիճակ է, յերազը բոլոր սնափառ կանանց։ Լինել քսանույոթ տարեկան, գեղեցիկ, վոսկեղոծ և ազատ, միանգամայն ազատ, ամենքին հաճելի, ամենքի յերևակայության առարկա։ Լինել շրջապատված տափակ սրախոսներով և առաքինի անառակներով, լսել նրանց սուտ յերդումները, կեղծ հառաչանքները, հույս ներշնչել յուրաքանչյուրին և վոչ վոքի հույսը չարդարացնել։ Տեսնել ախմար մրցակիցների խուլ պայքարը, արտաքին հետաքրքրությամբ և ներքին արհամարհանքով լսել նրանց քողարկված զրպարտությունները միմյանց դեմ և տանջել, տանջել նրանց անվերջ, անողոք ու պարծենալ, ու հպարտանալ, ու ծիծաղել, ու սքանչանալ ինքդ քեզմով։ Լիդիա, Լիդիա, վորքա՜ն կսազի սև զգեստը յերազուն դեմքիդ, մելամաղձոտ հայացքիդ։ Լուսինն այնքան խորհրդավոր չի լինի ա-

մառային նոսր ամպերի տակից, վորքան քո դեմքը սև յերեսքողի տակից...

— Բավական է։ Չգիտեմ քեզ ինչ է պատահել այսօր, վոր բանաստեղծ ես դարձել։ Յես քեզ խնդրում եմ կատակ չանել լուրջ բաների հետ։ Քո մի ակնարկն անգամ մահվան մասին ինձ վշտացնում է։ Յերդվում եմ։

— Ախ, հավատում եմ, հավատում,— գոչեց Գուրգենը և վերկացավ տեղից, գրկեց Լիդիայի գլուխը, վոր այնպես հրաշալի պսակվել էր թանձր մազերով, և ջերմագին համբուրեց։

Յեվ նորից նստեց յուր տեղը։

— Այո, այո,— ասաց այս անգամ լրջորեն,— այնուամենայնիվ յես պետք է կազմեմ կտակս վաղորոք, վորպեսզի մի անգամ առ միշտ փակեմ քաղցած աղվեսների ախորժակը։ Ահ, Լիդիա, չկա ինձ համար ավելի զազրելի բան, քան այն, յերբ հարուստի դագաղը շրջապատում են նրա մերձավորները յերեսների վրա շինծու վշտի կնճիռը և սըրտերի մեջ անկեղծ ուրախությունը։ Յերբ նրանք, սևեր հագած, գլուխները կրծքերին թեքած, հետևում են հանգուցյալի դագաղին՝ յես վոչ միայն նրանց դեմքերի, այլև մեջքերի վրա, քայլվածքի ու շարժումների մեջ կարդում եմ. «Թողե՜լ է, արդյոք, մեզ համար մի բան այս շունը, վորին տանում ենք հողին հանձնելու և, վորքա՞ն»։ Այսպես են մտածելու և՛ իմ բոլոր զավակները դագաղիս հետևելիս...

— Չգիտեմ, գուցե դու ունես իրավունք այդ յենթադրությունն անելու,— ասաց Լիդիան,— բայց չեմ կարող թաքցնել, վոր յես էլ չեմ սիրում նրանց։ Ինձ թվում է, վոր նրանք ապականված են ավելի, քան թույլ է տրված նույնիսկ մեր ժամանակում։ Նրանցից մեկը մինչև անգամ այն աչքով չի նայում ինձ, վորպես պարտավոր է նայել մի որինավոր յերիտասարդ յուր քեռակնոջ վրա։

— Այդ յես գիտեմ, Լիդիա, գիտեմ, և այդ է պատճառը, վոր դու ազատվել ես նրա դեմքից։

— Ի՞նչպես, դու նրան արգելե՞լ ես այցելել մեզ։

— Այո, նրան էլ, մյուս յեղբորն էլ։

— Հուսով եմ, վոր պատճառը չես ասել։

— Մի՞թե իմ ինքնասիրությունը թույլ կտար ասելու։

— Ուրեմն վճռել ես նրանց զրկե՞լ բոլորովին։

— Վոչ բոլորովին։ Յես նրանց համար կթողնեմ այնքան, վորքան յես եմ ուզում և վոչ այնքան, վորքան իրանք են սպասում,— իմ ամբողջ կարողությունը։

— Ահ, ինչո՞ւ մենք չունենք մի զավակ, Գուրգեն,— գոչեց Լիդի-

ան խորին թախիծով,—ինչու մենք ծերության հասակում չպիտի ունենանք մեր ապավենը։ Այդ անտանելի չէ, Գուգեն, անտանելի...

Եվ, արմունկները հենելով սեղանին, գլուխը բռնեց ձեռներով և սկսեց հեկեկալ։

— Երեխա մի լինիր, Լիդիա, բավական է ինչքան մտածել ես այդ մասին և արտասվել։ Զէ՞ որ մենք անզոր ենք բնության արգելքների դեմ։ Դե, դե, խելքի եկ։ Ես տանել չեմ կարող քո լացը։

— Ոչինչ, ոչինչ,—զսպեց իրան Լիդիան, աչքերը սրբելով ասեղնագործ բաթիստյա թաշկինակով,—կանցնի։ Գրկիր ինձ, Գուրգեն, համբուրիր և չդավաճանես. լսում ես, չդավաճանես։

Վերջին խոսքը ցնցեց Գուրգենին։ Նա չհամարձակվեց համբուրել Լիդիային...

II

Անցել էին ամիսներ այդ օրից։

Առավոտ էր։ Նրանք սեղանատանն էին։

Գուգենը լրագիր էր կարդում։ Լիդիան, սամովարի մոտ կանգնած, թեյ էր պատրաստում սպիտակ պենվարը հագին։

Նրա դեմքն արտահայտում էր անսովոր մտահոգություն։ Մերթ ընդ մերթ նայում յեր Գուրգենի սևահեր գլխին, որ թեքվել էր դեպի լրագիրը։ Պարզ էր, որ մի բան ուներ ասելու, բայց չէր վստահանում խանգարելու ամուսնու ընթերցանությունը։

— Զարմանալի չէ,—ասաց Գուրգենը,—վերջապես, մի կողմ դնելով լրագիրը և թեյի բաժակը մոտեցնելով իրան,—այդ մեծապատիվ խմբագիրները կարծում են, թե լրագիրը նրա համար է միայն, որ մարդկանց առավոտը թունավորե։ Այս ամբողջ թերթի մեջ ո՛չ մի ուրախալի լուր։ Կարծես, ինձ համար շատ հետաքրքրական է, թե մեկը մի աղախնի գրկել է կուսությունից և աղախինը նրա վրա կարբոլյան թթվեջուր է ածել. և դրա պես շատ ու շատ հիմարություններ...

— Ցավում եմ,—խոսեց Լիդիան, նստելով ամուսնու դեմ,—որ յես էլ պիտի մի անախորժ լուր հաղորդեմ քեզ։

— Ի՞նչ է պատահել։

— Մի անսպասելի բան։ Մեր յերիտասարդ սպասուհին տկար է...

— Տկա՞ր է.—կրկնեց Գուրգենը,—դա ի՞նչ մի մեծ դժբախտություն է։

— Այո, բայց ուրիշ տկարություն է...

— Չեմ հասկանում։

— Յեթե ուշադրություն դարձրած լինեյիր նրա իրանի վրա, կհասկանայիր։ Ահա յերկու ամիս է, վոր առանց շալի չի յերևում մեր աչքին։ Իսկ այսօր խոստովանեց։ Մի խոսքով, վաղը-մյուս օրը մենք կունենանք մի անկոչ հյուր։

Գուրգենը չցնցվեց և վոչ էլ նրա դեմքի մկանունքները շարժվեցին։ Նա միայն արտասանեց.

— Ահա թե ինչ, ի՜սկ վոր այդ մի սյուրպրիզ է։ Բայց չէ՞ վոր Զինան...

— Որիորդ է, ուզում ես ասել,—լրացրեց Լիդիան հեգնաբար,— մեկը մյուսին չի խանգարում։ Մի՛ մոռանար, վոր մենք ապրում ենք N... քաղաքում, իսկ Զինան քսան տարեկան անփորձ աղջիկ է ու մի քիչ էլ հիմար։

— Ճիշտ է, բայց հետաքրքրական է ո՞վ է այցելում նրան,—արտասանեց Գուրգենը այնքան անտարբեր, վոր Լիդիան նրա ձայնի մեջ չնկատեց և՛ վոչ մի կեղծ նոտա։

— Չգիտեմ։ Գոնե յես վոչ վոքի չեմ հանդիպել նրա մոտ։

Գուրգենը կամեցավ ասել. «գուցե իմ քրոջ վորդին», բայց զըսպեց իրան և հարցրեց.

— Դու բացատրություն պահանջե՞լ ես իրանից...

— Այո, պահանջեցի։

— Յե՞վ...

— Չխոստովանեց։

Գուրգենը զգաց վորոշ թեթևություն։ Յեվ վորպեսզի չմատնի իրան, վերկացավ և սկսեց անցուդարձ անել։

— Յես ավելորդ համարեցի պնդել,—շարունակեց Լիդիան։—Ի՞նչ կարիք կա կեղտը քրքրելու և խեղճին տանջելու։ Առանց այդ էլ նա ամոթից տառապում է։ Նա լաց յեղավ և ինձնից ներում խնդրեց— չգիտեմ ինչու։ Հարկավոր է մտածել նրա դրության մասին։ Ամոթը մասամբ մեր տանն է վերաբերվում։

— Այո, իհարկե, պետք է մտածել։ Արդյո՞ք, ի՞նչ ես մտադիր անելու։

— Կկամենայի նախ քո կարծիքն իմանալ։

Գուրգենը նեղն ընկավ։

— Իմ կարծի՞քը։ Բայց յես ի՞նչ կարող եմ ասել։ Այդպիսի գործերում տղամարդը անզոր է յուր խորհուրդներով։ Գուցե հարկավոր է արձակել նրան, իհարկե, մի քիչ ապահովելով։

— Արձակե՞լ, այդ դրության մեջ,—գոչեց Լիդիան գթառատ կա-

նանց հատուկ կարեկցությամբ,— վո՛չ, յես այդպես անխիղճ լինել չեմ կարող։ Մարդիկ հատուկ ընկերություններ են հիմնում ընկածներին բարձրացնելու և կորստյան անդնդից ազատելու համար։ Մի՞թե մենք չենք կարող պաշտպանել մեկին, վոր հինգ տարի ծառայել է մեզ հավատարմությամբ։

— Իհարկե, կարող ենք, բայց չգիտեմ ինչպես։ Յեթե խնդիրը ծախքերն են, յես վոչինչ չեմ խնայիլ։ Միայն չգիտեմ հարմա՞ր է, արդյոք, նրան մեր տանը պահել։

— Հարմար չէ, իհարկե, բայց յես ուզում եմ նրան ուղարկել մերձակա գյուղերից մեկը։ Այնտեղ նա կազատվի յուր հիմարության հետևանքից, հետո կմտածենք ինչ անել։

— Հիանալի է, ավելի հարմար վճիռ չէր կարելի յերևակայել։ Յեվ վորքան շուտ ուղարկես, այնքան լավ։

Ասաց Գուրգենը և, վախենալով մի գուցե ինքն իրան մատնե, շտապեց դուրս։ Նրա համար անսահման ծանր էր մնալ Լիդիայի մաքուր մթնոլորտում։ Նրան անհանգստացնողը վոչ այնքան սպասուհու վիճակն էր— ավա՜ղ, այս նրան հայտնի չէր վաղուց— վորքան Լիդիայի անգիտությունը...

— Զինա, Զինա,— լսեց նա նախասենյակում անգիտակ կնոջ արծաթահնչյուն ձայնը, վորի մեջ չէր զգացվում վրդովման կամ կասկածի շեշտ։— Զինա, յեկ այստեղ։

Նա վազեց փողոց ամոթը ճակտին, խղճի զարհուրելի խայթը կրծքի տակ։ Այնտեղ, այդ խուլն ամբոխին խառնվելով, նա զգաց մի տեսակ թեթևություն, մտածելով, վոր ինքը բացառություն չէ...

Հետևյալ օրը Զինան, Լիդիայի հրամանով, ուղևորվեց մերձակա գյուղերից մեկը և այնտեղ գտավ ժամանակավոր ապաստան յուր խայտառակության համար։

Յերեկոյին Լիդիան ասաց.

— Վորքան լավ է թշվառին օգնելը։ Թվում է ինձ, վոր յես յերբեք այսպես յերջանիկ չեմ յեղել, վորպես այսօր։ Խեղճ աղջիկը ուրախությունից արտասվեց, վոր նրան չշպրտեցին փողոց ինչպես մի թքած պատառ։

— Այո, առանց քո բարության նա կարող էր կորչել,— ասաց Գուրգենը, խույս տալով Լիդիայի հայացքից։

Զինան վերադարձավ մոտ յերկու ամիս անցած՝ նիհարած, գունատ, բայց ավելի հանգիստ հոգով։

— Յերեխա՞ն,— հարցրեց Լիդիան։

— Թողի գյուղում։

— Ո՞ւմ մոտ,

— Մի գեղջկուհու։ Նրա յերեխան նոր մեռավ, կաթը մնում է, ինքը խնդրեց։ Յես չեմ կարող կերակրել, կխանգարե։

— Աղջի՞կ է։

— Տղա։

— Սիրո՞ւն է։

— Աստված գիտե։

Պատասխանելով տիրուհու հարցերին, Ջինան ամոթից և խղճի տանջանքից չէր կարողանում նայել նրա յերեսին։

— Շատ բարի,—ասաց Լիդիան,—թող մնա այնտեղ, հետո կմտածենք։ Լավ, մի ամաչեք։ Առաջ պիտի մտածեիք, այժմ ուշ է։ Միայն զգույշ, յեթե կրկնվի, չեմ ների... Խեղճ աղջիկ, խեղճ աղջիկ, և ո՞վ է յեղել այն անգութը, վոր...

Նրա խոսքը ընդհատվեց Ջինայի բարձրաձայն, դառը հեկեկանքով։ Մի վայրկյան ևս, և սպասուհին ընկավ նրա վոտներին...

— Տիրուհի, ներեցեք, աղաչում եմ, տիրուհի, ներեցեք։ Դուք այնքան բարի յեք, այնքան վեհանձն, վոր չեմ կարող, չեմ կարող...

Յեվ, բռնելով Լիդիայի հագստի փեշերը, ծածկեց նրանց համբույրներով ու արցունքով։

— Ի՞նչ պատահեց ձեզ, Ջինա,—գոչեց Լիդիան զարմացած,—ինչո՞ւ այդպես հանկարծ։ Յես ձեզ չեմ նախատում։ Ամեն վոք ինքն է պատասխանատու յուր մեղքերի համար...

— Բայց յես մի անպիտան աղջիկ եմ, տիրուհի, յերախտամոռ, գարշելի, նախատեցեք ինձ...

Դռների մեջ յերևաց Գուրգենը։ Նա ձգեց Ջինայի վրա մի գաղտնի սպառնողական հայացք։

Զսպելով իրան, սպասուհին արագ վոտքի կանգնեց, արտասանելով.

— Ներեցեք, տիրուհի, յես... վոչինչ... կանցնի...

Տաս ամիս անցած՝ նա յերեխային գյուղից քաղաք բերեց։

III

Դա մի սևաչյա մանուկ էր, առողջ, կայտառ, ժպտուն ինչպես գարնանային առավոտյան առաջին շողը։

Նախանձի նման մի վատ զգացում վայրկենաբար պղտորեց Լիդիայի անդորրացած և թախծալի հոգին։ Զգաց մի տեսակ անզոր ատելություն դեպի սպասուհին, նրա օրգանիզմի առողջությունը։ Ատելու-

թյուն տալու կնոջ, որ շատ էր տառապել մի այդպիսի. զանձ ունենալու տենչանքից։

Յեվ նույն վայրկյանին կայծակի արագությամբ միտք հղացավ տիրել ոսկե արգանդի բերքին։ Նա զգաց, որ այդ միտքը հանցավոր է, զատապարտեց անմիջապես, բայց և չկարողացավ հաղթել նրան։

—Սիրո՞ւմ եք,—հարցրեց նա սպասուհուն, որ յուր զավակին այնպես էր պահում ձեռների վրա, ինչպես մի փխրուն ապակի և ոչ ինչպես յուր հոգու հատոր։

—Ատում եմ, անմեղ է,—պատասխանեց Զինան և յուր մտքում ավելացրեց.—յերանի ազատեիք ինձ այս բեռից։

—Ձեր սիրում, այդ յերևում է։

—Ահ, տիրուհի, աղքատների համար յերեխաները միայն տանջանք են։ Վողորմած յեղեք ..

—Վողորմա՞ծ.. բայց ինչո՞ւ նրա հայրը չի ուզում վողորմած լինել...

—Հայրը,—կրկնեց սպասուհին և գլուխը թեքեց կրծքին։

—Լավ, լավ, մի՛ ասեք, յես չեմ ուզում նրա ով լինելը իմանալ։ Թող նա անհայտ մնա, դա ձեր գաղտնիքն է...

Յեվ Լիդիան նայեց սիրալիր հայացքով փոքրիկին, վոր մոր գըրկից մտիկ էր անում հավատով, ակնկալությամբ։ Կարծես այդ անլեզու եյակն զգում էր, վոր յուր՝ ճակատագիրն այլևս կախված է այդ շքեղ հագնված, բարձրահասակ, գեղեցիկ, փարթամ կնոջ բարի կամքից.

Զինան շարունակ խույս էր տալիս տիրուհու հայացքներից, վոր մերթ դառնում եյին դեպի զավակը, մերթ դեպի մայրը։ Պարզ էր, վոր մի միտք տանջում էր նրան։ Մի միտք, վորից կկամենար ազատվել և չէր կարողանում։

—Թողեք յերեխան այստեղ մնա,—ասաց Լիդիան քիչ խորհելուց հետո։—Ուզո՞ւմ եք։

Զինայի աչքերը ուրախությունից փայլեցին։ Յեթե նրան ապտակեյին և դուրս ձգեյին յերեխայի հետ, կհամարեր յուր արժանի վարձը։.

—Զավակի ունենայիք,—շարունակեց Լիդիան,—բայց վոր ունիք, պետք է պահպանել։

—Տիրուհի, շնորհակալ եմ, ա՜հ, չեք իմանում, վորքան շնորհակալ եմ,—գոչեց Զինան և արտասվեց։

—Առանց շնորհակալության։ Մարդիկ յերբեք չեն անում այն, ինչ վոր իրանց համար հաճելի չէ։

—Բայց չէ՞ վոր դուք ինձ ազատեցիք մահու վտանգից։ Յես

վճռել էր նրան վոչնչացնել իմ արգանդում։ Իսկ այդ, գիտեք, շատ վտանգավոր է։ Իմ քույրը դրանից մեռավ այն անիծյալ պառավի ձեռքում։ Մեռավ, անիծելով յուր ճակատագիրը։ Ես էլ կարող էի մեռնել։ Դուք ինձ ազատեցիք, հավիտյան չպիտի մոռանամ։

—Վողորմած աստված, ի՜նչ անզգայություն,—վրդովվեց՝ Լիդիան մինչև հոգու խորքը,—դուք վախենում էիք ձեր մահից։ Իսկ այդ անմեղը։ Մի՞թե չգիտեք, վոր դա կլիներ վորդեսպանություն։

—Ի՞նչ արած, տիրուհի, ճակատագիրս է։ Վոչ, վոչ, տիրուհի, մի՛ նեղանաք, աղաչում եմ։ Սխալմամբ ասացի։ Ներեցեք, տգետներ ենք, չգիտենք մեր խոսածը։

—Բավական է։ Տվեք ինձ այդ յերեխային։ Ես նրանով կզբաղվեմ, իսկ դուք ձեր գործին կացեք։

Զինան յերեխային լուռ տվեց տիրուհուն և զգաց, վոր յուր կրծքից ընկավ մի ծանր քար։

Նույն որը և յեթ Լիդիան անձամբ գնեց նուրբ կտավից պատրաստի ճերմակեղեն ու բոլոր պարագաները յերեխայի համար։ Իրիկնադեմին նա ուներ Զինային նրան լողացնելու և զուգեց ու տարավ յուր սենյակը։

Գուրգենը վոչինչ չասաց։ Նա մինչև անգամ կարողացավ ձևանալ միանգամայն անտարբեր դեպի յերեխայի վիճակը։

Յերբ առաջին անգամ Լիդան համբուրեց փոքրիկին—իսկ համբուրեց մի շաբաթ անցած—զրգռվեց նրա հոգու տարիների թախիծը վորդեսիրության։ Յեվ զգաց իրան անբախտ ավելի, քան յերբ և է զգացել էր։ Միևնույն ժամանակ, մի անծանոթ հաճելի ջերմություն պաշարեց նրա հոգին։

Այդ վայրկյանից թվաց նրան, թե մի նոր տարր մտավ նրա գոյության մեջ և բռնեց այնտեղ ամուր, հաստատուն մի անկյուն։ Մայրական զգացման անծանոթ բնազդով ճաշակեց այդ զգացումը և անձնատուր յեղավ կարոտյալ հոգու ամբողջ թափով։ Սիրեց ոտար արգանդի բերքը այնպես, ինչպես կարող էր սիրել միայն հարազատ մայրը։ Իսկ յերբ փոքրիկը սկսեց թոթովել, նա փափագեց, վոր ինքը կոչվի «մամա»։ Դա նրա նվիրական յերազների մարմնացումն էր, և Զինան վոչ միայն չբողոքեց նրա դեմ, այլև կրկնակի ուրախացավ։

Որը մինչև յերեկո Լիդիան զբաղված էր նրանով և միայն նրանով։ Յեվ այդ զբաղմունքը այնքան կլանեց նրան, վոր մոռացավ Գուրգենին ու նրա տարորինակ տխրությունը ու անսովոր հեզությունը։ Նա չհետաքրքրվեց իմանալ, թե ինչու ամուսինը ամեն անգամ իրան հանդիպելիս մի տեսակ աղերսական հայացքով է նայում նրան, ինչ-

պես մի մարդ, վոր րոպե առ րոպե սպասում է անողոք դատավորի դատավճիռը։ Նա միայն մտածում էր մի բանի մասին. այն է՝ միթե կարող են նրանից խլել յերեխային։ Հետզհետե այս միտքը զարգացավ և դարձավ նրա համար մի տեսակ մղձավանջ։

Նրա կարեկցությունը դեպի Ջինան փոխվեց ատելության, ատելությունը՝ անհաղթելի թշնամության, և նա վճռեց ազատվել թշնամուց։ Նա զգում էր, վոր այդ միտքը դաժան է, հանցավոր և դատապարտելի վոչ միայն աստվածային, այլ և մարդկային օրենքներով։ Նա չարաչար նախատում էր իրան այդ բանի համար, մի և նույն ժամանակ զգում էր իրան անզոր՝ կռվելու նրա դեմ։

Մի անգամ նա մի վատ յերազ տեսավ։ Ինչ-վոր մարդիկ վոստիկանների համազգեստով հանկարծ ներս խուժեցին, խլեցին յերեխային նրա կրծքից և գնացին։ Նա սարսափից արձակեց մի ճիչ, զարթնեց և խավարի մեջ վոտաբոբիկ վազեց դեպի դանթելներով զարդարած թանգագին կողովը, վոր ստուգե՝ այնտե՞ղ է, արդյոք, յերեխան։ Նա գրկեց փոքրիկին, համբուրեց և տարավ պառկեցրեց յուր կողքին։

Գուրգենը քնած չէր։ Նա լսեց Լիդիայի ճիչը. խավարի մեջ տեսավ բոլորը, ինչ վոր նա արավ և չհամարձակվեց ձայն բարձրացնել։

Լիդիան թույլ չէր տալիս Ջինային յերեխային համբուրելու, առարկելով, թե մեծերի համբույրն առհասարակ վտանգավոր է փոքրերի համար։ Իրոք հոգու խորքում յերկյուղ ուներ, մի գուցե սպասուհին, համբուրելով յուր զավակին, հետզհետե ձուլվի նրա հետ հոգով ու մտքով և այն ժամանակ ինչպե՞ս կռվել հարազատ մոր զգացումների հետ։ Ջինան չէր վշտանում յուր մայրական շրթունքների վրա դրված արգելքից։ Ընդհակառակը, նա գոհ էր, նույնիսկ յերջանիկ, վոր տիրուհին փոխարինում է իրան իբրև մայր։

Մերթ ընդ մերթ Լիդիան ուշադիր դիտում էր յերեխայի դեմքը, բռնելով նրան յուր սենյակի լուսամուտի առջև։ Նրան հետաքրքրում էր. արդյոք, գեղեցի՞կ է նա, թե վոչ։ Յեվ թվում էր նրան, վոր որը որի վրա նա գեղեցկանում է։

Իսկ յերեխան մտիկ էր անում նրա յերեսին միշտ ժպտուն դեմքով, միշտ ակընկալ հայացքով։ Յերբեմն յուր թաթիկները բարձրացնում էր և խաղում նրա վոսկեգույն գանգուր մազերի հետ. մի բան, վոր առանձին հաճույք էր պատճառում Լիդիային։ Թվում էր նրան, վոր այլ ևս այդ փոքրիկ, փափլիկ, վարդագույն ձեռիկների մեջ է վոչ միայն յուր բախտը, այլև կյանքը։

Մի անգամ յերբ համբուրում էր նրա ձեռիկները, Լիդիան նայեց նրա սևորակ աչքերին և ցնցվեց։ Կար մի ինչ-վոր ծանոթ, նույնիսկ

մտերիմ շեշտ մանկան այդ օրվա հայացքի մեջ։ Արդյոք, մի ժամանակ, տարիներ առաջ նույն ակընկալությամբ չե՞ն նայել նրա յերեսին մի զույգ ճիշտ այդպիսի աչքեր, աղերսելով նրա սերը, ինչպես յերկնային մանանա։

Այո, այո, ճիշտ է։ Ոձից խայթվածի պես նա զգաց մի սուր ցավ է, սարսափած, յերեխային դրեց, վո՛չ, ուղղակի ձգեց կողովի մեջ և հեռացավ նրանից։ Մանուկը չժպտաց անգամ—այնքան հեզ էր նա, այնքան լուրկ։

Չար կասկածը, մի անգամ զարթնելով, արագ-արագ զարգացավ Լիդիայի մեջ։ Նա շուտով փոխվեց համոզմունքի, Վողորմա՜ծ աստված, վորքան կույր է յեղել նա, վորքան միամիտ։ Յեվ կայծակի արագությամբ նրա մտքով անցավ բոլորը, ինչ վոր կարող էր նրա համոզմունքն ավելի ու ավելի ամրացնել. և՛ Գուրգենի տարօրինակ լռությունն ու տխրությունը վերջին ժամանակ, և՛ Զինայի հանկարծակի նրա առջև չոքելը, լալը, ներում խնդրելը գյուղից գալու օրը, և ուրիշ շատ հանգամանքներ, վորոնց վրա մինչև այն օրը ուշադրություն չեր դարձրել։

Նա ճիգն արավ իշխել իրան, չկարողացավ։ Արյունը զարկեց գլխին, և թվաց նրան, վոր մի աներևույթ ձեռ խեղդում է իրան։ Յեվ, ինչպես բունից հանկարծակի կտրված շուշան, նրա քնքույշ մարմինը սպիտակ պենյուարի մեջ ընկավ գահավորակի վրա։

Նա հեկեկաց։ Այո, նա կույր է յեղել և հիմար, վոր մինչև այսօր չի տեսել ու մտածել։ Չէ՞ վոր դա պարզ է, աներկբայելի։

Նա աշխատեց խեղդել հեծկլտանքը, և միայն կանացի հպարտության զգացումը ուժ տվեց նրան։ Ինչո՞ւ ստորանալ մինչև արցունք, վո՞ր ինքնասեր կինը կարող է լվանալ արտասուքով մի այդպիսի անպատվություն։

Նա վոտքի կանգնեց, արագ-արագ սրբեց արտասուքը, կարգի բերեց մազերը, նայեց յերեխայի յերեսին և նստեց լուսամուտի առջև յուր անելիքի մասին մտածելու...

IV

Մի ամբողջ շաբաթ նա լուռ էր։

Գուրգենը չեր համարձակվում նրան խոսեցնել։ Զգում էր, վոր այլևս հասել է հատուցման ժամը և պետք է, վերջապես, կանգնել դատավորներից ամենաանողոքի առջև իբրև մի հանցավոր, վոր չունի արդարացման վոչ մի միջոց։ Ծանր էր նրա համար վոչ այնքան պատիժը, վորքան դատավորությունը, այն հարց ու փորձը, վորին սպասում էր Լիդիայի կողմից։

Բայց Լիդիան վճռեց արհամարհել ամեն մի բացատրություն։ Նա չկամեցավ կեղտոտ փարսը դրամա դարձնել և ամեն մի արդարացում Գուրգենի կողմից համարեց վիրավորական յուր իսկ պատվասիրության համար։

Յեվ ահա մի օր նա, խեղդելով յուր մեջ զզվանքի, ատելության, վիրավորված ինքնասիրության խառն զգացումները, ամենայն սառնությամբ հարցրեց.

—Ի՞նչ ես մտադիր անելու քո յերեխային։

Գուրգենը պատասխանեց առանց տատանվելու...

—Ինչ վոր կամենաս։ Միայն քո կամքից է կախված նրա վիճակը։

—Դու պարտավոր ես քո ազգանունը տալ նրան։

Գուրգենը ապշեց։ Այդ արդեն նա չէր սպասում։

— Լիդիա,—արտասանեց նա,—նախ և առաջ յես կկամենայի...

—Առանց բացատրության,—գոչեց Լիդիան արհամարհանքով,—մեն քսանութ տարեկան պատանիներ չենք, վոր մեկտեղ խաղանք։ Յես ուրախությամբ կթողնեյի այս տունը և կհեռանայի. բայց, դժբախտաբար, չեմ կարող։ Չեմ կարող տանել հասարակական բամբասանքը և իմ ընկերուհիների ու ազգականների ծաղրն ու արհամարհանքը։ Բայց այդ, յես սիրել եմ այդ յերեխային և, հակառակ իմ կամքի, այսոր ել սիրում եմ...

—Շնորհակալ եմ, Լիդիա,—գոչեց Գուրգենը դողդոջուն ձայնով,—շնորհակալ եմ, վոր խնայում ես ինձ։ Հավատա, յես շատ եմ տանջվել բարոյական այդ մոլորության համար։ Բայց... լռում եմ... լռում եմ... Դու չես ուզում, վոր յես բացատրեմ, ներում խնդրեմ։ Ունես իրավունք։ Քո հպարտությունը թույլ չի տալիս։ Միայն մի բան չեմ կարող չասել, միմիայն մի բան...

—Վոր դու ինձ սիրում ես և վախենում ես զրկվել ինձանից,—ընդհատեց Լիդիան կծու հեգնությամբ,—այնպես չէ՞։ Լավ, լավ, գիտեմ այդ տեսակ զղջումների արժեքը։ Շատ եմ լսել և կարդացել։ Թողնենք... Զարմանալի վոչինչ չկա քո արարքի մեջ... Ի՛նչ արած, դա մեր խաղն է, պետք է տանենք... Յես չեմ կարոտ քո զղջմանը, այլ նա, այն փոքրիկ անմեղը։ Դու յես նրան աշխարհ գցել, դու յել պարտավոր ես հոգալ նրա վիճակը։ Ահա միակ բանը, վոր յես սպասում եմ քեզնից։

— Հրամայիր, Լիդիա, և յես պատրաստ եմ կատարել քո բոլոր պահանջները,—ասաց Գուրգենը դատապարտելի հեզությամբ։

— Վաղը կանչիր մեր քահանային և յերեխային մկրտել տուր։ Ինչ վերաբերվում է նրա մորը, թողնում եմ քո կամքին...

— Յես չգիտեմ ինչ անել, իմ ուղեղը հոգնել է այդ մասին մտածելուց և վոչ մի վորոշման գալ չեմ կարողանում։ Յեթե թույլ տայիր հարցնել քո կամքը...

— Յես այսոր խոսեցի նրա հետ։ Նա ուրախ է ազատվել յուր մեղքի պտուղից և հրճվում է, վոր յերեխան ինձ է «մամա» կանչում։

— Ուրե՞մն։

— Յես վոչինչ չեմ կարող ասել այդ կնոջ մասին։ Կասեմ միայն, վոր յերեխան չի կարող յերկու մայրերի պատկանել։ Կասեմ նաև, մի կին, վոր յուր հարազատ զավակին չի սիրում, չունի իրավունք նրա մայրը կոչվելու...

Ասաց Լիդիան և հպարտ քայլերով դուրս յեկավ սենյակից։ Վերջին ժամանակները այդ սենյակն եր նրանց հանդիպման միակ վայրը։

Հետևյալ որը յերեխային կնքեցին։

Սկզբում Գուրգենը կամեցավ մի յեղծում գործել—ասել քահանային, թե յերեխան Լիդիայից է։ Բայց Լիդիան չհամաձայնվեց, բարվոք համարելով անկեղծորեն՝ պատմել յեղելությունը քահանային, վորքան ևս այդ ծանր լիներ նրա պատվասիրության համար։

Անունը յերեխայի ընտրեց ինքը Լիդիան—Սերժ։ Մի անուն, վոր տարիների ընթացքում փայփայել եր յուր յերևակայության մեջ։ Մի անուշ անուն նրա համար, վոր ընտանիքներում ու փողոցներում մայրերի բերանից լսելիս չեր կարողացել զսպել նախանձի զգացը։

Նույն որը Լիդիան խոսեց սպասուհու հետ։

— Վոչ, տիրուհի,—ասաց Ջինան,—անհարմար է իմ այստեղ մնալը։ Տվեք ինձ մի փոքրիկ ապահովություն, յես կհեռանամ։

Վորոշվեց նրան տալ մի գումար, և Գուրգենն իսկույն այդ գումարը հանձնեց Լիդիային։

Առավոտը Ջինան յերգելով և թռչկոտելով կապկապեց յուր լաթերը և յեկավ տիրուհուն հրաժեշտ տալու։

Լիդիան նրան սպասում եր յուր սենյակում անհամբեր։ Նա ուրախ եր։ Ջինան այնպիսի դյուրությամբ համաձայնվել եր հրաժարվել յուր յերեխայից։

— Տիրուհի, փողը,—ասաց սպասուհին վոսկու փայլին ծարավ չքավորի այն անհամբերությամբ, վոր վորքան զզվելի, նույնքան և անհասկանալի յե հարուստների համար։

— Պատրաստ է։

Լիդիան դրեց նրա առջև հարյուրանոցների մի կապոց։

Ջինան ագահությամբ վերցրեց և սկսեց ռամիկներին հատուկ

զգուշությամբ ու թերահավատությամբ համբել փողերը, յուրաքանչյուր թղթադրամ դնելով սեղանի վրա առանձին։ Նրա ձեռները դողում էին հոգեկան խորին հաճույքից, իսկ դեմքն արտահայտում էր սրբազան լրջություն։

Լիդիան դիտում էր սպասուհուն և աշխատում իմանալ՝ ինչն է հրապուրել Գուրգենին նրա մեջ։ Դա մի առողջ, բավական գեղուկ էյակ էր։ Նա դեռ չէր կորցրել կայտառ գեղջկուհու թարմությունը։ Գեղեցիկ էին նրա աչքերը, փղոսկրյա ատամները, վարդագույն շրթունքները, բայց միթե այդքանը բավական է մի տղամարդու մոլորեցնելու համար, թեկուզ բոպեյաբար։ Լիդիան զզվանքով յերեսը շուռ տվեց ու բնազդաբար նայեց իրան դիմացի հայելու մեջ։ Ցեվ նախանձեց Զինայի դեմքի գույնին։

Զինան թղթադրամները համբեց յերեք անգամ, խնամքով կապեց թաշկինակի մեջ և բաց անելով յուր կոֆտայի վերին կոճակները, դրեց կրծքի վրա։

— Ուղի՞ղ է,—հարցրեց Լիդիան արհամարհանքով։

— Ուղիղ է, տիրուհի,—պատասխանեց Զինան ժպտալով։

Այդ ժպիտը շատ անտեղի, և զզվելու չափ տխմար թվաց Լիդիային։ «Աստված իմ, մտածեց նա, վորքա՜ն անզգա յեն այդ խեղճերը...»։

— Ցերեխային չե՞ք ուզում տեսնել,—հարցրեց նա վերջին անգամ սպասուհուն փորձելու համար։

— Ինչու չէ, կարելի յե և տեսնել,—ասաց Զինան, դարձյալ ժպտալով։

Լիդիան անցավ մյուս սենյակը, վերցրեց դայակից փոքրիկին և բերեց։

— Բայց այդ վերջին անգամն է, լավ իմացեք,—ասաց նա ավելի խիստ յեղանակով, քան հարկավոր էր և անմիջապես զղջաց։

— Դե, ի հարկե, վերջին անգամն է,—համաձայնվեց Զինան և, նայելով յերեխային, մատներով թեթևակի շփեց նրա յերեսը,—ի՜շ, կատարյալ տղա յե։ Դե, ի հարկե, այդպես էլ պետք է լինի։ Կարելի՞ յե,—կամեցավ նա համբուրել նրան։

— Դուք գիտեք, վոր չի կարելի։

— Հա, մոռացա։ Ցես էլ կարդացել եմ մի գրքում, վոր յերեխաները շատ անգամ հիվանդանում են համբույրներից։ Դե, ի հարկե, հիվանդ մարդիկ շատ կան։ Բայց ասում են ձեռիկը կարելի յե համբուրել։ Սերժը լավ անուն է, բայց Պոլիկարպն էլ լավ է։ Ցես շատ եմ սիրում Պոլիկարպ...

— Պահեցեք այդ անունը ձեր յերկրորդ յերեխայի համար,—ասաց Լիդիան վոչ առանց դառնության։

— Ո՛չ, աստված մի՛ արասցե, Տիրուհի, դուք ինձ անիծում եք։ Դրանից էլ ձեր վողորմությամբ ազատվեցի. դե, բավական է, մնացեք բարով։ Զար մի՛ մտածեք իմ մասին։ Աստված վկա, յես չեյի ուզում, բայց... եհ, սատանան խաբեց։ Շատ եմ զղջում, ամեն որ աղոթք եմ անում, վոր աստված ների։ Լավ, լավ, գնում եմ։ Թող յերեխա՛ն ձերը լինի, դուք նրան ավելի լավ կպահեք։ Դե, ի հարկե, յես ի՛նչ եմ... Որոր տալ էլ չգիտեմ։ Իսկ դուք այնպես լավ յերգում եք, այնպես լավ, վոր յես այսօր լաց յեղա։ Մնացեք բարով։ Դուք բարի եք, շատ բարի։ Յերբեք չեմ մոռանալ։ Թույլ տվեք ձեր ձեռիկը համբուրել։ Չե՞ք ուզում։ Մեղա։ Դե, յես գնացի, մնացեք բարով...

Յեվ նա դուրս գնաց հանգիստ, ուրախ, ինչպես հաջող առուտուր կատարած մեկը։ Նա մտածում եր միայն՝ չլինի թե տիրուհին հանկարծ զղջա և տված գումարը հետ վերցնի...

V

Այն պահից, յերբ մանուկը սկսեց թոթովել, Լիդիան որը հարյուր անգամ հարցնում եր.

— Սիրո՞ւմ ես ինձ, Սերժ։

— Սիրում եմ, մամա, սիրում եմ։

Յերջանիկ եր այլևս։ Գուրգենի ապականված սիրո փոխարեն նա վայելում եր մի մաքուր, անշահ սեր, վորի համար պատրաստ եր խեղդել յուր մեջ ամենալավ, ինչպես և ամենավատ զգացումները։ Ահա ինչու նա վճռեց մոռանալ Գուրգենի կոպիտ դավաճանությունը։ Ահ, դա մի չարիք եր, վորից առաջացավ բարիք։ Ինչու՞ հանուն հետևանքի չներել պատճառը։ Բայց նա զգում եր, վոր վերականգնել այն, ինչ վոր յեղել է, աննհարին է։ Մի կեղտոտ հոսանք յեկավ անցավ և նրա կյանքը բաժանեց յերկու մասերի։ Չպիտի անձնատուր լինել անջնջելի վիրավորանքի դառն հիշողություններին։ Ապրել նրանով, ինչ վոր տալիս է ճակատագիրը — այս է պահանջում թե՛ առողջ բանականությունը և թե անձնասիրությունը։

Նույնն է պահանջում և՛ այդ փոքրիկը, վոր ամեն անգամ նրան տեսնելիս յուր թույլ վոտներով վազում, ընկնում է նրա գիրկն ու կրկնում.

— Մամա, սիրում եմ քեզ...

Մի անգամ Լիդիան հարցրեց.

— Սերժ, պապայի՞ն էլ ես սիրում։

— Նրան էլ եմ սիրում, քեզ ավելի չեմ սիրում, շատ եմ սիրում այ, այսքան։

Նա ձեռները տարածեց աջ ու ձախ, վորքան կարող եր լայն։

Անթափանցելի յե մանկան հոգեկան աշխարհը։ Ո՞վ կարող եր ասել, վոր այդ պատասխանի մեջ չկա ավելի գիտակցություն, քան բնազդ։ Գուցե այդ փոքրիկ գլուխը հասկանում եր, վոր ինքը բյուր անգամ ավելի յե սիրված անհարազատ մորից, քան հարազատ հորից։ Մի մարդուց, վոր նրան յուր մոր արգանդում փողոց շպրտելու դաժան միտումն եր ունեցել մի ժամանակ։

Ահ, այդ միտումը։ Վոչ միայն մանուկը, այլ և Լիդիան չեր զգում, թե վորքան հոգեկան տանջանք ե նա պատճառում Գուրգենին այժմ, յերբ հիշում ե։

— Շնորհակալ եմ քեզնից, Լիդիա,— ասաց նա մի անգամ, չկարողանալով այլևս թաքցնել յուր զղջման զգացումը,— դու ինձ ազատեցիր խղճիս հավիտենական տանջանքից։ Չլիներ քո խելքը, քո տակտը, քո բարությունը, չլիներ քո վեհանձնությունը, այդ անմեղ եյակը պիտի փողոցին զոհ դառնար և այսօր իմ խղճի խայթոցը պիտի լիներ ավելի սոսկալի։

— Ահ, թողնենք անցյալը,— գոչեց Լիդիան, չկամենալով դառնացնել յուր սիրտը նորանոր հիշողություններով։— Յես նրան թաղել եմ և վրեն դրել մի ծանր քար։ Յեթե քո զղջումը անկեղծ ե, հոգա մեր յերեխայի մասին։

— Յես արդեն կարգադրել եմ նրա վիճակը,— պատասխանեց Գուրգենը։— Յերեկ կտակս փոխել տվեցի։ Այժմ իմ միակ ժառանգը Սերժն ե և դու նրա միակ խնամակալը։ Հուսով եմ, դեմ չես։

— Դու արել ես այն, ինչ-վոր պարտավոր եյիր անել,— ասաց Լիդիան,— բայց կա մի բան, վոր ինձ հանգստություն չի տալիս։

— Գիտեմ, դու մտածում ես նրա մասին։ Նա անհայտացել ե, Լիդիա, զուր ես անհանգստանում։

— Այո, անհայտացել ե, գոնե այն օրից յես նրա յերեսը չեմ տեսել։ Բայց չե՞ վոր մի օր կարող ե հանկարծ յերևալ և խափանել փոքրիկի անդորրությունը։

— Չեմ կարծում։ Անկասկած, նա վաղուց ե մոռացել և՛ մեզ, և՛ յերեխային

— Լսիր, յես չեմ ուզում չարախոսել, բայց ինձ հաղորդել են, վոր քո քույրը ինտրիգներ ե սարքում մեր դեմ։ Ասում են, նա շարունակ այդ աղջկա հետ հարաբերության մեջ ե և աշխատում ե նրան լարել մեր, կամ ճիշտն ասած, իմ դեմ։

— Յես դրանից չեմ վախենում։ Յելենայի միակ ցավը իմ հարստությունն ե, իսկ յես, ինչպես ասացի, արդեն ապահովել եմ իմ ժառանգությունը։

— Ահ, դու քո հարստության մասին ես հոգում, իսկ ինձ տանջողը ուրիշ բան է։ Թող յես զրկվեմ քո հարստությունից, թող մնամ մի կտոր հացի կարոտ, միայն թե ինձանից չխլեն յերեխային։ Առանց նրա յես ապրել չեմ կարող։ Պահպանել քո հարստությունը դու կարող ես, բայց յերեխան միայն քոնը չէ։ Նրա ճակատագիրը յենթարկված է մի կնոջ քմահաճույքին, վորի վրա կարող է ազդել ամեն մի անցորդ, մանավանդ քո քրոջ նման մի խորամանկ կին։ Վոչ, վոչ, յես նախազգում եմ, վոր Սերժին պիտի խլեն ինձնից, իսկ ինչ կլինի իմ կյանքը առանց նրա—չգիտեմ։

Արտասանելով այս խոսքերը, Լիդիան արմունկները հենեց ամուսնու գրասեղանին, վորի քով նստած էր, և գլուխը ձեռներով բռնելով, արտասվեց մեղմիկ։

Գուրգենը վոտքի կանգնեց, մոտեցավ և կամացուկ, անվստահ ձեռներով գրկեց նրա գլուխը։ Այն որից հետո, յերբ հայտնվեց նրա դավաճանությունը, առաջին անգամը համարձակվեց մերձենալ Լիդիային։ Նա չգիտեր՝ թույլ կտա, արդյոք, Լիդիան իրան, վերջապես, համբուրելու։ Ուստի բավականացավ միայն շոյելով նրա թանձր մազերը, վորոնց մեջ առաջին անգամ նկատեց միքանի սպիտակ թելեր։

— Մի՛ տանջիր քեզ, Լիդիա, չար մտքերով և յենթադրություններով,—ասաց նա,—յես չեմ թողնիլ, վոր դու զրկվես յերեխայից։ Նա ինչպես իմն է, նույնպես և քոնն է։ Յես ատամներովս կպահպանեմ նրան քեզ համար։ Յես տեսնում եմ, նա միակ կապն է քո և իմ մեջ, միակը, դժբախտաբար, քանի վոր այլևս դու չես ուզում վերադարձնել ինձ քո սերը…

— Յելենան չար կին է, Յելենան ամեն ինչ կարող է անել,—արտասուքի մեջ արտասանեց Լիդիան, գլուխը հանդարտ ազատելով Գուրգենի կրծքից։

— Թող լինի չար վորքան ուզում է, բայց յես էլ չեմ խնայիլ նրան, թեկուզ յոթն անգամ յոթ իմ հարազատ քույրը լինի։

— Ահ, այդ կինը։ Վո՛րքան է հալածել ինձ, վորքա՜ն տանջել միայն նրա համար, վոր յես հանդգնել եմ զիջանել նրա յեղբոր աղերսանքին և նրա կինը դառնալ։ Ահ, նա չի խնայի վոչ միայն ինձ, այլև իմ ծնողներին, իմ տոհմը, իմ պատիվը։ Նա չի խնայիլ քո պատիվն անգամ, զրպարտելով իմ մաքրությունը։

— Գիտեմ, գիտեմ, Լիդիա։ Նա ամեն կերպ աշխատել է արատավորել և ստորացնել քեզ իմ աչքում, վորպեսզի մեզ բաժանի։ Բայց մի՞թե հաջողվեց։ Դու տեսնում ես, վոր վոչ դու, այլ յես եմ ստորացածը քո աչքում։ Յես, վորի միակ փափագը, նույնիսկ միակ նպա-

տակն է կյանքի՝ նորից գրավել քո հավատը և նորից տիրել քո սըրտին։ Լիդիա, յես կերդվիմ ինչով կամենաս, վոր չեմ կեղծում։ Տես, յես դարձյալ չոքում եմ քո առջև ինչպես մի զզվելի հանցավոր և աղաչում... ներիր... ներիր և մոռացիր...

Լիդիան աչքերն արագությամբ սրբեց և վոտքի կանգնեց։

— Թող, բավական է, յես դրա համար չեկեցի։

— Ուրեմն, յես յերբեք չպիտի հուսամ, յերբեք...

— Ժամանակն ինքը կթելադրի մեր անելիքը։ Իսկ առայժմ իմ միտքն ու զգացումները կլանված են յերեխայով, միմիայն նրանով...

Նա դուրս գնաց հանդարտ քայլերով...

VI

Յելենան բնակվում եր քաղաքի հեռավոր արվարձաններից մեկում, յերեք փոքրիկ սենյակներից բաղկացած մի բնակարանում, վոր այնքան եր նեղ թվում նրան, վորքան շատ եր մտածում յուր յեղբոր սեփական ահագին տան և այն ընդարձակ բնակարանի մասին, ուր կենում եր Լիդիան։

Դա մի յեռանդուն կին եր քառասուն ու հինգ տարեկան։ Բարձրահասակ եր, ամուր կազմվածքով, դեմքի խոշոր գծերով։ Մեկն այն եյակներից, վորոնց կին ծնվելը բնության քմահաճույքն է։

Յուր հանգուցյալ ամուսնուց նա ժառանգել եր յերկու վորդի, վորոնցից մեկն այժմ քսան ու հինգ տարեկան եր, անգործ, անընդունակ, շռայլ. մյուսը քսան ու յերկու տարեկան ուսանող եր, վոր նոր եր ավարտել գիմնազիան և գնացել համալսարան։

Նա անիծում եր յուր ամուսնու գերեզմանը իբրև մի մարդու, վոր ամբողջ կյանքն անց եր կացրել հաճույքների և թղթախաղի մեջ և մի որ հանկարծամահ յեղել, թողնելով ընտանիքին միքանի կիսախարխուլ խանութների վարձը։

— Ե՞հ,— ասել եր նա յերեք որ առաջ յուր մահից,— յես չեմ հոգում վոչ քո և վոչ մեր վորդիների մասին։ Դու ունիս մի հարուստ յեղբայր։ Նա յերբեք ձեզ քաղցած չի թողնի և պարտավոր է չթողնել։

Այո, այդ հույսով եր ապրում Յելենան և չեր վարանում նրանով ել կերակրել յուր զավակներին, և հանկարծ խորտակեցին նրա հույսը։ Վո՞րտեղից ասպարեզ ընկավ այդ Լիդիան և ինչպես յուր թակարդի մեջ գցեց Գուրգենին։ Անկասկած, նա և միմիայն նա յե պատճառը, վոր Յելենան և յուր վորդիները այնքան ատված են Գուրգենից։

Յեվ ամեն անգամ Յելենան խոսում եր յուր ավագ վորդու, Սի-

սակի հետ, կատաղությունը խեղդում էր նրա կոկորդը և նրա սռնա-կան շրթունքները, վորոնցից վերինը ծածկված էր նոսր մազերով, արտասանում էին ամենազզվելի ածականները «այդ ավազակի աղ-ջկա», «այդ լրբի», այդ... այդ...-ի հասցեին։ Դա չէր նրա թույլ յե-րակը, դա չէր այն բեռը, վոր ցցվել էր նրա ուղեղի ու սրտի մեջ և տանջում էր նրան անհուն, անդադար...

Այն որն Ցելենան վճռական էր ավելի, քան յերբ և է։ Ինչպե՞ս նա ձեռները ծալած նստած է անգործ։ Մինչև յե՞րբ պիտի լռե։ Սերժն արդեն վեց տարեկան է։ Զինան յուր զավակին Լիդիայից թիկլու և ոչ մի կամք ցույց չի տալիս։ Լիդիան տիրել է յերեխային բարոյապես և որինապես ու մինչև անգամ մոռացել է նրա հարազատ մոր գոյու-թյունը։ Ցել Գուրգենն այժմ ավելի, քան յերբ և է, նրա «կոշիկների տակն է»։

Պե՞տք է, արդյոք, այլևս հրաժարվել ժառանգության հույսից։ Ճշմարիտ է, Գուրգենը դեռ այնքան էլ ծեր չէ, բայց չէ՞ վոր կարող է մի որ հանկարծ մեռնել։ Ցել ի՞նչ, պիտի այդ քծը լափե նրա կա-րողությունը ուրիշի զավակի հետ։ Ո՞չ, ոչ, այդ անկարելի է։ Ցելե-նան այդ չպիտի թույլ տա։

Բայց ի՞նչպես, ի՞նչ միջոցով։

Նա մի կատաղի հայացք ձգեց յուր ավագ որդու վրա, վոր լու-սամուտի առջև նստած կարդում էր Շեռլոկ Խոլմսի արկածները։

— Քսան ու հինգ տարեկան տղամարդ է,— ասաց նա,— մինչև որս մի կոպեկ չի բերել տուն։ Գոնե այս բանում ոգներ յուր մորը։

Միսակը չլսեց նրա խոսքերը, այնքան խորասուզված էր ընթեր-ցանության մեջ։

— Քե՛զ եմ ասում, է՛յ, ծույլ անգործ։ Ի՞նչ ես թաղվել այդ գրքի մեջ։ Յեթե դու կարդացող լինեիր, գիմնազիայից քեզ չէին վռնդի։

Միսակը գլուխը բարձրացրեց և նայեց մորը։ Նրա կլորիկ յե-րեսը, փոքրիկ սևորակ պսպղուն աչքերը, հաստլիկ ջրալի շրթունք-ները, փոքրիկ, սրածայր վավաշոտ ծնոտն արտահայտում էին կյանքի բոլոր հաճույքները վայելելու հագուրդ չստացած բուռն փափագ։

— Ի՞նչ ես ասում, մամա,— ասաց նա, գրքույկը դժկամակու-թյամբ ծալելով ու մի կողմ դնելով և վոտքի կանգնելով։

— Ասում եմ, վոր մի քոսոտ էշխանի աղջիկ ավելի ճարպիկ է, քան դու, յես ու ամենքս։ Վաղը մյուս որը այդ ոձը ձեռք կգցե մորդ յեղբոր ահագին հարստությունը ու կսկսե մեզ ծաղրել։ Իսկ դու կշա-րունակես փողոցները չափչփել ձեռներդ դատարկ գրպաններիդ մեջ դրած։

— Ի՞նչ արած, մեղավորը դու կլինես, վո՛չ յես,— ասաց Սիսակը, անց ու դարձ անելով։— Յես վաղուց եմ կրկնում, վոր այդ կնոջ ատամները հանելու միջոց չկա։ Պետք ե իմ ասածը։

— Այ, դու չել հենց մի գլուխ ավազակության մասին ես մտածում։ Յերևի ուզում ես հորեղբորդ պես բանտերում մաշել կյանքդ։

— Դա ավազակություն չե, այլ տղամարդի քաջություն,— վրդովվեց Սիսակը։— Յես գործն այնպես գլուխ բերեմ, վոր ինքը Շեյոկ Խարմանն էլ չկարողանա գաղտնիքը բաց անել ու ինձ ձերբակալել։ Յես ունեմ համարձակ ընկերներ։ Բավական ե մատս բարձրացնեմ ու նրանք պատրաստ են կրակի մեջ ընկնելու։ Բացի դրանից, չե՞ վոր նրանք էլ իրանց վարձը կստանան։ Մամա, թող իմ պլանը իրագործեմ...

— Վո՛չ, վո՛չ, դա յերևակայություն ե, անկարելի ե։

— Քաջության համար անկարելի վոչի՛նչ չկա։ Լսիր, տես ինչպես կանենք։ Ամեն որ դայակն այդ յերեխային դուրս ե բերում զբոսեցնելու։ Մի ավտոմոբիլ, վորի շոֆերը կլինի մեր դավակիցը, յերկու ուրիշ ընկերներ և յես բեղերս սափրած և աչքերիս կապույտ ակնոցներ։ Մի վաստում ավտոմոբիլից, հափ, յերեխան գրկումս ե և քսան րոպե չանցած քաղաքից դուրս ենք յեկել։ Թող այնուհետև ամբողջ վոստիկանությունը վոտքի կանգնի յուր շներով, յեթե գտնեն, կասեմ «ափարիմ»։

— Հետո ի՞նչ կանենք յերեխային։

— Ի՞նչ կանե՞նք, հայտնի ե ինչ...

— Գիժ, խելքդ գլուխդ հավաքիր։ Յես կխեղդվեմ, և այդ թույլ չեմ տալ։

— Վոր այդպես ե, էլ ինչո՞ւ ինձ խանգարեցիր կարդալու։ Կյանքումս այս տեսակ հետաքրքրական գիրք չեմ տեսել։

Նա նստեց և շարունակեց ընթերցանությունը։ Յելենան այլևս վոչինչ չասաց։ Խոսելով յուր վորդու հետ, մտքով նա զբաղված եր յուր ծրագրով, վոր վաղուց նա կազմել եր և մշակել։

Նա մի քանի րոպե լուռ մտածեց, անց ու դարձ անելով, հետո վերցրեց գլխարկը պահարանի վրայից և դուրս գնաց։ Նա գիտեր վորտեղ և ում մոտ ե ծառայում Զինան։ Նստեց թրամվայ և քսան րոպե չանցած արդեն նրա մոտ եր։

— Վերջապես, շնորհք բերիք,— գոչեց Զինան, անկեղծ ուրախանալով, յերբ տեսավ յուր նախկին տիրոջ քրոջը, վորին ինքը հաճախ այցելում եր,— դուք վաղուց եյիք խոստացել ինձ այցի գալ։ Շնորհակալ եմ։

Դա այլևս առաջվա Ջինան չէր։ Նրբացել էր, սիրունացել։ Գիտեր հագնվել ինչպես «կրթված»։ Փոխվել էին նաև նրա խոսելու ոճը, շարժումներն ու ձևերը։

Նա հրավիրեց հյուրին յուր առանձին սենյակը, վորի կահ-կարասին նախանձեց Յելենան։ Նրա պաշտոնը նույնն էր, ինչ վոր նախկին տերերի մոտ, բայց կատարում էր ավելի մաքուր և ավելի նուրբ գործեր, ուստի նրա ձեռները տաշվել էին և հղկվել ինչպես մի քընքուշ տիրուհու ձեռներ։

— Ի՞նչպես են իմ նախկին տերերը,—հարցրեց նա մի տեսակ զգալի հեգնությամբ ընդգծելով վերջին բառը։—Յես նրանց վոչ մի տեղ չեմ հանդիպում։ Ուզում եմ ասել՝ թատրոններում։ Գիտեք, յես հիմա շաբաթը մի անգամ թատրոն եմ գնում, յերկու անգամ էլ սինեմատոգրաֆ։ Իմ տիրուհին, իշխանուհի Որբելյանին ինձ հետ վարվում է ինչպես յուր հավասարի հետ։ Նա շատ ազնիվ կին է։ Յես էլ նրան սիրում եմ քրոջս պես։

Յելենան պատասխանեց.

— Ձեր նախկին տերերն այժմ ապրում են ավելի բախտավոր, քան առաջ։

— Այո՞,—հարցրեց Ջինան նույն կիսահեգնական և կիսաբարեկամական տոնով։—Ուրախ եմ, շատ ուրախ եմ։

— Այո, շատ բախտավոր են, այն էլ ձեր շնորհով։

— Իմ շնորհի՞վ, ասացե՛ք խնդրեմ։

— Իհարկե։ Չէ՞ վոր դուք տվիք նրանց մի բան, վոր չունեյին և սաստիկ ցանկանում էին ունենալ։

— Հասկացա, դուք յերեխայի մասին եք խոսում,—արտասանեց Ջինան այնպիսի անտարբերությամբ, վոր, կարծես, խոսքը մի չնչին առարկայի էր վերաբերում։—Եհ, ի՞նչ են խոսում իմ մասին։

— Ձեր մասին նրանք վոչ միայն չեն խոսում, իսկի չեն էլ մտածում,—շտապեց ազատել Յելենան, լավ ճանաչելով փարթամ ընտանիքների աղախինների շինծու գոռոզությունը։

Ջինան վիրավորվեց։

— Բա՜հ,—գոչեց նա արհամարհանքով,—չեն մտածում։ Թող չմտածեն, շատ հարկավոր է։

Յելենան ավելացրեց.

— Դե, իհարկե, դուք նրանց հավասարը չեք. աղախին և տիրուհի։

— Ներեցեք, յես այժմ աղախին չեմ, այլ տնտեսուհի, յեթե կամենաք, իսկի տնտեսուհի էլ չեմ, այլ իշխանուհի Որբելյանի համար

ոգնական։ Չե՛ն մտածում։ Հարցրեք, չես նրանց մասին մտածո՞ւմ եմ։ Իսկի չել չե։ Ակն ընդ ական...

— Բայց յերեխան ձերն ե, վոչ թե այդ ավազակի աղջկանը,— աշխատեց Յելենան Զինայի արհամարհանքը փոխել ատելության։

— Յես յերեխա չունեմ,— պատասխանեց Զինան, վորին սարսափեցնում եր այն միտքը, թե մի որ այդ յերեխային կարող են կապել նրա վզին։

Յելենան չհուսահատվեց։

— Այո,— ասաց նա սատանայական հեգնությամբ,— այդ ել ճշմարիտ ե։ Նրանք ձեր յերեխային գնել են փողով և այժմ նա նրանց սեփականությունն ե. այնպես, ինչպես այս կոշիկներն ինձ համար, կամ, այ, այն գլխարկը ձեզ համար։

Այս անգամ նետը դիպավ նշանին, բայց վոչ այն կողմին, դեպի ուր ուղղված եր։

— Գնել են, գնել են,— գոչեց Զինան գրգռվելով,— բայց ո՞ւր են նրանց տված փողերը։

— Ինարկե, դրել եք բանկ և տոկոս եք ստանում։

— Դուք ծաղրում եք ինձ, Յելենա Գավրիլովնա, յես բանկում մի կոպեկ չունեմ։ Հասկանո՞ւմ եք, մի կոպեկ ել։ Յեթե կամենաք, յես մինչև որս իսկի վոչ մի բանկի յերես չեմ ել տեսել։

— Հապա ի՞նչ արիք այն հազար ռուբլին։

— Պոլիկարպը փչացրեց,— պատասխանեց Զինան և հառաչեց տխուր։

— Պոլիկարպն ո՞վ ե։

— Իմ նշանածը։ Յես ձեզ չե՞մ պատմել։

— Հա՜պա, հա՜պա,— հետաքրքրվեց Յելենան, նախազգալով, վոր այդ Պոլիկարպից կարելի յե ոգտվել։

VII

Զինան պատմեց յուր ռոմանը։ Հայտնվեց, վոր Պոլիկարպը մի յունկեր ե և նրա նշանածը «աստծու ու մարդկանց առաջ»։

— Բայց անգութը խաբեց ինձ։ Ասաց հետո պիտի պսակվի, փողերս առավ, փչացրեց։ Անիծվի՛ նա։ Ի՞նչպես սիրում եյի նրան։ Այժմ ել սիրում եմ։ Ինչքա՜ն եմ տանջվել, աստված իմ, ինչքան, թե՛ հոգով, թե՛ մարմնով։ Քանի-քանի անգամ ուզեցել եմ մկնդեղ ընդունել։ Գիտեք, յես նրա պատճառով յերկու յերեխա յեմ փչացրել արգանդումս՝ մեկը չորս, մյուսը վեց ամսական։

Յեվ Զինան արտասվեց։

Ցելենան ուրախացավ մտքում։ Այդ նորությունը նրա համար մի անսպասելի զենք էր, որ ինքը Ջինան դցեց նրա առաջ։ Նա շտապեց վերցնել այդ զենքը և անմիջապես ուղղել պարզամիտ կնոջ կրծքին, Նա ասաց.

— Այդպես, ուրեմն, դուք այժմ ոչինչ չունեք, աղքատ եք։ Ցավալի չէ, շատ ցավալի։

Ցեվ, մի կեղծ հառաչանք արձակելով կրծքից, ավելացրեց.

— Դե, ցեկեք ու աշխարհիս բաները հասկացեք։ Մայրն աղքատ և ուրիշների մոտ ծառա — դե, ինչ էլ լինի՝ ծառա չեք, — իսկ զավակն ապրում է ինչպես մի փոքրիկ իշխան և այսօր-վաղը պիտի ժառանգե ահագին հարստություն։ Աստված իմ, ի՜նչ անարդարություն։

Ցեվ շարունակեց նույն ուղղությամբ, չթողնելով Ջինայի հուզմունքն անցնել։ Ո՛չ, ո՛չ, աղքատները շատ էլ անտեր ու անպաշտպան չեն։ Փոհության սատծու, օրենքներ կան և դատարանների դռները բաց են ամենքի համար հավասար։ Ահա հենց նորերս պատահեց համանման մի բան։ Մի հարուստ մարդ, վաճառական Թե՛ կալվածատեր, Ցելենան մոռացել է, այո, մի հարուստ մարդ բռնաբարում է յուր սպասուհուն, հղիացնում և դուրս անում յուր տնից, գրպանը դնելով մի քանի կոպեկ։ Խեղճ կինը ընկնում է փողոցներում։ Գնում է հասարակաց ծննդարան և ազատվում։ Ի՞նչ անե յերեխային։ Դես ու դեն է ընկնում։

—Բարեբախտաբար, — շարունակեց Ցելենան, ուրախությամբ տեսնելով, որ յուր հնարած պատմությունը հետաքրքրում է Ջինային, — աշխարհում դեռ բարի մարդիկ բոլորովին չեն անհետացել։ Մի ազնիվ փաստաբան նրան խորհուրդ է տալիս դիմել դատարանին և հանձն է առնում պաշտպանել նրան։

— Փողի՞, — ընդհատեց Ջինան։

— Լսեցեք։ Այդպիսի բարի փաստաբաններ միշտ կարելի չէ գտնել։ Դիմում է։ Դատավորների ներկայությամբ նա յերեխային դնում է հարստի առաջ ու ասում. «քոնն է, վերցրու, պահիր»։ Դատավորները կատաղում են հարստի դեմ ու վճռում, որ նա կամ պահի՛ յուր սպասուհու հետ կամ յերեխային ապահովե ու մորն էլ նշանակե խոշոր ամսական։

— Նշանակե՞ւմ է, հարցրեց Ջինան։

— Այո, ի՛հարկե, ի՞նչպես կարող էր դատարանի վճիռը չկատարել։ Նշանակում է ամսական յերեք հարյուր ռուբլի։

— Յերե՞ք հարյուր ռուբլի ամսական, — գոչեց Ջինան հափշտակվելով մի այդպիսի հեռանկարով, — աստված իմ, մի՞թե այդ կարելի չէ։

— Ինչո՞ւ չի կարելի։ Ամեն մարդ պարտավոր է տալ յուր ունեցածի չափ։ Հարուստի համար հարյուրները նույնն են, ինչ վոր մեզ համար կոպեկները։

— Ուրեմն յեթե դատարանին դիմեմ, ձեր յեղբորն էլ կստիպեն ինձ ամսական նշանակել։

— Իհարկե, կստիպեն։ Բայց յես չեյի կամենալ, վոր յեղբորս դատաստան քաշեք։ Գիտեք, յես հարազատ քույր եմ, յեթե նրան տեսնեմ մեղադրյալների նստարանի վրա, շատ կտանջվեմ, շա՛տ...

— Վոր այդպես է, էլ ինչո՞ւ համար այդ ասացիք,— հիասթափվեց Զինան։

— Որինակ եր, բերեցի էլի։ Բայց դուք կարող եք դատարան կանչել նրա կնոջը։ Մեղավորն իսկապես նա յե։ Յուր արգանդը աստված չորացրել է, ուրիշի բերքը լսեց։ Ո՛չ, չգիտեք նա ինչ ոձ է։

— Սխալվում եք, Յելենա Գավրիլովնա, տիկին Լիդիան լավ կին է։ Յես այս ամեն տեղ կասեմ, ամեն տեղ...

Յելենան ցնցվեց այդ պաշտպանությունից, նա հակառակն եր սպասում լսելու։ Բայց չշփոթվեց։

— Զարմանում եմ,— ասաց նա արհամարհանքով,— ինչպես կարելի յե լավ անվանել մի կնոջ, վոր ձեզ զրկել է ձեր հարազատ զավակից։

— Նա չի զրկել, յես ինքս եմ հրաժարվել իմ յերեխայից։ Ի՞նչ բան է յերեխան։ Աղքատի համար գլխացավանք։ Յերբ ուզենամ, կարող եմ յերեխա ունենալ, դա դժվար բան չէ։

— Ախ,— կեղծեց Յելենան, անգետ ձևանալով,— յես չգիտեյի, վոր դուք ինքներդ եք հրաժարվել։ Եհ, վոր այդպես է, մնում է ձեզ լռել ու նստել ձեր տեղը։ Դուք մի կոպեկ էլ չեք ստանա ձեր զավակի ապագա ժառանգությունից։

Բայց արդեն հեռանկարն այնքան գրավել եր Զինային, վոր այլևս լռել չեր կարող։

— Յեթե կարելի լիներ առանց դատարանի մի գումար ստանալ,— ասաց նա, հառաչելով,— ինչո՞ւ չէ, յես չեյի հրաժարվիլ։

— Առանց դատարանի վոչինչ չեք կարող ստանալ։ Ուզում եք— փորձեցեք։ Շատ կարելի յե յեղբայրս ուզենա մի բան տալ, բայց կինը չի թույլ տալ։ Նա մինչև անգամ կստիպե յեղբորս ձեր վզակոթին տալ ու դուրս անել։

Վերջին դարձվածը ասվեց վորոշ նպատակով։

— Ի՞նչ,— գոչեց Զինան,— մի՞թե կհամարձակվի։ Յես ձեր յեղբորը ամբողջ աշխարհի առաջ կխայտառակեմ։ Ո՞վ է նա։ Այ, դուք ինքներդ

ասացիք, որ դատարանը այն հարստին ստիպում էր պսակվել յուր սպասուհու հետ։ Ի՞նչ։ Դուք կարծում եք, յեթե ձեր յեղբայրը կամենա, յես էլ կկամենամ նրա հետ պսակվել։ Թքել եմ։ Նա իմ Պոլիկարպի մի յեղունգին չարժե։ Յեթե յես համաձայնվեցի, կարծում եք սիրելուց էր։ Ինչպե՜ս չէ, թքել եմ։ Այնպես էլի, մի րոպե խելքս կորցրի։ Մեկել որ ինձ փող էր հարկավոր ծնողներիս ուղարկելու ու ասացի․ «լավ, վերցրու ինձ, բայց փող տուր»։ Նա տվեց, յես էլ... Ահա թե ինչ։ Մյուս օրը յես նրանից զզվում էյի և էլ չթողեցի։ Յես այժմ ատելով ատում եմ այդ սևամորթ ասիացիներին, կարծես ծնվելիս նրանց մանկաբարձուհիների ձեռները մուրոտ են յեղել։ Առաջ էլի հավանում էյի, շատ էյի լսել, ասացի փորձեմ... Իսկ այժմ... Թյո՜ւ, ահա թե ինչ...

Յեվ սկսեց վրդովված անց ու դարձ անել։

Յելենան ձևացավ, թե պատրաստվում է հրաժեշտ տալու և ասաց․

— Եհ, որ այդպես է, դուք գիտեք, յես իմն ասացի։

— Սպասեցեք, ո՞ւր եք շտապում, մտածենք, տեսնենք ինչ կարելի յե անել։

— Ոչ, ոչ, պետք է գնամ, առանց այն էլ ավելորդ բաներ շատ խոսեցի։ Աշխարհումս ճշմարտությունը պաշտպանելը ձեռնտու չէ։ Ո՞վ գիտե, մեկ էլ տեսար մի օր գնացիք այդ իշխանի աղջկա մոտ ու ասացիք․ «ինձ ձեր մարդու քույրն է ուղարկել, յես յեկել եմ ձեզ դատի կանչելու»։

Հայտնի նպատակով արված յենթադրությունը ունեցավ ցանկալի ազդեցություն։ Զինան դարձյալ վրդովվեց։

— Ի՞նչ եք ասում, Յելենա Գավրիլովնա, դուք ինձ վիրավորում եք։ Մի՞թե յես այդքան հիմար եմ կամ անազնիվ։ Ի՞նչպես կարելի յե ազգականների մեջ թշնամություն գցել։ Ներեցեք, յես էլ քիչ թե շատ հասկացող եմ...

— Ի՞նչ գիտեմ, կյանքումս արած լավություններիս փոխարեն այնքան սև յերախտամոռություն եմ տեսել, որ այլևս ոչ ոքի չեմ հավատում։ Դեհ, յես գնացի։

Ասաց Յելենան, յերերվեց աջ ու ձախ, բայց չվերկացավ։

— Ուրեմն, ի՞նչ եք ասում, դատարանին դիմել է՞լի,—հարցրեց Զինան։

— Այ, տեսնո՞ւմ եք,—կեղծ վրդովվեց Յելենան,—յես ձեզ խորհուրդ տվեցի՞։ Զե՞ որ յես միայն իմ կարծիքը հայտնեցի։ Աստված իմ, աստված, արի ու բարեկամական զգացումները հասկացրու այդ մարդկանց...

— Լավ, լավ, Յելենա Գավրիլովնա, յես ձեզ վշտացնելու համար չասացի, այլ այնպես։ Բայց յես կդիմեմ դատարանին, անպայման կդիմեմ։

Այս խոսքերի հետ Զինան աշխատեց յուր մեջ գրգռել թշնամական զգացում դեպի Լիդիան։

— Ահ, ինչ հիմարն եմ յես, վոր մինչև հիմա լռել եմ։ Ո՞վ ե այդ կինը, ինչ իրավունքով և պահում իմ յերեխային յուր մոտ։ Այո, յես հենց այսպես ել կասեմ դատավորներին։ Թող յես խայտառակվեմ, բայց նա յել կխայտառակվի։

— Այ, այդպես խոսեցեք, վոր յես ել գովեմ,— խրախուսեց նրան Յելենան,— թե չե թշնամիներդ կարող են ասել, վոր դուք պատվի զգացում չունեք։ Յեվ յես ինքս ինձանից կամաչեմ, տեսնելով, վոր իմ ծանոթը, վորին սիրում եմ հարազատ քրոջ պես, պատվի զգացում չունի։

— Յե՞ս չունեմ պատվի զգացում,— ավելի գրգռվեց Զինան,— այդ դեռ կտեսնենք։ Յես իմ յերեխային կխլեմ այդ խորամանկի ձեռքից և տասը հազարով ել հետ չեմ տա։ Նրանք կուզեն, կուզեն, բայց յես չեմ տա, պրծավ գնաց։ Ի՞նչ, չեն մտածում իմ մասին, կեղտոտ ասիացիներ։

— Դե լավ, Զինա, դուք ինձ ել եք վիրավորում։ Զե՞ վոր յես ել ասիացի յեմ։

— Դուք քաղաքավարություն գիտեք, այ, յեկել եք այցելության, դուք ասիացի չեք։

Յելենան, վերջապես, վոտքի կանգնեց։

— Ցտեսություն,— ասաց նա,— շատ նստեցի։ Եհ, ինչ վոր ել ուզենաք անել, առանց փաստաբանի չանեք, կարող եք խաբվել։ Բայց չլինի թե ջհուդ փաստաբանի դիմեք։ Ջհուդները կաշառվող են։

— Դուք հանգիստ կացեք, ինձ խաբելն այնքան ել հեշտ չե։ Միայն Պոլիկարպն ինձ խաբեց։ Բայց նա յել վերջն ելի կգա, վոտներս կընկնի։ Առայժմ այն անառակ Կատյայի յետևից ե ընկած։ Մի հատ խաղարկու տոմսակ ունե, այն ել կփչացնի, կգա յուր Զինայի մոտ։ Գնաք բարով։ Այս որերս յես կմտնեմ ձեզ մոտ և կասեմ ինչ արի։

Յելենան գնաց։

VIII

Յերբ նրանք դատարանի կոչնագիրը ստացան, կարդացին, առաջին պահ չհավատացին իրանց աչքերին։

Մոռացե՞լ էին նրանք Զինային, թե՞ միանգամայն հանգիստ էին, թե յերբեք նա նրանց չի անհանգստացնիլ։ Վոչ այս, վոչ այն․ նախկին սպասուհու ուրվականը շարունակ կանգնած եր նրանց առջև։ Շատ բան եր սպասում Լիդիան Զինայից, բայց վոչ դատարան։

Ի՞նչ, նրան մեղադրում են «ուրիշի յերեխան սեփականացնելու մեջ»։ Յեվ ով ե մեղադրողը։ Նա, վոր ամենայն հանգստությամբ կամեցել եր շպրտել այդ յերեխային փողոց և վոր այնքան ուրախացավ, յերբ մի բարի ձեռք հանձն առավ նրան ազատելու այդ ծանր բեռից։ Յեվ այժմ այդպիսի մի կին հետ ե պահանջում այն, ինչից ազատվելու համար Լիդիայի փեշերն եր լզել։ Յեվ այժմ Լիդիան պիտի զրկվի Սերժից։ Յեվ այժմ ուզում են դաշույնի ծայրով դուրս գցել նրա սիրտն ու դեն ձգել...

Լիդիան գունատվեց թղթի պես։ Նրա թևերն անզոր ընկան կողերին, ծնկները ծալվեցին։ Մեջքը կռթնելով պատին, նա ճիգն արավ խոսելու և միայն կարողացավ արտասանել խեղդված ձայնով.

— Յես կործանվեցի...

Մի քանի րոպե Գուրգենը վոչինչ չկարողացավ ասել։ Ամոթի զգացումը, սերը դեպի Լիդիան, սերը դեպի Սերժը, յերկյուղը հասարակական դատից—մի վայրկյանում միացան իրար և կաշկանդեցին նրա լեզուն։

Նա նստեց աթոռի վրա ընճկված, վոչնչացած, ձեռները հենած նրա մեջքին և հայացքը բևեռեց հատակի մի կետին։

Այդպես, ուրեմն, նրան քաշում են դատարան։ Յեվ վոչ միայն նրան, այլև Լիդիային։ Նա պետք ե հրապարակորեն հաշիվ տա յուր հանցանքի համար։ Այո, իհարկե, պետք ե տա, այլապես անկարելի յե գործը պարզել։ Հակառակորդի փաստաբանը, դատավորները, դատախազը, բոլորը, բոլորը պիտի հետաքրքրվեն այդ գործով ինչպես մի զբաղեցուցիչ ռոմանով։ Պետք ե բաց անեն նրա ինտիմ կյանքի գիրքը և կարդան ծայրեիծայր, առանց մի տող բաց թողնելու, առանց նրան խնայելու։

Բայց այդ բոլորը դեռ վոչինչ։ Ի՞նչպես պետք ե կրե այդ խայտառակությունը Լիդիան։

Նա՛, վոր այնպիսի վեհանձնությամբ ծածկեց ընտանեկան ամոթը ոտարներից։

Առաջինը Լիդիան ժողովեց ուշքը.

— Շտապիր գնալ այդ կնոջ մոտ և ազատել յերեխային։

— Բայց յես չգիտեմ նրա հասցեն։

— Գնա հասցեների բյուրոն և հարցրու։

— Արդյոք, հարմար է,—տատանվեց Գուրգենը։—Ես իմ մասին չեմ հոգում, այլ...

Լիդիան հասկացավ նրա միտքը...

— Այո,—ասաց նա, դիմելով յուր սովորական առողջամտության ազնվությանը,—դու ունիս իրավունք։ Դա կարող է գործը փչացնել։ Ի՞նչ անենք, ուրեմն։

— Իմ կարծիքով նախ և առաջ անհրաժեշտ է խորհրդակցել մի հմուտ փաստաբանի հետ։ Ես իսկույն կերթամ Սինոփյանի մոտ։ Նա ինձ ցույց կտա գործելու յեղանակը։ Այո, այո, նա խելոք մարդ է և հմուտ փաստաբան։

— Արա, ինչ վոր ուզում ես, միայն յերեխային ազատիր։ Նա իմն է, և վոչ մի մարդկավոր մայր չի կարող նրան սիրել այնպես, ինչպես յես եմ սիրում։

— Լիդիա,—գոչեց Գուրգենը,—յես նորից թողություն խնդրելու պահանջ եմ զգում։ Դու...

— Ազատիր յերեխային,—ընդհատեց նրա խոսքը Լիդիան,—և յես վոչինչ չեմ ուզում, վոչինչ։ Նրա մեջ է ամփոփված իմ կյանքը։

Գուրգենը լուռ անցավ յուր սենյակը, հագուստը փոխեց և շտապեց դուրս։

Քանի մի րոպեյում կառքը նրան հասցրեց փաստաբանի բնակարանը։

Բարեբախտաբար Սինոփյանը տանն էր։ Նա անմիջապես ընդունեց Գուրգենին։

— Հուսով եմ, ձեր այցելությունը կապ չունի իմ արհեստի հետ,—ասաց նա՝ վոտքի կանգնելով և սեղմելով Գուրգենի ձեռը։

— Ունի։

— Այդ ինձ չի ուրախացնում։ Նստեցեք, խնդրեմ։ Պատրաստ եմ ծառայելու։

Դա մոտ հիսուն տարեկան մի մարդ էր՝ միջահասակ, նուրբ կազմվածքով, կիրթ և մեղմ ձևերով։ Իբրև փաստաբան նա համարվում էր մեկն առաջիններից։ Իբրև մարդ հարգված էր հասարակությունից և յուր արհեստակիցներից։ Նրա խոսքը վոչ այնքան զորեղ էր, վորքան նուրբ, յերբեմն նույն իսկ սրամիտ։ Խոսում էր նա դատարաններում, ինչպես և կյանքում, միշտ հանդարտ, անվրդով։ Յերբեք չէր դիպչում հակառակորդի անձնավորությանը, չէր գրգռում դատավորներին, վորոնք միշտ նրան լսում էին հաճույքով։ Շատ քիչ էր պատահում, վոր նախագահը ընդհատեր նրա խոսքը կամ վորև է նկատողություն աներ։ Կար ինչ-վոր համակրելի գիծ նրա դեմքի վրա,

վոր մարդկանց տրամադրում էր դեպի նա բարեկամաբար։ Գուցե դա նրա մի քիչ դուրս ցցված շրթունքների մանկական ժպիտն էր, վոր ցույց էր տալիս նրա առողջ, գեղեցիկ, կանոնավոր ատամները։

Գուրգենը պատմեց բոլորը, առանց մի կետ թագցնելու, առանց կեղծելու, առանց իրան խնայելու։

— Եհ, բարեկամ, —ասաց Սինոփյանը լուրջ և ուշադիր լսելուց հետո,—զուր եք ամբաստանում ձեզ։ Դուք վոչ առաջինն եք և վոչ վերջինը։ Չե՞ վոր մենք ամենքս վավաշոտ ասխացիներ ենք... Միայն մի հարց. վորքան ինձ հայտնի չէ, դուք սիրում եք ձեր ամուսնուն։

— Այո, սիրում եմ,—առանձին շեշտով արտասանեց Գուրգենը։

— Ի՞նչպես, ուրեմն...

— Մի՛ հարցնեք,—ընդհատեց Գուրգենը, ամոթից ճնշվելով,—յես ինքս էլ չգիտեմ, ինչպես պատահեց։ Խենթություն, անասնական կրքերի բորբոքում, ատավիզմ, անվանեցեք ինչ կամենաք, միայն ազատեցեք ինձ այս փորձանքից, յես վոչինչ չեմ խնայիլ...

— Ո՞վ է ձեր հակառակորդի պաշտպանը։

— Չգիտեմ։

— Կարդացե՞լ եք նրա խնդրագիրը։

— Վոչ, կոչնագիրը կես ժամ առաջ ստացանք։ Վոչինչ չգիտեմ։

— Մտադի՞ր եք գնալ դատարան, թե՞ կամենում եք գործը հաշտությամբ վերջացնել։

– Գերադասելի չէ, ի հարկե, հաշտությունը, թեև ինձ համար ծանր է այդ կնոջ հետ բանակցության մեջ մտնելը։ Յես հոգում եմ վոչ այնքան իմ, վորքան ամուսնուս մասին։ Նա չի կարող նստել մեղադրյալների նստարանի վրա...

— Յերևի, ուզում եք ասել, վոր տիկինը չի կարող լսել ուրիշների ներկայությամբ ձեր դավաճանության մանրամասները, վորոնց անշուշտ թագցրել եք նրանից։

— Ներեցեք, իմ կինը գիտե բոլոր մանրամասները, և պատմել եմ յես ինքս...

— Ի՛հարկե, ի՛հարկե,—ընդհատեց Սինոփյանը, ժպտալով,—իբրև ազնիվ մարդ դուք, մի անգամ զղջալով, պարտք եք համարել խոստովանել բոլորը։ Բայց այլ է տանը դեմ առ դեմ, առանց վկաների, այլ է դատարանում օտարների ներկայությամբ։ Այնուհետև, չե՞ վոր աչքի առջև պիտի ունենալ և՛ մամուլը ու նրա ընթերցողներին։ Յեթե դուք լինեյիք մի աղքատ զույգ, ո՛վ կհետաքրքրվեր ձեր ընտանեկան դրամայով կամ կոմեդիայով։ Բայց դուք հարուստ եք և քաղաքում հայտնի, ուստի պետք է սպասեք, վոր լրագրները պետք է թմբկահարեն հանուն իրանց հինգ կոպեկների։

Սինոփյանը կանգ առավ, մի փոքր մտածեց և ավելացրեց.

— Շատ բարի, ես կօգնեմ ձեզ ուժերիս չափ, առ այժմ ոչ թե որպես փաստաբան, այլ որպես խորհրդատու բարեկամ։

— Աղաչում եմ։

— Տվեք ինձ մի որ ժամանակ։ Այսօր ես կմտնեմ դատարան, կկարդամ այդ կնոջ խնդրագիրը։ Պետք է իմանալ ինչ է պահանջում ձեզնից։ Հետո անհրաժեշտ է իմանալ ով է հանձն առել նրա դատի պաշտպանությունը։ Կա վորոշ տեխնիկա փաստաբանների համար, վորին պարտավոր ենք հպատակվել։

— Շնորհակալ եմ։ Ուրեմն, վճռը։

— Վաղը ճիշտ այս ժամին ես ձեզ կսպասեմ։ Բարեեցեք ձեր ամուսնուն և իմ կողմից ասացեք, վոր չհուսահատվի։ Չկա տխուր դրություն, վոր ելք չունենա։ Դատարանն այնքան էլ սարսափելի չէ, վորքան կարծում եք։

Գուրգենը հրաժեշտ տվեց և շտապեց տուն։

Յերբ նա կառքով մտազբաղ անցնում եր փողոցներով, զբոսնող ամբոխի միջից մի կին բարևեց նրան։

Յելենան եր։ Գուրգենը բնազդաբար զգաց մի առելություն դեպի հարազատ քույրը և չպատասխանեց նրա բարևին։

Լիդիային նա հանդիպեց սեղանատանը Սերժի հետ նախաճաշ անելիս։

— Պապա,— ասաց վեց տարեկան մանուկը,— ասա մամային, վոր չտխրի։ Դու վոր տանը չեյիր, ննջարանում լաց եր լինում։ Ինձ տեսավ, աչքերը սրբեց։ Ես, մամա, կարծում ես, յես հիմար եմ, վոչինչ չեմ հասկանում։ Ձե, հիմա յես էլ յերեխա չեմ։ Դայակն այսոր ինձ ասաց. «Սերգեյ, Գուրգենովիչ»։ Պապա, շուտով յես էլ քեզ պես բեղեր կունենամ։

Մանկան շաղակրատանքը մի հույզ գցեց Գուրգենի սիրտը։ Նա կշտամբանքով նայեց Լիդիային և փոխարենը ստացավ նրա հարցական հայացքը։

— Համբերիր մինչև վաղը,— պատասխանեց Գուրգենը։ Յեվ, գրկելով մանկանը արտասովոր ջերմությամբ և համբուրելով նրան, նստեց նախաճաշ անելու։

IX

Հետևյալ օրը վորոշյալ ժամին Գուրգենը մտավ փաստաբանի մոտ։

— Բարեկամ, ձեր գործն այնքան էլ հասարակ չէ, վորքան կարելի յեր կարծել առաջին պահ,— ասաց Սինոփյանը, ուղղելով իր պենսնեն, վոր շարունակ սահում եր ցած։— Յես կարդացի այդ կնոջ խնդ-

բագիրը։ Նա այնքան մեղադրանքներ է բարդում ձեզ վրա, որ արդարանալու համար քիչ ջանքեր չեն հարկավոր ձեր կողմից։

— Օրինակ,—հարցրեց Գուրգենը անհանգիստ։

— Յեվ դու նրան հարբեցրել ես, և՛ սպառնացել ես սպանելու, յեթե չհամաձայնվի, և՛ ֆիզիկական ուժ ես գործ դրել։ Այնուհետև խլել ես ուժով նրա զավակին ու իրան դուրս շպրտել։ Հետո հակառակ նրա կամքի, մկրտել ես յերեխային լուսավորչական։

— Այդ բոլորը սուտ է,—գոչեց Գուրգենը,—սուտ է։

— Կարող եք ապացուցանել, որ սուտ է։

— Ապացուցանելու կարիք չկա։ Նա ինքը կխոստովանի, յերբ դատարանում ճակատ-ճակատի կկանգնենք։

— Լսեցեք, բարեկամ. այդ բոլորը, իհարկե, սուտ է և գուցե այդ կինը խոստովանի յել դատարանում, յեթե թույլ տան նրան։ Բայց բանն այն է, որ նրան թույլ չեն տալ այդ անելու։ Նա յուր դատը հանձնել է այնպիսի մեկին, որի հետ այնքան ել դյուրին չէ գործ ունենալ։ Դա հայտնի Լազմանովն է։

Յեվ Սինոփյանը նկարագրեց Զինայի փաստաբանին։ Լազմանովը կամ Լազմանյանը այն քաղցած գայլերից է, որոնք իրանց անհագ ստամոքսը առ ժամանակ կերակրում են դատարանների կեղտոտ փըշրանքներով, սպասելով մի չաղ որսի, որպեսզի իրանց սուր ճանկերով հոշոտեն նրա մարմինը։ Նրանք հանձն են առնում ամեն տեսակի գործեր՝ լինեն այդ գործերն արդար թե անարդար, մաքուր թե անմաքուր։ Միևնույն ժամանակ իրանց որորում են դիպվածների քաղցր հուսով։ Հանկարծ կույր բախտն յուր անիվը շուռ է տալիս նրանց կողմ և հագուրդ է տալիս նրանց ախորժակին։

— Յես ճանաչում եմ մի քանիսին,—շարունակեց Սինոփյանը,—որոնք յերկար տարիներ ապրել են կես կուշտ կես քաղցած և մի որ հանկարծ գտել են մի միամիտ զոհ և, կողոպտելով նրան, ապահովել են իրանց զազրելի գոյությունը։ Այդ տեսակ մի զոհ կարող եք դառնալ դուք ներկա դեպքում։ Հետևաբար ձեր գրպանին սպառնում է մեծ արշավանք…

— Ուրեմն այդ Լազմանովին կարելի՞ է կաշառել։

— Բաս, իհարկե։ Կարելի է։ Բայց այդ յերբեք չպիտի անել։

— Ինչու։

— Առաջինը, որ նա կպահանջե մի գումար, որին չարժե գործը։ Յերկրորդ, դիմել կաշառքի օգնության, կնշանակե կամավոր ընդունել բոլոր մեղադրանքների ճշմարտությունը։ Այն ինչ դուք սուտ համարեցիք ձեր հակառակորդի մեղադրանքները։ Այսպես թե այնպես

կաշառքի միջոցը ամենաանհարմարն է և, միևնույն ժամանակ, վոչ անվտանգը։

— Ես վտանգներից չեմ վախենում։ Ես մտածում եմ միայն իմ կնոջ մասին։ Պատրաստ եմ ամեն բան անել, միայն թե նա ինձ հետ չնստի մեղադրյալների նստարանի վրա և չլսի այն, ինչ վոր անխուսափելիորեն պիտի ասվի դատարանում։

— Ես հասկանում եմ ձեր տրամադրությունը, բայց լսեցեք։ Դուք, ինարկե, կարող եք տալ վորքան պահանջեն։ Ունիք, գոհություն աստծու։ Բայց դա կդառնա ձեր հակառակորդների ձեռքում մի սուր նշտար ձեր առատ արյունը շարունակ հոսեցնելու և, ով գիտե, միանգամայն ցամաքեցնելու համար։

— Ուզում եք ասել շանտաժ։

— Իսկ և իսկ։ Վճարելով մի անգամ, դուք ստիպված կլինեք վճարել, յերկրորդ, յերրորդ, չորրորդ անգամ և այսպես անվերջ։ Կարո՞ղ եք համբերությամբ տանել մի այդպիսի դրություն։

— Վոչ։

— Հիանալի։ Յերկրորդ դրություն. կարո՞ղ եք յերեխային վերադարձնել այդ կնոջը շանտաժից ազատվելու համար։

— Այդ բոլորովին չեմ կարող։

— Զգում եմ։ Ահա հենց այդ է պատճառը, վոր յես ձեր գործը համարում եմ բարդ։

— Ուրեմն ի՞նչ անեմ։ Ի՞նչ խորհուրդ եք տալիս։

— Համբերեցեք,— պատասխանեց Սինոփյանը հանգիստ,— կմտածենք, կորոշենք։ Շտապելու կարիք չկա։ Այդպիսի դեպքերում սառնությունը մարդու առաջին ոգնականն է։

Յեվ, վերցնելով սեղանի վրայից մի արկղիկ, առաջարկեց Գուրգենին.

— Ծխեցեք, հազվագյուտ սիգարներ են։ Իմ կլիենտներից մեկն է բերել ինձ համար արտասահմանից։

— Շնորհակալ եմ, յես սիգար չեմ ծխում,— ասաց Գուրգենը, մի ուրիշ արկղիկից վերցնելով մի ծխախոտ և վառելով։— Ազատեցեք ինձ այս նեղ դրությունից, և յես այդ արկղիկը կլցնեմ վոսկիներով։

Սինոփյանը ժպտաց հեգնորեն—ներողամտաբար։ Նրա խելացի դեմքն ընդունեց այնպիսի արտահայտություն, վոր Գուրգենը զգաց յուր անտակտությունը։

— Եհ, բարեկամ, դուք հարուստներդ ձևված և կարված եք միևնույն չափով։ Դուք կարծում եք, թե ամեն ինչ կարելի յե գնել փողով, նույն իսկ վոգևորությունը։ Յես հարուստ չեմ, ճշմարիտ է,

բայց ագահ էլ չեմ։ Ես մտածում եմ միայն վոր ատրճանի հետաքրքրական է ձեր գործն իբրև գործ։ Իսկական փաստաբանը նույնն է, ինչ վոր արտիստը։ Նա միայն այն գործն է լավ պաշտպանում, վոր նրան տալիս է հոգեկան հաճույք, նրան տրամադրում է, վոգևորում, հափշտակում։

— Բայց իմ դատի մեջ չկա վոգևորության նյութ։

— Կարծում եք։ Իսկ ինձ թվում է, վոր կա և մեծ նյութ վոգևորության։ Ինձ հետաքրքրում է գործի վոչ այնքան իրավաբանական, վորքան հոգեբանական կողմը և կարծում եմ, վոր յես կարող եմ ձեզ, մանավանդ ձեր ամուսնուն պաշտպանել վոչ ինչպես արհեստավոր, այլ իբրև արվեստագետ։

— Ձեր խոսքերն ինձ ուրախացնում են։ Կնշանակի, դուք հավատում եք, վոր արդարությունը շատ էլ հակառակորդի կողմը չէ։ Իսկ յես հավատում եմ ձեր տաղանդին և հմտությանը։ Պատրաստ եմ վարվել այնպես, ինչպես թելադրեք։

— Դա ամենալավ ճանապարհն է։ Այժմ բարի յեղեք լսելու իմ կարծիքը։ Նախ և առաջ անհրաժեշտ է, վոր դուք և ձեր ամուսինը պահեք ձեզ սառը, անտարբեր։ Թող ձեր հակառակորդները չզգան, թե դուք վախեցած եք դատից կամ հուզված։ Զգուշացնում եմ, մենք կարող ենք գործը տանուլ տալ։

— Այսինքն ի՞նչպես,—ցնցվեց Գուրգենը։

— Դատարանը կարող է յերեխային խլել ձեզնից և տալ այդ կնոջը։ Դա ավելի քան հավանական է։

— Դուք ինձ հուսահատեցնում եք, պարոն Սինոփյան։

— Լսեցեք մինչև վերջը և չեք հուսահատվի…

Յեվ Սինոփյանը, սիգարի ծուխը քուլա քուլա բաց թողնելով գլխից վեր, սկսեց բացատրել յուր միտքը։

Յեթե Գուրգենն ու Լիդիան մինչև դատը հաշտություն առաջարկեն իրանց հակառակորդին, կտուժեն վոչ միայն նյութապես, այլ և բարոյապես։ Նրանց գլխին հավիտյան կանգնած կլինի յերեխայից զրկվելու վտանգը ինչպես Դամոկլյան սուր։ Նկարագրից յերևում է, վոր Զինան բոլորովին չի սիրում յուր զավակին։ Նրա հոգսը յերեխան չէ, այլ յուր գրպանը։ Չպիտի մոռանալ և նրա փաստաբանին, վորին յերեխայի այս կամ այն կողմին պատկանելն այնքան է հետաքրքրում, վորքան Գուրգենին յուր ծխախոտի ծխի ուղղությունը։

— Թող դատն սկսվի ու վերջանա,—շարունակեց Սինոփյանը, ավելի ու ավելի վոգևորվելով,—թող յերեխան անցնի այդ կնոջ ձեռքը։ Ի՞նչ նյութական շահ պիտի ունենա նա։—Շատ-շատ ամսական

քսանուհինգ կամ հիսուն ռուբլի, վոր դատարանը կպարտավորեցնի ձեզ վճարել յերեխայի ապահովության համար։ Մի հասույթ, վորով այդ կինը չի կարող գոհացնել յուր փաստաբանի ախորժակը...

— Հետեվանքը,—հարցրեց Գուրգենն անհամբեր։

— Հետեվանքը կլինի տեսարանի կատարյալ հեղաշրջումը։ Այն կինը և այն փաստաբանը, վոր մինչև դատը գալեր եյին, կդառնան գառներ դատից հետո։ Յեվ մի գեղեցիկ որ մայրը, յերեխայի ձեռքից բռնած, կգա ու կկանգնի ձեր դռների առջև ու կասե. «չեռ վերցրեք սրան և տվեք ինձ մի շոշափելի վարձ, չես բոլորովին կհրաժարվեմ իմ զավակից»։ Դուք կձևանաք, ինարկե, դարձյալ անտարբեր, իբր թե այլ ևս չեք հետաքրքրվում յերեխայով։ Յերբ վաճառողն և գալիս գնողի մոտ, ապրանքի գինն ընկնում է։ Յեվ դուք այն ժամանակ կվճարեք այնքան, վորքան ձեր քեֆն է...

— Պարոն Սինոփյան, յերեխան ապրանք չէ։

— Ապրանք է, բարեկամ, ապրանք այդ կնոջ համար։ Այլապես նա մինչև այժմ լուռ չեր մնալ։ Հավատացեք, նա ձեր տված գումարը ծախսել է, վերջացրել է և այժմ փողի կարիք ունե ու դիմում է այդ միջոցին։ Իսկ փաստաբանը նրան ամեն որ տալիս է դյուրին հարըստանալու հրապուրիչ հեռանկարն ու ավելի ու ավելի լարում ձեր դեմ։ Բարեկամ, իբրև հայր, դուք կարող եք յենթարկվել ձեր զգացումներին, բայց մենք փաստաբաններս իրերը վերլուծում ենք սառը բանականությամբ։

— Ահ, իմ զգացումները բևեռված են միայն մի կետի վրա,—գոչեց Գուրգենը,—դա իմ կնոջ վիճակն է։ Չեք կարող յերևակայել, պարոն Սինոփյան, թե նա վորքան է տանջվում։ Յերեխայից զրկվելու միտքը նրան խելակորույս է արել։ Վողբում է ինչպես մի մայր, վորի զավակին կախաղան պիտի տանեն։ Յերեկ գիշեր յերեք անգամ զատալով զարթնեց և գռեց ու անվերջ, անվերջ համբուրեց յերեխային։

Յեվ, աշխատելով զսպել յուր հուզմունքը, վորպես զի չարտասվի, շարունակեց.

— Կարծող եք յերևակայել, վոր մի կին ոտար արգանդի բերքը կսիրե այդպիսի կրակոտ սիրով։ Այնինչ՝ այդ մանուկը մի անբուժելի վերք է նրա կանացի անձնասիրության վրա... Չեմ հասկանում, չեմ հասկանում։

— Են, բարեկամ,—պատասխանեց փաստաբանը, գլուխը շարժելով,—բարդ է, շատ բարդ կին եյակի հոգեբանությունը։ Յեվ միամիտ է նա, ով կհավատացնի ձեզ, թե գեթ կիսով չափ ուսումնասիրված է այդ անհատակ ովկիանոսը։

Նրանք մի քանի վայրկյան լռեցին։ Գուրգենը մտածեց և, մի վճռական շարժումն անելով, ասաց.

— Ինչ լինելու է, թող լինի, յես հետևում եմ ձեր խորհրդին։

— Դատարա՞ն։

— Դատարան։

— Յես հանձն եմ առնում պաշտպանել ձեզ և ձեր գործը... մինչև վերջը։

— Շնորհակալ եմ։

Գուրգենը վերկացավ, սեղմեց փաստաբանի ձեռը։

Դռների մոտ Սինոփյանը ձեռը դնելով նրա ուսի վրա, ասաց ժպտալով.

— Բարևեցեք ձեր ամուսնուն իմ կողմից և ասացեք, վոր յերեխան կպատկանի իրան...

— Այսինքն։

— Դատը տանուլ տալով միայն։

— Յեվ այնուհետև։

— Վո՛չ վոք չի անհանգստացնի ձեզ։

X

Դատարան։

Գործը քննվում է դռնփակ։ Այսպես կամեցան յերկու կողմերն էլ։ Ներկա յեն միայն միքանի յերիտասարդ փաստաբաններ, վորոնք յեկել են Սինոփյանին լսելու։

Մեղադրողների բաժնում նստած է Զինան։ Յուր փաստաբանի խորհրդով նա հագել է սգավորի սև հագուստ և ձեռքում բռնած է մի սպիտակ թաշկինակ։ Պահում է նա իրան վոչ այնքան տխուր, վորքան գոռոզ, գլուխը բարձր, քիթը ցցած օդի մեջ ինչպես կռվի պատրաստ թխսկան հավ։

Նա ձևանում է, թե իբր ուշադրություն չի դարձնում յուր նախկին տերերի վրա, բայց չի կարողանում և հաճախ նայում է այն կողմ։ Յեվ նայում է թե չէ, իսկույն յերեսը շուռ է տալիս, ուսերը վեր քաշելով, գեղեցիկ դեմքը ծամածռելով և աթոռի վրա պտույտ պտույտ անելով այնպես, վոր, կարծես, պրուժինների վրա յե նստած։ Նա ուզում է, վոր բոլոր այդ ձևերն արտահայտեն. «թքել եմ»։

Նրա մոտ կանգնած է փաստաբան Ղազմանյանը։ Մոտ քառասունյոթ-ութ տարեկան մի բարձրահասակ սևահեր, թուխ կաշիով, լայն ուսերով, յերկարավուն, ներս ընկած յերեսով տղամարդ է, այտերը սափրած, ծնոտի վրա փոքրիկ իսպանյոլ։

Նրա ծուռ ու մուռ կազմվածքը, թիկերի չափ վոտները, վոսկոռոտ խոշոր ձեռները բիրտ լեռնականի տպավորություն են գործում, իսկ քայլելիս հիշեցնում է այն բիբլեական կենդանուն, վոր կոչվում է անապատի նավ։ Սովորաբար ընդունված է կարծել, թե քաջությունը և մեծ խորամանկությունը փոքրիկ մարմինների մեջ են թաղնվում։ Յուր արտաքինով Լազմանովը հակառակն եր ցույց տալիս։ Չլինելով վոչ խելոք, վոչ տաղանդավոր, նա խորամանկ եր և դրա արտահայտությունը նշմարելի չեր թանձր ունքերի տակից նայող փոքրիկ սաթի պես սև աչքերի մեջ, վորոնց սևությունը մի տեսակ կայտառություն եր տալիս նրանց շրջանակներին։

Ուսանողության առաջին տարուց սկսած այդ մարդը տասն անգամ փոխել եր յուր հավատամքը։ Այժմ նա իրան համարում եր սոցիալ-դեմոկրատ, բայց բոլոր նրան ճանաչողները գիտեյին, վոր դա նոր ժամանակին համարեցրած մի դիմակ է և վոր նա հոգով անփոփոխ է։

Իր ծնողավայրից նա բերել եր քաղաք միայն մի բան—կոպտություն, վոր և պահպանում եր անխախտ, չնայելով յուր համալսարանական կրթությանը և յեվրոպական ճամբորդությանը։ Ուներ թե չուներ ուրիշ սրբություններ, բայց մեկը հայտնի չեր—վոսկին։ Յեվ այդ մեկի համար հաճախ նա վաճառքի չեր դուրս բերում յուր հանգուցյալ մոր հիշատակն անգամ, տեղի անտեղի յերդվելով նրանով յերբ հարկավոր եր մեկից մի բան կորզել։ Այն մոր, վոր յուր կոշտ բանվորական ձեռների անդուլ աշխատանքով եր նրան սնել, մեծացրել և բարձր ուսումի արժանացրել։

Հագած եր Լազմանյանը ֆրակ, ոձիքը յուղոտ, փեշերը ճմըլտված։ Մի լայն վոսկե շղթա նրա ներս ընկած փորը կիսում եր, անցնելով ժիլետի մի գրպանից մյուսը։ Նրա շապկի կուրծքն ու ոձիքը կեղտոտ եյին, իսկ սև փողկապը փայլում եր սափրիչի սրոցի պես։

Այդ անփութությունը հագստի վերաբերմամբ գիտակցական եր։ Դրանով եր նա միամիտներին շնչում հավատ դեպի իր «դեմոկրատիզմը», լինելով ներքուստ հոգով ու մտքով բուրժուա, բառիս վատագույնի իմաստով։

Մերթ ընդ մերթ նա մոտենում եր Ջինային և, ձեռները պանթալոնի գրպանները դնելով, ինչ-վոր խորհուրդներ եր տալիս։ Յերբեմն նրա խոշոր սապատավոր քիթը բարձրանում եր ոդի մեջ, կարծես, կամենալով կանխավ ճաշակել վոսկու հոտը։

— Այո, այո, իհարկե, իհարկե,—ասում եր Ջինան ամեն անգամ լսելի ձայնով, թեև շատ բան փաստաբանի ասածներից չեր հասկանում։

Յեվ ամեն անգամ նա ծուռ, թշնամական հայացքներ էր ձգում Լիդիայի ու Գուրգենի վրա, կարծես, կամենալով պարծենալ. «տեսե՞ք, յես էլ փաստաբան եմ վարձել»։

Տալով յուր խորհուրդները, Լազմանյանը հեռանում էր.մի քանի քայլ և հպարտ դիրք ընդունում։ Յերբեմն նա բարևում էր այս ու այն ծանոթ փաստաբանին և նրա յերկարավուն դեմքի վրա խաղում էր ինքնագոհության ժպիտը։ Բանն այն է, վոր քիչ անգամ չէր պաշտպանել նա համանման գործեր, բայց այսօր առաջին անգամն էր դուրս գալիս հարուստ և հայտնի հակառակորդների դեմ։ Նա հպարտանում էր մանավանդ, վոր պիտի ճակատ ճակատի կանգներ այնպիսի մի առաջնակարգ փաստաբանի հետ, վորպիսին հռչակված էր Սինոփյանը։ Արդեն մի ամբողջ ամիս էր, նա դրանով պարծենում էր ամենուրեք, միշտ կրկնելով.

— Դա մի հետաքրքրական մենամարտություն է լինելու։

Գուրգենը և Լիդիան աշխատում են հետևել Սինոփյանի խորհրդին—չվախենալ, չհուզվել, չտխրել։ Բայց չի հաջողվում։ Արդեն շատ տագնապալի յեն զգում իրանց վիճակը հենց միայն այն պատճառով, վոր գտնվում են դատարանում իբրև մեղադրյալներ։

Լիդիան գունատ է և շարունակ ներվային մատներով խաղում է լոռնետի վոսկե նուրբ շղթայի հետ։ Մի ամսվա անքուն գիշերները, անհանգիստ ցերեկները խորը հետքեր են գրել նրա վրա։ Նիհարել է, ընկճվել է, կարծես, տասը տարով ծերացել։ Նրա գեղեցիկ աչքերի տակ յերևում են կապույտ խորշեր։ Նրա նուրբ շրթունքները գունատ են, արյունաքամ և դողում են, յերբ շշնջյունով խոսում է Գուրգենի հետ։

Ահ, ամեն ինչ խորթ է նրա համար և ամեն ինչ և ամեն վոք յերկյուղ է ներշնչում նրան—և՛ մեղադրյալների նստարանը, և՛ այդ բարձր փայտյա վանդակապատը, և՛ այդ հաստավիզ ու հաստափոր պրիստավը յուր սպիտակ շղթայով, և՛ դատավորների յերկայն սեղանը կանաչ մահուդով ծածկած, և՛ մանավանդ յեռանկյունի զերցալն յուր յերկգլխանի արծիվով։ Ումի՞ն է հարկավոր այդ բոլորը, ինչու՞։ Չե՞ վոր նա սիրում է յուր Սերժին, պաշտում, փայփայում այնպես, վոր վոչ մի հարազատ մայր յերբեք և յերբեք չի սիրել յուր հարազատ զավակին։ Ուրիշ այլ ես ինչ է հարկավոր յերեխային, յեթե վոչ սեր, միմիայն սեր։

Մերթ ընդ մերթ նա գլուխը բարձրացնում է և մռայլ հայացքը ձգում կայսեր ահագին պատկերի վրա, վոր կախված է դատավորների սեղանի գլխին։ Թվում է, վոր նա մտքում գութ է հայցում նրանից։

Ցերեկն նա չի կարողանում իրան զսպել և նայում է դեպի հակառակորդների կողմը։ Նա զղջում է, վոր սև հագուստ է հագել, տեսնելով Զինային սև հագստում։ Նախկին սպասուհին, վոր մի ժամանակ նրա վոտների տակ սողում էր ու փեշերը համբուրում, այժմ նրա աչքում ամեհի գազան էր, վոր ցնկնել էր նրա սիրտը հոշոտելու։ Յեվ ինչու, ինչ մեղքերի համար։ Վոր նա սիրե՞լ է այդ կնոջ ամոթալի բերքը և ազատել նրան կորստից։ Զե՞ վոր այդ կինը յուր արգանդում իսկ նրան սպանելու հանցավոր մտադրություն է ունեցել։ Ի՞նչ անարդարություն։ Խլել նրանից և տալ այդ կնո՞ջը։ Վոչ, վոչ, անկարելի յե։ Դատավորները պետք է հասկանան և զգան, վոր նա չէ մայրը, վոր ծնում է, այլ նա, վոր սիրում է ու փայփայում։

Յեվ վո՞րքան դարշելի յե այդ բարձրահասակ փաստաբանը յուր այլանդակ կերպարանքով և գիշակեր թռչնի աչքերով։ Յեվ վո՞րքան հանդուգն է նայում նա։ Ինչե՞ր պիտի ասե նա, արդյոք, ինչ գաղտնիքներ պիտի բաց անե Գուրգենի կյանքից և նորից քըքրե Լիդիայի վերքը։

Ի՛սկ այդ փաստաբաններն իրենց անճոռնի ռեդինգոտներով ու ֆրակներով։ Բոլորն էլ յերիտասարդներ են և ըստ յերևույթին կնամոլներ։ Նրանք հաճախ նայում են Լիդիային և աշխատում նրա ուշադրությունը գրավել, զանազան դիրքեր և ձևեր ընդունելով։ Առանձնապես լպիրշ է այդ սափրած յերեսով, բեղերով յերիտասարդը, վորի լերկ գլուխը յուր սուր գագաթով ու ցից ականջներով հիշեցնում է խոզի ճուտ, զատիկյան սեղանի համար պատրաստած։ Իսկ այն մյուսը յուր ուռած դեմքով, այն յերկրորդը յուր յերկայն մազերով, նեղ ճակատով։ Ահ, բոլորը ատելի յեն, բոլորը հակակրելի։ Յեվ ինչու յեն հավաքվել։ Ի՞նչ են սպասում։—Մի պիկանտ պատմություն. վոր լսեն և գնան յերեկոյան պատմեն կլուբներում։ Դուրս, անհամեստներ, դուրս, ինչ իրավունքով եք հետաքրքրվում ուրիշների ընտանեկան գաղտնիքներով։

Ահ, վոչ, նրանք չեն գնալ։ Նստած են ինչպես թատերական հանդիսականներ և անհամբեր սպասում են վարագույրի բարձրանալուն։ Լավ, շատ լավ, թող բարձրանա, թող տեսարանները գան ու անցնեն միմյանց յետևից և անխնա հարվածեն Լիդիայի քայքայված ներվերը։ Թող ինչ ուզում են ասեն քննադատները, ինչ ուզում են վճռեն դատավորները։ Բոլորը կտանի Լիդիան, բոլորը, և՛ ծաղր, և՛ արհամարհանք, և՛ կարեկցություն դեպի դավաճանվածը, վոր վիրավորանքներից մեծագույնն է, և՛ զզվանք դեպի դավաճանողը։

Միայն մի բան չի կարող տանել—Սերժից զրկվելը։

— Գուրգեն, Գուրգեն,—շշնջաց նա, ամուր սեղմելով ամուսնու ձեռը,—մի՛ թույլ տար, որ իմ սիրտը գլեն և ձգեն այդ կնոջ ոտքերի տակ:

— Հանգիստ կաց, սիրելիս, զսպիր քեզ, նայում են, մի՛ ցույց տար հուզմունքդ:

— Ո՞ւր է փաստաբանը, ինչո՞ւ չի գալիս:

— Նա դրսումն է, իսկույն կգա, նա գիտե յուր ժամանակը: Ահա նա:

Ներս մտավ Սինոփյանը ֆրակով՝ պորտֆելը կռնատակին և արագ քայլերով մոտեցավ Գուրգենին ու Լիդիային: Յերիտասարդ փաստաբանները հարգանքով բարևեցին նրան: Նա անհոգ, զվարթ, ժպտալով միքանի խոսքերով խրախուսեց յուր կլիենտներին: Նրա զվարթությունը Լիդիային ներշնչեց ուժ ու հավատ: Նա կազդուրվեց հոգեպես:

Յերբեք «ռոպեյական մոլորությունը» Գուրգենին չէր ճնշել այնքան, որքան այսօր: Նա իրան զգում էր մեղավոր ոչ միայն Լիդիայի, Զինայի և Սերժի, այլև ամենքի, ամենքի առջև: Նրան թվում էր, թե գործել է ոչ մասնավոր, այլ հասարակական մի ոճիր, որի համար արժանի չէ և՛ հրապարակային անողոք պատժի:

Նա չէր վախենում յուր ամոթալի վարմունքի մերկացումից: Թող ինչ ուզում է բացվի այսօր: Նա պատրաստ է ընդհանուր ծաղրի և արհամարհանքի տակ տառապել ու կեղեքվիլ—փույթ չէ, դա նրա արժանի հատուցումն է: Միայն մի բան չի կարող տանել—Լիդիայի զարշանքը այն բոլորից հետո, ինչ-որ պիտի ասվի այսօրվա դատի միջոցին:

Ահ, սիրում է նա Լիդիային այսօր ավելի քան յերբեք, ավելի քան այն յերջանիկ օրը, յերբ առաջին անգամ իրավունք ստացավ նրան համբուրելու: Այլևս կիրքը չէ այդ սիրո ղեկավարը, այլ ուրիշ, ավելի զորավոր մի զգացում—հանցանքի գիտակցությունը և Լիդիայի հոգեկան զորությունը սեփհական ոչնչության դեմ: Սիրում է հիվանդոտ սիրով և, միևնույն ժամանակ, զգում, որ միայն մի կապ կա յուր և Լիդիայի մեջ—Սերժը: Մի կապ, սակայն, որ այսօր ավելի ամուր է, քան Լիդիայի նախկին սերը: Յեթե քակվի այդ պողպատյա օղակը, կխորտակվի և նրանց կյանքը: Այն ժամանակ Լիդիան այլևս նրանը չէ, և ինքը կորած:

Նրան թվում էր, որ այս րոպեյին, մյուս րոպեյին Լիդիան ոտքի պիտի կանգնե և գոռա. «Այս մարդը պղծել է իմ անկողինը, նա տանելի չէ, զարշելի: Նա իմ անձնվիրությունը հրապարակ է դուրս

երել և չենթարկում և ձեր ծաղրին, ձեր արհամարհանքին։ Յես զզվում եմ նրանից, բաժանեցեք մեզ, յես չեմ կարող նրա հետ դատվել միևնույն գործով»։ Թվում էր և համոզված էր, վոր Լիդիան կարող է այդ անել, յեթե Սերժից զրկվի։

Ահա այս պատճառով էր նրա համար թանկ Սերժը։ Հայրական զգացումը յերկրորդ տեղն էր բռնում նրա սրտում։

— Դատավորները գալիս են,—հնչեց պրիստավի ձայնը։

Ամենքը վոտքի կանգնեցին։

Լիդիան ցնցվեց և միայն Գուրգենի օգնությամբ կարողացավ վոտքի յելնել։

XI

Ասացին բոլորը, ինչ վոր օրենքը պահանջում էր ասել և շատ բաներ, վոր բոլորովին կարիք չկար ասելու։

Տվեցին հարցեր՝ «ուրիշի յերեխան սեպհականողների» բարոյական պատկերը լուսաբանելու համար, և հարցեր, վոր ամենևին կապ չունեյին դատի հետ։

Օրենքի բանալիով բաց արին փակ դռները, խուժեցին նրանց ներքին աշխարհը, քրքրեցին, տակն ու վրա արին ինչպես հաղթված թշնամու ապրանք։

Դուրս բերեցին նրանց սրտերից զգացումներ, վոր յեղել եյին, և զգացումներ, վոր յերբեք չեյին յեղել և վոր կարծվում էր թե պետք է լինեյին։ Կորզեցին գաղտնիքներ, վոր նվիրական եյին նրանց համար և խոստովանություններ, վոր աստծուն եյին միայն նվիրված։

Ամենից անողոքը դատախազն էր, ամենից չարը հակառակորդի փաստաբանը։ Բայց յերկուսն էլ հավասար եյին Լիդիայի և Գուրգենի աչքում իրանց չարությամբ։

Հարցերը տեղում եյին աջ ու ձախից նետերի պես և խոցոտում մերթ մեկի, մերթ մյուսի ամոթի զգացումը։

Նախագահը յերբեմն նկատողություն էր անում դատախազին և Լազմանովին։ Բայց այդ էլ չէր օգնում։ Կարծես, նրանք խոսք մի եյին արել գանակոծել Գուրգենի վարկը անասելի սառնությամբ, ինչպես դահիճներ։

Այսպես էր մտածում Լիդիան և զարմանում ու զայրանում, թե ինչու մարդ եյակը այդքան դաժան է մարդ եյակի վերաբերմամբ։

Միքանի անգամ նա կամեցավ բողոքել դատախազի և հակառակորդ փաստաբանի անհամեստ հարցերի դեմ։ Նախագահի զանգակը ընդհատեց նրա խոսքը։ Հայտնվեց, վոր հարցերն ամենևին անհամեստ

չեին և վոչ էլ ավելորդ։ Թող համբերի, կգա յուր հերթը, նա յել կխոսի։ Օրենքը վոչ վոքի բարեկամը չե և վոչ թշնամին։ Ճշմարտություն, ճշմարտություն և ճշմարտություն—ահա արդարադատության նպատակը…

Առաջին մասը քննության նվիրված եր Դուրգենի և Ջինայի հարաբերություններին։

— Դա անհրաժեշտ ե գործի համար,—ասաց դատախազը։

— Շատ անհրաժեշտ ե,—կրկնեց Լազմանովը։

Մինչև այն պահ, յերբ «նրան զրկել են կուսությունից», ունեցե՞լ ե, արդյոք, սիրական։

— Վոչ։

— Դուք, իհարկե, մի անմեղ աղջիկ եյիք, կյանքի աղտեղություններին անծանոթ։

— Այո։

— Հավատում եյիք ձեր տիրոջ ազնվությանը։

— Այո։

— Գիտեյի՞ք, վոր կինը սիրում ե նրան։

— Այո։

— Դուք, իհարկե, դիմադրել եք յերկար ժամանակ։

— Այո։

— Դուք զզվել եք նրա առաջարկությունից։

— Այո։

— Հիշեցրել եք նրա պարտականությունը դեպի յուր օրինական կինը։

— Այո։

— Նա ձեզ մեծ-մեծ խոստումներ ե արել։

— Այո, այո, շատ փող ե խոստացել,—ազատվեց Ջինան իսկույն դատախազի հարցից։

— Ձե՞ք ընդունել։

— Չեմ ընդունել։

— Թախանձե՞լ ե։

— Այո։

— Ընկե՞լ ե ձեր վոտները։

— Այո։

— Զզվանքով մերժե՞լ եք։

— Այո։

— Սպառնացե՞լ ե։

— Այո։

— Ասել է կվունդի՞ յուր տնից։

— Այո։

— Կապանի՞ մինչև անգամ։

Այստեղ Զինան տատանվեց, գլուխը թեքեց կրծքին և վոչինչ չպատասխանեց։

Զգաց, վոր առանց այդ էլ յուր խղճի դեմ շատ մեղանչեց։

Սինոփյանն անմիջապես բողոքեց, վոր դատախազը հարցեր տալով, միևնույն ժամանակ, թելադրում է մեղադրողին և՛ նրանց պատասխանները։ Օրենքն այդ թույլ չի տալիս։ Մեղադրողն իբրև տգետ կին չի զգում յուր խոսքերի պատասխանատվությունը։

— Օրենքը վոչ վոքի վրա ճնշում գործ չի դնում, — ասաց դատախազը շինծու սառնությամբ։ — Յես մեղադրողին պատասխաններ չթելադրեցի։

— Թելադրեցիք, պարոն դատախազ, — պնդեց Սինոփյանը, — ապացույց, վոր նույնիսկ այդ կինը ամաչեց կրկնել ձեր կամեցածը։ Պարոն նախագահ, խնդրում եմ իմ բողոքը մտցնել արձանագրության մեջ։

Ձեր խնդիրը կկատարվի։ Շարունակեցեք։

Միակ վկան Գուրգենի ու Զինայի հարաբերությունների Լիդիան էր։ Յերբ հերթը հասավ նրան, զգաց բուռն ատելություն դեպի դատախազը և անսահման կարեկցություն դեպի Գուրգենը, վորին աշխատում էին այնքան ստորացնել։ Նրա մեջ վառվեց, միևնույն ժամանակ, կանացի հպարտության կրակը։ Չէ՞ վոր վորքան էլ վիրավորած լինի իրան Գուրգենը, նրա կինն էր։ Պետք է պաշտպանել նրան այդ մարդկանց առջև։ Պաշտպանել նույնիսկ հակառակ համոզմունքի։

— Ասացեք, մեղադրյալ, ի՞նչ գիտեք ձեր ամուսնու և Զինաիդա Պրոխորովնայի հարաբերությունների մասին, — դարձավ նախագահը Լիդիային։ — Ասացեք զուտ ճշմարտությունը, վորովհետև նրանից է կախված ձեր մոտ գտնվող յերեխայի վիճակը։

Գուրգենն ամոթից գլուխը թեքեց կրծքին։

Զինան, ուշադրությունը լարելով, նայեց Լիդիայի կողմը, այս անգամ վոչ շինծու արհամարհական հայացքով։

— Ինձ վոչինչ հայտնի չէ նրանց հարաբերությունների մասին, — պատասխանեց Լիդիան։

— Չե՞ք գանգատվել, աղջիկս, ձեր նախկին սպասուհին, վոր յուր տերը նրան բռնաբարել է, — հարցրեց Լազմանովը յուր կոշտ փայտյա ձայնով։

Լիդիան նրան պատասխանի չարժանացրեց։ Լազմանովը շրթունք-

ները կրծոտից վիրավորանքից և վճռեց համար դեպքում խայթել նրա կանացի զոռոզությունը։

— Ուրեմն չի՞ գանգատվել,— հարցրեց նախագահը։

— Իմ աղախինը չէր կարող գանգատվել այն բանի դեմ, որ չերբեք չի եղել։ Ցեվ չեթե գանգատվեր էլ, ես նրան չէի հավատա։ Իմ ամուսինը նրան չի բռնաբարել։

— Հետևաբար դուք համոզված եք, որ մեղքը գործվել է երկու կողմերի համաձայնությամբ, այնպես չէ՞,— հարցրեց նախագահը, որ զգում էր Լիդիայի հպարտությունը և հարգում։

— Ավելի քան համոզված եմ։ Իմ ամուսինը այդ աղջկան չի բռնաբարել։

— Դուք ներկա չեք եղել,— մեջ մտավ Լազմանովը մի հրոդ ժպիտ չերեսին։

Լիդիան ամոթից և կատաղությունից կարմրեց, սպա գունատվեց։ Ավելի կոպիտ վիրավորանք նրա ինքնասիրությանը չէր կարելի հասցնել։

— Պարոն պաշտպան,— նկատեց նախագահը, վորին նույնպես վիրավորեց անպատկառ հարցը,— ձեր հարցն անտեղի է և գործին չի վերաբերվում։

Նկատողությունը զգալի հարված էր Լազմանովի համար։ Նա այն չերկչոտ փաստաբաններից էր, վորոնք նախագահին և դատավորներին իրենց դեմ տրամադրելուց վախենում են ինչպես կրակից։

— Սիրում եք ձեզ ձեր ամուսինը,— հարցրեց դատախազը։

— Մի՞թե այդ անհրաժեշտ է իմանալ,— հարցրեց Լիդիան։

— Անհրաժեշտ է։

— Այո, սիրում էր և այժմ էլ սիրում է։

— Բայց ինչո՞վ եք բացատրում նրա դավաճանությունը։ Վորքան հայտնի չէ, սիրող ամուսինները հավատարիմ են միմյանց։

— Ինձ թվում է, պարոն նախագահ,— միջամտեց Սինոփյանը,— վոր պարոն դատախազի հարցը գործին չի վերաբերվում։ Ցես կխընդրեյի իմ պաշտպանյալի համեստության զգացմանը չդիպչել այն չափով, վոր թույլ է տալիս գործի լուսաբանությունը։ Ներկա դեպքում պարոն դատախազին ավելի զբաղեցնում է ռոմանը, քան գործը։

— Արդարադատության իրավունքն է ամեն տեսակ հացեր տալու,— ասաց դատախազը,— իսկ մեղադրյալի իրավունքն է պատասխանել կամ չպատասխանել այդ հարցերին։

— Պարոն նախագահ,— խոսեց Լիդիան, մի վճռական շարժումն անելով,— ներեցեք ինձ, ես որենքներին անտեղյակ եմ։ Այդ բոլոր

հարցերին յես կարող եմ միայն մի պատասխան տալ։ Իմ ամուսինն ինձ դավաճանել է, այո, բայց զղջացել է և յես ներել եմ նրան ամբողջ հոգով։ Ի՞նչ եք կամենում, վոր ատեյի՞ նրան, արհամարհեյի՞, զզվեյի՞ և փախչեյի՞ նրանից։ Ներեցեք համարձակությանս, յեթե դրանով խնդիրը լուծվեր, այն ժամանակ վոչ մի կին չպիտի մնար յուր մարդու հարկի տակ։ Ահա բոլորը, ինչ-վոր կարող եմ ասել…

Այս խոսքերն այնքան ներգործեցին Գուրգենի վրա, վոր նա չկարողացավ զսպել հուզմունքը, արտասվեց։ Ահ, յեթե իմանար, վոր ծաղրելի չի դառնա դատավորների աչքում, կչոքեր Լիդիայի առջև և, նրա վոտքերը համբուրելով մի անգամ ևս թողություն կաղերսեր։

Դատավորները նայեցին միմյանց յերեսին։ Յերևում էր, վոր նրանք չեյին սպասում մի անպատված կնոջից այդպիսի խոսքեր։

Դատախազը ժպտաց այն պաշտոնական սառը ժպիտով, վոր ուզում էր ասել. «արդարադատությունը չի կարող յենթարկվել զգացումների զեղմանը»։

Հանդիսատես փաստաբանները շարունակ նայում էյին Լիդիային։ Այդ վայրկյանին Լիդիան նրանց թվաց կրկնակի գեղեցիկ։

Հարց ու փորձի յենթարկվեց Գուրգենը։ Հաղթահարված Լիդիայի վեհանձնությունից, նա վոչինչ չթագցրեց, խոստովանեց յուր մեղքը, նկարագրելով յեղելությունն այնպես, ինչպես տեղի էր ունեցել, ուշադրություն չդարձնելով վոչ հակառակորդ փաստաբանի հրճվանքի, վոչ դատավորների հեգնական ժպիտների և վոչ հանդիսականների ծաղր ու արհամարհանք արտահայտող դեմքերի վրա։ Նրան թվում էր, վոր դատարանի համար չի խոսում, այլ Լիդիայի և զգում էր հոգեկան անհաղթելի պահանջ նորից իրան դատապարտելու, նորից զըղջալու և նորից թողություն խնդրելու։

Յերբ նա ավարտեց յուր անկեղծ պատմությունը, դատախազն ասաց.

— Պարոնայք դատավորներ, յես իմ կողմից գոհ եմ մեղադրյալի ցուցմունքից։

XII

Դարձան յերեխայի սեփականացման խնդրին։

Դատախազը հարցրեց Լիդիային.

— Ասացեք, մեղադրյալ. ընդունո՞ւմ եք, վոր դուք յերեխային սեփականել եք հակառակ յուր հարազատ մոր կամքի։

— Վոչ, չեմ ընդունում։

— Մեղադրողն յուր խնդրագրի մեջ ասում է, որ դուք և ձեր ամուսինը սպառնացել եք զրկել նրան յուր պաշտոնից և վարձից, նույնիսկ սպանել, յեթե յերեխային չթողնե ձեզ մոտ։

— Աստված իմ, ինչե՜ր է հնարում, այդպիսի բան չի յեղել, պարոն դատախազ, չի յեղել։

— Հապա ինչո՞ւ չեք վերցրել յերեխային և ահա ամբողջ վեց տարի յե պահում եք ձեզ մոտ։

— Պարոն դատախազ, յես յերեխային ուժով չեմ խլել մորից։ Նա ինքն է ինձ տվել յուր հոժար կամքով։ Հարցրեք, ինքը կխոստովանի…

Վերջապես, Զինան զգաց, որ այստեղ է հարմար արտասանել այն, ինչ որ պատրաստվել եր արտասանելու։

— Սուտ է, սուտ է,—գոչեց նա, ձեռներն իրարու կցելով և ոդի մեջ բարձրացնելով,—նա խլել է և ինձ զրկել իմ զավակից։ Պարոնայք դատավորներ, ձեր առջև կանգնած է մի անբախտ մայր, մի խեղճ կին, պաշտպանեցեք նրան, աղաչում եմ, վերադարձրեք նրան յուր հարազատ զավակին։ Ահա վեց տարի յե յես տանջվում եմ։

Նախագահը, իբրև փորձառու մարդ, զգաց Զինայի խոսքերի կեղծիքը։ Նա ասաց.

— Խնդրում եմ չընդհատեք քննությունը։ Սուտը կամ ճշմարտությունը կհաստատի դատարանը։

— Կկամենայի իմանալ,—խոսեց Սինոփյանը, դառնալով Զինային,—յեթե վեց տարի տանջվել եք, ինչո՞ւ այդ վեց տարվա ընթացքում հետ չեք պահանջել յերեխային։

—Դա ո՞վ է, ի՞նչ է ուզում ինձնից,—շփոթվեց Զինան, դառնալով յուր փաստաբանին։

— Հարցը կարևոր է, մեղադրող, իրավ, ինչո՞ւ ամբողջ վեց տարի հետ չեք պահանջել ձեր յերեխային,—ասաց նախագահը։

— Հա, ինչու,—կրկնեց Զինան, ավելի շփոթվելով,—ասեմ…որովհետև, որովհետև,—և չկարողանալով մի բան գտնել, բարկացավ և դարձավ յուր փաստաբանին.—պատասխանեցեք ելի, ել ինչու համար եմ ձեզ վարձել։

Դատավորները ժպտացին։ Դատախազն աշխատեց յուր դեմքին ավելի լրջություն տալ, քան պահանջում եր որենքը։ Հանդիսականները ծիծաղեցին։

Լազմանովը փորձեց դուրս բերել յուր պաշտպանյալին նեղ վիճակից։

— Պարոն նախագահ,—ասաց նա, կանխապես սաստելով Զինային լռել,—որքան ինձ հայտնի յե, որենքը թույլ չի տալիս, որ պաշտ-

պանները դատավարության ժամանակ ոգտվեն իրանց հակառակորդի սխալություններից:

— Խնդրում եմ հիշել օրենքի այն հոդվածը, ուր ասված է այդ մասին,—միջամտեց Սինոփյանը մի արհամարհական ժպիտ յերեսին, դառնալով յուր հակառակորդին:

— Օրենքը իրավունք է տալիս կողմերին,—ասաց նախագահը,— առաջարկել ամեն տեսակ հարցեր, վորոնք կարող են լուսաբանել գործը: Միայն չպիտի դուրս գալ վայելչության սահմանից,—ավելացրեց նա կծու հեգնությամբ,—համենայն դեպս, ձեր նկատողությունն անտեղի չեր: Օրենքների պաշտպանության հոգսը դատարանին է վերապահված:

Յեվ, դառնալով Գուրգենին ու Լիզիային, ասաց.

— Մեղադրյալներ, պատմեցեք յերեխայի սեփականացման հանգամանքները: Վորքան անկեղծ լինեք, այնքան կհեշտացնեք արդարադատության գործը...

— Յես կպատմեմ,—ասաց Լիզիան, վոր արդեն ընտելացել եր յուր վիճակին և զգում եր անկեղծ լինելու անհաղթելի պահանջ:

Յեվ պատմեց բոլորը, առանց մի կետ թաքցնելու, առանց իրան հաշիվ տալու, վոր այս կամ այն դարձվածը կարող է ազդել դատավճռի վրա: Մերթ ընդ մերթ նրան ընդհատում եյին դատախազն ու Ջինայի պաշտպանը զանազան հարցերով:

Յերբ նա ավարտեց, նախագահը դիմեց դատախազին.

— Գո՞հ եք մեղադրյալի խոստովանությունից:

— Այո:

Նախագահը շշնջյունով խորհրդակցեց աջ ու ձախ նստած դատավորների հետ, վորոնցից մեկը մի հաստափոր, սպիտակ դեմքով տղամարդ եր, մյուսը մի հիվանդոտ յերիտասարդ: Յերկուսն էլ իրանց գլուխը շարժեցին դրականորեն:

— Քննությունը վերջացած է, խոսքը պատկանում է կողմերի պաշտպաններին և ապա դատախազին,—ասաց նախագահը և թիկն ավեց բազկաթոռի մեջքին, մատիտը ձեռում խաղացնելով:

Յուր յերկար ու կանխավ գրած ու անգիր արած ճառով Լազմանովը աշխատեց ապացուցանել այն, ինչ վոր կարիք չկար ապացուցանելու—Ջինայի հարազատ մայր լինելը: Բայց նրա գլխավոր նպատակն եր տալ մեղադրյալների բարոյական նկարագրին այնպիսի գույներ, վոր հակակրանք ներշնչեյին դատավորներին ու հանդիսականներին:—Պարոնայք դատավորներ, ներկա գործը նշանավոր է վոչ յուր արտաքինով, այլ ներքինով, վոչ այնքան իրավաբանական, վորքան

հոգեբանական, հասարակական և բարոյագիտական տեսակետներից։ Պարոնայք դատավորներ, խորը մտածողի համար դա մի ամբողջ վողբերգություն է, արժանի Շեքսպիրի գրչին։ Ձեր աչքերի առջև կատարվեց այս սոսկալի վողբերգության վերարտադրությունը, դուք զգացվեցիք։ Դժվար չէ յերևակայել, թե ինչեր է կրել ու զգացել նա, վոր դրամայի գլխավոր հերոսուհին է։

Գյուղից գալիս է տասնութինը տարեկան մի անմեղ աղջիկ, մաքուր ինչպես այն լայնատարած դաշտերի ձյունը, ուր նա ծնվել է ու սնվել։ Գալիս է հեռավոր յերկրից մի կիսավայրենի վայր և ընկնում է մի անկուլտուրական շրջան։ Նա յուր հետ բերում է անարատ կուսության հետ և մի խորին, անմեղ հավատ դեպի մարդկանց ազնվությունը, վեհանձնությունը, բարությունը։ Նաև վարդագույն հույսեր յուր ապագայի մասին։ Նա քաղցած է, նա ուտել է ուզում, նա հեռավոր հայրենիքում թողել է որվա պարենին կարոտ ծնողներ, վորոնք սպասում են ոգնության նրա կողմից և վորոնց նա սիրում է յուր անապական հոգու ամբողջ թափով։

Ո՞ւր գնա։ Կուլտուրական յերկրներում, ուր այնքան լայն ծավալ են ստացել արդյունաբերությունն ու արդյունագործությունը, այդ հարցն իրան չի տալիս գյուղացին, յերբ հողից բաժանվում է։ Նրա համար բաց են գործարանների ու հանքերի դռները։ Կապիտալը սպասում է նրան յուր ահռելի ախորժակով և իսկույն յուր ճանկերի մեջ առնում։ Ու սկսում է ծծել նրա արյունը, ծծել վորքան կարող է և ապա շպրտել նրան դուրս՝ անպետք, արյունաքամ դիակի պես։

— Պարոն պաշտպան, դուք գործից հեռանում եք,— նկատեց նախագահը, վոր վաղուց գիտեր Լազմանովի ճառերի սերտած բովանդակությունը... Ի՞նչ գործ ունի այստեղ արդյունաբերությունը, կապիտալը, ել չգիտեմ։

— Ներեցեք, պարոն նախագահ,— չշփոթվեց Լազմանովը,— քննվող գործի, ինչպես և կյանքի բոլոր դրամաների հիմքը տնտեսականն է, միմիայն տնտեսականը։ Այո, պարոնայք դատավորներ, այսպես է կուլտուրական յերկրներում։ Այնտեղ վոչ միայն տղամարդիկ են գերի կապիտալի ձեռքում, այլև կանայք, այլև յերեխաները... Այդպես չէ մեզնում։ Մենք ապրում ենք մի յերկրում, ուր արդյունաբերությունն ու արդյունագործությունը իրանց զարգացման առաջին ֆազիսի մեջ են։ Նրանք հազիվ հազ գոհացում են տալիս տղամարդկանց աշխատանքին։ Ո՞ւր գնան կանայք։ Նրանք չեն կարող գիտակից պրոլետարիատի շարքերը զորեղացնել և փութացնել այն սոցիալական հեղաշրջումը, վորին այսօր անհամբեր սպասում է մարդկության լավագույն մասը...

— Պարոն պաշտպան, դուք բոլորովին հեռացաք գործից, - Նկատեց նախագահը դարձյալ, այս անգամ վրդովված ձայնով։

Լազմանովը շփոթվեց, կորցրեց յուր սերտած ճառի թելը. մի քանի վայրկյան կմկմաց, ապա անմիջապես դարձավ յուր պաշտպան ալին։

Նա մտնում է աղախին մի հարուստ ընտանիք, վոր վայելում է կյանքի բոլոր բարիքները։

Նա յերջանիկ է, վոր յուր աշխատանքն ընդունվեց։ Նա իրան համարում է բարերարված, սիրում է յուր տերերին և նրանց վշտերն ու ուրախությունները համարում սեփական։ Յեվ հարուստ զույգը հարստահարում է նրա թարմ ուժերը։ Հարստահարում է ամենայն անբարեխղճությամբ, վորովհետև նա յել կապիտալի ներկայացուցիչ է, թեև բանկերում և անշարժ կալվածների ու տոկոսաբեր թղթերի մեջ նիրհող կապիտալի... Բայց զույգը դրանով չի բավականանում։ Այրը, հրապուրելով միամիտ գեղջկուհուն յուր վոսկով, սուտ խոստումներով ու յերդումներով, խաբում է նրան, խելքից դուրս բերում և... լլկում նրա կուսությունը։

Լլկելուց հետո անամոթություն է ունենում յուր զոհին փողոց շպրտելու ինչպես մի լաթի կտոր։ Բայց ասպարեզ է գալիս փարիսեցիությունը բարեգործության դիմակով։ Բարեգործություն, վոր կապիտալի զենքերից մեկն է յուր հանցավոր խղճի բողոքը խեղդելու համար։ Բռնաբարող ամուսնուն ոգնում է դավաճանված և խայտառակված կինը։ Նա ասում է յուր հրեշ մարդու զոհին. «Մի հուսահատվիր, աշխարհում ինձ նման բարի հոգիներ կան, յես ձեզ կազատեմ կորստից։ Բայց փոխարենը ինձ պիտի տաք ձեր զավակին»։

Ի՞նչ կարող էր անել բռնաբարվածը, յեթե վոչ իբրև յերախտագետ հոգի, չոքել բարերարողի առջև և համբուրել նրա փեշերը, կարծելով, վոր յերեխային վերցնում է այդ փարթամ բուրժուան նրան խնամելու, միմիայն խնամելու համար։ Սակայն քողն յերկար ժամանակ չի մնում փարիսեցիության յերեսին։ Նա ընկնում է, և շուտով կեղծիքը մերկանում է։ Դուրս է գալիս, վոր դա բարերարություն չէ, այլ մի նոր տեսակի շահագործում, մի այլանդակ ավազակություն։

—Պարոն պաշտպան, մի շտապեք յեզրակացություններ անելու,— դարձյալ նկատեց նախագահը,—յեղելության անունը կվորոշի դատարանը։

— Ավազակություն,—կրկնեց Լազմանովը, ոգտվելով նախագահի մեղմ տոնից,—ուզում եմ ասել գողություն յերեխայի։ Յեվ մայրը զրկվում է յուր հարազատից։ Ահ, պարոնայք դատավորներ, կարիք չկա բացատրելու, թե ինչ ասել է կնոջ համար զավակը։ Դա այն է,

ինչ վոր արդարադատությունը ձեզ համար։ Ի՞նչ կմնար օրենքներից, եթե չլինի նրա խստությունը։ Ցեվ անհա անպատիվ չեղած, լլկված, ստորացած կինն ու մայրը շպրտվում է սալահատակի վրա՝ գրպանում մի քանի կոպեկներ, սրտում անհուն տանջանք, ճակատին ամոթի ու խայտառակության կնիքը։ Պարոնայք դատավորներ, դուք գիտեք այդ տեսակ կանանց վիճակը այնուհետև։ Մի անգամ սայթաքելով, նրանք ընկնում են, ընկնում են և արագ-արագ թավալվում դեպի անդունդ։

Բայց ներկա դեպքում պատահում է հակառակը։ Զինարիդա Պրոխորովիչը սթափվում է, վոտքի յե կանգնում և վտանգավոր ճանապարհից հետ դառնում, մնում է ազնիվ, մաքուր։

Պատկերը սոսկալի յե, պարոնայք դատավորներ, հարուստը վոսկու զորությամբ կողոպտում է չքավորի թարմ մարմինը ու պղծում։ Կինը հափշտակում է նրա զավակը։ Կրկնակի հանցանք։

— Բայց կա մի յերրորդը,—շարունակեց Լազմանովը,—վորի վրա ձեր առանձին ուշադրությունը կկամենայի դարձնել, պարոնայք դատավորներ։ Դա յերեխայի հոգու գողությունն է։ Իշխանական մի ցեղի զավակը, վոր հարստությամբ հափշտակվելով, ամուսնացել է մի վաշխառուի վորդու հետ, հափշտակում է մի անլեզու, անպաշտպան եյակի խիղճը և, հակառակ տիրող օրենքների, մկրտում նրան հայ յեկեղեցում։ Պարոնայք դատավորներ, ձեզնից է կախված այս վարմունքն էլ համարել կամ չհամարել հանցանք, բայց յես անհրաժեշտ համարեցի ձեր բարեհաճ ուշադրությունը դարձնել նրա վրա։ Ինչ վերաբերվում է դատի նյութական կողմին, յես մեղադրյալներից պահանջում եմ, յերեխային մորը վերադարձնելով, ապահովել յերկուսի ապրուստը։

— Վո՞րքան եք պահանջում,—հարցրեց նախագահը, թեթևություն մի հոգոց հանելով յերբ փաստաբանն ավարտեց։

— Հարյուր հիսուն հազար ռուբլի միանվագ, կամ տարեկան տասնուհինգ հազար ռուբլի։

Նախագահը չկարողացավ զսպել հեգնական ժպիտը։ Ծերունի դատավորը յուր թմրած աչքերը խոշորացրեց։ Ցերիտասարդը մատիտի ծայրը կոտրեց առջևը դրած թղթի վրա։ Հանդիսական փաստաբաններից վոմանք արագ շուռ տվեցին իրանց յերեսները և զարմացած նայեցին Լազմանովին։

Գուրգենն ու Լիդիան հանգիստ նայեցին Սինոփյանին, վորի դեմքից սկզբից մինչև վերջը չհեռացավ անդորր հեգնական ժպիտը։

— Խոսքը պատկանում ե մեղադրյալների պաշտպանին,— ասաց նախագահը։

Սենոփյանն ուղղեց պենսնեն ու մի քանի քայլ առաջ յեկավ։

Նրա ճառը տևեց ընդամենը կես ժամ։ Իբրև հոգեբան, գիտեր, վոր յերկարաբանությունը, վորքան ել պերճ լինի, առհասարակ ձանձրալի յե։

Իսկ ինչ վոր ձանձրալի յե, չի կարող ազդել դատավորների վրա։

Յերբ մեղադրյալները ասացին ամբողջ ճշմարտությունը, նա ավելի ել համոզվեց, վոր դատը փաստորեն տարված ե — յերեխան պետք ե անցնե Զինայի ձեռքը։ Մնում եր մի բան — մաքրել Լիդիայի և Գուրգենի բարոյական նկարագիրն այն արատներից, վոր ձգեց նրանց վրա Լազմանովը։

Ահա այստեղ նա վոգևորվեց և գրավեց դատավորների ուշադրությունը, նույնիսկ թմրած ծերունու հետաքրքրությունը շարժելով այնքան, վոր նա մի քանի րոպե գլուխը բարձրացրեց, ունքերը վեր քաշեց և ականջ դրեց։

Յերբ յերկու դատվողներից մեկը հարուստ ե, մյուսը աղքատ, մեծ մասամբ հարուստն ե տուժում բարոյապես։ Թույլերն ունեն մի զորեղ զենք — ամբոխի կարեկցությունը, վորի դեմ շատ անգամ աշխարհի զորավորները տկար են։ Մարդկային կանխակալ կարծիքը յուր համակրանքը աղքատին տալով, հակակրանքով ճնշում ե հարուստին։ Որենքների խորին իմաստն ե՝ կեղևն իրարից զեն ձգել և նրանց եյության մեջ վորոնել ճշմարտությունը։ Յեթե մեղադրյալները հարուստ են — չի նշանակում, թե անմաքուր են։ Յեթե մեղադրողը աղքատ գեղջկուհի յե — չի նշանակում, թե բարոյականության տիպար ե։

Մեղադրողի պաշտպանն ասաց, թե յուր պաշտպանյալը շահագործվել ե, և այս մասնավոր փաստը հաստատելու համար դիմեց քաղաքատնտեսական գիտությունների ոգնության։ Մի թեթևսոլիկ թռչնի պաշտպանության համար հրապարակ դուրս բերեց շատ գործածվելուց տաշված ու մաշված թնդանոթներ և սկսեց նրանցից ռմբակոծել կապիտալի պողպատյա պատվանդանը։ Յեվ նրա բարձրացրած խլացուցիչ վորոտներից մնաց դարձյալ այն, ինչից պետք ե սկսեր նա յուր պաշտպանողականը — մի նախկին աղախին և յուր նախկին տերերը։ Մեկը վաճառել ե յուր աշխատանքը, մյուսները գնել են։ Մի առօրյա հասարակ առևտուր, վորից գոհ են յեղել թե՛ գնողը և թե՛ մանավանդ վաճառողը։ Ապացույց, վոր առևտուրը տևել ե ամբողջ յերեք

տարի։ Ո՞վ էր խլել վաճառողի կամքը՝ հեռանալ գնորդներից ամեն վայրկյան, յերբ տեսել է, վոր իրան հարստահարում են։ Վոչ վոք։ Ուրեմն խոսել շահագործման մասին այս դեպքում—կնշանակե քամի ծեծել տնտեսական փիլիսոփայության մորակով. մի բան, վոր չի կարող հետաքրքրական լինել դատարանի համար...

Հետևաբար պետք է դառնալ մյուս մեղադրանքներին։

Բռնաբարում։ Դյուրին է բարդել մարդու վրա մի այնպիսի ծանր մեղք, բայց ապացուցանել դժվար է և անհնարին։ Յուրաքանչյուր բռնաբարման առաջին և անմիջական հետևանքն է բողոքը։ Ո՞ւր է ներկա դեպքում բռնաբարվողի բողոքը բռնաբարողի դեմ։ Չկա։ Պարզ է, վոր մոլորությունը փոխադարձ է։ Նա թե մեկինն է, թե մյուսինը։ Արդ, յեթե այդ մոլորությունը հանցանք է մեկի համար, ինչո՞ւ չպիտի լինի հանցանք և՛ մյուսի համար։ Յեթե քավում է մեկը, ինչո՞ւ չպիտի քավե և՛ մյուսը։

Բայց քավելու կարիք չկա, վորովհետև չկա և՛ հանցանք։

Մանուկը։ Ահա այն առանցքը, վորի շուրջը պտտում է ներկա դատը։ Վերցրեք նրան ասպարեզից, և դատն ինքն ըստ ինքյան կչքանա։

Ո՞վ է ավելի հարազատ մայր նրա համար. նա՞, վոր աշխարհ է բերել նրան, թե՞ նա, վոր ընդունել է. նա՞, վոր բերելու օրը ձգել է ճակատագրի հաճույքին, թե՞ նա, վոր շպրտվածը վերցրել է փողոցային ցեխի միջից, լվացել, մաքրել, զուգել-զարդարել ու տեղավորել յուր կարոտ սրտի լավագույն անկյունում—մայրության սրբազան վայրում։ Նա՞, վոր կամեցել է սպանել նրան յուր արգանդում, թե՞ նա, վոր միայն այդ մտքից սարսափել է։ Նա՞, վոր վաճառել է փողով, թե՞ նա, վոր գնել է ազնվագույն զգացումների արժեքով։ Վերջապես, նա՞, վոր վեց տարվա ընթացքում և վոչ մի անգամ հետաքրքրվել է մանկան վիճակով, թե՞ նա, վորի համար այդ վիճակն յեղել է քնքուշ հոգացողության և անսահման սիրո առարկա։

Պնդել, վոր աղքատությունն է ստիպել մեղադրողին հրաժարվել յուր զավակից, կնշանակե մաքրելու փոխարեն ավելի արատավորել նրա բարոյական պատկերը։ Աղքատությունը կարող է ճնշել մայրական զգացումը, բայց յերբեք խեղդել և սպանել։ Շատ դեպքերում նա սրում է և հիվանդության աստիճանի նրբացնում այդ զգացումը։ Չե՞ն յեղել մայրեր, վոր իրանց ցամաքած արյունի վերջին կաթիլներով են սնել ու մեծացրել իրանց զավակներին։ Ահ, աշխարհի գանձերը չեն կարող մայրերի վոսկրոտ կրծքերից կորզել հարազատներին, յեթե միայն այդ կրծքերի տակ կա ծնողական զգացում։

Նայեցեք, մի՞թե այդ կինը մոր տպավորություն է գործում, մանավանդ այնպիսի մոր, վոր վեց տարի զուրկ է յեղել զավակի տեսությունից։ Այդ գեղեցիկ, բայց արտահայտիչ դեմքը, այդ շինծու ատելությամբ լի հայացքը, այդ անընդհատ հոգացողությունը՝ յերևալ տխուր և կարեկցության արժանի, ինքն ըստ ինքյան ապացուցանելու համար են՝ թե ներկա դատի մեջ կա կեղծիք։ Ո՞ւր է մայրական կարոտի դրոշմը նրա ճակատի վրա։ Ո՞ւր է տառապած հոգու մռայլը նրա աչքերի մեջ։ Վո՛չ, վո՛չ, Զինաիդա Պրոխորովնային այստեղ բերողը մանկան կարոտը չէ, այլ ուրիշ բան։

Ի՞նչ է այդ բանը։

—Ուշադի՛ր լսելով մեղադրողի պաշտպանի ճառը, դժվար չէ գտնել այն մաղնիսը, վոր թե՛ պաշտպանյալին, թե՛ պաշտպանողին ձգել, բերել է այստեղ։ Ահ, զուր չեյին կրկնվում այդ ճառի մեջ աղքատություն, հարստություն բառերը։ Մարգարե չպիտի լինել գուշակելու համար, վոր յեթե իմ պաշտպանյալները լինեյին վոչ հարուստ, յերբեք, յերբեք նրանց չեյին քաշիլ դատարան և նստեցնիլ մեղադրյալների նստարանի վրա։ Վո՛չ, պարոնայք դատավորներ, Զինաիդա Պրոխորովնային այստեղ բերողը մայրական սերը չէ, այլ շահը, շահը և շահը։ Բայց յես չեմ ուզում ներկա անարդար դատի ամբողջ պատասխանատվությունը գցել նրա վրա։ Թո՛ղ լիցի։ Յես գիտեմ, վոր չնայելով դատի խորամանկ նպատակին, նա ինքը մի պարզամիտ կին է։ Նա գործում է ուրիշների թելադրությամբ։ Թելադրողներից մեկը ձեր առջև է, պարոնայք դատավորներ, իսկ մյուսը թաքնված է կուլիսների յետևում։ Դժբախտաբար, յես չեմ կարող ասպարեզ հանել ներկա բանսարկության այդ գլխավոր հերոսուհու անունը։ Դա ընտանեկան գաղտնիք է։ Բայց առանց այն էլ, պարոնայք դատավորներ, ձեզ համար միանգամայն պարզ է, վոր այսօրվա դատը չունի բարոյական և վոչ մի մեղադրանք, ուստի յես խնդրում եմ ազատել իմ պաշտպանյալներին այդ պատասխանատվությունից և գործին նայել միայն նյութական տեսակետից...

Ավարտելով յուր ճառը, Սինոփյանը խնդրեց դատավորներին մերժել Զինայի պահանջը և յերեխային թողնել Լիդիայի և Գուրգենի մոտ։

Վոտքի կանգնեց դատախազը։ Խոսեց նա մի ամբողջ ժամ։ Խոսեց չոր ու ցամաք վոճով։ Կրկնեց շատ բաներ Լազմանովի ասածներից, ավելացրեց մի քանի դիտողություններ։ Խնայելով Լիդիային, չխնայեց Գուրգենին և նրա բարոյական պատկերը ներկայացրեց մռայլ գույներով։

Մեծ ուրախություն պատճառեց Սինոփյանին այն հանգամանքը, որ դատախազը չխոսեց Սերժին լուսավորչական մկրտելու մասին։ Նա ինքն էլ չխոսեց այս մասին և չխոսեց դիտմամբ։

Երբ դատախազը ավարտեց յուր խոսքը, նախագահը դարձավ Լիդիային և Գուրգենին.

—Մեղադրյալներ, արդյոք, կկամենաք ձեր վերջին խոսքն ասել։

—Ո՛չ,—ասաց Գուրգենը։

—Ոչ, կրկնեց Լիդիան։

Նախագահը ոտքի կանգնեց.

—Դատն ընդհատվում է տասը րոպեյով։

Յեվ հեռացավ։ Նրան հետևեցին մյուս յերկու դատավորները։

Անցան Լիդիայի և Գուրգենի համար հավիտենականության չափ տասը րոպեները, նիստը նորից բացվեց։

Նախագահն ասաց.

—Դատարանը վորոշեց, որ յերեխան բերվի այստեղ։

—Ախ ո՛չ, ախ, ո՛չ,—լսվեց Լիդիայի ձայնը և նա թուլացած՝ ընկավ Գուրգենի ձեռների վրա։

Սինոփյանը շտապեց ջուր մատուցանել, և յերկու հանդիսական փաստաբանների օգնությամբ, Լիդիային տարավ հարևան սենյակներից մինը։

XIV

—Պապա, ո՞ւր ես տանում ինձ,—հարցրեց Սերժը մի քանի անգամ, յերբ կառքը նրան սլացնում էր դատարան։

—Թատրոն ենք գնում, սիրելիս, թատրոն,—գտավ վերջապես Գուրգենը։

—Մամա՞ն էլ այնտեղ է։

—Այնտեղ է։

Յեվ մեծ ճիգ գործ դրեց Գուրգենը, որպեսզի չհեկեկա փողոցում, սեղմելով կրծքին յուր զավակին։

—Ահ, ինչ մեծ թատրոն է,—հրճվեց Սերժը, յերբ հոր ձեռը բռնած, բարձրանում էր դատարանի ընդարձակ սանդուխքով։—Մամա՞ն ոթյակո՞ւմն է։

—Այո։

Սանդուխքի ծայրում կանգնած էր Սինոփյանը հանդիսատ դեմքով։ Նա սպասում էր Գուրգենին։

—Ի՞նչպես է,—հարցրեց Գուրգենը...

—Բոլորովին հանգիստ։ Ի սեր աստծո, մի հուզվեք, կլինի այնպես, ինչպես ասել եմ։

—Յես ինձ կզսպեմ, սիրտ տվեք նրան…

Յերբ մտան դահլիճ, Լիլիան նստած էր յուր տեղում, գլուխը կրծքին թեքած, ձեռները դրած ծնկների վրա։

—Ո՞ւր է մաման,—հարցրեց Սերժը, այս ու այն կողմ նայելով։

—Ահա նա,—ասաց Գուրգենը մոտեցնելով նրան Լիլիային։

—Մամա, մամա, յես էլ յեկա,—գոչեց Սերժը և, հոր ձեռը բաց թողնելով, վազեց փաթաթվեց Լիլիայի պարանոցին, առանց քաշվելու ներկա յեղողներից։

Ըստ յերևույթին, Լիլիան պատրաստված էր այդ տեսարանին։ Նա իշխել էր իրան և դատապարտում էր յուր րոպեյական թուլությունը։ Սիմոնյանի հուսադրիչ խոսքերը նորից կազդուրել էին նրան, նորից հույս ներշնչել։

Նա գրկեց Սերժին լուռ, սեղմեց կրծքին ջերմագին։ Ա՜հ, ով կարող է բաժանել նրանց, վո՞ր անողոք որենքը կամ կոպիտ ուժը։ Սերժը նրանն է, դատավորները կգան այդ և չեն խլիլ նրանից յուր կյանքը…

Լազմանովը արդեն հրճվում էր յուր հաղթանակով։ Նա դատը տարած էր համարում։

Յերեխային անպատճառ կվերադարձնեն Զինային— այս ամեն մի կասկածից դուրս է։ Բայց վո՞րքան գումարի կդատապարտեն մեղադրյալներին հօգուտ մեղադրողի— ահա գլխավորը։ Նա գիտեր, վոր յուր պահանջը մեծ է, բայց դիտմամբ էր այդ մեծ գումարը նետել մեջտեղ, վորպես զի դատավորները գեթ մասամբ հարմարեցնեն իրանց դատավճիռը պահանջի քանակությանը։ Չեն վորոշիլ ամբողջ գումարը, թող վորոշեն նրա կեսը, քառորդը…

Միևնույն միտքն էր զբաղեցնում և՛ Զինային դատավարության սկզբից։ Նրա սիրտն սկսեց ուժգին բաբախել այն վայրկյանին, յերբ Լազմանյանն արտասանեց «կամ միանվագ հարյուր հիսուն հազար ռուբլի, կամ տարեկան տասնուհինգ հազար»։ Այդքանը նա վոչ միայն չէր պահանջիլ, յեթե մնար յուր կամքին, այլ և չէր յերազիլ անգամ պահանջելու։ Նրան հարկավոր էր այնքան, վորքան կարող էր Պոլիկարպին նորից յուր գիրկը գցել,—դարձյալ մի հազար ռուբլի։ Նա ուրախությամբ կհրաժարվեր և՛ յերեխայից, և՛ փողերից, յեթե իմանար, վոր վաղ թե ուշ Պոլիկարպը նորից կսիրե իրան, միայն այս անգամ առանց ակնկալության։

Բայց կար նրա հոգու խորքում մի անկյուն, վոր տակավին անա-

պական եր մնացել։ Դա յերախտագիտության զգացումն եր, այն խորը, անկեղծ համակրանքը դեպի Լիդիան, վոր յերբեք չեր չքացել նրա մեջ։ Նույնիսկ այժմ, յերբ կանգնած եր նրա դեմ ճակատ առ ճակատ՝ թշնամի, չեր ատում նրան, և շարունակ կրկնում եր յուր մըտքում.

«Նա ինձ ազատել ե խայտառակությունից, փող ե տվել, ծանր բեռս վերցրել ե յուր վրա»։

Նա զգում եր, վոր յեթե առանց դատի յել դիմեր յուր նախկին տերերի ոգնությանը, մերժում չեր ստանա։ Համենայն դեպս Լիդիան նրան դատարկ ձեռքով բաց չեր թողնի։ Բայց չդիմեց, վորովհետև չթողեցին դիմելու՝ նախ Ցելենան յուր խորհուրդներով, ապա Լազմանովը անհագին գումար կորզելու վարդագույն հույսերով։

Դատավարությունը նրա համար սկզբից և յեթ ձանձրալի չեր։ Չգիտեր, թե ինչու յեն հարկավոր այդ բոլորը—դատավորների հանդիսավոր մուտքը, նրանց անվերջ հարց ու փորձը, փաստաբանների յերկար ճառերը, վերջապես այդ լղար, բարձրահասակ յերիտասարդ դատախազն յուր կոմիկական լրջությամբ։ Նա պատրաստ եր հեռանալու դատարանից, ամեն ինչ թողնելով փաստաբանին, բայց վախենում եր, վոր այդ կարող ե դատավորներին բարկացնել։

Այն վայրկյանին, յերբ յերեխայի դատարան բերվելը պահանջելիս Լիդիան ճչաց և նվաղեց, Զինայի մեջ կատարվեց վայրկենապես մի տարորինակ բան։ Լիդիան նրան թվաց այնքա՜ն խղճալի, այնքա՜ն արժանի կարեկցության, վոր ինքն ել պահանջ զգաց նրա նման ճչալու և նվաղելու։ Նա զսպեց իրան, վորպեսզի չարտասանե վորևե հիմար խոսք։

Այլևս նրա դեմքից չքացել եր շինծու-արհամարհական ժպիտը և նրա շարժումներն ու ձևերը կորցրել եյին իրանց արվեստական գոռոզությունը։ Նրա գեղեցիկ դեմքն ստացավ անսովոր լրջություն, վոր խառն եր տխրության հետ։ Նրա աչքերի մեջ յերևաց իմաստալի արտահայտություն, վորի նմանը յերբեք չեր ունեցել։

Յերեխային տեսնելիս, նա զգաց կարեկցություն և դեպի նա, բայց վոչ իբրև մայր, այլ իբրև սոսկ կին։ Այդ սիրուն հագնված, առողջ, կայտառ մանկան «մամա մամա» գոչելով Լիդիայի պարանոցին փաթաթվելն այնքան բնական, այնքան սրտառուչ թվաց նրան, վոր նա հուզվեց վոչ իբրև մայր, այլ իբրև սոսկ կին։

Լազմանովը մոտեցավ նրան և ասաց.

—Յերեխային ձեզ կտան, այս գիտեմ. բայց թե վորքան կվորոշեն նրա պահպանության համար—չգիտեմ։ Թույլ տվեք բողոքել, յեթե քիչ վորոշեն...

Զինան ուշադրություն չդարձրեց յուր պաշտպանի վրա։ Կարծես, չլսեց անգամ նրա խոսքերը։

—Ցես կբողոքեմ, անպատճառ կբողոքեմ,—ասաց Լազմանովը, զարմացած դիտելով Զինային, վոր շարունակ զբաղված եր յուր մըտքերով։

Նա չզգաց, և չեր կարող զգալ, թե այդ պահին ինչ է կատարվում յուր պաշտպանյալի մեջ։

—Դատավորները գալիս են,—կրկին լսվեց պրիստավի ձայնը ընդհանուր խոսակցության ու շշուկների մեջ։

Լիդիան ցնցվելով վոտքի կանգնեց, ավելի ամուր սեղմելով Սերժի ձեռը, վոր բաց չեր թողել յերեխայի գալու վայրկյանից։

Նիստն ազդարարվեց բացված։ Ամենքը բռնեցին իրանց տեղերը։

—Մամա,—շշնջաց Սերժը։

—Լռիր, սիրելիս, լռիր,—սաստեց նրան Լիդիան։

—Մամա, սա թատրոն չե, յես վախենում եմ,—կրկնեց մանուկը սեղմվելով մորը։

Գուրգենը գրկեց նրան մի ձեռով, շարունակ նայելով Լիդիային, վորի արտաքին հանգստությունը նրան ավելի յեր վախեցնում, քան նվաղիլը։ Այժմ յուր մասին նա բնավ չեր մտածում։ Զգալով, վոր ինքն է այդ բոլորի սկզբնապատճառը, զգում եր իրան կրկնակի հանցավոր Լիդիայի առջև։ Ա՜հ, վորպիսի՜ գոհունակությամբ նա ինքը մեն-մենակ կկրեր խայտառակ դատի ամբողջ ծանրությունը։

—Դա՞ յե ձեր մանուկը,—հարցրեց նախագահը։

—Այո՛։

Տիրեց խորին լռություն։

Լիդիան զսպեց յուր շունչը, ավելի ու ավելի ամուր սեղմելով Սերժի ձեռը։

Նախագահը հանդարտորեն դուրս բերեց ժիլետի գրպանից պենսնեն, դրեց քթին, վերցրեց սեղանի վրայից ձեռքի տակ գտնված թուղթը և կարդաց դատավճիռը։

Յերբ նա սովորական բանաձևն անցնելով, արտասանեց՝ «դատարանը վորոշեց», Լիդիան անգիտակցաբար այնպես ամուր սեղմեց Սերժի ձեռը, վոր մանուկը ճչաց ցավից։

—Վորոշեց՝ վերցնել յերեխային խորթ մորից և հանձնել հարազատ մորը, Զինաիդա Պրոխորովնային,—հնչեց նախագահի սառը, անհողդողդ ձայնը։

Այլևս Լիդիան հետևյալ խոսքերը չլսեց։ Նրա աչքերը մթնեցին, ձեռները թուլացան, բաց թողեց Սերժին։ Նրան թվաց, թե առաստաղը խորտակվում է յուր գլխին և, մի սուր ճիչ արձակելով, ընկավ Սինոփյանի գիրկը, վոր տեսարանը նախազգուշակելով, կանխավ մոտեցել եր նրան։

—Մամա, մամա,—գոչեց Սերժը և դառնագին հեկեկաց։

Թուղթն ընկավ նախագահի ձեռքից։

Զինան կանգնած էր անշարժ և դիտում էր հեռվից։ Ոչ ոք չգիտեր, թե ինչ է կատարվում նրա մեջ։

—Պարոնայք դատավորներ,—լսվեց ընդհանուր շփոթության մեջ Սինոփյանի ձայնը,—դուք տեսնում եք այս չերկու կանանցից որն է հարազատ մայրն այս մանկան։

Տեսարանը նախագահի վրա ազդել էր։ Արտասուքի չերկու խոշոր կաթիլներ ընկան պենսնեյի տակից նրա ալեխառն միրուքի վրա։

—Նիստը փակում եմ,—արտասանեց նա դողդոջուն ձայնով,—դատավճիռը վերջնական ձևով կազդարարվի մի շաբաթ հետո...

Դատավորները վերկացան տեղներից, ամենքը հուզված։

—Ոչ, ոչ, չեմ ուզում,—լսվեց հանկարծ Զինայի ձայնը.—չերեխան իմը չէ։ Ես հրաժարվում եմ նրանից էլ, փողից էլ. չեմ ուզում։

Նա վազեց դեպի Լիդիան։

—Տիկին, տիկին, ներեցեք ինձ, ես մեղավոր եմ ձեր առջև։ Ես չէի ուզում, նա սովորեցրեց ինձ, Ցոլենա Գավրիլովնան։ Պահեցեք չերեխային, նա ձերն է։ Ես ոչինչ չեմ ուզում։

Լազմանովը ապշած, զայրացած կրծոտում էր յուր շրթունքները։

Գուրգենը, Սինոփյանի օգնությամբ, դուրս տարավ Լիդիային և Սերժի հետ կառք նստեցրեց։

Շաբաթն անցավ։ Ազդարարվեց միևնույն դատավճիռը։

Զնայելով Լազմանովի ջանքերին, Զինան մնաց անդրդվելի։ Նա շարունակ կրկնում էր.

—Ցերեխան իմը չէ, իմը չէ։ Ես չեմ ուզում նրան, ոչ էլ փող։

Ամբողջ շաբաթ Լիդիան հիվանդ պառկած էր և Սերժին չէր թողնում հեռանալ յուր անկողնակալի մոտից։

Ցերբ նրան պատմեցին բոլորը, խնդրեց Զինային կանչել յուր մոտ։ Նա փաթաթվեց յուր նախկին սպասուհու պարանոցին և համբուրելով նրան, մի քանի անգամ կրկնեց.

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, լինենք քույրեր։

Բայց Սինոփյանը չտարվեց այդ տեսարանով։ Նա ասաց Զինային.

—Դուք դատարանի միջոցով կհրաժարվեք չերեխայից, տալով ձեր ստորագրությունը։

Այդպես էլ արին։

ՍՑՈՒԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ա. հատոր

1. ՀՐԴԵՀ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ
2. ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՀԻՃԱՏԱԿԱՐԱՆԻՑ
3. ՎԱՐԴԱՆ ԱՀՐՈՒՄՅԱՆ
4. ԱԼԻՆԱ
5. ՀԵՐՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ
6. ՀԱՄԲԵՐԻՐ
7. ՁԱՐ ՎՈԳԻՆ
8. ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ
9. ՀԱՅՐՆ ՈՒ ՎՈՐԴԻ
10. ԱՐՏԻՍՏԸ

Բ. հատոր

1. ՆՈՐԵՐԻՑ ՄԵԿԸ
2. ՈՐԻՈՐԴ ԼԻՁԱ
3. ՖԱԹՄԱՆ ՅԵՎ ԱՍԱԴԸ
4. ԹԱՆԳԱԳԻՆ ԿԱՊԱՆՔ
5. ՏԱՍՆՈՒՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՆՑԱԾ
6. ԽԵԼԱԳԱՐԸ
7. ՃՐՋԱՆԻՑ ԱՐՏԱՔՍՎԱԾԸ
8 ԽՆԱՄԱՏԱՐ
9. ԱՐԱՄԲԻՆ
10. ԿՐԱԿ

Գ. հատոր

1. ԱՐՍԵՆ ԴԻՄԱՔՍՅԱՆ
2. ՎՈ՞ՐՆ Է ՄԱՅՐԸ

1266
2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220037739

A II
37739